

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**Ա. ՄԱՐՈՒՔՅԱՆ, Մ. ԳԱՍՊԱՐՅԱՆ,
Ա. ԱՍՏՈՅԱՆ, Ա. ՈՄԿԱՆՅԱՆ**

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ
ՆՅՈՒԹԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ**

ԵՐԵՎԱՆ 2021

**ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ՀՍՅԱԳԻՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՂ
ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ**

Խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ց. Մարության

Ա. Մարության, Մ. Գասպարյան, Ա. Աստոյան, Ա. Ոսկանյան

– Հայոց ցեղասպանության մշակութային և նյութական հետևանքների հաղթահարման մեթոդաբանությունն ու գործիքակազմը, Եր., 2021, 640 էջ:

Հաշվի առնելով Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման՝ հատուցման թեմայի գիտաքաղաքական կարևորությունը, որոշվեց շարունակել այս ուղղությամբ կատարվող հետազոտությունները: Սույն աշխատությունը 2019 թ. հրատարակված «Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կորուստները և հատուցման կառուցակարգերի մեթոդաբանական հիմքերը» կոլեկտիվ մենագրության շարունակությունն է:

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության, Պոլսի Հայոց պատրիարքարանի ու օսմանյան հրատարակված արխիվային նյութերի, ինչպես նաև դիվանագիտական փաստաթղթերի, ականատես-վերապրողների ու միսիոներների վկայությունների, ժամանակի մամուլի տեղեկությունների հիման վրա հետազոտվել է Հայոց ցեղասպանության մշակութային և նյութական հետևանքների հաղթահարման մեթոդաբանությունն ու գործիքակազմը, ինչի արդյունքում ներկայացվել են գործնական առաջարկներ:

Գիրքը նախատեսված է Հայոց ցեղասպանության պատմության ու, մասնավորապես, պահանջատիրության հարցերով հետաքրքրվողների, ուսանողների և ընթերցողների լայն շրջանակի համար:

ISBN

**ՀՏԴ
ԳՄԴ**

**© Ա. Մարության, Մ. Գասպարյան,
Ա. Աստոյան, Ա. Ոսկանյան**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի նախաձեռնությամբ 2016-2018 թթ. Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի ֆինանսավորմամբ տարբեր գիտաճյուղերի մասնագետներից կազմված հետազոտական խմբի կողմից իրականացվեց «Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կորուստները և հատուցման կառուցակարգերի մեթոդաբանական հիմքերը» թեմայով հետազոտություն, որի արդյունքում 2019 թ նույն վերնագրով հրատարակվեց սովորաբար կոլեկտիվ մենագրություն:

Հաշվի առնելով թեմայի գիտաքաղաքական կարևորությունը, այս ուղղությամբ շարունակվեցին հետազոտությունները: 2020 թ. ձևավորվեց մասնագիտացված հետազոտական նոր խումբ, որի առջև ավելի կոնկրետ գիտական խնդիր դրվեց՝ հետազոտել Հայոց ցեղասպանության մշակութային և նյութական հետևանքների հաղթահարման մեթոդաբանությունն ու գործիքակազմը: Ի տարբերություն նախորդ հետազոտական խմբի, նոր թեմայի կատարման աշխատանքներում մասնագետ ընդգրկվեց նաև Սփյուռքից:

Հետազոտական խմբում ընդգրկված գիտաշխատողների կողմից ուսումնասիրվել են ցեղասպանության իրագործմամբ հայ ժողովրդին հասցված մշակութային և նյութական վնասների վերաբերյալ արխիվային փաստաթղթերում, ականատեսների վկայություններում և մամուլի նյութերում պարունակվող հսկայածավալ տեղեկությունները:

Կատարված նոր հետազոտության արդյունքում հիմնովին վերահաստատվեց, որ թուրքական իշխանությունների կողմից հայ ժողովրդի նկատմամբ զանգվածային բնաջնջման, ինչպես նաև նրա մշակութային ժառանգության ոչնչացման ու նյութական արժեքների բռնազավթման քաղաքականությունը չի սահմանափակվել Արևմտյան Հայաստանի նահանգներով, այլ ընթացել է Օսմանյան կայսրության ողջ տարածքով՝ բոլոր այն բնակավայրերում, որտեղ

բնակվել են հայեր: Այս իրողությունն արձանագրելու նպատակով կոլեկտիվ մենագրության շրջանակներում Արևմտյան Հայաստանի նահանգներից բացի, ուսումնասիրության են ենթարկվել, մասնավորապես, Օսմանյան կայսրության Իզմիրի գավառի և Հալեպի նահանգի Այնթապ քաղաքի հայ բնակչության մշակութային ժառանգության ոչնչացման և ունեցվածքի բռնագավթման գործընթացները, որոնք մեկ կենտրոնից ղեկավարվող ընդհանուր հայատյաց քաղաքականության առանձին դրսևորումներ էին:

Հետազոտական խմբի համակարգող, պ.գ.դ., պրոֆեսոր, Ա. Մարությանի կողմից ուսումնասիրվել են թեմային առնչվող Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության արխիվի փաստաթղթեր, ինչպես նաև այլ նյութեր ու հետազոտություններ: Հետազոտության արդյունքում համակողմանիորեն ներկայացվել են ինչպես Արևմտյան Հայաստանում, այնպես էլ Օսմանյան կայսրության հայաբնակ այլ տարածքներում երիտթուրքերի, նրանց փոխարինած քեմալականների ու հանրապետական Թուրքիայի հաջորդ վարչակարգերի կողմից հայերի մշակութային արժեքներն ու նյութական ունեցվածքը յուրացնելու կամ ոչնչացնելու նպատակով ստեղծված «օրենսդրական» մեխանիզմները:

Մարությանի կողմից առանձին բաժնով ներկայացվել են նաև Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնահարցի վրա աշխարհաքաղաքական գործընթացների ու Թուրքիայի արդի ներքաղաքական զարգացումների ազդեցությանը վերաբերող բաժինները: Այս համատեքստում կատարվել է նաև Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման գործընթացի քննական վերլուծություն:

Հետադոտական խմբի սփյուռքահայ մասնագետ, տ.գ.դ., պրոֆեսոր Մ. Գասպարյանի կողմից ներկայացվել է ցեղասպանության իրագործմանը զուգահեռ մշակութային ցեղասպանության (կուլտուրոցիդի), ինչպես նաև նյութական ունեցվածքի զանգվածային բռնագավթման հետևանքով հայ ժողովրդին հասցված մշակութային

և նյութական վնասների ծավալների հստակեցման, հաշվառման ու դրանց վերականգնման (հատուցման) մեթոդաբանության բաժինը:

Հետազոտական խմբի անդամ, Մատենադարանի գիտաշխատող Ա. Ասոտյանի կողմից ներկայացվել են Իզմիրի գավառի հայերի տնտեսական վիճակի և Հայոց ցեղասպանության հետևանքով նրանց կրած նյութական կորուստներին նվիրված բաժինը, որում հանգամանորեն լուսաբանված են Իզմիրի, Ադաբազարի, Կեյվեի, Գարամուսալի և Յալովայի գավառակների հայաբնակ քաղաքների, ավանների և գյուղերի հայ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը և տեղահանության ընթացքում նրանց կրած նյութական կորուստները:

Տվյալ բաժնում վեր են հանվել Իզմիրի գավառի հայերի կրթամշակութային կյանքի ու տնտեսական զարգացման առանձնահատկությունները: Մեծ տեղ է հատկացվել XIX դարի կեսերից Իզմիրի գավառի տարատեսակ հայկական ընկերությունների գործունեությանը, քանզի դրանցով էր պայմանավորված գավառի հայության կրթական, մշակութային և տնտեսական զարգացումը:

Սկզբնական շրջանում հիմնված կրթասիրաց և ուսումնասիրաց ընկերությունները նպաստեցին կրթված հայության ստեղծմանը, որի ներկայացուցիչներից շատերը, ծանոթանալով տնտեսության եվրոպական նորագույն մեթոդներին, նպաստեցին գավառի հայության տնտեսական զարգացմանը: Իզմիրում հայերի տնտեսությունը զարգացել է ոչ այնքան հայ անհատ ձեռներեցների և գործարարների, որքան իզմիրահայության հավաքական ջանքերի շնորհիվ:

1908 թվականից հետո ի թիվս կրթական, բարեսիրական, մշակութային ընկերությունների՝ Իզմիրի գավառի հայաբնակ վայրերում սկսեցին կազմավորվել հայկական տնտեսական և ֆինանսական ընկերություններ, համագործակցական (կոպերատիվ) միություններ, խնայողական գանձանակներ և նման կարգի բազմաթիվ այլ կազմակերպություններ, որոնց նպատակն էր օգնել բանվորներին, գյուղացիներին, առևտրականներին՝ շինարարական,

առևտրական, գյուղատնտեսական և արդյունաբերական ձեռնարկներ իրականացնելու գործում, ինչպես նաև իրենց անդամներին ցածր տոկոսով փոխառություն, էժան ապրանքներ և սերմացու տրամադրելու միջոցով պայքարել վաշխառուների դեմ:

Բաժնետիրական ընկերություններն էլ նպատակ ունեն մուտքի տուրքերով և անդամավճարներով որոշակի ժամանակաշրջանում անհրաժեշտ դրամագլուխ ստեղծել՝ իրենց ծրագրերը գործադրելու նպատակով: Ֆինանսատնտեսական այս ընկերություններն ապահովեցին իզմիթահայության տնտեսության թոփչաձև զարգացումը: Իզմիթի հայերը ոչ միայն իրենց ձեռներեցության, աշխատասիրության և ստեղծագործական մտքի, այլև բարեգործության և մեկը մյուսին օգնության հասնելու շնորհիվ կարողացան ստեղծել ինչպես հզոր նտնտեսական կառույցներ, այնպես էլ հայ մշակույթի կարևոր կենտրոններ:

Հետագոտական խմբի անդամ, գիտաշխատող Ա. Ոսկանյանը հեղինակել է ցեղասպանության իրագործմանը զուգահեռ Հալեպի նահանգի Այնթապ քաղաքի հայ բնակչության մշակութային կորուստների և նյութական ունեցվածքի բռնագավթման բաժինը: Պոլսի Հայոց պատրիարքարանի, օսմանյան արխիվային հրատարակված նյութերի, դիվանագիտական փաստաթղթերի, ականատեսների հուշագրությունների, միսիոներների վկայությունների, ժամանակի մամուլի տեղեկությունների հիման վրա ցույց է տրվել Այնթապի ժողավրդագրական պատկերը, ինչպես նաև 19-րդ դարի երկրորդ կեսի և 20-րդ դարի սկզբին այնթապահայերի տնտեսության և կրթամշակութային վիճակը: Հանգամանորեն ներկայացվել է Այնթապի հայ բնակչության կրթամշակութային վերելքը, կրթական հաստատությունների ու դրանց հետ սերտորեն փոխկապակցված հայկական խոշոր առևտրական տների, վաճառականների ու արտադրությունների գործունեությունը:

Անդրադարձ է կատարվել նաև Հայոց ցեղասպանության տարիներին Այնթապի հայկական ազգապատկան ու անհատական գույքի բռնագրավման գործընթացին:

Հետազոտության վերջում Ա. Ոսկանյանի կողմից ներկայացվել են Այնթապի հայկական կալվածքների, վաճառականների, արհեստավորների ցուցակները, ինչպես նաև կրթական հաստատությունների ֆինանսական հավետվությունները:

**Հետազոտական խմբի գլխական ղեկավար,
պ.գ.դ., պրոֆեսոր Ա.Ց. Մարության**

**1.ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՎ ԴՐԱՆԻՑ ՀԵՏՈ ՀԱՅԵՐԻ ՌԻՆԵԶՐԿՄԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՔՆՆԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

**1.1. Ցեղասպանության ընթացքում հայերի ունեզրկման
քաղաքականության երիտթուրքական կառավարության
«օրենսդրական» մեխանիզմները և դրանց գործադրումը**

«Տեղահանության մասին» ժամանակավոր օրենքով հայերի զանգվածային բնաջնման համար «իրավական» հիմքեր ապահովելուց անմիջապես հետո երիտթուրքական իշխանությունները 1915 թ. հունիսի 10-ին ընդունեցին «Պատերազմական և քաղաքական արտակարգ պայմանների անհրաժեշտության բերումով տարագրված հայերին պատկանող անշարժ և շարժական լքյալ գույքերի, վարչական կարգադրությունների մասին» 34 հոդվածներից բաղկացած հրահանգների, կամ, այսպես կոչված, «Լքյալ գույքի մասին» առաջին օրենքը: Փաստաթղթի վերնագրից արդեն իսկ նկատելի է «Տեղահանության մասին» ժամանակավոր օրենքի հետ այս նոր ապօրինի ժամանակավոր իրավական ակտի առնչությունը և դրանց միջև եղած պատճառահետևանքային կապը: «Տեղահանության մասին» ժամանակավոր օրենքի դրույթներից ելնելով «պատերազմական և քաղաքական արտակարգ պայմանների անհրաժեշտության բերումով տարագրված» հայերի հայերի ամբողջ ունեցվածքը նոր ընդունված օրենքով հայտարարվում էր «լքյալ»: Տեղահանված հայերի ունեցվածքը «լքյալ» որակելը բացարձակ անօրինականություն էր, քանզի «Տեղահանության մասին» օրենքով հայերը ոչ թե ինքնակամ, այլ հարկադրաբար էին լքել իրենց բնակավայրերն ու ունեցվածքը: Այսինքն՝ նրանք չէին հրաժարվել դրա նկատմամբ իրենց իրավունքներից, ուստի այդ գույքերի նկատմամբ ցանկացած գործողություն չէր կարող համարվել օրինական՝ անգամ եթե դա տեղի ունենար պետական մարմինների կողմից:

«Լքյալ գույքի մասին» առաջին օրենքի 2-րդ հոդվածի պահանջով տեղահանված հայերի անշարժ և շարժական գույքն իբր թե պետք է կնքվեր և ի պահ հանձնվեր պետության կողմից ստեղծվելիք վարչական հանձնաժողովներին, այսինքն՝ լինել անձեռնմխելի¹։ Գործնականում, սակայն, երիտթուրքական իշխանությունները ժամանակավոր օրենքի տվյալ դրույթն ընկալում էին որպես տեղահանված հայերի անշարժ և շարժական գույքի յուրացման միջոց և, ըստ այդմ, իրենց իրավունք էին վերապահում այդ գույքի ոչ միայն շահագործման, այլև տնօրինման իրավունքները։

Հայերի ունեցվածքի մի մասն էլ կաշառք էր տրվում թուրք բարձրաստիճան պաշտոնյաներին՝ որպես փրկագին բռնագաղթից խուսափելու համար, սակայն լավագույն դեպքում դա ընդամենը փոքր-ինչ հետաձգում էր այն, ինչը երիտթուրքական կառավարության պահանջով անխուսափելիորեն պետք է կատարվեր եթե ոչ տվյալ պաշտոնյաների, ապա մյուսների կողմից։

Օրենքի 3-րդ հոդվածը վերաբերում էր հայերի շարժական գույքի պահպանմանը, որը պետք է սեփականատերերի անուններով հաշվառվեր, գնահատվեր և ի պահպանություն փոխադրվեր եկեղեցիներ, խաներ (վաճառականների խանութներ), պահեստներ և մթերանոցներ²։ Այս հոդվածով թուրքական իշխանությունները հայերի ունեցվածքը, կահ-կարասին փաստորեն դուրս էին հանում նրանց տներից և փոխադրում այլ ընդհանուր պահեստարաններ։ Այսպիսով հայկական եկեղեցիները թիրախավորվում էին ոչ միայն որպես «անհավատների» կրոնական կառույցներ, որոնք կարելի էր պղծել ու ավիրել, այլ նաև որպես հայերի հարստության պահեստներ, ուստի մահմեդականների կողմից դրանք առաջին հերթին էին ենթարկվում հարձակումների ու թալանի։ Ինքնին հասկանալի է, որ հայերի տներից դուրս հանված ունեցվածքի մի մասը ճանապարհին

¹ St' u Baghdjian K. K., The confiscation of Armenian properties by the Turkish Government said to be abandoned, Antilias, Printing House of the Armenian Catholicosate of Cilicia, 2010, p. 167.

² St' u Baghdjian K. K., նշվ. աշխ., էջ 167։

«անհետանում» էր և ամբողջությամբ չէր հասնում պահեստաբաններ, քանի որ այն պարզապես հափշտակվում էր տվյալ գործընթացը կազմակերպողների ու կատարողների կողմից: Հայերի տներից ունեցվածքի դուրսբերումը թուրքական իշխանություններին հնարավորություն էր տալիս ավելի հեշտությամբ տնօրինել նրանց անշարժ գույքի ճակատագիրը:

Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգի **Մալաթիա քաղաքում** հայկական համայնքին պատկանում էին եպիսկոպոսանիստ եկեղեցին և դրան կից 2500 մ² մակերեսով հողամասի վրա կառուցված շինությունները, Սբ. Գրիգոր Լուսավորիչ վանքն իր հողամասով, պարտեզով, խաղողի այգիներով և քաղաքի արվարձանում գտնվող մարգագետիններով, մեծ բակով և 3000 մ պարիսպով շրջապատված Սբ. Երրորդություն եկեղեցին, Հին Մալաթիայում գտնվող Սբ. Ստեփանոս վանքն իր 2 հողամասերով, Սբ. Հարություն եկեղեցին և դրա 3,000 մ² հողամասի վրա գտնվող Ներսեսյան դպրոցը, 700 մ² մակերեսով հողամասի վրա կառուցված Սահակյան դպրոցը, Արամյան դպրոցը, ինչպես նաև մեծ գերեզմանատուն՝ շենք-շինություններով ու 12 հողամասերով՝ ընդհանուր գնահատված 68000 թ.Լ.³:

Մալաթիա քաղաքի տարբեր թաղամասերում համայնքին էին պատկանում նաև 61 խանութ, 6 տուն, իսկ արվարձանում՝ 3000 մ² մակերեսով ոռոգելի հողամաս՝ ընդհանուր գնահատված 9160 թ.Լ.⁴: **Մալաթիայի գավառում*** էլ համայնքին էին պատկանում Օրդուզ գյուղի եկեղեցին, 30 սենյակներով Սբ. Փրկիչ վանքն իր խաղողի 2 այգիներով ու 4 հողամասերով, ինչպես նաև Քեքիմ

³ Տե՛ս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսության Արխիւ (այսուհետ՝ ՄՏԿԿԱ), Սահակ Բ կաթողիկոսի ֆոնդ, հավաքածոյ 21, ց. 1, թղթ. 26; հմմտ. նույնի՝ հավաքածոյ 40, ց. 1, թղթ. 63:

⁴ Տե՛ս նույն տեղում:

* Ցավոք, ինչպես Մալաթիա քաղաքում այնպես էլ գավառում հայկական համայնքին պատկանող անշարժ գույքի սեփականության վկայականների (թափու) կորցված լինելու պատճառով դրանց վերաբերյալ նշումները բացակայում են:

Խան, Անգուր և Մուշուկա գյուղերում** 3 եկեղեցիներ, 3 դպրոց և 8 հողամասեր՝ ընդհանուր գնահատված 9400 թ.լ.⁵: Լիբանանում և Սիրիայում ֆրանսիական իշխանություններին 1921 թ. Ձ. Բեզիկյանի ներկայացրած հուշագրի ցուցակների համաձայն, Մալաթիա քաղաքում և Մալաթիայի գավառում հայկական համայնքին պատկանող անշարժ գույքն ընդհանուր գնահատվում էր **86560 թ.լ.**:

«Լքյալ գույքի մասին» ժամանակավոր օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ եկեղեցիների գույքը, նկարները, սուրբ գրքերը պետք է հաշվառվեին, կազմվելու էին առանձին տեղեկագրեր, որոնց հիման վրա տարագրությունից վերադարձած բնակչությանը իբր հետագայում պետք է վերադարձվեր գյուղին պատկանող եկեղեցական ունեցվածքը: Իրականում, սակայն, այս հոդվածն «օրինական» հիմք ստեղծվեց, որպեսզի հայկական վանքերը, եկեղեցիները, առաջնորդարաններն ու ուսումնական հաստատությունները կողոպտելուց, հրկիզելուց, քանդելուց ու դրանց ունեցվածքը վաճառելուց հետո դրանք վերածվեին ախոռների, բնակարանների, ամառանոցների, նույնիսկ զորակայանների ու մզկիթների: Վարժարանների, ընթերցարանների, կուսակցական ակումբների, գրավաճառների գրքերը, ինչպես նաև տներում պահվող գրքերը, և որ ամենացավալին է, Սեբաստիայի Ս. Նշան վանքի մատենադարանի մի քանի հազար ընտիր գրքերը և 300-ի հասնող թանկագին ձեռագրերը բաժանվեցին հավաքիչներին, թուրքոնշիներին և հիվանդանոցների դեղատներին՝ թերթ առ թերթ պատռելով մեջը բան փաթաթելու համար, իսկ վերջում դրանք նետում էին աղբանոցներն ու այրում⁶:

Ցեղասպանությանը զուգահեռ իրականացվող հայ բնակչության համայնքային հոգևոր-կրթական կառույցների և մասնա-

** Նշվածից բացի, համայնքը սեփականության և գույքի է տիրապետել նաև գավառի մյուս գյուղերում, որոնց վերաբերյալ տվյալները զեկուցագրում բացակայում են:

⁵ Տե՛ս նույն տեղում:

⁶ Լեւոն Վարդան, Հայկական տասնհինգը, էջ 114:

վոր անշարժ գույքի ու տնեցվածքի զանգվածային ոչնչացման ու թալանի երիտթուրքական կառավարության քաղաքականությունը չէր սահմանափակվում միայն Արևմտյան Հայաստանի նահանգներով, այլ տարածվում էր կայսրության ողջ տարածքով: Արևմտյան Հայաստանի նահանգներից բացի հայ բնակչությունը հսկայական կալվածքներ և ունեցվածք է ունեցել նաև կայսրության մյուս հատվածներում: Օրինակ, Կիլիկիայում թուրքական իշխանությունների կողմից հայերի ստեղծած համայնքային հոգևոր-կրթական, ֆինանսա-տնտեսական կառույցների, նրանց պատկանող հսկայական անշարժ գույքի և ունեցվածքի բռնագավթման ծավալների մասին կարելի է պատկերացում կազմել Ադանայի նահանգի Միս-Գոզանի, Ադանայի և Իչելի գավառների տարբեր բնակավայրերում հայկական համայնքին պատկանող միայն անշարժ գույքի տեղեկությունների ծանոթանալով:

Ադանայի նահանգի Ադանայի գավառի կենտրոն հանդիսացող **Ադանա** քաղաքի Հրդր Իլլաս, Բուջակ և Շաբանիե թաղամասերում համայնքին էին պատկանում Սբ. Աստվածածին, Սբ. Ստեփանոս* եկեղեցիները՝ կից 2 դպրոցներով, գերեզմանատունը և 5 հա հողատարածքը՝ ընդհանուր գնահատված 63 000 թ.լ.: Ադանայի մյուս թաղամասերում համայնքը տնօրինում էր 27 բնակելի տուն, 13 խանութ, խաղատուն և ավելի քան 5130 մ² ընդհանուր մակերեսով հողամասեր** , որոնք ընդհանուր գնահատվում էին 51 035 թ.լ.⁷:

Քաղաքի կենտրոնում գտնվող «Հայկական Ենի Չարչի» կոչվող տարածքում, որը հայկական համայնքին էր պատկանում դեռևս 1177 թ. տրված արտոնագրով (ֆիրման), կառուցված էին բազմա-

* Սբ. Ստեփանոս եկեղեցին հրկիզվել էր դեռ 1909 թ. Ադանայի հայերի կոտորածների ժամանակ:

** Առաջին աշխարհամարտի ժամանակ հայերի բնաջնջման և նրանց ունեցվածքի զանգվածային թալանի ընթացքում առաքելական համայնքին պատկանող հողամասերից մեկը փոխանցվել էր հայ կաթոլիկ եկեղեցուն՝ փորձելով նման եղանակով այն գերծ պահել բռնագրավումից:

⁷ Տե՛ս ՄՏԿԿԱ, Սահակ Բ կաթողիկոսի ֆոնդ, հավաքածոյ 21, ց. 1, թղթ. 26; հմմտ. նույնի՝ հավաքածոյ 40, ց. 1, թղթ. 63:

թիվ շենք-շինություններ: Համայնքին էին պատկանում Արգարյան դպրոցը, որի առաջին հարկի ամբողջ տարածքը հատկացված էր 32 խանութների համար՝ ընդհանուր գնահատված 32 500 թ.լ.: «Hotel Taurus» հյուրանոց՝ առաջին հարկում գործող 18 խանութների հետ միասին գնահատված էր 6800 թ.լ.: Հյուրանոցի ետնամասում գործում էր ևս 11 խանութ՝ գնահատված 3500 թ. և: Ադանայի շուկայի շենքի առաջին հարկը զբաղեցնում էին 6 խանութներ, իսկ վերին հարկը՝ Ադանայի առևտրի պալատը և Հայերի ազգային խորհուրդը: Տվյալ շենքն ամբողջությամբ գնահատված է 50 000 թ.լ.: Մաստան Համամ հատվածում գործող 10 խանութները միասին գնահատվում էին 12 500 թ.լ.: Ընդհանուր առմամբ միայն «Հայկական Ենի Չարչի» տարածքում համայնքին պատկանող անշարժ գույքը գնահատվում էր 105300 թ.լ.:

Համայնական անշարժ գույքից բացի, Ադանայում հայերն ունեին նաև վակուֆային* կալվածքներ: Ադանայի տարբեր թաղամասերում հայակական վակուֆային կալվածք էր հանդիսանում 11 տուն, 4 խանութ և 1134 մ² տարածքով հողամաս՝ ընդհանուր գնահատված 12750 թ.լ.⁸: Այդ կալվածքների վարձակալության հանձնելու և ստացվող եկամուտների տնօրինման հարցերով զբաղվում էին վակուֆային գույքի հավատարմագրային կառավարիչները (մյութավելլի): Վակուֆային կալվածքների կառավարումը որպես կանոն վստահվում էր բարձրաստիճան հոգևորականների կամ համայնքում հեղինակություն վայելող աշխարհիկ գործիչների: Որպես Ադանայի հայկական վակուֆային կալվածքների կառավարիչներ Զ. Բեգիկյանի հուշագրի հավելվածներում հիշատակվում

* Օսմանյան կայսրությունում վակուֆային անշարժ գույքն առաջանում էր նվիրատվություններից, այն ազատված էր պետական հարկերից ու տուրքերից, պաշտպանված էր աշխարհիկ իշխանությունների ունեցվածքներից, իսկ դրանից ստացվող եկամուտները ծառայում էին եկեղեցական կամ բարեգործական նպատակներին: Տե՛ս Համբարյան Ա., Արևմտյան Հայաստանի տնտեսությունը 1856-1914 թթ., Արմավիր, 2003, էջ 328-329:

⁸ Տե՛ս ՄՏԿԿԱ, հավաքածու 40, ց. 1, թղթ. 63:

են Մկրտիչ Եպիսկոպոսը, Հովհաննես քահանա Յիրիկյանը, Գրիգոր Պզտիկյանը և Ավետիք Զորբաջին⁹: Այսպիսով, Ադանա քաղաքում հայկական համայնքի անշարժ գույքի գնահատված ընդհանուր արժեքը կազմում էր **169085 թ.լ.:**

Պետք է նշել, որ սկզբնական շրջանում Ադանայում հայ համայնքին պատկանող անշարժ գույքը գրանցված էր գոյություն չունեցող անձանց, հիմնականում՝ սրբերի անուններով: Քաղաքում համայնքային գույքի մեծ մասը գրանցված էր «Հովակիմի դուստր Մարիամի»՝ Մարիամ Աստվածածնի, իսկ մյուս մասը՝ Ադանայի Ս. Ստեփանոս առաքելական եկեղեցու անուններով: Սակայն, 1909 թ. Ադանայի հայերի կոտորածից, Ս. Ստեփանոս եկեղեցու հրկիզումից հետո, հաշվի առնելով նաև կայսրությունում իրավաբանական անձանց վերաբերյալ օրենքում կատարված փոփոխությունները, համայնքն իր տնօրինության տակ գտնվող անշարժ գույքը սկսեց վերագրանցել հենց իր անունով: Գույքի վերագրանցման գործընթացը, սակայն, չհաջողվեց ամբողջությամբ ավարտին հասցնել, դրա մի մասը շարունակեց մնալ գոյություն չունեցող նախկին «սեփականատերի» անուններով, իսկ անվանափոխված սեփականության վկայականների (թափուների) մի մասն էլ կորցվեց ցեղասպանության ընթացքում:

Ադանայի գավառակի **Գյավուր Քյոյ (Հայ գյուղ), Ինջիրլիք, Շեյխ Մուրադ, Աբդողլու, Միսիս** գյուղերում հայ համայնքին էր պատկանում 4 եկեղեցի՝ գնահատված 3400 թ.լ.: Վերջին երկու գյուղերի եկեղեցիները Ֆրանսիայի կողմից Կիլիկիան գրավելուց առաջ քեմալականները հասցրել էին հրկիզել: Յըլանլի, Շերմանլի գյուղերում էլ համայնքը տնօրինում էր 6,7 հա խաղողի այգիներ՝ գնահատված 2110 թ.լ.:

Մերսին քաղաքում հայ համայնքին էր պատկանում Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, որին կից հողամասի վրա կառուց-

⁹ Տե՛ս ՄՏԿԿԱ, Սահակ Բ կաթողիկոսի ֆոնդ, հավաքածոյ 21, ց. 1, թղթ. 26; հավաքածոյ 40, ց. 1, թղթ. 63:

ված էին 2 դպրոց՝ ընդհանուր գնահատված 4700 թ.լ.: Եկեղեցու մոտ էին գտնվում 2 տուն և մեկ այլ դպրոց, ինչպես նաև նոր կառուցված մեծ դպրոցը, որոնք ընդհանուր գնահատված էին 5500 թ.լ.: Համայնքին էին պատկանում նաև եկեղեցու շուրջը կառուցված 7 տները, որոնց երկուսի առաջին հարկերում խանութ և խաղատուն էր՝ միասին գնահատված 5750 թ.լ.: Մոտակայքում գտնվող մյուս շենքում 5 խանութներ և վառարան էր՝ 5000 թ.լ. ընդհանուր արժեքով: Քաղաքում հայկական համայնքին էր պատկանում նաև 600 մ² մակերեսով հողամաս՝ գնահատված 350 թ.լ., իսկ արվարձանում՝ 2500 թ.լ. գնահատված 5000 մ² հողամասի վրա գտնվող գերեզմանատունը: Այսպիսով, հուշագրի ցուցակներով Մերսին քաղաքում համայնքին պատկանող անշարժ գույքն ընդհանուր գնահատվում էր **23800 թ.լ.:**

Տարսուն (Տարսուս) քաղաքում հայկական համայնքին էին պատկանում Մբ. Աստվածածին եկեղեցի իր շենք-շինություններով, մասնավորապես, դպրոցով, նաև աղջիկների համար գործող առանձին դպրոցը, ինչպես նաև հին գերեզմանատունն ու պարտեզով նոր գերազմանատունը՝ ընդհանուր գնահատված 84050 թ.լ.: Քաղաքում համայնքը տնօրինում էր նաև 2 տուն, 13 խանութ՝ իր ապրանքներով և ունեցվածքով, կարի արհեստանոցների շենքեր և վառարան՝ 9930 թ.լ. ընդհանուր արժեքով:

Տարսունի շրջակա բնակավայրերերից **Նամրունում (Լամբրոն)** հայկական համայնքին էր պատկանում եկեղեցի, դպրոց և գերեզմանատուն՝ միասին գնահատված 500 թ.լ.: Հայերը Գոգ-Օլուքում ունեին եկեղեցի և դպրոց՝ գնահատված 525 թ.լ., իսկ Յավընջայում և Գյուլեքում՝ վանք և եկեղեցի՝ գնահատված 1100 թ.լ.: Տարսունի և շրջակա բնակավայրերում հայերին պատկանող անշարժ գույքի ընդհանուր արժեքը կազմում էր 96105 թ.լ.: Այսպիսով, Ադանայի նահանգի միայն Ադանայի գավառում հայկական համայնքին պատկանող անշարժ գույքն ընդհանուր գնահատվում էր **294490 թ.լ.:**

Աղանայի նահանգի **Միս-Գոզանի գավառի Միս** քաղաքում համայնքին էին պատկանում Սբ. Սարգիս և Սբ. Աստվածամայր եկեղեցիները՝ կից հողամասերով՝ գնահատված 2450 թ.լ., Սբ. Մինաս, Սբ. Պողոս-Պետրոս, Սբ. Հովհաննես, Սբ. Դուկաս, Սբ. Աստվածամայր, Սբ. Հայր-Աբրահամ զանգակատները և աղջիկների դպրոցը, այդ շինություններին կից 43 դեռևս մակերեսով հողամասերը, հին և նոր հայկական գերեզմանատները՝ գնահատված 6025 թ.լ.: Բացի դրանից, Սսի Մահմուտլը, Ասլան փաշա և այլ թաղամասերում հայկական համայնքին էին պատկանում բազմաթիվ տներ, 15 խանութ, ինչպես նաև քունջութի ձեթի արտադրամաս և մառան, որոնց ընդհանուր արժեքը գնահատվում էր 2620 թ.լ.: Միս-Գոզանի գավառակի Ղըզըլ Յաղի և Քերեզ գյուղերում համայնքին էին պատկանում նաև 4,5 հա հողամասեր՝ գնահատված 400 թ.լ.¹⁰:

Ընդհանուր առմամբ, հուշագրի ցուցակներում նշված Միս-Գոզանի գավառի բնակավայրերում հայկական համայնքին պատկանող անշարժ գույքն ընդհանուր գնահատվում էր **11495 թ.լ.:**

Աղանայի նահանգի **Իչելի գավառի** կենտրոն և գավառապետի նստավայր հանդիսացող **Զիլիֆթեում (Մելնկիա)** հայկական համայնքին էին պատկանում Սբ. Աստվածածին եկեղեցին և դպրոցը, 3 տուն, 2 500 մ² տարածքով հողամասը, իսկ Մաղարա գյուղում՝ եկեղեցի ու դպրոց՝ ընդհանուր գնահատված **3375 թ.լ.:**

Համադրելով Զ. Բեզիկյանի հուշագրի և Սահակ Բ կաթողիկոսի փաստաթղթերի տվյալները, կարող ենք արձանագրել, որ ցուցակներում ներկայացված և գնահատված արժեքի համաձայն, Աղանայի նահանգի Աղանայի, Իչելի և Միս-Գոզանի գավառներում* հայկական համայնքին պատկանող անշարժ գույքն ընդհանուր գնահատվում էր **297875 թ.լ.:** Աղանայի նահանգում հայկական

¹⁰ Տե՛ս ՄՏԿԿԱ, Սահակ Բ կաթողիկոսի ֆոնդ, հավաքածոյ 21, ց. 1, թղթ. 26; հավաքածոյ 40, ց. 1, թղթ. 63:

* Աղանայի նահանգի Ջերե-Բերեքթի գավառի բնակավայրերի վերաբերյալ հուշագրի ցուցակներում տվյալներ ներկայացված չեն:

համայնքին պատկանող վարձակալության հանձնված ցուցակներում նշված անշարժ գույքից ստացվող տարեկան եկամուտն էլ կազմում էր 2500 թ.լ.:

Պետք է նշել, որ ֆրանսիական իշխանություններին ներկայացված Զ. Բեզիկյանի հուշագրի ցուցակներում, ինչպես նաև Սահակ Բ կաթողիկոսի փաստաթղթերում որոշ բացառություններով նշված են Ադանայի նահանգի գավառների բնակավայրերում հայկական համայնքի պատկանող անշարժ գույքի սեփականության վկայականների (թափու) տվյալները:

Ադանայի հայկական համայնքն իր տնօրինության տակ գտնվող անշարժ գույքի հետ կապված նաև գործարքներ էր կատարել օտարերկրյա ապահովագրական և այլ կազմակերպությունների հետ: Այսպես, 1921 թ. համայնքին «Ենի Չարչի» տարածքում պատկանող անշարժ գույքն ապահովագրվել էր Փարիզի «Միություն», Լոնդոնի «Կորպորացիա», իտալական «Ասսիկուրացիոնե Ջեներալ» և թուրքական «Օսմանլի Միլլի» ապահովագրական ընկերությունների կողմից: Նշված ապահովագրական ընկերությունների հետ համայնքի կնքած պայմանագրերի համաձայն, շենք-շինությունների (առանց հիմնադրամների և հողամասի) միայն մի մասի ապահովագրման արժեքը 1921թ. մայիսի 21-ի դրությամբ կազմել է **2 մլն ֆրանսիական ֆրանկ**¹¹:

Այլ ապահովագրական կազմակերպությունների կողմից շինությունների մյուս մասի ու հողատարածքի ապահովագրական արժեքն էլ կազմել է **2 մլն 65 000 ֆրանսիական ֆրանկ**¹²: «Հայկական Ենի Չարչի» տարածքում համայնքին պատկանող անշարժ գույքն ապահովագրական ընկերությունների հետ կնքված պայմանագրերով 1921 թ. դրությամբ ընդհանուր գնահատված էր **4 մլն 65 000 ֆրանսիական ֆրանկ**:

¹¹ Տե՛ս ՄՏԿԿԱ, Սահակ Բ կաթողիկոսի ֆոնդ, հավաքածոյ 21, ց. 1, թղթ. 26:

¹² Տե՛ս նույն տեղում, հավաքածոյ 40, ց. 1, թղթ. 63:

Նշվածներից բացի, Ադանայի հայկական համայնքը համագործակցում էր նաև «Balkan», «Northern Assurance Company Limited» և այլ օտարկերկրյա ապահովագրական ընկերությունների հետ: «Balkan» ապահովագրական ընկերության հետ 1907-1908 թթ. համայնքի կնքած պայմանագրով համայնական կալվածքներից մեկը ապահովագրվել էր 16000 ֆր. ֆրանկի արժեքով, որի ապահովագրական արժեքը 1911-1912 թթ. Համայնքի և «Northern Assurance Company Limited» ընկերության միջև կնքված պայմանագրով գնահատվել է 1600 ֆունտ ստերլինգ, իսկ 1921-1922 թթ. «Assicurazione Generali» ընկերության հետ կնքված պայմանագրով գնահատվել է 15000 օսմանյան լիրա¹³:

«Լքյալ գույքի մասին» առաջին օրենքի 5-րդ և 8-րդ հոդվածով հայերի ունեցվածքից շուտ փչացող մթերքը, բերքը, ինչպես նաև ընտանի կենդանիները «լքյալ գույքի հանձնաժողովների» կողմից պետք է վաճառվեին աճուրդով, իսկ ստացված գումարն իբր սեփականատիրոջ անունով որպես ավանդ պետք է ի պահ հանձնվեր ֆինանսների նախարարությանը¹⁴: Հատկանշական է, որ օրենքում բացարձակապես չի քննարկվում իենց ունեցվածքը աճուրդով վաճառելու սեփականատերերի համաձայնության հարցը, ինչը սեփականության իրավունքի կոպիտ խախտում է:

Այս անօրինականությունն ավելի է խորացվում օրենքի 9-րդ հոդվածով, որով հայերի հողերից ստացված բերքի և այգիների պտուղ բանջարեղենի աճուրդով չվաճառվելու դեպքում նախատեսվում է այն նվազագույն գնով հանձնել դիմողներին¹⁵: Այս ձևակերպումից արդեն իսկ հստակ երևում է, որ թուրքական իշխանություններին բացարձակապես մտահոգ չեն օսմանահպատակ հայերի ունեցվածքը շուկայականին գոնե մոտ գներով իրացնելու հարցով: Ունեցվածքն աճուրդով իրացնելու սեփականատերերի

¹³ Տե՛ս նույն տեղում, հավաքածոյ 21, ց. 1, թղթ. 26:

¹⁴ Տե՛ս Baghdjian K. K., նշվ. աշխ., էջ 168:

¹⁵ Տե՛ս Ղազարեան Հ., Հայոց լքեալ գոյքերու եւ կալուածքներու թալանը թուրքերու կողմէ, թիվ 6-7:

համաձայնությունը չունենալով՝ թուրքական իշխանությունները որևէ պարտավորություն չէին ստանձնում աճուրդով նրանց բերքի և ընտանի կենդանիների գնորդ չգտնվելու պարագայում դրանք պետական միջոցներով գնելու վերաբերյալ: Նման նախատրամադրվածության պայմաններում աճուրդի կազմակերպումն ուղղակի վերաձվելու էր ձևականության, և «լքյալ գույքի հանձնաժողովները» պարզապես մահմեդական բնակչությանը գրոշներով նվիրաբերելու էին հայերի ամբողջ բերքն ու ընտանի կենդանիներին:

Օրենքի 10-րդ հոդվածն արդեն վերաբերում էր հայերի անշարժ գույքին: Դրանով սահմանվում էր, որ եթե հայերը որևէ մեկին լիազորագիր են տվել իրենց սեփականությունը վաճառելու իրավունքով, ապա նման լիազորագրերով որևէ գործողություն թույլ չէր տրվում կատարել¹⁶: Օրենքում տվյալ հոդվածի ներառումով թուրքական իշխանությունները փաստորեն տեղահանության ենթարկված օրինական տերերին զրկվում էին անգամ լիազորված անձանց միջոցով գույքը վաճառելու և ստացված գումարով իրենց գոյությունն ապահովելու իրավունքից: Մյուս կողմից, ամենևին բացառված չէր, որ տեղահանված հայերի լիազորագրերը կարող էին ստացված լինել վերջիններիս նկատմամբ նրանց ուղեկցող ժանդարմների կողմից բռնություն գործադրելու կամ ինչ-որ պայմանավորվածության հետևանքով: Բոլոր դեպքերում օրենքում ամրագրված այս դրույթով թուրքական իշխանությունները կանխում էին հայերի անշարժ գույքի վաճառքից վերջիններիս եկամուտ ստանալու, ինչպես նաև դրանց՝ երրորդ անձանց փոխանցելու հնարավորությունները՝ տվյալ գործընթացի ամբողջական վերահսկողությունը փորձելով իրենց ձեռքը վերցնել:

Օրենքի հաջորդ հոդվածով, բացահայտվում էին հայերի անշարժ գույքի հետ կապված թուրքական իշխանությունների հեռահար ծրագրերը: 11-րդ հոդվածի համաձայն, տեղահանված հայերի տներում և հողերի վրա վերաբնակեցվելու էին մուհաջիր-

¹⁶ Տե՛ս Ղազարեան Հ., նշվ. աշխ., թիվ 6-7:

ները, որոնք տնօրինելու էին նրանց սեփականությունը¹⁷: Այս դրույթը ոչ միայն ուղղակիորեն հակասում է տեղահանված հայերի անշարժ և շարժական գույքի կնքվելու, պետությանն ի պահ հանձնելու և անձեռնմխելի լինելու մասին նույն օրենքի 2-րդ հոդվածի պահանջին, այլև կոպտորեն խախտում է այդ անշարժ գույքի օրինական տերերի սեփականության իրավունքը, քանզի մահմեդական վերաբնակիչներին հայերի տների և հողերի թեկուզև օգտագործման իրավունքով տրամադրումը կատարվում էր առանց վերջիններիս համաձայնության:

Հոդված 12-ով հստակեցվում էր, որ խոսքը կոնկրետ թուրք վերաբնակիչների մասին է, որոնք պետք է հաշվառվեին՝ ճշտելով, թե նրանցից ով որտեղ է բնակվելու, իսկ 13-րդ հոդվածը զգուշացնում էր, որ մահմեդական վերաբնակիչները հայերի անշարժ գույքին վնաս հասցնելու դեպքում պետք է հատուցեին և կարող էին վտարվել տվյալ բնակավայրից¹⁸: Այս վերջին պահանջին, սակայն, լուրջ նշանակություն չէր տրվում:

Տեղահանված հայերի տներում և հողերի վրա թուրք վերաբնակիչներին տեղավորելուց հետո դեռևս դատարկ մնացած հայերի տներում, օրենքի 14-րդ հոդվածով նախատեսվում էր նույն պայմաններով բնակեցնել նաև թափառաշրջիկ ցեղերին¹⁹: Այսպիսով, թուրք վերաբնակիչներին տեղավորելուց հետո հայերի դեռևս ազատ մնացած տների ու հողերի վրա թուրքական իշխանությունները ձգտում էին հաստատել քրդերին, չերքեզներին և մահմեդական այլ ցեղերին՝ այդպիսով իսպառ բացառելով այդ անշարժ գույքի օրինական տերերի վերադարձի և իրենց ունեցվածքին տեր դառնալու հնարավորությունը: Մյուս կողմից, այս հոդվածների բովանդակությունն անուղղակիորեն հուշում է, որ թուրքական իշխանությունները տեղահանված հայերի ճակատագիրն արդեն

¹⁷ Բարսեղով Յու., Հայերի ցեղասպանության համար նյութական պատասխանատվությունը, Եր., 1999, էջ 5:

¹⁸ Տե՛ս Ղազարեան Հ., նշվ. աշխ., թիվ 6-7:

¹⁹ Տե՛ս նույն տեղում:

կանխորոշված էին համարում և, ըստ այդմ, շատ հանգիստ վճռում էին նրան անշարժ գույքի տնօրինման հարցերը:

Տեղահանված հայերի անշարժ գույքի տնօրինման հարցում թուրքական իշխանություններն ավելի հեռու են գնում, երբ 16-րդ հոդվածով ամրագրում են, որ խաների (վաճառականների խանութներ), բաղնիքների, մթերանոցների, ինչպես նաև թուրք և մյուս մահմեդական վերաբնակիչների տեղավորման համար անհարմար շենքերն աճուրդով վաճառվելու էին, սակայն, այս դեպքում նախորդ հոդվածների օրինակով չի նշվում, որ այդ անշարժ գույքի վաճառքից ստացված գումարը որպես ավանդ սեփականատիրոջ անունով պետք է ի պահ հանձնվեր ֆինանսների նախարարությանը²⁰: Այս հոդվածի պահանջը հակասում է նույն օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածների բովանդակությանը: Ինչպես արդեն նշվել է, 2-րդ հոդվածով թուրքական պետությունը տեղահանված հայերի կնքված անշարժ և շարժական գույքի նկատմամբ ստանձնել էր ընդամենը պահպանման գործառույթ և առանձ սեփականատերերի համաձայնության իրավունք չունեի տնօրինելու, այդ թվում՝ աճուրդով վաճառելու նրանց անշարժ գույքը, մինչդեռ 16-րդ հոդվածով թուրքական իշխանություններն իրենց արդեն նման իրավասություն էին վերապահում: Օրենքի 3-րդ հոդվածով էլ հայերի շարժական գույքը պետք է սեփականատերերի անուններով հաշվառվեր, գնահատվեր ու պահպանվեր եկեղեցիներում, խաներում (վաճառականների խանութներ), պահեստներում և մթերանոցներում, սակայն 16-րդ հոդվածով դրանք համարվում էին աճուրդով վաճառքի ենթակա՝ բացառություն չնախատեսելով անգամ հայերի ունեցվածքի ընդհանուր պահեստարարանների վերածված շենք-շինությունների համար:

Օրենքի 18-րդ հոդվածով 16-րդ հոդվածի աճուրդով վաճառելու դուրյթը տարածում էր նաև հայերի այգիների, պարտեզների, ձի-թաստանների և նման այլ կալվածքների վրա, պայմանով, որ դրանք

²⁰ Տե՛ս Ղազարեան Հ., նշվ. աշխ., թիվ 6-7:

սեփականատերերի համաձայնությամբ օգտագործման իրավունքով տրամադրված չէին մահմեդական վերաբնակիչներին²¹: Այսպիսով, այդ կալվածքների սեփականատեր հանդիսացող տեղահանված հայերը դրվում էին բավական դժվար ընտրության առջև՝ նրանք հարկադրված էին համաձայնվել, որ իրենց այգիները, պարտեզներն ու ձիթաստաններն անհատույց օգտագործման տրամադրվեին մահմեդական վերաբնակիչներին, հակառակ պարագայում դրանք աճուրդով վաճառվելու էին:

Օրենքի 19-րդ հոդվածով թույլատրվում էր հայերից ազատված բնակավայրերում բնակեցնել ոչ միայն տեղի մահմեդականներին, այլև կայսրության այլ տարածքներից Արևմտյան Հայաստան տեղափոխվածներին՝ ներքին գործերի նախարարությունից գրավոր թույլտվություն ունենալու պայմանով²²: Այս դրույթով վերահաստատվում էր այն իրողությունը, որ թուրքական իշխանությունները տվյալ օրենքով փորձում էին «օրինականացնել» հայերի հայրենիքը՝ Արևմտյան Հայաստանը մահմեդականներով վերաբնակեցնելու պետական քաղաքականությունը, պարզապես այդ գործընթացը պետք է վերահսկվեր ներքին գործերի նախարարության կողմից:

Օրենքի 25-րդ հոդվածով «Լքյալ գույքի հանձնաժողովների» կազմավորումն ու դրանց կազմի հաստատումը նույնպես դրվում էր ներքին գործերի նախարարության վրա, իսկ 24-րդ հոդվածով հանձնաժողովներն իրենց պարտականությունները կատարումը պարտավոր էին համաձայնեցնել տվյալ նախարարության հետ²³: Այսպիսով, հայերի այսպես կոչված «Լքյալ գույքի» հանձնաժողովների ստեղծումն ու գործունեությունն ամբողջությամբ հանձնվում էր Թալեաթ փաշայի գլխավորած նախարարությանը: Այս հանգամանքը ևս մեկ անգամ հաստատում է վերջինիս հեղինակած

²¹ Տե՛ս Ղազարեան Հ., նշվ. աշխ., թիվ 6-7:

²² Տե՛ս նույն տեղում:

²³ Տե՛ս նույն տեղում:

«Տեղահանության մասին» և «Լքյալ գույքի» մասին ժամանակավոր օրենքների միջև առկա պատճառահետևանքային կապն ու երիտթուրքերի կառավարության կողմից պետական մակարդակով իրականացվող հայերի ցեղասպանության և նրանց ամբողջ ունեցվածքի բռնազավթման քաղաքականությունն իրավական ակտերով «օրինականացնելու» միտումները: Ասվածի ապացույցն է նաև այն, որ օրենքի 26-րդ հոդվածով «Լքյալ գույքի» հանձնաժողովներն իրենց գործառնություններն իրականացնելիս պետք է համագործակցեին իշխանության տեղական մարմինների հետ, իսկ 27-րդ հոդվածի պահանջով առնվազն 15 օրը մեկ հաշվետվություն պետք է ներկայացնեին ինչպես ներքին գործերի նախարարությանը, այնպես էլ այն նահանգապետությանը, որի տարածքում իրականացնում էին իրենց գործունեությունը²⁴:

Օրենքի 30-րդ հոդվածի համաձայն «Լքյալ գույքի» հանձնաժողովները պետք է կազմված լինեին նախագահից և երկու անդամներից, իսկ 33-րդ հոդվածով սահմանվում էր, որ հանձնաժողովի նախագահի օրական վարձատրությունը կազմելու է մեկ ու կես, իսկ անդամներինը՝ մեկ ոսկի, իսկ կայսրության այլ վայրեր մեկնելու դեպքում ստանալու էին նաև իրենց ճանապարհածախսը²⁵: Առաջին օրենքից ամիսներ անց՝ 1915 թ. սեպտեմբերի 13-ին, երիտթուրքերի կառավարության կողմից ընդունված կանոնադրության 8-րդ հոդվածով սահմանվում էր, որ նշվածներից բացի, նախագահի կողմից այլ վայրեր գործուղված իրեն փոխարինող անձի օրավարձը չի գերազանցելու կես լիրան, իսկ պաշտոնյաներինը և քարտուղարինը՝ 40 դուրուշը, որոնց օրավարձի չափը նշանակվելու է «Լքյալ գույքի» տվյալ հանձնաժողովի կողմից²⁶:

²⁴ Տե՛ս Ղազարեան Հ., նշվ. աշխ., թիվ 6-7:

²⁵ Տե՛ս նույն տեղում:

²⁶ Տե՛ս Փափազյան Ա., Թուրքական վավերագրական նյութեր Օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդների մասին (1839-1915), Եր., 2002, էջ 216:

«Լքյալ գույքի հանձնաժողովների» նախագահների և անդամների վարձատրությունը մահմեդական վերաբնակիչներից գանձված գումարների հաշվին կատարվելու պնդումը բացարձակապես վստահություն չի ներշնչում: Իրականում տվյալ օրենքով հայերի ունեցվածքի շուրջ երիտթուրքերի իշխանությունների, «լքյալ գույքի հանձնաժողովների» ու մահմեդական վերաբնակիչների միջև հսնցավոր մի փակ շրջան էր ստեղծվել: Երիտթուրքական իշխանությունների կողմից ստեղծվել էին «լքյալ գույքի հանձնաժողովներ», որոնց միջոցով տեղահանված հայերի ամբողջ անշարժ գույքը՝ տները, խանութները, պահեստներն ու մթերանոցները, ինչպես նաև մշակելի հողերը, այգիներն ու ձիթաստանները փոխանցվում կամ կեղծ աճուրդներով նվիրաբերվում էին մահմեդական վերաբնակիչներին, որոնցից գանձվող գումարներով ապահովվում էր հանձնաժողովների գործունեությունը: Իրականում, սակայն, մահմեդական վերաբնակիչներից «գանձվող գումարները» ոչ այլ ինչ էին, եթե ոչ հայերի ունեցվածքի ապօրինի շահագործումից ստացված եկամուտներ: Այսինքն, «լքյալ գույքի հանձնաժողովների» անդամներն իրականում վարձատրվում էին տեղահանված և ցեղասպանված հայերից ապօրինաբար բռնագավթված գույքի վաճառքից կամ դրա շահագործումից ստացված եկամուտների հաշվին:

Ասվածը հաստատվում է նաև 1915 թ. հոկտեմբերի 26-ի «Լքյալ գույքի» կանոնադրության 13-րդ հոդվածի բ. կետով, որով կառավարությանն ի պահ հանձնված տեղահանված հայերին պատկանող դրամական միջոցները, ապրանքները և ամեն տեսակի գույքերը փոխանցվում էին «Լքյալ գույքի» հանձնաժողովների տրամադրության տակ²⁷:

Այսպիսով, 1915 թ. հունիսի 10-ի «Լքյալ գույքի մասին» առաջին օրենքով մի կողմից պատրանք էր ստեղծվում, թե իբր պաշտպանվում էին գույքերի նախկին տերերի՝ հայերի իրավունքները,

²⁷ Տե՛ս Փափագյան Ա., նշվ. աշխ., էջ 217:

սակայն մյուս կողմից ակնհայտ երևում է հայերի գույքային իրավունքների լիարժեք փոխանցումը մուհաջիրներին: Տվյալ օրենքի ընդունումով խնդիր էր դրված ոչ թե իսկապես հաշվառել ու գնահատել հայերի ունեցվածքը՝ հետագայում նրանց վերադարձնելու նպատակով, այլ հայերի գույքերի հետ կապված օրինական գործողությունների նմանակում (իմիտացիա) ստեղծելով, «իրավական» մեխանիզմներով այդ ամբողջ ունեցվածքի թալանի գործընթացը պահել պետական վերահսկողության տակ:

1915 թ. հունիսի սկզբներին թուրքական կառավարությունը հայտարարություն տարածեց, թե հայերը կարող են վաճառել միայն իրենց շարժական գույքը: Ակնհայտ էր, որ մի քանի ժամվա կամ օրվա ընթացքում նրանք չէին կարող շուկայական իրական գնով վաճառել իրենց ունեցվածքը, քանզի այդ ժամկետի մասին տեղյակ էին նաև թուրքերն ու մյուս մահմեդականները, որոնք չէին շտապում հայերի առաջարկած գներով ձեռք բերել նրանց գույքը: Ժամանակի սղությունը հարկադրում էր հայերին չնչին գումարով մահմեդականներին վաճառել, ըստ էության, նվիրաբերել իրենց ողջ կյանքի ընթացքում ստեղծածը, ինչը թալանի միայն սկզբնական փուլն էր: Թուրքերը դիտավորյալ չէին գնում հայերի ունեցվածքը՝ քաջ գիտենալով, որ նրանց հեռանալուց հետո կարող են անվճար տիրանալ դրան: Հայերի արժեքավոր իրերը՝ դրամ, մատանիներ, ժամացույցներ, գոհարեղեն, տարվում էին ոստիկանատներ՝ իբրև մինչև հայերի վերադարձը ապահով պահելու համար, սակայն հետո այդ ամենը բաժանվում էր թուրքերին: Նույնիսկ վաճառքից ստացած չնչին գումարները հայերից խլվում էին հենց ոստիկանության կողմից²⁸:

«Լքյալ գույքերի հանձնախմբերի» գործունեության մասին պատկերացում կարելի է կազմել հետևյալ փաստերից: Այնթապի մայր տաճարի 2035 կտոր առարկաները 1915 թ. օգոստոսի 23-ին հանձնախմբերը գնահատվեցին ընդամենը 6690 դուրուշ: Կրոնա-

²⁸ Լևոն Վարդան, Հայկական տասնհինգը, էջ 108:

կան գրքերն առհասարակ չէին գնահատվում, իսկ եկեղեցական պարագաները գնահատվում էին մետաղի արժեքով: Ձեռքի աշխատանքը և արվեստի գործերը բացարձակ արժեք չունեին: Չկար այդ ամենի իրական արժեքի ոչ գիտակցում և ոչ էլ համապատասխան ձևով գնահատելու ցանկություն²⁹:

Բուրսայում Ավստրո-Հունգարիայի հյուպատոսը դեսպանին ուղարկված 1915 թ. օգոստոսի 23-ի հաշվետվության մեջ բացահայտում է «Լքյալ գույքերի» հանձնախմբերի կողմից հայերի անշարժ գույքի «վաճառքի» կազմակերպման, իսկ իրականում նրանց ունեզրկման մեխանիզմը: Հյուպատոսը վկայում է, որ սահմանաված ժամկետում հայերն իրենց անշարժ գույքը վաճառելու համար ներկայանում էին գրասենյակ, որտեղ պետական ծառայողները վկաների ներկայությամբ ստորագրում էին վաճառքի փաստաթղթերը, տեղում հաշվում էին գումար, դնում պայուսակի մեջ և դուրս գալիս: Մուտքի մոտ, սակայն վաճառողներին սպասող թուրքերը նրանցից խլում էին գումարով պայուսակը, որն օգտագործվում էր հաջորդների անշարժ գույքին տիրանալու «գործարքներում»³⁰: Այս կերպ «Լքյալ գույքերի» հանձնախմբերը հայերի անշարժ գույքի վաճառքի օրինական գործողության պատրանք էին ստեղծում, թե իբր նրանք ինքնակամ վկաների ներկայությամբ վաճառել են իրենց գույքը և դրա դիմաց գումար ստացել, սակայն այս մեքենայության միջոցով փաստորեն բռնազավթում էին նրանց ունեցվածքը:

Տեղահանված հայերի ունեցվածքը բռնազավթելու հարցում երիտթուրքերի կառավարությունը չբավարարվեց միայն այս օրենքով: Առաջին օրենքի ընդունումից ամիսներ անց՝ 1915 թ. սեպտեմբերի 13-ին ընդունվեց «Այլ վայրեր տեղափոխված անձանց ունեցվածքին, պարտքերին և լիազորագրերին վերաբերող նախնական» կամ «Լքյալ գույքի մասին» տասնմեկ հոդվածներից բաղկա-

²⁹ Նույն տեղում, էջ 103:

³⁰ Տե՛ս Baghdjian K. K., նշվ. աշխ., էջ 194:

ցած երկրորդ օրենքը³¹: Ի տարբերություն առաջինի, երկրորդ օրենքի վերնագրից երևում է, որ դրանով որպես կարգավորման առարկա նշվում են ոչ միայն տեղահանված հայերի գույքի, այլև դրանց հետ կապված պարտքերի և լիազորագրերի հարցերը, թեև նախորդ օրենքի 10-րդ հոդվածով կարծես թե բացառվել էր լիազորագրեր ստացած անձանց կողմից տեղահանված հայերի գույքի նկատմամբ որևէ գործողություններ կատարելը:

Բանն այն է, որ հակառակ այդ արգելքին, «Լքյալ գույքի» հանձնախմբերի, տեղական իշխանությունների, ռազմական նախարարության գրություններից պարզ է դառնում, որ երիտթուրքական կառավարությունն, այնուամենայնիվ, տեղերում չէր հաջողվում ապահովել հայերի ամբողջ հարստության կանտնավոր փոխանցումը պետական գանձարան: Չնայած արգելքներին ու սահմանված պատիժներին, կայսրության տարբեր բնակավայրերում ընթանում էր տեղահանված հայերի հարկադրաբար լքված անշարժ գույքի և ունեցվածքի անվերահսկելի յուրացման գործընթաց, ուստի երկրորդ օրենքի ընդունումով երիտթուրքական կառավարությունը փորձում էր բացառել այդ գույքի հափշտակման նոր դեպքերը: Ընդ որում, խոսքը ոչ միայն ավագակների, այլև մանր ու միջին պաշտոնյաների մասին էր, որոնք, չարաշահելով իրենց պաշտոնական դիրքը, նույնպես օգտվում էին ընձեռված հնարավորություններից և տեղի դառնում հայերի ունեցվածքի մի մասին: Այդ մասին տեղեկություններ կան անգամ թուրքական ռազմական տրիբունալների դատավճիռներում: Այսպես՝ Տրապիզոնի տրիբունալի կայացրած դատավճռում մանրամասն նկարագրվում է, թե ինչպես է ոստիկանապետ Նուրի Էֆենդիի հրամանով հափշտակվել հայերի «լքյալ գույքը»³²: Բույուք Դերեի տրիբունալի դատավճռում էլ նշվում էր,

³¹ Տե՛ս Պելլերյան Ա., Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), հ. I, Եր., 2005, էջ 197-199:

³² Տե՛ս Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Ա. Փափազյանի, Եր., 1988, էջ 169:

որ նախկին ոստիկանապետ Աբդուլ Քերիմ բեյը կողոպուտի ու հափշտակության է ենթարկել տեղահանվողների գույքը: Վկաների ցուցմունքների համաձայն՝ նա ազահությանը տարված եռանդագին ջանքեր էր գործադրել թաքցված ապրանքները հայտնաբերելու համար³³:

Նոր օրենքի 1-ին հոդվածն, ըստ էության, կրկնում էր նախկին օրենքի դրույթները, նշելով, որ «Տեղահանության մասին» օրենքի համաձայն տեղահանված անձանց գույքը, դրամական միջոցները և պարտքերը պետք է կարգավորվեն հանձնաժողովների կողմից: Նախկին օրենքի նույն հոդվածի համեմատ տարբերությունը կայանում էր միայն նրանում, որ հանձնախմբերը յուրաքանչյուր սեփականատիրոջ համար պետք է կազմեին նրա գույքի վերաբերյալ առանձին հաշվետվություն³⁴: Այս դրույթն ակնհայտորեն վկայում է այն մասին, որ նախորդ օրենքից եղած դժգոհությունները, բողոքներն ու կասկածները թուրքական իշխանությունները փորձում էին փարատել հաշվետվություններ կազմելու միջոցով, քանզի նախկին օրենքով դրանք կազմվում էին միայն եկեղեցական գույքի համար:

2-րդ հոդվածով տեղահանված անձանց շենքերը, եկեղեցապատկան հողերը պետք է գրանցվեին սոցիալական նախարարության, իսկ հողատարածքները՝ տնտեսական նախարարության վրա: Գույքի հետ կապված պարտքերը «մարելուց» հետո այս նախարարությունները գումարի մնացորդն իբր օրինական տիրոջը պետք է վերադարձնեին: Անձանց սեփականությունը պետք է հաստատվեր հողային նախարարության կողմից տրված իրավունքի վկայականով, սակայն եթե տեղափոխությանը նախորդող տասնհինգ օրվա ընթացքում նշված անձանց կողմից այն ուրիշներին փոխանցելու կամ վաճառելու գործընթացներում կեղծիք կամ խարդախություն նկատվեր, ապա գործարքը չեղյալ կհամարվեր³⁵: Այս

³³ Տե՛ս Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, էջ 174:

³⁴ Պեյլերյան Ա., նշվ. աշխ., էջ 197:

³⁵ Նույն տեղում:

հողվածով շրջանառության մեջ էր դրվում «լքյալ գույքերի» վրա եղած «պարտքերի վճարման» գաղափարը՝ տպավորություն ստեղծելով, թե իբր պետական գանձարան փոխանցված գումարները գանձվել ու գանձվելու են բացառապես հայերի կողմից հարկադրաբար լքված գույքերի վրա եղած պարտքերի դիմաց: Այս դրույթի ընդհանուր «տրամաբանությունն» այն էր, որ կայսրության հարավային շրջաններ տեղահանված օրինական սեփականատերերի բացակայության պայմաններում նրանց անշարժ գույքից գանձվող պարտքերի գործընթացը հանգեցնելու էր նրան, որ այսպես կոչված «չվճարված» կամ «ժամկետանց» պարտքերի դիմաց նրանց գույքն, ի վերջո, ամբողջությամբ պետականացվելու էր:

Տվյալ հողվածով հայերին մինչև տեղահանությունը փաստորեն արգելում էին իրենց գույքի հետ կապված որևէ գործարք կատարել՝ վաճառել կամ նվիրատվություն անել, քանզի դա «կեղծիքի» կամ «խարդախության» հիմնավորմամբ կարող էր չեղարկվել: Փաստորեն, տեղահանությունից առաջ օսմանահպատակ հայն արդեն իսկ զրկված էր իր ունեցվածքը տնօրինելու իրավունքից, հայերն իրենց մահից առաջ արդեն իսկ սեփականագրված էին:

Այդուհանդերձ, պետք է նշել, որ տեղահանությանը նախորդած 15 օրերի ընթացքում հայերից ստացված անշարժ գույքի հանձնման կամ վաճառքի կեղծ կամ բացարձակ խաբեության միջոցով ձեռք բերված փաստաթղթերի մասին դրույթն արդեն ուղղակիորեն վերաբերում է տեղի մահմեդականների կամ պաշտոնատար անձանց կողմից հայերի ունեցվածքին տիրանալու դեպքերին: Օրենքի տվյալ հողվածով փաստորեն սահմանվում էր, որ մահմեդականների կամ տեղի պաշտոնյաների կողմից հայերից հարկադրաբար խլված կամ էժան գներով կորզված սեփականության վերաբերյալ փաստաթղթերը դատարանների կողմից կարող էին չեղյալ համարվել³⁶, իսկ այդ դեպքում գույքը շարունակվելու էր տնօրինվել պետության կողմից: Բոլոր դեպքերում այս

³⁶ Պեյլերյան Ա., նշվ. աշխ., էջ 197:

ամենն ուղղված էր նրան, որ հայերն իրենց ունեցվածքի վաճառքից ընդհանրապես որևէ գումար չստանային և աքսորավայրերում գոյատևելու հնարավորություն չունենային:

Օրենքի 3-րդ հոդվածում ամրագրվում էր, որ տեղահանված անձանց կանխիկ գումարը, անձնական գույքը, վարկերը և պահ տրված գումարները պետք է հավաքվեին և ամբողջացվեն հանձնախմբերի նախագահների կողմից: Ստացված գումարներն ունեցվածքի տիրոջ անունով ի պահ էր տրվելու տնտեսական նախարարությանը³⁷: Այս հոդվածից երևում է, որ թե՛ «լքյալ գույքերից» գանձված պարտքերը և թե՛ դրանց վճարումից հետո եղած մնացորդը, այսինքն՝ այդ գույքերի վաճառքից ստացված ամբողջ գումարը կենտրոնանալու էր միևնույն տեղում՝ պետական գանձարանում:

«Լքյալ գույքի մասին» երկրորդ օրենքի 4-րդ հոդվածով սեփականատերերի կամ տեղահանված հայերից լիազորագրեր ունեցող անձանց կողմից «լքյալ գույքի հանձնաժողովներին» անշարժ գույքի վերաբերյալ իրենց պահանջները ներկայացնելու համար սահմանված ժամկետը երկարացվում էր երկու, իսկ արտասահմանում բնակվողների համար՝ չորս ամսով³⁸: Գործնականում, սակայն, ոչ նախկին և ոչ էլ նոր սահմանված ժամկետներն իրատեսական չէին, քանի որ «Տեղահանության մասին» օրենքի գործադրման, իսկ փաստացի կայսրության ողջ հայ բնակչությանը բնաջնջելու պայմաններում ուղղակի աներևակայելի էր, որ աքսորավայրում դեռևս հրաշքով ողջ մնացած հայերը նշված ժամկետներում հասնեին հանձնախմբերի գործունեության վայրեր, որպեսզի իրենց գույքի վերաբերյալ պահանջ ներկայացնեին: Եթե նույնիսկ մի պահ պատկերացնենք, որ ցեղասպանությունից հրաշքով փրկված հայը, կրկին իր կյանքը վտանգելով, հասներ հանձնախմբերի գործունեության վայր ու հանդես գար գույքի վերականգնման պահանջով, ապա անգամ այդ դեպքում իր սեփականության իրավունքը

³⁷ Տե՛ս Պեյլերյան Ա., նշվ. աշխ., էջ 197:

³⁸ Լեւոն Վարդան, Հայկական տասնհինգը, էջ 157:

պաշտպանելու հարցում հաջողության հասնելու իրական որևէ հնարավորություն չունենք: Բանն այն է, որ դեռևս 1915 թ. սեպտեմբերի 13-ին ընդունված կանոնադրությամբ «լքյալ գույքի հանձնաժողովների» անդամները առանց որևէ բացատրության ու հիմնավորման հայերի իրավունքների վերականգնման օրինական պահանջները մերժելու լիազորություններ էին ստացել³⁹:

Ի հավելումն նշենք, որ տվյալ հոդվածի վերջում այնպիսի պայման էր դրվում, որը հայ բնակչության կողմից ուղղակի անիրագործելի էր: Վերադարձող անձանց պարտադրվում էր բնակության վայր ընտրել այն քաղաքը, որը հանձնաժողովի նստավայրն է՝ իբր թե հաղորդակցվելու միջոցներն ապահովելու նպատակով⁴⁰: Սակայն «Տեղահանության մասին» ժամանակավոր օրենքի գործադրման պայմաններում նրանք գրկված էին իրենց բնակության վայրն ինքնուրույն ընտրելու հնարավորությունից և ցանկացած պահի կարող էին տեղահանվել: Այսպիսով, օրենքը կազմողների կողմից միտումնավոր այնպիսի անիրագործելի պահանջներ էին առաջադրվում, որ ընդամենը ստեղծվեր հայերի գույքը վերադարձնելու պատրանք, սակայն ճիշտ հակառակ գործընթացը կատարվեր:

Օրենքի 5-րդ հոդվածով «Լքյալ գույքի» հանձնաժողովները յուրաքանչյուր անշարժ գույքի պարտքի և կանխիկ գումարի հանրագումարի, այսինքն՝ գույքի պարտքը վճարելուց հետո գումարի մնացորդի վերաբերյալ պետք է տեղեկացնեին շահագրգիռ անձանց, այսինքն՝ օրինական սեփականատերերին, որոնք 15 օրյա ժամկետում կարող էին այդ որոշումները բողոքարկել դատարաններում⁴¹: Այս դրույթը պարզապես ծաղր էր տեղահանված հայերի նկատմամբ, քանզի հազիվ թե «Լքյալ գույքի» հանձնաժողովներն իրենց պարտավորված զգային Սիրիայի և Միջագետքի անապատ-

³⁹ Նույն տեղում, էջ 167:

⁴⁰ Պեյլերյան Ա., նշվ. աշխ., էջ 198:

⁴¹ Տես նույն տեղում:

ներ աքսորված հայերին տեղեկացնել, թե որքան պարտք են գանձել նրանց անշարժ գույքից և, ի վերջո, ինչ ճակատագրի է արժանացել այդ գույքը: Առավել ևս դժվար է պատկերացնել, որ անապատներում իրենց գոյությունը մի կերպ քարշ տվող հայերը, տեղեկանալով իրենց գույքի բռնագավթման մասին, 15 օրում ինչպես էին վերադառնալու, որպեսզի դատարաններում պաշտպանեին իրենց գույքային իրավունքները:

«Լքյալ գույքի մասին» 7-րդ հոդվածը, ուղղակիորեն հակասելով 1915 թ. հունիսի 10-ին ընդունված «Լքյալ գույքի մասին» առաջին օրենքի 2-րդ հոդվածի պահանջին, ամրագրում էր, որ տեղահանված հայերի ունեցվածքի վրա եղած պարտքերը մարելու նպատակով պետությանն ի պահ հանձնված պարտապանների, այդ թվում հայերի, անշարժ գույքի վրա դրված արգելանքը վերացվում է և արգելանքի հեղինակները, այսինքն՝ օրինական սեփականատերերը, պետք է համակերպվեն սույն օրենքի հետ⁴²: Այսպիսով, երիտթուրքական կառավարությունը տեղահանված և բնաջնջման ենթական հայերի ունեցվածքին օր առաջ տիրանալու նպատակին հասնելու ճանապարհին պատրաստ էր անգամ իրարամերժ օրենքներ ընդունել:

Սեպտեմբերի 13-ի օրենքի 8-րդ հոդվածի համաձայն մշակվեց և հոկտեմբերի 26-ին «Թաքվիմ ի Վեքայի» պաշտոնաթերթում հրապարակվեց 25 հոդվածից բաղկացած «1915 թ. սեպտեմբերի 13-ին ընդունված ժամանակավոր օրենքի գործադրման համար այլ վայրեր տեղափոխված անհատների լքյալ գույքերին և պարտքերին վերաբերող կանոնադրությունը», որի 2-րդ հոդվածով տեղահանված հայերի անշարժ գույքի պարտքերից բացի արժարժվում է նաև հարկատվության ցուցակներով դրանցից գանձվող պետական հարկերի հստակեցման և դրանց գանձման հարցը⁴³: Ակնհայտ է, որ, կառավարության ժամանակավոր օրենքով իրենց բնակավայ-

⁴² Պեյերյան Ա., նշվ. աշխ., էջ 199:

⁴³ Տե՛ս Փափազյան Ա., նշվ. աշխ., էջ 214-222:

րերից տեղահանված լինելով, հայերը ո՛չ շահագործում և ո՛չ էլ եկամուտ էին ստանում իրենց անշարժ գույքից: Ավելին՝ նրանք այդ գույքից զրկվում էին կամ շուկայականից անհամեմատ էժան գներով մահմեդական հարևաններին զիջելու, կամ «լքյալ գույքի հանձնաժողովների» կողմից թալանչիական «աճուրդների» կազմակերպման հետևանքով: Այս ամենը որևէ կերպ հաշվի չէր առնվում թուրքական իշխանությունների կողմից, որոնք պահանջում էին վճարել այդ անշարժ գույքի պետական հարկերը և այդ անվան տակ փաստորեն շարունակում էին տեղահանված հայերի ունեցվածքի թալանի գործընթացը:

Կանոնադրության 5-րդ հոդվածով սահմանվում էր «լքյալ գույքի հանձնաժողովների» ձևավորման կարգն, ըստ որի դրանք կազմված էին լինելու արդարադատության և ֆինանսների նախարարությունների կողմից ընտրված մեկական ներկայացուցիչներից, իսկ հանձնաժողովը գլխավորելու էր ներքին գործերի նախարարության կողմից նշանակված նախագահը⁴⁴: Այս հոդվածի կարևոր է այնքանով, որ հենց երիտթուրքերի ընդունած օրենքով փաստվում է տեղահանված հայերի անշարժ գույքի թալանի կազմակերպման գործում թուրքական պետության պատասխանատվությունը, որի գործադիր իշխանության երեք նախարարություններ ներգրավված էին տվյալ գործընթացում:

Կանոնադրության 19-րդ հոդվածի պահանջով «լքյալ գույքի հանձնաժողովները» տեղահանված հայերի անշարժ և շարժական գույքի վերաբերյալ պարտավոր էին բարեխղճորեն գրառումներ կատարել երկու մատյաններում: Մայր մատյանում պետք է գրանցվեին տեղահանված հայերի անշարժ և շարժական գույքի վերաբերյալ ընդհանուր տեղեկությունները, իսկ գործածականում՝ արձանագրվելու էին ինչպես այդ գույքի հետ կատարվող գործարքները և կատարվելու էր այդ գործարքներ դրամական միջոցների

⁴⁴ Տե՛ս Փափազյան Ա., նշվ. աշխ., էջ 215:

հաշվապահական հաշվառումը⁴⁵: Քանի որ Օսմանյան կայսրությունում գործող հայկական հաստատությունների, ինչպես նաև օսմանահպատակ հայերի մեծագույն մասի պարագայում չեն պահպանվել նրանց պատկանող անշարժ գույքի սեփականության վկայականները, ուստի ցեղասպանությանը զուգահեռ իրականացված հայերի ունեցվածքի բռնագավթման իրական ծավալները հստակեցնելու հարցում թուրքական արխիվներում պահվող «լքյալ գույքի հանձնաժողովների» մայր և գործածական մատյանների հրապարակումը վճռորոշ նշանակություն կարող է ունենալ: Այս հանգամանքից ելնելով, կարծում ենք, որ Հայոց ցեղասպանության իրագործմամբ հայ ժողովրդին հասցված մշակութային ու նյութական վնասների ճշգրտման, ինչպես նաև այդ հետևանքների հաղթահարման տեսանկյունից «լքյալ գույքի հանձնաժողովների» մատյանների հրապարակման պարտադիր պահանջ պետք է ներկայացվի թուրքական պետությանը:

Երիտթուրքերի կառավարության կողմից գործադրված Հայոց ցեղասպանության ու զանգվածային ունեզրկման «օրենսդրական» մեխանիզմները փոքր-ինչ կատարելագործված մեթոդաբանությամբ կիրառվեցին ոչ միայն Գերմանիայում, այլև Եվրոպայի օկուպացված երկրներում: Օրինակ, Նորվեգիայի գերմանական օկուպացիայի ժամանակաշրջանում (1940 թ. ապրիլի 9 - 1945 թ. մայիսի 8) հրեական համայնքի նկատմամբ իրականացվեցին նույն դաժանությունները, ինչ օկուպացված Եվրոպայի մյուս երկրներում: Նորվեգիայում հրեական ունեցվածքի բռնագավթումն իրականացնում էր պետությունը, և այդ ունեցվածքը փոխանցվում էր պետական գանձարան: Այդ նպատակին հասնելու համար կիրառվում էին այնպիսի մեթոդներ, որոնք ապահովում էին հրեական կրոնական և մշակութային կենտրոնների, ինչպես նաև հրեական ընտանիքների պատկանող առևտրային ձեռնարկությունների լիակատար ոչնչացում: Այս միջոցառումների իմաստը կայանում էր նրանում,

⁴⁵ Տե՛ս Փափազյան Ա., նշվ. աշխ., էջ 221:

որպեսզի նացիստական իշխանությունը հնարավորություն ունենար այդ ունեցվածքը վերցնել իր հսկողության տակ, ինչպես նաև երաշխավորեր հրեաների կողմից գործարար բոլոր կապերի ու գործողությունների դադարեցումը⁴⁶:

1942 թ. հոկտեմբերի 26-ին Նորվեգիայում ընդունվեց հրեաներին պատկանող ունեցվածքի բռնագրավման մասին օրենքը, որով փորձ էր կատարվում «օրինական» տեսք տալ բնաջնջման ենթարկվող նորվեգացի հրեաների կապիտալի բռնագավթմանը: Այս օրենքի վրա հիմնվելով, Նորվեգիայում հրեաների ֆիզիկական ոչնչացմանն ու արտաքսմանը զուգահեռ սկսվում է նրանց կապիտալի բռնագավթման գործընթացը: Ակնհայտ է, որ բնակչության մի ամբողջ խմբի ունեցվածքի ամբողջական բռնագավթումն անհնարին էր առանց նախապես կազմված ծրագրի:

Հայերի ունեցվածքի բռնագրավմամբ զբաղվող «Լքյալ գույքի հանձնախմբերի» ու Նորվեգիայում հրեաներից բռնագավթված կապիտալի կառավարման ու տնօրինման գործով զվաղվող «Լիկվիդացիոն խորհուրդների» միջև զուգահեռներ անցկացնելու դեպքում դրանց գործունեության մեջ բավական ընդհանրություններ են ի հայտ գալիս: Հրեաների սեփականության և ակտիվների բաշխումն իրականացվում էր հատուկ սխեմաներով, որը ծառայում էր նացիստական ռեժիմի շահերին, չնայած որոշ ակտիվներ էլ իրացվում էին, իսկ իրացումից ստացված շահույթը հետագայում հանդիսացավ հրեական միավորված ակտիվների ձևավորման հիմքը: Պատերազմի ավարտին լիկվիդացիոն խորհուրդն իր վարչարարական ծախսերի նպատակով արդեն ծախսել էր հրեաների ակտիվների մոտ 30 %-ը⁴⁷:

Պատերազմից հետո սկսվեց նշված ունեցվածքի վերադարձման բարդ գործընթացը: Սկզբունքորեն բոլոր նրանք, անկախ նրա-

⁴⁶ Տե՛ս Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության նյութական հետևանքների հաղթահարման հիմնահարցը, էջ 22:

⁴⁷ Տե՛ս Райзель Б., Новый взгляд на историю. Процесс реституции в Норвегии, http://libfl.ru/spoils/spoils/rus/spoil5_3.html

նից հրեա էին, թե՛ ոչ, պետք է հնարավորություն ունենային հասնելու իրենց ունեցվածքի վերադարձմանը: Սակայն պարզվեց, որ դա հնարավոր չէ ապահովել, ինչի պատճառներից մեկն այն էր, որ նորվեգական իշխանությունների կողմից չէին ապահովվել ռեպարացիայի համար անհրաժեշտ սկզբնական ֆինանսական միջոցները: Բացի այդ, իշխանությունները սահմանեցին բավականին բարդ կանոններ, որոնք հիմնվում էին նրանց կողմից իրականացվող հետպատերազմյան ռեպարացիայի համահարթեցման վերականգնման սկզբունքների վրա: Համահարթեցման սկզբունքն իրականացվում էր այդ գումարների չափը հատուկ սանդղակի կիրառմամբ նվազեցնելու միջոցով, ինչի հետևանքով որքան մեծ էր կրած վնասի չափը, այդքան ցածր էր լինում փոխհատուցման տոկոսը: Ինչ վերաբերում է վերականգնման սկզբունքի կիրառմանը, ապա դրա էությունը կայանում էր նրանում, որ ընտանիքի յուրաքանչյուր անդամի մահվան հետ կապված՝ համապատասխանաբար նվազում էր փոխհատուցման ենթակա ունեցվածքի չափը:

Կապված ոչնչացման կոլեկտիվ և համատարած բնույթի, ինչպես նաև մահվան գրանցման յուրահատուկ կարգի հետ, փոխհատուցման նշված սկզբունքները հրեաների համար ունեցան ծանր հետևանքներ: Նույնիսկ մահացածների օրինական ժառանգները ստանում էին կա՛մ նվազեցված փոխհատուցում, կա՛մ էլ նրանց ընդհանրապես հաշվի չէին առնում փոխհատուցման տրամադրման ժամանակ: Աբսուրդը կայանում էր նրանում, որ ռեպարացիոն մարմինները մահացած հրեաների ժառանգներին համարում էին «պատերազմական սպեկուլյանտներ», քանի որ նրանք իբր ձեռք էին բերում այնպիսի ունեցվածք, որը սովորական պայմաններում նրանց համար անհասանելի կլիներ: Այս ցինիկ մոտեցումից ելնելով՝ ռեպարացիոն մարմինները գտնում էին, որ մահացածների

ժառանգներին պետք չէ ամբողջ ծավալով վերադարձնել նրանց զոհված նախնիների ունեցվածքը⁴⁸:

Ինչպես Օսմանյան կայսրությունում «Լքյալ գույքի» հանձնաժողովները, այնպես էլ Նորվեգիայում ռեպարացիոն մարմինները տարբեր հնարքներով ու անհեթեթ պատճառաբանություններով փորձում էին խուսափել ցեղասպանության զոհերից բռնագավթված ունեցվածքը նրանց օրինական ժառանգներին վերադարձնելուց: Նորվեգիայի ռեպարացիոն մարմինները մահվան գրանցման այնպիսի կարգ էին սահմանել, որն էականորեն բարդացնում էր հատուցման գործընթացը: Հատուցումը տրվում էր երկու խմբերի՝ ա. ողջ մնացած և որպես միավորված հրեական ակտիվների սեփականատերեր գրանցվածներին, բ. գրանցված անձանց ժառանգներին: Երկրորդ խմբի մեջ ընդգրկվում էին միավորված հրեական ակտիվների սեփականատիրոջ ընտանիքի անդամները, սակայն նրանք իրավունք չունեին պահանջելու իրենց ժառանգությունը՝ քանի դեռ գրանցված սեփականատերը պաշտոնապես մահացած չհայտարարվեր: Իսկ քանի որ համակենտրոնացման ճամբարներում մահացածների հարազատներին մահվան վկայականներ չէին տրվում, ապա ողջ մնացած հրեաները չէին կարողանում ապացուցել, որ իրենց անհետ կորած հարազատներն իսկապես մահացել են: Ընդհուպ մինչև 1947 թ. աշունը նորվեգական իշխանություններն այդ սպանված մարդկանց պաշտոնապես մահացած չէին ճանաչում՝ այդպիսով խուսափելով նրանց ժառանգներին հատուցում տալուց:

Ցինիզմը հասնում էր այն աստիճանի, որ եթե մորն ու երեխաներին միասին էին ուղարկել գազախցիկ, ապա ռեպարացիոն մարմինները փորձում էին ճշտել, թե ինչ հաջորդականությամբ են նրանք մահացել, որպեսզի դրա հիման վրա ժառանգների կարգում որոշեին յուրաքանչյուր ժառանգորդի տեղը: Նմանօրինակ արհես-

⁴⁸ Տե՛ս Մարության Ա., Հայոց ցեղասպանության նյութական հետևանքների հաղթահարման հիմնահարցը, էջ 34:

տական բարդությունների հետևանքով գույքային հարցերի կարգավորման գործընթացը չափազանց երկարաձգվում էր և սովորաբար տևում առնվազն 8-10 տարի: Վերջին դատական գործը, որի մասին կան փաստացի տվյալներ, տեղի է ունեցել 1987 թ., որի երկարատևության արդյունքում գույքի նկատմամբ հաշվարկվող ծախսերը չափազանց մեծ էին ստացվել և արդյունքում ռեպարացիոն մարմինները վերադարձրել էին կորսված ունեցվածքի ընդամենը կեսը⁴⁹:

Շուտով բացահայտվեց երիտթուրքական իշխանությանների այն կեղծիքը, թե իբր տեղահանված հայերի հարկադրված լքված գույքի վաճառքից ստացված հասույթն ուղղվում է կայսրության պատերազմական ծախսերը հոգալու համար, քանի որ թուրքական ռազմակատ տրիբունալներում երիտթուրքերի դատավարության ընթացքում հայտնի դարձավ, որ այդ ունեցվածքը կառավարության անդամների ու տեղական պաշտոնյաների սեփականության էր վերածվում: Երիտթուրք պարագլուխներին պատասխանատվության կանչելու նպատակով ստեղծված ռազմական դատական ատյանում տված իր ցուցմունքներում թուրքական երրորդ բանակի հրամանատար Վեհիբ փաշան վկայում էր, որ հայերի կոտորածն ու բնաջնջումը, ինչպես նաև ունեցվածքի հափշտակումն ու կողոպուտը նախապես վճռվել էր «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի կողմից և որ իր բանակի տեղակալման շրջաններում գործող հրոսակախմբերի կազմակերպողն ու ղեկավարը Բեհաեդդին Շաքիրն էր: Էրզրումի վալի Մյունիր բեյը ևս վկայում էր, որ Բեհաեդդին Շաքիրի կազմած հրոսակախմբերը, հարձակվելով Քդիի ճանապարհով Էրզրումից ուղարկված հարուստ հայերի քարավանների վրա, կոտորել են հայերին, իսկ նրանց ունեցվածքը՝ կողոպտել⁵⁰:

⁴⁹ St' u Райзель Б., Новый взгляд на историю. Процесс реституции в Норвегии, http://libfl.ru/spoils/spoils/rus/spoil5_3.html

⁵⁰ St' u Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության..., էջ 177:

«Միություն և առաջադիմություն» կուսակցության պատասխանատու քարտուղարների նկատմամբ թուրքական ռազմական տրիբունալի կայացրած դատավճռում նույնպես նշվում էր, որ նրանք մասնակցել են տեղահանություններին, կոտորածներին և հափշտակված, կողոպտված ապրանքների շնորհիվ դիզել հսկայական հարստություն, իսկ «Տեղահանության մասին» ժամանակավոր օրենքն օգտագործել են անձնական շահույթ ստանալու նպատակով և տիրացել հայերի «լքյալ գույքին»: Վկաների ցուցմունքների համաձայն, տեղահանված հայերի «լքյալ գույքի» վաճառքից առաջ երիտթուրքական կուսակցության Կաստամունյի պատասխանատու քարտուղար Հասան Ֆեհմի Էֆենդին հանձնախմբերի անդամների հետ միասին մտնում էր հայերի տներն ու խանութները, դուրս բերում արժեքավոր իրերը, ինչից հետո միայն թույլ տալիս դրանք բացել ու աճուրդի հանել⁵¹:

«Լքյալ գույքի մասին» երիտթուրքական օրենքների ընդունումն ու գործադրումը միանշանակ հակասում էր կայսրության հիմնական օրենքին՝ Սահմանադրությանը: Օսմանյան խորհրդարանի 1915 թ. սեպտեմբերի 21-ի և հոկտեմբերի 30-ի նիստերում պատգամավոր Ահմեդ Ռիզան, մեջբերելով երկրի հիմնական օրենքի 21-րդ հոդվածը նշում էր, որ իրավունք չկա սեփականատիրոջ կամքին հակառակ վաճառել նրա ունեցվածքը: Արձանագրելով մայր օրենքին «Լքյալ գույքի մասին» ժամանակավոր օրենքի հակասությունը՝ պատգամավորն առաջարկում էր առաջնորդվել Սահմանադրության 53-րդ հոդվածով և մինչև պատերազմի ավարտը չքննարկել ժամանակավոր օրենքի հաստատման հարցը⁵²:

Տարիներ անց նույն հարցին թուրքական խորհրդարանում անդրադարձավ նաև Սսից ընտրված հայ պատգամավոր Մաթևոս Նալբանդյանը: Խորհրդարանի 1918 թ. նոյեմբերի 4-ի նիստում մի

⁵¹ Տե՛ս նույն տեղում, էջ 159-160:

⁵² Տե՛ս Տատրյան Վ., Հայոց ցեղասպանությունը թուրքական պաշտոնական փաստաթղթերում, Եր., 2002, էջ 46-47:

քանի պատգամավորների հետ միասին նա պահանջում էր չեղյալ համարել նշված օրենքները, քանզի դրանք հակասում էին երկրի Սահմանադրությանը: Լուսմների արդյունքում խորհրդարանն այդ օրենքները ճանաչեց հակասահմանադրական և իրավական առումով անվավեր: Մի քանի օր անց՝ 1918 թ. նոյեմբերի 18-ի նիստում, պատգամավորները նույնիսկ պահանջեցին պատժամիջոցներ կիրառել այն պաշտոնյաների և անհատների նկատմամբ, ովքեր ստրկության մեջ էին պահում հայ կանանց և որբերին, վերադարձնել հայերից հափշտակված գույքն ու ունեցվածքը և հատուցել նրանց կրած վնասները⁵³:

«Տեղահանության մասին» և «Լքյալ գույքի մասին» ժամանակավոր օրենքներն ուղղակիորեն հակասում էին նաև 1858 թ. օգոստոսի 9-ին ուժի մեջ մտած և մի քանի անգամ փոփոխությունների ենթարկված օսմանյան Քրեական օրենսգրքին, որի համաձայն, զինված կամ անզեն, անհատական կամ խմբակային հարձակման, ինչպես նաև ընտանիքի անդամների վրա ճնշում գործադրելու եղանակով սնունդ, պաշար, ապրանք կամ առարկաներ թալանողների կամ ոչնչացնողների համար սահմանված էր մահապատիժ⁵⁴:

Երիտթուրքական իշխանությունները փաստորեն պատրաստ էին ամեն ինչի, որպեսզի հասնեին իրենց նպատակին՝ բնաջնջել հայերին և տեր դառնալ իրանալ նրանց հայրենիքին ու ունեցվածքին՝ անգամ եթե սեփական հանցագործություններին «օրինական» տեսք տալու համար հարկավոր լիներ երկրի Սահմանադրությանն և օրենսդրությանը հակասող հանցավոր ժամանակավոր օրենքներ ընդունել:

Երիտթուրքական իշխանությունները չբավարարվեցին միայն իրենց հասանելի հայերի ունեցվածքը հափշտակելով, այլ օսման-

⁵³ Տե՛ս Տատրեան Վ., Հայկական ցեղասպանությունը խորհրդարանային եւ պատմագիտական քննարկումներով, Ուոտրթաուն, 1995., էջ 94-96:

⁵⁴ Տե՛ս Ղազարեան Հ., Ցեղասպան թուրքը, էջ 300:

յան բանկի հայ ավանդատերերի ավանդները յուրացնելուց հետո թուրքական իշխանությունները փորձեցին տիրանալ նաև օտարերկրյա բանկերում և ապահովագրական ընկերություններում պահվող հայերի ավանդներին և ապահովագրական գումարներին: Թալեաթ փաշան Պոլսում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուին առաջարկել էր իրեն հանձնել “New York Live Insurance Company” և “Eguitable live of New York” ամերիկյան ապահովագրական ընկերությունների հայ ավանդատերերի լիակատար ցանկը՝ պատճառաբանելով, որ նրանք բոլորը մահացել են առանց ժառանգներ թողնելու և նրանց գումարները պատկանում են կառավարությանը⁵⁵: Այս պահանջը, սակայն, վճռականապես մերժվեց ԱՄՆ-ի դեսպանի կողմից:

Զկարողանալով թուրքական իշխանություններից հասնել իրենց գույքային իրավունքների վերականգնմանը, կիլիկիահայ վաճառականները ստիպված էին խնդրանքով դիմել Կիլիկիայում ֆրանսիական զինվորական առաքելության ղեկավար, Ադանայի նահանգի կառավարիչ գնդապետ Բրեմոնին: Ընդառաջելով հայերի խնդրանքին՝ 1919 թ. հունվարի 19-ին Բրեմոնն ընդունեց «Տարագրյալ հայերի հողային իրավունքների մասին» որոշումը, որով չեղյալ էին համարվում կիլիկիահայության կալվածքների վաճառքը և պետք է վերականգնվեին նրանց իրավունքներն այդ գույքի նկատմամբ:

Պատերազմի ավարտից հետո հաղթանակած տերությունների հետ խաղաղության պայմանագիր ստորագրելուց առաջ Կ. Պոլսի սուլթանական իշխանությունները փորձում էին ժողովրդավար ու հանդուժող երևալ, ուստի 1920 թ. հունվարի 8-ին որոշում կայացրեցին անվավեր ճանաչել ինչպես «Լքյալ գույքի մասին», այնպես էլ այն լրացնող 1915 թ. սեպտեմբերի 13-ի օրենքը և հոկտեմբերի 26-ի կանոնադրությունը: Իրականում սա զուտ ցուցադրական քայլ էր, թուրքական իշխանությունները ոչ միայն չէին շտապում իրագոր-

⁵⁵ Տե՛ս Լեւոն Վարդան, Հայկական տասնհինգը, էջ 160:

ծել այդ որոշումը, այլև ճիշտ հակառակը՝ շարունակում էին հայերի թալանի և բռնությունների քաղաքականությունը:

Ցեղասպանությանը զուգահեռ իրականացնելով նաև հայ բնակչության զանգվածային ունեզրկումը, թուրքական պետությունը, փաստորեն, օգտվում էր իր կազմակերպած ու իրագործած հանցագործության՝ Հայոց ցեղասպանության պտուղներից, ինչը նույնպես հանցագործություն է:

1.2. Հայերի ունեզրկման քաղաքականության քեմալականների և Թուրքիայի հաջորդ վարչակարգերի «օրենսդրական» մեխանիզմները

Առաջին աշխարհամարտում Օսմանյան կայսրության պարտությունից և իշխանությունից երիտթուրքերի հեռացումից հետո 1920 թ. հունվարի 8-ին օսմանյան խորհրդարանն ընդունեց «Լքյալ գույքի մասին» 33 հոդվածներից բաղկացած նոր օրենք, որի 1-ին հոդվածով նախատեսվում էր տեղահանված անձանցից բռնազրավված անշարժ գույքն անհապաղ վերադարձնել օրինական տերերին, իսկ նրանց ողջ չլինելու դեպքում՝ ժառանգներին: Ավելին՝ 8-րդ հոդվածի պահանջով անցած տարիների ընթացքում տեղահանված անձանց անշարժ գույքի վարձակալությունից կամ օգտագործումից ստացված եկամուտը նույնպես պետք է վերադարձվեր օրինական տերերին⁵⁶:

Օրենքում ամրագրված էր տեղահանված անձանց վնասված գույքի վերականգնման պահանջը: 9-րդ հոդվածի համաձայն, եթե հետաքննության արդյունքում բացահայտվեին անշարժ գույքին վնասողները, ապա նրանց պետք է հարկադրվեր իրենց միջոցներով վերականգնել վնասները, իսկ վերջիններիս ֆինանսական միջոցների անբավարար լինելու դեպքում վերանորոգման աշխա-

⁵⁶ Տե՛ս Baghdjian K. K., նշվ աշխ., էջ 171:

տանքները պետք է կատարվեին թուրքական կառավարության հաշվին⁵⁷: Հատկանշական է, որ նախատեսված էին անգամ տեղահանվածների չնչին գումարներով օտարված կամ ապօրինաբար բռնազավթված անշարժ գույքի վերադարձման դրույթներ: Այսպես, օրենքի 16-րդ հոդվածում նշված էր, որ եթե ունեցվածքը շուկայականից ցածր գնով է վաճառվել կամ բռնազավթվել է ինչ-որ անձանց կողմից, ապա օրինական տերերին դրանց վերադարձի հետ կապված բոլոր ծախսերը դրվում են թուրքական կառավարության վրա: 17-րդ հոդվածում, լրացնելով նախորդ հոդվածի պահանջը, նշվում էր, որ տեղահանված անձանց անշարժ գույքի դիմաց «Լքյալ գույքի» հանձնաժողովներին կամ շահագրգիռ նախարարությանը տրված գումարները ենթակա են վերադարձման⁵⁸:

Այսպիսով, 1920 թ. հունվարի 8-ի օրենքի դրույթներով փաստացի վերացվում էին երիտթուրքերի կառավարության «Լքյալ գույքի մասին» օրենքներն ու կարգավորումները: Նոր օրենքի 30-րդ հոդվածում ուղղակի արձանագրում էր, որ սովյալ օրենքով չեղյալ են համարվում 1915 թ. սեպտեմբերի 13-ի օրենքը և դրանից բխող հոկտեմբերի 26-ի կանոնադրությունը⁵⁹:

Թուրքական նոր իշխանությունների կողմից տեղահանված հայերի բռնազավթված գույքի նկատմամբ վերջիններիս իրավունքների վերականգնման նման կարևոր կարգավորումների ամրագրումը պայմանավորված էր նրանով, որ օրենքի նախագիծը մշակվել էր հայերից, հույներից, անգլիացիներից ու թուրքերից կազմված խառը հանձնաժողովի կողմից⁶⁰: Հասկանալի է, որ նման քայլերով թուրքական նոր իշխանությունները փորձում էին տարանջատվել երիտթուրքերի հանցավոր վարչակարգից և սպասվող խաղաղության պայմանագրի կնքման ժամանակ մեղմել հաղթանակած տերությունների կողմից Թուրքիային ներկայաց-

⁵⁷ Տե՛ս Baghdjian K. K., նշվ աշխ., էջ 171:

⁵⁸ Տե՛ս նույն տեղում:

⁵⁹ Տե՛ս նույն տեղում., էջ 172:

⁶⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 170:

վելիք կապիտուլյացիոն պայմանները: Թերևս, այս հանգամանքով պետք է բացատրել այն, որ 1920 թ. ապրիլի 23-ին Մուսթաֆա Քեմալի գլխավորությամբ Անկարայում գումարված Ազգային մեծ ժողովն անվավեր ճանաչեց երիտթուրքերի ընդունած «Լքյալ գույքի մասին» օրենքները չեղյալ հայտարարելու մասին Կ. Պոլսի սուլթանական կառավարության որոշումը⁶¹: Սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա զարգացումները, նոր իշխանությունները ոչ միայն չէին պատրաստվում իրագործել այս օրենքի դրույթները, այլև փաստորեն շարունակեցին հայերի ունեցվածքի բռնագավթման երիտթուրքերի քաղաքականությունը:

Քեմալականները ոչ միայն բազմաթիվ խոչընդոտներ էին ստեղծում ողջ մնացած հայերի վերադարձի ու սեփական ունեցվածքի նկատմամբ իրենց իրավունքի վերականգնման ճանապարհին, այլև շարունակում էին նրանց ենթարկել թալանի ու բռնությունների: Քեմալական իշխանություններն առավել լրջությամբ վերաբերվեցին «լքյալ գույքերի» հարցին, քանզի դրա միջոցով էին փորձում հաղթահարել համաշխարհային պատերազմից հետո թուրքական պետության համար ստեղծված ծանր ֆինանսատնտեսական վիճակը: Այդ մասին է վկայում մինչև 1926 թ. Անկարայի Ազգային մեծ ժողովի կողմից «լքյալ գույքին» վերաբերող 9 օրենք ընդունելու փաստը:

Կիլիկիահայության 1921 թ. և Զմյուռնիայի հայության 1922 թ. կոտորածների ժամանակ քեմալականների կողմից գործնականում դրսևորվեց երիտթուրքերից ժառանգած ոչ միայն հայերի զանգվածային բնաջնջման քաղաքականությունը, այլև դրան գուզահեռ իրականացվող վերջիններիս ունեցվածքի հետևողական բռնագավթման ու թալանի գործելառճը: 1922 թ. ապրիլի 20-ին Անկարայի Ազգային մեծ ժողովն ընդունեց «Ազատագրումից հետո թշնամու կողմից նախկինում գրավված տարածքներում մնացած լքյալ գույքի մասին» օրենքը, որի 1-ին հոդվածով կառավարությունն

⁶¹ Բարսեղով Յու., նշվ. աշխ., էջ 14:

իրեն իրավունք էր վերապահում աճուրդով վաճառել թշնամու հարձակումներից հետո հեռացած անձանց անտեր մնացած գույքը: Հեռացած անձանց շարժական ունեցվածքի և բերքի տնօրինումը նույնպես փոխանցվում էր կառավարությանը, իսկ գույքի վաճառքից, վարձակալությունից և այլ եղանակներով ստացված եկամուտը փոխանցվելու էր պետական գանձարան: Վաճառված գույքի և ապրանքների դիմաց փոխհատուցում էր նախատեսված միայն իրենց բնակավայրերը վերադարձած տվյալ գույքի օրինական տերերի համար⁶²: Հատկանշական է, որ ի տարբերություն երիտթուրքերի, քեմալականները տեղահանության ենթարկված բնակչությանը ներկայացնում է որպես «թշնամու հարձակումներից հետո հեռացածներ»՝ այդ կերպ փորձելով շրջանցել նախորդ վարչակարգի կողմից այդ բնակչության նկատմամբ կատարված հանցագործությունները, բայց միևնույն ժամանակ չէին վարանում օգտվել այդ հանցագործությունների «պտուղներից»՝ զավթելով նրանց ունեցվածքը:

Կառավարության կողմից տեղահանված անձանց բացակայությունը որպես նրանց գույքի վաճառքը կազմակերպելու և ստացված շահույթը պետական գանձարան փոխանցելու քեմալականների փաստարկը որևէ քննադատության չի դիմանում: Նախ տեղահանված բնակչությունը ոչ թե ինքնակամ, այլ իշխանությունների ցեղասպան քաղաքականության և «Տեղահանության մասին» տխրահոչակ օրենքի պարտադրանքով էր հեռացել իր բնակավայրերից, իսկ 1920 թ. ապրիլի 23-ին քեմալականների ընդունած առաջին փաստաթղթերից մեկով արգելվում էր նախկին օսմանահպատակների, այդ թվում հայերի, վերադարձն իրենց հայրենիք: Այս իրողություններից ելնելով, վաճառված գույքի և ապրանքների դիմաց միայն վերադարձած տերերին փոխհատուցում տրամադրելու դրույթը զուտ ձևական բնույթ էր կրում, այդ ամենից անկախ, սակայն, բացակա լինելը օրինական տերերին չէր կարող

⁶² Տե՛ս Baghdjian K. K., նշվ. աշխ., էջ 174:

գրկել իրենց սեփականության նկատմամբ ունեցած օրինական իրավունքներից:

Կիլիկիայից ֆրանսիական զորքերի դուրսբերումից և այն քեմալականներին հանձնելուց առաջ Սիրիայում և Լիբանանում Ֆրանսիայի բարձրագույն հանձնաժողովում Կիլիկիայի հայկական խորհրդի նախկին նախագահ Զաքարիա Բեզիկյանը 1921 թ. ապրիլի 14-ին Բեյրութում ֆրանսիական իշխանություններին «Հայերի տնտեսական կյանքի վրա պատերազմի հասցրած վնասների, դրանց հետևանքների վերացման՝ հատուցման տրամադրման անհրաժեշտության մասին» խորագրով հուշագիրը էր ներկայացրել: Փաստաթղթում նշվում էր, որ եթե համաշխարհային պատերազմը դժբախտություն էր ամբողջ աշխարհի համար, ապա երկար տարիների ընթացքում նահատակության և սարսափների միջով անցած հայ ազգի համար այն միանշանակ աղետ էր: Բեզիկյանն ընդգծում էր, որ պատերազմի ավարտից հետո էլ քեմալական հրոսակախմբերի հարձակումների հետևանքով Կիլիկիայի հայ բնակչությունը շարունակում է վնասներ կրել՝ ավիրվում են շրջաններ, քանդվում են ամբողջական գյուղեր, բերքը հրկիզվում ու ոչնչացվում է⁶³:

Հուշագրում ֆրանսիական իշխանությունների ուշադրություն էր հրավիրվում հետևյալ հարցերի վրա.

1. Օրինական ժառանգ չունեցող տեղահանության հետևանքով մահացած հայերի ամբողջ ունեցվածքը, ինչպես նաև նրանց գույքին հասցված վնասի փոխհատուցումը պետք է տրվի հայկական համայնքին:

2. Մինչև հասցված վնասի վերականգնման և հատուցման հարցերի վերջնական լուծումը պատերազմից առաջ տեղահանված հայերի պայմանագրային պարտքերի չվճարման հիմքով հարուցված ցանկացած հետապնդում պետք է դադարեցվի:

⁶³ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսութեան արխիվ (այսուհետ՝ ՄՏԿԿԱ), հավաքածոյ 40, ց. 1, թղթ. 63:

3. Պարտքերի մարումը պետք է իրականացվի ոչ թե օսմանյան ոսկեդրամով, այլ պատերազմի տարիներին Թուրքիայում վճարամիջոց հանդիսացող թղթադրամով՝ թուրքական լիրայով: Օտարերկրյա արժույթներով (ֆրանկ, ֆունտ ստերլինգ և այլն) հաշվառված պարտքերը նույնպես պետք է մարվեն թուրքական լիրայի փոխարժեքով⁶⁴:

Հուշագրի ներկայացումից որոշ ժամանակ անց, սակայն, Ֆրանսիան իր գորքերը դուրս բերեց Կիլիկիայից՝ քեմալականների հետ 1921 թ. հոկտեմբերի 20-ին կնքելով համաձայնագիր, որում կիլիկիահայերի ունեցվածքի պաշտպանությանը վերաբերող որոշ դրույթներ էին պարունակվում: Սակայն, 1922 թ. ապրիլի 20-ին ընդունված օրենքով քեմալականները փաստորեն վերադառնում էին երիտթուրքերի ընդունած «Լքյալ գույքի մասին» չարաֆաստիկ օրենքին՝ ակնհաստորեն խախտելով կիլիկիահայերի ունեցվածքի պաշտպանության վերաբերյալ ֆրանս-թուրքական պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

1923 թ. ապրիլի 15-ին քեմալականները վերականգնեցին երիտթուրքերի ընդունած 1915 թ. սեպտեմբերի 13-ի «Լքյալ գույքերի մասին» օրենքը՝ դրան կցելով ևս 6 հոդվածներ, և այդպիսով շարունակեցին երիտթուրքերի՝ հայերի ունեզրկման քաղաքականությունը՝ իրենց վրա վերցնելով նաև նախորդ վարչակարգի հանցագործությունների պատասխանատվությունը: Երիտթուրքերի կողմից ընդունված «Լքյալ գույքի մասին» օրենքի համեմատ քեմալականների նոր օրենքը հայերի իրավունքներն էլ ավելի ոտնահարող փաստաթուղթ էր: Նոր օրենքով նախ՝ «լքյալ գույքի» հանձնախմբերի փոխարեն ստեղծվում էր «Լքյալ գույքերի վարչություն», որը պետք է վերջնական լուծում տար այդ հարցին: Նոր օրենքում կրկնվում էին երիտթուրքերի օրենքի այն դրույթները, որ «լքյալ գույքից» պետք է զանձվեն պետական տուրքերը, որոնք վճարելուց

⁶⁴ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության արխիվ (այսուհետ՝ ՄՏԿԿԱ), հավաքածոյ 40, ց. 1, թղթ. 63:

հետո մնացած որպես ավանդ նախկինի պես ի պահ էր հանձնվելու պետական գանձարան: Այսինքն՝ նորից օրինականության պատրանք ստեղծելով, «լքյալ գույքերի» վաճառքից ստացված ամբողջ գումարն անցնում էր թուրքական պետությանը⁶⁵: Սակայն, ի տարբերություն երիտթուրքերի ժամանակավոր օրենքի, քեմալականների ընդունած օրենքում «լքյալ գույքի» հարցում ավելի արմատական լուծումներ էին նախատեսվում: Եթե հին օրենքով սահմանվում էր, որ հանձնման ու պահպանության են ենթակա պատերազմական պատճառներով հեռացած անձանց, այդ թվում հայերի, գույքն ու ունեցվածքը մինչև նրանց վերադարձը պետք է հանձնվեր պահպանության, ապա նոր օրենքով բոլոր հեռացածների գույքն, անկախ նրանց հեռանալու պատճառներից, համարվում էր «լքյալ» և ենթակա էր բռնագրավման⁶⁶: Սա նշանակում էր, որ բռնագրավման էր ենթակա ոչ միայն այսպես կոչված «ազատագրական պատերազմին» չմասնակցածների և երկրից հեռացածների, այլև Առաջին աշխարհամարտի ընթացքում ցեղասպանության հետևանքով Օսմանյան կայսրությունից հեռացած ոչ մահմեդականների և առաջին հերթին հայերի ունեցվածքը: Ինչ վերաբերվում է Թուրքիայի տարածքում մնացած հայերի ունեցվածքին, ապա, «Լքյալ գույքերի վարչության» պարզաբանման համաձայն, ցանկացած գույք համարվում էր լքյալ և պետք է փոխանցվեր պետությանը՝ մինչև տիրոջ հայտնվելը⁶⁷: Ստացվում էր, որ տեղահանված այն հայերը, որոնք ողջ էին մնացել և գտնվում էին Թուրքիայի տարածքում նույնպես կորցնում էին իրենց ունեցվածքը, քանի որ տվյալ պահին իրենց գույքից հեռու էին գտնվում: Իսկ եթե հաշվի առնենք նրանց կյանքի ապահովության իսպառ բացակայությունն ու դրանից առաջ վերապրած սարսափները, ապա նրանց վերադարձն արդեն իսկ անհավանական էր:

⁶⁵ Տե՛ս Baghdjian K. K., նշվ. աշխ., էջ 182:

⁶⁶ Լեւոն Վարդան, Հայկական տասնհինգը, էջ 280:

⁶⁷ Նույն տեղում, էջ 289:

1923 թ. հունիսի 23-ին Անկարայի Ազգային մեծ ժողովը փոփոխություն կատարեց ապրիլի 15-ի օրենքում, որով արդեն մերժում էր ոչ մահմեդականների ցանկացած պահանջ «լքյալ գույքերի» հետ կապված, բացառելով երկիր վերադարձող հայերի՝ իրենց սեփական գույքի նկատմամբ իրավունքների վերականգնման անգամ տեսական հնարավորությունը:

Լոզանի պայմանագրի վավերացումից անմիջապես հետո՝ 1923 թ. սեպտեմբերին, քեմալական իշխանությունները «Լքյալ գույքերի մասին» հերթական օրենքն ընդունեցին, որի 2-րդ հոդվածի համաձայն, Կիլիկիայից և արևելյան նահանգներից գաղթած հայերը չպետք է ստանային երկրի մուտքի արտոնագիր, իսկ 3-րդ հոդվածում սահմանվում էր, որ երկիր չպետք է մուտք գործեին նախկին օսմանահպատակ այն օտարերկրյա քաղաքացիները, որոնք նոր կարգավիճակ էին ստացել առանց թույլտվության⁶⁸: Տվյալ օրենքի «տրամաբանությամբ» ենթադրվում էր, որ բոլոր նախկին օսմանահպատակները, մասնավորապես հայերը, որոնք արդեն հասցրել էին ճաշակել այդ հպատակության ողջ «քաղցրությունը», ենթարկվելով ցեղասպանության ու զանգվածային ունեզրկման, կրել անասելի տառապանքներ բռնազաղթի ճանապարհներին և, ի վերջո, հայտնվել Օսմանյան կայսրությունից անջատված արաբական երկրներում, այդ պետությունների քաղաքացիություն ստանալու համար պետք է թույլտվություն ստանային իրենց ամեն կերպ ոչնչացնել ցանկացող թուրքական իշխանություններից: Այս անհեթեթ «փաստարկով» թուրքական իշխանությունները փորձում էին «հիմնավորել» իրենց նախկին հպատակների գույքային և այլ իրավունքների պետական մակարդակով ոտնահարելու քաղաքականության ճշմարտացիությունը: Մինչդեռ հանրահայտ է, որ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելը բացարձակապես չի ենթադրում նախկին հպատակության երկրի թույլտվությունը և առավել ևս չի կարող հանգեցնել նախկին հպատակության երկ-

⁶⁸ Լեւոն Վարդան, Հայկական տասնհինգը, էջ 258:

րում սեփականության նկատմամբ տվյալ անձի ունեցած իրավունքների չեզոքացմանը:

Այդուհանդերձ, այլ երկրների քաղաքացիությունն ստացած նախկին օսմանահպատակների և նրանց ժառանգների գույքային իրավունքները չեղարկելու նպատակով թուրքական իշխանությունները ձեռնարկեցին հաջորդ քայլերը: Օրենքով սահմանված էր, որ անշարժ գույքի բացակա ոչ մահմեդական սեփականատերերին տասնամյա ժամկետ էր տրվում իրենց գույքի հարկերը մարելու համար, հակառակ դեպքում այն ենթակա էր բռնագրավման: Այս դրույթից ելնելով, Թուրքիա մուտք գործելու տուրիստական վիզայի համար դիմած նախկին օսմանահպատակ հայերից կամ նրանց ժառանգներից թուրքական դեսպանատները և հյուպատոսությունները նոր քաղաքացիության երկրում ավելի քան տաս տարի բնակվելու տեղեկանք էին պահանջում, հակառակ դեպքում մերժում էին վիզայի տրամադրումը⁶⁹: Այս քայլով թուրքական իշխանությունները փաստորեն ձգտում էին չեզոքացնել վերադարձող սեփականատերերի կամ նրանց ժառանգների կողմից օրենքով սահմանված կարգով իրենց գույքին տեր կանգնելու անգամ այդ չնչին հնարավորությունը:

Այսքանով հայերի ունեզրկման քաղաքականությունը չավարտվեց: Ֆիզիկական անձանց ունեզրկմանը զուգահեռ սկսվեց նաև իրավաբանական անձանց ու համայնքային ունեցվածքի բռնագրավման գործընթացը: 1925 թ. տարեվերջին ընդունված Թուրքիայի պետական բյուջեի մասին օրենքի 20-րդ հոդվածի համաձայն, պատերազմի ընթացքում լուծարված բոլոր բարեգործական, արհեստակցական, մշակութային, գեղարվեստական, գիտական և կրոնական հաստատություններն ու կառույցները կորցնում էին իրենց ունեցվածքը⁷⁰: Քաջ գիտակցելով, որ ցեղասպանության ընթացքում նշված ոլորտների բոլոր հայկական կառույցները

⁶⁹ Տե՛ս Baghdjian K. K., նշվ. աշխ., էջ 201-202:

⁷⁰ Լեւոն Վարդան, Հայկական տասնհինգը, էջ 285:

ոչնչացվել էին և, բնականաբար, չէին կարող գործունեություն ծավալել, քեմալական իշխանությունները հատուկ մտադրությամբ օրենքում ամրագրում էին այս դրույթը՝ այդպիսով «իրավական» հիմք նածապատրաստելով հայկական կազմակերպությունների ունեցվածքի բռնագրավման գործընթացին անցնելու համար: 1926 թ. պետական բյուջեի մասին օրենքի 22-րդ հոդվածով, շարունակելով նախորդ տարվա բյուջեի մասին օրենքի հոդվածի տրամաբանությունը, պետական մարմիններին իրավունք էր տրվում բռնագրավել անգամ օրենքով անձեռնմխելի ճանաչված հաստատությունների գույքը, ինչը հնարավորություն տվեց թուրքական իշխանություններին բռնագրավել նաև հայկական համայնքային գույքերն ու կալվածքները⁷¹: Սա Լոզանի պայմանագրի հոդվածներով Թուրքիայի ստանձնած պարտավորությունների կոպիտ խախտում էր: Պայմանագիրը ստորագրած մյուս պետությունների կողմից այս անօրինականությունների անպատասխան թողնելը թուրքական իշխանություններին քաջալերում էր հանցավոր նոր քայլերի:

Ինչպես հայտնի է, 1923 թ. հուլիսի 24-ին կնքված Լոզանի պայմանագրի 37-44-րդ հոդվածներով թուրքական նոր իշխանությունները երկրում բնակվող ոչ մահմեդական համայնքների իրավունքները պաշտպանելու միջազգային պարտավորություններ ստանձնեցին: Պայմանագրի 37-րդ հոդվածով Թուրքիայում բնակվող հայկական, հունական և հրեական համայնքների իրավունքների պաշտպանությանը նվիրված 38-44-րդ հոդվածները թուրքական իշխանությունների կողմից ճանաչվում էին որպես հիմնական օրենքներ, որոնք չէին կարող չեղարկվել կամ փոխարինվել ներպետական իրավական ակտերով⁷²:

Ի կատարումն այդ պարտավորությունների, 1925 թ. հունվարի 18-ին ընդունված և փետրվարի 5-ին փոփոխված օրենքով սահմանվում էր, որ Լոզանի պայմանագրի ուժի մեջ մտնելուց՝ 1924 թ.

⁷¹ Լեոն Վարդան, Հայկական տասնհինգը, էջ 286:

⁷² See Treaty_of_Lausanne, <http://wwi.lib.byu.edu/index.php/>

օգոստոսի 6-ից հետո հայերի գույքի բռնագավթում այլևս չի կատարվելու և նման փաստերի հաստատման դեպքում գույքը պետք է վերադարձվի սեփականատիրոջը: Այդուհանդերձ, 1925 թ. օգոստոսի 25-ին Հայ գաղթականների կենտրոնական կոմիտեն Ազգերի Լիգայի նախագահին տեղեկացնում է, որ Լոզանի պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո Թուրքիայում բնակվող հայերի վիճակը ոչ միայն չի բարելավվել, այլ ավելի է վատթարացել⁷³:

Լոզանի պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո քեմալականներն իրենց օրենսդրության մեջ փորձում էին այդ պարտավորությունները շրջանցող իրավական մեխանիզմներ ներդնել: Այսպես, 1926 թ. օգոստոսին քեմալականների կառավարության ընդունած որոշման 1-ին հոդվածով մինչև 1924 թ. օգոստոսի 6-ը՝ Լոզանի պայմանագրի ուժի մեջ մտնելը, հայերի «լքյալ գույքի» բռնագրավումները համարվում էին օրինական, և որ մինչ այդ ժամկետը կատարված բռնագրավումների դիմաց հատուցելու որևէ պարտավորություն կառավարությունը չունի⁷⁴:

Որոշման հաջորդ հոդվածով քեմալականներն իրենց համար փաստացի հիմքեր էին ստեղծում հայերի ունեցվածքի բռնագավթման գործընթացը շարունակելու համար: 2-րդ հոդվածով ամրագրվում էր, որ մինչև 1924 թ. օգոստոսի 6-ը սկսված հայերի «լքյալ գույքի» բռնագրավման գործընթացը պետք է ավարտին հասվեր⁷⁵: Այս հոդվածը թուրքական իշխանություններին հնարավորություն էր տալիս փաստաթղթերի ամսաթվերի կեղծման միջոցով (հետին ամսաթիվ նշելով) 1924 թ. օգոստոսի 6-ից հետո էլ շարունակել հայերի գույքի բռնագավթման գործընթացը:

Քեմալականներն այսքանով չբավարարվեցին և ընթացակարգեր նախատեսեցին նաև 1924 թ. օգոստոսի 6-ից հետո սկսված հայերի գույքի բռնագավթման դեպքերի համար: Այսպես, որոշման

⁷³ Տե՛ս Baghdjian K. K., նշվ. աշխ., էջ 188-189:

⁷⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 188-189:

⁷⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 190:

3-րդ հոդվածով սահմանվում էր, որ եթե գույքի բռնագավթման գործողությունը սկսվել, իսկ կառավարությունն էլ այդ մասին տեղեկացվել նշված ժամկետից հետո, ապա նման դեպքերում նախատեսվում էին հետևյալ ընթացակարգեր՝

ա. եթե սեփականատերը բնակվում է իր գույքի գտնվելու վայրում, ապա գույքը վերադարձվում է նրան,

բ. եթե սեփականատերը բացակայում է, սակայն լիազորել է մեկ այլ անձի, ապա գույքը հանձնվում է վերջինիս,

գ. եթե սեփականատերը բացակայում է և չկա լիազորված անձ, ապա սեփականատիրոջ անունից նրա գույքը կառավարում է պետությունը⁷⁶:

Գույքի գտնվելու վայրում սեփականատիրոջ բնակվելը որպես դրա վերադարձման նախապայմանի դրույթի արձանագրումը թուրքական օրենսդրության մեջ, անշուշտ, նորություն չէր: Սակայն, եթե երիտթուրքերն այս նախապայմանն առաջ էին քաշում «Տեղահանության մասին» ժամանակավոր օրենքով տեղահանված հայերի վերադարձը բացառող դիտավորությունից ելնելով, ապա քեմալականների կողմից դրա արձանագրումը պայմանավորված էր 1920 թ. ապրիլի 23-ին հայերի վերադարձն արգելող որոշումով: Երկու դեպքում էլ հայերի գույքի վերադարձի լոկ պատրանք էր ստեղծվում, սակայն գործնականում այս նախապայմանը ի չիք էր դարձնում դրա իրագործումը:

Առավել ցնցողն այն էր, որ սեփականատիրոջ և լիազորված անձի բացակայության պայմաններում հայերի գույքը ոչ թե փոխանցվում էր ժառանգներին կամ հայկական համայնքին, այլ թուրքական պետությունը: Ակնհայտ է, որ քեմալական իշխանություններն այս դրույթն ամրագրել էին, քաջ գիտակցելով, որ հայերի վերադարձի արգելքի պայմաններում սեփականատիրոջ և լիազորված անձի բացակայության դեպքերը ճնշող մեծամաս-

⁷⁶ Տե՛ս Baghdjian K. K., նշվ. աշխ., էջ 191:

նություն էին կազմելու, ինչի հետևանքով հայերի գույքն անխոչ-
ընդոտ բռնագավթելու «օրինական» հիմքեր էին ստեղծվելու:

1920-ականների վերջերին մահմեդականներին բաժանված
կամ չնչին գներով վաճառված հայերի տները, դաշտերը այգիները,
ձեռնարկությունները կամ հողատարածքները սկսեցին գրանցվել
նոր տերերի անուններով և տրվեցին սեփականության համապա-
տասխան վկայականներ: Նույն ժամանակահատվածում սկսվում
է նկատվել մի գործընթաց, երբ հայերից բռնագավթված գույքերից
հատկացումներ են արվում Հայոց ցեղասպանության ծրագրման ու
իրագործման ընթացքում լուրջ դերակատարում ունեցած երիտ-
թուրք գործիչների ընտանիքներին: 1927 թ. փետրվարի 2-ին քեմա-
լական իշխանությունների կողմից ընդունված որոշմամբ նախապես
«ազգային հերոս» հռչակված Բողազլյանի կայմական Քեմալ բեյի
կնոջն ու երեխաներին Ստամբուլում հատկացրեցին հայերից
բռնագավթված 20 հազար լիրա արժողությամբ անշարժ գույքը:
1927 թ. դեկտեմբերին տեղահանության կազմակերպիչ և հայերի
կոտորածների պատասխանատու Ուրֆայի մութասերիֆ Նուսրեթ
բեյի ընտանիքին ևս հատկացվեց հայերից բռնագավթված ունեց-
վածքը: Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչներից
Հատունկ կազմակերպության ղեկավարներից դոկտոր Բեհաեդդին
Շաքիրի, ինչպես նաև Դիարբեքիրի նահանգապետ դոկտոր Ռեշի-
դի և Թիֆլիսում Ջեմալ փաշայի հետ մահափորձի ենթարկված
նրա օգնական Նուսրեթ բեյի ընտանիքներին նույնպես հատկաց-
վեց հայերից բռնագավթված անշարժ գույք: Այս տեսակետից ամե-
նացայտուն օրինակն այն է, որ Թուրքիայի Հանրապետության
խորհրդանիշ համարվող շենքերից մեկը՝ Չանքայա պալատը, կա-
ռուցվել է Քասափյանների ընտանիքից բռնագրավված հողամասի
վրա⁷⁷:

⁷⁷ Տե՛ս Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության նյութական հետևանքների
հաղթահարման հիմնահարցը, Եր., 2015, էջ 54:

Թուրքական իշխանությունները հաստատուն ու հետևողական ձևով շարունակում էին «լքյալ գույքերի» պետականացման քաղաքականությունը: 1927 թ. հուլիսի 17-ին Էկոնոմիկայի նախարարությունը շրջաբերական նամակ ուղարկեց պատկան մարմիններին, որով հրահանգում էր 1923 թ. ապրիլի 15-ի օրենքը գործադրել և պետությանը փոխանցել Լոզանի պայմանագրի վավերացումից առաջ այլ երկրներ տեղափոխված, փախուստի մեջ գտնվող և անհայտ բացակայող համարվող ոչ մահմեդականների անշարժ գույքը⁷⁸: Այս կերպ թուրքական իշխանությունները, շահարկելով պայմանագրի հետադարձ ուժ չունենալու հանգամանքը, փորձում էին շրջանցել Լոզանի պայմանագրով ստանձնած պարտավորությունները: Պետք է նշել, սակայն, որ Լոզանի պայմանագրի ստորագրումից առաջ էլ թուրքական պետությունը բազմաթիվ միջազգային պայմանագրերով ոչ միայն օտար, այլև իր հպատակների գույքերի անձեռնմխելիության ու պահպանության բազմաթիվ պարտավորություններ էր ստանձնել: Անհերքելի իրողությունն այն է, որ անկախ վարչակարգերից թուրքական պետությունը մշտապես աչքի է ընկել միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունները չկատարելու և կոպտորեն խախտելու գործելառժով՝ հատկապես եթե դրանցում պարունակում են հայերի իրավունքների վերաբերյալ դրույթներ:

Ի վերջո, 1927 թ. մայիսի 23-ին ընդունվեց «Օսմանյան կայսրության նախկին հպատակների աստիճանակարգերի մասին» օրենքը, որի համաձայն Թուրքիայի քաղաքացիությունից զրկվում էին Օսմանյան կայսրության այն հպատակները, որոնք հանուն անկախության պատերազմի ժամանակ չէին մասնակցել ազգային պայքարին, գտնվել էին Թուրքիայից դուրս և Լոզանի պայմանագրի ստորագրումից՝ 1923 թ. հուլիսի 24-ից մինչև տվյալ օրենքի հրապարակումն ընկած ժամանակահատվածը չէին ներգաղթել թուրքական

⁷⁸ Լեւոն Վարդան, Հայկական տասնհինգը, էջ 290:

տարածք⁷⁹: Այս օրենքով վերջնականապես բացառվում էր հայրենիք վերադառնալու հայերի իրավունքը:

1928 թ. մայիսի 28-ին ընդունված «Սեփականության մասին» օրենքի 7-րդ հոդվածում նշվում էր, որ նախկին տերերին վերադարձվելու են ոչ թե անշարժ գույքը, այլ 1915 թ. դրությամբ դրանց գնահատված արժեքը: Խոսքն առավել ևս վերաբերվում էր այն դեպքերին, երբ տվյալ անշարժ գույքն արդեն հանձնված էր թուրք գաղթականներին, որոնք չէին կարող տեղափոխվել այլ վայրեր⁸⁰: Ինքնին հասկանալի է, որ 1927 թ. մայիսի 23-ի՝ հայերի վերադարձի իրավունքը բացառող օրենքի առկայության պայմաններում այս դրույթը վերաբերվում էր Թուրքիայում մնացած հայերին: Այս դեպքում էլ ստիպված ենք արձանագրել, որ դրանով ընդամենը ստեղծվում էր օրինականության պատրանք, քանզի նախ անշարժ գույքը գնահատվելու էր 1915 թ. արժեքով, որը պատերազմական ու հետպատերազմյան տարիներին ենթարկվել էր արժեզրկման, բացի այդ էլ, անտեսվում էր տվյալ գույքից հնարավոր եկամուտների՝ «բաց թողնված շահույթի» ստացման հանգամանքը, ինչի պարագայում գույքի դիմաց տրվող դրամական հատուցումն ուղղակի վեր էր ածվում ծաղրի: Եթե թուրքական իշխանություններն իսկապես ցանկանային իրավական լուծում տալ «լքյալ գույքերի» հարցին, ապա դրանք պետք է ազատվեին մահմեդական բնակիչներից ու վերադարձվեին օրինական տերերին, իսկ դրամական փոխհատուցումները պետք է տրվեին այն թուրք գաղթականներին, որոնք ապօրինաբար տիրացել էին հայերի և այլ ոչ մահմեդականների անշարժ գույքին:

1931 թ. մարտի 28-ին «Լքյալ գույքի մասին» օրենքների շարքում ընդունվեց վերջինը, որի համաձայն «լքյալ գույքը» կարող էին վերադարձվել նախկին սեփականատիրոջ ժառանգներին, եթե

⁷⁹ Բարսեղով Յու., նշվ. աշխ., էջ 15:

⁸⁰ Լեւոն Վարդան, Հայկական տասնհինգը, էջ 291:

ներկայացվեին նրանց իրավունքը հաստատող փաստաթղթեր⁸¹: Առաջին հայացքից օրինական թվացող այս պահանջը նույնպես որոշակի ենթատեքստ ուներ: Թուրքական իշխանությունները քաջ գիտակցում էին, որ ցեղասպանության ժամանակ զոհված հայերի ժառանգների միայն չնչին մասի մոտ կարող էին պահպանված լինել իրենց իրավունքը հաստատող սեփականության վկայականներ՝ (թափուներ): Բնական է, որ զանգվածային կոտորածների և բռնագաղթի պայմաններում, երբ յուրաքանչյուր հայի կյանքն էր սպառնալիքի տակ, նրանցից քչերն էին մտածում իրենց հետ փաստաթղթեր վերցնելու և պահպանելու մասին: Եթե անգամ նրանք իրենց հետ վերցրել էին ինչ-որ փաստաթղթեր, ապա շատերը դրանք կորցրել էին գաղթի ճանապարհներին: Այսինքն՝ ստացվում էր, որ Հայոց ցեղասպանության զոհերի ժառանգների մի չնչին մասը միայն կարող էր ներկայացնել համապատասխան փաստաթղթեր: Պահպանված փաստաթղթերի հիմքով որոշ հայ սեփականատերերի ժառանգներին փոխհատուցում տրամադրելու մի քանի դեպքերը թուրքական քարոզչությունը կարող էր ներկայացնել որպես թուրքական պետության կողմից հայերի նյութական կորուստների դիմաց ամբողջական հատուցում տրամադրելու գործընթաց՝ փորձելով այդ կերպ մեկընդմիջտ փակել իր համար խիստ անցանկալի այդ հարցը:

Ամփոփելով երիտթուրքերի, իսկ հետագայում նաև քեմալականների կողմից ընդունված «Լքյալ գույքի մասին» օրենքների այս շարքը և ամբողջականացնելով դրանց ընդհանուր գնահատականը՝ միանշանակ գալիս ենք այն եզրահանգման, որ իրար հաջորդած թուրքական այս վարչակարգերը իրավական տարբեր հնարքներով ու մեքենայություններով ոչ միայն հայերին զրկվում էին իրենց ունեցվածքից, այլև հետևողականորեն ձգտում էին չեզոքացնել սեփական գույքերի նկատմամբ նրանց իրավունքը վերականգնելու անգամ տեսական հնարավորություններից:

⁸¹ Լևոն Վարդան, Հայկական տասնհինգը, էջ 293:

Հայերի ունեցվածքին տիրաճառող երիտթուրքերի ու քեմալականների ժառանգական քաղաքականությունը հետագա տասնամյակների ընթացքում Թուրքիայում շարունակվեց նաև հաջորդ վարչակարգերի կողմից:

Երկրորդ աշխարհամարտի ընթացքում՝ 1942 թ. թուրքական իշխանությունների կողմից ընդունվեց «Ունեցվածքի հարկի մասին» օրենքը, որի համաձայն, թուրք առևտրականը պետությանը պետք է վճարեր իր տարեկան եկամտի 4,74 %-ը, հույնը՝ 150 %-ը, հրեան՝ 179 %-ը, իսկ հայը՝ 232 %-ը: Այսինքն՝ հույները թուրքերի համեմատությամբ վճարում էին 31 անգամ ավել, հրեաները՝ 36 անգամ, իսկ հայերը՝ 47 անգամ⁸²: Բնական է, որ հատկապես հայերը չէին կարող կատարել հարկային նման ծանր պարտականությունները: Ովքեր չէին կարողանում վճարել հարկերը, նրանց ունեցվածքը՝ տուն, հող, խանութ, արհեստանոց, գործարան և այլն, աճուրդով վաճառվեց: Նրանք, ում ունեցվածքի վաճառքից գոյացած գումարը չէր բավարարում հարկի պարտքը փակելուն, արտորվեցին Աշքալեի գավառ՝ քարհանքերում տաժանակիր աշխատանքի կամ Կարինից Սեբաստիա ճանապարհը կառուցելու⁸³: Այս ամենի հետևանքով Պոլսի ոչ մահմեդական բնակչության՝ տնտեսության մեջ ունեցած կշիռն ամբողջությամբ փոխվեց: Բազմաթիվ հույն, հրեա և հայ առևտրականներ սահմանված հարկի պատճառով սնանկացան: Ունեցվածքի հարկի վերաբերյալ ոչ մահմեդականների բողոքները թուրքական կառավարությունը բացարձակապես անտեսում էր: «Ունեցվածքի հարկի» գործադրման հետևանքով թուրքական գանձարանի մուտքերը 16 ամիսների ընթացքում կազմեցին 314,9 մլն թուրքական լիրա, որի մոտ 70 %-ը գանձվեց միայն Ստամբուլում՝ այնտեղ բնակվող հայկական ու հունական

⁸² Տե՛ս Գեղամեան Ս., Թուրքիայի ազգային բուրժուազիան երկրի տնտեսական և սոցիալ-քաղաքական կեանքում 1945-50 թթ., «Դրօշակ», 1989, փետրվար, էջ 31:

⁸³ Տե՛ս Մարտիկյան Ա., Հայոց ցեղասպանության հարցը Թուրքիայի արդի ներքաղաքական զարգացումների համատեքստում, Եր., 2016, էջ 192:

ստվարաթիվ համայնքներից: Այդ հարկը Թուրքիայում բնակվող բազմաթիվ քրիստոնյաների արտագաղթի պատճառ հանդիսացավ՝ ավելի ամրապնդելով թուրքական բուրժուազիայի դիրքերը⁸⁴:

Այնուհետև, 1955 թ. սեպտեմբերի 6-7-ին, իշխանությունների գիտությամբ ու անմիջական աջակցությամբ Ստամբուլի և Իզմիրի ոչ մահմեդականների տները, գործարանները, կրոնական հաստատությունները թալանվելու ու հրկիզվելու հետևանքով մեծ թվով հայեր և հույներ հեռացան Թուրքիայից⁸⁵:

Թուրքիայի հայկական համայնքի ունեզրկման հերթական դրսևորում պետք է համարել այդ երկրի Գերագույն դատարանի 1974 թ. որոշումը՝ ազգային փոքրամասնություններին պատկանող գույքն առգրավելու և պետական գանձարան փոխանցելու մասին, ինչը Լոզանի պայմանագրի դրույթների կոպիտ խախտում է:

1987 թ. Պոլսի հայոց պատրիարք Շնորք Գալուստյանը Թուրքիայի վարչապետի հետ զրույցի ժամանակ բարձրացրել է պատրիարքարանի և հայկական համայնքի տնտեսական սահմանափակումներին վերաբերող հետևյալ խնդիրները՝

1. 1936 թ. հետո պատրիարքարանին կամ բարեգործական կազմակերպություններին (վակուֆներին) հայերի կտակած գույքը հետևողականորեն պետականացվել է և հետագայում հայերը զրկվել են իրենց ունեցվածքը պատրիարքարանին կամ հայկական բարեգործական կազմակերպություններին կտակելու իրավունքից,

2. Հայերը զրկված են նաև իրենց համայնքային շինությունները վերանորոգելու կամ համայնքին պատկանող հողատարածքների վրա նոր շինություններ կառուցելու իրավունքից,

3. 1970 թ. հայկական համայնքային հաստատությունների վրա 5 %-ոց հարկ դրվեց և չնայած 1980 թ. այդ հարկատեսակը վերացվել է, այն շարունակվում է գանձվել,

⁸⁴ Տե՛ս Մելքոնյան Ռ., Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության 1920-ականներից մինչև մեր օրերը, Եր., 2010, էջ 19:

⁸⁵ Տե՛ս Ավրեցյան Հ., Կրոնափոխ հայերի խնդիրները Թուրքիայի Հանրապետությունում, Եր., 2014, էջ 50:

4. Թուրքիայում գործող բարեգործական կազմակերպություններին թույլատրվել է ավելացնել վարձակալության տրված իրենց գույքի վճարները, ինչից սակայն զրկված են հայկական կազմակերպությունները⁸⁶:

Պատրիարքի նշած սահմանափակումները ակնհայտորեն վկայում էին այն մասին, որ հայերի նկատմամբ խտրական վերաբերմունքը և նրանց ունեցվածքի բռնագավթման քաղաքականությունը ժառանգաբար շարունակվում էր նաև թուրքական հաջորդ վարչակարգերի օրոք:

Միջազգային հանրության ճնշման տակ Թուրքիայի նախագահ Ա. Գյուլը 2008 թ. փետրվարի 26-ին հաստատեց Ազգային մեծ ժողովի կողմից դժվարությամբ ընդունված՝ «Համայնքային կալվածքների մասին» օրենքը, համաձայն որի պետությունը 18 ամիսների ընթացքում պետք է վերադարձնեք ոչ մահմեդական համայնքների ու մասնավորապես՝ հայերի գույքը⁸⁷: Սակայն անգամ օրենքի ընդունումից հետո էլ Ստամբուլի հայկական համայնքը շարունակում է նյութական կորուստներ կրել:

Թուրքական իշխանությունների կողմից հայերի ունեզրկման վերջին դրսևորում պետք է համարել Սիրիայի քաղաքացիական պատերազմի ընթացքում Թուրքիային սահմանակից Քեսաբ բնակավայրի հայ բնակչության նկատմամբ կատարված հարձակումը: 2014 թ. մարտի 21-ին «Ալ-Ղաիդա»-ից անջատված «Ջաբհաթ ալ-Նուսրա» և «Ահրար աշ-Շամ» ահաբեկչական խմբավորումների մի քանի հազարի հասնող զինյալները, որոնք սիրիական հակամարտության ընթացքում մշտապես տարաբնույթ աջակցություն են ստացել Թուրքիայից, թուրքական Յալլադաղի անցակետից մտան

⁸⁶ Տե՛ս Baghdjian K. K., նշվ. աշխ., էջ 246:

⁸⁷ Դադայան Խ., Հայոց ցեղասպանության տնտեսական բաղադրյալը ֆինանսանյութական փոխհատուցման հիմնախնդիրը, «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները» (գիտագործական միջազգային գիտաժողով), Կիպրոս-Նիկոսիա, 18-19 ապրիլի 2008 թ., գիտական զեկուցումների ժողովածու, Մոսկվա, 2008, էջ 185:

Միրիայի հայաբնակ Քեսաբի շրջան և գրավեցին այդ բնակավայրն ու հարևան գյուղերը: Քեսաբում ապրող մոտ 2000 հայեր, հարկադրաբար թողնելով իրենց տները, ապաստանեցին Միրիայի Լաթաքիա շրջանում: Քեսաբը գրավելուց հետո սկսվեց հայերի տների զանգվածային կողոպուտը, իսկ թալանված ունեցվածքը մեքենաներով տեղափոխվում էր Թուրքիա⁸⁸: Քեսաբի քաղաքապետ Վազգեն Չափարյանի վկայությամբ՝ բնակավայրից ավելի ուշ հեռացած հայ ընտանիքները պատմում էին, որ սկսվել է նաև օտար մարդկանցով հայերի տները բնակեցնելու գործընթաց: Ակնհայտ է, որ թե՛ Քեսաբի վրա հարձակումը և թե՛ այն գրավելուց հետո տեղի ունեցած դեպքերը կատարվում էին ոչ միայն թուրքական իշխանությունների թողտվությամբ, այլ նրանց անմիջական աջակցությամբ: Հետևաբար՝ թուրքական պետությունը նույնպես պետք է իր բաժին պատասխանատվությունը կրի իր տարածքից Միրիայի հայաբնակ Քեսաբի վրա հարձակված ահաբեկչական կազմակերպությունների գործողությունների, այդ թվում՝ հայերի անշարժ գույքը վնասելու և ունեցվածքը թալանելու հետևանքների համար:

Գերմանիայի և Նորվեգիայի իշխանությունների կողմից Ողջակիզման հետևանքով տուժած հրեաներին հատուցում տրամադրելու գործընթացներից բացի կարելի է նշել նաև Կանադայի իշխանությունների կողմից Երկրորդ աշխարհամարտի տարիներին երկրից արտաքսված ճապոնացիներին և նրանց ժառանգներին տրամադրված հատուցման նախադեպը: Առաջին աշխարհամարտը սկսվելուց հետո Կանադան նույնպես ընդունեց «Պատերազմական դրության մասին» օրենքը, որով իշխանության մարմիններին թշնամաբար տրամադրված կամ դրանում կասկածվող օտարերկրացիներին ձերբակալելու կամ տեղահանելու իրավունք էր տրվում⁸⁹:

⁸⁸ Տե՛ս Մարության Ա., Հայոց ցեղասպանության գործով միջազգային դատարան դիմելու հիմքերն ու հնարավորությունները, Եր., 2014, էջ 212:

⁸⁹ Տե՛ս Baghdjian K. K., նշվ. աշխ., էջ 285.

1941 թ. դեկտեմբերի 7-ին Ճապոնայի կողմից ամերիկյան Պերլ-Հարբոր ռազմածովային բազայի վրա անսպասելի հարձակումից հետո Կանադայում բնակվող ճապոնացիների նկատմամբ անվստահություն առաջացավ: 1942 թ. փետրվարի 27-ին, հիմնվելով 1914 թ. «Պատերազմական դրության մասին» օրենքի դրույթների վրա, կանադական իշխանությունները քաղաքացիությունից անկախ ճապոնական ծագում ունեցող բոլոր բնակիչներին զանգվածաբար տեղահանելու որոշում ընդունեցին: Այս որոշման հետևանքով շուրջ 22 հազար մարդ հարկադրված էին լքել իրենց բնակավայրերը և տեղափոխվել Կանադայի հեռավոր շրջաններում իրենց համար ստեղծված համակենտրոնացման ճամբարներ, որտեղ նրանց մի մասն օգտագործվում էր ճանապարհների կառուցման և այլ շինարարական աշխատանքներում⁹⁰: Երկրորդ աշխարհամարտի տարիներին կանադական հպատակություն ունեցող ճապոնացիների հետ կատարվածը հիշեցնում էր այն, ինչ Առաջին աշխարհամարտի ժամանակ տեղի էր ունեցել օսմանահպատակ հայերի հետ: Կարևոր տարբերությունն այն էր, որ կանադական իշխանությունները երիտթուրքական կառավարության նման տեղահանությունները զանգվածային կոտորածներով չէին զուգորդում:

Այդուհանդերձ, տեղահանվելուց հետո կանադահպատակ ճապոնացիները օսմանահպատակ հայերի նման զրկվեցին իրենց անշարժ գույքից և ունեցվածքից, կրեցին հսկայական նյութական կորուստներ: Կանադական դաշնային գործակալությունը սկզբում հայտարարեց, թե տեղահանված ճապոնացիների անշարժ գույքի և ունեցվածքի վրա արգելանք է դրվում, սակայն 1943 թ. դաշնային իշխանությունները լիազորեցին այդ մարմնին իրացնել տեղահանվածների ամբողջ ունեցվածքը, որը վաճառվեց նվազագույն արժեքով: Առգրավեցին նաև տեղահանված ճապոնացիների եկամտի աղբյուր հանդիսացող շուրջ 1100 ձկնորսական նավերը,

⁹⁰ Տե՛ս 'u Baghdjian K. K., նշվ. աշխ., էջ 285-286:

որոնք աճուրդով արագ վաճառվեցին և սկսեցին շահագործվել⁹¹։ Դժվար չէ նկատել, որ կանադական իշխանությունները գրեթե նույնությամբ կրկնում էին երիտթուրքերի կառավարության կողմից տեղահանված ու բնաջնջված հայերի ունեցվածքի բռնագավթման գործընթացի մեխանիզմները։

Այս իրադարձություններից շուրջ երեք տասնամյակ անց՝ 1987 թ. Կանադայի ճապոնացիների ազգային ասոցիացիան Երկրորդ աշխարհամարտի տարիներին կանադահպատակ ճապոնացիների խախտված գույքային իրավունքների վերականգնման ու հատուցման պաշտոնական պահանջ ներկայացրեց Կանադայի կառավարությանը։ Կանադաբնակ ճապոնացիները կառավարությունից պահանջում էին՝

1. «Պատերազմական դրության մասին» 1914 թ. օրենքի չեղարկում,

2. ներողություն խնդրել կանադահպատակ ճապոնացիներից, որոնց նկատմամբ իշխանություններն անարդարացի են վարվել և երաշխավորել նման դեպքերի կրկնության բացառումը,

3. վերականգնել կանադահպատակ ճապոնացիների խախտված իրավունքները և նրանց կորցրած անշարժ գույքի, ունեցվածքի և ձեռնարկությունների դիմաց հատուցում տրամադրել⁹²։

Պահանջի ներկայացումից հետո Կանադայի ճապոնացիների ազգային ասոցիացիայի և Կանադայի կառավարության Մշակութային բազմազանության նախարարության միջև բանակցություններ սկսվեցին։ Կանադայի կառավարությունն ընդունեց, որ Երկրորդ աշխարհամարտի ընթացքում և դրան հաջորդած տարիներին իշխանությունները անարդարացի են վարվել կանադական հպատակություն ունեցող ճապոնացիների հետ, խախտելով նրանց իրավունքները և համաձայնվեց վերանայել «Պատերազմական

⁹¹ Տե՛ս Baghdjian K. K., նշվ. աշխ., էջ 287.

⁹² Տե՛ս նույն տեղում, էջ 288.

դրության մասին» 1914 թ. օրենքը: Միաժամանակ պատրաստակամություն հայտնվեց խորհրդարանի հատուկ բանաձևով ճանաչել այդ իրողությունը և երաշխավորել նման դեպքերի կրկնության բացառումը:

Կառավարությունը համաձայնվեց նաև վերականգնել կանադահպատակ ճապոնացիների խախտված իրավունքները և հատուցում տրամադրել նրանց կրած նյութական վնասների դիմաց: Բանակցող կողմերին, սակայն, չհաջողվեց ընդհանուր հայտարարի գալ հասցված վնասի ընդհանուր չափի հարցում: Կանադաբնակ ճապոնացիներից 1434 մարդ կառավարությանը բողոքագիր էր ներկայացրել 2420 անշարժ գույքի անօրինական վաճառքի և դրա հետևանքով կրած նյութական վնասների վերականգնման պահանջով: Կանադայի ճապոնացիների ազգային ասոցիացիայի հաշվարկներով նյութական վնասի ընդհանուր չափը կազմում էր էր 443 մլն դոլար, սակայն կառավարությունը հայտարարեց, որ պատրաստվում է 12 մլն դոլարի չափով հատուցում տրամադրել սեփականատերերին ու նրանց ժառանգներին⁹³: Անկախ հատուցման չափի հարցի շուրջ համաձայնության գալու կողմերի միջև հետագա բանակցությունների արդյունքներից, այս գործընթացում կարևորն այն էր, որ կանադական կառավարությունը պատրաստակամություն հայտնեց վերացնելու իր իսկ հպատակների նկատմամբ նախկինում կատարված անարդարությունների հետևանքները:

Կանադահպատակ ճապոնացիների խախտված իրավունքները վերականգնելու և հատուցում տրամադրելու Կանադայի իշխանությունների այս որոշումը ևս մեկ լրացուցիչ նախադեպ կարող է հանդիսանալ ցեղասպանության իրագործմամբ հայ ժողովրդին հասցված նյութական վնասների դիմաց հատուցում տրամադրելու հարցում: Ի տարբերություն Գերմանիայի և նրա նախկին դաշնակիցների կողմից Հոլոքոստի հետևանքով տուժած

⁹³ Տե՛ս Baghdjian K. K., նշվ. աշխ., էջ 292:

հրեաների նյութական հատուցում տրամադրելու գործընթացի, ցեղասպանության հանցագործության բացակայության պարագայում էլ Կանադայի իշխանությունները քաղաքական կամք դրսևորեցին իշխանությունների կողմից կանադահպատակ ճապոնացիների նկատմամբ գործված սխալներն ընդունելու և նրանց հատուցում տրամադրելու հարցում:

Այսպիսով՝ Երկրորդ աշխարհամարտի տարիներին Նորվեգիայի իշխանությունների կողմից հրեական համայնքի և Կանադայի իշխանությունների կողմից կանադաբնակ ճապոնացիների ունեցվածքի բռնագավթման գործընթացը լիովին նույնականացվում է Առաջին աշխարհամարտի տարիներին Օսմանյան կայսրության կողմից ցեղասպանությանը զուգահեռ իրականացվող հայերի ունեցվածքի զանգվածային բռնագավթման քաղաքականության հետ: Այս հանգամանքից ելնելով, միանգամայն տրամաբանական է, որ Նորվեգիայի կողմից հրեաներին և Կանադայի կողմից ճապոնացիներին՝ նրանց պատճառված նյութական վնասների վերականգնման ու հատուցման գործընթացները կարող են նախադեպ ծառայել թուրքական պետության կողմից հայ ժողովրդին հատուցում տրամադրելու համար, իսկ նշված գործընթացների մեթոդաբանությունն ու մեխանիզմները՝ դրվեն Հայոց ցեղասպանության նյութական հետևանքների վերականգնման հիմքում:

Ամփոփելով նշենք, որ Առաջին աշխարհամարտի տարիներին Հայոց ցեղասպանությանը զուգահեռ իրականացվող հայերի ունեցվածքի զանգվածային բռնագավթումը երիտթուրքերի կողմից բարձրացվեց պետական քաղաքականության մակարդակի, ինչը հետագայում ժառանգեցին քեմալականները և հետևողականորեն շարունակեցին նաև թուրքական հաջորդ վարչախմբերը: Այս ամենը հիմք է տալիս պնդելու, որ ներկայումս էլ Թուրքիայի տնտեսությունը զարգանում է հայերից և ոչ մահմեդական այլ ժողովուրդներից անօրինական ձևով բռնագավթված ունեցվածքի և կապիտալի հաշվին: Այս իրողություններից բխող միակ եզրահան-

գումն այն է, որ Թուրքիան պետք է միջազգային պատասխանատվության ենթարկվի ոչ միայն Հայոց ցեղասպանության իրագործմամբ հայերի հայրենագրկման ու բնաջնջման, այլև նրանց զանգվածային ունեգրկման ու թալանի համար:

1.3. Հայոց ցեղասպանության իրագործմամբ թուրքական իշխանությունների կողմից Հայ Առաքելական եկեղեցուն հասցված հոգևոր ու նյութական կորուստները

Անկախ պետականության բացակայության պայմաններում Հայ Առաքելական եկեղեցին այն ազգային կառույցն էր, որը մեր ժողովրդին հայ էր պահում, զարկ տալով հայ մշակույթին ու դպրությանը: Մա, անշուշտ, քաջ գիտակցում էին նաև երիտթուրքերը, ուստի բոլորովին էլ պատահական չէր, որ ցեղասպան քաղաքականության թիրախ ընտրվեց նաև Հայ Առաքելական եկեղեցին: Թուրքական իշխանությունների հատուկ հրահագով թուրք ու քուրդ հրոսակներն առանձնակի դաժանությամբ էին սպանում հայ մտավորականության զգալի մասը կազմող հոգևորականները, և ընդգծված բարբարոսություն էին ցուցաբերում հայկական եկեղեցիներն ու վանքերը թալանելու, քանդելու ու պղծելու գործում:

Կ. Պոլսի Հայոց պատրիարքի 1915 թ. հուլիսի 13-ի և 15-ի նամակներում արդեն իսկ տեղեկություններ կան այն մասին, որ կոդուպտում, քանդվում ու սրբապղծվում են հայկական եկեղեցիներն ու վանքերը: Այսինքն՝ հայկական եկեղեցիների ու վանքերի կողոպուտի ու ոչնչացման գործընթացը կատարվում էր հայերի զանգվածային սպանություններին զուգահեռ: Զավեն պատրիարքը նաև վկայում էր, որ եկեղեցիներից թալանված գույքն արդեն իսկ սկսել են վաճառել Պոլսի հրապարակներում⁹⁴: Մեծ եղեռնի սկզբնական փուլում Օսմանյան կայսրության 50 շրջաններում կողոպտված,

⁹⁴ Յուշամատեան Մեծ Եղեռնի, իմբ. Գ. Ահարոնեանի, Պեյրուք, 1965, էջ 501:

կիսով չափ կամ ամբողջությամբ ավերված հայկական եկեղեցիների թիվը կազմում էր 2050, իսկ վանքերինը՝ 203⁹⁵:

1916 թ. ռուսական մամուլում հրատարակվեցին Արևմտյան Հայաստան ուղևորված Ն.Մառի գլխավորած արշավախմբի տպավորությունները Վանի նահանգի վերաբերյալ: Արշավախմբի անդամները վկայում էին, որ բազմաթիվ հին հայկական մշակութային գանձեր կողոպտված էին թուրքերի կողմից, որոնց թվում՝ Լիմ Անապատ վանքի 300 մագաղաթե ձեռագրերը և 800 կտոր պղնձյա հին առարկաները, հափշտակվել էին նաև Կոտուց վանքի բոլոր մետաղյա հին ու թանկարժեք առարկաները⁹⁶:

Ցեղասպանության ընթացքում Հայ Առաքելական եկեղեցուն հասցված կորուստները պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ ծիսական առարկաներ, ասեղնագործ կամ ձեռագործ արվեստի հյուսվածքներ, գորգեր և կարպետներ, փայտագործական առարկաներ, սուրբ մասունքներ, ձեռագիր մատյաններ և մանրանկարչական գործեր, ճարտարապետական հուշարձաններ, արվեստի գործեր և սրբազան պատկերներ, վանական և եկեղեցական կալվածքներ:

Ծիսական առարկաների թվին են պատկանում սկիհները, տարբեր չափի ու ձևերի խաչերը, վարդապետական գավազանները, խնկամանները, արծաթապատ ավետարանները, մյուռոնի ամանները, աղավինները, տաշտերը, ջրամանները, սափորները, քշոցները, աշտանակները, ջահերը, կանթեղները, գոտիները, մատանիները, ծնծղաները, թանաքամանները և այլն: Թվարկված ծիսական առարկաները, որպես կանոն, պատրաստված են լինում թանկարժեք մետաղներից, զարդարված են թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարերով, ուստի դրանք իրենցից ինչպես նյութական, այնպես էլ արվեստի տեսակետից մեծ արժեք են ներկա-

⁹⁵ Հ. Տաճատ վրդ. Եարտըմեան, Հայաստանի վանքերուն եւ եկեղեցիներուն մշակութային կորուստը 1894-1896 եւ 1915-1925 տարիներուն, Վենետիկ-Սբ. Ղազար, 1995, էջ 46:

⁹⁶ Մնացականյան Ա. Ն., Հայ ժողովրդի ողբերգությունը, Եր., 1965, էջ 186:

յացնում: Չնքուշի վանքն ուներ 550 կտոր արծաթյա և ոսկյա սպասքեղեն, իսկ Արմաշի Աբ. Աստվածածնի վանքում կար ավելի քան 350 կտոր արծեքավոր սպասքեղեն, որոնք բոլորը հափշտակվեցին: Կողոպտվեցին նաև Սեբաստիայի Սբ. Նշան վանքի 3000 կտոր արծեքավոր առարկաները⁹⁷:

Բացի ծիսական առարկաներից ու սպասքեղենից, կողոպտվեցին նաև եկեղեցիներում պահվող հին ու թանկարժեք գորգերն ու կարպետները, թալանվեցին կամ ոչնչացվեցին փայտագործական առարկաները՝ դռներ, գահեր, աթոռներ, սեղաններ, գրակալներ, խաչեր, մասունքների ու սրբազան առարկաների փայտյա պահարաններ, տուփեր և այլն⁹⁸: Միջին հաշվով յուրաքանչյուր հայկական վանք ու եկեղեցի ուներ 5000 օսմանյան ոսկու արժողությամբ գորգեր և կարպետներ: Ոչնչացվեցին նաև եկեղեցիներում պահվող սուրբ մասունքները՝ կենաց փայտ կամ խաչափայտ, Նոյի տապանի և Հիսուսի Խաչի բեկորներ, որոնց կորուստն անվերականգնելի է: Մասունքները մեծ մասը պահվում էր ոսկյա, արծաթյա, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարերով զարդարված փայտյա կամ մետաղյա տուփերում կամ պահարաններում, որոնք արվեստի գործեր էին⁹⁹: Այդ թանկարժեք տուփերին ու պահարաններին տիրանալու մոլուցքով տարված՝ բարբարոսները ոչնչացնում էին դրանցում պահվող սուրբ մասունքները, որոնց կորուստը որևէ նյութական արժեքով չի կարող հատուցվել:

Անվերականգնելի է նաև հայ ձեռագրերի ու հնատիպ գրքերի կորուստը, որոնք ոչ միայն մեր ժողովրդի մշակութային հարստությունն էին, այլև մեր նախնիների ու նրանց գիտելիքի հետ հոգևոր կապի աղբյուրը: Այսպես՝ Խիզանի Սբ. Խաչ վանքում պահվող 1000-ի չափ գրքերը մոխիր դարձան¹⁰⁰: Վարագա վանքի թաքստոց-

⁹⁷ Ղազարեան Հ., Ցեղասպան թուրքը, էջ 236-237:

⁹⁸ Հ. Տաճատ վրդ. Եարտըմեան, նշվ. աշխ., էջ 61-62:

⁹⁹ Տես նույն տեղում:

¹⁰⁰ Գովանճեան Ս., Հայկական կոտորածները եւ մեր ձեռագրական կորուստները, «Էջմիածին», 1965, թիւ Բ-Դ, էջ 103:

ներից մեկում պահվող 150 կտոր մագաղաթները և ընտիր ձեռագիր մատյանները նույնպես անհետացան, կորսվեցին նաև Կեսարիայի շուրջ 700 արժեքավոր ձեռագրերը¹⁰¹: Որոշ տվյալների համադրությամբ կարելի է եզրակացնել, որ այդ տարիներին ավելի քան 20000 ձեռագրեր ու հնատիպ մատյաններ հրո ճարակ են դարձել¹⁰²:

Ավերվեցին նաև Հայ Առաքելական եկեղեցու ճարտարապետական հուշարձանները՝ վանական համալիրները, եկեղեցիները, մատուռները, գավիթները, ժամատները, զանգակատներն ու գրադարանները: Դրան զուգահեռ՝ ոչնչացվեցին վանքերի և եկեղեցական հաստատությունների ներսում եղած անթիվ նկարները, որմնանկարները, պատկերաքանդակները, խաչքարերը, տապանաքարերը, վիմական արձանագրություններն ու քանդակագործական աշխատանքները, ինչը պետք է համարել վանդալիզմի արտահայտված դրսևորում ոչ միայն հայ, այլև համաշխարհային մշակութային ժառանգության նկատմամբ:

Հայոց ցեղասպանության իրագործմամբ Հայ Առաքելական եկեղեցուն հասցված վնասների հաշվարկի առաջին փորձը կատարվեց Առաջին աշխարհամարտից հետո, երբ Պողոս Նուբար փաշայի և Ավետիս Ահարոնյանի ստորագրությամբ Փարիզի Խաղաղության վեհաժողովին ներկայացված հուշագրում առանձնացված է ազգային և կրոնական հաստատությունների կամ մասնակի ավերումների բաժինը, որում հատուցում է պահանջվում 83 առաջնորդարանների, 1860 եկեղեցիների ու մատուռների, 229 վանքերի, 26 վարժարանների ու դպրեվանքերի, 1439 դպրոցների ու 42 որբանոցների ավերման, ինչպես նաև դրանց գույքի, նաև ձեռագիր մատյանների ու պատմագեղարվեստական գրքերի հափշտակման համար, որի համար պահանջվում էր 75.000.000 ֆրանսիական ֆրանկ¹⁰³: Ան-

¹⁰¹ Նույնի, 1966, թիւ Ե-Է, էջ 143-144:

¹⁰² Худавердян К., Саакян Р., Геноцид армян сквоз призму десятилетий, Ер., 1995, с. 37-38.

¹⁰³ Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած կորուստները, ՀՅԹԻ, Եր., 1999, էջ 10:

շուշտ, կարճ ժամանակամիջոցում ներկայացված այս հաշվարկները չեն կարող վերջնական համարվել:

Ինքնին հասկանալի է, որ Հայոց ցեղասպանության իրագործմամբ Հայ Առաքելական եկեղեցուն հասցված այս վիրիսարի կորուստների ամբողջական հաշվարկ կատարելը չափազանց բարդ է մի շարք պատճառներով: Նախ՝ գրեթե անհնարին է նյութականի վերածել Հայ եկեղեցուն, այսինքն՝ նաև հայ ժողովրդին, հասցված ահռելի հոգևոր կորուստները: Բացի այդ՝ կորուստների մեծագույն մասն ուղղակի անվերականգնելի է:

Ցեղասպան քաղաքականությունն իրականացնելիս թուրքական իշխանությունները չէին սահմանափակվում միայն սպանված կամ աքսորված հայերի գույքն ու ունեցվածքը յուրացնելով, այլ բռնազավթում էին նաև Հայ Առաքելական եկեղեցուն պատկանող կալվածքները: Ինչպես հայտնի է, վանական համալիրները և եկեղեցական հաստատություններն ունեին իրենց սեփական կալվածքները, վարժարանները, իջևանատները, խաները, պանդոկները, տները, խանութները, այգիները, պարտեզները, անտառները, ջրաղացները, որոնց եկամուտով էլ գոյատևում էին կրոնական այդ կառույցները¹⁰⁴:

Սսի կաթողիկոսության միայն անշարժ գույքի մասին տվյալներն արդեն իսկ պատկերացում են տալիս, թե թուրքական իշանություններն ինչ հսկայական ծավալների ունեցվածք են բռնազավթել Հայ Առաքելական եկեղեցուց: Ինչպես հայտնի է, 1921 թ. Կիլիկիայից ֆրանսիական զորքերի դուրսբերման հետևանքով Սսի կաթողիկոսության ամբողջ անշարժ գույքն անցավ թուրքական իշխանությունների տիրապետության տակ:

Ադանայի նահանգի Սիս-Գոզանի գավառի Սիս քաղաքում էր գտնվում 4000 մ քարե պարսպով շրջապատված բազմադարյա Կա-

¹⁰⁴ Հ. Տաճատ վրդ. Եարտըմեան, նշվ. աշխ., էջ 76-77:

թողիկոսության համալիրը*, որն իրենից ներկայացնում էր՝ վեհաշուք կաթողիկոսարանը, Մայրավանքը, եկեղեցին, աղոթատեղին և զանգակատները: Մայրավանքի 50 սենյակների և սրահներից պատերը զարդարված էին Քրիստոսի պատկերով 15000 կավե հինաձև սալիկներով: Օսմանյան կայսրերի մի քանի արտոնագրերով (ֆիրման) Սսի հայոց կաթողիկոսությանը շնորհված 125 հա մակերեսով միջան Կաթողիկոսության համալիրի տարածքն իր շենք-շինություններով գնահատվում էր 100 000 թուրքական լիրա¹⁰⁵:

Կաթողիկոսության համալիրում կար հինաձև աշխատանքների հարուստ հավաքածու ունեցող թանգարան և հարուստ գրադարան, որտեղ պահվում էին հին մանրապատկերներով 400 ձեռագրեր և ավելի քանի 4000 տպագիր հատորներ: Եթե շենքերն ու շինությունները և դրանց հասցված վնասը կարելի է գնահատել և դրանց դիմաց հատուցման ինչ-որ չափ որոշել, ապա մանրանկարներով հայ հին ձեռագրերի և հնատիպ գրքերի ոչնչացումը հայ ժողովրդի համար ուղղակի անգնահատելի է և որևէ դրամական հատուցմամբ անվերականգնելի կորուստ է:

Կաթողիկոսության համալիրի հարևանությամբ տեղակայված 14 500 մ² մակերեսով ընդարձակ հողատարածքի վրա կառուցված էին բնակելի մի քանի շենքեր, ինչպես նաև Սբ. Սոֆյայի հին եկեղեցու ավերակները: Սեփականության վկայակագրով (թափու) Կիլիկիայի կաթողիկոսությանը պատկանող այդ հողատարածքը

* 1927 թ. օգոստոսի 23-ին Հալեպում կազմված «Սսի բռնագաղթից հետո քեմալականների կողմից վերագրավված Կիլիկիայի կաթողիկոսանիստ մայրավանքի կալվածքների, չտեղափոխված գույքի և այլ ունեցվածքի ցուցակ»-ի ծանոթագրությունում նշվում է, որ ֆրանսիացիների կողմից Կիլիկիան գրավելուց հետո քեմալականների հարձակումներից պաշտպանելու նպատակով ֆրանսիական կառավարությունը վանքի տարածքը վերածել էր զորանոցի, զինարանի և մթերանոցի: Տե՛ս ՄՏԿԿԱ, Սահակ Բ կաթողիկոսի ֆոնդ, հավաքածոյ 21, ց. 1, թղթ. 26:

¹⁰⁵ Նույն տեղում, հավաքածոյ 40, ց. 1, թղթ. 63:

գնահատվում էր 2000 թ. ¹⁰⁶: Դրանից բացի, կաթողիկոսությունը արտոնագիր ուներ նաև հին հայկական վանքի նկատմամբ, որն իր ունեցվածքով, 5 հա տարածքի վրա և դրան կից կառուցված աղոթարաններով, դպրոցով և գերեզմանատնով գնահատվում էր 6000 թ.լ.:

Սսի Քրիսթիան թաղամասի շուկայում Կիլիկիայի կաթողիկոսությանը պատկանող շինություններից մեկի առաջին հարկում բնակելի տուն էր՝ կից հողամասով, իսկ երկրորդի առաջին հարկում գործում էր խաղատուն: Շինությունների մյուս հատվածները զբաղեցնում էին 7 խանութներ՝ գնահատված 1500 թ. և: Նույն թաղամասում էր գտնվում կաթողիկոսությանը պատկանող 30 հա տարածքով հողամասեր՝ գնահատված 2970 թ. և, 3,5 հա տարածքով պարտեզներ, 2 տուն և բաղնիքի ավերակներ՝ գնահատված 2100 թ.լ. և 800 թ. և. գնահատվող ջրաղացը¹⁰⁷:

Սսի Մահմուտլը թաղամասում կաթողիկոսությանն էին պատկանում 250 թ. և. գնահատված 2,6 հա տարածքով հողամասեր, իսկ Արսլան փաշա թաղամասում հողամաս և 400 մ² տարածքով տուն՝ գնահատված 400 թ. ¹⁰⁸: Միայն Սիս քաղաքում Կիլիկիայի հայոց կաթողիկոսության անշարժ գույքը 1921 թ. դրությամբ գնահատվում էր **116020 թ.լ.:**

Գոգանի գավառի **Թլան** գյուղում կաթողիկոսությանը պատկանող 1000 հա տարածքի վրա էր գտնվում նշանավոր անասնագործ, որի քարից կառուցված հսկայական ախոռներում պահում էին 80 եզ, 50 կով, 30 ջորիների, այծերի և ոչխարների անթիվ հոտեր, իսկ շենքերում և պահեստներում՝ շարժական գույք և գյուղատնտեսական մեքենաներ: Անասնագործի շուրջը 10000 պտղատու ծառերով հսկայական ոռոգելի հողատարածք էր: Թլանի

¹⁰⁶ Baghdjian K. K., նշվ. աշխ., էջ 97-98:

¹⁰⁷ Տե՛ս ՄՏԿԿՍ, Սահակ Բ կաթողիկոսի ֆոնդ, հավաքածոյ 21, ց. 1, թղթ. 26; հմմտ. նույնի՝ հավաքածոյ 40, ց. 1, թղթ. 63:

¹⁰⁸ Տե՛ս նույն տեղում:

ագարակն ու այնտեղ գործող ջրաղացը միասին գնահատվում էին 52000 թ.լ.¹⁰⁹:

Ադանա քաղաքում Կիլիկիայի կաթողիկոսությանն էր պատկանում տարածքային փոստի և հեռագրատան ծառայության 500 մ² մակերես ունեցող մեծ շենքը, որը գնահատված է 12 000 թ.լ., իսկ **Ջիհանի (Ջեյհան)** գավառակում՝ 300 մ² մակերեսով տուն և 200 մ² հողամաս՝ միասին գնահատված 750 թ.լ.¹¹⁰:

Մարաշի գավառակի Թերլիզեն գյուղում Կիլիկիայի կաթողիկոսությանն էին պատկանում 1,4 հա խաղողի այգիներ՝ գնահատված 610 թ.լ., 3000 մ² հողամասով պարտեզ՝ գնահատված 250 թ.լ., Այաքլըջա-Օլուխ գյուղում՝ 2000 մ² տարածքով հողամաս և տուն՝ գնահատված 100 թ.լ., 3000 մ² տարածքով խաղողի այգիներ՝ գնահատված 160 թ.լ., Սարի-Կայա գյուղում՝ 2000 մ² տարածքով խաղողի այգի՝ գնահատված 100 թ.լ.: Մարաշ քաղաքում կաթողիկոսությունը տնօրինում էր վաճառատուն՝ գնահատված 1500 թ.լ., 8 խանութ և խաղատուն՝ գնահատված 1545 թ.լ.¹¹¹: Ընդհանուր առմամբ, Մարաշի գավառում Կիլիկիայի հայոց կաթողիկոսությանը պատկանող անշարժ գույքը գնահատվում էր 4265 թ.լ.:

Համադրելով Զ. Բեզիկյանի հուշագրի ցուցակների և Սահակ Բ կաթողիկոսի փաստաթղթերի տվյալները, կարող ենք արձանագրել, որ Ադանայի նահանգի Սիս և Ադանա քաղաքներում, Ջիհանի գավառակում, Գոզանի գավառի Թլան գյուղում, ինչպես նաև Մարաշ քաղաքում ու Մարաշի գավառակում Կիլիկիայի հայոց կաթողիկոսությանը պատկանող անշարժ գույքի ընդհանուր արժեքը 1921 թ. դրությամբ գնահատվում էր **185 035 թ.լ.**:

Հարկ է նշել, որ Սսի կաթողիկոսության անշարժ գույքի գնահատման բերված թվային տվյալներն ամենևին չեն արտահայտում դրանց իրական արժեքը, քանզի գնահատողները միտումնավոր

¹⁰⁹ Տե՛ս ՄՏԿԿԱ, Սահակ Բ կաթողիկոսի ֆոնդ, հավաքածոյ 21, ց. 1, թղթ. 26; հմմտ. նույնի՝ հավաքածոյ 40, ց. 1, թղթ. 63:

¹¹⁰ Տե՛ս նույն տեղում:

¹¹¹ Տե՛ս նույն տեղում:

կերպով այն ժամանակվա շուկայական գներից ցածր են գնահատել հողատարածքներն և շենք-շինությունները: Դրանից բացի, ներկայացվածը միայն կաթողիկոսարանի ունեցվածքն է և չի արտահայտում նրա ենթակայության տակ գործող թեմերի ու համայնքների անշարժ գույքը, որն ամբողջությամբ մնաց թուրքական պետության հայեցողությանը: Ինչ վերաբերում է Սսի Կաթողիկոսության շարժական գույքին, ապա դրա արժեքը մոտավորապես կազմում էր շուրջ 9-10 մլն թուրքական ոսկի, ինչը համարժեք է 900-1000 մլն ԱՄՆ դոլարի¹¹²: Ներկայումս այդ բռնագավթված կալվածքների եկամուտը ստանում են կա՛մ անհատներ, կա՛մ էլ թուրքական պետությունը:

Սսի կաթողիկոսությունը նյութական կորուստներն է կրել նաև վարձակալության տրված իր տարածքների դիմաց չվճարումների հետևանքով: Այսպես, Սահակ Բ կաթողիկոսը Ադանայի Բուջակ թաղամասում Ս. Ստեփանոս եկեղեցուն պատկանող 20000 թուրքական լիրա. գնահատված մոտ 1130 մ² հողատարածքը 1911 թ. 25 տարով վարձակալության էր տրամադրել «Orosdi-Back» ընկերությանը, որի գլխավոր գրասենյակը գտնվում էր Փարիզում: Ըստ վարձակալության պայմանագրի, ֆրանսիական ընկերությունը պարտավորվում էր այդ հողատարածքի վրա 6000 թուրքական լիրայի տարեկան շրջանառություն ունեցող առևտրի կենտրոնի եռահարկ շենք կառուցել, սակայն տվյալ հողատարածքի համար տարեկան խորհրդանշական 240 թուրքական լիրա պետք է վճարեր Սսի կաթողիկոսությանը, իսկ 25 տարի անց կառուցված շինությունը պետք է անցներ կաթողիկոսության տնօրինության տակ:

Առաջին աշխարհամարտի սկսվելուց հետո ընկերությունը սկսեց չվճարել Սսի կաթողիկոսության խորհրդանշական վարձավճարը, իսկ 1921 թ. ֆրանսիացիների կողմից Կիլիկիան քեմալականներին հանձնելուց մինչև 1927 թ. առևտրի կենտրոնի շենքի

¹¹² Baghdjian K. K., նշվ. աշխ., էջ 98-99:

հրկիզումն ընկած ժամանակահատվածում 7 տարվա 1680 թուրքական լիրա վարձը վճարեց թուրքական իշխանություններին¹¹³:

1927 թ. առևտրի կենտրոնի շենքի հրկիզվելուց հետո այն վերականգնելու մտադրություն չունեցող ֆրանսիական ընկերությունը դադարեցրեց նաև թուրքական իշխանություններին տարեկան վարձավճարների փոխանցումը: Առևտրի կենտրոնի շենքի հրկիզումից հետո «Օրոսդի-Բաք»-ն ապահովագրական կազմակերպություններից 20000 ֆունտ ստերլինինգի ապահովագրական հատուցում ստացավ և հեռացավ տնտեսական առումով անհեռանկար այդ տարածքից¹¹⁴:

Այդուհանդերձ, շենքի հրկիզումը «Orosdi-Back» ընկերությանը Սսի կաթողիկոսարանի առջև իր ստանձնած պարտավորություններից չէր ազատում, քանզի, վարձակալության պայմանագրի համաձայն, հրդեհի դեպքում կամ որևէ այլ պատճառով շենքը քանդվելու կամ վնասվելու դեպքում «Orosdi-Back» ընկերությունը պարտավորվում էր վերականգնել այն, հակառակ դեպքում պետք է վճարեր մինչև 1936 թ. հողատարածքի 25 տարվա վարձակալման ամբողջ գումարը՝ 6000 թուրքական լիրա¹¹⁵:

Ստեղծված իրավիճակում 1927 թ. օգոստոսի 25-ին Կիլիկիայի կաթողիկոս Սահակ Բ-ն նամակ է ուղարկում Փարիզ՝ հայ գործիչներին խնդրելով զբաղվել «Orosdi-Back» ընկերությունից կաթողիկոսարանի հասանելիք գումարը վերադարձնելու հարցով: Փարիզի հայ գործիչներից Թագվոր Փիլիպոսյանը, համակողմանիորեն ուսումնասիրելով տվյալ գործը, պատրաստում է տեղեկագիր, որում առանձնացնում է իրավական բնույթի մի շարք խնդիրներ:

1. Ցեղասպանության իրագործմամբ կայսրության հայ բնակչության, այդ թվում աղանահայերի բնաջնջման ու տեղահանության հետևանքով Ադանայի թեմի իրավատեր (լիազոր) մարմին

¹¹³ Տե՛ս ՄՏԿԿՍ, հավաքածոյ 40, ց. 1, թղթ. 63:

¹¹⁴ Տե՛ս նույն տեղում:

¹¹⁵ Տե՛ս նույն տեղում:

այլևս գոյություն չունեն, ուստի «Օրոսդի-Բաք» ընկերության հետ համաձայնության հասնելու նպատակով ի հայտ էր գալիս համայնքը ներկայացնող այլ մարմին առաջ բերելու հարցը: Քանի որ Ադանայի թեմը գտնվում էր Սսի կաթողիկոսության ենթակայության տակ, ապա որպես թեմական ժողովի իրավահաջորդ մարմին կարող էր հանդես գալ Միքիայում Կիլիկիայի հայոց կաթողիկոսի նախագահությամբ գործող ժողովը՝ պայմանով, որ «Orosdi-Back» ընկերությունը համաձայնվի տվյալ մարմինը այդ կարգավիճակում ճանաչել: Ակնարկվում էր, որ ֆրանսիական կազմակերպությունը կարող է շահարկել ցեղասպանության հետևանքով Ադանայի համայնքի այլևս գոյություն չունենալու հանգամանքը՝ համայնքի առջև ունեցած պայմանագրային պարտավորություններից խուսափելու նպատակով:

2. Կանխատեսվում էր, որ Ադանայի թեմին պատկանող հողատարածքի վարձավճարի վճարման պահանջի ներկայացման դեպքում «Orosdi-Back» ընկերությունը կարող էր առարկել, թե սեփականատիրոջ իրավահաջորդն իրավունք չունի պայմանագրի ժամկետը՝ 1936 թ. լրանալուց առաջ իրենից պահանջել հրկիզված շենքի վերակառուցումը և/կամ վարձերի վճարումը:

3. Հիմնավոր կասկածներ ունենալով, որ ընկերության հետ շենքի վերակառուցման շուրջ հնարավոր չի լինելու համաձայնության գալ, կարծիք էր հայտնվում, որ պետք է փորձել ընկերության հետ համաձայնության հասնել զոնե պայմանագրի ստորագրումից մինչև հրդեհն ընկած ժամանակահատվածի (1912-1927 թթ.), այսինքն՝ հողատարածքի 15 տարիների վարձը՝ 3600 թ.լ. ստանալու հարցի շուրջ: Այս մոտեցումը, սակայն նույնպես կարող էր չընդունվել ֆրանսիական ընկերության կողմից, քանի որ, ինչպես նշվել է, հողատարածքի 1921- 1927 թթ. 7 տարվա 1680 թ.լ. վարձավճարը «Orosdi-Back»-ն արդեն վճարել էր թուրքական իշխանություններին: Ստացվում է, որ ֆրանսիական ընկերության հետ իրական համաձայնություն կարող էր ձեռք բերվել միայն պայմանագրի ստորագրումից մինչև Կիլիկիայից ֆրանսիական

գորքերի դուրսբերումը՝ 1913-1920 թթ. ժամանակահատվածի, այսինքն՝ 8 տարվա վարձավճարի գումարի՝ 1920 թ.լ. շուրջ: Վարձավճարի մնացած 1680 թ.լ. Սսի կաթողիկոսությունը պետք է փորձեր ետ ստանալ թուրքական իշխանություններից:

4. Քանի որ պայմանագրում նշում չկար այն մասին, որ հողի վարձը պետք է վճարվի օսմանյան ոսկեդրամով, ապա «Orosdi-Back»-ը, Թուրքիայի և Ֆրանսիայի միջև կայացած պայմանավորվածությունների վրա հիմնվելով, կձգտի վարձը վճարումը կատարել թղթադրամով, ինչի հետևանքով ստացվող գումարի արժեքը 7-8 անգամ նվազ կլինի:

Թվարկված խնդիրներն արդեն իսկ հիմք էին տալիս եզրակացնելու, որ գործը կարող է լուծվել առավելապես դատական կարգով և իրատեսական էր համարվում, որ «Orosdi-Back» ընկերության պատասխանատուների հետ հնարավոր կլինի պայմանավորվածություն ձեռք բերել գործը արբիտրաժի հանձնելու շուրջ: Միննույն ժամանակ նշվում էր, որ հաշվի առնելով Գիլիկիայի կաթողիկոսության ծանր տնտեսական վիճակն ու կարիքները, չէր կարելի թույլ տալ, որ դատական ծախսերը գերազանցեին ակնկալվող գումարի ¼-ը: Փիլիպոսյանին հանձնարարվել էր զբաղվել փաստաբան վարձելու հարցով, որպեսզի ընկերությանը հարկադրվեր հողի վարձը վճարել օսմանյան ոսկեդրամով¹¹⁶:

Սահակ Բ կաթողիկոսին սեպտեմբերի 22-ին Փարիզից ուղարկված պատասխան նամակում ներկայացնելով Փիլիպոսյանի տեղեկանքը, հայտնվում էր, որ վերջինիս հանձնարարվել է զբաղվել փաստաբան վարձելու հարցով: «Orosdi-Back»-ի գործը արբիտրաժին հանձնելու գաղափարը Վեհափառի հավանությանն արժանանալու դեպքում խնդրվում էր իր նախագահության տակ գործող ժողովականների ստորագրությամբ և Հալեպի իշխանությունների վավերացմամբ լիազորագիր պետք է ուղարկվի Թ.

¹¹⁶ Տե՛ս ՄՏԿԿԱ, հավաքածոյ 40, ց. 1, թղթ. 63:

Փիլիպոսյանի անունով, որպեսզի վերջինս Փարիզում այդ հարցերով զբաղվելու համար իրավական հիմք ունենար:

Պատասխան նամակի բովանդակությունից ու դրա վերլուծությունից պարզ է դառնում, որ արբիտրաժի միջոցով «Orosdi-Back» ընկերությունից հնարավոր էր լինելու վերականգնել Ադանայի թեմի հողատարածքի վարձակալության ընդհանուր գումարի միայն մի չնչին մասը, ինչը հազիվ բավարարելու էր դատական ծախսերին: Ստեղծված պայմաններում ծագում էր արբիտրաժի գործընթաց նախաձեռնելու նպատակահարմարության հարցը: Վեջին հաշվով, ֆրանսիական կազմակերպությունից վարձակալության գումարների վերականգնման կաթողիկոսության բազմաթիվ պահանջագրերն անպատասխան մնացին¹¹⁷:

1939 թ. ֆրանս-թուրքական պայմանավորվածությունների հետևանքով Սիրիայի կազմում գտնվող Ալեքսանդրեթի սանջակը (գավառ) Թուրքիային հանձնելուց հետո հայ բնակչությունը լքեց սանջակը, քանի որ չէր ցանկանում կրկին ցեղասպան թուրքական իշխանությունների ենթակայության տակ հայտնվել: Սանջակից հայ բնակչության հեռանալուց հետո համայնքին և Գիլիկիայի հայոց կաթողիկոսության թեմին պատկանող կալվածքներն իբրև «լքյալ գույք» թուրքական պետության տիրապետության տակ անցան, և 1940-ական թթ. ընթացքում թուրքական կառավարությունը սկսեց գանձել սանջակի հայկական կալվածքներից ստացվող վարձակալության գումարները:

1950 թ. հոկտեմբերի 29-ին Բերիո թեմի առաջնորդ Զարեհ եպիսկոպոսը նամակով դիմում է Մեծի տանն Գիլիկիո կաթողիկոս Գարեգին Ա-ին, հայտնելով, որ թուրքական նոր կառավարությունը Ալեքսանդրեթի սանջակի «լքյալ գույքերն» իրենց նախկին տերերին վերադարձնելու, ինչպես նաև 1939-1949 թթ. ընթացքում այդ գույքից գանձված վարձավճարները վերադարձնելու որոշում է կայացրել, ինչից ելնելով Հալեպի հույն կաթոլիկ եպիսկոպոսը

¹¹⁷ Տե՛ս Baghdjian K. K., նշվ. աշխ., էջ 196-197:

մեկնել է Ալեքսանդրեթ և թուրքական պետությունից ստացել անցած տաս տարիների վարձերը, և որ քրիստոնեական մյուս համայնքները նույնպես քայլեր են ձեռնարկում այդ ուղղությամբ: Սրբազանը Վեհափառին խնդրում էր կաթողիկոսության միաբաններից մեկին նույնպես ուղարկել սանջակ՝ Կիլիկիայի կաթողիկոսությանը հասցված վնասների վերականգնման հարցերով զբաղվելու նպատակով¹¹⁸:

Այս կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ հույն կաթոլիկ եպիսկոպոսը հատուցում էր ստացել ոչ թե Ալեքսանդրեթի սանջակի հունական կալվածքների դիմաց, այլ թուրքական իշխանությունների կողմից դրանց վարձակալությունից 10 տարիների ընթացքում գանձված գումարները, ինչն, ամենայն հավանականությամբ, հաջողվել էր Հռոմի Պապի և սանջակը Թուրքիային հանձնելու հարցում վերջինիս օժանդակած կաթոլիկ Ֆրանսիայի միջնորդությամբ: Ինքնին հասկանալի է, որ Հայ առաքելական եկեղեցուն և հայկական համայնքին պատկանող գույքի վերադարձի կամ դրանցից գանձվող վարձավճարների հարցում կաթոլիկ եկեղեցին և Ֆրանսիան նույն աջակցությունը, իսկ թուրքական իշխանությունները՝ նույն բարյացկամությունը չէին դրսևորելու:

Նամակին կցված Ալեքսանդրեթի սանջակի հայ ազգային կալվածքների ցուցակի համաձայն, **Ալեքսանդրեթ** քաղաքում հայկական համայնքին էր պատկանում Սբ. Քառասուն մանկանց եկեղեցին, ինչպես նաև Նուպարյան ազգային վարժարանն իր շինություններով և ընդարձակ բակով: Եկեղեցու շուրջը կառուցված էին 8 խանութներ, որոնցից երեքի տարածքը միացվել և գործում էր իբրև սրճարան, իսկ մյուս 5-ը տրված էին վարձակալության: Խանութների երկրորդ հարկի չորս սենյակներում տեղակայված էր ազգային առաջնորդարանը: Համայնքին էր պատկանում Պողոս աղա Շամլյանի կտակած տունը և Չալ Մահալլեսի թաղամասում ևս մեկ տուն: Քաղաքից դուրս, Հալեպի

¹¹⁸ Տե՛ս ՄՏԿԿԱ, հավաքածոյ 24, ց. 1, թղթ. 423:

ճանապարհի վրա էր գտնվում համայնքին պատկանող ազգային գերեզմանատունը՝ թթաստանով և շրջակա հողատարածքով, որի վրա տուն և խանութ էր կառուցված:

Պեյլանում հայկական համայնքին էր պատկանում Սբ. Սարգիս եկեղեցին, հինգ սենյակից բաղկացած ազգային վարժարանի երկհարկանի շենքը: Եկեղեցուն կից էին գտնվում համայնքին պատկանող տունը, սրճարանը և պարտեզը: **Մովուդ-Օլուդում** համայնքն ուներ դպրոցի շենք, որը դպրոցից բացի նաև ծառայում էր որպես եկեղեցի, 1000 մ² տարածքով հողամաս, որի վրա կառուցված էր 2 խանութ: Համայնքին էր պատկանում նաև Հակոբ Սարաֆյանից գնված 5000 մ² հողամասը եկեղեցի կառուցելու նպատակով, որի հիմնարկերն արդեն կատարվել էր: **Ներկիչիքում** համայնքն ուներ ազգապատկան շենք, դպրոց, մատուռ և խանութ: **Աթըգում** համայնքին էր պատկանում Սբ. Խաչ եկեղեցին, դպրոցը, իսկ Պեյլանի ճանապարհի վրա արտեր, որոնց մի մասը պատկանում էր կաթողիկոսաչրանին, իսկ մյուս մասերը՝ համայնքի անդամներին: **Գըրըզ-Խան** բնակավայրում համայնքի տնօրինության տակ էին գտնվում Սբ. Աստվածածին եկեղեցին, ընդարձակ բակով դպրոցը, սրճարան, 2 խանութ, 4 սենյականոց տուն, որը նախկինում դպրոց էր ծառայել: **Անտիոքում** համայնքը պահպանել էր իր տիրապետությունը դեռևս 1909 թ. կիլիկիահայերի կոտորածների ժամանակ այրված հին հայկական եկեղեցու և հարակից հողամասի նկատմամբ, ինչպես նաև տնօրինում էր նոր կառուցված դպրոցն իր հարակից հողամասով: **Ռիհանիեում** համայնքն ուներ եկեղեցի, իսկ **Աբդուլ-Հյույուքում** և **Հայաշենում**՝ մեկական դպրոց¹¹⁹:

Ցավոք, Ալեքսանդրեթի սանջակում հայկական համայնքին պատկանող կավածքների վերաբերյալ Զարեհ Եպիսկոպոսի կազմած ցանկում բացակայում են ինչպես անշարժ գույքի գնահատ-

¹¹⁹ Տե՛ս ՄՏԿԿԱ, հավաքածոյ 24, ց. 1, թղթ. 423:

ման, այնպես էլ դրանց սեփականության վկայականների մասին նշումները:

Հայոց ցեղասպանության իրագործմամբ Հայ Առաքելական եկեղեցուն հասցված վնասների և խախտված իրավունքների վերականգնման տեսակետից հատկանշական է Սսի կաթողիկոսության կալվածքների* նկատմամբ իրավունքների վերականգնման պահանջով Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ի կողմից Թուրքիայի դեմ նախաձեռնված դատական գործընթացը:

2012 թ. Անթիլիասի մայրավանքում Արամ Ա կաթողիկոսի նախաձեռնությամբ հրավիրվեց «Ճանաչումից դեպի հատուցում» խորագրով միջազգային խորհրդաժողով, որի ընթացքում քննարկվում էր հայոց պահանջատիրության իրավական հնարավորությունների հարցը: Խորհրդաժողովից անմիջապես հետո այս հարցի շուրջ խորհրդակցություններ եղան նաև միջազգային իրավունքի մի շարք մասնագետների հետ և կազմվեց մասնագետների աշխատանքային խումբ, որը ձևավորվեց հաշվի առնելով հարցի առանձնահատկությունները: Խմբում ընդգրկվեցին այնպիսի մասնագետներ, որոնք ամբողջությամբ վեր կհանեին հարցի պատմական կողմը, կտիրապետեին թուրքական օրենսդրությանն ու դատավարության ընթացակարգերին, ինչպես նաև ցեղասպանության հանցագործությունը դատապարտող ու մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող միջազգային իրավական նորմերին¹²⁰:

* 1915 թ. սեպտեմբերի 3-ին ստացվեց Կիլիկիո կաթողիկոսության տարագրման մասին Սսի կառավարչի հրահանգը: Հալեպ տեղափոխվելու համար տրված էր ընդամենը 10 օր ժամանակ: Այդ կարճ ժամանակում հնարավոր չէր ժողովել ու տեղափոխել կաթողիկոսարանի ամբողջ շարժական գույքը, ուստի միաբանները օր ու գիշեր փորձում էին առանձնացնել ամենաարժեքավոր ու կարևոր գույքերը: Տե՛ս Եղիայեան Բ., Ժամանակակից պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972, Անթիլիաս, 1975, էջ 166-167:

¹²⁰ Հարցազրույց Ն.Ս.Օ.Տ.Տ. Վեհափառ Հայրապետին հետ Սսի կաթողիկոսարանի վերադարձի պահանջքին մասին, Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պաշտոնական ամսագիր «Հասկ», թիւ 4, Անթիլիաս, 2015, էջ 243-244:

Մասնագիտական խմբի աշխատանքի արդյունքում պատրաստվեցին 15 էջանոց պատմական և 60 էջանոց իրավական թղթածրարները, որոնց հիման վրա էլ մշակվեց թուրքական դատարան ներկայացվելիք 10 էջանոց հայցադիմումը: Հայցադիմումի հիմքում դրվեցին Լոզանի պայմանագրի 37-45-րդ հոդվածները, որոնցով Թուրքիան միջազգային պարտավորություններ էր ստանձնել պաշտպանել իր ոչ մահմեդական փոքրամասնությունների, այդ թվում՝ հայերի իրավունքները, իսկ զոհվածների ժառանգներն ինչպես անհատական, այնպես էլ կոլեկտիվ ձևով կարող էին պահանջել վերականգնել իրենց նախնիների իրավունքները:

Թղթածրարներին կցվեցին համապատասխան փաստաթղթեր, Սսի կաթողիկոսարանի իրավունքներն ու թուրքական պետության կողմից այդ կալվածքների բռնագավթումը հավաստող լուսանկարներ: Կցված փաստաթղթերի շարքում է նաև թուրքական իշխանությունների կողմից բռնագրավված Կիլիկիո կաթողիկոսությանը պատկանող գույքերի ցանկը*:

Սակայն, միայն նկարներն ու վկայությունները չէին կարող բավարար լինել թուրքական դատարանի համար, ուստի անհրաժեշտ էր Սսի կաթողիկոսության սեփականության իրավունքն ուղղակիորեն հաստատող փաստաթուղթ՝ սեփականության վկայական (թափու): Պակասում էին նաև որոշ օժանդակ փաստաթղթեր,

* Մինչև 1912 թ. Օսմանյան կայսրությունում կրոնական կառույցներն իրավունք չունեին իրենց անունով կալվածքներ գրանցել, ուստի դրանք գրանցվում էին կամ վստահելի անձանց, կամ էլ սրբերի անունով: 1912-13 թթ. իշխանությունների որոշման համաձայն կայսրության բոլոր փոքրամասնությունները, այդ թվում՝ հայ համայնքը, պատրաստեցին իրենց ազգապատկան ու եկեղեցապատկան գույքերի ամբողջական ցանկը և փոխանցեցին պետությանը: 1921 թ., ֆրանսիական իշխանությունները Սահակ կաթողիկոսին առաջարկեցին պատրաստել Կիլիկիո կաթողիկոսարանի գույքերի ցանկը՝ դրան կցելով կալուածքների ու շինությունների նյութական արժեքը: Ցանկը կազմվեց և փոխանցվեց ֆրանսիական իշխանություններին, այդ փաստաթղթի պատճենը պահվում է կաթողիկոսարանի արխիվում: Կիլիկիայից ֆրանսիացիների հեռանալուց հետո Սահակ Վեհափառին հայտնվեց, որ ֆրանսիական իշխանություններն իրավունք չունեն միջամտելու Թուրքիայի ներքին գործերին:

որոնք կարող էին օգտակար լինել դատավարության ընթացքում: Դրանից ելնելով, որոշվեց դիմել Սսի (Գոգանի) քաղաքապետարան՝ այդ տեղեկությունները ստանալու նպատակով, սակայն Սսի կադաստրային վարչությունը մերժեց ինչպես տեղեկություններ, ասինպես էլ սեփականության վկայական տրամադրել Կաթողիկոսության փաստաբանին, ինչը պայմանավորված էր նրանով, որ Թուրքիայի Թափուի և կադաստրի վարչությունում պահվող փաստաթղթերի շարքում հայերի, հույների և ասորիների թափուների գրանցումների մասին տեղեկատվության արտահոսքը համարվում է Թուրքիայի ազգային անվտանգությանը սպառնացող վտանգ: 2001 թ. հունիսի 29-ի նախարարական շրջաբերականի համաձայն՝ Թափուի և կադաստրի գլխավոր վարչությունը կարգադրեց 1924 թ. օգոստոսի 6-ին նախորդող ժամանակաշրջանին վերաբերող փաստաթուղթ պահանջելու դեպքում պահանջող անձի ինքնության մասին հայտնել Թափուի և կադաստրի գլխավոր վարչություն:

Սսի քաղաքապետարանի կողմից սեփականության վկայականի և հարակից փաստաթղթերի տրամադրման մերժումից հետո անիմաստ համարվեց թուրքական դատարան դիմելը: Մյուս կողմից՝ Սսի քաղաքապետարանի մերժումը տեղեկատվություն ազատ ստանալու իրավունքի խախտում էր, քանի որ Թուրքիան միջազգային պայմանագրերով պարտավորվել էր ապահովել այդ իրավունքը և այն ամրագրել նաև իր ներպետական օրենսդրության մեջ: Այս հանգամանքներից ելնելով, նպատակահարմար գտնվեց Սսի քաղաքապետարանի ապօրինի և հիմնազուրկ որոշումը վիճարկել Թուրքիայի Սահմանադրական դատարանում և 2015 թ. ապրիլի 28-ին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության անունից համապատասխան հայցադիմում ներկայացվեց: Պետք է նշել, որ մինչ այդ թուրքական դատարաններում հայերի բռնազավթված գույքերի նկատմամբ իրավունքների վերականգնման ուղղությամբ կատարվել էին անհատական փորձեր, սակայն սա առաջին դեպքն էր, երբ հայ ժողովրդի ազգային կառույցն՝ ի դեմս Հայ Առաքելական եկեղեցու, հանդես եկավ նման նախաձեռնությամբ:

Կաթողիկոսության հայցադիմումն ստանալուց հետո Թուրքիայի Սահմանադրական դատարանը պետք է կողմնորոշվեր, թե տվյալ գործը քննելիս առաջնորդվելու է միջազգային պայմանագրերով Թուրքիայի ստանձնած պարտավորություններով ու թուրքական օրենսդրությամբ, թե 2001 թ. հունիսի 29-ի գաղտնի շրջափերականով, որով հայերի, հույների և ասորիների թափուների գրանցումների մասին տեղեկատվության տրամադրումը համարվում է սպառնալիք Թուրքիայի ազգային անվտանգության համար:

Ինչպես սպասվում էր, Թուրքիայի Սահմանադրական դատարանը բավական երկար ժամանակ անց մերժեց Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության հայցը, ինչից հետո այն տեղափոխվեց Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Հակառակ այն թյուրկարծիքի, թե իբր ՄԻԵԴ-ը մերժել է Կաթողիկոսության հայցը, պետք է նշել, որ դատարանը հրաժարվել է քննել հայցն այն հիմնավորմամբ, որ հայցվորի կողմից չեն ապահովվել ՄԻԵԴ-ին դիմելու անհրաժեշտ պայմանները՝ չեն սպառվել թուրքական արդարադատության բոլոր աստյաններում գործի քննության հնարավորությունները, ինչից հետո միայն գործը կարող է քննվել ՄԻԵԴ-ում: Եթե Թուրքիայի Սահմանադրական դատարանի կողմից Կաթողիկոսության հայցի քննությունը շուրջ երկու տարի տևեց, ապա ենթադրելի է, որ թուրքական դատական համակարգի բոլոր աստյաններում այդ գործի քննությունը գուցե տասնամյակներ կձգվի:

Այդուհանդերձ, անձամբ Արամ Ա-ն իր նախաձեռնությունը լոկ մարտավարական քայլ է համարում, որը կարող է դյուրին դարձնել մեր ռազմավարական նպատակին՝ ամբողջական հատուցմանը հասնելու գործընթացը: Վեհափառը հատուկ շեշտում է, որ նյութական պահանջների հարցում հարկավոր է չափազանց զգույշ լինել, որպեսզի չստացվի, որ այդ պահանջները ստվերում են Հայոց ցեղասպանության գլխավոր հետևանքի՝ հայրենագրկման հաղթահարումը և խանգարում հայրենիքի նկատմամբ հայության իրավունքի վերականգնմանը:

2. ԻԶՄԻԹԻ (ՆԻԿՈՄԻԴԻԱ) ԳԱՎԱՌԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՆՐԱ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ XIX
ԴԱՐԱՎԵՐՁԻՆ ԵՎ XX ԴԱՐԱՍԿԶԲԻՆ

Իզմիթի կամ Նիկոմիդիայի գավառն իր մեջ ընդգրկում էր հին Բյութանիայի¹²¹ մի մասը և գտնվում էր Կ.Պոլսի կուսակալության արևելյան մասում, Բուրսայի և Կաստամոնու (Քաստամոնու) նահանգների, Սև և Մարմարա ծովերի մեջտեղում: Իզմիթի գավառն իր առանձին կառավարիչն ունենալով հանդերձ՝ ենթարկվում էր Կ.Պոլսի կուսակալությանը և կախում ուներ Ներքին գործոց նախարարությունից: Գավառի հողը բարեբեր էր և լավ մշակված: Գլխավոր բերքերն էին՝ արմապտուղները, եգիպտացորենը, վուշը, կանեփը, ընդեղենը, շագանակը, մրգերը, ընկույզը, նուշը և այլն: Կեյվեի, Ադաբազարի և Քանտերեի (Գանտրայի) գավառակները հարուստ էին անտառներով և քարածխով, որոնք Կ.Պոլսին և

¹²¹ Բյութանիան Փոքր Ասիայի հյուսիսարևմտյան մեկ հատվածն է, որը ձգվում էր Սկյուտարից մինչև Էսկիշեհիր և իր մեջ էր ներառում Նիկոմիդիայի գավառը, Պրուսայի նահանգը և Կաստամոնու նահանգի արևմտյան մեծագույն մասը: Հայերը Բյութանիայում հաստատվել են XVI դարից սկսած՝ թուրքական իշխանությունների այս կողմերում հաստատումից հետո: Բյութանիայի ամենահայաբնակ մասը կազմում էր Նիկոմիդիայի թեմը, որը բաղկացած էր Նիկոմիդիա գավառից և Բուրսայի նահանգի Յալովայի շրջանից: Նիկոմիդիայի թեմի մեջ էր գտնվում Արմաշի դպրեվանքը, որի փոխվանահայրը նաև առաջնորդն էր Արմաշ և Խասկալ գյուղերի: Բուրսայի նահանգի մեջ կային Բուրսայի և Բիլեջիկի առաջնորդությունները: Բյութանիան ուներ զուտ հայաբնակ գյուղեր, իսկ մեծ քաղաքներում հայերն ունեին առանձին թաղեր: Բացի Կ.Պոլսո շրջանից, Բյութանիայի հայաշատ քաղաքներն էին Ադաբազարը, Իամիթը (Նիկոմիդիան), Բուրսան, Բիլեջիկը, Էսկիշեհիրը: Զուտ հայաբնակ գյուղերն էին Պատիզակը, Օվաճը, Ասլանբեկը, Մանիշակը, Տոնկելը, Նոր-Մեծ-Գյուղը, Սոլոզը, Չենկիլերը, Քարցին, Շաքշաքը, Յայլաք Տերեն, Գուրպելներ, Գընճըլարը, Էջմեն, Արմաշը, Խասկալը, Խաչ-Գյուղը, Ֆերիզլին, Թամլըքը, Էլմալըն, Մեթ-Գյուղը, Արա-Գյուղը, Գեղամ-Գյուղը, Հովիվ-Գյուղը, Մերտեկյոզը: Կեյվեի Միջագյուղը բնակեցված էր նաև հայ կաթոլիկներով: Մուրատչա, Սապանջա, Ազհիսար, Կաստամոնու, Տյուզճե բնակավայրերում կային հայ գաղութներ, որոնք ունեին իրենց եկեղեցիները: Տե՛ս Պոտուրեան Մ., Հայ հանարագիտակ, Պուրթեշ, 1938, էջ 402-403):

նորագույն սարքավորումներով¹²³: Հայտնի է, որ արքունի ճարտարապետ Կարապետ ամիրա Պալյանն իր հրաշակերտ կառույցներով զարդարել է սուլթանների մայրաքաղաք Կ.Պոլիսը: Նա հոյակերտ շինություններ է կառուցել նաև Իզմիրի գավառում: Իզմիր քաղաքի կայսերական դղյակը, տեղի չուխայի և Հերեքեի կերպասի զարծարանները նույնպես Կարապետ Պալյանի ճարտարապետական գլուխգործոցներից էին¹²⁴:

Իզմիրի գավառը բաժանված էր Իզմիր, Գարամուսալ, Ադաբազար, Կեյվե, Գանտրա գավառակների: Մայրաքաղաքի մոտ գտնվելը, հաղորդակցության դյուրությունները, ինչպես նաև բնակչության ձեռներեցությունը նպաստել էին այս գավառի առևտրի ու գյուղատնտեսության զարգացմանը¹²⁵:

Իզմիրի գավառում հայերի հայտնվելը կապված էր թուրք-պարսկական պատերազմների և XVI-XVII դարերում Զալալիների շարժման հետ, ինչի հետևանքով հայերը ստիպված են եղել գաղթել իրենց բնակավայրերից և հաստատվել ապահով վայրերում¹²⁶:

XIX դարի առաջին կեսին Իզմիրի գավառի ընդհանուր բնակչությունը 310000 էր, որից 65000 հայեր էին: Բեռլինի կոնգրեսի նախօրեին գավառի հայերի թիվը անցել էր 70000 հազարից¹²⁷: 1910 թ. թուրքական իշխանությունների անցկացրած մարդահամարի տվյալների համաձայն՝ Իզմիրի գավառն ուներ 389387 բնակչություն, որից 199.420-ը մահմեդականներ էին, 54037-ը՝ հայեր, 36039-ը՝ հույներ, 351-ը՝ հրեաներ¹²⁸: Գավառն ուներ 13000 կմ² տարածք և մինչև Առաջին համաշխարհային պատերազմն՝ այստեղ ապրում

¹²³ Միրունի Յ. Ճ., Պոլիս եւ իր դերը, Դ հատոր Անթիլիաս, 1988, էջ 207:

¹²⁴ Նույն տեղում, էջ 210:

¹²⁵ Արտադրություն և արտածություն Պոլսոյ շրջակայ քանի մը վաճառաշահ քաղաքներու, «Բիրակն», Կ.Պոլիս, 14 ապրիլի 1902, թիւ 16, էջ 698-699:

¹²⁶ Ֆէներճեան Գ., Պատմութիւն Արսլանալէկի, Փարիզ, 1971, էջ 21-22:

¹²⁷ Հայ ժողովրդի պատմություն, հատոր 5, Երևան, 1974, էջ 534:

¹²⁸ Մակարեան Ա. Յ., Համայնապատկեր Բիւթանիոյ հայութեան մեծ ողբերգութեան, Գերսամ Ահարոնեան, Յուշամատեան Մեծ եղեռնի, 1915-1965, Պէյրութ, 1965 էջ 299:

էր 300000 բնակչություն, որից 120000-ը՝ թուրք, 100000-ը՝ մահմեդական մուհաջիր*՝ չերքեզ, վրացի, լազ, դրիմի թաթար, չեչեն, դադստանցի և այլն: Հայերի թիվը 56000 էր: Գավառում ապրում էին 7000-8000 հայ հոռոմներ (հունադավան հայեր)¹²⁹: 1914 թ. թուրքական պաշտոնական վիճակագրության համաձայն՝ Իզմիրի գավառում հայերի թիվը 55852 էր: Նույն աղբյուրը տարբեր ազգությունների պաշտոնական վիճակագրությունների աղյուսակում ներկայացված հայ երկսեռ բնակչության թիվը 57786 էր¹³⁰: 1913 թ. փետրվարին Կ.Պոլսո Հայոց պատրիարքությունը նախաձեռնեց Օսմանյան կայսրությունում ապրող հայերի մարդահամարը¹³¹, որի տվյալների համաձայն՝ Իզմիրի գավառն ուներ 10.108 ընտանիքից կազմված 50775 (25740 արական, 25035 իգական սեռի ներկայացուցիչներից կազմված) հայ բնակչություն¹³²: Հայկական մեկ այլ աղբյուրի տեղեկատվության համաձայն՝ Իզմիրի գավառի 310000 ընդհանուր բնակչությունից 64000-ը կազմում էին հայերը, որոնք հիմնականում ապրում էին գյուղական շրջաններում և զբաղվում էին երկրագործությամբ, շերամաբուծությամբ, այգեգործությամբ, հյուսվածքագործությամբ և տարբեր այլ արհեստներով¹³³: Յ. Լեփսիուսի տվյալներով էլ Իզմիրի գավառում ապրել են 71000 հայեր¹³⁴:

* Մուհաջիր -Մահմեդական վտարանդի, գաղթական: Տե՛ս Գուստ Վ., Հայերի ցեղասպանությունը 1915-1916 Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի փաստաթղթերից, Երևան, 2005, էջ 481):

¹²⁹ Ֆեներճեան Գ., նշվ. աշխ., 18-19:

¹³⁰ Arşiv Belgeleriyle Ermeni Faaliyetleri 1914-1918, Cilt I (1914-1915), Genelkurmay Başkanlığı, Ankara, 2005, s. 605, 609.

¹³¹ Դար մը պատմութիւն: Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան, Ա. հատոր, 1906-1940, Գահիրե-Փարիզ-Նյու-Եորք, 2006 էջ 35:

¹³² Յոբելինական մատեան Ստեփաննոս Արքեպիսկոպոս Յովակիմեանի, կազմեց Գ. Մ. Սոֆիիա, 1931, էջ 5:

¹³³ Օղիկեան Ս. Մ., Արևմտահայ աշխարհ, Նյու Եորք, 1947, էջ 468-469:

¹³⁴ Լեփսիուս Յ., Գաղտնի տեղեկագիր: Հայ ժողովրդի ջարդերը, Երևան, 2003, էջ 85:

Գավառի հայության 70 տոկոսը զբաղվում էր երկրագործությամբ, 20 տոկոսը՝ արհեստներով և 10 տոկոսը՝ առևտրով¹³⁵։ Նրանք արտադրում էին գյուղատնտեսական մթերքներ, մասամբ՝ վառելանյութ, շինավայր, գործվածքներ։ Շերամաբուծությունը, որպես բնակչության զբաղմունք, 100 տարվա հնություն ուներ։ Այն ժամանակ շերամի կգ արժեք 300-400 դուրուշ*, ինչով լիովին վարձատրվում էր գյուղացու աշխատանքը։ Այս հանգամանքներից ելնելով, բազմաթիվ գյուղեր սկսեցին զբաղվել շերամաբուծությամբ՝ իրենց բերրի հողերը վերածելով թթաստանների։ Շերամաբուծության զարգացմանը զուգահեռ բացվեցին մանարաններ՝ շերամը մետաքսի վերածելու համար։ 1910-1912 թթ. գործում էին 40 մանարաններ, իսկ այնուհետև նրանց թիվը հասավ 60-ի։ Իզմիրի գավառի մանարաններն արտադրում էին 1500 հակ (1 հակը=400 կգ) տարատեսակ մետաքս, որի 1 հակը վաճառվում էր 150 օսմանյան ոսկով։ Տեղական շերամից ստացվող մետաքսի տարեկան արժեքը ընդհանուր կազմում էր 225000 ոսկեդրամ¹³⁶։ 1910-1912 թթ. Գուրտպեկեն, Գըճըլար, Միջագյուղ, Ադաբազար, Նոր-Գյուղ, Պարտիզակ և Ասլանբեկ բնակավայրերում գործում էին 35 մանարաններ, որոնց 21-ը պատկանում էին հայերին, իսկ մնացած 14-ը՝ հույներին և թուրքերին¹³⁷։ Իզմիրի գավառի տնտեսության մեջ հայերի գերակա դիրքի մասին նման փաստերը բազմաթիվ են։

¹³⁵ Գասապեան Մ. (Ֆարիատ), Հայերը Նիկոմիդիոյ գաւառին մէջ, Պարտիզակ, 1913, էջ 178։

* Դուրուշ - Արծաթյա դրամ, որը հատվելով սլավոնական երկրներում (գրոշ) գործածության մեջ էր Օսմանյան կայսրությունում։ Թուրքական գրոշը սկսել է դրամահատվել XV դարի վերջերից։ Տե՛ս Փափագեան Ա., Թուրքական վավերագրական նյութեր Օսմանյան կայսրության ոչ-մահմեդական ժողովուրդների մասին (1839-1915), Երևան 2002, էջ 240)։

¹³⁶ Դադայան Խ., Հայոց առևտրատնտեսական գործունեությունը ներկայիս Թուրքիայի տարածքում XVդ.-1915թ., Երևան, 2012, էջ 63։

¹³⁷ Նույն տեղում, էջ 53-54։

Իզմիրթի գավառի հայությունն ընդհանուր առմամբ գերծ մնաց համիդյան զանգվածային կոտորածներից¹³⁸, թեև գավառի տարբեր բնակավայրերում հայերն ունեցան 103 սպանվածներ¹³⁹, որոնցից միայն Ագիիսարում՝ 33 հոգի¹⁴⁰: Այդ շրջանում գավառի հայությունն ապրեց ծանր և տագնապալի օրեր: Արսլանբեկ գյուղի 1894 թ. հրդեհը ծրագրել և իրականացրել էին թուրքական իշխանությունները: 1895 թ. նրանք մտադիր էին այրել նաև Պարտիզակը, սակայն հայերը տեղեկացան այդ ծրագրի մասին և կանխեցին այդ աղետը¹⁴¹: Պարտիզակը սարսափի օրեր ապրեց համիդյան կոտորածների շրջանում: Ավանը շրջապատեցին մահմեդական վրացիները և մոտակա թուրքական գյուղերի բնակիչները՝ սպասելով Իզմիրթի հայերի կոտորածը և կողոպուտը սկսելու հրամանին: Կնոջ խնդրանքներին տեղի տալով՝ Իզմիրթի կառավարիչը արգելեց կոտորածը¹⁴²: 1895 թ. սուլթանական կառավարության կասկածամտությունն ու զգուշավորությունը ծայրահեղության էր հասել: Գավառի հայկական բոլոր բնակավայրերում թուրք զինվորական զինվորները հսկում և ահաբեկում էին հայ բնակչությանը, ընդ որում՝ նույն զինվորների սնունդը պարտավոր էին ապահովել հայկական բնակավայրերի բնակիչները¹⁴³:

Բյուրանիան և մանավանդ Իզմիրթի գավառը համարվում էր Փոքր Հայաստան և, այս պարագան հաշվի առելով, թուրքական իշխանությունները մահմեդական գաղթականներ էին տեղափոխում հայկական բնակավայրերի մոտ¹⁴⁴: 1851 թ. այստեղ հաստատվեցին թաթարները, 1864 թ.՝ չերքեզները: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, դեպի Բյուրանիա մահմեդական-

¹³⁸ Եաթաղան, Մեր գաւառը, «Բյուրանիա», Իզմիրտ, 10 մարտ 1910, թիւ 8, էջ 85:

¹³⁹ Գասապեան Մ. (Ֆարիատ), նշվ. աշխ., էջ 154:

¹⁴⁰ Ագիիսարի կոտորածը, «Դրօշակ», Վիեննա, 1 նոյեմբեր, 1895, թիւ 17-18, էջ 8-9:

¹⁴¹ Նամակ Պարտիզակից, «Դրօշակ», Վիեննա մայիս, 1895, թիւ, 5, էջ 5:

¹⁴² Մակարեան Ա. Յ., , նշվ. աշխ., էջ 305:

¹⁴³ Նամակ Նիկոմիդիայից, «Դրօշակ», Վիեննա, մայիս, 1895, թիւ 5, էջ 5-6:

¹⁴⁴ Մակարեան Ա. Յ., , նշվ. աշխ., էջ 305:

ների նոր ակիք եկավ Հյուսիսային Կովկասից և նրանց բնակեցրին այս տարածաշրջանում: Մահմեդական գաղթականները սկսեցին բռնագրավել հայերին պատկանող հողատարածքները և դա հողային անվերջանալի վեճերի և բախումների պատճառ դարձավ ¹⁴⁵: Թուրքական կառավարող շրջանակները բոլոր անօրեն միջոցներով ֆինանսապես սննկացնում էին հայերին, զրկում անշարժ գույքից, մանավանդ հողային ունեցվածքից և նրանց հաշվին հարստացնում թուրք տարրին ¹⁴⁶:

Նիկոմիդիան (Իզմիր) արքեպիսկոպական վիճակ էր, որն ընդգրկում էր Իզմիրի գավառը և Բազարքոյ գավառակը: Այստեղ ապրում էին 65000 առաքելական, 500 կաթոլիկ և 600 բողոքական հայեր, գործում էին 40 եկեղեցիներ և 34 թաղական խորհուրդներ: Արմաշը վանական թեմ էր, որն ուներ 5000 հայ բնակչություն, 3 եկեղեցի և 3 թաղական խորհուրդ ¹⁴⁷: 1873-ից մինչև 1915 թ. Նիկոմիդիայի հոգևոր առաջնորդը եղել է Ստեփաննոս արքեպիսկոպոս Հովակիմյանը: Նրա պաշտոնավարության շրջանում կառուցվեցին Նոր-Գյուղը, Հայոց, Հովիվ, Զաքար, Ժամավայր, Մանուշակ գյուղերը ¹⁴⁸: Ստեփաննոս արքեպիսկոպոս Հովակիմյանն արժանացել էր Ավստրո-Հունգարիայի կառավարության շքանշանների և կարող էր օգտվել այդ երկրի հովանավորությունից և ազատվել 1915 թ. աղետից, սակայն չցանկացավ բաժանվել իր ժողովրդից ¹⁴⁹: Նա իր հոտի հետ աքսորվեց Կոնիա, իսկ այնտեղից՝ Տեր-Զորի անապատները: Ծերունի առաջնորդը մուրացիկի տոպրակն ուսին մուրում էր քաղցած աքսորականների համար: Նա իր ժողովրդի հետ ապրեց բոլոր արհավիրքները, այնուհետև ձերբակալվեց և ուղարկվեց Երուսաղեմ և այնտեղ անցկացրեց դժբախտ չորս տարիներ և

¹⁴⁵ Ֆեներճեան Գ., նշվ. աշխ., 1971, էջ 18-19:

¹⁴⁶ Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, 1914-1916թթ. Երևան, 1967, էջ 100:

¹⁴⁷ Օրմանեան Մ., Հայոց եկեղեցին, երկրորդ տպ., Կ.Պոլիս, 1912, էջ 14:

¹⁴⁸ Յոբելիական մատենան նշվ. աշխ., 1931, էջ 6:

¹⁴⁹ Օղիկեան Ս. Ս., նշվ. աշխ., էջ 469, 467:

միայն Մուդրոսի զինադադարից հետո միացավ աղետը վերապրած իր հոտին¹⁵⁰:

Ինչպես Արևմտյան Հայաստանում ու կայսրության հայաբնակ բոլոր վայրերում, այնպես էլ Իզմիրի գավառում գործում էին ազգային իշխանությունները. Գավառական երեսփոխանական, Քաղաքական և Կրոնական ժողովները, Գավառական ուսումնական և Թաղական խորհուրդները: Այս ամենից բացի, գործում էին նաև օժանդակ մամիներ և հանձնաժողովներ: Այս վարչական մարմինները յուրաքանչյուրն ուներ իր իրավասություններն ու գործառույթները¹⁵¹:

Կ.Պոլսո Հայոց պատրիարքությունում պահվող գավառական վարժարանների մասին 1834 թ. պատրաստված վիճակագրության համաձայն՝ Իզմիրը և Արմաշն ունեին վարժարանները, իսկ Ադաբազարում գործում էին չորս վարժարաններ¹⁵²: XIX դարի կեսերից գավառի հայաբնակ բոլոր վայրերում գործում էին վարժարաններ, որոնք գտնվում էին բարձր մակարդակի վրա: Հայկական վարժարանների ուսուցիչները ամեն տարի քննություն էին հանձնում Ուսուցչական հատուկ հանձնաժողովին¹⁵³:

1810 թ. հունիսի 10-ին Բոստոնում ստեղծվեց «Օտարերկրյա առաքելության ամերիկյան միսիոներական ընկերությունը» (American Board of Commissioners for Foreign Missions) կրճատ՝ Պորտ, որը 9 տարի անց որոշում կայացրեց Օսմանյան կայսրությունը ընդգրկել իր գործունեության ոլորտի մեջ: Իր ազդեցությունը տարածելու նպատակով ԱՄՆ-ն ընտրել էր երկու ուղղություն՝ տնտեսական և գաղափարական: Տնտեսական ներթափանցումը

¹⁵⁰ Յոթելիական մատեան, նշվ. աշխ., էջ 19:

¹⁵¹ Ըմբոստ, Որո՞նք են մեր վերին մարմինները Ա, «Բիւթանիա», Իզմիր, 1 փետրուար 1911, թիւ 4, էջ 363-364:

¹⁵² Ալայոյաճեան Ա., Պատմութիւն Հայ Կեսարիոյ: Տեղագրագան, պատմական և ազգագրական ուսումնասիրութիւն, Ա հատոր, Գահիրէ, 1937, էջ 1096:

¹⁵³ Պաշտօնական յայտարարութիւն Նիկոմիդիոյ Գաւառական Ուսում. Խորհրդին, «Բիւթանիա», Իզմիր, 20 փետրուար 1910, Ա տարի, թիւ 6, էջ 71:

իրականացվում էր առևտրական բուրժուազիայի, իսկ գաղափարականը՝ եկեղեցու միջոցով: 1830-ից սկսած այս ընկերությունը աստիճանաբար Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերում հիմնելով եկեղեցիներ և կրթական հաստատություններ՝ միախոնե-րական լայն ցանց ստեղծեց¹⁵⁴: 1847 թ. նոյեմբերի 15-ին սուլթանա-կան հրովարտակով Օսմանյան կայսրության բողոքականները ճանաչվեցին որպես առանձին կրոնական համայնք¹⁵⁵: Ամերիկացի միախոնեները 1835-1915 թթ. Օսմանյան կայսրությունում հիմնե-ցին 10 քոլեջ, 11 ավագ դպրոց և 8 աստվածաբանական ճեմարան¹⁵⁶: Բողոքական քարոզիչներն Իզմիրի գավառում հայտնվեցին XIX դարի կեսերից, հիմնեցին եկեղեցիներ և վարժարաններ¹⁵⁷:

Հայ քաղաքական կուսակցությունները՝ ՀՅԴ և ՄԶՀԿ Իզմիրի գավառում հաստատվեցին 1908-ից հետո և հսկայածավալ ազգօգուտ գործունեություն ծավալեցին: Նրանք իրենց հիմնածակումներով, գիշերային և ցերեկային դասընթացներով և դասախոսություններով՝ մեծապես նպաստեցին ժողովրդի զարգացմանը և առաջընթացին¹⁵⁸:

XIX դարի կեսերից Իզմիրի գավառում սկսեցին հիմնվել բազմաթիվ ընկերություններ, որոնց նպատակն էր հավաքական ուժերով լուծել ազգային տարբեր խնդիրներ: Սկզբնական շրջա-նում հիմնված կրթասիրաց և ուսումնասիրաց ընկերությունները նպաստեցին կրթված հանրության ստեղծմանը, որի ներկայացուցիչներից շատերը ծանոթանալով տնտեսության եվրոպական նորագույն մեթոդներին՝ նպաստեցին գավառի հայության տնտե-

¹⁵⁴ Հակոբյան Գ., Հայերի գաղթը ԱՄՆ, «Լրաբեր», Եր., 1986, թիվ 12, էջ 36-37:

¹⁵⁵ Չորմիսեան Լ., Համապատկեր արևմտահայոց մէկ դարու պատմութեան, Ա. հատոր 1850-1878, Պէյրոս, 1972, էջ 409:

¹⁵⁶ Յովհաննէսեան Ն., Ամերիկ. Միսիոներներուն դերը Տաճկահայերու հասարակական զարգացման գործին մէջ, «Հայաստանի կոչնակ», Նյու-Եորք, 1948, 18 սեպտեմբեր, թիւ 38, էջ 901:

¹⁵⁷ Վեր. Եղիա Ս. Քասունի, Լուսաշաւիղ: Պատմութիւն Հայ աւետարանական շարժման 1846-1946, Պէյրոս, 1947, էջ, 69:

¹⁵⁸ Գասապեան Մ. (Ֆարիատ), նշվ. աշխ., էջ 271:

սական զարգացմանը: Այս գավառում հայերի տնտեսությունը զարգացել է ոչ միայն հայ անհատ ձեռներեցների և գործարարների, այլև իզմիթահայության հավաքական ջանքերի շնորհիվ: 1908-ից հետո ի թիվս կրթական, բարեսիրական, մշակութային ընկերությունների՝ գավառի հայաբնակ վայրերում սկսեցին կազմավորվել հայկական տնտեսական և ֆինանսական ընկերություններ, համագործակցական (կոպերատիվ) միություններ, խնայողական գանձանակներ և նման կարգի բազմաթիվ այլ կազմակերպություններ, որոնց նպատակն էր օգնել բանվորներին, գյուղացիներին, առևտրականներին՝ իրականացնելու համար շինարարական, առևտրական, գյուղատնտեսական և արդյունաբերական ձեռնարկներ, պայքարել վաշխատուների դեմ՝ ցածր տոկոսով փոխառություն, իրենց անդամներին էժան ապրանքներ ու սերմացու տրամադրել և այն: Բաժնետիրական հիմունքներով կազմավորված ընկերությունները նպատակ ունեին մուտքի տուրքերով և անդամավճարներով որոշակի ժամանակաշրջանում ստեղծել անհրաժեշտ դրամագլուխ՝ իրենց ծրագրերը գործադրելու համար¹⁵⁹: Տնտեսական այս ընկերություններն ապահովեցին իզմիթահայության տնտեսության թոփառված զարգացումը: Իզմիթի գավառի հայերը ոչ միայն իրենց ձեռներեցության, աշխատասիրության և ստեղծագործական մտքի, այլև բարեգործության ոգու և մեկը մյուսին օգնելու ձգտման շնորհիվ կարողացան թե՛ Օսմանյան կայսրության տնտեսության և թե՛ հայ մշակույթի և կրթության կարևոր այնպիսի կենտրոններ ստեղծել, ինչպիսին էր Արմաշը, Պարտիզակը, Ադաբազարը, Իզմիթը:

Գավառի շատ բնակավայրերում գործում էին գրադարաններ, ընթերցասրահներ, թատերախմբեր, երգչախմբեր, նվագախմբեր, մարզական ակումբներ և խմբեր, հասարակական այգիներ, որտեղ աշխատանքներ էին տարվում բացելու ջրավազաններ և կինոթատրոններ: Առաջին համաշխարհային պատերազմից առաջ գավառի

¹⁵⁹ Ֆեներճեան Գ., նշվ. աշխ., էջ 114:

հայությունը ապրում էր առաջադիմության և վերելքի աննախա-
դեպ շրջան, երբ վրա հասավ մեծ աղետը:

Հայերի տեղահանությունից ամենից շատ օգտվողները պետք է
լինեին մահմեդական գաղթականները, քանի որ տեր պիտի դառ-
նային նրանց հողերին, տներին, կարասիներին: Այդ պատճառով
էլ, երբ գավառի հայերի տեղահանությունը կազմակերպելու հանձ-
նարարությամբ այստեղ ուղարկվեց Կ.Պոլսի բանտերի ընդհանուր
տնօրեն Իբրահիմը, նրան տեղի լազ, չեչեն, չերքեզ, թուրքմեն, և
մահմեդական վրացի գաղթականներից հաջողվեց ավագակա-
խմբեր կազմել, զինել նրանց պետական զենքերով, այդ ուժերով
շրջապատել հայկական գյուղերը և իրականացնել տեղահանու-
թյունը¹⁶⁰:

1915 թ. հուլիսից սկսվեց Իզմիրի գավառի հայերի տեղահա-
նությունը, որը տևեց մինչև սեպտեմբեր¹⁶¹: Թուրքական պաշտոնա-
կան տվյալների համաձայն՝ Իզմիրի գավառից տեղահանվել է
54.370 հայ¹⁶²: Ըստ Յոհաննես Լեփսիուսի՝ այստեղից տեղահանվել
են 71.100 հայ առաքելական, բողոքական և կաթոլիկ հայեր¹⁶³:

2.1.Իզմիր քաղաքի հայ բնակչությունը և նրա սոցիալ-տնտեսական վիճակը

Իզմիրի գավառի և գավառակի կենտրոնը համանուն քաղաքն
էր, որը գտնվում էր Իզմիրի ծոցի խորքում և երկաթուղով կապվում

¹⁶⁰ Չորմիսեան Լ., Գ հատոր նշվ. աշխ., էջ 485:

¹⁶¹ Լևոն Վարդան, Ժամանակագրություն Հայկական տասնհինգի, 1915-1923, Պէյրուս, 1975, էջ 48-50, 52: Տե՛ս նաև Հ. Յակովբոս վ. Տաշեան, Հայ ազգի տարագրությունը գերմանական վաւերագրերու համեմատ, Վիեննա, 1921, էջ 59: Տե՛ս նաև Տրապիզոնի թեմին վիճակաւոր Յովհաննէս Արք. Նազլեանի յուշերը, Պէյրուս, 1960, էջ 400:

¹⁶² Անումեան Մ., Երիտթուրքերի 1919-1921 թթ. դատաւարությունների վավերագրերը ըստ օսմանյան մամուլի, Երևան, 2011, էջ 8:

¹⁶³ Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, Եր., 1991, էջ 474:

էր Կ.Պոլսի Հայդար Փաշա կայարանին¹⁶⁴: Հայերն այստեղ էին գաղթել են XVI դարից սկսած: 1574 թ. Փերթն անունը կրող փաշան ձեռնարկեց Իզմիրի Յենի ջամիի (Նոր մզկիթի) կառուցումը և այստեղ բերեց հայ շինարար վարպետների ու ճարտարապետների և նրանց կարգադրեց քաղաք տեղափոխել նաև իրենց ընտանիքներին: Այսպես սկզբնավորվեց Իզմիրի հայ համայնքը¹⁶⁵: Հայ բնակչությունը հետզհետե սկսեց աճել՝ Արևմտյան Հայաստանի տարբեր բնակավայրերից, Կիլիկիայից և Պարսկաստանից եկած գաղթականների հաշվին¹⁶⁶: 1840-ական թթ. Իզմիրում ապրում էր 12.000 բնակիչ, այդ թվում՝ 6000 թուրք, 4500 հայ, 1250 հույն, 200 հրեա¹⁶⁷: Հայերի տեղահանությունից առաջ Իզմիրում ապրում էին 8000 հայեր¹⁶⁸: Ըստ թուրքական աղբյուրի՝ հայերը ծանրակշիռ դեր են խաղացել Իզմիրի վաճառականության ասպարեզում և XVIII դարում արդեն ակնառու չափերի էր հասել նրանց ազդեցությունը քաղաքի առևտրի կյանքում: Բազմաթիվ նոր արտադրություններ հիմնելով՝ հայերը մեծ ներդրում ունեցան քաղաքի զարգացման գործում¹⁶⁹: Առևտուրը իզմիրցու հիմնական զբաղմունքն էր: Երկրով մեկ հայտնի առևտրական գերդաստաններ էին Պուլու-թյանները, Մոսկոֆյանները, Պանիրճյանները, Նազարեթյանները: Նրանք գավառի արտադրանքը տեղափոխում ու վճառում էին Կ.Պոլսում, Կիլիկիայում, Մարմարա ծովով կապվում ծովային մայրուղիներին, Եվրոպայից ներմուծում էին արդյունաբերական ապրանքներ և վաճառական-գործակատարների միջոցով տարածում Օսմանյան կայսրության ասիական հատվածում և Արևմտյան

¹⁶⁴ Кеворкян Р., Геноцид армян. Полная история, Москва, 2015, ст 624 .

¹⁶⁵ Polatel O., Osmanlı Dönemi İzmit'in Sosyo-Ekonomik ve Kültürel Hayatında Ermeniler, <http://www.kocaelitarhisempozyumu.com/bildiriler/59.pdf>.

¹⁶⁶ Իզմիրի խոգակը, «Բիւրակն», Կ.Պոլիս, 28 յունիս 1908, թիւ 27, էջ 863:

¹⁶⁷ Հայ ժողովրդի պատմություն, նշվ. աշխ., էջ 534-535:

¹⁶⁸ Օղիկեան Ս. Ս., նշվ. աշխ., էջ 468:

¹⁶⁹ Դավութօղլու Հ., Որտե՞ր ց են եկել Իզմիրի հայերը, <https://akunq.net/am/?p=55546>.

Հայաստանում: Քաղաքի կենտրոնական քարակերտ շուկաների տերն ու տիրական հայեր էին¹⁷⁰:

Իզմիթում և շրջակայքում մեծ քանակությամբ հյուսվածքեղեն էր ներմուծվում Անկարայից, Բիլեճիկից, Էսկիշեհիրից, որն իրականացնում էին տեղի հանձնակատար վաճառականները: Թե՛ հյուսվածքեղենի և թե՛ մանուֆակտուրայի ներմուծմամբ զբաղվող վաճառականները կապված էին Կ.Պոլսի առևտրական հրապարակի հետ: Իզմիթի հայտնի վաճառականներն էին Հաջի Գևորգ Ղազարոսյանը, որը ներկայացնում էր Կ.Պոլսի Ա. Մանուկյան և Հաճոբուլո վաճառատները, Հաջի Յասեֆ Գարիօ՝ Գնաձյան վաճառատունը և Միհրան Պագրձյանը՝ Իբրանոսյան և Թիմուրյան վաճառատները: Այս երեք վաճառականներն էին, որ հիմնականում զբաղված էին հյուսվածքեղենի մեծածախ և մանրածախ առևտրով¹⁷¹:

Իզմիթի հայերը գտնվում էին տնտեսական բարգավաճ վիճակում: Նրանց մեջ շատ էին մեծահարուստ ընտանիքներ, որոնք վաճառատների և արտադրությունների տերեր էին: Քաղաքի հայերը զբաղվում էին նաև արհեստագործությամբ, շերամաբուծությամբ, պարտիզպանությամբ, այգեգործությամբ, գինեգործությամբ և այլն: Հայերն ունեին մետաքսի մանաբաններ և գործարաններ¹⁷²: Մետաքսի մանաբանների տերերն էին Գր. Սեմերձյանը, Կ. Տեր-Կարապետյանը, Սահակ Փափազյանը, Խաչիկ Ավետյանը, Արտաշես Մկրյանը, Հելվաձյան եղբայրները և այլք¹⁷³: Իզմիթցիների համար շահութաբեր գործ էր ծխախոտագործությունը, որով զբաղվողները 6-8 ամսվա ընթացքում 250 օսմանյան ոսկեդրամի շահույթ էին ապահովում: Քաղաքի ծխախոտի վաճառականությամբ զբաղվող 9 անձերից 6-ը հայեր էին, իսկ մնացած 3-ը՝

¹⁷⁰ Հայ ժողովրդի պատմություն, նշվ. աշխ., էջ 534-535:

¹⁷¹ Առևտրի կեանք գաւառներու մէջ: Գուրտպէլէնի մանածը, «Բիւրակն», Կ.Պոլիս, 17 մարտ 1907, թիւ 23-24, էջ 560-562:

¹⁷² Օոցիկեան Ս. Ս., նշվ. աշխ., էջ 468:

¹⁷³ Իզմիթի խոզակը, «Բիւրակն», Կ.Պոլիս, 28 յունիս 1908, թիւ 27, էջ 863:

հույներ: Արտաշես Յորկանձյանը, Գ. Յորկանձյանը, Զ. Գավեզյանը, Հակոբ Պիպիյանը, Հաճի Անտոն և Գրիգոր Քյուքձյանը ունեին գործատեղիներ, ուր աշխատում էին 30-40 աշխատողներ¹⁷⁴: Իզմիրթցի Խուպիկյան եղբայրների և Կարապետ Իսրայելյանի կաշվի նախնական մշակման տները Կ.Պոլսին էին մատակարարում իրենց ապրանքը¹⁷⁵: Կաշվի նախնական մշակմամբ էր զբաղվում նաև իզմիրթցի Ռուբեն Աբրահամյանը, ով ավելի լայն գործունեություն էր ծավալում՝ ինչպես Իզմիրթցի և շրջակայքից, այնպես էլ Արևմտյան Հայաստանի գավառներից հայթայթած կաշին մատակարարելով երկրի և արտասահմանի կաշեգործարաններին¹⁷⁶: Իզմիրթում գործում էին բամբակից կամ բամբակախառն վուշով փոքրիկ գորգեր, որոնց չափերը չէին գերազանցում 4x2 մետրը: Իզմիրթի գորգերը բավականին դիմացկուն էին և մեծ մասամբ ծառայում էին տեղացիների հյուրասրահները զարդարելու համար¹⁷⁷:

Հայտնի վաճառականներ Իբրանոսեան եղբայրներն ինչպես Օսմանյան կայսրության կենտրոնական քաղաքներում, այնպես էլ Իզմիրթում ունեին վաճառատուն¹⁷⁸: Նրանց էր պատկանում «Իբրանոսյան եղբայրներ» հայկական շոգենավային ընկերությունը, որը երթևեկում էր նաև Իզմիրթ քաղաք¹⁷⁹: Իզմիրթցի վաճառական Աբրահամ Ս. Սամուելյանը 1910 թ. ընդարձակել է իր խանութը, ուր վաճառվում էր ճաշի սպասք, խոհանոցային

¹⁷⁴ Սարգիսեան Յ., Ծխախոտի վաճառականությունը Իզմիրթի կեդրոնին մեջ, «Բիրակն», Կ.Պոլիս, 1 յունուար 1908, թիւ 1, էջ 13-14:

¹⁷⁵ Սարգիսեան Յ., Կաշեղէնի առևտուրը Իզմիրթի և շրջակայքի մեջ, «Բիրակն», Կ.Պոլիս, 8 դեկտեմբեր 1907, թիւ 50, էջ 1783:

¹⁷⁶ Կաշեղէնի առևտուրը Իզմիրթի մեջ: Նամակ առ խմբագրություն, «Բիրակն», Կ.Պոլիս, 22 դեկտեմբեր 1907, թիւ 53, էջ 1856-1857:

¹⁷⁷ Չեօնլէկճեան Ս., Առաջնորդ վաճառականաց կամ տարերք առևտրական գիտութեան, Բ հտր, Ժ տետր, Կ.Պոլիս, 1901, էջ 192:

¹⁷⁸ Իբրանոսեան եղբայրներ, Հաճի Եփրեմ էֆէնդի Իբրանոսեան, «Հանրագիտակ», շաբաթական հանդէս, 11 յունուար, 1903, Զ տարի, նոր շրջան, թիւ 2, էջ 25-26:

¹⁷⁹ Դադայան Խ., նշվ. աշխ., էջ 95:

պարագաներ և տան համար տարբեր ապրանքներ¹⁸⁰: Թղթավաճառ, կազմարար և նկարիչ Օննիկ Յակոբ Տեր-Ազարյանը «Բյութանիա» գավառաթերթի ազդերի բաժնում առաջարկում էր ցածր գներով գեղանկարներ¹⁸¹: Վաճառական Թագվոր Ճեննեյանի առևտրի տունը զբաղվում էր ոչ միայն մեծաքանակ և փոքրաքանակ ապրանքների արտահանմամբ և ներկրմամբ, այլև մաքսային գործերով¹⁸²: Գործարար Միհրան Պազըրճյանը 1910 թ. Ընդարձակելով իր առևտրական գործունեությունը և շարունակելով զբաղվել գործվածքեղենի վաճառքով՝ ավելացրել էր մանուֆակտուրայի, կերպասեղենի և ճերմակեղենի վաճառքը: Նա զբաղվում էր նաև մաքսային գործերով¹⁸³: Իզմիթցի վաճառական Կարապետ Իսրայելյանի կաշվի խանութում վաճառվում էին բոլոր այն ապրանքները, որոնք անհրաժեշտ էին կոշկակարների համար¹⁸⁴: Իզմիթցի գործարար Աբրահամ Կտավճյանը ներկրում էր սաքսոնական դաշնամուրներ, անգլիական գաղտնապահարաններ և պահանջարկի պարագայում պատրաստ էր ներկրել նաև հեծանիվներ, զբաղվում էր ծովային պատահարների և հրդեհների դեմ ապահովագրական գործերով, մաքսային, տպագրության հետ կապված խնդիրներով, կնիքների պատրաստությամբ¹⁸⁵: Աբրահամ և Մ. Կտավճյան եղբայրները Իզմիթի¹⁸⁶, ինչպես նաև Ադաբազարի, Պարտիզակի, Արմաշի և Բիլեջիկի տեսարանը պատկերող

¹⁸⁰ «Բիթանիա», Իզմիտ, 1910, Ա տարի, 10 ապրիլ, թիւ 11, էջ 132:

¹⁸¹ Նույն տեղում, 10 օգոստոս, թիւ 20-22, էջ 239:

¹⁸² Լրատու: Առևտրական, «Բիթանիա», Իզմիտ, 24 մարտ 1910, Ա տարի, թիւ 9, էջ 105:

¹⁸³ Պազըճեան Մ., Իզմիտ, «Բիթանիա», Իզմիտ, 1 յունուար 1910, Ա տարի, թիւ 1, էջ 7:

¹⁸⁴ «Բիթանիա», Իզմիտ, 7 ապրիլ, 1910, Ա տարի, թիւ 10, էջ 120:

¹⁸⁵ Կտավճեան գործակալութիւն, Իզմիտ, «Բիւրակն», Կ.Պոլիս, 1 փետրուար, 1906, թիւ 1, էջ 26:

¹⁸⁶ Köker O., Armenians in Turkey 100 Years Ago, With the Postcards from the Collection of Orlando Carlo Calumeno, volume II, translated by Ahmet Fethi, Birzamanlar Yayıncılık, Istanbul, 2013, p. 132-133, 137.

բացիկներ էին հրատարակում¹⁸⁷։ Իզմիթցի Մումճյանն իր հույն գործընկերոջ հետ համատեղ զբաղված էր ոչ միայն դրամափոխությամբ, այլև Իզմիթի տեսարաններ պատկերող բացիկների տպագրությամբ¹⁸⁸։ Իզմիթում գրենական պիտույքների խանութի տեր Միհրան Չալուքյանը հրատարակում էր նաև այս քաղաքի տեսարանները պատկերող բացիկներ¹⁸⁹։

Կարապետ Պողոսյանի խանութում վաճառվում էին հյուսվածքեղեն, մանուֆակտուրա, պերճանքի առարկաներ և կահկարասի¹⁹⁰։ Հանձնակատար վաճառական Սարգիս Ղազիկյանը զբաղվում էր ոչ միայն տարբեր ապրանքների ներկրմամբ և արտահանմամբ, այլև մաքսային և ապահովագրական գործառույթներով¹⁹¹։ Գրիգոր Փամպուքճյանը «Սինկեր» ֆիրմայի ներկայացուցիչն էր Իզմիթում¹⁹²։ Պուլուտյան եղբայրները Իզմիթում ունեին դեղորայքի և քիմիական տարբեր նյութերի մեծ մթերանոց, նրանք երկիր էին ներկրում շվեյցարական, դանիական և եվրոպական ամենախոշոր դեղագործարանների դեղեր, ինչպես նաև կենցաղում զարձածվող տարբեր քիմիական ու շերամաբուծության համար անհրաժեշտ նորագույն նյութեր, անգամ՝ վիրաբուժական գործիքներ և բժշկական գրականություն¹⁹³։

Գրող և բանասեր Տիգրան Չիթունին հղում անելով ֆրանսիական "Annuaire Oriental" տարեցույցի 1914 թ. համարին՝ տեղեկացնում էր, որ Իզմիթում գործում էին հայերին պատկանող

¹⁸⁷ Köker O., 100 Yıl Önce Türkiye’de Ermeniler, Istanbul, 2005, Birzamanlar Yayıncılık, s. 104, 116-117.

¹⁸⁸ Նույն տեղում, էջ 105-107

¹⁸⁹ Նույն տեղում, էջ 108:

¹⁹⁰ «Բիթանիա», Իզմիտ, 10 փետրուար, 1910, Ա տարի, թիւ 5, էջ 60:

¹⁹¹ Նույն տեղում, 1 յունուար 1910, Ա տարի, թիւ 1, էջ 12:

¹⁹² Լրատու, «Բիթանիա», Իզմիտ, 20 փետրուար 1911, Բ տարի, թիւ 7-8, էջ 391:

¹⁹³ Յ. Ա. Պուլուտեան եղբայրք Նիկոմիդիա, «Բիւզանդիոն», Կ.Պոլիս, 10-23 մարտ 1901, թիւ 1350:

120 առևտրական տներ¹⁹⁴: 1911 թ. տվյալներով քաղաքում կային 3783 շինություններ՝ տներ, շերամատներ, բաղնիքներ, զինեսոներ և այլն, որոնցից 1278-ը պատկանում էին հայերին: Դրանց արժեքը կազմում էր 14.500.000 միլիոն դուրուշ: Քաղաքում հայերն ունեին նաև 800 տուն¹⁹⁵:

1908 թ. Իզմիրում հիմնվեցին երկու շահակցական (բաժնետիրական) ընկերություններ՝ «Օսմանյան շահակցական ընկերությունը» և «Հարստության միջոց» կամ «Միջնորդ հարստության ընկերությունը»: Առաջինը կազմված էր 200 անդամներից, որոնք ամսական 20 դուրուշ անդամավճար էին վճարում: 1909 թ. սեպտեմբերին ժողովրդի տարբեր խավերի կողմից ձևավորվում է մի նոր ընկերություն, որը վերընշված ընկերությունների նույն նպատակն էր հետապնդում: Այս ընկերությունների թե՛ նախաձեռնողները և թե՛ անդամների մեծամասնությունը հայեր էին¹⁹⁶: «Հարստության միջոց» ընկերությունն ուներ 200 բաժնեմաս՝ 130 անդամներով: Հինգ տարի անց անդամների ամսական 1 մեջիդ* վճարներով գոյացած 2400 ոսկեդրամով տնտեսական մեծ և շահավետ ձեռնարկ պետք է իրականացվեր¹⁹⁷: Այս ընկերությունը գնել էր երկաթուղու և Credit Foncier-ի արժեթղթեր: Բաժնեմասերի կեսը պատկանել է հայերին, մնացյալը՝ թուրքերին, հույներին և հրեաներին¹⁹⁸: 1912 թ. հիմնված «Օսմանյան Պալըզ պազար ընկերության» նպատակն էր բավականաչափ դրամագլուխ ունենալով՝

¹⁹⁴ Չիթունի, Թուրքիոյ առևտր. հրապարակի տերը ո՞վ է, «Ժամանակ», Կ.Պոլիս, 15-28 յունիս, 1919, թիվ 3557:

¹⁹⁵ Յ. Մ. Ս., Թղթակցություններ, «Բիւթանիա», Իզմիտ, 30 ապրիլ 1911, Բ տարի, թիվ 11, էջ 414:

¹⁹⁶ Սարգիսեան Յ., Գաւառական կեանք, Իզմիտ, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 12-25 սեպտեմբեր 1909, թիվ 80:

* Մեջիդիէ - նախկինում թուրքական ոսկեդրամ (6.61գրամ զուտ ոսկի), հետո սովորական արծաթադրամ մոտ 20 պիաստ (20 դուրուշ): Տես Գուստ Վ., Հայերի ցեղասպանությունը 1915-1916 Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի փաստաթղթերից, Եր., 2005, էջ 481:

¹⁹⁷ Գասապեան Մ. (Ֆարիատ), նշվ. աշխ., էջ 203:

¹⁹⁸ Դադայան Խ., նշվ. աշխ., էջ 77:

առևտրական և արդյունաբերական գործ ձեռնարկել, որը պետք է ծառայեր թե՛ համայնքի և թե՛ երկրի շահերին: Ընկերությունը 7 տարի պետք է կոչվեր «Հարություն Քյոյնեթյան և ընկերություն» անվամբ: Բաժանորդների թիվը 150 էր, յուրաքանչյուր անդամ պետք է վճարեր մուտքի 20 և շաբաթական՝ 5 դահեկան գումար¹⁹⁹: 1912 թ. ընկերությունը զբաղվում էր Իզմիթի և Պարտիզակի ու Իզմիթ-Պարտիզակ-Գարամուսալի միջև շոգենավային գծերի հաստատման գործով²⁰⁰: Ընկերության ընդհանուր ժողովի որոշմամբ 1914 թ. հունիսին պատրաստականություն էր հայտնվում, իր դրամագլխի կեսը՝ 1.000 օսմանյան ոսկեդրամը տրամադրել փոփ կառուցմանը և տեղի Թաղական խորհրդի հետ համատեղ այն շահագործել²⁰¹:

Ըստ թուրքական աղբյուրի՝ Իզմիթում որոշակի աշխատանքներ և առևտրական գործողություններ կատարվել են բացառապես հայերի կողմից: Մասնավորապես հայերի մենաշնորհներն էին ներկարարի, խեցեգործի, փայտագործի, դերձակի, ոսկերչի, կոշկակարի, խոհարարի, ատաղձագործի և մակույկավարի մասնագիտությունները: Իզմիթի բոլոր ներկարարների, դերձակների, մանածագործների, մուշտակագործների, կոշկակարների, վերմակ պատրաստողների համքարությունները հայկական էին: Հայեր էին հիմնականում մրքերի և բանջարանոցային կուլտուրաների արտադրողները: Տեղի հայերի ստացած միքքն ու բանջարեղենը սպառվում էր ոչ միայն քաղաքում այլև առաքվում էր Կ.Պոլիս: Իզմիթի գավառակը կարևոր դեր էր կատարում Կ.Պոլսի՝ մրգի և բանջարեղենի կարիքների բավարարման գործում²⁰²:

¹⁹⁹ Նույն տեղում, էջ 79:

²⁰⁰ Գասապեան Մ. (Ֆարիատ), նշվ. աշխ., էջ 204:

²⁰¹ Թղթակից, Կեանքը Իզմիտի մէջ, «Ժամանակ», Կ.Պոլիս, 23 յունիս-6 յուլիս, 1914, թիւ 1849:

²⁰² Դաւութօղլու Հ., Որտեղի՞ց են եկել Իզմիթի հայերը, <https://akunq.net/am/?p=55546>

Իզմիթի արհեստագործության ասպարեզում հայերի գերակա դիրքի մասին են վկայող «Բյուրանիա» գավառաթերթի ազդերի բաժիններում զետեղված տեղեկությունները: Իզմիթցի դերձակ Մելիք Թուղլաճյանն իր արհեստանոց էր հրավիրում վերարկու, բաճկոններ, կոստյում, շրջագգեստ և այլ հագուստներ կարել ցանկացողներին²⁰³: Մեկ ուրիշ դերձակ Գեղամ Սեմերճյանը ոչ միայն առաջարկում էր իր ծառայությունները, այլև իր արհեստանոցում վաճառվող ֆրանսիական բարձորակ կերպասեղենը²⁰⁴: Ժամագործ Բենիամին Ս. Թիրեքյանի ժամացույցի արհեստանոց-խանութում վաճառվում էին ձեռքի և պատի բազմազան ժամացույցներ²⁰⁵: Իզմիթում գործում էին Հակոբ Մալխասին պատկանող վարսավիրանոցը²⁰⁶ և Պ. Կարապետի կողմից բացված նոր արդուկարանը²⁰⁷: Իզմիթի Հայ կաթոլիկներին պատկանող դպրոցին կից գործում էր Կարապետ Թերգյանի պատկանող մեկ ուրիշ արդուկարան²⁰⁸:

Թուրքական աղբյուրի վկայությամբ՝ քաղաքում առաջապահական ծառայությունները հիմնականում կատարում էին հայերը: Բժշկի մասնագիտությունը Իզմիթի հայերի նախասիրածն էր և թերևս պատահական չէ, որ Օսմանյան կայսրության առողջապահության ասպարեզում մեծ թիվ էին կազմում ծնունդով իզմիթցի հայ բժիշկները: Բժիշկների հետ մեկտեղ, Իզմիթում լայն գործունեություն էին ծավալում հայ դեղագործներն ու ատամնաբույժերը: Քաղաքի առաջին դեղագործերը հայեր էին, իսկ առաջին դեղատունը բացել է Սերովբե Բուլությանը: Տեղի հայ բժիշկների, դեղագործների կատարած մեծ դերի մասին են վկայում նաև հայկական աղբյուրները: Բժիշկ Կ. Ավետիսյան բժշկական նորա-

²⁰³ «Բիւրանիա», Իզմիտ, 20 յունուար 1910, Ա տարի, թիւ 3, էջ 11:

²⁰⁴ Նույն տեղում, 10 սեպտեմբեր, 1910, Ա տարի, թիւ 23, էջ 252:

²⁰⁵ Նույն տեղում, 1 փետրուար, 1910, Ա տարի, թիւ 4, էջ 48:

²⁰⁶ Նույն տեղում, 10 մարտի 1910, Ա տարի, թիւ 8, էջ 95:

²⁰⁷ Նույն տեղում, 1 յունուար 1910, Ա տարի, թիւ 1, էջ 12:

²⁰⁸ Նույն տեղում, 10 յունուար 1910, Ա տարի, թիւ 2, էջ 11:

գույն սարքավորումներով առանց ցավի հեռացնում է մեծացած նշիկները²⁰⁹: «Բյութանիա» գավառաթերթի ծանուցումների բաժնի տեղեկության համաձայն՝ Կ.Պոլսի Կայսերական բժշկական վարժարանի շրջանավարտ Գրիգոր Մինանյանը Իզմիրում իր հաճախորդներին սպասարկում էր Իզմիրի Քյութերյան դեղատանը²¹⁰: Կանանց հիվանդությունների և վիրաբուժության մեջ մասնագիտացված Փարիզի և Օսմանյան կայսրության տարբեր հիվանդանոցներում հմտացած բժիշկ Հակոբ Մխճյանը (Փափագյանը) Իզմիրի քաղաքապետարանում իր պաշտոնական պարտականությունները կատարելուց հետո, կիրակի օրերին անվճար բուժում էր հիվանդներին²¹¹: Տեր և տիկին Գասապյանները բժշկական նորագույն մեթոդներով բուժում էին իրենց հիվանդներին²¹²: Իզմիրի նշանավոր դեղագործներից էր Իտալիայի Բնագիտական-քիմիագիտական ակադեմիայի ոսկյա մեդալակիր շրջանավարտ Տիգրան Մինասյանը²¹³, որի «Աստղ» դեղատունը քաղաքում գործում էր 1910 թ.-ից²¹⁴:

Իզմիրի կայսերական քաղաքային Իտատիե վարժարանում ուսանում էին զգալի թվով հայ երիտասարդներ, ովքեր հետագայում աշխատում էին քաղաքի վարչական մարմիններում²¹⁵:

Ըստ Կ.Պոլսի Ուսումնական խորհրդի 1901 թ. հրատարակած վիճակագրույցի՝ Իզմիրում գործող Լուսավորչյան-Գայանյան երկսեռ վարժարանում սովորում էր 588 աշակերտ, որոնց դասավանդում էր 23 ուսուցիչ, իսկ ուսումնական ամսական ծախսը կազմում

²⁰⁹ Նույն տեղում, 1911, Բ տարի, 30 ապրիլ, թիւ 11, էջ 416:

²¹⁰ Նույն տեղում, 10 յունուար 1910, Ա տարի, թիւ 2, էջ 11:

²¹¹ Տօք. Մխճեան Յ. (Փափագեան), բժիշկ, վիրաբոյժ, կնախտաբոյժ, «Բիւրակն», Կ.Պոլիս, 9 սեպտեմբեր, 1906, թիւ 33, էջ 793:

²¹² Լրատու, «Բիւթանիա», Իզմիր, 20 փետրուար 1911, Բ տարի, թիւ 7-8, էջ 391:

²¹³ Լրատու: Առևտրական «Բիւթանիա», Իզմիր, 24 մարտ 1910, Ա տարի, թիւ 9, էջ 105:

²¹⁴ «Բիւթանիա», Իզմիր, 20 փետրուարի, 1910, Ա տարի, թիւ 6, էջ 72:

²¹⁵ Գաւառներէն, Նիկովիդիայէն, «Սուրհանդակ», Կ.Պոլիս, 1 յուլիս, թիւ 1939:

էր 4.787 դուրուշ գումար, որից 1150-ը վճարվում էր ուսման վարձերից, իսկ 3637-ը՝ Թաղական խորհրդի գանձանակից²¹⁶: 1911 թ. վարժարանի տարեկան բյուջեն արդեն կազմում էր 45.000 դուրուշ²¹⁷: Աղջիկներին ուսուցանում էին նաև ձեռագործություն: Տարեվերջյան հանդեսներին այդ աշխատանքները ցուցադրվում էին, իսկ դրանց վաճառքից ստացված գումարը համալրում էր վարժարանի բյուջեն²¹⁸: 1908 թ. հիմնված «Նիկոմիդիո վարժարանի շինության օժանդակ մասնախումբն» իր անդամների վճարներից գոյացած գումարից 200 ոսկեդրամը հատկացրեց վարժարանի նոր շենքի կառուցմանը²¹⁹: 1910 թ. տեղի երևելիների կողմից որոշում կայացվեց վերաշինել ազգային վարժարանները և 240 հոգուց կողմից հավաքվեց 1400 օսմանյան ոսկեդրամ²²⁰: Քաղաքում գործում էր Չաքրյան մանկապարտեզը²²¹: 1913 թ. հուլիսի 6-ին Իզմիթի Գայանյանց վարժարանի տարեվերջյան հանդեսը տեղի է ունեցավ վարժարանի նորակառույց շենքի թատրոնի սրահում²²²:

Իզմիթում գործում էր ազգային շերամատունը²²³: 1909 թ. քաղաքում կառուցվեց ազգային սեփականություն համարվող փուռը, որի գործարկումը ազգային գանձանակին ամսական 25 օսմանյան ոսկեդրամ հասույթ էր ապահովելու²²⁴: Փուռը, ազգա-

²¹⁶ Վիճակացոյց գաւառական ազգային վարժարանանց Թուրքիոյ: Ա տետր, նշվ. աշխ., 3-րդ աղյուսակ:

²¹⁷ Գասապեան Մ. (Ֆարհատ), նշվ. աշխ., էջ 261:

²¹⁸ Նիկոմիդիոյ վարժարանին հանդեսը, «Մանգումէի էֆքեար», Կ.Պոլիս, Կ.Պոլիս, 10-23 յուլիս 1907, թիւ 1860:

²¹⁹ Գասապեան Մ. (Ֆարհատ), նշվ. աշխ., 1913, էջ 265:

²²⁰ Թղթակցութիւններ: Ազգային վարժարաններու վերաշինութիւնը, «Բիւթանիա», Իզմիտ, 10 յունուար 1910, Ա տարի, թիւ 2, էջ 10:

²²¹ Չաքրեան մանկապարտեզ ի Նիկոմիդիա, «Մանգումէի էֆքեար», Կ.Պոլիս, 17 յուլիս-30 յուլիս, 1906, թիւ 1554:

²²² Կեանքը Իզմիտի մէջ, «Ժամանակ», Կ.Պոլիս, 8-21 յուլիս, 1913, թիւ 1510:

²²³ Քրոնիկ, «Մանգումէի էֆքեար», Կ.Պոլիս, 26 յունուար 1906-8 փետրուար 1907, թիւ 1719:

²²⁴ Տ. Գ. Ճ., Նամակ Իզմիտէն, «Ազատամարտ», 1909, Կ.Պոլիս, 14-27 նոյեմբեր, թիւ 133:

պատկան սրճարանը և շերամատունը կառուցվել էին իզմիթցի բարերար Կարապետ Պեյազյանի միջոցներով²²⁵: Փոփ ողջ հասույթը օգտագործվում էր ազգային վարժարանների կարիքների համար: 1908 թ. նոյեմբերի 1-ից մինչև 1909 թ. հոկտեմբերի 31-ը փոփ շահույթը կազմել է 37.718 դահեկան²²⁶: 1907 թ. կառուցված ազգապատկան շտեմարանի 200 օսմանյան ոսկեդրամի շահույթն օգտագործվեց վարժարանի նոր շենքի կառուցման գործին²²⁷:

Քաղաքի առաքելական, բողոքական և կաթոլիկ հայերն ունեին 3 եկեղեցի: Առաքելականների Ս. Աստվածածին եկեղեցին աչքի էր ընկնում իր գեղեցկությամբ: Այն զմբեթավոր էր և սյունազարդ, հարուստ՝ ներքին զարդարանքներով, ծխական իրերով և առարկաներով: Գերեզմանատանն առընթեր գործում էր Երկուց Բյուրաց կոչված եկեղեցին²²⁸: 1847 թ. ձևավորված Իզմիթի հայ բողոքական համայնքն²²⁹ ուներ արական և իգական վարժարաններ²³⁰: Նախքան տեղահանությունը քաղաքում գործում էին հայկական 8 ուսումնական հաստատություններ՝ միջնակարգ, տարրական դպրոցներ և նախակրթարան-մանկապարտեզ²³¹:

Քաղաքում եռանդուն կերպով գործում էին ազգային, բարեգործական, կրթական և մշակութային հաստատությունները: 1875 թ. հիմնվել էր «Ասքանազյան ընկերությունը», որի նպատակն էր նպաստել ժողովրդի կրթությանն ու լուսավորությանը: Ընկերությունն իր միջոցներով 1901-ից մինչև 1910 թ. պահում էր մանկարան (մասնավոր գիշերօթիկ տուն-դպրոցի այն բաժինը, որտեղ մնում

²²⁵ Ազգային մը, Թղթակցութիւններ, «Բիւթանիա», Իզմիտ, 20 նոյեմբեր 1910, թիւ 28, էջ 307:

²²⁶ Նամակ խմբագրութեան, «Բիւթանիա», Իզմիտ, 20 յունուար 1910, Ա տարի, թիւ 3, էջ 9:

²²⁷ Քրոնիկ, «Մանգումէի էֆէթար», Կ.Պոլիս, 28 յուլիս-10 օգոստոս 1907, թիւ 1876:

²²⁸ Օղիկեան Ս. Ս., նշվ. աշխ., էջ 468-469:

²²⁹ Ատանալեան Կ. նշվ. աշխ., էջ 240:

²³⁰ Գասապեան Ս. (Ֆարիատ), նշվ. աշխ., էջ 263:

²³¹ Օղիկեան Ս. Ս., նշվ. աշխ., էջ 468-469:

էին սովորող երեխաները)²³²: Ընկերության անդամների թիվը 300 էր, որոնք ամեն ամիս 40 փարա* էին վճարում²³³: «Ասքանազյան ընկերության» հովանու ներքո 1897 թ.-ից գործում էր Ասքանազյան մանկապարտեզը, որի համար այն հատուկ շենք կառուցեց²³⁴: 1914 թ. մայիսին տեղի Թաղական խորհուրդը քաղաքի վարժարանների մատակարարման պարտականությունը դրեց այդ ոլորտում երկարամյա գործունեության փորձ ունեցող երկու բարեսիրական հաստատությունների վրա: Դրանցից «Ազգային անօգնական ուսանողների միությունը» 1914 թ. սեպտեմբերին պատրաստվում էր նշել իր գործունեության 50-ամյակը, իսկ «Ասքանազյան ընկերությունը»՝ իր գործունեության 40-ամյա և համանուն մանկապարտեզի բացման 20-ամյա հոբելյանները²³⁵: Վերջին ընկերությանը պատկանող «Ասքանազյան ֆոնդը» միջոցներ էր տրամադրում նաև քաղաքի հայության կրթական գործի առաջընթացի համար²³⁶: «Ասքանազյան ընկերության» նյութական միջոցներով էին գործում նաև լսարանը, ընթերցասրահը, գրադարանը և փողային նվագախումբը²³⁷: Ընկերությունը 1900 թ. ապրիլին

²³² Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, հատոր 2, Երևան, 1976, էջ 965:

* Փարա - Դրամական միավոր Օսմանյան կայսրությունում: Առևտրում լիրան առհասարակ հաւասար էր 108 դուրուշի, իսկ ոսկու արժեքով և պաշտոնական գործածության մեջ 100 դուրուշ էր, դուրուշը 10 փարա: Փարան համարժեք էր երեք աքչեի, որը երկար ժամանակ Օսմանյան կայսրության դրամական միավորն էր: (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Դ. Թուրքական աղբյուրներ, թարգմանություն բնագրից Ա. Խ. Սաֆրաստյանը և Գ. Հ. Սանթրուքյանը, Երևան, 1972, էջ 231):

²³³ Գասապեան Մ. (Ֆարհատ), նշվ. աշխ., էջ 264:

²³⁴ Սամեն, Ասքազեան ընկերութիւնը և իր գործը, «Բիւթանիա», Ատա-Բազար, 21 օգոստոս 1911, Բ տարի, թիւ 20-21, էջ 491-492:

²³⁵ Հայկական կեանք, Գաւառներ, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 24 դեկտեմբեր-4 յունուար 1909, թիւ 165:

²³⁶ Թղթակից, Կեանքը Իզմիտի մէջ, «Ժամանակ», Կ.Պոլիս, 20 մայիս-2 յունիս 1914, թիւ 1815:

²³⁷ Տ. Գ. Ճ., Նամակ Իզմիտէն, «Ազատամարտ», 1909, Կ.Պոլիս, 14-27 նոյեմբեր, թիւ 133:

Կ.Պոլսի գրատներին և տպարաններին «Արևելք» օրաթերթով տեղեկացնում էր, որ պատրաստվում է ձեռք բերել մեծ թվով գրքեր²³⁸: 1912 թ. Գրադարանն արդեն ուներ 1700 գիրք և 35 տարի շարունակ սպասարկում էր տեղի ընթերցողներին²³⁹:

1864 թ. հիմնադրված և 1908 թ. վերակազմավորված Իզմիրի «Ազգային բարեգործական ընկերությունն» ուներ 50 անդամ, որոնց անդամավճարը կազմում էր 2 դուրուշ: Ընկերության նպատակն էր գրենական պիտույքներով ապահովել երկսեռ վարժարանների աղքատ աշակերտներին²⁴⁰: Հայոց գրերի գյուտի 1500-ամյա և տպագրության 400-ամյա հոբելյանները նշելու համար 1913 թ. Իզմիրում ստեղծված հանձնախումբն «Ազգային բարեգործական ընկերության» հետ համատեղ նիստի ընթացքում որոշվեց, որ միջոցառման ծախսերը հոգալու էր Իզմիրցի հայտնի վաճառական Գրիգոր Կիրակոսյանը: Հանձնախումբը նախատեսում էր նաև ի նպաստ «Դպրոցական ֆոնդի» հանգանակություն կազմակերպել²⁴¹: 1913 թ. հոկտեմբերին 2 օր անընդմեջ նշվեցին հոբելյանները, և տոնակատարությանը հանդիսավորություն էր հաղորդում «Ազգային բարեգործական ընկերության» փողային նվագախումբը²⁴²: 1914 թ. հուլիսի 10-ին Իզմիրում տեղի ունեցավ «Ազգային բարեգործական ընկերության» թատրոնի շենքի բացումը և նշվեց ընկերության 50-ամյակը: 1914 թ. այն ուներ իր թատերախումբը, նվագախումբը և փողային նվագախումբը և նպատակ ուներ Իզմիրում նոր մանկապարտեզ հիմնել²⁴³:

²³⁸ Ազգային կեանք, «Արևելք», Կ.Պոլիս, 19 ապրիլ-2 մայիս 1900, թիւ 4302:

²³⁹ Գասապեան Մ. (Ֆարիատ), նշվ. աշխ., էջ 264:

²⁴⁰ Նույն տեղում:

²⁴¹ Թղթակից, Մեծ յոբելեանը գաւառի մէջ, «Ժամանակ», Կ.Պոլիս, 11-24 հոկտեմբեր 1913, թիւ 1593: Տե՛ս նաև Համազգային մեծ յոբելեանը Իզմիրի մէջ, «Ժամանակ», Կ.Պոլիս, 3-16 հոկտեմբեր 1913, թիւ 1601:

²⁴² Մեծ յոբելեանի հանդէսները գաւառներու մէջ: Իզմիրի մէջ, «Ժամանակ», Կ.Պոլիս, 16-29 հոկտեմբեր 1913, թիւ 1606:

²⁴³ Կեանքը Իզմիրի մէջ, (Մեր մասնաւոր թղթակցէն), «Ժամանակ», Կ.Պոլիս, 12-25 յուլիս 1914, թիւ 1868:

«Աղքատասեր խնամակալությունը» գործում էր 1901-ից և իր վրա էր վերցրել քաղաքի աղքատների և կարոտյալների հոգսը²⁴⁴։ Այն պարբերաբար պարեն և նյութական այլ միջոցներ էր տրամադրում քաղաքի աղքատներին²⁴⁵։ 1906 թ. հունվարին 800 օխա* քարածուխ ստացավ աղքատներին բաժանելու համար²⁴⁶։ Կ.Պոլսի «Արևելք» թերթով խնամակալությունը ծանուցում էր իր գործունեության ընթացքում տեղի ազգայիններից ստացված նվիրատվությունների և իր հոգածության տակ գտնվող հիվանդներին աջակցող բժիշկների և դեղագործների մասին։ Խնամակալությունն իր միջոցներով հիվանդներին բուժման էր ուղարկում Կ.Պոլիս ²⁴⁷։

1908 թ. նոյեմբերին «Հայոց միացյալ ընկերությունն» Իզմիրում բացեց իր մասնաճյուղը, որին անդամագրվեցին 50 կրթասեր անձինք²⁴⁸։ Այստեղ գործում էր «Կիլիկիո Որբախնամ հանձնաժողովի» մասնաճյուղը²⁴⁹, որն ի նպաստ որբերի՝ 1909 թ. 3306 լիրա²⁵⁰ հանգանակեց²⁵¹։ ՀԲԸՄ-ը որոշում էր կայացրել Իզմիրում բացել իր մասնաճյուղը և 1914 թ. հունիսին սկսեց կազմակերպչական

²⁴⁴ Ոսկի Քենյ. Պիպիեան, Աղքատաց խնամակալութիւն Նիկումիդիոյ, «Սուրհանդակ», Կ.Պոլիս, 1905, 17 դեկտեմբեր։

²⁴⁵ Նույն տեղում, Կ.Պոլիս, 1906, 21 յունուար, թիւ 2115։

* Օխա - կշրի չափ, որը մոտ 1,34 կգ էր։ Տես Գուստ Վ., նշվ աշխ., էջ 481։

²⁴⁶ Նիկումիդիոյ Աղքատաց խնամակալութիւնը, «Սուրհանդակ», Կ.Պոլիս, 25 յունուար 1906, թիւ 2115։

²⁴⁷ Ազգային լուրեր, «Արևելք», Կ.Պոլիս, 26 յունիս-3 յուլիս 1901, թիւ 4669։

²⁴⁸ Քեատիպ, Նիկումիդեան գործեր, Միացեալ ընկերութիւնը, «Բիւթանիա», Իզմիր, 24 մարտ 1910, Ա. տարի, թիւ 9, էջ 104-105։

²⁴⁹ Կիլիկիոյ համար, «Բիւթանիա», Իզմիր, 20 յունուար 1910, Ա. տարի, թիւ 3, էջ 10։

²⁵⁰ Լիրա - Օսմանյան կայսրությունում երեք տեսակ դրամներ էին գործածվում՝ ոսկի, արծաթ և պղինձ։ Ամենամեծ արժեք ունեցողը ոսկեդրամ լիրան էր։ (Այլ և այլք, «Արաքս» պատկերազարդ հանդես, 1887, Ս.Պետերբուրգ, գիրք Ա, նոյեմբեր, էջ 143)։

²⁵¹ Կիլիկիոյ որբախնամ կեդր. յանձնաժողով տեղեկագիր 1909-1910, Կ.Պոլիս, 1911, էջ 113, 111, 96։

աշխատանքները²⁵²: Քաղաքում գործել է «Հայուհյաց ընկերությունը», որը զբաղված էր որբախնամ գործունեությամբ: Այս ընկերության մեջ ընդգրկված կանայք գործուն մասնակցություն էին ունենում նաև այստեղ գործող լսարանի աշխատանքներին²⁵³: Իզմիրի «Ուսանողական միությունն» իր թատերախմբով տարբեր ներկայացումներով հանդես էր գալիս քաղաքի հանրության առջև²⁵⁴: Իզմիրի Դպրաց դասը իր անդամների և երգեցիկ մանուկների համար 1907 թ. գեղեցիկ եկեղեցական շապիկներ ձեռք բերեց²⁵⁵:

Իզմիրցի դերձակ-վաճառական Արտաշես Գարախյանի բանվորները՝ քաղաքի մյուս արհեստակիցների հետ 1910 թ. սեպտեմբերին ստեղծեցին արհեստակցական միություն որի նպատակն էր պայքարել իրենց աշխատանքային իրավունքների համար²⁵⁶:

Նիկոմիդիայի հայկական թեմերը նյութական աջակցություն էին ուղարկում Ադանայի աղետյալներին²⁵⁷: 1909 թ. նրանց համար Իզմիրում կատարվեց հանգանակություն, որի արդյունքում 2000 դուրուշ գոյացավ: 1910 թ. նախատեսված էր այս նպատակով կրկին հանգանակություն կազմակերպել²⁵⁸: Եվ 1910 թ. հունվարին երկու երեկոյի ընթացքում հանգանակված 2923 դուրուշն ուղարկվեց Կ.Պոլիս²⁵⁹: Զավարյան գյուղատնտեսական վարժարանի կառուց-

²⁵² Թղթակից, Կեանքը Իզմիրի մեջ, «Ժամանակ», Կ.Պոլիս, 23 յունիս-6 յուլիս, 1914, թիւ 1849:

²⁵³ Հայկական լուրեր, «Ժամանակ», Կ.Պոլիս, 2-15 յունուարի 1912, թիւ 996:

²⁵⁴ Թատրոն և գեղարուեստ, «Բիթանիա», Իզմիր, 20 փետրուար 1911, Բ տարի, թիւ 7-8, էջ 398:

²⁵⁵ Քրոնիկ, «Մանգունէի էֆքեար», Կ.Պոլիս, 25 սեպտեմբեր-8 հոկտեմբեր 1907, թիւ 1926:

²⁵⁶ Վահէ, Նիկոմիսիոյ դերձակ-բանուորները, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 2-15 սեպտեմբեր 1910, թիւ 376:

²⁵⁷ Գաւառական կեանք, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 1910, 21 յունուար-3 փետրուար, թիւ 189:

²⁵⁸ Լրատու: Կիլիկիոյ աղետեալներուն համար, «Բիթանիա», Իզմիր, 1 յունուար 1910, թիւ 2, էջ 11:

²⁵⁹ Հանգանակութիւն, «Բիթանիա», Իզմիր, 10 յունուար 1910, թիւ 2, էջ 10:

ման համար կազմակերպված համագգային հանգանակությանը մասնակցում էին նաև իզմիթցիները²⁶⁰: 1903 թ. Կովկասի հայության նկատմամբ ցարական կառավարության կազմակերպած հալածանքներին հաջորդեցին հայ մտավորականների ձերբակալությունները: ՀՅԴ կուսակցության կոչով՝ արևմտահայության շրջանում սկսվեց հանգանակություն կազմակերպվել ի նպաստ կովկասահայ բանտարկյալների և նրանց ընտանիքների²⁶¹: 1911 թ. Իզմիթի ՀՅԴ կուսակցության «Գեղարվեստական միությունը» ազգային երգերով և երաժշտությամբ կազմակերպեց հանգանակություն, և գոյացավ 665 դուրուշ գումար: Հանգանակությունը շարունակական բնույթ էր կրում: Դրան պետք է միանային շուկայի առևտրականները, ՀՅԴ կուսակցության «Գեղարվեստական միության» անդամները և «Բյութանիա» թերթի աշխատակազմը²⁶²:

XIX վերջերից ֆիզիկական դաստիարակությունը մուտք էր գործել ազգային վարժարաններ: Մարմնակրթական շարժումը սկսեց տարածում գտնել նաև գավառական վարժարաններում²⁶³: Իզմիթում գործում էր «Արաքս մասնախումբ» անունը կրող մարմնամարզական և ֆուտբոլի ակումբը²⁶⁴: 1913 թ. տարեկան մրցումներ կազմակերպելով՝ այն պատրաստվում էր մասնակցել հայկական օլիմպիական խաղերին²⁶⁵: Քաղաքում գործում էր ՀՄԸՄ-ի մասնաճյուղը, որն ուներ իր ֆուտբոլային թիմը: Վերջինս 1920 թ.

²⁶⁰ Զաւարեան ֆօնտ: Նուիրատուութեան առանձին տետրակներ, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 15 մարտ-7 ապրիլ, 1914, թիւ 1472:

²⁶¹ Ի նպաստ կովկասահայ բանտարկեալներուն, «Բյութանիա», Իզմիտ, 20 նոյեմբեր 1910, թիւ 28, էջ 303-304:

²⁶² Նույն տեղում, 10 յունուար 1911, թիւ 2, էջ 346-347:

²⁶³ Քարցի և Սապանձա: Խմբագրական Փունջի, «Փունջ», Կ.Պոլիս, 28 մարտ 1892, թիւ 2300:

²⁶⁴ Նիկոմիդիոյ «Աթլաս» մարմնամարզական և ֆութպօլի ակումբը, «Մարմնամարզ», Կ.Պոլիս, 1913, նոյեմբեր-դեկտեմբեր, թիւ 11-12, էջ 210:

²⁶⁵ Փանոսեան Հ., Հայ մարմնամարզական շարժումը Իզմիտ գաւառներու մէջ և աւելի հեռուն, «Մարմնամարզ», Կ.Պոլիս, 1913, նոյեմբեր-դեկտեմբեր, թիւ 11-12, էջ 215:

օգոստոսին մրցեց Կ.Պոլսի «Բերա-Շիշլի» ֆուտբոլային թիմի հետ²⁶⁶:

Իզմիթում 1850-1853 թթ. հրատարակվել քաղաքական, ազգային և բանասիրական «Հայրենասեր» երկշաբաթաթերթը, 1910-1911 թթ.՝ «Բյութանիա» ազգային գրական, քաղաքական, տնտեսական տասնօրյան, որը հետագայում դարձել է շաբաթաթերթ: 1912 թ. այս պարբերականը հրատարակվել է Ադաբազարում: 1909 թ. հրատարակվել են «Ադալնի» և «Խթան» խմորատիպ պարբերականները²⁶⁷: Այստեղ հրատարակչական լայն գործունեություն է ծավալել Մարտիրոս Մավյանը, ով քաղաքի առաջին տպարանի հիմնադիրն էր: Նրա տպարանում տպագրվում էին հայերեն, թուրքերեն, ֆրանսերեն և հունարեն գրքեր: Առաջին համաշխարհային պատերազմից հետո այդ հրատարակչությունը անցել է նահանգային իշխանություններին և այստեղ սկսել է տպագրվել «Քոջաեյի» թուրքական թերթը²⁶⁸:

1910 թ. Իզմիթում մեծ հանդիսավորությամբ բացվեց «Բյութանիա» լսարան-ընթերցասրահը, որը հնարավորություն ուներ իր ընթերցողներին տրամադրել երկրում և աշխարհի տարբեր հայկական գաղթավայրերում հրատարակվող թերթերը և հանդեսները, համշխարհային գրականության դասականների ստեղծագործությունները և տարբեր բառարաններ ²⁶⁹: Ընթերցարանը հաճախորդներին առաջարկում էր նաև հյուրասիրություն²⁷⁰, նրանց համար կազմակերպում էր տարբեր թեմաներով բանախո-

²⁶⁶ Պօղոսեան Յ., Մբօրի կեանք, «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ», Կ.Պոլիս, 28 օգոստոս-10 սեպտեմբեր 1920, թիւ 581:

²⁶⁷ Բաբլոյան Մ. Ա., Հայ պարբերական մամուլի մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980), Երևան, 1986, էջ 27, 74, 77, 81:

²⁶⁸ Տե՛ս Դաւութօղլու Հ., նշվ. աշխ.:

²⁶⁹ Լսարան-ընթերցատուն, «Բիւթանիա», Իզմիտ, 10 մարտ 1910, Ա տարի, թիւ 8 էջ 96:

²⁷⁰ «Բիւթանիա» ընթերցարան, «Բիւթանիա», Իզմիտ, 10 յունուար 1911, թիւ 2, էջ 347:

սություններ²⁷¹: Օրինակ, 1910 թ. մարտի 22-ին ակոհովի հասցրած վնասների թեմայով ֆրանսերեն լեզվով ընթերցասրահում բանախոսեց «Միջազգային հակաակոհողային ընկերակցության» նախագահ Ավգուստ Ֆորելը²⁷²:

Քաղաքում գործում էր նաև «Բյութանիա» սրահը, որտեղ 1911-ից տեղի էին ունենում պարահանդեսներ²⁷³: 1908 թ. Իզմիրի երիտասարդությունը ստեղծեց թատերախումբ²⁷⁴: Իզմիրի ՀՅԴ կուսակցության «Գեղարվեստասիրաց միությունն» ուներ իր թատերախումբը և նվագախումբը, որոնք պարբերաբար հանդես էին գալիս ելույթներով²⁷⁵: 1911 թ. հունվարին այս թատերախումբը հանդիսատեսին ներկայացրեց Ավետիս Ահարոնյանի «Արցունքի հովիտը» դրաման²⁷⁶: Ներկայացումից գոյացած 958 դահեկան գումարը ծախսվելու էր ՀՅԴ ակումբի կարիքների համար²⁷⁷: Իզմիրի հայերի մշակութային կյանքի մասին խոսուն մի փաստ է «Բյութանիա» գավառաթերթի 1911 թ. հունվարի 1-ի համարում հրատարակված «Գեղարուեստական միության» համերգի և ներկայացման հայերեն և ֆրանսերեն լեզուներով հայտագիրը: Այն տեղեկացվում էր, որ երեկոյին հնչելու են հայ և արևմտաեվրոպական երգահանների ստեղծագործություններ, իտալական օպերաներից մեներգեր, իսկ երգիչներին նվագակցելու էին կիթառա-

²⁷¹ Նույն տեղում, 20 յունուար 1911, Բ տարի, թիւ 3, էջ 360:

²⁷² Լրատու, «Բիւթանիա», Իզմիր, 7 ապրիլի 1910, Ա տարի, թիւ 10, էջ 118:

²⁷³ Նույն տեղում, 20 փետրուար 1911, Բ տարի, թիւ 7-8, էջ 391:

²⁷⁴ Սարգիսեան Յ., Գաւառական կեանք, Իզմիր, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 12-25 սեպտեմբեր 1909, թիւ 80:

²⁷⁵ Լրատու, «Բիւթանիա», Իզմիր, 20 փետրուար 1911, Բ տարի, թիւ 7-8, էջ 391:

²⁷⁶ Հայկական կեանքէն, Գաւառներ, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 18-31 յունուար 1911, թիւ 491:

²⁷⁷ Գաւառներ (Մեր սեփական թղթակցութիւններէ), «Ազատամարտ», Կ.Պոլիս, 18-31 յունուար, 1911, թիւ 491:

հարներ, սրինգահարներ, մանդոլինահարներ և կոնտաբասահարներ²⁷⁸:

Իզմիթում գործում էր ՄԴՀ կուսակցությունը, որի 1912 թ. հունիսի 10-ին կազմակերպած վիճակահանությունից գոյացավ 1500 ղուրուշ²⁷⁹: ՄԴՀ կուսակցության «Հնչակ» թատերասիրաց խումբը 1911 թ. դեկտեմբերին «Մասիս» թատրոնում ներկայացրեց Ավետիս Ահարոնյանի «Ղարիբը» թատերգությունը և գոհացուցիչ հասույթ ապահովեց²⁸⁰: Իզմիթի թատերասեր հասարկությունը սպասում էր Մարտիրոս Մնակյանի թատերախմբի հյուրախաղային ներկայացումներին, որոնք տեղի էին ունենալու «Մասիս» թատրոնում²⁸¹: 1910 թ. մարտին Իզմիթում հյուրախաղերով հանդես եկավ նաև Աբելյան-Ջարիֆյան թատերախումբը²⁸²: «Բյութանիա» գավառաթերթի 1911 թ. 5-6 համարներում տպագրված է «Քաջ Վարդան Մամիկոնյան կամ Ավարայրի արծիվը» ողբերգության ներկայացման հայտագիրը: Ներկայացումը պետք է տեղի ունենար Իզմիթի Ազգային թատրոնի շենքում և ուղեկցվեր երգերով²⁸³: 1910 թ. հունվարին այստեղ բանախոսությամբ հանդես եկավ հայտնի գործիչ Հարություն Շահիրիկյանը²⁸⁴: Իզմիթի Ազգային թատրոնի մասնախումբը, որը դերասարներին հրավիրում էր Կ.Պոլսից՝ 1911 թ. հրաժարվեց նրանց ծառայություններից և սկսեց ուժեղացնել տեղի սիրողական խմբերը²⁸⁵: 1912 թ. հունվարին քաղաքում ելույթ ունեցավ Կոմիտաս վարդապետի աշակերտներից Արշամ

²⁷⁸ Հայ Յեղ. Դաշնակցության Գեղարուեստական միության նուագահանդես-թատրոնը, «Բիւթանիա», Իզմիտ, 1 յունուար 1911, թիւ 1, էջ 336:

²⁷⁹ Ճգնաւոր, Թղթակցութիւններ, Ատաբազար, «Կոհակ», Կ.Պոլիս, 20 յունիս-3 յուլիս, 1912, թիւ 24, էջ 264:

²⁸⁰ Տեղական, «Բիւթանիա», Իզմիտ, 10 մայիս 1911, Բ տարի, թիւ 12, էջ 423:

²⁸¹ Թատրոն, «Բիւթանիա», Իզմիտ, 10 դեկտեմբեր 1911, թիւ 29-30, էջ 528:

²⁸² Լրատու, «Բիւթանիա», Իզմիտ, 24 մարտ 1910, Ա տարի, թիւ 9, էջ 105:

²⁸³ Աւարայրի ռազմադաշտը բեմի վրայ, «Բիւթանիա», Իզմիտ, 20 փետրուար 1911, Բ տարի, թիւ 5-6, էջ 380:

²⁸⁴ Ժամանումներ և վերադարձ, «Բիւթանիա», Իզմիտ, 20 յունուար 1910, Ա տարի, թիւ 3, էջ 10:

²⁸⁵ Լրատու, «Բիւթանիա», Իզմիտ, 1 փետրուար 1911, թիւ 4, էջ 367:

Մինասյանի կազմած երկսեռ երգչախումբը, որը կատարեց Կոմիտասի, Գրիգոր Սյունու, Արշամ Մինասյանի ստեղծագործությունները և ժողովրդական երգեր²⁸⁶: Համերգի հասույթը ծառայելու էր քաղաքի երկսեռ վարժարանի կարիքներին²⁸⁷:

Իզմիթի առաջին գեղանկարիչները հայեր են եղել: Նրանց շնորհիվ պահպանվել են օսմանյան շրջանի Իզմիթի շատ տեսարաններ: Հայտնի նկարիչներ են եղել Սարգիս Տեր-Ազարյանը, Օննիկ Տեր-Ազարյանը, Քրիստին Պարունակյանը, Ստեփան Գ. Զաքարյանը: Սարգիս Տեր-Ազարյանի Իզմիթի հայկական գյուղերը պատկերող 10 գեղանկարները անգլիական «Ռաֆայել Թուք և որդիներ» («Rapahel Tuch and Sons») հրատարակչական ընկերությունը հրատարակել է որպես փոստային նամականիշներ²⁸⁸:

Ինչպես համիդյան շրջանում, այնպես էլ օսմանյան սահմանադրության հռչակումից հետո, շարունակում էին հայերի սպանությունները ճանապարհներին, իսկ հանցագործները մնում էին անպատիժ²⁸⁹: Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանը կենտրոնական իշխանություններին ուղղված իր դիմումներով ու բողոքներով անընդհատ տեղեկացնում էր Իզմիթի գավառում հայերի նկատմամբ տեղական իշխանությունների անօրինականությունների մասին²⁹⁰: Օսմանյան 4-րդ զորամասի ստորաբաժանումներից մեկը 1912 թ. դեկտեմբերին հաստատվել էր Իզմիթի հայոց վարժարանում: Ազգային իշխանությունները ոչնչնչ չկարողացան անել այս որոշման դեմ՝ հարկադրված լինելով ընդհատել այդ ուսումնական

²⁸⁶ Մանր լուրեր (Մեր սեփական թղթակցություններէ), «Ազատամարտ», Կ.Պոլիս, 31 յունուար-3 փետրուար 1912, թիւ 802:

²⁸⁷ Նույն տեղում, 10-23 յունուար 1912, թիւ 792:

²⁸⁸ Köker O., նշվ. աշխ., p. 138.

²⁸⁹ Թղթակցութիւնք «Զայն հայրենեաց»ի: «Զայն հայրենեաց», Կ.Պոլիս, 20 փետրուար-5 մարտ, 1909, թիւ 18, էջ 182:

²⁹⁰ Մանր լուրեր, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 20 յունուար-2 փետրուար 1912, թիւ 801:

հաստատության կրթության գործընթացը²⁹¹: 1913 թ. հոկտեմբերին Իզմիրում ուստիկանությունը 3 օր շարունակ հայերից զենքեր էր բռնագրավում²⁹²: Նույն թվականի փետրվարի կեսերին 3 օր Ազգային վարժարանը դատարկելուց հետո, օսմանյան 4-րդ բանակի զինվորները կրկին այն գրավեցին: Զինվորական իշխանությունները կարող էին օգտագործել թուրքական վարժարանները, սակայն նրանք նախընտրեցին բռնություն կիրառել և ունահարել հայերի ազգային իրավունքները և խաթարել քաղաքի հայության կրթական կյանքը²⁹³: 1914 թ. հոկտեմբերին Իզմիրի կառավարիչը պաշտոնագրով Նիկոմիդիո թեմի առաջնորդ Ստեփանոս Հովակիմյանին պարտադրեց Ազգային երկսեռ վարժարանի շենքը տրամադրել պետական կարիքների համար: Հայ հանրությունը ստիպված էր աշակերտներին գրկել կրթությունից²⁹⁴: 1914 թ. հուլիսին Իզմիրի շրջակա գյուղերում և ճանապարհներին հաճախակի էին դարձել հայերի վրա հարձակումները, նրանց խոշտանգումները, սպանություններն ու կոդոպուտները: Չարագործները հիմնականում մահմադական գաղթականներն էին, որոնք չէին ձեռքալվում և մնում էին անպատիժ²⁹⁵: 1914 թ. մարտ ամսից Իզմիրի երկու մուտքերի վրա դրվեց *փաճ* կոչված տուրքը, որը գանձվում էր քաղաք մտնողների և քաղաքից դեպի շրջակա բնակավայրերը մեկնող կառքերից: Սա ծանր տուրք էր, մանա-

²⁹¹ Իզմիրի Հայոց վարժարանը զօրանոցի վերածուած, «Առաջամարտ», Կ.Պոլիս, 19 դեկտեմբեր 1912-1 յունուար 1913, թիւ 32:

²⁹² Զինհաւաքում Իզմիրի մէջ, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 24 հոկտեմբեր-6 նոյեմբեր 1913, թիւ 1346:

²⁹³ Իզմիրի Ազգային վարժարանը նորէն գրաւած, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 1913, 10-23 փետրուար, թիւ 1135:

²⁹⁴ Հայկական յուրեր: Կրթական գործը Իզմիրի մէջ, «Ժամանակ», Կ.Պոլիս, 15-28 հոկտեմբերի, 1914, թիւ 1962:

²⁹⁵ Անապահովութիւնը Իզմիրի շրջանին մէջ, «Ազատամարտ», 1914, Կ.Պոլիս, 15-25 յուլիս, թիւ 1558: Տե՛ս նաև Աւագակոյութիւնը Իզմիրի շրջանին մէջ, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 18 յունիս-1 յուլիս, 1914, թիւ 1541:

վանդ՝ աղքատ խավի համար²⁹⁶։ Իզմիրի հայ վաճառականներից մեկը 1914 թ. հունիսին հարձակման ենթարկվեց ավագակախմբի կողմից, և նրանից խլվեց 160 ոսկու արժողությամբ ապրանք²⁹⁷։ 1915 թ. հունվարին Իզմիրի հայոց թաղի մոտ գտնվող հային պատկանող հողի վրա տեղի իշխանությունները որոշեցին բանտ կառուցել։ Իզմիրի հայոց օրիորդաց վարժարանը 1915 թ. հունվարին վերածվեց զինանոցի²⁹⁸։ Ինչպես ամենուրեք, այնպես էլ Իզմիրի գավառում 21-45 տարեկան հայ տղամարդիկ 1914 թ. օգոստոսին զորակոչվեցին բանակ²⁹⁹։ 1915 թ. հուլիսի 24-ին Իզմիրի հայերը անսպասելի կերպով տեղահանվեցին, և սկսվեց նրանց վաճառատների և տների կողոպուտը, որից հետո կրակի տրվեց նրանց թաղը՝ 700 տներով³⁰⁰։ Թեև Թալեաթ փաշան Կ.Պոլսում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթուին խոսք էր տվել չտեղահանել Իզմիրի հայ կաթոլիկներին, սակայն տեղի իշխանությունները նրանց քաղաքից դուրս մեկ շաբաթ ճանապարհի վրա սպասեցնելուց հետո, տեղահանեցին դեպի Կոնիա և այլուր³⁰¹։

Իզմիրի և շրջակա հայկական բնակավայրերի հայերի տեղահանության ժամանակ գավառի թուրք պաշտոնատար անձինք բռնագարվեցին հայերի թողած գույքերը։ Նրանք սպառնալիքներով տիրացան Իզմիրի հայերին պատկանող 195 կառքի վրա բեռնված մանուֆակտուրայի գույքին, այդ թվում՝ 3-4 փակ գաղտնապա-

²⁹⁶ Թղթակից, Լուրեր Իզմիրից, «Դայլայլիկ», Կ.Պոլիս, 21 մարտ-3 ապրիլ 1914, թիվ 31։

²⁹⁷ Աւագակախմբին, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 20 յունիս-3 յուլիս, 1914, թիվ 1543։ Տե՛ս նաև Հայկական կեանք, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 12-28 յուլիս, 1914, թիվ 1558։

²⁹⁸ Ներքին լուրեր, «Ժամանակ», Կ.Պոլիս, 20 յուուար-2 փետրուար 1915, թիվ 2059։

²⁹⁹ Թղթակից, Կեանքը Իզմիրի մէջ, «Ժամանակ», Կ.Պոլիս, 8-21 օգոստոս 1914, թիվ 1894։

³⁰⁰ Թէոդիկ, Գողգոթա հայ հոգևորականութեան և իր հօտին աղէտալի 1915 տարիին, Նյու Եորք, 1985, էջ 337։

³⁰¹ Տրապիզոնի թեմին վիճակաւոր Յովհաննէս Արք. Նազլեանի յուշերը, Պէյրուք, 1960, էջ 399։

հարանին: Արմաշի Չարխափան Ս. Աստվածածին վանքից թուրք գյուղապետը 70.000-80.000 ոսկեդրամ արժողությամբ եկեղեցական գույքերը և գոհարեղենն ուղարկեց Ադաբազար՝ եղբորը: Նա Լքյալ գույքերի հանձնաժողովից յուրացրեց նաև 20.000 ոսկի արժողությամբ ապրանք, իսկ մնացյալը բաժանեց իր բարեկամներին: Արմաշի վանքի թանկարժեք վարագույրը յուրացրեց մեկ ուրիշ թուրք պաշտոնյա³⁰²: Օսմանյան փողերանոցում աշխատող մի հայ վկայել է, որ գավառների հայկական եկեղեցիներից կողոպտված ոսկյա և արծաթյա խաչերը, սկիհները, մասնատուփերը, գավազանները և այլ եկեղեցական առարկաները ձուլվել են փողերանոցում և ումանց համար դարձել խոհանոցային սպասք և իրենց երեխաների համար լորգարաններ³⁰³: Փողերանոցի տնօրեն չի հերքել, որ Սսի Մայրավանքից, Կեսարիայի վանքերից և Արմաշից բերված եկեղեցական թանկերժեք մետաղներից պատրաստված եկեղեցական առարկաներ բերվել են փողերանոց և ձուլվել³⁰⁴:

2.2.Իզմիրի գավառակի հայաբնակ բնակավայրերը և դրանց սոցիալ-տնտեսական վիճակը

Իզմիրի գավառի երկրորդ հայաքաղաքը **Պարտիզակն** էր, որը հիմնվել է XVI դարում Սեբաստիայի գավառի Պարտիզակ գյուղից եկած հայ գաղթականների ջանքերով³⁰⁵: Մինչև XX դարի սկիզբը Պարտիզակը պահեց ոչ միայն իր դիմագիծը այլև չընդունեց թուրք պաշտոնյաներ: Նրանք բավարարվեցին միայն պետական հարկե-

³⁰² Օ. Զ. և Ա. Ն., Ատաբազարի և Արմաշի թալանչիները, «Վերջին լուր», Կ.Պոլիս, 27 դեկտեմբեր 1918:

³⁰³ Հայ եկեղեցւոյ սպասները Փողերանոցին մէջ, «Ժամանակ», Կ.Պոլիս, 19 նոյեմբեր-2 դեկտեմբեր, 1918, թիւ 3372:

³⁰⁴ Փողերանոցին մէջ Հայոց ստացուածքները, «Ժամանակ», Կ.Պոլիս, 1-14 դեկտեմբեր, 1918, թիւ 3383:

³⁰⁵ Թորգոմ Արքեպս., Եղիշէ Պատրիարք Դուրեան, Երուսաղէմ, 1923, էջ 25:

րի գանձումով³⁰⁶: Մինչև 1912 թ. Պարտիզակը կառավարվել է հայ պաշտոնյաների կողմից: Վերջին քաղաքապետն էր գրող և հանրային գործիչ Հրանտ Տեր-Հակոբյանը³⁰⁷: Պարտիզակը գուտ հայաբնակ բնակավայր էր և 1909 թ. դրությամբ ուներ 9.000 բնակչություն³⁰⁸: 1912 թ. այս գյուղաքաղաքի բնակչությունը կազմված էր 1000 հայ ընտանիքներից³⁰⁹: Պարտիզակը գտնվում էր Իզմիրի ծոցի հարավային մասում, Կ.Պոլսից երկաթուղով՝ 4 և նավակով կես ժամ հեռավորության վրա, շրջապատված էր անտառներով, ուներ բերրի հող, հարուստ բուսականություն, ծովահայաց տեսարաններ³¹⁰: Պարտիզակը գյուղախմբի կենտրոնն էր, որի ենթակայության տակ էին գտնվում Տոնկել, Տոնկելի Սուրբբ, Օվաճըզ, Ժամավայր, Ջաքար հայկական, մեկ հունական և մահմեդական վրացիների երկու գյուղերը³¹¹: Պարտիզակն ուներ Մելմեն կամ Իսկելե կոչվող իր նավահանգիստը, որը գյուղաքաղաքը կապում էր տեղի բնակիչների կողմից կառուցած նեղ ճանապարհով³¹²: Այստեղ նավերը բեռնվում էին տեղական արտադրության փայտածխով, տախտակներով, վառելափայտով, չամիչով, թզի չրով, գինով, օղիով, ձեթով, ձիթապտղով, օճառով, խեցեգործական առարկաներով՝ Կ.Պոլիս տեղափոխելու և այնտեղ վաճառելու համար³¹³: Թուրքական աղբյուրը Պարտիզակը բնութագրելով որպես տնտեսապես զարգացած բնակավայր՝ հաստատում է գյուղաքաղաքում արտադրված Կ.Պոլսում վաճառվող վերընշված ապրանքների

³⁰⁶ Հայ ժողովրդի պատմություն, նշվ. աշխ., էջ 535-536:

³⁰⁷ Հայ Սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003, էջ 182:

³⁰⁸ Գիմ-Մեն, Պարտիզակի տնտեսական կեանքը, «Փարոս», Կ.Պոլիս, հոկտեմբեր 1909, Ա տարի, թիւ 9, էջ 140-141:

³⁰⁹ Ժամանակակիցները Կոմիտասի մասին, Երևան, 1960, էջ 258:

³¹⁰ Գեորգեան Կ., Պարտիզակի Ամերիկեան բարձրագոյն վարժարանը (Յուշեր հին ու լաւ օրերէն), «Ամէնուն տարեգիրքը», 1956, Գ տարի, Պէյրոս, 1956, էջ 187:

³¹¹ Տէր Յակոբեան Յ., Պարտիզակը խատուտիկ, Փարիզ, 1960, էջ 32:

³¹² Մխալեան Գ. Յ., Պարտիզակն ու պարտիզակցին, Գահիրէ, 1938, էջ 93:

³¹³ Մելքոնեան Ա. Ս., Հայկական Պարտիզակը յուշագրութիւններու ու յուշերու ընդմէջէն, «Տաթն հայագիտական տարեգիրք», թիւ 1, Հալէպ, 2008, էջ 474:

մասին³¹⁴: Պարտիզակցիները զբաղվում էին առևտրով և ըստ ֆրանսիական «Annuaire Oriental» տարեցույցի 1914 թ. համարի՝ Պարտիզակում գործում էին հայերին պատկանող 80 առևտրական տներ³¹⁵:

Պարտիզակցիները զբաղվում էին նաև հյուսնությամբ, կահույքագործությամբ, կոդովագործությամբ, կաշեգործությամբ, երկաթագործությամբ, ածխագործությամբ, դերձակությամբ, շերամապահությամբ, պղնձագործությամբ, կոշկակարությամբ, ներկարարությամբ և ապահովում էին իրենց ապրուստը: Օրինակ՝ պարտիզակցի հյուսներն օրական 20-30 դուրուշ գումար էին աշխատում, ինչը լավ վաստակ էր գյուղական միջավայրի համար: Պարտիզակցիները զբաղվում էին նաև ծխախոտագործությամբ: Պարտիզակի ծխախոտի տարեկան բերքը կազմում էր 40.000 կգ, ինչը 4.000-5.000 ոսկեդրամի շահույթ էր բերում գյուղաքաղաքին³¹⁶: Այստեղ զարգացած էր կոդովագործությանը և 1905 թ. կային 120 կոդովագործությամբ զբաղվող արհեստավորներ: Նրանց արտադրած կոդովները մեծ քանակությամբ վաճառվում էին ավանի շրջակա բնակավայրերում և Կ.Պոլսում³¹⁷: 1910 թ. Պարտիզակի կոդովագործները հիմնադրեցին «Կոդովագործ արհեստավորների ընկերությունը», որի նպատակն էր հիմնելով սեփական արհեստանոցները՝ բարձրացնել կոդովագործների օրավարձը, կրճատել աշխատանքի ժամերը, պաշտպանել այս արհեստով զբաղվողների տնտեսական և բարոյական շահերը: Ընկերությունն ուներ ավելի քան 60 անդամներ և 150 օսմանյան ոսկեդրամ դրամագլուխ և պահուստային գումար, 1913թ. Կ.Պոլսում բացել էր արհեստանոց և ջանում էր համախմբել

³¹⁴Թուրք լրագրող, Հայկական պատմությունը ջնջելն այնքան էլ հեշտ չէ, <https://times.am/?p=25840&l=am>

³¹⁵Չիթունի, Թուրքիոյ առևտր. հրապարակի տերը ո՞վ է, «Ժամանակ», Կ.Պոլիս, 15-28 յունիս, 1919, թիվ 3557:

³¹⁶ Միլալեան Գ. Յ., Պարտիզակն ու պարտիզակցին, Գահիրե, 1938, էջ 696-698, 706-707:

³¹⁷ Տեր Յակոբեան Յ., նշվ. աշխ., էջ 231:

կողովագործ արհեստավորներին և կենտրոնացած գործունեություն ծավալել³¹⁸:

Պարտիզակում հայերը զբաղվում էին նաև ածխագործությամբ, որն ուղարկվում էր Կ.Պոլսի արքայական փողերանոց: Փողերանոցի տնօրեններ Տյուզյանների և հատկապես Հարություն ամիա Պեզճյանի ջանքերով այս գործը դարձավ պարտիզակցիների մենաշնորհը, որը նպաստեց ոչ միայն Պարտիզակի, այլև նավահանգստի զարգացմանը³¹⁹:

Պարտիզակը հայտնի էր իր արտադրած շերամով³²⁰: 1899 թ. Իզմիրթում տեղի ունեցած շերամաբույծների ամենամյա մրցույթում հաղթող ճանաչվեցին պարտիզակցի այն հնդաբույծները, որոնք ավարտել էին Բուրսայի շերամաբուծական վարժարանը: Նրանց շնորհիվ Պարտիզակում շերամաբուծությունը մեծ առաջընթաց և զարգացում սկսեց ապրել³²¹: Գյուղաքաղաքը շրջապատված էր թթաստաններով, որը շերամաբուծությամբ զբաղվելու լայն հնարավորություն էր տալիս: Պարտիզակի շերամի բերքը կազմում էր շուրջ 60.000-100.000 կգ, որը գյուղացիներին ապահովում էր 12.000-20.000 օսմանյան ոսկեդրամի վաստակ: Շերամաբուծությունը Պարտիզակի տնտեսության մեծագույն հասույթն էր ապահովում³²²:

Պարտիզացիները զբաղվում էին նաև մետաքսագործությամբ: Կ. Տեր-Կարապետյանին էր պատկանում 90 անիվ ունեցող մետաքս արտադրող մանարանն ուներ 147 աշխատողներ, որոնց օրական աշխատավարձը 1.5 դուրուշ էր կազմում, իսկ Խ.

³¹⁸ Գասապեան Մ. (Ֆարհատ), նշվ. աշխ., էջ 207:

³¹⁹ Տեր Պետրոսեան Յ., Հայերու սատարը թուրք մշակոյթին և տնտեսութեան, Գահիրէ, 1976, էջ 188:

³²⁰ Кеворкян Р., նշվ. աշխ., стр 624 .

³²¹ Ազգային քրոնիկ, «Բիւզանդիոն», Կ.Պոլիս, 2-21 յուլիս 1899, թիւ 842:

³²² Մխալեան Գ. Յ., նշվ. աշխ., էջ 693-695:

Ավետյանի պատկանող 98 անիվ ունեցող մետաքսի մանարանում աշխատող 134 բանվորներն օրական 2-3 դուրուշ էին ստանում³²³:

Պ. Գուրյանին պատկանող Պարտիզակի «Նոր պանդոկը» կառուցված էր ծովափի գեղեցիկ վայրում և իր հաճախորդներին առաջարկում է բարձրակարգ սպասարկում³²⁴: 1910 թ. բացված «Պարտիզակ» հյուրանոցն իր այցելուների համար ուներ բոլոր հարմարավետությունները³²⁵: Մանրավաճառ Ղազարոս Քանչեյանի խանութը մասնագիտացած էր հիմնականում երեխաների և դպրոցականների համար: Միհրան Կերեյանը բարձրորակ տարբեր ապրանքներ էր առաջարկում իր խանութ այցելող հաճախորդներին³²⁶: Հարություն Քյուքճյանի խանութն ուներ կոշիկների մեծ ընտրանի³²⁷: Դերձակ Կարապետ Կապեյանն իր խանութ էր հրավիրում բարձրակ կտորներ ցանկացողներին և առաջարկում մասնագիտական հմտությունները³²⁸: Բուրսայի Շերամաբուժական վարժարանի շրջանավարտ պարտիզակցի հնդաբույժ Պողոս Գուրյանն իր ծառայություններն էր առաջարկում շերամաբույծներին³²⁹:

Տակավին 1840-ական թթ. Պարտիզակում գործում էին վաճառականական ընկերություններ³³⁰: 1908-ից գյուղաքաղաքում սկսեցին ձևավորվել տարբեր տնտեսական ընկերություններ: 1908 թ. հիմնվեց «Հյուսների ընկերությունը», որի նպատակն էր ձեռք բերել շենքեր ու հողատարածքներ և կատարել բանակային պատվերներ: 1911 թ. ընկերությունն ուներ 1300 օսմանյան ոսկեդրամ դրամագլուխ և 600 ոսկեդրամ պահուստային գումար: Անդամների մուտքի գումարը կազմում էր 5 և շաբաթավճարը՝ 1 դուրուշ: Ընկերու-

³²³ Գասապեան Ս. (Ֆարիատ), նշվ. աշխ., էջ 211:

³²⁴ Կոհակ, Կ. Պոլիս, 11-23 օգոստոսի, 1912, թիվ 33, էջ 374:

³²⁵ Օթել Պարտիզակ, «Պարտիզակ», Կ. Պոլիս, հոկտեմբեր 1910, Բ տարի, թիվ 3, ազդերի էջ:

³²⁶ «Պարտիզակ», Կ. Պոլիս, հոկտեմբեր, 1909, Ա տարի թիվ 1, էջ 50:

³²⁷ Նույն տեղում:

³²⁸ Նույն տեղում, ապրիլ, Բ տարի, թիվ 4, էջ 52:

³²⁹ Նույն տեղում, հոկտեմբեր, 1911, Ա տարի 1909, թիվ 1, էջ 50:

³³⁰ Հայ ժողովրդի պատմություն, նշվ. աշխ., էջ 535-536:

թյունը զբաղվում էր ատաղձի և նպարեղենի մեծաքանակ առևտրով³³¹: «Հյուսնների ընկերությունը» 1910 թ. դեկտեմբերին պարտքով 490 ոսկի տրամադրեց իր անդամներին, առևտրականներին և երկրագործներին: Այն ցածր տոկոսներով գումարներ էր տալիս նաև դրա կարիքն ունեցող տնտեսավարողներին: Ընկերությունը ծրագրել էր Պարտիզակի նավահանգստի մոտ կառուցել պանդոկ, շենքեր, հանրային պարտեզ և դրանք շահագործել ու չնչին տոկոսով գումարներ տրամադրել գործարար մարդկանց և զարկ տալ գյուղաքաղաքի տնտեսական բարգավաճմանը և նպաստել պարտիզակցիների բարեկեցությանը³³²:

Տարիներ շարունակ Պարտիզակ եկած բաժնետիրական և ապահովագրական տարբեր ընկերությունները տեղի գարծակալների միջոցով պարտիզակցիներից գումարներ էին կորզում: Արդյունքում, նրանցից որոշները սնանկանալով և կամ անհետանալով՝ իրենց հետ տանում էին պարտիզակցիներից խաբեությամբ վերցված գումարները: «Հյուսնների ընկերությունը» 1911 թ. ստեղծեց իր խնայողական գանձանակը, որպեսզի կարողանա պայքարել այս երևույթների դեմ: Խնայողական գանձանակի կազմավորողների նպատակն էր ստեղծել որաշակի գումար և ցածր տոկոսաչափով տրամադրել առևտրականներին և տարբեր տնտեսական գործունեություն ծավալող անձերին, իսկ հետագայում ավելացնելով իր գումարները՝ ստեղծել գյուղական դրամատուն: Այս գաղափարը մեծ հավանություն գտավ պարտիզակցիների շրջանում և կարճ ժամանակահատվածում ձեռք բերվեց խնայողական գանձանակի մեծաթիվ պարտատոմսեր³³³: Գանձանակն ընդունում էր 10 փարայից մինչև 5.000 դուրուշ գումար և հանձն էր առնում 4-ից

³³¹Գասապեան Մ. (Ֆարիատ), նշվ. աշխ., էջ 203:

³³² Պարտիզակի Հիւսններու (Տիւկէր) ընկերութիւնը, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 1-14 դեկտեմբեր 1910, թիւ 453:

³³³Աշխատաւորական, Խնայողական սնտուկ, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 17 փետրուար-2 մարտ 1911, թիւ 517: Տե՛ս նաև Լրատու, «Բիւթանիա», Բզմիտ, 1 փետրուար 1911, թիւ 4, էջ 367:

մինչև 6 % վճարել ավանդ թողնված գումարների դիմաց: Այն խնայողական դրամարկղի դեր էր կատարում և մատչելի տոկոսներով գումար էր տրամադրում ժողովրդին³³⁴: Հիշատակության է արժանի այն փաստը, որ պարտիզակցի երեխաներներն իրենց ծնողներից անուշեղենի համար ստացած գումարները կամովին հանձնում էին այս ընկերության գանձանակին³³⁵:

Պարտիզակի «Խնայողական սնդուկ» հիմնվել է 1910 թ.: Խնայողություններ էր ընդունում 10 փարայից սկսած³³⁶: 1911 թ. մայիսին գյուղաքաղաքի մի խումբ երիտասարդների ջանքերով կազմավորեց «Սպառողական միությունը» և սկսեց իր գործունեությունը՝ խանութ բացելով³³⁷: Միության անդամները 20 դահեկան մուտքի գումար և շաբաթական 40 փարա անդամավճար էին մուծում³³⁸: Միության գործունեությունը մեծ գնահատանքի արժանացավ տեղացիների կողմից³³⁹: Հիմնադիր անդամները 400 էին, իսկ գոյացած դրամագլուխը՝ 400 ոսկի³⁴⁰: Ընկերությունը տեղի և Կ.Պոլսի մամուլով հանրությանը ներկայացրեց 1913 թ. իր մեկ տարվա տնտեսական գործունեության հաշվեկշիռը, որի արդյունքները գոհացուցիչ էին³⁴¹: Այնուհետև միությունն ամփոփ կերպով հրապարակայնացրեց իր երեք տարվա գործունեության արդյունքները, որոնց համաձայն՝ առաջին տարում միությունը ստացել էր

³³⁴ Տեղական լուրեր, «Փարոս», Կ.Պոլիս, յունուար 1911, Ա տարի, թիւ 12, էջ 193:

³³⁵ Պարտիզակ 24 Յունուար 1911 (Մեր մասնաւոր աշխատակիցէն), 24 յունուար 1911, «Բիւթանիա», Իզմիտ, 20 փետրուար 1911, թիւ 5-6, էջ 378:

³³⁶ Դադայան Խ., նշվ. աշխ., էջ 81:

³³⁷ Լուրեր Պարտիզակէն, «Բիւզանդիոն», Կ.Պոլիս, 26 նոյեմբեր-9 դեկտեմբեր 1911, թիւ 4598:

³³⁸ Մանր լուրեր, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 4-17 մայիս 1911, թիւ 578:

³³⁹ Թղթակցութիւն, Պարտիզակ, 1911 5 օգոստոս, «Բիւթանիա», Ատա-Բազար, 21 օգոստոսի 1911, թիւ 20-21, էջ 492:

³⁴⁰ Դադայան Խ., նշվ. աշխ., էջ 78:

³⁴¹ Պարտիզակի Սպառողականը, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 7-17 յունիս 1914, թիւ 1529:

77, երկրորդում՝ 215, իսկ երրորդում՝ 168 ոսկեդրամի զուտ շահույթ³⁴²:

Պարտիզակի գյուղապետ Հրանտ Տեր-Հակոբյանի նախաձեռնությամբ և տեղի երիտասարդության օժանդակությամբ 1909 թ. դեկտեմբերին հիմնվեց «Գյուղատնտեսական միությունը», որի անդամների նպատակն էր դասախոսությունների միջոցով գյուղացիությանը ծանոթացնել երկրագործության նորագույն մեթոդներին, պաշտպանել նրանց շահերը, զարկ տալ մեղվաբուծության, շերամաբուծության, անասնապահության, հավաբուծության զարգացմանը, նպաստել ժողովրդի տնտեսական վիճակի բարելավմանը և արմատախիլ անել աղքատությունը: Միության անդամների թիվն անցնում էր 1000-ը, իսկ ամդամակցությունից առաջացած գումարը՝ ավելի քան 3.000 օսմանյան ոսկեդրամ³⁴³: 1910 թ. զարանից սկսած Պարտիզակի մի խումբ երիտասարդներ սկսեցին բանախոսություններ կարդալ գյուղատնտեսական թեմաներով՝ պարտիզակցիներին ծանոթացնելով գյուղատնտեսության նորագույն մեթոդներին³⁴⁴: 1910 թ. նոյեմբերին միությունը ներկայացրեց իր հաշվետվությունը, որից պարզ դարձավ, որ այն կարողացել է զգալի օգուտներ ապահովել Պարտիզակի հանրությանը: Միության անմիջական աջակցությամբ սկսվել էր գյուղատնտեսական նոր կուլտուրաների մշակությունը³⁴⁵: Միության կարգադրությամբ և աջակցությամբ սկսվեց մշակվել շաքարեղեգ, տնկվեցին կեռասի, տանձի, սերկևիլի և այլ պտղատու 4.000 ծառեր և սերմացու բաժանվեց գյուղացիներին: Տեղի երկրագործները լավ արդյունքներ գրանցեցին և Պարտիզակի հանրություն շատ զոհ էր «Գյուղա-

³⁴²Նույն տեղում, 22 յունիս-5 յուլիս 1914, թիւ 1545:

³⁴³ Գիւմ-Մէն, Պարտիզակի տնտեսական կէանքը, «Փարոս», Կ.Պոլիս, հոկտեմբեր 1909, Ա տարի, թիւ 9, էջ 140-141:

³⁴⁴ Լրատու, «Բիւթանիա», Իզմիտ, 1 փետրուար 1910, Ա տարի, թիւ 4, էջ 46:

³⁴⁵Ֆարհատ, Պարտիզակի Գիւղատնտեսական միութիւնը, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 10-23 նոյեմբեր 1910, թիւ 435:

տնտեսական միության» գործունեությունից³⁴⁶: Ընկերության մեկ-ամյա գործունեության արդյունքում զգալիորեն աճել էր գյուղատնտեսական շատ մթերքների բերքատվությունը³⁴⁷:

1911 թ. հիմնվեց նաև Պարտիզակի «Երկրագործական և առևտրական սնտուկը», որը ցածր տոկոսադրությամբ գումարներ էր տրամադրում երկրագործներին, արհեստավորներին և արտադրական ձեռնարկություններին: 1911 թ. հուլիսին իր 108.000 դուրուշ դրամագլխից գյուղատնտեսությամբ զբաղվողներին և արհեստավորներին 2000 հոգու գումարներ տրամադրեց³⁴⁸: 1912 թ. անդամների վճարումներից գոյացած դրամագլուխը կազմում էր 42.660 դուրուշ: 1911-1912 թթ. փոխառության էր տրված 126.460 դուրուշ, որի շահը կազմել էր 5.667 դուրուշ: 1911 թ. Պարտիզակում հիմնվեց «Համագործակցական ընկերությունը», որի նպատակն էր հետապնդել իր անդամների շահերը: Անդամների մուտքի գումարը կազմում էր՝ 20, իսկ շաբաթավճարը 1 դահեկան: Ընկերության հիմնադիր անդամները 100 հոգի էին: Կային նաև ոչ հիմնադիր անդամներ: Ընկերությունն ուներ ավելի քան 400 ոսկի դրամագլուխ: Իր նպատակների իրագործման համար ընկերությունը բացել էր խանութ և շահագործում էր փուռ³⁴⁹:

Վաշխառուները դեմ պայքարելու նպատակով, որոնք 40-50 տոկոսով էին գումարներ տրամադրում դրամի կարիք ունեցողներին՝ մի խումբ պարտիզակցիներ հիմնեցին «Պարտիզակի ժողովրդային պանքայի» հիմնականությունը: Կարճ ժամանակ անց այն ուներ 1.000 ոսկեդրամ դրամագլուխ և մատչելի տոկոսներով գումարներ էր տրամադրում տնտեսությամբ զբաղվող անձանց:

³⁴⁶ Թղթակից, Թղթակցութիւններ, «Բիւթանիա», Իզմիտ, 1 մայիս 1910, Ա տարի, թիւ 13, էջ 152:

³⁴⁷ Գիւմ-Մէն, Պարտիզակի տնտեսական կեանքը, «Փարոս», Կ.Պոլիս, հոկտեմբեր 1909, Ա տարի, թիւ 9, էջ 140-141:

³⁴⁸ Լուրեր Պարտիզակէն, «Բիւզանդիոն», Կ.Պոլիս, 26 նոյեմբեր-9 դեկտեմբեր 1911, թիւ 4598:

³⁴⁹ Գասապեան Մ. (Ֆարիատ), նշվ. աշխ., էջ 205-206:

Այս հիմնարկությանը գործեց մինչև 1915 թ. իր մեծ աջակցությունը բերեց գարծարարներին և նպաստեց պարտիզակցիների տնտեսական բարգավաճմանը³⁵⁰:

Ժողովրդական բանկի գործունեությունից ոգևորված Պարտիզակում հիմնվեց «Շոգենավային ընկերությունը», որը 30 հարուստ անդամների աջակցությամբ ձեռք բերեց 1.000 օսմանյան ոսկեդրամ, նորոգեց ազգապատկան երեք նավերը, 700 ոսկեդրամով պոլսեցի Ագարյաններից գնեց «Արարատ» շոգենավը և մինչև 1915 թ. ապահովեց ժողովրդի սպասարկությունը: Ընկերության շահույթի մեծ մասը ծառայում էր գյուղաքաղաքի կրթական հաստատություններին:

«Հանրային պարտեզի ընկերակցությունը» ստեղծեց հասարակական զբոսայգի, ջուր անցկացրեց այնտեղ և այգի այցելողների հանգստյան համար ստեղծեց ամեն պայմանները: Մինչև 1915 թ. այս այգին պարտիզակցիների ժամանցի նախընտրելի վայրն էր: Ընկերակցությունը որպես ազգապատկան հողատարածքի վարձակալ՝ որոշակի գումար էր վճարում ազգային ընդհանուր գանձանակին³⁵¹:

Պարտիզակի Ս. Հակոբ եկեղեցին կառուցվել է 1625 թ.-ին և վերակառուցվել է 1724 և 1830 թթ.: Եկեղեցու վերջին կառուցման համար ժողովուրդը հանգանակեց 331.500 դուրուշ, որն այն օրերին հավասար էր 3.000 թուրքական հնչուն ոսկուն, որից միայն 2000 ոսկին նվիրաբերել էր արքունի փողերանոցի տնօրեն Հարություն ամիրա Պեզճյանը³⁵²: Եկեղեցին սյունազարդ էր և նման էր Կ.Պոլսի հայկական մեծ եկեղեցիներին: Պարտիզակի Ս. Հակոբ եկեղեցու Ազգային մատենադարանում պահվել են 1584թ. Երուսաղեմում ընդօրինակված Ավետարան, 1479 թ. Երուսաղեմում ընդօրինակված Աղոթամատույց և Պատարագամատույց, 1600 թ. Եվդոկիայում

³⁵⁰ Մխալեան Գ. Յ., նշվ. աշխ., էջ 586-588:

³⁵¹ Նույն տեղում, էջ 588-592, 595-598:

³⁵² Փաթուքեան Վ. Օ., Պարտիզակ հայաքաղաքը, <https://azator.gr/?p=522>

ընդօրինակված Պարզատումար, 1646-ին Կոստանդնուպոլսում ընդօրինակված մագաղաթյա Ավետարանը, 1677 թ. Կարինում ընդօրինակված Ավետարան, 1703 թ. Եվդոկիայում ընդօրինակված գեղեցիկ մանրանկարներով Մաշտոց, 1806 թ. մանրանկարներով հարուստ Կոտուց անապատում ընդօրինակված Քարոզգիրք³⁵³:

Պարտիզակի Վերի Արտի Ս.Թագուր եկեղեցին սկսվել էր կառուցվել 1874-ին, սակայն անավարտ էր մնացել: Իզմիրթի թեմում կատարված ընդհանուր հանգանակության արդյունքում՝ շինարարությունն ավարտվեց 1913 թ. օգոստոսին և Ս. Աստվածածնի տոնին կատարվեց եկեղեցու օծման արարողությունը: Այդ առիթով պոլսաբնակ մի հայ եկեղեցուն նվիրել էր մեծ ոսկեզօծ ժամացույց, Մկրտիչ եպիսկոպոս Աղավնունին՝ 5 անգլիական ոսկի և 50-60 օսմանյան ոսկեդրամ արժողությամբ ծածկոց³⁵⁴: Պարտիզակում գործում էր Ս.Մինաս փայտաշեն մատուռը, որն ուխտատեղի էր³⁵⁵: Այստեղ գործել են ոչ միայն Հայաստանյայց Առաքելական, նույնպես և կաթոլիկ և բողոքական եկեղեցիներ³⁵⁶:

Պարտիզակի Ներսեսյան-Շուշանյան երկսեռ վարժարանը հիմնվել է 1820 թ.³⁵⁷: 1901 թ. տվյալներով՝ վարժարանում սովորում էր 1008 աշակերտ, որոնց դասավանդում էին 17-ն ուսուցիչներ, վարժարանի ամսական ծախսը կազմում էր 3337 դուրուշ գումար, որն ամբողջությամբ տրամադրվում էր Թաղական խորհրդի գանձանակից³⁵⁸: Եղիշե վարդապետ Դուրյանը 1880-ից մինչև 1890 թ. որպես տեսուչ-քարոզիչ պաշտոնավարել է Պարտիզակում: Նրա պաշտոնավորման շրջանից սկիզբ դրվեց Պարտիզակի կրթական

³⁵³ Ցուցակ հայերեն ձեռագրաց Նիկոմիդիոյ և շրջակայից կազմեց՝ Ստեփաննոս Արքեպս. Յովակիմեան առաջնորդ վիճակին Նիկոմիդոյ 1903ին, Վենետիկ, 1969, էջ 69-72:

³⁵⁴ Հայկական լուրեր, «Ժամանակ», Կ.Պոլիս, 14-27 յուլիս, 1913, թիւ 1516:

³⁵⁵ Մխալեան Գ. Յ., նշվ. աշխ., էջ 75:

³⁵⁶ Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 9, Երևան, 1983, էջ 218:

³⁵⁷ Գասապեան Մ. (Ֆարիատ), նշվ. աշխ., էջ 261:

³⁵⁸ Վիճակացոյց գաւառական ազգային վարժարանանց Թուրքիոյ: Ա տետր, նշվ. աշխ., 3-րդ աղյուսակ:

կյանքի վերելքին: Վարդապետի նախաձեռնությամբ կառուցվեց Ազգային վարժարանի նոր եռահարկ բարեկարգ շենքը: Ազգային վարժարանն իր կրթական մակարդակը բարձրացնելով՝ սկսեց մրցել հայ բողոքականների Պարտիզակի Բարձրագույն վարժարանի հետ: Նրա քաջալերանքով հիմնվեցին լսարանական և մշակութային ընկերություններ, դպրոցական բեմերում ներկայացվեցին Մկրտիչ Պեշիկթաշլյանի և Պետրոս Դուրյանի ազգային պատմական ողբերգությունները³⁵⁹: Եղիշե վարդապետ Դուրյանի պաշտոնավարության ընթացքում աշակերտների թիվը հասավ 1000-ի³⁶⁰:

1907 թ. հոկտեմբերին Ներսեսյան-Շուշանյան վարժարանը ունեցավ մշտական հոսող ջուր, որը խողովակներով բերվել էր գյուղաքաղաքի բարերար Ասատուր Աբելյանի նվիրաբերած 100 ոսկեդրամով³⁶¹: 1907 թ. հուլիսին վարժարանի նորակառույց սրահում նշվեց այս ուսումնական հաստատության հոբելյանը, որի առիթով վարժարանը նախկին սաներից 20 ոսկեդրամ նվիրատվություն ստացավ³⁶²: Այդ գումարներով կառուցվելու էր վարժարանի նոր և շքեղ սրահը³⁶³: Պարտիզակի մանկապարտեզի խնամակալությունը 1907 թ. ապրիլին կազմեց տիկնանց հանձնախումբ, որը կազմակերպեց հանգանակություն՝ նոր շենքի կառուցման համար³⁶⁴:

Պարտիզակի նավահանգստով ձգվող խճուղին նորոգության կարիք ուներ³⁶⁵: Նավամատույցի նորոգության նպատակով տեղի հայությունը 1911 թ. սկզբներին տրամադրեց 200-250 օսմանյան

³⁵⁹ Մակարեան Ա. Յ., նշվ. աշխ., 302-303:

³⁶⁰ Մխալեան Գ. Յ., նշվ. աշխ., էջ 420:

³⁶¹ Քրոնիկ, «Մանգումէի էֆքեար», Կ.Պոլիս, 29 հոկտեմբեր-11 նոյեմբեր 1907, թիւ 1955:

³⁶² Քրոնիկ, Պարտիզակի վարժարանին յոբելեանը, «Մանգումէի էֆքեար», Կ.Պոլիս, 11-24 յուլիս 1907, թիւ 1861:

³⁶³ Պարտիզակի վարժարանին հանդէսը, «Մանգումէի էֆքեար», Կ.Պոլիս, 17-30 յուլիս 1907, թիւ 1866:

³⁶⁴ Քրոնիկ, «Մանգումէի էֆքեար», Կ.Պոլիս, 3-16 ապրիլի 1907, թիւ 1777:

³⁶⁵ Թղթակից, Թղթակցութիւններ, «Բիւթանիա», Իզմիտ, 1 հոկտեմբեր 1910, թիւ 26, էջ 284:

ոսկեդրամ, ինչից անմիջապես հետո մեծ թափով սկսվեցին նորոգության աշխատանքները: Նավամատույցից ստացված գումարները տրամադրվելու էին տեղի ազգային դպրոցների զարգացման գործին³⁶⁶: 1906 թ. իզմիթցի Գրիգոր Տոպաչյանն իր ազարակը և տունը նվիրեց Պարտիզակի տղաների որբանոցին³⁶⁷:

Պարտիզակում բողոքական քարոզիչները սկսեցին հայտնվել 1852-ից: 1855 թ. կառուցվեց եկեղեցին, որի արժեքը կազմում էր 1.000 ոսկեդրամ: 1902 թ. 445 ոսկու արժողությամբ կառուցվեց նոր եկեղեցի: Այս գումարի զգալի մասը հատկացրել էր տեղի ժողովուրդը: Բողոքական հոգևոր պաշտոնյաները ամսական ստանում էին 4-6 ոսկեդրամ աշխատավարձ, որի կեսը տրամադրում էին պարտիզակցիները: Ժողովրդի հոգևոր ընդհանուր տուրքը կազմում էր 60 ոսկեդրամ, որից 36-ը վճարում էր ժողովուրդը, իսկ 24-ը՝ «Ամերիկյան պորտ» ընկերությունը: 1905 թ. Պարտիզակի բողոքականներն ունեին աղջիկների ու տղաների վարժարաններ և մանկապարտեզ, ուր հաճախում էին 30-65 երկսեռ փոքրիկներ³⁶⁸: 1906 թ. Պարտիզակի հայ բողոքականների թիվը 500 էր և կազմված էր 100 ընտանիքներից³⁶⁹:

1879 թ. սկզբներին «Ամերիկյան պորտ» ընկերության կողմից Պարտիզակի մի փոքրիկ տան մեջ բացեց Բարձրագույն գիշերօթիկ վարժարանը, սակայն մի քանի ամիս անց այն փոխադրվեց ավելի մեծ շենք³⁷⁰: Սկզբնական շրջանում վարժարանը «Ամերիկյան պորտ»-ից նպաստներ էր ստանում, որը հետզհետե նվազեց և վարժարանի տեսչությունը ստիպված եղավ աստիճանաբար ավե-

³⁶⁶ Մանր լուրեր (Մեր սեփական թղթակցություններէ), «Ազատամարտ», Կ.Պոլիս, 8-26 ապրիլ, 1911, թիւ 548:

³⁶⁷ Թղթակից, Հայ-բողոքականներէն, «Մանգումէի էֆքեար», Կ.Պոլիս, 28 օգոստոս-8 սեպտեմբեր 1906, թիւ 1589:

³⁶⁸ Մակարեան Ս., նշվ. աշխ., 174-175:

³⁶⁹ Ատանալեան Կ. Պ., Յուշարձան Հայ Աւետարանականաց և Աւետարանական եկեղեցւոյ (Քննական ծանօթութիւններով), Ֆրէզնօ, 1952, էջ 240:

³⁷⁰ Յայտադիր Բարձրագոյն վարժարանի Պարտիզակ 33րդ տարեշրջան 1912-1913, էջ 9:

լացնել ուսման վարձը: Վարժարանն ուներ արհեստանոց, որտեղ աշխատում էին այն աշակերտները, ովքեր հնարավորության չունեին վճարել ուսման վարձը: 1898 թ. կառուցվեց վարժարանի նոր շենքը, որտեղ ուսանում էին արդեն 120 գիշերօթիկ աշակերտներ: Այնուհետև հաջորդաբար կառուցվեցին «Չեյմպլըրս հոլ», «Նյունըմ հոլ» և «Բիրս հոլ» մասնաշենքերը և վարժարանի տնօրենի երկհարկանի տունը³⁷¹: Բարձրագույն վարժարանի գիշերօթիկ բաժնի աշակերտների ուսման վարձը կազմում էր 16 օսմանյան ոսկեդրամ, իսկ երաժշտական գուրծիքների վրա ուսուցումը՝ 1,5 ոսկեդրամ³⁷²: Սաները ևս 1 ոսկեդրամ էին վճարում գրքերի և գրենական պիտույքների համար, իսկ Սուրբծննդյան արձակուրդները վարժարանում անցկացնելու համար աշակերտը պարտավոր էր վճարել 60 դահեկան³⁷³: Ֆրանսերեն և թուրքերեն լեզուները խորապես դասավանդելու նպատակով վարժարանի վարչությունը ընտրում էր այս լեզուներին տիրապետող լավագույն մասնագետներին³⁷⁴:

Բարձրագույն վարժարանը 1909 թ. դրությամբ ուներ 700 գիրք, որոնք հայ մատենագրության հին ու նոր դասականների, հունական, իտալական, գերմանական, ֆրանսիական և անգլիական գրականության բոլոր դասական հեղինակների երկեր էին³⁷⁵: Պարտիզակի Բարձրագույն վարժարանն ուներ նաև իր երգչախումբը³⁷⁶: 1910 թ. տվյալներով՝ վարժարանի 200 շրջանավարտ-

³⁷¹Յովսեփ Տեր-Ստեփանեան, Համառոտ պատմություն Պարտիզակի Բարձ. վարժարանի, «Պարտիզակ», Կ.Պոլիս, հոկտեմբեր 1909, Ա տարի, թիւ 1, էջ 22-23:

³⁷² Բարձրագույն վարժարան Պարտիզակ, «Մանգումէի էֆքեար», Կ.Պոլիս, 14-27 յուլիս, 1907, էջ 1864:

³⁷³ «Արևելք», Կ.Պոլիս, 15 յուլիս 1910, թիւ 7365:

³⁷⁴ «Ժամանակ», Կ.Պոլիս, 12-25 օգոստոս 1909, թիւ 252:

³⁷⁵ Գրատուն, «Պարտիզակ», Կ.Պոլիս, հոկտեմբեր 1909, Ա տարի, թիւ 1, էջ 37:

³⁷⁶ Թղթակից, Թղթակցությունք, Պարտիզակ, «Կոհակ», Կ.Պոլիս, 1913, 22 յունիս, թիւ 27, էջ 227:

ներից 70-ը ընտրել էին ուսուցչական ասպարեզը³⁷⁷: Իր գոյության 35 տարիների ընթացքում վարժարանը տվել է 280 շրջանավարտ, իսկ 2000 աշակերտներ չեն ավարտել վարժարանի ամբողջ դասընթացը³⁷⁸: Վարժարանում բարձր մակարդակի վրա էր մարմնամարզությունը: 1908 թ. Պարտիզակի Բարձրագույն վարժարանի վարչությունը ձեռք բերեց ընդարձակ հողակտոր, որը պետք է ծառայեր աշակերտների դաշտային մարզանքների համար³⁷⁹: 1911 թ. մայիսին և հունիսին վարժարանի տարբեր դասարանների ֆուտբոլային թիմերի և տարբեր մարզաձևերով դաշտային մրցումներ կազմակերպվեց: Այս կրթական հաստատության ֆուտբոլի հավաքականը պատրաստվում էր մրցել Կ.Պոլսի և այլ քաղաքների ֆուտբոլային խմբերի հետ³⁸⁰: 1912 թ. տեղի ունեցավ տարբեր մարզաձևերի դաշտային մրցահանդես³⁸¹ և անկացվեցին օլիմպիական խաղեր³⁸²:

Պարտիզակի Բարձրագույն վարժարանին կից գործում էր Լ. Ֆավր կրթարանը, որի ուսման վարձը կազմում էր 12 օսմանյան ոսկեդրամ: Գրենական պիտուքների համար անհրաժեշտ էր վճարել ևս 20 դահեկան³⁸³: Սուրբճննդյան տոների արձակուրդը կրթարանում անցկացնելու համար աշակերտը հավելյալ պետք է վճարեր 40 դահեկան³⁸⁴: Այս կրթարանի հիմնադիր շվեյցարացի մեծահարուստ Լեոպոլդ Ֆավրն էր, ով համիդյան կոտորածներից

³⁷⁷Սօթեր և լուրեր, «Պարտիզակ», Կ.Պոլիս, ապրիլ 1910, Ա տարի, թիւ 2, էջ 37:

³⁷⁸ Բարձրագույն վարժարան Պարտիզակ, «Պարտիզակ», Կ.Պոլիս, ապրիլ 1914, Զ տարի, թիւ 11, էջ 49:

³⁷⁹ Բարձրագույն վարժարանի ներքին կեանքէն, «Պարտիզակ», Կ.Պոլիս, հոկտեմբեր 1909, Ա տարի, թիւ 1, էջ 40:

³⁸⁰ Ֆուտպոլի մրցումներ Պարտիզակի մէջ, «Մարմնամարզ», Կ.Պոլիս, 1911, 1 յուլիս, թիւ 5, էջ 157:

³⁸¹ Դաշտային մրցահանդես Պարտիզակի մէջ, «Մարմնամարզ», Կ.Պոլիս, 1912, 1 յուլիս, թիւ 13, էջ 239:

³⁸² Ողիմպական խաղեր Պարտիզակի մէջ, «Մարմնամարզ», Կ.Պոլիս, 1912, 1 յունիս, թիւ 11, էջ 196-197:

³⁸³ «Պարտիզակ», Կ.Պոլիս, հոկտեմբեր 1912, Գ տարի, թիւ 6, էջ 50:

³⁸⁴ Բարձրագույն վարժարան Պարտիզակ, «Արևելք», Կ.Պոլիս, 15 յուլիս 1910, թիւ 7365:

հետո, անտարբեր չմնալով հայ ժողովրդի ծանր վիճակի նկատմամբ, մի քանի որբանոց հիմնեց աղետյալ վայրերում, իսկ Կիլիկիայի 1909 թ. կոտորածից հետո, խոշոր գումար նվիրեց այրիներին և որբերին³⁸⁵: 1910 թ.-ից այս կրթարանում դասավանդումն իրականացվում էր անգլիական վարժարանների կրթական ծրագրով և մեթոդներով³⁸⁶: Կրթարանին պատկանող կահույքի արտադրամասում պատրաստվում էին գեղեցիկ ու նրբաճաշակ աթոռներ, սեղաններ և այլ կարասիներ³⁸⁷: Պարտիզակում գործում էր Վենետիկի Մխիթարյանների տղաների վարժարանը, իսկ հայ կաթոլիկ մայրապետերն ունեին Անարատ Հղության աղջիկների վարժարանը³⁸⁸:

1903 թ. Պարտիզակում բացվեց ազգային բաղնիքը, որի շինարարության արժեքը կազմում էր 1.000 օսմանյան ոսկեդրամ: Այն ուներ 455 քառակուսի արշին բարձրության, 35 քառակուսի արշին երկարության և 12 քառակուսի արշին լայնություն: Բաղնիքը հատուկ սենյակներ ուներ հիվանդների համար: Այս բաղնիքը կառուցվել էր տեղի «Կանանց լսարանի ընկերության» և բարեպաշտ անձանց նյութական միջոցներով: Բաղնիքի տարեկան հասույթը կազմելու էր 110 օսմանյան ոսկեդրամ, որը պետք է հատկացվեր Պարտիզակի կրթական հաստատություններին³⁸⁹:

1904 թ. Պարտիզակում հիմնված «Կանանց Աղքատախնամ-Մանկապարտեզի ընկերությունը» նույն թվականին 100 օսմանյան

³⁸⁵ Մ. Լեոբուլտ Ֆավր, «Պարտիզակ», Կ.Պոլիս, հոկտեմբեր, Ա տարի 1909, թիվ 1, էջ 5:

³⁸⁶ Տեղական լուրեր, «Փարոս», Կ.Պոլիս, յունուար 1911, Ա տարի, թիվ 12, էջ 193:

³⁸⁷ «Փարոս», Կ.Պոլիս, ապրիլ 1912, Բ տարի, թիվ 12, էջ 204:

³⁸⁸ Տրապիզոնի թեմին վիճակաւոր Յովհաննէս Արք. Նազլեանի յուշերը, նշվ. աշխ., 1960, էջ 399:

³⁸⁹ Անկողմնակալ, Գաւառային քրոնիկ, «Բիւզանդիոն», Կ.Պոլիս, 14 փետրուար-4 մարտ 1903, թիվ 1951:

նակեղրամով քաղաքում կառուցեց մանկապարտեզ³⁹⁰: Իր միջոցներով պահում էր երկու մանկապարտեզ: 1912-1913 թթ. ուներ 100 օսմանյան ոսկեղրամ դրամագլուխ: Ի պատիվ Եղիշե Դուրյանի՝ 1908 թ. ստեղծվեց «Դուրյան միությունը», որը նպատակ ուներ նպաստել Ազգային վարժարանի սաների մտավոր զարգացմանը: Ուներ 150 անդամներ և 500 գրքերով գրադարան³⁹¹: «Բարեսիրաց ընկերությանը» պատկանող 9 թթաստաններից 50 ոսկեղրամ շահույթ էր ստացվում, որը հատկացվում էր կրթական հաստատություններին³⁹²: «Կանաց աղքատախնամ ընկերության» դրամագլուխը 1910 թ. կազմում էր 100 օսմանյան ոսկեղրամ³⁹³: Գործելով մինչև 1915 թ. այս ընկերությունը օգնում էր Պարտիզակի աղքատներին և կարիքավորներին: Տարին մի քանի անգամ հանգանակություն էր կազմակերպում և գումարներ ուղարկում Կ.Պոլսի Սուրբ Փրկիչ ազգային հիվանդանոցին և Գալֆայան որբանոցին³⁹⁴: Պարտիզակի ազգային վարժարանին աջակցելու նպատակով՝ ամերիկահայերի ջանքերով 1909 թ. ԱՄՆ-ում ստեղծվեց «Ուսումնասիրաց ընկերությունը»: 1914 թ. ընկերության նյութական միջոցներով վերակառուցվեց վարժարանի նոր շենքը: 1910 թ. Պարտիզակում հիմնված «Ուսումնասիրաց ընկերությունը» աջակերտներին ապահովում էր գրենական պիտույքներով³⁹⁵: Այն իր վրա էր վերցրել ընդունակ սաների միջնակարգ կրթության հարցի լուծումը: Հիմնադրումից շատ չանցած, ընկերության հովանա-

³⁹⁰ Հայկական կեանքեն: Գաւառներ, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 7-20 հոկտեմբեր 1910, թիւ 406:

³⁹¹ Գասապեան Մ. (Ֆարհատ), նշվ. աշխ., էջ 268-269:

³⁹² Լրատու, «Բիւթանիա», Իզմիտ, 10 փետրուար 1910, Ա տարի, թիւ 5, էջ 59:

³⁹³ Հայկական կեանքեն, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 7-20 հոկտեմբեր 1910, թիւ 406:

³⁹⁴ Թորգոմ Արքեպս., Եղիշե Պատրիարք Դուբեան, Երուսաղէմ, 1923, էջ 25:

³⁹⁵ Հ. Եփրեմ վ. Պօղոսեան, Պատմութիւն հայ մշակութային ընկերութիւններու, Բ հատոր, Վիեննա, 1963, էջ 201:

վորյալ 2 սաները արդեն սովորում էին Պարտիզակի բարձագույն վարժարանում³⁹⁶:

ՀԲԸՄ-ը 1913 թ. Պարտիզակում ստեղծեց իր մասնաճյուղը, որի անդամների թիվը 13-ից հասավ 43-ի: Պարտիզակահայության կյանքում այս մասնաճյուղի գործուն մասնակցությունն ընդհատեց Առաջին համաշխարհային պատերազմը³⁹⁷: 1907-ից գյուղաքաղաքում գործում էր «Ազգային վարժարանի ընթերցավարից և ընթերցավարտուից միությունը»³⁹⁸: Պարտիզակում գործող «Հայրենասիրաց Ասքանազյան ընկերությունն» ուներ թատրոնի շենք, ուր կազմակերպվում էին ազգային, կրոնական, բարոյական թեմաներով ներկայացումներ³⁹⁹:

1892 թ. կազմավորվեց Բարձրագույն վարժարանի «Ընթերցավարտից ընկերությունը», որի նպատակն էր պահպանել կապը շրջանավարտների միջև, օգտակար լինել մեկմեկու և նպաստել վարժարանի զարգացմանը: Ընկերությանը անդամակցում էին բոլոր նրանք, ովքեր պատրաստ էին վճարել տարեկան 1 մեջիդ բաժնեգին: Այն ուներ 8 հոդվածից բաղկացած կանոնագիր և պարտավորված էր համարում աղքատ ուսանող պահել վարժարանում⁴⁰⁰: 1909-1914 թթ. հրատարակել է իր պաշտոնաթերթը՝ «Պարտիզակ» վեցամյա հանդեսը: Ընկերությունը երկրում և արտասահմանում ուներ իր մասնաճյուղերը, որոնք կառավարվում էին իրենց կանոնագրերով⁴⁰¹: Պարտիզակի հայ բողոքականների «Երիտասարդաց քրիստոնեական ընկերակցությունը» ավանում բացել

³⁹⁶ Գասապեան Մ. (Ֆարիատ), նշվ. աշխ., էջ 267:

³⁹⁷ Յուշամատեան Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան. Արծաթեայ յոբելեան, Ա. հատոր, Բարիզ, 1935, էջ 99:

³⁹⁸ Գասապեան Մ. (Ֆարիատ), նշվ. աշխ., էջ 267:

³⁹⁹ Թորգոմ Արքեպս., Եղիշէ Պատրիարք Դուրեան, Երուսաղէմ, 1923, էջ 25:

⁴⁰⁰ Գ. Ա. Գ., Չորս օր Պարտիզակի մէջ, «Բիրական», Կ.Պոլիս, 1-3 սեպտեմբեր 1896, թիւ 249, էջ 283-284:

⁴⁰¹ Կանոնագիր Ընթերցաւարտից ընկերութեան Բարձրագույն վարժարան Պարտիզակ, «Պարտիզակ», Կ.Պոլիս, հոկտեմբեր 1909, Ա տարի, թիւ 1, էջ 46-48:

էր իր ընթերցարան-մատենադարանը, որտեղ հավաքվում էին տեղական և արտասահմանյան կարևոր հրատարակություններ⁴⁰²: Ընկերակցությունը հրատարակում էր «Փարոս» ամսաթերթը, որի խմբագրակազմը գտնվում էր Իզմիրում և Պարտիզակում, իսկ տպագրությունը կատարվում էր Կ.Պոլսի Նշան Պապիկյան հրատարակչատանը⁴⁰³: Հայ բողոքականների «Կանանց կրթասիրաց միությունը» պարբերաբար տարբեր բնույթի երեկոներ էր կազմակերպում⁴⁰⁴: Միության նպատակն էր միջնակարգ կրթությամբ ապահովել կարոտյալ աշակերտներին⁴⁰⁵:

Պարտիզակցիներն իրենց մասնակցությունն էին բերում համազգային տարբեր խնդիրների լուծմանը: Նրանք 1912 թ. հունվարին գումար հանգանակեցին Սասունի սովյալների համար և ուղարկեցին Կ.Պոլսի Հայոց պատրիարքություն⁴⁰⁶: Ազգային երկսեռ վարժարանի ուսուցչական մարմինը հանգանակություն կազմակերպեց ի նպաստ «Հայ կարմիր խաչի»⁴⁰⁷: Պարտիզակի Թաղական խորհուրդը 1907 թ. 1500 դուրուշ ուղարկեց Կ.Պոլսի Ս. Փրկիչ ազգային հիվանդանոցին⁴⁰⁸: Տեղի ՀՅԴ կուսակցության «Գեղարվեստական միությունն» ի նպաստ կովկասահայ բանտարկյալների՝ կազմակերպեց ներկայացում, որի հասույթը կազմեց 300 դուրուշ⁴⁰⁹: Բարձրագույն վարժարանի սաներն ու ուսուցիչները 1912 թ. հունվարին ի նպաստ Սասունի կարոտյալների հանգանա-

⁴⁰² «Պարտիզակ», Կ.Պոլիս, հոկտեմբեր 1909, Ա տարի, թիւ 1, ազդերի էջ:

⁴⁰³ «Փարոս» ամսաթերթ, «Պարտիզակ», Կ.Պոլիս, ապրիլ 1911, Բ տարի, թիւ 4, էջ 52:

⁴⁰⁴ Հայկական կեանքէն, մանր լուրեր, (Մեր սեփական թղթակցութիւններէ), «Ազատամարտ», Կ.Պոլիս, 1911, 1-14 մայիս, թիւ 576:

⁴⁰⁵ Մանր լուրեր, (Մեր սեփական թղթակցութիւններէ), «Ազատամարտ», Կ.Պոլիս, 1-14 մայիս 1911, թիւ 476:

⁴⁰⁶ Օգնէ նք Սասունին, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 10 յունուար-2 փետրուար, 1912, թիւ 801:

⁴⁰⁷ Նուիրատուութիւն, «Բիւթանիա», Կ.Պոլիս, 10-23 նոյեմբեր, 1912, թիւ 9:

⁴⁰⁸ Պարտիզակի Թաղ. խորհուրդը, «Մանգումէի էֆքեար», Կ.Պոլիս, Կ.Պոլիս, 31 օգոստոսի-13 սեպտեմբեր 1907, թիւ 1905:

⁴⁰⁹ Լրատու, «Բիւթանիա», Իզմիտ, 1 դեկտեմբեր 1910, թիւ 29, էջ 322:

կեցին 569.25 դուրուշ գումար և ուղարկեցին Կ.Պոլիս⁴¹⁰: Այս վարժարանը մեկ որբի խնամքի և կրթության հոգսը վերցրեց իր վրա⁴¹¹:

ՀՅԴ կուսակցությունը Պարտիզակ մուտք գործեց 1908-ից հետո և լայն գործունեություն ծավալեց: Գյուղաքաղաք այցելեցին և բանախոսություններով հանդես եկան հայտնի դաշնակցական գործիչներ Է. Ակնունին, Ռուբեն Զարդարյանը, Գարեգին Խաժակը և Սիմոն Զավարյանը⁴¹²: 1910 թ. դեկտեմբերին տեղի ունեցավ ՀՅԴ կուսակցության ընթերցատան բացումը⁴¹³: ՀՅԴ կուսակցության ակումբը պարբերաբար բանախոսություններ էր կազմակերպում⁴¹⁴: 1911 թ. տեղի «Ընթերցավարտների միության» նախաձեռնությամբ ՀՅԴ թատերախումբն ի նպաստ ազգային վարժարանի վերաշինության՝ ներկայացրեց Ա. Շիրվանզադեի «Պատվի համար» պիեսի բեմադրությունը: Պարտիզակի այս թատերախումբը համարվում էր Կ.Պոլսի և շրջակա գավառների սիրողական լավագույն թատերախումբը⁴¹⁵: Տեղի դաշնակցական կանանց ջանքերով այստեղ գործում էր ակումբ-ընթերցասրահը⁴¹⁶: ՄԴՀԿ-ը Պարտիզակում իր մասնաճյուղը ստեղծեց 1908 թ. և լայն գործունեություն ծավալեց մինչև 1915 թ.⁴¹⁷: Հնչակյան կուսակցությունն ուներ իր թատերախումբը, որը պարբերաբար հանդես էր գալիս ներկայացումներով⁴¹⁸ և կազմակերպում՝ բանախոսություններ⁴¹⁹: Պարտի-

⁴¹⁰Օգնե՛ք Սասունին «Ազատամարտ», Կ.Պոլիս, 12-25 յունուար 1912, թիւ 794:

⁴¹¹Կիլիկիոյ որբախնամ կեդր. յանձնաժողով տեղեկագիր 1909-1910, Կ.Պոլիս, 1911, էջ 113:

⁴¹²Մակարեան Ա. Յ., նշվ. աշխ., 305-306:

⁴¹³Լրատու, «Բիւթանիա», Իզմիտ, 1 նոյեմբեր 1910, թիւ 27, էջ 299:

⁴¹⁴Հայկական կեանք, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 1911, 4-22 ապրիլի, թիւ 544:

⁴¹⁵Գաւառներ (Մեր սեփական թղթակցութիւններէ), «Ազատամարտ», Կ.Պոլիս, 12-24 փետրուար, 1911, թիւ 512:

⁴¹⁶Գասապեան Մ. (Ֆարհատ), նշվ. աշխ., էջ 272:

⁴¹⁷Մակարեան Ա. Յ., նշվ. աշխ., 305:

⁴¹⁸Հնչակեան կեանք, Պարտիզակ, «Կոհակ», Կ.Պոլիս, 1-14 սեպտեմբեր 1913, թիւ 51, էջ 469:

զակի շերամապահներին օգնելու համար ՄԴՀԿ կառույցի կողմից 1912 թ. իր ծրագիր-կանոնագրով ստեղծվեց կոոպերատիվ, որն անմիջապես գործի անցավ⁴²⁰: Դաշնակցություն և Հնչակյան կուսակցությունների մասնաճյուղերը Պարտիզակում ունեին իրենց ակումբները⁴²¹:

1847 թ. Պարտիզակում հրատարակվել է «Բանբեր պարտիզական» վիմատիպ շաբաթաթերթը⁴²², իսկ 1909-1914 թթ.՝ «Պարտիզակ» վեցամսյա հանդեսը, 1910-1912 թթ.՝ «Փարոս» ամսաթերթը, 1911-1914 թթ.՝ «Մեղու» շաբաթաթերթը: 1912-1914 թթ.՝ «Պայքար» կիսամսյա հանդեսը: Այն մի շրջան տպագրվել է Պարտիզակում, ապա՝ Կ.Պոլսի տպարաններում: «Պարտիզակ» և «Փարոս» պարբերականները նույնպես տպագրվել են Կ.Պոլսում: 1908-1910 թթ. Պարտիզակում հրատարակվել են «Գիշեր», «Պարտիզակ» և «Կշիռ» խմորատիպ պարբերականները: Պարտիզակի աշակերտական միությունը հրատարակում էր «Գավառի ձայն» խմորատիպ շաբաթաթերթը, որը հետագայում դարձել է տպագիր⁴²³: «Թութակ», «Պարտեզ ազգային ծաղկանց», «Թուաֆ», «Դարման» թերթերը գրվել են ձեռագրով և բազմացվել⁴²⁴: Պարտիզակցի Քյուրքճյանը հրատարակում էր գյուղաքաղաքի տեսարաններ պատկերող բացիկներ⁴²⁵:

Պարտիզակն ապրում էր մշակութային հարուստ կյանքով: 1910 թ. մարտին այստեղ հյուրախաղերով հանդես եկավ Կ.Պոլսի

⁴¹⁹ Գրասեր Ա., Թղթակցութիւններ: Պարտիզակ, «Կոհակ», Կ.Պոլիս, 1912, 11-24 յուլիս, թիւ 27, էջ 299:

⁴²⁰ Թաթուլ, Թղթակցութիւններ, Պարտիզակ, «Կոհակ», Կ.Պոլիս, 1912, 10 յուլիս ապրիլ, թիւ 25, էջ 276:

⁴²¹ Պօղոսեան Յ., Պարտիզակը անգուգական (Յուշեր), Փարիզ, 1967, էջ 34:

⁴²² Շաբաթաթերթի մեկ օրինակը պահվում է Գրականության նստավետի թանգարանի (ԳԱԹ) Թորոս Ազատյանի ֆոնդում, N. 289-290 (լրացուցիչ):

⁴²³ Բաբլոյան Մ. Ա., նշվ. աշխ., էջ 26, 70, 72, 74, 79, 86, 89, 94:

⁴²⁴ Մակարեան Ա. Յ., նշվ. աշխ., 3030:

⁴²⁵ Köker O., նշվ. աշխ., p. 140.

հանարահայտ Աբելյան-Ջարիֆյան թատերախումբը⁴²⁶։ Սեփական սիրողական, ինչպես նաև Կ.Պոլսից և Կովկասից ժամանող թատերախմբերի ուժերով կազմակերպվում էին ներկայացումներ⁴²⁷։ Կոմիտաս վարդապետը 1912 թ. այցելեց Պարտիզակ, հանդես եկավ բանախոսություններով և երգչախումբ ստեղծեց⁴²⁸։ Իր ղեկավարած «Գուսան» երգչախմբով Կոմիտասը նաև ելույթ ունեցավ Պարտիզակում⁴²⁹։ Արշամ Մինասյանի ղեկավարությամբ Պարտիզակում ստեղծվել էր 200 հոգուց կազմված երգչախումբ, որը 1912 թ. մարտին ելույթ ունեցավ գյուղաքաղաքում⁴³⁰։

Պարտիզակի հայտնի մտավորականներն էին Հովհաննես Մկրյանը, Թորգոմ Գուշակյանը, Գևորգ Մեսրոպը, Մինաս Գասապյան, Արսեն Ղազիկյանը, Մկրտիչ Պոտուրյանը և այլք։ Գյուղաքաղաքը մեծ համբավ էր վայելում իր գեղեցիկ դիրքով, այն որպես հանգստավայր էր ծառայում և՛ Կ.Պոլսի և՛ Զմյուռնիայի հայ մտավորականության համար⁴³¹։ XIX դարի վերջերից Պարտիզակը պոլսահայ ընտանիքների համար դարձավ ամառանոց և օդափոխության վայր։ Պարտիզակցիներն իրենց տներում սենյակներ էին պատրաստում պոլսահայերին ընդունելու համար։ Սա նրանց համար դարձավ եկամտի հավելյալ աղբյուր⁴³²։

Ամբողջապես հայախոս պարտիզակցիները անեղծ կերպով պահպանում էին իրենց նախնյաց բարքերն ու սովորույթները։ Այն փոքրիկ Հայաստան էր, Կոմիտաս վարդապետի բնութագրմամբ՝ «Ազգային հանրապետություն»⁴³³։

⁴²⁶ Տեղական լուրեր, «Փարոս», Կ.Պոլիս, մարտ 1910, Ա տարի, թիւ 2, էջ 32։

⁴²⁷ Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 9, Երևան, 1983, էջ 218։

⁴²⁸ Մխալեան Գ. Յ., նշվ. աշխ., էջ 601-602։

⁴²⁹ Մելքոնեան Ա. Ս., նշվ. աշխ., էջ 483։

⁴³⁰ Հայկական կենսաբան, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 22 փետրուար-6 մարտ 1912, թիւ 828։

⁴³¹ Հայ ժողովրդի պատմություն, նշվ. աշխ., էջ 535-536։

⁴³² Մելքոնեան Ա. Ս., նշվ. աշխ., էջ 482։

⁴³³ Ժամանակակիցները Կոմիտասի մասին, Երևան, 1960, էջ 258-259։

Թուրքական իշխանությունները խիստ անհանգստացած Պարտիզակի հայերի բարգավաճմամբ՝ դիմում էին ամեն տեսակի ապօրեն քայլերի՝ պարտիզակցիների առաջընթացը խանգարելու նպատակով: Ավանի հարկահավաքներից Բեքիր Էֆենդին 4 տարի շարունակ անօրեն հարկային քաղաքականությամբ հարստահարում էր տեղի հայությանը: Նա ազգայնամոլ և հակահայ ելույթներ էր ունենում Պարտիզակի սրճարաններում⁴³⁴: Տեղի արհեստավորներների համար սահմանված նոր ապօրինի տուրքերը ծայրահեղ աղքատության էին հասցնում նրանց⁴³⁵: Պարտիզակի կողովագործները «Ազատամարտ» թերթի խմբագրությանը 1911 թ. հունվարի 21-ին հեռագրով տեղեկացնում էին, որ տեղի հարկային իշխանությունները կամայական հարկերով հարստահարում են իրենց: Նրանք ստիպում էին վճարել թեմեթյոլի հարկը (եկամտահարկ, շահութահարկ)⁴³⁶, մինչդեռ իրենց ստացած ընդհանուր շահույթից ելնելով՝ ազատված էին դրա վճարումից⁴³⁷: Հայերի նկատմամբ Պարտիզակի հարկահավաքները շարունակում էին դիմել ապօրինի գործողությունների, հարստահարում և կեղեքում էին նրանց⁴³⁸: Պարտիզակում 1890-ից սկսած լազերի կողմից բռնագրավվել էր 50.000 արտավար հողատարածք⁴³⁹: Ծանր վիճակ էր ստեղծվել այն հայերի համար, ովքեր փորձում էին իրենց

⁴³⁴ Հայկական կեանք: Մանր լուրեր (Մեր սեփական թղթակցություններէ), «Ազատամարտ», Կ.Պոլիս, 1913, 29 յունուար-11 փետրուար, թիւ 1123:

⁴³⁵ Հարստահարութիւնները կը շարունակուէն նոր ձևերով, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 14-27 յունուար 1911, թիւ 488: Տե՛ս նաև Պարտիզակ 24 Յունուար 1911 (Մեր մասնաւոր աշխատակիցէն), 24 յունուար 1911, «Բիւթանիա», Իզմիտ, 20 փետրուար 1911, թիւ 5-6, էջ 378:

⁴³⁶ Լևոն Վարդան, Հարկերը Օսմանեան և Պարսկական կայսրութիւնում, ԺԵ-Ի դար, Ա-Ի, Երևան, 2004, էջ 391:

⁴³⁷ Պարտիզակի կողովագործները, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 22 յունուար-4 փետրուար, 1911, թիւ 495:

⁴³⁸ Մանր լուրեր (Մեր սեփական թղթակցություններէ), «Ազատամարտ», Կ.Պոլիս, 29 յունուար-11 փետրուար, 1913, թիւ 1123:

⁴³⁹ Հողային գրաւումներ Հայկական գաւառներէն դուրս ևս, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 2-15 հոկտեմբեր 1910, թիւ 402:

իրավունքները պաշտպանել: 1911 թ. մարտին պարտիզակցի հայերից մեկը դատարանում կարողացավ պաշտպանել իր իրավունքները, սակայն շատ չանցած նրան տարան ոստիկանատուն և այնպիսի դաժան ծեծի ենթարկեցին, որ նա հասավ մահամերձ վիճակի⁴⁴⁰: 1914 թ. հունիսին Պարտիզակի մոտակայքում 29 հայ բանվորներ, մի կերպ փախչելով ալբանացի ավազակախմբերից, 8 օր անց խոշտանգվեցին և կոդուպվեցին բոսնիացի ավազակախմբի կողմից⁴⁴¹:

1914 թ. օգոստոսին 1000-1500 պարտիզակցի երիտասարդներ գորակոչվեցին օսմանյան բանակ: 1915 թ. ապրիլի 20-ին երևելի պարտիզակցիներ՝ բժիշկներ, ուսուցիչներ, կառավարական պաշտոնյաներ ձերբակալվեցին և աքսորվեցին գյուղից: Պարտիզակցիների չտեղահանելու համար պահանջվեց 200 ոսկեդրամ փրկագին, սակայն օգոստոսի 4-ին պարտիզակցիների առաջին քարավանը դուրս եկավ գյուղաքաղաքից և ուղևորվեց դեպի Միջագետքի անապատներ: Մեկ շաբաթ անց Պարտիզակը դատարկվեց⁴⁴²: Կաթոլիկ ծերակուտական Երամ Երամյանի միջամտությամբ Պարտիզակի հայ կաթոլիկները չտեղահանվեցին⁴⁴³:

Իզմիրի գավառակի գյուղախմբի գյուղերից էր **Արմաշը**, որը գտնվում էր Իզմիրից դեպի հարավ-արևելք ձգվող լեռնաշղթայի փեշերին⁴⁴⁴: Մինչ Արմաշ գյուղի հիմնումը բնակավայրը հունաբնակ է եղել, սակայն 1416 թ. հույները հրդեհել և լքել են այն, և այդտեղ հաստատվել են 1410 թ. Մարաշից գաղթած ու հարևանությամբ ապաստանած հայերը: Կա նաև տեսակետ, որ Արմաշ

⁴⁴⁰ Ոստիկանական ծեծը, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 15-28 մարտ, 1911, թիւ 538:

⁴⁴¹ Պարտիզակի մէջ հրոսակախումբերու յարձակումը հայ բանւորներու վրայ, «Ժամանակ», Կ.Պոլիս, 8-21 յունիսի, 1914, թիւ 1834:

⁴⁴² Մելքոնեան Ա. Ս., նշվ. աշխ., էջ 491-492:

⁴⁴³ Տրապիզոնի թեմին վիճակաւոր Յովհաննէս Արք. Նազլեանի յուշերը, Ա. հատոր, Պէյրութ, 1960, էջ 399:

⁴⁴⁴ Թովմեան Յ., Արմաշի ձեռագրերը, «Հասկ» հայագիտական տարեգիրք, Ա. տարի, 1948, Անթիլիաս, 1948, էջ 62: Տես նաև Գաւառին վիճակագրութիւնը, «Բիւթանիա», Ատաբազար, 3 յունուար 1912, թիւ 1, էջ 538-539:

գյուղը հիմնվել է 1600-1610 թթ. այստեղ գաղթած մարաշցիների կողմից⁴⁴⁵: Տեղանունը «Մարաշի» տարափոխված վերաձայնությունն է: 1416 թ. Արմաշում հիմնված Չարխափան Ս. Աստվածածին վանքը XIX դարի սկզբներից արդեն ոչ միայն ուխտատեղի էր, այլև ուսումնակրթական կենտրոն⁴⁴⁶: Գյուղում գործել է ուսումնարան, 1686 թ. կառուցվել էր մատենադարանի շենքը: 1890 թ. տվյալներով Արմաշն ուներ 250 ընտանիքներից կազմված հայ բնակչություն⁴⁴⁷: 1903 թ. Կ.Պոլսի Ուսումնական խորհրդի հրատարակած վիճակագրույցի համաձայն՝ 1901-1902 ուսումնական տարում Արմաշի Նարեկյան վարժարանում սովորող 190 երկսեռ աշակերտությանը դասավանդում էր 4 ուսուցիչ, իսկ 500 դուրուշ ուսումնական ծախսը վճարում էր տեղի Թաղական խորհուրդը⁴⁴⁸: 1913 թ. Արմաշի առաջնորդության Կ.Պոլսո Հայոց պատրիարքության առաքած վիճակագրույցի համաձայն՝ նույն թվականին Արմաշում ապրում էր 300 ընտանիքից կազմված 1507 հայ բնակչություն, որից 7-ը բողոքականներ էին: Ազգային անշարժ կալվածքների արժեքն էր 65.000 օսմանյան ոսկեդրամ: Գյուղում գործում էին աղջիկների և տղաների մեկական վարժարաններ, ուր ուսանում էին 310 աշակերտներ⁴⁴⁹: Արմաշի հայ բողոքականներն ունեին եկեղեցի⁴⁵⁰: Տեղի քարոզիչ պատվելի Հարությունը 1910թ. հոկտեմբերին մեկնեց Գերմանիա՝ նոր կառուցվելիք ժողովարանի համար հանգանակություն հավաքելու նպատակով⁴⁵¹:

Արմաշը մեծ քանակությամբ արտահանում էր ծխախոտ, հացահատիկ, շերամ, ընկույզ, կորեկ, կտավատ, ածուխ, փայտ,

⁴⁴⁵Արմաշու դպրեվանքին 25-ամեայ յոբելեանին առթիւ, Կ.Պոլիս, 1914, էջ 6:

⁴⁴⁶Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Երևան, 2002, էջ 157:

⁴⁴⁷Նամակ Արմաշէ, «Արևելք», Կ.Պոլիս, 16 յունուար 1890, թիւ 1794:

⁴⁴⁸Վիճակագրոյց գաւառական ազգային վարժարանանց Թուրքիոյ: Բ տետր: Վիճակ 1901-1902 տարւոյ, Կ.Պոլիս, 1903, 17-րդ աղյուսակ:

⁴⁴⁹Մատենադարան, Արխիւային բաժին, Արշակ Ալպոյաճյանի ֆոնդ, թղթ. 8, վավ. 21/1:

⁴⁵⁰Մտանալեան Կ. Պ., նշվ. աշխ., էջ 240:

⁴⁵¹Լրատու, «Բիւթանիա», Իզմիտ, 1 հոկտեմբեր 1910, թիւ 26, էջ 286:

կարտոֆիլ⁴⁵²: Հայտնի էր Արմաշի խաղողը, որի հատիկները ընկույզի չափ էին⁴⁵³: Արմաշ և Խասկալ գյուղերի մեջտեղում էր գտնվում Արմաշի վանքի ջրաղացը, որը տարեկան 300 ոսկեդրամի շահույթ էր բերում վանքին⁴⁵⁴:

1889 թ. սեպտեմբերի 18-ին Խորեն պատրիարք Աշըգյանի հովանավորությամբ և Մաղաքիա Օրմանյանի նախաձեռնությամբ Արմաշում բացվեց Կ.Պոլսո Հայոց պատրիարքության Արմաշի դպրեվանքը, որպես բարձրագույն ուսումնական հաստատություն: Կրոնական առարկաներից բացի, այստեղ դասավանդվում էին իմաստասիրություն, բնական գիտություններ, հայագիտություն, հայերեն, ֆրանսերեն և թուրքերեն լեզուներ: Ուսումնական հաստատության նպատակն էր պատրաստել ոչ միայն հոգևորականներ, այլև ուսուցիչներ⁴⁵⁵: Մաղաքիա Օրմանյանի վանահայրության շրջանում Չարխափան Ս. Աստվածածին եկեղեցին ներսից և դրսից հիմնավոր նորոգվեց և հրաշալի տեսք ստացավ: Կառուցվեց զանգակատունը, դպրեվանքի քարաշեն և հյուրանոցի եռահարկ շենքերը, ընդարձակ շերամատունը, փուռը, արդիական ջրաղացը, տնկվեցին նոր թթաստաններ, որը գյուղում շերամաբուծության զարգացմանը լայն հնարավորություններ տվեցին: 1895 թ. Արմաշում բացվեց որբանոց⁴⁵⁶: Գյուղի եռահարկ 41 սենյականոց հյուրանոցը կառուցվել է շուրջ 694 քառակուսի կանգուն* հողատարածքի վրա: Շինարարության արժեքը կազմել է 185.935 դուրուշ: Արմաշի դպրեվանքի շենքը կառուցվել է 1892 թ. 1072 քառակուսի կանգուն

⁴⁵²Գալատիին վիճակագրությւնը, «Բիթանիա», Ատաբազար, 3 յունուար 1912, թիւ 1, էջ 538-539:

⁴⁵³Ուխտաւոր, Արմաշէն լուրեր, «Ժամանակ», Կ.Պոլիս, 14-27 սեպտեմբեր 1912, թիւ 1217:

⁴⁵⁴Արմաշի ջրաղացքը, «Հայրենիք», Կ.Պոլիս, 27 յուլիս, 1893, թիւ 529:

⁴⁵⁵Քրիտոնյա Հայաստան հանրագիտարան, Երևան, 2002, էջ 157:

⁴⁵⁶Հայ հանրագիտակ, խմբագրեց Հ. Մկրտիչ վրդ. Պոտուրեան Պարտիզակցի, Պուքրէշ, 1938, էջ 289:

* Երկարության չափ, մոտավորապես հավասար է մեկ արշինի կամ մեկ մետրի:

հողատարածքի վրա: Այն քարաշեն էր, եռահարկ, ուներ հանգստի սենյակ, սերտարան, ննջարան և 25 այլ սենյակներ: Կառուցման համար ծախսվել է 2170 օսմանյան ոսկեդրամ: Ջրաղացը կառուցվել էր 1893 թ. 192 քառակուսի կանգուն հողատարածքի վրա, իսկ ծախսը կազմել է 111.464 դուրուշ: 750 կանգուն երկարություն ունեցող ջրուղու ծախսը 200 ոսկեդրամ էր: Չարխափան Ս. Աստվածածին եկեղեցու փայտաշեն տանիքը փոխարինվել էր քարաշենի: Նորագվել էին նաև գմբեթի արտաքին մասը, ինչպես նաև եկեղեցու ներքնամասը, որը զարդարվել էր գեղարվեստական նկարազարդումներով՝ այդ ամենի համար ընդհանուր ծախսվելով 600 ոսկեդրամ: 10 կանգուն բարձրությամբ կառուցվել է եկեղեցու զանգակատունը, որի համար ծախսվել էր 150 ոսկեդրամ: Շերամատունը հարկ եղած դեպքում ծառայում էր նաև որպես հյուրանոց: 600 ոսկեդրամով այն կառուցվել էր 900 քառակուսի կանգուն հողատարածքի վրա: Նորոգվել էին նաև վանքի պարիսպները, լվացարանը, հավանոցը, որոնց վրա ծախսվել էր 200 ոսկեդրամ: Քարաշեն փուռը շուրջ 390 ոսկեդրամ արժողությամբ երկհարկանի կառույց էր: Կառուցվել էր 180 կանգուն տարածության վրա: 1898 թ. դրությամբ դպրեվանքն ուներ 69.000 արտավար հողատարածք, որից մշակվում էր միայն 2.200-ը, իսկ մնացածը անտառային հատվածն էր, որից օգտվում էր վանքը՝ հայթաթելով շինանյութ և վառելանյութ⁴⁵⁷:

Արմաշի դպրեվանքի եկամտի գլխավոր աղբյուրներն էին Խաչվերացի տոնին ուխտավորների կատարած նվիրատվությունները և ջրաղացը, որը տարեկան առնվազն 140 ոսկու շահույթ էր բերում⁴⁵⁸: 1906 թ. Արմաշի հասույթը կազմեց 600 օսմանյան ոսկե-

⁴⁵⁷ Մրմրեան Յ. Գ., Արմաշ 1600-1898, «Մասիս», Կ.Պոլիս, 11-23 յունիս, 1898, թիւ 110:

⁴⁵⁸ Լրատու: Արմաշի դպրեվանքին գործերէն, «Բիւթանիա», Իզմիտ, 1 յունուար 1910, թիւ 2, էջ 11:

դրամ⁴⁵⁹: Դպրեվանքի հրապարակը և սրճարանը Ս.Խաչի տոնի առթիվ, ինչպես ամեն տարի, նույնպես և 1907 թ. վարձակալության էր տրված՝ հրապարակը 5.000, իսկ սրճարանը՝ 840 դուրուշով⁴⁶⁰: Խաչվերացի տոնին ուխտավորներից գոյացած գումարը 1908 թ. կազմել էր 43.210, 1909 թ.՝ 47.370, իսկ 1910 թ.՝ 61.587 դուրուշ⁴⁶¹: Արմաշի Չարխափան Ս. Աստվածածին վանքը ոչ միայն ուխտատեղի էր հիվանդ և հավատացյալ այցելուների համար, այլև տոնավաճառների կենտրոն, ուր Կ.Պոլսից և Օսմանյան կայսրության շատ գավառներից գալիս էին առևտրականներ, նորարար արհեստագործներ՝ իրենց ստեղծած արհեստի նմուշները ցուցադրելու և առևտրական գործարքներ կատարելու համար⁴⁶²: 1910 թ. Արևմտյան Հայաստանի տարբեր բնակավայրերից Վանք այցելեցին 20 000 ուխտավորներ և այդ տարի ստացած եկամուտը կազմեց 560 ոսկեդրամ⁴⁶³, սակայն երբեմն ուխտավորների այցելություններից վանքի տարեկան եկամուտը հասնում էր 800 ոսկեդրամի⁴⁶⁴:

Արևմտահայությունն ընդհանրապես առանձնակի հոգածություն էր ցուցաբերում Արմաշի վանքի և դպրեվանքի նկատմամբ: 1913 թ. մայիսին Կ.Պոլսո Հայոց պատրիարքությունը 100 ոսկեդրամ տրամադրեց Արմաշի Չարխափան Ս.Աստվածածին վանքին⁴⁶⁵: 1914 թ. մարտին Իզմիրում հանգանակություն սկսվեց ի նպաստ դպրեվանքի: Թեև հանգանակությունը դեռ շարունակվում էր, սակայն արդեն գոյացել էր 160 օսմանյան ոսկեդրամ և

⁴⁵⁹ Քրոնիկ Հայ եկեղեցւոյ, «Սուրհանդակ», Կ.Պոլիս, 1 հոկտեմբեր 1906, թիւ 2322:

⁴⁶⁰ Քրոնիկ, «Մանգումէի էֆքեար», Կ.Պոլիս, 12-25 սեպտեմբեր 1907, թիւ 1915:

⁴⁶¹ Լրատու, «Բիւթանիա», Իզմիր, 1 հոկտեմբեր 1910, թիւ 26, էջ 286: Տե՛ս նաև Սարգիսեան Յ., Գաւառական կեանք, Իզմիր, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 12-25 սեպտեմբեր 1909, թիւ 80:

⁴⁶² Հայ ժողովրդի պատմութիւն, նշվ. աշխ., 1974, էջ 536-537:

⁴⁶³ Թղթակից, Թղթակցութիւններ, «Բիւթանիա», Իզմիր, 20 սեպտեմբեր 1910, թիւ 25, էջ 273:

⁴⁶⁴ Մրմրեան Յ. Գ., Արմաշ 1600-1898, «Մասիս», Կ.Պոլիս, 12-24 յունիս, 1898, թիւ 111:

⁴⁶⁵ Հայ-ազգայինլուրեր, «Բիւզանդիոն», Կ.Պոլիս, 14-27 մայիս 1913, թիւ 5043:

հանգանակիչները վստահ էին, որ կհավաքվի առնվազն 1.800 ոսկեդրամ⁴⁶⁶: 1915 թ. հունվարին եգիպտահայ բարերար Մաթևոս Խերանյանը Արմաշի դպրեվանքին կտակեց 250 օսմանյան ոսկեդրամ⁴⁶⁷:

Արմաշի Չարխափան Ս. Աստվածածին վանքը մշտապես հարուստ է եղել թանկարժեք մետաղներից պատրաստված եկեղեցական առարկաներով և իրերով: 1820-1872 թթ. վանքի վերաշինության և Արմաշի դպրեվանքի շենքի կառուցման և եկեղեցական այլ կարիքների համար 8 անգամ վաճառվել է նյութական մեծ արժեք ներկայացնող եկեղեցական առարկաներ և իրեր: Բանասեր Աբրահամ Այվազյանը հայ ոսկերչությանը նվիրված իր հոդվածաշարում ներկայացնում է Արմաշի վանք կատարած այցելության ժամանակ այստեղ պահվող արժեքավոր առարկաների իր կատարած նկարագրությունը: Վանքում էր պահվում արծաթյա գեղեցիկ կազմով 1828 թ. Կ.Պոլսում ընդօրինակված Յուդաբերից Ավետարանը, Ստեփան եպիսկոպոս Աղավնունու կողմից պատվիրված աղամանդակուռ և մարգարտյա եպիսկոպոսական թագը, վակասը և արտախուրակը, ինչպես նաև Պողոս արքեպիսկոպոս Թագթագյանի առաջնորդության շրջանում 1844 թ. պատրաստված աղամանդակուռ թագը, վակասը և արտախուրակը: Վանքում խնամքով պահվում էին 1840 թ. պատրաստված տիրունական պատկերներով արծաթյա սաղավարտը, որի ճակատին Ս.Աստվածածնի, իսկ երկու կողմերում՝ Ծննդյան, Մկրտության, Խաչելության, Հարության, Ավետման և այլն տեսարաններ էին քանդակված, վակասի վրա՝ 12 առաքյալները, իսկ մեջտեղում պատկերված էր Քրիստոսն: Վանքում էին պահվում 1814 թ. պատրաստված 2 արծաթյա սաղավարտներ: Այստեղ պահվում էին նաև արծաթյա աղավնի և մյուռոնաման, 1832 թ. պատրաստված արծաթյա սկիհ, արծաթյա

⁴⁶⁶ Ի նպաստ Արմաշու դպրեվանքին, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 29 մարտ-11 ապրիլ, 1914, թիվ 1475:

⁴⁶⁷ Հայկական լուրեր, «Ժամանակ», Կ.Պոլիս, 24 յունուար-11 փետրուար 1915, թիվ 2059:

ոսկեզօծ զարդապատկերներով սկիհ, ոսկեթել ասեղնագործությամբ պատկերազարդ 2 սկիհի ծածկոց, ոսկեթել և գեղեցիկ ասեղնագործությամբ գեղարվեստական մեծ արժեք ներկայացնող շուրջառներ, թանկարժեք կերպասից կարված եկեղեցական հագուստներ, սեղանի արծաթաթել ասեղնագործությամբ հին սփռոց, ծաղիկների փորագրությամբ վարդապետական արծաթյա գավազան, Ս.Աստվածածնի պատկերի համար արծաթյա ադամանդակուռ թագապսակներ և լուսնաթագեր, որոնք ոսկերչական բարձրարվեստ աշխատանքներ էին⁴⁶⁸: Արմաշում պահվել են արծաթյա կազմերով շատ Ավետարաններ: Հեղինակը նկարագրում է ականակուռ խաչով արծաթակազմ Ավետարանը, որը 1818 թ. պատրաստված արծաթագործական բարձրարժեք աշխատանք էր: Վանքում պահվում էր Շոռոթում 1651 թ. գրված մագաղաթյա մանրանկարներով հարուստ ձեռագիր Ավետարանը, որն ուներ արծաթյա գեղեցիկ կազմ: Այստեղ պահվող ձեռագրերից էր 1678 թ. ընդօրինակված արծաթակազմ Ավետարանը: Հարկ է անդրադառնալ Արմաշում պահվող մեծ թվով խաչերին, որտեղ գետեղված էին սրբերի մասունքներ: Այստեղ դարեդար սրբորեն պահվում էին՝ Կենաց փայտի մասունքներով՝ 4, Ս. Բարդուղիմիոս առաքյալի՝ 3, Ս. Կարապետի՝ 3, Ս. Հռիփսիմայց կույսերի՝ 2, Ս. Հակոբ Մծբնա հայրապետի՝ 2 մասունքները: Չարխափան Ս. Աստվածածին վանքի հարստություններից էին նաև Ս. Թադևոսի, Ս. Ղուկաս Ավետարանչի, Ս. Գրիգոր Լուսավորչի, Ս. Ստեփանոսի, Ս. Նիկողայոս վկայի, Ս. Աբդըլմսեի, Ս. Մերկերիոսի, Ս. Մինասի, Ս. Սարգսի, Ս. Կղիմեա Հայրապետի, Ս. Հովան Ոսկեբարանի, Ս. Գրիգոր Աստվածաբանի, Քառասուն մանկանց, Թողիկ Ճգնավորի, Հովհաննես Պարտիզակցու խաչ-մասունքները⁴⁶⁹:

⁴⁶⁸ Այվազեան Ա. Յ., Հայ ոսկերչությունը, Է, «Հայրենիք», Կ.Պոլիս, 11 սեպտեմբեր 1893, թիւ 572:

⁴⁶⁹ Նույն տեղում, 12 սեպտեմբեր 1893, թիւ 573:

Արմաշի Չարխափան Ս. Աստվածածին վանքն ունեցել է հարուստ մատենադրան: Այստեղ ձեռագրեր սկսել են հավաքվել XVII դարից: XVIII դարի վերջին Չակր Հասանի արշավանքի ժամանակ ոչնչացվել են վանքի բոլոր ձեռագրերը: Նոր հավաքածուն սկսվել է հավաքվել XIX դարի սկզբից: Նվիրատվությունների և տեղում ընդօրինակված ձեռագրերի հիման վրա 1889 թ. ստեղծվել է Արմաշի դպրեվանքի մատենադարանը: 1904 թ. Արմաշի դպրեվանքում պահվող ձեռագրերի թիվը հասել էր 223-ի: Ձեռագրացուցակը կազմել է 1902 թ. Հակոբ Թովճյանը: Ձեռագրերից հնագույնը գրչագրվել է 1351 թ., սակայն եղել են նաև ձեռագրեր, որոնց կողերին կարված էին մեսրոպյան երկաթագրերով գրված պահպանակներ: Մատենադարանում պահվում էին XIV դարի՝ 4, XV դարի՝ 7, XVI դարի՝ 8, XVII դարի՝ 30, XVIII դարի՝ 58 և XIX դարի՝ 116 ձեռագրեր: Մեծ մասը գրվել է Արմաշում, ինչպես նաև՝ Կ.Պոլսում, Ամասիայում, Կեսարիայում, Հռոմում, Ղրիմում, Լեհաստանում, Երուսաղեմում և հայաբնակ այլ վայրերում: Այստեղ են պահվել 1597 թ. ընդօրինակված Թովմա Մեծոփեցու «Պատմության» գրչագիրը, Սիմեոն Երևանցու ինքնագիր Քարոզգիրքը, բժշկարաններ, բառարաններ, խազագրված ձեռագրեր, Միքայել Չամչյանի նամականին, Կիլիկիայի Հայկական Թագավորության անտիպ մի դատաստանագիրք և այլն: Սակավաթիվ մաքանկարչական ձեռագրերում կային Ներսես Շնորհալու, Գրիգոր Նարեկացու, Գրիգոր Տաթևացու և այլոց դիմանկարներ⁴⁷⁰: Արմաշի վանքում էին պահվում հայ եկեղեցական հայերի մեկնություններ, ճառեր, քարոզգրքեր, ներբողներ, խրատներ, տեսիլներ, հայ պատմիչների և իմաստասերների երկեր, տոմարական, բժշկական, գիտական, լեզվաբանական և երաժշտական գրականություն⁴⁷¹: Այստեղ պահվում էին նաև կաթոլիկ եկեղեցական հայրերի երկերի

⁴⁷⁰ Քոլանջյան Ս., Մեր ձեռագրական կորուստները, «Էջմիածին», Էջմիածին, 1965, ԻԳ տարի, մայիս, թիվ 5, էջ 51-54:

⁴⁷¹ Թովճեան Յ., Արմաշի ձեռագրերը, նշվ. աշխ., էջ 62-88:

հայերեն թարգմանությունները և Վենետիկի Մխիթարյան հայրերի արժեքավոր հրատարակությունները⁴⁷²: Արմաշի Չարխափան Ս.Աստվածածին վանքում պահվող ձեռագրերը հիմնականում կաշեկազմ էին, որոնք պատրասված էին որակյալ կաշվից և ունեին բերանակապեր: Կազմերը զարդարված էին քանդակներով, թանկարժեք մետաղներից պատրաստված զարդերով, խաչերով, խաչելության տեսարաններով⁴⁷³: Դպրեվանքը հարուստ էր տպագիր գրականությամբ: Այստեղ կային բացառիկ հրատարակություններ: Գրադարանը համալրվել է նաև Եղիշե Դուրյանի և Մադաքիա Օրմանյանի անձնական գրադարաններով: Ս. Աստվածածին պատկերից բացի, եկեղեցին ուներ նաև ուրիշ սրբապատկերներ⁴⁷⁴:

Բացի Արմաշում պահվող ձեռագրերից, Իզմիրի գավառի տարբեր բնակավայրերում պահվում էին հայկական ձեռագրեր: Դրանց զգալի մասը Նիկոմիդիո առաջնորդ Ստեփաննոս արքեպիսկոպոս Հովակիմյանի նախաձեռնությամբ հավաքվել են Իզմիրի առաջնորդարանում և 1903 թ.՝ նրա և Մկրտիչ վարդապետ Աղավնունու կողմից կազմվել է 87 ձեռագրերի ցուցակը: Այս ձեռագրացուցակում նկարագրված են 12 մագաղաթյա ձեռագրեր: Ամենահին ձեռագիրներն էին 1229 թ. ընդօրինակված Ճաշոց գիրքը և 1292 թ.՝ Ավետարանը⁴⁷⁵: Իզմիրի հայերի տեղահանությունից հետո հայտնի չէ, թե ինչ եղան այս ձեռագրերը: Պատմաբան Հարություն Քյուրտյանը 1966 թ. Ստամբուլի Թոփ Գափու Մերա պետական թանգարանում տեսել է Մկրտիչ Աղավնունու կազմած ձեռագրացուցակի երկու ձեռագրերը. 1468 թ. ընդօրինակված Ավետարանը և առանց հիշատակարանի Ավետարանը: Հայտնի չէ, թե ինչ պայմաններում

⁴⁷² Թովմեան Յ., Կաթողիկ գրականությունը Արմաշի ձեռագրերուն մեջ, «Հասկ» հայագիտական տարեգիրք, Բ տարի, 1949-1950, Անթիլիաս, 1950, էջ 294-309:

⁴⁷³ Թովմեան Յ., Չուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, Վենետիկ, 1962, էջ 450-489:

⁴⁷⁴ Մրմրեան Յ. Գ., Արմաշ 1600-1898, «Մասիս», Կ.Պոլիս, 12-24 յունիս, 1898, թիւ 112:

⁴⁷⁵ Ցուցակ հայերէն ձեռագրաց Նիկոմիդիոյ և շրջակայից, նշվ. աշխ., էջ 1-92:

են դրանք հայտնվել Ստամբուլի Թուփ Գափու Սերա պետական թանգարանում⁴⁷⁶: Ոչ վերջնական տվյալներով՝ Իզմիրի գավառում կորստյան են մատնվել 310 ձեռագրեր: Հայկական ձեռագրերը գիտական, պատմական և գեղարվեստական անգնահատելի արժեք ներկայացնելուց բացի, ունեցել են նյութական մեծ արժեք: Հայ ժողովուրդը մեծ գումարներ է ծախսել դրանց ստեղծման, նորոգման և հաճախ նաև փրկագնման համար: Հայկական ձեռագրերի ստեղծման համար տքնել են գրիչներ, ծաղկողներ, սրբագրողներ, թուղթ կոկողներ, կազմարարներ, կաշեգործներ, ոսկերիչներ, արծաթագործներ, կոստող պատրաստող դարբիններ, կազմի միջուկ պատրաստող հյուսներ⁴⁷⁷: Հայկական ձեռագրերի հիշատակարաններում տեղեկություններ են հայտնվում ձեռագրերի արժեքի մասին: Այսպես, օրինակ՝ ոմն Նազար 1611 թ. 4.000 դահեկան է վճարել Ավետարան գնելու համար: Խոջա Զիրաք անունով մի անձնավորություն 1626 թ. 1050 դուրուշով ճաշոց և Աստվածաշունչ է գնել⁴⁷⁸: Հայկական ձեռագրերը հիմնականում ունեցել են ոսկյա և արծաթյա կազմեր, որոնք զարդարված են եղել թանկարժեք քարերով: Դարերի ընթացքում հայ ժողովրդի թշնամիները կամ ոչնչացնում էին կամ գերեվարում էին հայկական ձեռագրերը՝ մեծ փրկագին պահանջելով հայերից: Հայ մարդը գերված ձեռագիրը դիտում էր ինչպես գերված մարդուն, որը փրկության կարիք ունի, և որին պետք է ազատել անօրենների ձեռքից⁴⁷⁹: Օրինակ՝ Արմաշում պահվող 1433 թ. գրչագրված Ավետարանը

⁴⁷⁶ Քյուրտեան Յ., Գրախօսական, Ցուցակ հայերեն ձեռագրաց Նիկոմիդիոյ և շրջակայից կազմեց՝ Ստեփաննոս Արքեպս. Յովակիմեան առաջնորդ վիճակին Նիկոմիդիոյ 1903ին, «Սիոն», Երուսաղէմ, 1971, թիւ 9-10, էջ 379:

⁴⁷⁷ Մաթևոսյան Ա., Հայերեն ձեռագրերի հիշատակարանները միջնադարյան հայ մշակույթի ուսումնասիրության սկզբնաղբյուր, Երևան, 1998, էջ 74:

⁴⁷⁸ Հարությունյան Խ., Հայերեն ձեռագրերի հիշատակարանները, Երևան, 2019, էջ 24:

⁴⁷⁹ Մաթևոսյան Ա., Հայերեն ձեռագրերի հիշատակարանները միջնադարյան հայ մշակույթի ուսումնասիրության սկզբնաղբյուր, Երևան, 1998, էջ 75:

փրկագնվել է 3000 դահեկան գումարով⁴⁸⁰: Քրդերի կողմից Մալաթիայից հափշտակված և 1905 թ. Ադանա բերված և առաջնորդության կողմից փրկագնված մագաղաթյա Ավետարանի փրկագնի և նորոգման համար 45 մեջիդեի* ծախս է արվել⁴⁸¹:

Արմաշի Չարխափան Ս. Աստվածածին վանքն ուներ իր տպարանը, որտեղ 1863-1889 թթ. հրատարակել է 24 գիրք⁴⁸²: 1864-1878 թթ. այս տպարանում տպագրվել են ազգային, կրոնական, իմաստասիրական և բանասիրական «Հույս» ամսագիրը, իսկ 1896 թ. «Մասիս» կրոնական օրաթերթը⁴⁸³:

Արմաշի դպրեվանքի տնտեսական վիճակի մասին 1908 թ. Կ.Պոլսո Հայոց պատրիարքությանը ներկայացրած տեղեկագրի համաձայն՝ վանքին է պատկանել 30.000 արտավար հողատարածք⁴⁸⁴: Դպրեվանքին պատկանող Ս. Անտոնի կոչված անուշահամ ջրհորը Արսեն վարդապետ Եղիկյանի ծախսերով 1907 թ. ամբողջապես վերանորոգվեց⁴⁸⁵: Երկաթյա խողովակներով ջուրը հասավ Արմաշի այգիները և ուխտագնացները ապահովվեցին ջրով⁴⁸⁶:

Վանքի ջրաղացը ջրառատ շրջանում 140 օսմանյան ոսկեդրամ շահույթ էր բերում: Այն ավելի արդյունավետ դարձնելու նպատա-

⁴⁸⁰ Թովմյան Յ., Յուշեր Արմաշի ձեռագրերէն, «Սիոն», Երուսաղէմ, 1927, յունիս-օգոստոս, թիւ 7-8, էջ 218:

* Նախկինում թուրքական ոսկեդրամ (6.61 գրամ զուտ ոսկի), հետո սովորական արծաթադրամ մոտ՝ 20 պիաստ (20 դուրուշ): Տե՛ս Գուստ Վ., նշվ աշխ., էջ 481:

⁴⁸¹ Մատենադարանի Արխիվային Բաժնի Ադանայի Հայոց առաջնորդության անմշակ ֆոնդ:

⁴⁸² Ոսկերչյան Ն., Սավալյան Ա., Սողոմոնյան Մ., Գյուլումյան Օ., Սահակյան Ս., Թադևոսյան Ս., Հայ գիրքը 1951-1900 թվականներին, Երևան, 1999, էջ 824, 829:

⁴⁸³ Բաբլոյան Մ. Ա., նշվ. աշխ., էջ 33-34, 50:

⁴⁸⁴ Քրոնիկ Հայ եկեղևոյ Արմաշի դպրեվանքին մատակարարութիւնը, «Բիւզանդիոն», 13-20 յուլիս, 1908:

⁴⁸⁵ Զանազան լուրեր, «Փունջ», Կ.Պոլիս, 22 սեպտեմբեր 1907, թիւ 2, էջ 35:

⁴⁸⁶ Քրոնիկ, «Մանգումէի էֆէնար», Կ.Պոլիս, 15-28 սեպտեմբեր 1907, թիւ 1918:

կով դպրեվանքի ինամակալությունը 800 օսմանյան ոսկեդրամով 32 ձիաուժ շարժիչ տեղադրեց ջրաղացի վրա⁴⁸⁷: Արմաշի վանքին պատկանող ընդարձակ հողատարածքներն ու անտառներն արդյունավետ օգտագործելու նպատակով՝ 1911 թ. Կ.Պոլսի Քաղաքական ժողովը որոշում կայացրեց միաբանության ներկայացուցիչներից մեկին ուղարկել Հալքալեի կամ Կրենիոնի երկրագործական վարժարաններում անտառտնտեսություն և շերամաբուծություն ուսանելու և գյուղատնտեսության այլ ոլորտների մեջ հմտանալով՝ վերադառնալ և շահագործել այդ կալվածքները⁴⁸⁸: Արմաշի վանքի հողերից ավելի քան 70 արտավարը թթաստաններ էին: Վանքն ուներ 2 ընդարձակ շտեմարաններ: Այստեղ աշխատող մասնագետներն ավարտել էին Բուրսայի Շերամաբուծական վարժարանը և աշխատելով շերամաբուծության նորագույն մեթոդներով՝ մեծ արդյունքների էին հասնում: Արմաշում տարեկան 20 տուփ շերամի հունդ էին ստանում, որն աչքի էր ընկնում իր բարձր որակով և վաճառվում էր Կովկասում ու Բուլղարիայում⁴⁸⁹: 1906 թ. նրանք ստացել էին 22 տուփ շերամի հունդ և 1020 օխա* շերամ: Արմաշում տարեցտարի զարգանում էր շերամաբուծությունը⁴⁹⁰: Արմաշի դպրեվանքի շերամապահները 1907 թ. վաճառքի համար Կ.Պոլիս ուղարկեցին ստացված 8 պարկ և 299 քաշ շերամ, որի 1 օխայի գինը կազմում էր 60,5 դուրուշ⁴⁹¹:

⁴⁸⁷ Հայկական կեանք, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 25 դեկտեմբեր-7 յունուար 1909, թիւ 168:

⁴⁸⁸ Հայկական կեանքէն: Արմաշի վանքին մատակարարութիւնը, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 1911, 1-14 սեպտեմբեր, թիւ 681:

⁴⁸⁹ Արմաշի շերամի հունտը, «Բիւզանդիոն», Կ.Պոլիս, 8-20 դեկտեմբեր 1897, թիւ 340:

* Օանրության թուրքական չափ, հավասար էր 1282 գրամի:

⁴⁹⁰ Արմաշի դպրեվանքին շուրջ, «Մանգումէի էֆքեար», Կ.Պոլիս, 18-31 յուլիս 1907, թիւ 1867:

⁴⁹¹ Քրոնիկ, «Մանգումէի էֆքեար», Կ.Պոլիս, 5-18 հոկտեմբեր 1907, թիւ 1936: Տէ ս նան Քրոնիկ, «Մանգումէի էֆքեար», Կ.Պոլիս, 12-25 սեպտեմբեր 1907, թիւ 1915:

Արմաշ գյուղի տնտեսության զարգացմանն իրենց նպաստը բերեցին այստեղ ստեղծված տնտեսական ընկերությունները: 1909 թ. հիմնվեց «Երկրագործական միությունը», որի նպատակն էր գյուղատնտեսությամբ զբաղվող անձանց ազատել տարբեր շահագործումներից և գյուղատնտեսությունը զարգացնել նորագույն մեթոդներով⁴⁹²: Ուներ 35 անդամ, բացառապես՝ երկրագործներ, ովքեր տրամադրել էին դրամագլուխ և ունեցվածք՝ սերմացու, արոր, գութան և այլն: Միության հոդը մշակվում էր կապալով, և բոլոր անդամները մասնակցում էին վարուցանքին ու այլ աշխատանքներին: Բերքն ամբարվում էր միության շտեմարանում, որից 25 %-ը հատկացվում էր 35 անդամների կարիքներին, մնացյալը՝ 100 դուրուշ արժեքով տրվում էր գյուղացիներին, հացահատիկային կուլտուրայի դիմաց ամսական 1,5 %-ով: 1910 թ. միությունը ցանել էր 100 կգ հացահատիկային կուլտուրաներ և ստացել 500 կգ⁴⁹³:

1909 թ. այստեղ հիմնված «Շահակցական սպառողական միությունը» նպատակ էր հետապնդում անդամավճարներից գոյացած գումարներով աջակցել տնտեսական տվյալ բնագավառում գործող իր անդամներին և պաշտպանել գյուղի աշխատավորության շահերը: 1910 թ. միությունն ուներ 102 անդամ, որոնք 5 դուրուշ ամսավճար էին վճարում և պարտավոր էին տարեկան մուծել մեկ օսմանյան ոսկեդրամ: Ընկերությունն առաջին տարին Արմաշում բացեց նպարեղենի խանութ: Զբաղվում էր նաև շերամահունդի և այլուրի, իսկ 1910 թ.-ից՝ գործվածքեղենի առևտրով: Քիչ տոկոսով գումարներ էր տրամադրում գյուղացիներին՝ նրանց ազատելով վաշխառուների շահագործումից: 1912 թ. միությունն ուներ 500 ոսկեդրամ դրամագլուխ⁴⁹⁴: 1910 թ. այստեղ ստեղծված «Գործակցական միությունը» 1911 թ. շարունակեց իր արդյու-

⁴⁹² Գասապեան Մ. (Ֆարհատ), նշվ. աշխ., էջ 201:

⁴⁹³ Դադայան Խ., նշվ. աշխ., էջ 74-75:

⁴⁹⁴ Գասապեան Մ. (Ֆարհատ), նշվ. աշխ., էջ 206: Տե՛ս նաև Նամակ խմբագրության, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 25 նոյեմբեր-8 դեկտեմբեր 1910, թիւ 448:

նավեռ գործունեությունը: Այն ձևաձևը գյուղացիներին ցածր գներով վաճառեց 36.000 ցորեն և ալյուր, իսկ աղքատներին՝ չնչին գներով: Միությունը ցորենի և ալյուրի առևտրից բացի, զբաղվում էր նաև նպարեղենի և կերպասի առևտրով և դրանք գյուղացիներին էր տրամադրում մատչելի գներով: Միության ստացած 250 տուփ շերամի հունդը մատչելի գներով նույնպես վաճառեց շերամապահներին: Արդյունքում գյուղի մեծահարուստները, ովքեր վաշխառությամբ մեծ գումարներ էին աշխատում՝ ձեռնունայն մնացին: Նույն թվականին Արմաշում սկսել էր ձևավորվել «Արդյունաբերական-գործակցական միությունը»: Համագործակցության սկզբունքով իրար միացած 5 անձինք սկսել էին մշակել 100 արտավար հող՝ ծխախոտ և 20 արտավար հող՝ ընդդեմ, սոխ, ձմերուկ և այլն մշակելու համար: Արմաշցիները լիահոյս էին, որ այս միությունը նույնպես իր նպաստը կբերի գյուղի տնտեսության զարգացմանը և գյուղացիների բարեկեցության բարձրացման գործին⁴⁹⁵:

Արմաշի «Կանանց կրթասիրաց միությունը» նախաձեռնել էր գյուղում կառուցել մանկապարտեզ և այդ նպատակի համար տրամադրել՝ 6 օսմանյան ոսկեդրամ: 1914 թ. մարտին Արմաշի դպրեվանքի աշակերտությունը կազմակերպեց ներկայացումներ, որի հասույթը տրամադրվում էր մանկապարտեզի ֆոնդին: Մանկապարտեզի շինարարության ատաղձը կտրվեց դպրեվանքին պատկանող անտառներից: Այս գործին իրենց նյութական աջակցությունը բերեցին նաև Բուրսայի հայաբնակ գյուղերը⁴⁹⁶: Արմաշում մանկապարտեզ կառուցելու համար գյուղի աշակերտները ներկայացումներով հանդես եկան, որի հասույթը ծառայելու էր նույն նպատակին⁴⁹⁷:

1910 թ. գյուղի երիտասարդները ստեղծեցին «Բանվորական միությունը», որի նպատակն էր պաշտպանել իրենց աշխատանք-

⁴⁹⁵ Թղթակից, Շրջանէն լուրեր, «Բիթանիա», Ատա-Բազար, 1 յուլիս 1911, թիւ 17, էջ 461:

⁴⁹⁶ Հայկական կեանք, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 5-18 մարտ, 1914, թիւ 1455:

⁴⁹⁷ Նույն տեղում, թիւ 1456:

քային իրավունքները: 1911 թ. Արմաշում հիմք դրվեց «Արդյունաբերական ընկերությանը»⁴⁹⁸: Ըստ ֆրանսիական «Annuaire Oriental» տարեցույցի 1914 թ. համարի՝ Արմաշում գործում էին հայերին պատկանող 30 առևտրական տներ⁴⁹⁹:

Գյուղում հիմնվեց «Ազատամարտ» ընթերցասրահը, որի նպատակն էր բանախոսություններ կազմակերպելով՝ բարձրացնել գյուղացիների ընդհանուր մակարդակը⁵⁰⁰: 1911 թ. հիմնված «Ուսանողական միությունը» մարտին կազմակերպեց իր առաջին ցերեկույթը, որի ժամանակ հնչեցին ելույթներ, հայկական երգեր, կտարվեցին ազգային պարեր⁵⁰¹: Արմաշում գործում էին ՀՅԴ և ՄԴՀԿ մասնաճյուղերը, որոնք ունեին իրենց ակումբները⁵⁰²: Գյուղում գործում էր ՀՅԴ կուսակցության ընթերցասրահը: Այս կուսակցության անդամների նախաձեռնությամբ այստեղ հիմնվել էր «Շահակցական ընկերությունը», որի նպատակը գյուղացիների տնտեսական վիճակի բարելավմանը նպաստելն էր:

1911 թ. Արմաշի վանքի հողերի վրա բռնի կերպով սկսեցին հաստատվել մահմեդական գաղթականները: Տվյալ հողատարածքների նկատմամբ վանքի բացարձակ իրավունքը հաստատող փաստաթղթերն ունենալով հանդերձ, խնամակալությունը անգորգտնվելով մահմեդականների այս ոտնձգությունների դեմ, որոնք սպառնում էին տիրանալ նաև վանքապատկան անտառներին՝ աջակցության դիմում-նամակ ուղղեցին Կ.Պոլսո Հայոց պատրիարքություն⁵⁰³: Արմաշի վանքի անտառների շարունակվող անօրինական ծառահատումները կանխելու համար փոխվանահայրը

⁴⁹⁸ Դարբին, Արմաշեան նօթեր, «Բիւթանիա», Ատա-Բազար, 21 օգոստոս 1911, Բ տարի, թիւ 20-21, էջ 490:

⁴⁹⁹ Զիթունի, նշվ. աշխ.:

⁵⁰⁰ Դարբին, Թղթակցութիւններ, «Բիւթանիա», Իզմիտ, 1 նոյեմբեր 1910, թիւ 27, էջ 297:

⁵⁰¹ Մանր լուրեր, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 16-29 մարտ 1911, թիւ 539:

⁵⁰² Գասապեան Մ. (Ֆարիատ), նշվ. աշխ., էջ 272:

⁵⁰³ Հայկական կեանքէն, Մուհաճիւրները հայկական հողերուն վրայ, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 1911, 19-26 մարտ, թիւ 537:

ստիպված եղավ դիմել դատարան⁵⁰⁴։ Այդ խնդիրը լուծելու նպատակով Ներքին գործերի նախարարությունից այստեղ եկած Սամի բեյը Ալանգուզ թուրքաբնակ գյուղի բնակիչներին քաջալերեց, որ նրանք շարունակեն իրենց գործը և բռնագրավեն նոր անտառաշերտեր և արտեր⁵⁰⁵։ Դարեր շարունակ Արմաշի վանքին պատկանած հողատարածների և անտառների նկատմամբ նման ոտնձգություններ երբեք տեղի չէին ունեցել և անգամ՝ համիդյան շրջանում։ Այդ հողատարածքների կալվածագրերը գտնվում էին հայերի ձեռքում։ Հայերի բողոքների և դիմումներին ի պատասխան՝ թուրքական իշխանությունները գաղթականների ոտնձգությունները կանխելու փոխարեն՝ չհիմնավորված տուգանքներ էին պահանջում վանքից⁵⁰⁶։ 1911 թ. թուրք գյուղացիներն ամեն օր 50-60 սայլ փայտ են կտրում վանքի անտառներից⁵⁰⁷։ Արմաշի անտառները մահմեդական գաղթականների կողմից շարունակվում էին ծառահատվել և փոխվանահայր Մեսրոպ վարդապետը գնաց Կ.Պոլիս՝ այս գործով դատական հայց ներկայացնելու համար⁵⁰⁸։ Որից հետո, այստեղ քննիչ ուղարկվեց Թալեաթ բեյի կողմից։ Նրա Արմաշ կատարած այցից հետո, նոր թափ ստացան ծառահատումները⁵⁰⁹։ Հողային գրավումների հետ մեկտեղ, ինչպես երկրի տարբեր հայաբնակ վայրերում, այնպես էլ Արմաշում՝ ծայր էին առել հայերի նկատմամբ հալածանքները։ 1910 թ. ապրիլին Արմաշի մոտակայքում դարանակալված ավագակախմբի կողմից մարմնա-

⁵⁰⁴ Հայկական կեանքեն։ Մանր լուրեր։ Արմաշի անտառները, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 1911, 22 հոկտեմբեր-4 նոյեմբեր, թիւ 725:

⁵⁰⁵ Ազգային կեանքեն, Արմաշի գրաւուած կալուածները, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 1911, 3-16 ապրիլի, թիւ 555:

⁵⁰⁶ Արմաշի հողային խնդիրը և Յակոբ Էֆ. Համամճեանի կարևոր տեղեկագիրը, «Ժամանակ», Կ.Պոլիս, 18 յուլիս-13 յուլիս, 1910, թիւ 514:

⁵⁰⁷ Վանքապատկան անտառները, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 2-15 հոկտեմբեր 1911, թիւ 708:

⁵⁰⁸ Մանր լուրեր, Արմաշի անտառները, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 22 հոկտեմբեր-4 նոյեմբեր, 1911, թիւ 725:

⁵⁰⁹ Ուխտաւոր, Արմաշէն լուրեր, «Ժամանակ», Կ.Պոլիս, 14-27 սեպտեմբեր 1912, թիւ 1217:

կան ծանր վիրավորանքներ ստացան 9 հայեր և կողոպտվեցին⁵¹⁰: 1913 թ. հունվարին սուտ մատնությամբ Արմաշի գյուղացիներից մեկը ձերբակալվեց և ոստիկանությունում դաժան ծեծի ենթարկվեց⁵¹¹:

Արմաշի հայերի տեղահանությունից անմիջապես հետո, հայ աքսորյալների շարժական ունեցվածքը կողոպտվեց, իսկ անշարժ գույքը բռնագրավվեց: Կողոպտվեցին Արմաշի Չարխափան Ս. Աստվածածին եկեղեցական առարկաները, ձեռագրերը ու գրքերը, վանքի մթերքը կողոպտվեց, իսկ կալվածքները, պարտեզները, արտերը և անտառները գրավվեցին թուրքերի և պետական պաշտոնյաների կողմից: Անհետացավ Արմաշի Չարխափան Ս. Աստվածածին սրբապատկերը⁵¹²: Յուրացվեց նյութական արժեք ունեցող ամեն ինչ: Տեղի իշխանությունների կողմից բռնագրավվեց Արմաշի փոխվանահայր Մեսրոպ եպիսկոպոսի կողմից վաճառված ընտանի կենդանիների վաճառքից գոյացած շուրջ 400 ոսկեդրամ գումարը⁵¹³: Միաբանության անդամները և դպրեվանքի ուսուցիչները տարագրվեցին Կոնիա և այլուր⁵¹⁴: Արմաշի դպրեվանքի և Չարխափան Ս. Աստվածածին վանքի 80 000 ոսկեդրամ արժողությամբ եկեղեցական սպասքը և թանկարժեք իրերը կողոպտվեց թուրք պաշտոնատար անձանց կողմից: Վանքի ճոխ մատենադարանը ոչնչացվեց, յուրացվեցին գեղանկարները և այլ թարկարժեք առարկաները: Վանքի պղնձյա աշտանակները և այլ իրեր փոխադրվեցին Կ.Պոլիս, և թուրքերի կողմից բռնագրավված «Պօն» անգլիական ընկերության գործարանում ձուլվեցին: Այս

⁵¹⁰Աւագակութե անդէպք մը Արմաշի շրջակայքը, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 1910, 11-24 ապրիլի, թիւ 257:

⁵¹¹Հայ-ագգայիս լուրեր, «Բիւզանդիոն», Կ.Պոլիս, 2-13 յունուար 1913, թիւ 4934:

⁵¹²Արմաշի Չարխափանը, «Ժամանակ», Կ.Պոլիս, 20 ապրիլ-3 մայիս, 1919, թիւ 3511:

⁵¹³ Ակունի Ս., Միլիոն մը Հայերու ջարդի ամբողջական պատմութիւնը (1914-1918), Կ.Պոլիս, 1921, էջ 132-133:

⁵¹⁴Զաւէն Արքեպս., Պատրիարքական յուշերս: Վաւերագրեր և վկայութիւններ, Գահիրէ, 1947, էջ 286:

գործարանի պաշտոնյա Պողոս Սարաճյանը վկայել է, որ այդ առարկաների վրա տեսել է Արմաշի վանքին պատկանելու մասին արձանագրություններ⁵¹⁵:

Արմաշի հայությունից հրաշքով փրկվածները, որոնք մեծամասամբ կանայք ու երեխաներ էին՝ 1919 թ. սկզբներին վերադարձան իրենց ավերված տները⁵¹⁶: Արմաշի հայերի վերադարձից հետո, տեղի իշխանությունները նրանց հանձնեցին Չարխափան Ս. Աստվածածին եկեղեցին, դպրեվանքի շենքերը, ջրաղացը, փուռը, անտառները: Գյուղացիների կազմած մարմինն իր վրա վերցրեց ազգային հաստատությունների հոգածությունը, մինչև խնամակալության կազմավորումը: Եկեղեցու բեմը, սեղանը, խաչկալը ամբողջապես քանդված էին, իսկ եկեղեցին մզկիթի էր վերածվել: Մի քանի անգամ այստեղ նամագ անելուց հետո, մոլլան մահացել էր, որից հետո թուրքերը դադարեցրել էին վանքում աղոթել: Արմաշի դպրեվանքի շենքը վերածվել էր թուրքական որբանոցի, այդ իսկ պատճառով կանգուն էր մնացել⁵¹⁷: 1918 թ. նոյեմբերին թուրքական իշխանությունները դատարկեցին Արմաշի դպրեվանքը⁵¹⁸: Արմաշի գյուղացիներն իրենց միջոցներով ամրացրին Չարխափան Ս.Աստվածածին եկեղեցին, նորոգեցին տանիքը, գմբեթը և 1919 թ. նոյեմբերին այն պատրաստ էր արարողության համար⁵¹⁹: 1919 թ. դեկտեմբերին տարագրությունից հետո առաջին անգամ դեկտեմբերին Արմաշի Չարխափան Ս. Աստվածածին վանքում

⁵¹⁵Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 360:

⁵¹⁶ Զօպանեան Ա., Գաւառի ձայներ, Արմաշէն, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 28 փետրուար 1919, թիւ 93:

⁵¹⁷Արմաշի վանքին վիճակը, «Ժամանակ», Կ.Պոլիս, 8-21 օգոստոս, 1919, թիւ 3604:

⁵¹⁸Արմաշի վանքը պարպված, «Ժողովուրդ», Կ.Պոլիս, 19 նոյեմբեր-2 դեկտեմբեր 1918, թիւ 30:

⁵¹⁹ Արմաշի վանքին բացումը, «Ժամանակ», Կ.Պոլիս, 23 հոկտեմբեր-5 նոյեմբեր 1919, թիւ 3667:

տեղի ունեցավ պատարագ: Ս.Աստվածածնի գտնված պատկերը նոր շրջանակի մեջ դրված էր խորանին⁵²⁰:

1919 թ. սեպտեմբերին Կ.Պոլսի Ռբբախնամ կենտրոնական հանձնախմբի, Ազգային խնամատարության և Կ.Պոլսո պատրիարք Զավեն Տեր-Եղիայանի հետ համատեղ որոշում կայացրին ստեղծել հանձնախումբ, որը Արմաշում պետք է հիմներ գյուղատնտեսական վարժարան՝ ազգի որբերին կրթված երկրագործներ պատրաստելու համար⁵²¹: Արմաշի դպրեվանքի խնամակալությանը 1919 թ. սեպտեմբերին որոշում կայացրեց շենքերը տրամադրել Գյուղատնտեսական վարժարանին⁵²² և այդ գործի համար տրամադրեց 20.000 օսմանյան ոսկեդրամ⁵²³: Արմաշի դպրեվանքի տնտեսական հնարավորությունների մասին հանձնախմբի ներկայացրած տեղեկագիրն ուներ հետևյալ պատկերը: Դպրեվանքի պարիսպների ներսում կային շենքեր՝ եկեղեցին, վեհարանը, վարժարանը, շտեմարանը և ուխտավորների համար նախատեսված շենքը: Վեհարանում գտնվում էին ընդարձակ սրահներ, 18 սենյակներ, մառնատուն, խոհանոց և այլ սենյակներ: Վարժարանի առաջին հարկում էին գտնվում ընդարձակ դահլիճը, որն ուներ բեմ: Երկրորդ և երրորդ հարկերն ունեին մեծ սրահներ, 7 սենյակներ, բաղնիք և այլ սենյակներ: Շենքն ունի 200 փայտյա մահճակալ և հարմար է գիշերակացի համար: Շտեմարանը եռահարկ էր և ուներ 34 մեծ ու փոքր սենյակներ, որտեղ կային 50 գրասեղան, գրատախտակներ և հարմար էին դասասենյակների համար: Ծառախիտ պարտեզների մեջտեղում կանգնած է եկեղեցին, որի կողքին գտնվում էր մեծ ջրամբարը: Նշվածներից

⁵²⁰ Արմաշի եկեղեցւոյն բացումը, «Ժամանակ», Կ.Պոլիս, 14-27 նոյեմբեր, 1919, թիւ 3686:

⁵²¹ Արմաշ, «Ճակատամարտ, գյուղատնտեսական ամսօրեայ յաւելուած», Կ.Պոլիս, 1919, սեպտեմբեր, 1919, Ա տարի, թիւ 3, էջ 28:

⁵²² Արմաշի Գյուղատնտեսական վարժարանը, «Ժողովուրդ», Կ.Պոլիս, 12 սեպտեմբեր 1919, թիւ 38:

⁵²³ Ազգային լուրեր, Արմաշի վանքը, «Ժամանակ», Կ.Պոլիս, Ժամանակ, 30 օգոստոս-12 սեպտեմբեր 1919, թիւ 1518:

բացի, կային նաև այլ շենքեր և պարտեզներ: Վանքին պատկանող այգիներից, որոնք գտնվում են քիչ հեռու, կարելի էր 6000 օխա բերք ստանալ: Այգիներում աճում էին բալի, կեռասի և թզի ծառեր: Վանքն ունի 3 ջրաղաց, որոնք աշխատում էին ջրով և շարժիչով: Այդ ջրաղացները կարող էին 1500-2500 օխա հացահատիկ աղալ: Վանքից 3 կմ դեպի արևելք գտնվում է ագարակը, որտեղ բոլոր տեսակի անասունների համար կային ախոռներ, բերքերի և մեքենաների շտեմարաններ և բնակության համար հարմար շենք: Ագարակին կից գտնվում էր հսկա անտառը, որը մեծ հասույթ է բերում վանքին: Այս անտառից, եթե տարեկան 5000 ծառ կտրվեր, ապա մեծ բան չէր պակասի դրանից: Անտառի մոտակայքում էին գտնվում բարեբեր դաշտերը, որոնք հարմար էին հացաբույսերի և կարոֆիլի մշակութեան համար: Ամերիկյան տրակտորների օգտագործումից 200 արտավար այս հողերից մեծ բերք էր ստացվում: Թուրքերի ցանած արտերի վարձքի գումարը կազմում էր 1000, խաղողից և ընկույզից՝ 150, ջրաղացներից՝ 1800, 5000 ծառերից՝ 10000 օսմանյան ոսկեդրամ, իսկ ընդհանուր հասույթի գումարը կազմում էր 12.950 օսմանյան ոսկեդրամ⁵²⁴: Վանքին պատկանող հողատարածքների գլխավոր մասը կազմում էր անտառը, որն աճում էր 1500-2000 արտավար հողի վրա: Ծառերի 90 տոկոսը կաղնիներ էին, իսկ 10 տոկոսը՝ թղկենիներ: Դրանց միջին բարձրությունը 10 մետր էր, իսկ շրջագիծը՝ 1,10 մետր⁵²⁵:

Արմաշում կյանքը բնականոն հունի մեջ էր մտել, ձևավորվել էին ազգային իշխանություններ, որոնք լծվել էին ազգային խնդիրների լուծման գործին: Գյուղատնտեսական վարժարանի տարեկան բյուջեն կազմում էր 20.000 ոսկեդրամ⁵²⁶: Պոլսեցի

⁵²⁴ Արմաշ, «Ճակատամարտ, գյուղատնտեսական ամսօրեայ յաւելլուած», Կ.Պոլիս, 1919, սեպտեմբեր, 1919, Ա տարի, թիւ 3, էջ 28-29:

⁵²⁵ Ազգային խնամատարութիւն ընդհանուր տեղեկագիր, առաջին վեցամսեայ, 1 մայիս 1919-31 հոկտեմբեր 1919, Կ.Պոլիս, 1920, էջ 392:

⁵²⁶ Ազգային լուրեր, «Ժամանակ», Կ.Պոլիս, 28 օգոստոս-11 սեպտեմբեր 1919, թիւ 3621:

վարպետները Արմաշի Գյուղատնտեսական վարժարանի համար 25 վառարաններ պատրաստեցին⁵²⁷: Ազգային խնամատարությունը Արմաշի Գյուղատնտեսական վարժարանի համար ընտրեց ամերիկացի մասնագետ, ով 1919 թ. սեպտեմբերին 50 հայ որբերի հետ մեկնեց Արմաշ⁵²⁸: Վարժարանի 12-20 տարեկան 200 սաները հավաքված էին երկրի տարբեր որբանոցներից: Այն բացվեց 1919 թ. նոյեմբերի 19-ին: Մինչ այդ, նորոգվեց կահկարասին, կառուցվեց լվացարան, բաղնիք և ախոռ⁵²⁹: 1920 թ. նոյեմբերին Արմաշի Գյուղատնտեսական վարժարանի 6 աշակերտներ Ազգային խնամատարության կողմից ուղարկվելու էին ԱՄՆ-ի Միչիգանի գյուղատնտեսական քոլեջներ՝ ագարակներում գյուղատնտեսության նորագույն մեթոդներ ուսումնասիրելու նպատակով⁵³⁰:

Արմաշցիների ծրագրերի իրականացումը խաթարվեց թուրք ազգայնականների հարձակումների, ավերածությունների և կողոպուտների հետևանքով⁵³¹:

Արմաշի Չարխափան Ս. Աստվածածին վանքը հայ ժողովրդի պատմության մեջ արձանագրված է որպես հայոց ուշ միջնադարի և նոր ժամանակների առավել նշանավոր կրթամշակութային կենտրոններից մեկը, որի դպրեվանքյան շրջանի սաները արևմտահայության լուսավոր գործիչներն էին⁵³²: Իր գոյության 25

⁵²⁷ Արմաշի վանքին վառարանները, «Ժամանակ», Կ.Պոլիս, 23 հոկտեմբեր-5 նոյեմբեր 1919, թիւ 3667: Տե՛ս նաև Փափագեան Յ., Արմաշի որբանոց-վարժարանին վառարանները, «Ժամանակ», Կ.Պոլիս, 7-20 նոյեմբերի 1919, թիւ 3680:

⁵²⁸ Հայկական կեանք, «Հակատամարտ», Կ.Պոլիս, 21 սեպտեմբեր 1919, թիւ 264:

⁵²⁹ Ազգային խնամատարութիւն ընդհանուր տեղեկագիր, առաջին վեցամսեայ, 1 մայիս 1919-31 հոկտեմբեր 1919, Կ.Պոլիս, 1920, էջ 388-390:

⁵³⁰ Հայկական կեանք: Արմաշական ուսանողները դեպի Ամերիկա, «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ», Կ.Պոլիս, 11-24 նոյեմբեր 1920, թիւ 645:

⁵³¹ Հայկական կեանք: Գաւառ, «Ժողովուրդի ձայնը», Կ.Պոլիս, 9-16 յունիս 1920, թիւ 508: Տե՛ս նաև Արմաշի վանքին համար, «Հայաստանի կոչնակ», Նյու Եորք, 19 մարտ 1921, թիւ 12, էջ 423:

⁵³² Մուրադեան Պ., Մուշեղեան Ա, Արմաշի դպրեվանքը, Երևան, 1998, էջ 1:

տարիների ընթացքում Արմաշի դպրեվանքը տվեց եկեղեցական նոր սերունդ, որը կարևոր դեր խաղաց արևմտահայության եկեղեցական և մշակութային կյանքում: Այստեղ ուսանած 300 սաներից միայն 30-35-ը ընտրեցին եկեղեցական ասպարեզը, մնացյալը ժողովրդին ծառայեցին հիմնականում որպես ուսուցիչներ: Արմաշական եկեղեցականների այս նոր սերունդն էր, որ Հայոց ցեղասպանությունից հետո, Սփյուռքի տարբեր գաղթավայրերում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին փրկեց կազմալուծման վտանգից⁵³³:

Ասլանբեկ (Արսլանբեկ կամ Ասլան բեյ) գյուղը գուտ հայաբնակ բնակավայր էր, որը գտնվում էր Իզմիթի գավառակում⁵³⁴: Կառուցված էր Իզմիթից քաղաքից 20 կմ հեռավորության վրա, Իզմիթի ծոցի հարավ-արևմուտքում: Այն տարածվում էր Կեռք-Տաղ կոչված լեռան ստորոտին⁵³⁵: Հիմնվել է 1586-1632 թթ. դարաբաղցի և դզլարցի գաղթականների կողմից: Հետագայում գյուղի 6-7 հիմնադիր ընտանիքներին միացան նաև սեբաստացի, կարնեցի և վասպուրականցի ընտանիքներ: Նրանց իր պաշտպանության տակ է վերցրել Բոստանչի Բաշը Արսլան բեկը, որն այս կողմերի ընդարձակ հողերի սեփականատերն էր և նրա անունով էլ գյուղը կոչվել է Ասլանբեկ⁵³⁶: 1836 թ. Ասլանբեկի մոտ կերպասի պետական գործարանի կառուցման համար այլ վայրերից հայ որմնադիրներ, հյուսներ և այլ վարպետներ հաստատվեցին այստեղ՝ մասնակցելով շինարարական աշխատանքներին⁵³⁷: Գյուղն

⁵³³ Շ. Ա. Գ., Թուրքիոյ Հայոց Պատրիարքութեան պատմական դերը և անոր հիմնումով իրագործուած մշակութային նուաճումները, «Շողակաթ», Բացադիկ 1461-1961, վեցամսեայ հանդես, Ստամբուլ, յուլիս-դեկտեմբեր, 1962, թիւ 2, էջ 97-98:

⁵³⁴ Էփրիկեան Ս., Բնաշխարհիկ բառարան, Ա հատոր, Բ տպագրութիւն Վենետիկ 1903, էջ 250:

⁵³⁵ Ֆեներճեան Գ., Պատմութիւն Արսլանպէկի, Փարիզ, 1971, էջ 30:

⁵³⁶ Սերոբեան Ս., Արսլանբէկն և Արսլանբէկցիները, Բ, Հայրենիք, Բոստոն, օգոստոս 1958, թիւ 8, էջ 94-95:

⁵³⁷ Ֆեներճեան Գ., նշվ. աշխ., էջ 36-37:

ուներ անշուք մատուռ, որի տեղում 1846 թ. կառուցվեց Ս. Աստվածածին եկեղեցին: 1886 թ. նոյեմբերին գյուղում տեղի ունեցած հրդեհից առաջ Ասլանբեկն ուներ 450 ընտանիքից կազմված բնակչություն⁵³⁸: Քել-Թեփե լեռան մոտ գտնվում էր Ս. Թովմաս առաքյալի ուխտատեղին: Ասլանբեկն իր գեղեցկության համար անվանվում էր փոքրիկ Բերա⁵³⁹:

XVIII դարում Ասլանբեկն ուներ 130, 1847 թ.՝ 150, 1871 թ.՝ 300, 1885-1886 թթ.՝ 446, 1902 թ.՝ 548, 1909-1910 թթ.՝ 570 ընտանիքից կազմված բնակչություն⁵⁴⁰: 1912 թ. գյուղում ապրում էր 3500 բնակիչ⁵⁴¹: 1915 թ. այն ուներ արդեն 700 ընտանիքից կազմված հայ բնակչություն⁵⁴²:

1886 թ. մեծ հրդեհից հետո, գյուղի 450 տներից միայն 15 տունը մնաց: Նոր Ասլանբեկը կառուցվեց նախորդից քառորդ ժամ հեռավորության վրա: Հին տեղում պահպանվեց մետաքսի գործարանը, ուր հարյուրավոր կանայք էին աշխատում: 1894 թ. գյուղը կրկին այրվեց⁵⁴³: Այս հրդեհը ծրագրել և իրականացրել էին թուրքական իշխանությունները⁵⁴⁴:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը չսկսած, չերքեզները սկսեցին գաղթել Օսմանյան կայսրություն: Նրանցից շատերը բնակություն հաստատեցին Ասլանբեկի շուրջը և սկսեցին հարձակումներ իրականացնել գյուղի վրա⁵⁴⁵: Ասլանբեկցիները հոչակված էին իրենց քաջությամբ, նրանք պարբերաբար դիմա-

⁵³⁸ Սերոբեան Ս., նշվ. աշխ., էջ 95:

⁵³⁹ Էփրիկեան Ս., Բնաշխարհիկ բառարան, Ա հատոր, նշվ. աշխ., էջ 250:

⁵⁴⁰ Ֆենլըճեան Գ., նշվ. աշխ., էջ 103-104:

⁵⁴¹ Գալառիյն վիճակագրությունը, «Բիթանիա», Ատաբազար, 3 յունուար 1912, թիւ 1, էջ 538-539:

⁵⁴² Իզմիրտի արսլանբեկցի հայ զինուորները կը բողոքեն, «Ժողովուրդ», Կ.Պոլիս, 30 հոկտեմբեր-12 նոյեմբեր 1919, թիւ 10:

⁵⁴³ Էփրիկեան Ս., Բնաշխարհիկ բառարան, Ա հատոր, նշվ. աշխ., էջ 250:

⁵⁴⁴ Նամակ Պարիտիզակից, «Դրօշակ», Վիեննա մայիս, 1895, թիւ, 5 էջ 5:

⁵⁴⁵ Սերոբեան Ս., Արսլանբեկն և Արսլանբեկցիները, Գ, Հայրենիք, Բոստոն, սեպտեմբեր 1958, թիւ 9, էջ 88-91:

կայում էին իրենց կյանքի և ինչքի նկատմամբ շրջակա թուրքերի, չերքեզների և լազերի ոտնձգություններին⁵⁴⁶: Ասլանբեկի մոտ գտնվող պետական գործարանի տնօրենը գրավեց Չալըլըք կոչված 5000 արտավար անտառային հատվածը, որը պատկանում էր գյուղացիներին: Չնայած այն հանգամանքին, որ կալվածագրերը գտնվում էին հայերի ձեռքում, սակայն ինչպես երկրի բոլոր վայրերում՝ մեծ գումարներ պահանջող դատավարությունները ձգձգվում էին և ոչ մի օգուտ չէին տալիս հայերին⁵⁴⁷:

Ասլանբեկի Մամիկոնյան վարժարանը սկսել է գործել 1847-ից: 1849 թ. այստեղ հաստատվեց «Սրբոց Ղևոնդյան ընկերությունը», որը նպատակ ուներ օժանդակել գյուղի դպրոցին⁵⁴⁸: 1901 թ. Տեղի Ազգային նախակրթարանում սովորում էին 280 աշակերտներ, նրանց ուսուցանում էր 3 ուսուցիչ, իսկ ուսումնական ծախսը կազմում էր 570 դուրուշ, որն իր գանձանակից տրամադրում էր տեղի Թաղական խորհուրդը⁵⁴⁹: Ասլանբեկի վարժարանի վիճակը բարելավելու համար 1912 թ. մարտին Կ.Պոլսից թատերախումբ հանդես եկավ, և ներկայացումից գոյացած հասույթը ծախսվեց վարժարանի կարիքների համար⁵⁵⁰: 1902 թ. Ասլանբեկում հիմնվեց «Կանանց լսարանական միությունը», որը նպատակ էր հետապնդում կալվածքներ գնել վարժարանի համար: Ուներ 120 անդամուհիներ, որոնք վճարում էին 5 դուրուշ մուտքի տուրք, 10 փարա՝ անդամավճար: Միության դրամագլուխը կազմում էր 80 ոսկեդրամ: 1910 թ. վարժարանն ուներ 526 երկսեռ աշակերտություն և 20.000 դուրուշ բյուջե: Պաշտոնավարում էին 6 ուսուցիչներ և 3 ուսուցչուհի⁵⁵¹:

⁵⁴⁶ Էփրիկեան Ս., Բնաշխարհիկ բառարան, Ա հատոր, նշվ. աշխ., էջ 250:

⁵⁴⁷ Ֆեներճեան Գ., նշվ. աշխ., էջ 82-83:

⁵⁴⁸ Նույն տեղում, էջ 123, 121:

⁵⁴⁹ Վիճակացոյց գաւառական ազգային վարժարանանց Թուրքիոյ: Ա տետր, նշվ. աշխ., 3-րդ աղյուսակ:

⁵⁵⁰ Հայկական լուրեր, «Ժամանակ», Կ.Պոլիս, 5-23 մարտ 1912, թիւ 1066:

⁵⁵¹ Ֆեներճեան Գ., նշվ. աշխ., էջ 138:

Ասլանբեկում գործում էր ՄԴՀ կուսակցության մասնաճյուղը, որն ուներ իր ընթերցասրահը: 1912 թ. հուլիսին այստեղ հաստատվեց փոստատուն, որի ստեղծմանը տեղի իշխանություններին իր մեծ աջակցությունը բերեց ՄԴՀ կուսակցությունը⁵⁵²:

Այս կուսակցության մասնաճյուղը 1910 թ. կազմակերպեց հանգանակություն ի նպաստ գավառացի ուսանողների և հավաքված 162 դուրուշ գումարն ուղարկեց Կ.Պոլսի «Ազատամարտ» թերթի խմբագրություն: Այդ նպատակով Պարտիզակի մի խումբ երիտասարդներ իրենց հանգանակած 447 դուրուշը նույնպես առաքեցին Կ.Պոլիս⁵⁵³:

Գյուղի բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսություն էր. շերամաբուծությունը, ծխախոտագործությանը ու այգեգործությունը⁵⁵⁴: Նրանք զբաղվում էին նաև փայտամշակությամբ, ածխագործությամբ և դրա վաճառքով: Մշակված փայտը տեղափոխելու համար ամեն ընտանիք 10-15 ձի ուներ: Գյուղացիները զբաղվում էին նաև վայրի խոզի, եղնիկի, եղջերուի և արջի որսով⁵⁵⁵: Գյուղը շրջապատված էր անտառապատ լեռներով: Անտառը ոչ միայն կերակրում էր գյուղացիներին, այլև նրանց եկամտի աղբյուրներից էր հանդիսանում: Օրինակ՝ շագանակը և լորենու ծաղիկները առաքվում էին Կ.Պոլիս և Եվրոպա: Գյուղն արտահանում էր նաև ծխախոտ, շերամ և խաղող⁵⁵⁶: Ասլանբեկում գործում էին 7 ջրաղացներ: 1910-1911 թթ. գյուղը ստացել է 10.000 օխա ծխախոտ և 5.000 օխա բոժոժ: 1890-ից Ասլանբեկում գործում էին մետաքսի 8 մանարաններ: Այստեղ աշխատող բանվորուհի-

⁵⁵² Զատիկ, Թղթակցութիւններ, Ասլանպէկ, «Կոհակ», Կ.Պոլիս, 1912, 11-24 յուլիս, թիւ 27, էջ 276:

⁵⁵³ «Իբր յարգանք դաստիարակութեան», գաւառացի ուսանողներու համար, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 20 օգոստոս-2 սեպտեմբեր 1910, թիւ 365:

⁵⁵⁴ Թղթակից, Գաւառային քրոնիկ: Երեք հայաբնակ գյուղեր, «Բիւզանդիոն», Կ.Պոլիս, 1903, 2-15 մայիս, թիւ 2012:

⁵⁵⁵ Սերոբեան Մ., Արսլանբէկն և Արսլանբէկցիները, Գ, Հայրենիք, Բոստոն, սեպտեմբեր 1958, թիւ 9, էջ 88-91:

⁵⁵⁶ Նույն տեղում, թիւ 10, էջ 91:

ները օրական ստանում էին 4 դուրուշ աշխատավարձ⁵⁵⁷: Գյուղը ստանում էր եգիպտացորեն, ծխախոտ, կանեփ, շերամ, փայտածուխ, շինարարական ատաղձ, վառելափայտ: Ավելի քան 200 հոգի աշխատում էր գյուղի մոտակայքում գտնվող պետական ատաղ-ծագործական գործարանում⁵⁵⁸: Ասլանբեկցիները զբաղվում էին նաև առևտրով: Ըստ ֆրանսիական "Annuaire Oriental" տարեցույցի 1914 թ. համարի՝ Ասլանբեկում գործում էին հայերին պատկանող 15 առևտրական տներ⁵⁵⁹:

1910 թ. Արսլանբեկում 180 բաժներտերերի կողմից հիմնվեց «Օսմանյան շահակցական ընկերությունը», որի նպատակն էր դրամագլուխ ստեղծելով՝ ձեռնարկել առևտրական և արդյունաբերական գործ, որը շահույթ կապահովեր ոչ միայն ընկերությանը, այլև ժողովրդին: Անդամների մուտքի վճարը կազմում էր 5, իսկ շաբաթավճարը՝ 1 դուրուշ⁵⁶⁰: 1912 թ. գյուղում գործում էին արդեն 3 բաժնետիրական ընկերություններ⁵⁶¹:

1908 թ. հետո Ասլանբեկի տնտեսական կյանքում մեծ դեր սկսեց խաղալ կերպասի պետական գործարանը, որը սուլթան Համիդ Բ-ի գահակալության շրջանում փակ էր: Գործարանը վերաշինվեց և վերագործարկվեց նոր սարքավորումներով: Այստեղ աշխատողների մեծ մասը հայեր էին, 150-ը՝ ասլանբեկցիներ: Աշխատողները տարեկան 20 օսմանյան ոսկեդրամ էին վաստակում: Այս կերպ տարեկան 2500-3000 ոսկեդրամ գումար էր մտնում Ասլանբեկ: 1914-1915 թթ. ասլանբեկի աշխատողների թիվը հասավ 300-ի և տարեկան արդեն 4.000 ոսկի էր մտնում գյուղ: Ասլանբեկը տնտեսական զարգացման ճանապարհին էր և ամեն նախադրյալն ուներ դառնալու գավառի առատար բնակավայրերից մեկը, երբ հասավ

⁵⁵⁷ Ֆեներճեան Գ, նշվ. աշխ., էջ 110-113:

⁵⁵⁸ Գաւառին վիճակագրութիւնը, «Բիւթանիա», Ատաբազար, 3 յունուար 1912, թիւ 1, էջ 538-539:

⁵⁵⁹ Չիթունի, նշվ. աշխ.:

⁵⁶⁰ Գասապեան Մ. (Ֆարիատ), նշվ. աշխ., էջ 204:

⁵⁶¹ Հայկական լուրեր, «Ժամանակ», Կ.Պոլիս, 5-23 մարտ 1912, թիւ 1066:

1915 թ.: Տեղահանությունից առաջ Ասլանբեկի աղետը տեղի ունեցավ ճիշտ այնպես, ինչպես ողջ երկրի հայաբնակ վայրերում: Ձերբակալվեցին բնակչության երևելի անձինք և տարվեցին Իզմիթ⁵⁶²: 1915 թ. հուլիսի 18-ին առավոտյան ժամը 7-ին Արսլանբեկ գյուղը շրջապատվեց 200 զինվորներով, որոնց միացան 100 բաշիբոզուկներ (անկանոն զորք): Գյուղացիներին հրահանգեցին մինչև երեկո պատրաստ լինեն դեպի Էսկիշեհիր՝ մի քանի ամսով տեղահանվելու և այնուհետև հետ վերադառնալու համար: Գյուղից 700 հոգի արդեն զորակոչվել էին բանակ: Շրջակա գյուղերից թուրքեր եկան և առաջարկեցին 1 կովը՝ 40, կարի մեքենան 2 դուրուշով գնել, պնդելով, որ եթե այդ գնով չտան, վաղը ստիպված կլինեն ձրիաբար հանձնել: Գյուղացիներին պարտադրեցին երկու ձեռք հագուստ միայն վերցնել: Հայերի աքսորից հետո, Ուզուն Թարայի գյուղապետը մի խումբ չերքեզ ավազակների հետ գյուղի ամենաթանկարժեք գույքերը 200 կառքերով կողոպտեց և տարավ, իսկ ոստիկանապետը բացեց եկեղեցին և տիրացավ եկեղեցու ոսկյա և արծաթե թանկարժեք առարկաներին: Դրան հաջորդեց շրջակա թուրքական գյուղերի կողմից ասլանբեկցիների տների կողոպուտը: Գյուղն ամբողջապես կողոպտված էր, իսկ դաշտերում մնացած ծխախոտը, եգիպտացորենը, աճուրդով վաճառվեց Լքյալ գույքերի հանձնաժողովի կողմից⁵⁶³: Գումարի մի մասը հանձնաժողովի անդամներն իրար մեջ բաժանեցին: Գյուղի կերպասի զործարանը հասավ հազարապետին: Ասլանբեկի տների մեկ մասը հանձնվեցին շրջակա գյուղերի թուրքերին, իսկ մյուսը՝ Սալոնիկից

⁵⁶² Ֆեներճեան Գ., նշվ. աշխ., էջ 113-114, 147-148:

⁵⁶³ 1915 թ. հունիսի 10-ին երիտթուրքական իշխանությունները հրապարակվեցին հայերի թողած գույքերի հետ վարվելու վերաբերյալ «Լքյալ գույքերի մասին» 34 հոդվածից բաղկացած հրահանգները, որի հիման վրա ստեղծվեցին «Լքյալ գույքերի» հանձնաժողովներ, որոնք պետք է հաշվառեին և պահպանեին հայերի ունեցվածքը, սակայն հենց այս հանձնաժողովներն էլ կազմակերպեցին և իրականացրին հայերի ունեցվածքի կողոպուտն ու յուրացումը: Տե՛ս Աստոյան Ա., Դարի կողոպուտը. հայերի ունեզրկումը Օսմանյան կայսրությունում 1914-1923, Երևան, 2013, էջ 41-64:

եկած մահմեդականներին, ովքեր կողոպտեցին տների դռներն ու պատուհանները⁵⁶⁴:

Աքսորից վերադարձած ասլանբեկցիներն իրենց տների մեծ մասը քարուքանդ գտան, որոնք այս վիճակի էին հասել թուրք մուհաջիրների կողմից: Ասլանբեկցի զորացրված հայ 110 զինվորները բողոք էին ուղղել Կ.Պոլիս՝ պահանջելով, որ իրենց տները դատարկվեն և կողոպտված գույքերը վերադարձվեն: Թուրքերը դատարկել էին տները, սակայն իրենց հետ տարել էին դռներն ու պատուհանները⁵⁶⁵: Ասլանբեկցի ածխագործ 8 հայեր 1919 թ. փետրվարին հարձակման ենթարկվեցին թուրք ժանդարմների կողմից և կողոպտվեցին⁵⁶⁶: 1920 թ. հուլիսի 23-ին քեմալական զորախումբը հարձակվեց Ասլանբեկի վրա: Նրանց դեմ կռվող մարտիկների վերջին խումբը կարողացավ ճեղքել պաշարման շղթան⁵⁶⁷: Շատ չանցած Կ.Պոլիս լուր հասավ, որ գյուղն այրվել է թուրք ազգայնականների (քեմալականների) կողմից⁵⁶⁸: 1920 թ. օգոստոսին քեմալականների հարձակումներից խուսափած 400 ասլանբեկցիները Կ.Պոլսո Հայոց պատրիարքությանը հայտնեցին Հայաստանում հաստատվելու իրենց ցանկության մասին⁵⁶⁹: Քաղաքական ժողովը հանձն առավ ապահովել նրանց փոխադրությունը⁵⁷⁰: Կ.Պոլսի Ազգային խնամակալությունը բանակցելով

⁵⁶⁴ Արամեան Յ., Արսլանպեկի տեղահանությունը, «Ժամանակ», Կ.Պոլիս, 7-20 նոյեմբեր 1918, թիւ 3360:

⁵⁶⁵ Իզմիտի արսլանբեկցի հայ զինուորները կը բողոքեն, «Ժողովուրդ», Կ.Պոլիս, 30 հոկտեմբեր-12 նոյեմբեր 1919, թիւ 10:

⁵⁶⁶ Վրդովիչ դէպքեր Պոլսոյ քրի տակ, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 9 փետրուար, 1919, թիւ 76:

⁵⁶⁷ Ֆէներճեան Գ., նշվ. աշխ., էջ 157-159:

⁵⁶⁸ Հայկական կեանք: Կացութիւնը Պրուսայի և Նիկոմիդիոյ շուրջ, «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ», Կ.Պոլիս, 19 յունիս-1 օգոստոս 1920, թիւ 548:

⁵⁶⁹ Հայկական կեանք, Ժողովուրդի ձայնը-Ժամանակ, 28 օգոստոս -8 սեպտեմբեր 1920, թիւ 579:

⁵⁷⁰ Նույն տեղում», Կ.Պոլիս, 2-16 սեպտեմբեր 1920, թիւ 586: Տե՛ս նաև Հայկական կեանք, «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ», Կ.Պոլիս, 4-17 սեպտեմբեր 1920, թիւ 587:

Ալեքսանդր Խատիսյանի հետ՝ ապահովեց ասլանբեկցիների անվտանգ մեկնումը Հայաստան⁵⁷¹: Հայաստան ուղևորվող ասլանբեկցիները 1920 թ. դեկտեմբերին ստիպված եղան վերադառնալ Կ.Պոլիս, քանզի Բաթումում վրացական իշխանություններն արգելեցին նրանց մուտքը քաղաք⁵⁷²: Հետագայում ասլանբեկցիները ապաստան գտան Հունաստանում, Բուլղարիայում, Ֆրանսիայում, իսկ այնուհետև՝ 1947 թ. ներգաղթեցին Խորհրդային Հայաստան⁵⁷³:

Խասկալն Իզմիրի գավառի հայաբնակ գյուղերից էր, այն գտնվում էր Արմաշից կես ժամ հեռավորության վրա: Գյուղացիները զբաղվում էին երկրագործությամբ, անասնապահությամբ և արհեստներով: Գյուղը շրջակա թուրքական գյուղերի շուկան էր, տեղի հայ արհեստավորներն էին սպասարկում այդ գյուղերի բնակչությանը⁵⁷⁴: Թեև անհայտ է գյուղի հիմնադրման թվականը, սակայն բնիկ խասկալցի Միքայել քահանայի պատվերով 1610 թ. Կ.Պոլսում գրչագրված Ավետարանի հայտնած տեղեկություններից կարելի էր ենթադրել, որ այն հաստատվել է 1560 թ. Ակնա Խասկալ գյուղից գաղթածների կողմից⁵⁷⁵: 1890 թ. տվյալներով՝ Խասկալն ուներ 130⁵⁷⁶, իսկ 1907 թ. 150 ընտանիքից կազմված հայ բնակչության⁵⁷⁷:

Գյուղի եկեղեցին կրում էր Ս. Հակոբ Մծբնա Հայրապետի անունը, որը կառուցվել էր 1834 թ. ակնցի Ճանիկ ամիրայի միջոցներով⁵⁷⁸: Այստեղ պաշտոնավարում էին Արմաշի Չարիսա-

⁵⁷¹ Հայկական կեանք, «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ», Կ.Պոլիս, 24 սեպտեմբեր-7 հոկտեմբեր 1920, թիվ 604:

⁵⁷² Արալանբեկցիները կվերադառնան: «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ», Կ.Պոլիս, 24 դեկտեմբեր 1920-6 յունուար 1921, թիվ 682:

⁵⁷³ Ֆեներճեան Գ., նշվ. աշխ., 157-159:

⁵⁷⁴ Գասապեան Մ. (Ֆարիստ), նշվ. աշխ., էջ 38-39:

⁵⁷⁵ Էփրիկեան Ս., Բնաշխարհիկ բառարան, Բ հատոր, Վենետիկ 1907, էջ 152:

⁵⁷⁶ Նամակ Արմաշէ, «Արևելք», Կ.Պոլիս, 16 յունուար 1890, թիվ 1794:

⁵⁷⁷ Միհրանեան Լ., Խասկալ, «Մանգունիի էֆքեար», Կ.Պոլիս, 11 սեպտեմբեր-4 հոկտեմբեր 1907, թիվ 1923:

⁵⁷⁸ Էփրիկեան Ս., Բնաշխարհիկ բառարան, Բ հատոր, նշվ. աշխ., էջ 152:

փան Ս. Աստվածածին վանքի վանահայրերը⁵⁷⁹: Խասկալից կես ժամ հեռավորության վրա էր գտնվում Երևման Ս. Խաչ ուխտատեղին⁵⁸⁰: Գյուղում պահվում էր ձեռագիր Մաշտոց, ուր հիշատակություն կար 1609 թ. ջալալների ապստամբության մասին⁵⁸¹: Ս. Հակոբ եկեղեցու Դպրաց դասն ուներ 80 անդամներ, որոնք շաբաթական տասական փարա էին ստանում շապիկների և այլ կարիքների համար⁵⁸²: Նիկոմիդիայի առաջնորդ Ստեփանոս եպիսկոպոս Հովակիմյանը 1901 թ. Խասկալի եկեղեցուն նվիրեց նույն գյուղում իր հորից ժառանգած 20 արտավար հողը⁵⁸³:

Արմաշի հոգևորականները հաճախ էին այցելում Խասկալ և շրջակա հայաբնակ գյուղեր, քարոզում և հանդես էին գալիս բանախոսություններով: 1894 թ. մայիսին կայացած Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի բանախոսության նյութն իգական սեռի դաստիարակության կարևորության մասին էր: Գյուղում գործել է «Եկեղեցասիրաց ընկերությունը»⁵⁸⁴: 1910 թ. Խասկալում հիմնված «Օրիորդների ինքնագարգացման միության» անդամուհիների տարեկան վճարը կազմում էր 5 դուրուշ: Խասկալի 1910 թ. կազմավորվեց «Կանանց կրթասիրաց-լսարանական ընկերությունը», որի նպատակն էր աղքատ աղջիկներին ապահովել գրենական պիտույքներով, նպաստել իգական սեռի զարգացմանը: Ընկերությունը կազմված էր 30 անդամներից, ովքեր 1 դուրուշ ամսավճար էին մուծում⁵⁸⁵: Խասկալցիները անտարբեր չէին իրենց եղբայրակիցների ցավերի նկատմամբ: Խասկալի ազգային գործիչներն ի

⁵⁷⁹ Մխիթարեան Պ., Խասկալ, «Փունջ», Կ.Պոլիս, 1894, 8 յուրուար, թիւ 2392:

⁵⁸⁰ Թեղլիկ, Գողգոթա հայ հոգևորականութեան և իր հօտին աղետալի 1915 տարիին, Նյու Եորք, 1985, էջ 362:

⁵⁸¹ Հ. Ներսէս Սարգիսեան, Տեղագրութիւն ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, էջ 38:

⁵⁸² Միհրանեան Լ., Խասկալ, «Մանգումէի էֆէնար», Կ.Պոլիս, 11 սեպտեմբեր-4 հոկտեմբեր 1907, թիւ 1923:

⁵⁸³ Ազգային լուրեր, «Արևելք», Կ.Պոլիս 12-25 հոկտեմբերի 1901, թիւ 4764:

⁵⁸⁴ Մխիթարեան Պ., Խասկալ, «Փունջ», 1894, Կ.Պոլիս, 14 մայիսի, թիւ 2410:

⁵⁸⁵ Գասապեան Ս. (Ֆարիատ), նշվ. աշխ., էջ 266, 268:

նպաստ Զեյթունի սովյալների՝ 1908 թ. նոյեմբերին գյուղում հանգանակված 1432 դուրուշն ուղարկեցին Կ.Պոլսո Հայոց պատրիարքություն⁵⁸⁶:

1901-1902 ուսումնական տարում Խասկալի Ս. Հակոբյան վարժարանում ուսանում էին 300 երկսեռ աշակերտներ, որոնց դասավանդում էին 4 ուսուցիչներ, իսկ 730 դուրուշ դպրոցական ծախսը վճարում էր տեղի Թադական խորհուրդը: Խասկալի վարժարանի կալվածքները տարեկան 1500 դուրուշ շահույթ էին ապահովում, նույնքան գումար էլ գոյանում էր ամեն տարի Արմաշ եկած ուխտավորների Խասկալ կատարած այցելությունից⁵⁸⁷: 1907 թ. գյուղացիները նախաձեռնեցին գյուղի վարժարանի շենքում աղջիկների համար դասասենյակ կառուցելու գործը: Բնակավայրը խմելու ջրով ապահովելու համար գյուղի բարձրունքում գտնվող քաղցրահամ ջուրը խողովակներով այստեղ հասցնելու նպատակով կազմակերպված հանգանակության արդյունքում գոյացավ 150 ոսկեղրամ: Պահանջվող մնացած 150 ոսկեղրամը սպասվում էր Ադաբազարի և Իզմիրի իրենց հայրենակիցների կազմակերպվելիք հանգանակությունից⁵⁸⁸: Խողովակներով Խասկալ ջուր անցկացնելու գործն ավարտվեց 1910 թ.⁵⁸⁹: 1913 թ. Արմաշի թեմից Կ.Պոլսո Հայոց պատրիարքությանն առաքված վիճակույցի համաձայն՝ Խասկալն ուներ 215 ընտանիքից կազմված 1181 առաքելական բնակչություն, որոնցից բացի գյուղում ապրում էին նաև 29 հայ բողոքականներ: Ազգային անշարժ կալվածքները գնահատվում

⁵⁸⁶ Հայկական լուրեր, «Ժամանակ», Կ.Պոլիս, 21 նոյեմբերի-4 դեկտեմբերի, 1908, թիւ 33:

⁵⁸⁷ Վիճակացոյց գաւառական ազգային վարժարանանց Թուրքիոյ: Բ տետր, նշվ. աշխ., 17-րդ աղյուսակ:

⁵⁸⁸ Միհրանեան Լ., Խասկալ, «Մանգումէի էֆքեար», Կ.Պոլիս, 11 սեպտեմբեր-4 հոկտեմբեր 1907, թիւ 1923:

⁵⁸⁹ Թ., Խասկալի գործերէն, «Բիւթանիա», Իզմիտ, 10 փետրուար 1910, Ա տարի, թիւ 5, էջ 56:

էին 52.000 օսմանյան ոսկեդրամ⁵⁹⁰։ Պատերազմի ընթացքում Խասկալի բնակչությունն արքորվեց Տեր-Ձոր, ուր բնաջնջվեց նրանց մեծ մասը⁵⁹¹։

Օվաճըզ գյուղը գտնվում էր Իզմիրից երկու ժամ հեռավորության վրա, Ս. Եղիա լեռան փեշերին, Քելեզի գետահովտում։ Խուսափելով Ջալալների ապստամբության հետևանքով երկրում տիրող արհավիրքներից՝ Ակնից և Կարինից 1605 թ. հայերը գաղթել են և հաստավել այստեղ⁵⁹²։ Գյուղի բնակչության թիվը հետագայում համարվել է Սեբաստիայից այստեղ եկած գաղթականներով⁵⁹³։ Գյուղացիներն ապրում էին բարեկեցիկ կյանքով, գյուղի դպրոցի ուսուցիչն, օրինակ, 4 ոսկի ամսական վճար էր ստանում⁵⁹⁴։ Թուրքական աղբյուրի համաձայն՝ Օվաճըզ գյուղն ուներ 500 հայ ընտանիքներից կազմված բնակչություն և հայտնի էր որպես հարուստ գյուղ⁵⁹⁵։

Գեղեցիկ դիրք, մաքուր օդ և քաղցրահամ ջուր ունեցող **Օվաճըզը** զուտ հայաբնակ գյուղ էր, որտեղ գտնվում էին ուխտատեղի դարձած Ս. Եղիա մառուռը⁵⁹⁶ և 1851 թ. Աղավնի արքեպիսկոպոս Ջաքարյանի ջանքերով կառուցված ճարտարապետական հոյակապ կոթող հանդիսացող Ս.Լուսավորիչ եկեղեցին⁵⁹⁷։ Գյուղն իր ըմբոստ քաջերով մասնակցեց շրջապատի թուրք և քուրդ հրոսակների դեմ մղվող ինքնապաշտպանական կռիվներ-

⁵⁹⁰ Մատենադարան, Արխյուային բաժին, Արշակ Ալպոյաճյանի ֆոնդ, թղթ. 8, վավ. 21/1։

⁵⁹¹ Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 362։

⁵⁹² Գասապեան Մ. (Ֆարհատ) Հայերը Նիկոմիդիոյ գաւաւին մէջ, Պարտիզակ, 1913, էջ 33-34։

⁵⁹³ Հայ ժողովրդի պատմություն, նշվ. աշխ., 1974, էջ 536։

⁵⁹⁴ Ծիծառն, Ամառային պտոյտ, «Բիւզանդիոն», 1897, 19 սեպտեմբեր-1 հոկտեմբեր, թիվ 272։

⁵⁹⁵ Գյուղ, որ բաղկացած է 28 լազ հայերից, <https://akunq.net/am/?p=26116>

⁵⁹⁶ Օվաճըք, «Մանգումէի էֆքեար», Կ.Պոլիս, Կ.Պոլիս, 7-20 յուլիս 1907, թիւ 1859։

⁵⁹⁷ Ս. Մ., Պարտիզակէն Օվաճըզ, «Բիւրակն», Կ.Պոլիս, 15 յունուար, 1905, թիւ 3, էջ 54-55։

րին և կոչվել Նիկոմիդիայի Զեյթուն⁵⁹⁸: 1914 թ. Օվաճըզն ուներ 600 ընտանիքից կազմված բնակչություն⁵⁹⁹: Կանաչապատ դաշտերով և այգիներով շրջապատված գյուղի բնակիչները զբաղվում էին երկրագործությամբ, շերամաբուծությամբ և ծխախոտի մշակմամբ, իրենց աշխատասիրությունը և տքնաջան աշխատանքի շնորհիվ տարեցտարի ավելանում էին ստացվող բերքը: Պոլսեցի Վահան և Մկրտիչ Հսայան եղբայրների միջոցներով գյուղում խողովակներով ջրի անցակացումը նպաստեց երկրագործության զարգացմանը⁶⁰⁰: Օվաճըզցիներն աճեցնում էին ցորեն, վարսակ, գարի և եգիպտացորեն, զբաղվում էին նաև այգեգործությամբ, պատրաստում էին գինի և օղի: Այս ամենի հետ մեկտեղ, չկար ընտանիք, որ չզբաղվեր շերամաբուծությամբ⁶⁰¹: Գյուղում գործում էր Հելվաճյան եղբայրների մետաքսի մանաբանը, ուր աշխատում էին ավելի քան 200 մանածագործուհիներ⁶⁰²: 1905 թ. այն փոխանցվեց Հսայան եղբայրներին, ովքեր 300 օսմանյան ոսկեդրամ ծախսով՝ արդիականացրին արտադրությունը և ապահովեցին մանաբանը հոսող ջրով⁶⁰³:

1901 թ. Օվաճըզի Վարդանյան-Վարդուհյան երկսեռ վարժարանում ուսանում էին 400 աշակերտներ, նրանց դասավանդում էին 5 ուսուցիչներ, ուսումնական ամսական ծախսը կազմում էր 1334 դուրուշ, որն ամբողջությամբ իր գանձանակից տրամադրում էր տեղի Թաղական խորհուրդը⁶⁰⁴: 1914 թ. գյուղացիները տեղի վար-

⁵⁹⁸ Հայ ժողովրդի պատմություն, նշվ. աշխ., էջ 536:

⁵⁹⁹ Մինասեան Ա., Կեանքը Օվաճըզի մէջ, «Ժամանակ», Կ.Պոլիս, 21 յունիս-10 յուլիս 1914, թիւ 1853:

⁶⁰⁰ Քրոնիկ, «Մանգումէի էֆքեար», Կ.Պոլիս, 14-27 դեկտեմբեր 1906, թիւ 1683:

⁶⁰¹ Կ. Ե. Օվաճըզի Զատիկը և Ս. Եղիան, «Արևելք», Կ.Պոլիս, 10-23 մայիս 1903, թիւ 5251:

⁶⁰² Ս. Մ., Պարտիզակէն Օվաճըզ, «Բիւրակն», Կ.Պոլիս, 15 յունուար, 1905, թիւ 3, էջ 54-55:

⁶⁰³ Քրոնիկ, «Մանգումէի էֆքեար», Կ.Պոլիս, 1-14 նոյեմբեր 1906, թիւ 1647:

⁶⁰⁴ Վիճակացոյց գաւառական ազգային վարժարանանց Թուրքիոյ: Ա տետր, նշվ. աշխ., 3-րդ աղյուսակ:

Ժարանի համար 300 օսմանյան ոսկեդրամ էին ծախսում⁶⁰⁵: Օվաճրգում 1910 թ. մեծ թափով կառուցվում էին վարժարանի նոր շենքն ու գյուղի կոյուղին⁶⁰⁶: Վարդանյան-Վարդուհյան վարժարանը 1910 թ. դեկտեմբերին ունեցավ իր նոր շենքը⁶⁰⁷, որի շինարարության համար ծախսվեց 90 օսմանյան ոսկեդրամ⁶⁰⁸: Օվաճրգի երիտասարդները 1911 թ. Ս. Ծննդյան գիշերն ավետիսի ելնելով՝ 5 օսմանյան ոսկի հավաքեցին դպրոցի նորակառույց շենքի այլ կարիքները հոգալու համար, այնուհետև իրենց ստեղծած թատերախմբով հանդես եկան ներկայացումով և 6 ոսկեդրամ հասույթը նույնպես տրամադրեցին վարժարանին⁶⁰⁹: 1907 թ. Օվաճրգում գործում էր նաև նորակառույց մանկապարտեզը⁶¹⁰:

1899 թ. Օվաճրգի ազգային վարժարանի սաները հիմնեցին «Ընթերցասիրաց միությունը», որին անդամակցեց գյուղի ողջ երիտասարդությունը՝ նպատակ հետապնդելով լուսավորություն տարածել գյուղում: Միությունը բաժանորդագրվել էր Կ.Պոլսի բոլոր թերթերին ու հանդեսներին և ձեռք էր բերել մեծ թվով գրքեր: Օվաճրգում 1908 թ. հրատարակվել է «Քնարիկ» խմորատիպ թերթը⁶¹¹: Գյուղացիներն իրենց ընթերցասիրությունը բավարարում էին գյուղի ազգապատկան սրճարանում, որը 7 օրաթերթ և 10 շաբաթաթերթ էր ստանում⁶¹², իսկ 1911 թ. փետրվարին ստեղծվեց «Ընթերցասիրաց ընկերությանը»:

⁶⁰⁵ Մինասեան Ա., Կեանքը Օվաճրգի մէջ, «Ժամանակ», Կ.Պոլիս, 21 յունիս-10 յուլիս 1914, թիւ 1853:

⁶⁰⁶ Լրատու, «Բիւթանիա», Իզմիտ, 1 նոյեմբեր 1910, թիւ 27, էջ 299:

⁶⁰⁷ Նույն տեղում, 1 հոկտեմբեր 1910, թիւ 29, էջ 322:

⁶⁰⁸ Թղթակցութիւններ, «Բիւթանիա», Իզմիտ, 10 մարտ, 1911, թիւ 7-8, էջ 388-389:

⁶⁰⁹ Թղթակից, Թղթակցութիւններ, «Բիւթանիա», Իզմիտ, 20 յունուար, 1911, թիւ 3, էջ 357:

⁶¹⁰ Օվաճրք, «Մանգումէի էֆքեար», Կ.Պոլիս, Կ.Պոլիս, 7-20 յուլիս 1907, թիւ 1859:

⁶¹¹ Մակարեան Ա. Յ., , նշվ. աշխ., էջ 303:

⁶¹² Ս. Ս., Պարտիզակէն Օվաճրգ, «Բիւրակն», Կ.Պոլիս, 15 յունուար, 1905, թիւ 3, էջ 54-55:

1911 թ. վերակազմավորվեց «Ուսումնասիրաց ընկերությունը», որի նպատակը տեղի աղջկանց վարժարանի կառուցումն էր⁶¹³: Օվաճրգի «Երիտասարդական միությունն» իր խմբի մեջ ընդգրկել էր գյուղի զարգացած ուժերին և ջանում էր նպաստել վարժարանի առաջընթացին և կրթական գործի զարգացմանը⁶¹⁴: Գյուղում գործում էր «Թատերասերաց ընկերությունը», որը ներկայացումներ էր կազմակերպում⁶¹⁵: Օվաճրգում գործում էր նաև ՄԴՀԿ-ը, որն ուներ իր ակումբ-ընթերցասրահը⁶¹⁶, իսկ 1912 թ. սկսեց գործել նաև ՀՅԴ ակումբը⁶¹⁷: 1912 թ. հուլիսին Օվաճրգում տեղի ունեցավ «Արծիվ մարզասիրաց միության» և «Վիշապ» ֆուտբոլային խմբերի միջև մրցում⁶¹⁸:

1903 թ. եկեղեցու պայծառակերպությանը նպաստելու նպատակով Օվաճրգում կազմավորվեց «Եկեղեցասիրաց միությունը», իսկ 1906 թ. ձևավորվեց «Մաքրասիրաց միությունը», որը նպատակ էր հետապնդում աղբից մաքրել գյուղը և կոյուղի կառուցել: Միության հավաքած 85 օսմանյան ոսկեղրամը տրվեց տոկոսով՝ գումարը խոշորացնելու և նպատակն իրագործելու նպատակով⁶¹⁹: «Եկեղեցասիրաց միությունն» իր ջանքերն ուղղել էր գյուղի եկեղեցու նորոգության գործին: Եկեղեցին ուներ իր դպրաց դասը⁶²⁰:

⁶¹³ Սարոբդի, Թղթակցութիւններ, «Բիւթանիա», Իզմիտ, 20 փետրուար, 1911, թիւ 5-6, էջ 376-277:

⁶¹⁴ Ռմբակ, Օվաճրգի կեանքէն, «Բիւթանիա», Իզմիտ, 1 մարտ 1910, Ա տարի, թիւ 7, էջ 83-84:

⁶¹⁵ Թղթակցութիւններ, «Բիւթանիա», Իզմիտ, 10 մարտ, 1911, թիւ 7-8, էջ 388-389:

⁶¹⁶ Գասապեան Մ. (Ֆարհատ), նշվ. աշխ., 1913, էջ 272:

⁶¹⁷ Հայկական կեանք: Մանր լուրեր, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 7-20 մարտ 1912, թիւ 840:

⁶¹⁸ Մրցումներ Պարտիզակի մէջ, «Մարմնամարզ», Կ.Պոլիս, 1912, 15 յուլիս, թիւ 14, էջ 260:

⁶¹⁹ Գիսաւոր, Օվաճրգի կեանքէն «Բիւթանիա», Իզմիտ, 10 փետրուար 1910, թիւ 5, էջ 53:

⁶²⁰ Հայկական լուրեր, «Ժամանակ», Կ.Պոլիս, 28 յունիս-11 յուլիս 1914, թիւ 1854:

Օվաճգում տեղի հայ բողոքականները նույնպես ունեին եկեղեցի⁶²¹, գյուղում գործում էր նրանց երկսեռ վարժարանը, որտեղ 1905 թ. սովորում էին 60 աշակերտներ⁶²²: Նույն թվականին գյուղի հայ բողոքականները ձեռնարկեցին իրենց նոր եկեղեցու կառուցման աշխատանքները⁶²³, ինչի համար ծախսվեց 175 օսմանյան ոսկեդրամ⁶²⁴: 1906 թ. սեպտեմբերի 3-ին տեղի ունեցավ Օվաճրգի հայ բողոքականների նորակառույց եկեղեցու նավակատիքի հանդեսը⁶²⁵:

1911 թ. Օվաճրգում գործում էր «Շահակցական ընկերությունը», որին անդամագրվել էին շուրջ 100 անձեր: Այս ընկերությունը համար կարևոր առաքելություն էր նախատեսված գյուղի տնտեսական կյանքում՝ ավելացնել իր անդամների թիվը և անդամավճարների միջոցով աջակցել գյուղացիներին՝ նրանց ազատելով վաշխատուների շահագործումից, այդպիսով նպաստելով գյուղի տնտեսական վիճակի բարելավմանը:

Առաջին աշխարհամարտի սկսվելուց հետո ինչպես Արևմտյան Հայաստանում ու կայսրության մյուս հայաբնակ վայրերում, այնպես էլ Օվաճրգում բնականոն կյանքը խաթարվեց: 1915 թ. հուլիսին Պարտիզակի կառավարիչ Ալի Շուրին գալով Օվաճրգ՝ ոստիկանների խմբով շրջապատեց գյուղը և տեղի հայ երևելիներին հայտարարեց, եթե ուզում են զերծ մնալ տեղահանությունից, պետք է 300 ոսեդրամ վճարեն Կարմիր մահիկին: Գումարը վճարելուց հետո, Ալի Շուրին ոստիկանների և ավագակախմբերի ուղեկցությամբ տեղահանությանը պատրաստվելու համար օվա-

⁶²¹ Ատանալեան Կ. Պ., նշվ. աշխ., էջ 240:

⁶²² Ս. Ս., Պարտիզակեն Օվաճրգ, «Բիւրակն», Կ.Պոլիս, 15 յունուար, 1905, թիւ 3, էջ 54-55:

⁶²³ Տեղեկագիր Նիկոմիդոյ Գաւառական ժողովին՝ Ատաբազարին մէջ, «Բիւրակն», Կ.Պոլիս, 18 յուլիս 1905, թիւ 25, էջ 495:

⁶²⁴ Հայ-բողոքականներէն, «Մանգումէի էֆքեար», Կ.Պոլիս, 2-22 սեպտեմբեր 1906, թիւ 1601:

⁶²⁵ Թղթակից, Հայ-բողոքականներէն, «Մանգումէի էֆքեար», Կ.Պոլիս, 28 օգոստոս-8 սեպտեմբեր 1906, թիւ 1589:

ճրգցիներին 24 ժամ տվեց, որից միայն 4 ժամ էր հատկացվել որ տեղի հայերն այդ ընթացքում հասցնեին վաճառել իրենց ունեցվածքը: Մինչ այդ, գյուղ էին հասել ավարառու թուրքերը, ովքեր չնչին գումարով և նույնիսկ ձրիաբար տիրանում էին հայերի ունեցվածքին: «Ձինգեր» կարի մեքենան վաճառվեց 20-30 դուրուշով: Սահմանված 4 ժամից հետո, չվաճառված իրերը դրվեցին եկեղեցում, իսկ բանալին հանձնվեց Ալի Շուրին: 1915 թ. հուլիսի 23-ին Օվաճրգի հայերը տեղահանվեցին: Հայտարարվեց, որ գյուղում մնացածները կգնդակահարվեն⁶²⁶: Գյուղացիների ողջ ունեցվածքի հետ մեկտեղ, թուրքերը տիրացան օվաճրգցիների արտերի ավելի քան 300.000 օխա ծխախոտի բերքին⁶²⁷: Տեղահանվածները քշվեցին դեպի Ռաքքա և Տեր-Ջոր, միայն 600 հոգի վերապրեց տեղահանությունն ու կոտորածները: 1921 թ. գյուղը գրավվեց և հրկիզվեց քեմալականների կողմից⁶²⁸:

Ջուտ հայաբնակ **Տոնկել** գյուղը գտնվում էր Պարտիզակից դեպի հյուսիս-արևելք Սուրբ կոչված բլուրի և ուխտատեղի դարձած Ս. Գևորգ մատուռի ստորոտի հովտում և 1911 թ. բաղկացած էր 75 ընտանիքից: Ավանդության համաձայն՝ գյուղի բնակչությունը գաղթել էր Կիլիկիայից: Ս. Սարգիս եկեղեցու ավագ խորանի խաչքարի վրա փորագրված էր 1727 թ., որը գյուղի ամենահին արձանագրությունն էր⁶²⁹: Տոնկել գյուղն ուներ բարեբեր հող, և բնակիչները հիմնականում զբաղվում էին գյուղատնտեսությամբ⁶³⁰:

Տոնկելի «Շահասիրաց ընկերություն» հիմնվել է 1909 թ. և նպատակ էր հետապնդում գումար վաստակել և մրցել վաշխա-

⁶²⁶ Տ. քհ. Արսլանեան, Հայ հալածանքն և տարագրութենէն իրական պատկերներ, Բ, «Հայրենիք», Կ.Պոլիս, 9-26 նոյեմբեր, 1918, թիւ 188:

⁶²⁷ Տ. քհ. Արսլանեան, Բաց նամակ Պարտիզակի նախկին մյուստուր Ալի Շուրի պէին, «Ժողովուրդ», Կ.Պոլիս, 31 հոկտեմբեր-13 նոյեմբեր 1919, թիւ 10:

⁶²⁸ Թէոդիկ, նշվ. աշխ., էջ 353-354:

⁶²⁹ Գասապեան Մ. (Ֆարիստ), նշվ. աշխ., էջ 33:

⁶³⁰ Նաթանեան Պ., Առաջին տեղեկագրութիւն վիճակին Նիկոմիդիոյ, Կ.Պոլիս 1871, էջ 3-4:

ռուների հետ: Ուներ խանութ և հիմնականում զբաղվում էր նպարեղենի և ալյուրի առևտրով: Ընկերության 25 անդամների մոտքի վճարը կազմում էր 1 օսմանյան ոսկեդրամ, իսկ ամսավճարը՝ 5 դուրուշ⁶³¹: 1901 թ. Կ.Պոլսի Ուսումնական խորհրդի հրատարակած վիճակացույցի համաձայն՝ Տոնկելում գործում էր Տաճատյան երկսեռ վաժարանը, ուր սովորում էին 70 աշակերտներ, դասավանդում՝ 1 ուսուցիչ, վարժարանի ամսական ծախսը կազմում էր 200 դուրուշ, որը հավասարապես գոյանում էր ուսման վարձերից և Թաղական խորհրդի կողմից տրամադրած գումարներից⁶³²:

1915 թ. սեպտեմբերի 14-ին սկսվեց Տոնկելի 800 գյուղացիների տեղահանությունը⁶³³: Նրանցից վերապրեց միայն 50 հոգի: 1921 թ. ապրիլի 7-ին թուրք ազգայնականները հրկիզեցին գյուղը⁶³⁴:

Տոնկելի արվարձարանային մի թաղամաս էր հանդիսանում 1904 թ. հիմնված **Սուրբ** գյուղը⁶³⁵, ինչի պատճառով էլ կոչվում էր նաև **Տոնկելի Սուրբ**: Գյուղում ապրում էր հայ լազերի 28 ընտանիք կազմված բնակչություն և գործում էր մատուռ:⁶³⁶

Տաղ-Գյուղը գտնվում էր Իզմիրից 3 ժամ հեռավորության վրա, նրա հյուսիս-արևելյան մասում, լեռնալանջի վրա: Գյուղը հիմնվել է 1590 թ. Քյոթահիայից գաղթած 5 ընտանիքների կողմից: Ամբողջապես հայաբնակ այս բնակավայրը 1911 թ. ուներ 57 ընտանիքից կազմված բնակչություն⁶³⁷, որը հիմնականում զբաղ-

⁶³¹ Գասապեան Մ. (Ֆարիատ), նշվ. աշխ., 1913, էջ 206:

⁶³² Վիճակացույց գաւառական ազգային վարժարանանց Թուրքիոյ: Ա տետր, նշվ. աշխ., 3-րդ աղյուսակ:

⁶³³ Լևոն Վարդան, Ժամանակագրութիւն Հայկական տասնհինգի, 1915-1923, Պէյրուս, 1975, էջ 50:

⁶³⁴ Թէոդիկ, Գողգոթա հայ հոգևորականութեան և իր հօտին աղէտալի 1915 տարիին, Նյու Եորք, 1985, էջ 353:

⁶³⁵ Գասապեան Մ. (Ֆարիատ), Հայերը Նիկոմիդիոյ գաւառին մէջ, Պարտիզակ, 1913, էջ 103:

⁶³⁶ Թէոդիկ, նշվ. աշխ., էջ 353:

⁶³⁷ Գասապեան Մ. (Ֆարիատ), նշվ. աշխ., էջ 36-37:

վում էր գյուղատնտեսությամբ: Տաղ-Գյուղում գործում էր Երևման Ս. Խաչ եկեղեցին⁶³⁸: 1901 թ. Կ.Պոլսի Ուսումնական խորհրդի հրատարակած վիճակագրոյցի համաձայն՝ տեղի Ս. Մահակյան երկսեռ վարժարանում ուսանում էին 38 աշակերտեր, իսկ նրանց դասավանդում էր 1 ուսուցիչ: Ուսումնական ծախսերի համար պահանջված ամսական 125 դուրուշը տրամադրում էր տեղի Թաղական խորհրդը⁶³⁹:

Իզմիրցի Հալիլ Էֆենդին 1887 թ. Տաղ գյուղից 150 արտավար հող է բռնագրավել⁶⁴⁰: Տեղահանությունից հետո գյուղացիների միայն փոքր մասը վերադարձավ գյուղ և սկսեց վերականգնել տները, հող մշակել, սակայն նրանք չհացրին հավաքել բերքը: 1920 թ. հունիսին քեմալականները հարձակվեցին Տաղ գյուղի վրա և սպանեցին տեղի հայերին⁶⁴¹: Ողջ մնացածները փախան Իզմիր, իսկ շրջակա բնակավայրերի թուրքերը ավազակախմբերի հետ քանդեցին գյուղը, կրակի տվեցին տներն ու եկեղեցին⁶⁴²:

Նիկոմիդիայի գավառակի նորահաստատ գյուղերից էին Խաչ-Գյուղը, Զաքար գյուղը, Ժամավայրը և Մանուշակը: **Խաչ-Գյուղը** հիմնադրվել է 1897 թ. Օրդուից գաղթած հայերի կողմից⁶⁴³, որոնց լազերին հատուկ տարազի պատճառով սխալմամբ լազ էին անվանում: Գյուղացիները զբաղվում էին շերամաբուծությամբ և երկրագործությամբ: Գյուղում գործում էր Ս. Խաչ մատուռը:

Հատկանշական է, որ նրանց աներևակայելի աշխատասիրություն և բերրի հողերի շնորհիվ, հակառակ համիդյան վարչա-

⁶³⁸ Նաթանեան Պ., նշվ. աշխ., էջ 3-4:

⁶³⁹ Վիճակագրոյց գաւառական ազգային վարժարանանց Թուրքիոյ, նշվ. աշխ., 3-րդ աղյուսակ:

⁶⁴⁰ Հողային գրաւումներ հայկական գաւառներէն դուրս ևս, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 2-15 հոկտեմբեր 1910, թիւ 402:

⁶⁴¹ Հայկական կեանք, «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ», Կ.Պոլիս, 3-16 յունիս 1920, թիւ 508:

⁶⁴² Հայկական կեանք: Գաւառ: Չէթեններու շարժումը: Իզմիրի շրջակայքը, «Ժողովուրդի ձայնը», Կ.Պոլիս, 22 յուլիս-4 օգոստոս 1920, թիւ 550:

⁶⁴³ Գասապեան Մ. (Ֆարիատ), նշվ. աշխ., էջ 103:

կարգի հայահալած քաղաքականության՝ Խաչ-Գյուղում արձանագրվեց տնտեսական մեծ առաջընթաց: Գյուղի դպրոցի նորակառույց շենքի, գեղեցիկ և կանոնավոր նոր տների, մշակված արտերի գոյությունը վկայում էին գյուղի զարգացման լայն հեռանկարների մասին⁶⁴⁴: Տեղահանությունից առաջ Խաչ-Գյուղն ուներ 45 ընտանիքներից կազմված բնակչություն, որոնց մեծամասնությունը աքսորվեց դեպի Կոնիա և Հալեպ⁶⁴⁵:

1878 թ. հիմնադրված **Զաքար** գյուղը⁶⁴⁶ Պարտիզակից 1 ժամ հեռավորության վրա գտնվող հայաբնակ գյուղ էր⁶⁴⁷: Զաքար գյուղի բնակիչները գաղթել էին Տրապիզոնի, Օրդուի և Կերասունի կողմերից: Գյուղը կառուցված էր բլրի վրա և շրջապատված էր անտառապատ լեռներով: 1895 թ. այստեղ ապրում էր 150 հայ լազերից կազմված բնակչություն: Գյուղն ուներ բերրի մարգագետիններ: Անտառներից բերված փայտով գյուղացիները պատրաստում էին աստղձ, տախտակ, տաշտեր: Լեռնային այս գյուղում գործում էր Ս. Աստվածածին եկեղեցին⁶⁴⁸, որի եկեղեցական սպասքն ու հագուստները նվիրել կամ հայթայթել էր Հովհաննես քահանա Մկրյանը⁶⁴⁹: Տարագրությունից առաջ գյուղն ուներ 65 ընտանիքից կազմված բնակչություն⁶⁵⁰: Հայկական մեկ այլ աղբյուրի տվյալներով Զաքար գյուղն ուներ 86 ընտանիքից կազմված 404

⁶⁴⁴ Սարորդի, Թղթակցություններ, Խաչ-Գյուղ (Արմաշ), «Բիւթանիա», Իզմիտ, 10 օգոստոս 1910, թիւ 20-22, էջ 233:

⁶⁴⁵ Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 363:

⁶⁴⁶ Գասապեան Մ. (Ֆարհատ), նշվ. աշխ., էջ 103:

⁶⁴⁷ Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 353:

⁶⁴⁸ Գաւառներ, (Մեր սեփական թղթակիցներէն), «Ազատամարտ», Կ.Պոլիս, 7-20 սեպտեմբեր 1910, թիւ 380:

⁶⁴⁹ Էփրիկեան Ս., Բնաշխարհիկ բառարան, Ա հատոր, նշվ. աշխ., էջ 767:

⁶⁵⁰ Մելքոնեան Ա. Ս., Հայկական Պարտիզակը յուշագրութիւններու ու յուշերու ընդմէջէն, «Տաթն հայագիտական տարեգիրք», թիւ 1, Հալեպ 2008, էջ 478:

հայ բնակչություն⁶⁵¹: Տեղահանությունից գյուղացիներից ոչ ոք չվերադարձավ⁶⁵²:

Բարձունքի վրա կառուցված հայաբնակ **Ժամավայր (Ժամու)** գյուղը գտնվում էր Պարտիզակից քիչ հեռու և համարվում էր վերջինիս մեկ մասը: Այն հիմնադրվել էր 1900-ականներին Օրդուից տեղափոխված և այստեղ հաստատված հայ լազերի կողմից⁶⁵³: Մեկ այլ աղբյուրի համաձայն Ժամավայրը հիմնվել է ավելի վաղ՝ 1894 թ.⁶⁵⁴: Գյուղն ուներ 30 ընտանիքից կազմված բնակչություն, որը զբաղվում էր շերամաբուծությամբ և երկրագործությամբ: Գյուղն ուներ վարժարան և գործում էր և Ս. Կարապետ մատուռը⁶⁵⁵: Տեղահանությունից առաջ Ժամավայրն ուներ 40 ընտանիքից բնակչություն⁶⁵⁶, ինչը հաստատում է նաև թուրքական աղբյուրը⁶⁵⁷: Տեղահանությունից հետո վերադարձան սակավաթիվ գյուղացիներ: 1919 թ. նոյեմբերին Ժամավայր գյուղի մոտակայքում ապրող թուրքերը և լազերը, կազմելով հրոսակախմբեր, գյուղի հայերից որպես փրկագին պահանջեցին 500 ոսկեդրամ: Ժողովուրդը կարողացավ հազիվ 100 ոսկեդրամ հավաքել և այդ իրավիճակից ահաբեկված՝ հայ գյուղացիները ստիպված էին օգնություն խնդրել Կ.Պոլսից ⁶⁵⁸:

Մանուշակ (Մենեշմե) գյուղը գտնվում էր Պարտիզակի արևելյան մասում⁶⁵⁹: Այն հաստատվել էր 1884 թ. Օրդուից գաղթած հայերի կողմից⁶⁶⁰: Մանուշակ գյուղում զբաղվում էին շերամաբու-

⁶⁵¹ Ղազարեան Հ. Գ., նշվ. աշխ., էջ 157:

⁶⁵² Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 353:

⁶⁵³ Էփրիկեան Ս., Բնաշխարհիկ բառարան, Բ հատոր, նշվ. աշխ., էջ 64:

⁶⁵⁴ Գասապեան Մ. (Ֆարիստ), նշվ. աշխ., էջ 103:

⁶⁵⁵ Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 355:

⁶⁵⁶ Մելքոնեան Ա. Ս., նշվ. աշխ., էջ 478:

⁶⁵⁷ Գյուղ, որ բաղկացած է 28 լազ հայերից, <https://akunq.net/am/?p=26116>

⁶⁵⁸ Թուրք և լազ չեթեները Ժամավայրի մէջ, «Ժամանակ», Կ.Պոլիս, 19 նոյեմբեր-2 դեկտեմբեր 1919, թիւ 3690:

⁶⁵⁹ Թեոդիկ, նշվ. աշխ., 1985, էջ 353:

⁶⁶⁰ Գասապեան Մ. (Ֆարիստ), նշվ. աշխ., էջ 103:

ծությամբ, անասնապահությամբ, մեղվաբուծությամբ, թռչնաբուծությամբ, ածխագործությամբ և մորթիների մշակությամբ⁶⁶¹: Մանուշակ գյուղում գործում էր ՀՅԴ մասնաճյուղը, որը 1912 թ. հունիսին ստեղծեց «Արտադրողական համագործական միությունը»՝ գյուղատնտեսական բերքի վաճառքը շահավետ կերպով կազմակերպելու նպատակով⁶⁶²:

1901թ. Կ.Պոլսի Ուսումնական խորհրդի հրատարակած վիճակացույցի համաձայն՝ Մանուշակի Հովնանյան վարժարանում սովորող 50 երկսեռ աշակերտներին դասավանդում էր 1 ուսուցիչ: 150 դուրուշ ուսումնական ամսական ծախսը վճարվում էր Թաղական խորհրդի գանձանակից⁶⁶³: 1914 թ. փետրվարին Ադաբազարում տեղի ունեցավ գրական-գեղարվեստական երեկո՝ ի նպաստ Մանուշակ գյուղի Հովնանյան վարժարանի⁶⁶⁴: Մանուշակի գյուղացիները կլիմայի խստության պատճառով հետզհետե թողնելով գյուղը՝ հաստավեցին Տոնկելի և Օվաճրզի միջև ընկած Տոնկելի Սուրբ կոչված վայրում: Արդեն 1910 թ. գաղթածները ջանքերով մատուռ կառուցվեց⁶⁶⁵: Գյուղացիների մեկ մասն էլ հարմար գտնելով Տյոնկելի շրջակայքը՝ փոխադրվեց և հաստատվեց Մանուշակից շուրջ 6 ժամ հեռավորության վրա գտնվող Նոր-Գյուղում⁶⁶⁶: Մանուշակում գործում էր Ս. Աստվածածին եկեղեցին: Տեղահանությունից առաջ գյուղն ուներ 118 ընտանիքից կազմված 591 հայ բնակչություն⁶⁶⁷:

⁶⁶¹ Köker O., նշվ. աշխ., s. 103.

⁶⁶² Հայկական կեանք, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 27 յունիս-10 հուլիս 1912 , թիւ 933:

⁶⁶³ Վիճակացոյց գաւառական ազգային վարժարանանց Թուրքիոյ: Ա տետր, նշվ. աշխ., 3-րդ աղյուսակ:

⁶⁶⁴ Հանդէս, ժողով, թատրոն և այլն, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 25 դեկտեմբեր-7 յունուար 1914, թիւ 1435:

⁶⁶⁵ Լրատու, «Բիւթանիա», Իզմիտ, 1 փետրուար 1910, Ա տարի, թիւ 4, էջ 46:

⁶⁶⁶ Հայկական կեանքէն: Մանր լուրեր, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 1911, 1-14 սեպտեմբեր, թիւ 681:

⁶⁶⁷ Ղազարեան Հ. Գ., նշվ. աշխ., էջ 157:

2.3. Աղաբազարի գավառակի հայաբնակ բնակավայրերը և դրանց սոցիալ-տնտեսական վիճակը

Աղաբազարը Իզմիրի գավառի հինգ գավառակներից մեկն էր, որը գտնվում էր Սաքարիա գետի ափին՝ տարծվելով ընդարձակ և տափորակ դաշտավայրի վրա: Իզմիրի գավառի, թերևս, գլխավոր՝ Աղաբազարի գավառակի սահմաններն արևելյան կողմում՝ Սաքարիա գետն էր, արևմուտքից և հյուսիսից՝ Չարք գետակը և Սապանձա լիճը, իսկ հարավից՝ Բութանիայի լեռները: Հողը բերրի էր, կլիման՝ մեղմ, ջուրն առատ և օդն՝ առողջարար, գյուղատնտեսության համար հրաշալի պայմաններ ունեցող, վաճառաշատ և տնտեսական կարևոր կենտրոն էր երկրի համար: Աղաբազարի գավառակն ուներ 3 գյուղախումբ՝ Ագ Յազի, Սապանձա և Գարամուսալ՝ 226 գյուղերով: Բնակչության ընդհանուր թիվը հասնում էր 140.000, իսկ Աղաբազար քաղաքի 45 թաղերում ապրում էր 5000 ընտանիքից կազմված 32.000 բնակչություն: Արտահանվող ապրանքներն էին՝ մետաքսը, բոժոժը, ցորենը, եգիպտացորենը, լոբին, սիսեռը, սոխը, ընկույզը, կարտոֆիլը, ծխախոտը, որսի կենդանամասը, կաշին, մուշտակները, բուրդը, կոշիկը, շերամահունդը, մեղրամուրը, պանիրը, աղյուսը, միրգը, կղմինդրը և այլն:

XIX դարի վերջերից Աղաբազարում սկսեց զարգանալ շերամաբառուծությունը, ինչը բնակչության կողմից թթաստանների մշակության և տեղացի մասնագիտական կրթություն ստացած 16 հնդաբույծների արհեստավարժ աշխատանքի արդյունք էր: Այստեղ արտադրված շերամը արտահանվում էր եվրոպական երկրներ, Պարսկաստան և Կովկաս: Գավառակում տարեկան 400-500 հակ մետաքս արտադրվող շոգեշարժ մանարաններում աշխատողները ստանում էին 7.000-8.000 օսմանյան ոսկեդրամ⁶⁶⁸

⁶⁶⁸ Աղաբազարում գործածվում էին օսմանյան ոսկեդրամը, որն արժեր 108, անգլիական՝ 118, իսկ ֆրանսիականը՝ 94 դուրուշ: (Առևտրական բառարան, «Բիւրակն»ի, «Բիւրակն», Կ.Պոլիս, 25 օգոստոսի 1907, թիւ 35, էջ 1316:)

աշխատավարձ: Գավառակում զբաղվում էին նաև կաշեգործությամբ, կահույքագործությամբ, կտավագործությամբ, գուլպայագործությամբ, դերձակությամբ, ասեղնագործ աշխատանքով, քաղցրավենիքի արտադրությամբ⁶⁶⁹:

Ադաբազարը համանուն գավառակի գլխավոր քաղաքն էր, որը գտնվում էր Սաքարիա գետի արևելյան մասում, արևմուտքից և հյուսիսից սահմանակից էր Սապանձա լճին, իսկ հարավից՝ Բութանիայի լեռներին: Կառուցված էր ընդարձակ դաշտի, անտառոտ և բարեբեր հողատարածքի վրա և շրջապատված էր թրաստաններով: 1901 թ. տվյալների համաձայն՝ Ադաբազարը 25.000-30.000 բնակչություն ունեցող մի քաղաք էր: Այստեղ բնակվում էին թուրքեր, հայեր, հույներ, լազեր, չերքեզներ և մահմեդական գաղթականներ: Ադաբազարում արտադրվում էր փայտ, հացահատիկային բույսեր, շերամ, մրգեր, կաթնեղեն, հավ և ձու⁶⁷⁰: Քաղաքում պահպանվել էին ճենովական և բյուզանդական հուշարձաններ, որոնցից հայտնի էր Հուստինիանոսի կամուրջը, որին թուրքերը Պեշ-Քյոփրու էին կոչում⁶⁷¹:

Ըստ 1912 թ. «Բյութանիա» թերթի հրատարակած պաշտոնական տվյալների՝ 30.000 բնակչություն ունեցող այս քաղաքում 13.000-ը հայեր էին, 11.000-ը՝ թուրք, 1.500-ը՝ հույն և 4.500-ը՝ գաղթական կամ դրսեցի: Քաղաքն ուներ 6 մզկիթ, 4 հայկական և 2 հունական եկեղեցիներ, հայ բողոքականների 1 ժողովարան, 1 թուրքական յոթամյա և 3 տարրական դպրոցներ, հույները՝ 1 երկսեռ նախակրթարան: Քաղաքում գործում էին 3 թուրքական և 1 հայերին պատկանող բաղնիքներ⁶⁷²: Թուրք հեղինակ Ալի Գյունդողդուն գրում է, որ Ադաբազարը հիմնել են XIV դարի վերջին

⁶⁶⁹ Առևտրական բառարան «Բիւրակն»ի, Ատաբազար, «Բիւրակն», Կ.Պոլիս, 18 օգոստոսի 1907, թիւ 34, էջ 1181-1184:

⁶⁷⁰ Տնտեսականք, «Բիւզանդիոն», Կ.Պոլիս, 10-23 մարտ 1901, թիւ 1350:

⁶⁷¹ Խանճեան Հ. Ս., նշվ. աշխ., էջ 42-44:

⁶⁷² Գաւառիկն վիճակագրութիւնը, «Բիւթանիա», Ատաբազար, 3 յունուար 1912, թիւ 1, էջ 538:

Մերաստիայից գաղթած մի խումբ հայերի կողմից և իրենց առաջնորդի անունով այն կոչել Տոնիկաշեն: Հետագայում բնակչությունը ստվարացել է տարբեր վայրերից եկած հայերի հաշվին: Երբ Տոնիկաշենը դարձել է բարեշեն և վաճառաշահ գյուղաքաղաք, այնտեղ հաստատվել են նաև թուրքեր և հույներ: XV դարի վերջին թուրքերը գյուղաքաղաքն անվանել են Ադա (կղզի), ավելի ուշ՝ որպես բանուկ շուկա՝ Ադաբազար (Կղզեշուկա): XX դարի սկզբին Ադաբազարն ուներ 25 հազար բնակիչություն, որից 12.500-ը՝ հայեր⁶⁷³: Հայերի տեղահանությունից առաջ քաղաքն ուներ 30.000 բնակչություն, որից կեսը հայեր էին⁶⁷⁴:

Ըստ թուրքական աղբյուրի՝ Ադաբազարում հայերը զբաղվում էին կաշեգործությամբ, կոշկակարությամբ, կղմինդրների, աղյուսների և շինարարական այլ ապրանքների արտադրությամբ, երկաթագործությամբ և դրամափոխությամբ⁶⁷⁵: 1899 թ. Ադաբազարի մոտ երկաթի հանքերի 80 %-ը շահագործում էր Տրդատ Տատյանը⁶⁷⁶: Ադաբազարի մոտակայքի Չամ Տաղ և Աճը Էլմա կոչված վայրերում գտնվող արծաթախանոն կապարի և զինկոյի հանքերի շահագործման մենաշնորհը պատկանում էր Պետրոս Հալաճյանին և Հարություն Գարամանյանին: Ադաբազարի սեղանավորական և առևտրական գործերը մեծ մասամբ վարում էին հայ վաճառականները⁶⁷⁷: «Բյուրակն» պարբերականի թղթակից Զարեհ Կենճյանի՝ 1907 թ. խմբագրությանը ներկայացրած տվյալների համաձայն՝ Ադաբազարում գործող մետաքսի մանարանները 11-ն էին, որոնց տերերը բոլորը հայեր էին, միայն մեկ հույն կար, որը հայի հետ համատեղ էր աշխատեցնում մանարանը: Մանարանների սեփա-

⁶⁷³ Թուրք լրագրող, Հայկական պատմությունը ջնջելն այնքան էլ հեշտ չէ, <https://times.am/?p=25840&l=am>

⁶⁷⁴ Մակարեան Ա. Յ., նշվ. աշխ., էջ 300:

⁶⁷⁵ Köker O., նշվ. աշխ., s. 103.

⁶⁷⁶ Հասմիկ Ս., Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում, Երևան, 2011, էջ 144-145:

⁶⁷⁷ Առևտրական բառարան, «Բիւրակն»ի, «Բիւրակն», Կ.Պոլիս, 25 օգոստոսի 1907, թիւ 35, էջ 1315:

կանատերերն էին՝ Մ. Պետրոս, Ե. Մուրատյան՝ 84 շոգեշարժ ճախարակ, Պողոս Ե. Մուրատյան՝ 60 շոգեշարժ ճախարակ, «Հակոբ Տայլերյան և ընկերություն»՝ 60 շոգեշարժ ճախարակ, Թագվոր Աշճյան և Անաստաս Միխայիլտիա՝ 60 շոգեշարժ ճախարակ, Մ. Օգսեն Շամլյան և Հաբեթ Գամյան՝ 60 շոգեշարժ ճախարակ, Մ. Հակոբ Դավթյան՝ 52 շոգեշարժ ճախարակ, «Մկրտիչ Ճրկայան և ընկերություն»՝ 48 շոգեշարժ ճախարակ, «Անդրանիկ Չարզճյան և եղբայրք»՝ 42 շոգեշարժ ճախարակ, «Մկրտիչ Ճրկայան և ընկերություն»՝ 22 ձեռնաշարժ ճախարակ, Մ. Անպարլարյան՝ 21 ձեռնաշարժ ճախարակ, Կարապետ Թովուզյան՝ 16 ձեռնաշարժ ճախարակ: Ընդհանուր քաղաքում գործել է 525 ճախարակ⁶⁷⁸: Մետաքսի մանարան հիմնելու համար 4.000-5.000 ոսկեդրամ էր անհրաժեշտ գործը սկսելու համար⁶⁷⁹: Ադաբազարի մանարանների բանվորուհիները 9 ժամ աշխատանքի դիմաց ձմռանը ստանում էին 5, իսկ ամռանը՝ 6 դուրուշ աշխատավարձ⁶⁸⁰: Այս մանարաններում օգտագործվում էր 150.000 չոր շերամ և արտահանվում՝ 80.000 ոսկու արժողությամբ մետաքս: Ադաբազարում հիշյալ մանարանների շնորհիվ ապահովվում էր 700 ընտանիքների ապրուստը: Մանարանների տերերն իրենց աշխատողներին տարեկան 7.000 ոսկեդրամ էին վճարում⁶⁸¹:

Ադաբազարում ցորենի, եգիպտացորենի, գարու, վարսակի, կորեկի արտահանող հիմնական վաճառականներից հինգը հայեր էին՝ Հակոբ Աշճյան, «Հակոբ Տայլերյան և ընկերություն», «Հաճի Արթաքի Միտարյան և ընկերություն», Ալեքսանյան եղբայրներ, Մ. Սրապյան եղբայրներ: Նրանցից բացի կային մի քանի այլ

⁶⁷⁸ Շերամապահուծիները Ատաբազարի մեջ, «Բիւրակն», Կ.Պոլիս, 19 մայիս 1907, թիւ 21, էջ 875:

⁶⁷⁹ Առևտրական բառարան, «Բիւրակն»ի, «Բիւրակն», Կ.Պոլիս, 25 օգոստոսի 1907, թիւ 35, էջ 1315-1316:

⁶⁸⁰ Երկաթ, Տնեսական գործաւորական հարցը Ատաբազարի մեջ, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 14-27 դեկտեմբեր 1909, թիւ 158:

⁶⁸¹ Շերամապահուծիները Ատաբազարի մեջ, «Բիւրակն», Կ.Պոլիս, 19 մայիս 1907, թիւ 21, էջ 875:

վաճառականներ, որոնք գործում էին վերոհիշյալ անձանց գումարներով⁶⁸²: Ըստ ֆրանսիական «Annuaire Oriental» տարեցույցի 1914 թ. համարի՝ ընդհանուր առմամբ Ադաբագարում գործել են 165 հայկական առևտրական տներ⁶⁸³:

«Բյուրակն» հանդեսի 1906 թ. 47-48 համարների ազդերի բաժնում ծանուցվում էր, որ Ադաբագարում մի խումբ հայ դրամատերեր և վաճառականներ 1901 թ. որոշեցին Ադաբագարում սեղանավորական տուն հաստատել, որպեսզի ընդարձակեն և դյուրացնեն իրենց իրենց առևտրական գործառույթները: 1906 թ. Ադաբագարում արդեն գործում էին «Ռ. Բարթիկյան և ընկերությունը» և «Պ. Ազարյան և ընկերությունը», որոնք հետզհետե կարևոր դիրքեր էին զբաղում քաղաքի և շրջակայքի առևտրի բնագավառում: «Ռ. Բարթիկյան և ընկերությունը» զբաղվում էր «Նյումեն» կարի մեքենաների վաճառքով և մտադիր էր Տրիեստից գուլպայագործական մեքենաներ բերել, որը խիստ օգտակար կարող էր լինել տեղի գուլպայագործների համար⁶⁸⁴: «Ռուբեն Բարթիկյան և ընկերությունը» վաճառատունը զբաղվում էր նաև հեծանիվների վաճառքով⁶⁸⁵, մրցակցության մեջ էր «Զինգեր» մականիշի կարի մեքենաներ ներկրողների հետ և ուներ 800 օսմանյան ոսկեդրամ դրամագլուխ⁶⁸⁶: «Պ. Ազարյան և ընկերությունը» զբաղվում էր սեղանավորական գործերով, ծրագրում էր զբաղվել նաև տարբեր ապրանքների ներմուծմամբ և արտահանմամբ: Ընկերության հիմնական նպատակն էր կաշեգործական արհեստանոց բացել Ադաբագարում, Եվրոպայից ներկրել տրակտորներ, հնձող, կալտող, հերկող մեքենաներ, որոնք արդյունավետ կդարձնեին

⁶⁸² Արմտիքի նոր բերքը Ատաբագարի մեջ, «Բիւրակն», Կ.Պոլիս, 13 յունուար 1907, թիւ 5-6, էջ 140:

⁶⁸³ Զիթունի, նշվ. աշխ.:

⁶⁸⁴ Դրամատուն Ատաբագարի մեջ: Առևտրական քօլեքդիֆ ընկերութիւններ, «Բիւրակն», Կ.Պոլիս, 2 դեկտեմբեր 1906, թիւ 45-46, էջ 1101-1102:

⁶⁸⁵ Առևտրական բառարան «Բիւրակն»ի, «Բիւրակն», Կ.Պոլիս, 9 դեկտեմբեր 1906, թիւ 47-48, էջ 1127:

⁶⁸⁶ Գասապեան Մ. (Ֆարիատ), նշվ. աշխ., էջ 202:

գյուղացիների աշխատանքը⁶⁸⁷: Աղաբազարի կարևոր արտադրանքներից էր կահույքը: Քաղաքում հիմնականում կաղնուց աթոռներ, գերմանական օրինակներով պահարաններ և այլ կարասիներիններ էին պատրաստվում, որոնք սպառվում էին տեղում և Կ.Պոլսում⁶⁸⁸: Քաղաքի 10 կահույքագործներից 7-ը հայեր էին, 12-14 դերձակներից՝ 10-ը, 60-70 կոշկակարներից՝ 50-ը, 10 դեղատներից 6-ը պատկանում էին հայերին:

Աղաբազարի Հարություն Թոմպոլյանը փռատեր էր և հացահատիկային կուլտուրաների առաջնակարգ վաճառական: Կազմարար Մամբրե Ճեճիզյանի կազմատունը զբաղվում էր գրքերի և հանդեսների կազմարարությամբ: Այս կազմատունը չէին զիջում Կ.Պոլսի կազմատներին⁶⁸⁹: Աղաբազարում գործում էր Գրիգոր Գայանին պատկանող «Արարատ» պանդոկը⁶⁹⁰:

Աղաբազարում 18-20 բժիշկներից՝ 10-ը և 5 ատամնաբույժներից 3-ը հայեր էին⁶⁹¹: 1911 թ. հուլիսին Աղաբազար քաղաքի բուժաշխատողները թիվը համալրվեց Կ.Պոլսի և Բեյրութի բժշկական համալսարաններն ավարտած 12 հայ բժիշկներով և դեղագործներով⁶⁹²:

Աղաբազարում հայերը լիովին վերահսկում էին ինչպես առևտրի, այնպես էլ ֆինանսավարկային գործարքների ոլորտները: Դեռևս 1852 թ. վեց երիտասարդ առևտրականներից և արհեստավորներից կազմված մի խումբ հիմնադրեց «Մեպուհյան առևտրա-

⁶⁸⁷ Դրամատուն Ատաբազարի մեջ: Առևտրական քոլեքդիֆ ընկերություններ, «Բիրակն», Կ.Պոլիս, 2 դեկտեմբեր 1906, թիւ 45-46, էջ 1101-1102:

⁶⁸⁸ Առևտրական բառարան, «Բիրակն»ի, «Բիրակն», Կ.Պոլիս, 25 օգոստոսի 1907, թիւ 35, էջ 1315-1316:

⁶⁸⁹ Կազմարար Մամբրե Ճեճիզյան, «Պարտիզակ», Կ.Պոլիս, ապրիլ 1911, Բ տարի, թիւ 4, էջ 51:

⁶⁹⁰ «Ազատամարտ», Կ.Պոլիս, 26 օգոստոս-8 սեպտեմբեր 1910, թիւ 370:

⁶⁹¹ Շրջիկ, Կեանքը Ատափազարի մեջ: Կեանքը կը ծաղկի աւերակներուն մէջէն, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 30 օգոստոս, 1919, թիւ 246:

⁶⁹² Նոր բժիշկներ և դեղագործներ, «Բիթանիա», Ատա-Բազար, 21 յուլիս 1911, Բ տարի, թիւ 18-19, էջ 497:

կան ընկերությունը», որի անդամավճարը կազմում էր 40 փարա: Ավելացնելով իր բյուջեն՝ այն 1853 թ. կարողացավ օրական 10.000 դահեկանի առևտուր կատարել⁶⁹³:

1908 թ.-ից հետո Ադաբազարում սկսեցին կազմավորվել հայկական տնտեսական և ֆինանսական ընկերություններ, որոնք իրենց մեծ նպաստը բերեցին Ադաբազարի հայերի տնտեսական վիճակի բարելավմանը⁶⁹⁴: 1909 թ. հիմնվեց «Մ. Պուրմանյան և ընկերք» 20 հոգուց բաղկացած բաժնետիրական ընկերությունը, որի անդամները շաբաթական 10 դահեկան, իսկ յուրաքանչյուր տարվա վերջին 5 օսմանյան ոսկեդրամ էին վճարում: 1913 թ. ընկերությունն ուներ 450 լիրա դրամգլուխ⁶⁹⁵: Նույն թվականին հիմնվել էր «Շահակցական միությունը»: Այս բաժնետիրական միությունը գործել է «Մ. Մարկոսյան և ընկերք» անունով, սկզբնական շրջանում ունեցել է 70 անդամ, որոնց շաբաթավճարը կազմել է 5, իսկ յուրաքանչյուր ամսվա վերջին վճարը՝ 10 դահեկան: 1913 թ. ընկերությունն արդեն 1050 օսմանյան ոսկեդրամ դրամագլուխ ուներ:

1901 թ. հիմնված Ադաբազարի «Ատաղծագործների ընկերության» նպատակը ատաղձի առևտրով զբաղվելն էր: 1904 թ. այն վերանվանվեց «Ռուբեն Բարթիկյան և ընկերություն» անունով, ուներ 14 անդամներ և 800 օսմանյան ոսկեդրամ դրամագլուխ⁶⁹⁶:

1909-1910 թթ. հիմնվեց «Խաղախորդներու (կաշեգործների) շահակցական ընկերությունը», որը գործել է «Ս. Պուրմանյան և ընկերություն» անունով: Ընկերության դրամագլուխը կազմում էր 1.000-2.000 ոսկեդրամ, և այն կարևոր աջակցություն է ցույց տվել կաշեգործներին և կոշկարներին⁶⁹⁷:

⁶⁹³ Դադայան Խ., նշվ. աշխ., էջ 78:

⁶⁹⁴ Ֆեներճյան Գ., նշվ. աշխ., էջ 114:

⁶⁹⁵ Հայկ, Շահակցական միութիւններ Ատաբազարի մէջ, «Ժամանակ», Կ.Պոլիս, 12-25 յունիս 1911, թիւ 1514:

⁶⁹⁶ Դադայան Խ., նշվ. աշխ., էջ 74:

⁶⁹⁷ Պատմագիրք Ատափազար «Աստուածարեալ» քաղաքին, նշվ. աշխ., էջ 260:

1910 թ. Մարկոս Թերզյանի նախաձեռնությամբ հիմնվեց «Արևելյան երկրագործական միությունը», որի նպատակն էր զարգացնել այգեգործության, անասնաբուծության, ձկնաբուծության, մեղվաբուծության, շերաբուծության բնառավառները, ինչպես նաև հողեր գնել ու դրանք մշակելուց հետո տալ վարձակալության, իսկ այնուհետև մեծ շահույթով վաճառել: 1913 թ. միությունն ուներ 400 անդամ, որոնց շաբաթավճարը կազմում էր 5 դուրուշ, իսկ միության դրամագլուխը՝ 6.000 օսմանյան ոսկեդրամ⁶⁹⁸:

1910 թ. հունվարին մի խումբ եռանդուն երիտասարդների կողմից հիմնվեց Ադաբազարի «Գործակցական ընկերությունը», որի անդամների թիվն օրըստօրե ավելանում էր: Նախատեսված էր անդամների թիվը հասցնել 1000-ի՝ 60 դուրուշ տարեկան անդամավճարով: Ընկերությունը ծրագրել էլ բացել փուռ, նպարեղենի և սպառողական այլ խանութներ⁶⁹⁹:

1909 թ. հիմնված «Խնայողական սնտուկ» կոչվող բաժնետիրական ընկերությունը նպատակ էր հետապնդում իրականացնել բանկային գործառույթներ՝ ցածր տոկոսադրույքներով գումարներ տրամադրել իր հաճախորդներին: Անդամների մուտքի գումարը 1 օսմանյան լիրա էր, իսկ շաբաթավճարը՝ 5 դուրուշ: Ընկերությունն իր հիմնադրման շրջանից գործում էր «Ա. Կյումուշյան, Ա. Մերճանյան և ընկերություն» անունով: 1913 թ. այն ուներ 8.000 օսմանյան ոսկեդրամ դրամագլուխ, իսկ շրջանառության մեջ՝ 15.000 ոսկեդրամ: Այս ընկերությունն ուներ նաև արժեթղթերի վաճառքով զբաղվող մասնաճյուղ, որին անդամակցում էին 370 հոգի՝ մուծելով 18 դահեկան կանխավճար և 9 դուրուշ ամսավճար: Ընկերության այս մասնաճյուղում գնված էին 1.000 օսմանյան ոսկեդրամի զանազան արժեթղթեր, որոնք պահվում էին որպես

⁶⁹⁸ Դադայան Խ., նշվ. աշխ., էջ 74:

⁶⁹⁹ Նորայր, Ատաբազարեան նամականի, «Բիթանիա», Իզմիտ, 10 փետրուար 1910, թիվ 5, էջ 52-53:

պահուստային գումար⁷⁰⁰: Որպես վարկատու հաստատություն տվյալ ընկերությունը մեծ ծառայություն է մատուցել միջին հնարավորություններ ունեցող առևտրականներին: Տեղահանությունից առաջ ընկերությունն ուներ շուրջ 13.000 օսմանյան ոսկեդրամ⁷⁰¹:

Ադաբազարում միայն Օսմանյան դրամատունն ուներ իր մասնաճյուղը, որի բոլոր վարկատուները հայեր էին: Վարկատու գրասենյակներ ունեին Պետրոս Հինեյանը, Թարալճյանը, Աֆեյան եղբայրները և «Մ. Բարսեղյան-Ս. Աբրահամյան ընկերությունը»: Փոխառությամբ էին զբաղվում բժիշկ Ճամճյանը, Հարություն Թոփարճյանը, Ներսես Պազպազյանը, Կարապետ Բարթիկյանը, Գրիգոր Բարթիկյանը և Միսակ Ճիզմեճյանը⁷⁰²:

1912 թ. ծխախոտի գնի անկման և աննպաստ եղանակների հետևանքով թթենիների տերևների փչացման պատճառով՝ Ադաբազարում ֆինանսական ճգնաժամի մեջ հայտնվեցին հայ առևտրականները և շերամաբույծները: Այս շրջանում քաղաքի «Խնայողական սնդուկը-Ա. Կյումուշյան, Ա. Մերճանյան և ընկերությունը», «Արևելյան երկրագործական միությունը» և «Ս. Պուրմանյան և ընկերությունը» գումարներ տրամադրեցին հայ առևտրականներին՝ նրանց ազատելով սնանկացումից և դուրս բերելով տնտեսական ճգնաժամից⁷⁰³:

1908 թ. կազմավորվեց Ադաբազարի «Մետաքսի գործավորական միությունը», որի նպատակն աշխատավորուհիների աշխատանքային իրավունքների պաշտպանումն էր: Տեղի «Կարմիր խաչի» կազմակերպած ժողովրդական անվճար դպրոցի շենքում 1909 թ. սեպտեմբերին տեղի ունեցավ տարեկան միության ընդհանուր ժողովը և ներկայացվեց տեղեկագիրը: Անդամուհիների

⁷⁰⁰ Հայկ, Շահակցական միութիւններ Ատաբազարի մէջ, «Ժամանակ», Կ.Պոլիս, 12-25 յունիս 1911, թիւ 1514:

⁷⁰¹ Պատմագիրք Ատափազար «Աստուածաբեալ» քաղաքին, նշվ. աշխ., էջ 260:

⁷⁰² Նույն տեղում, էջ 115, 261:

⁷⁰³ Առևտրական տագնապը Ատաբազարի մէջ, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 3-16 մայիս 1912, թիւ 886:

շաբաթական անդամավճարը կազմում էր 8 դահեկան⁷⁰⁴։ Միության անդամուհիները 1910 թ. սեպտեմբերին պատրաստեցին կանոնադրություն և որոշակի գումար կուտակելով՝ ջանում էին բարելավել իրենց աշխատանքային պայմանները⁷⁰⁵։ «Մետաքսի գործավորական միությունը» 1911 թ. հունիսին ստեղծեցին իրենց արհեստակցական միությունը⁷⁰⁶։ 1913 թ. սկզբին բանվորուհիների միությունը Կ.Պոլսի Աշխատանքի տների⁷⁰⁷ նման Ադաբազարում հիմնեց Աշխատանքի տուն, որի նպատակն էր նպաստների փոխարեն՝ աշխատանք առաջարկել գործազուրկներին⁷⁰⁸։ Միությունը և Աշխատանքի տունը ոչ միայն ջանում էին բարելավել իրենց աշխատանքային պայմանները, այլև ծավալել հանրօգուտ գործունեություն⁷⁰⁹։ Միության ծախսերով բացվել էր ժողովրդական անվճար դպրոց⁷¹⁰։

Մինչ տնտեսական այս ընկերությունների հիմնումը Ադաբազարում գործել են կրթական, լսարանական, ուսումնասիրաց, մշակութային բազմաթիվ ընկերություններ, որոնց թիվը ավելացավ 1908-ից հետո։ 1847 թ. Ադաբազարում հիմնվել է առաջին ընկերությունը՝ «Արամյանը», որի 24 նվիրյալ անդամների նպատակն էր բարեկարգել քաղաքի կրթական վիճակը։ Այս հաստատությունն իր

⁷⁰⁴ Բանւորական։ Ատաբազարի գործաւորական միութիւնը, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 24 սեպտեմբեր-7 հոկտեմբեր, 1909, թիւ 89։

⁷⁰⁵ Ադաբազարի բանւորուհիները կը վերակազմուին, «Ազատամարտ», Կ.Պոլիս 7-20 սեպտեմբեր 1910, թիւ 380։

⁷⁰⁶ Աշխատաւորական։ Մետքսի բանւորուհիները «Ազատամարտ», Կ.Պոլիս, 1911, 14-27 յունիս, թիւ 613։ Տե՛ս նաև Տեղական, «Բիւթանիա», Ատաբազար, 14 յունուար 1912, թիւ 2, էջ 542։

⁷⁰⁷ Աշխատանքի տուն։ Կարուձնի արհեստանոց, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 4-17 հոկտեմբեր 1911, թիւ 708։

⁷⁰⁸ Հայկական կեանքէն, Աշխատանքի տուն Ատաբազարի մէջ, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 12-25 մարտ 1913, թիւ 1159։

⁷⁰⁹ Աշխատաւորական։ Բանւորուհիների չափաւոր պահնջները, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 14-27 յունի 1912, թիւ 922։

⁷¹⁰ Ս. Ս., Աշխատաւորական։ 96 բանւորուհիներու զատկական նուերօրականի կրճատում, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 1-14 ապրիլ 1912, թիւ 860։ Տե՛ս նաև Պատմագիրք Ատափազար «Աստուածարեալ» քաղաքին, նշվ. աշխ., էջ 246։

հովանավորության տակ էր առել աղջիկների և տղաների վարժարանները, որոնք այս ընկերության անունով 1849 թ. կոչվեցին Արամյան: 1848 թ. հիմնված «Միսակյան ընկերությունը» հովանավորում էր Ս. Կարապետ եկեղեցու թաղի վարժարանին: Ի պատիվ այս ընկերության՝ վարժարանը կոչվեց Միսակյան: 1848-1849 թթ. կազմավորված «Թորգոմյան ընկերության» նպատակն էր աջակցել քաղաքի կրթական կյանքին, իսկ նույն թվականներին հիմնված «Ռուբինյան ընկերությանը՝ տեղի արական վարժարանին: 1849 թ. ձևավորված «Հռիփսիմյան ընկերությունը» աջակցում էր աղջկանց վարժարանին, որի անունով էլ այն կոչվեց հետագայում: Միննույն ժամանակ հիմնված «Գայանյան ընկերությունն» իր նյութական աջակցության տակ էր պահում քաղաքի Ս. Հրեշտակապետ թաղի օրիորդաց վարժարանը, որն ի պատիվ այս ընկերության՝ անվանվեց Գայանյան և մինչև 1883 թ. շարունակեց իր ազգօգուտ գործունեությունը⁷¹¹:

1911 թ. Գայանյան աղջկանց վարժարանի սանուհիները հիմնեցին «Սանուհյաց միությունը», որի նպատակն էր լսարան-ընթերցարան բացել աղքատ աշակերտների համար և ապահովել նրանց գրենական պիտույքներով⁷¹²: Ընկերության ջանքում էր աղքատիկ սանուհիներին մանարանների հեղձուցիչ մթնոլորտից բերել վարժարան և լուծել նրանց կրթական խնդիրները: Կանանց համար կազմակերպում էր բանախոսություններ, ներկայացումներ ու երեկոներ⁷¹³: 1910 թ. «Սանուհյաց միության» հրավերով՝ քաղաքի բժիշկներից Շահենը «Կանանց կիրակնօրյա լսարանում» բանախոսեց բժշկական թեմաներով⁷¹⁴: 1913 թ. միության տիկինները 220

⁷¹¹ Պատմագիրք Ատափազար, նշվ. աշխ., էջ 238-239:

⁷¹² Գասապեան Մ. (Ֆարիատ), նշվ. աշխ., էջ 268:

⁷¹³ Սահակեան Ե., Ատաբազարի իգական սեռին գործունեությունը, «Դայլայիկ», Կ.Պոլիս, 19 մարտ-1 ապրիլ 1914, թիվ 30:

⁷¹⁴ Թղթակցություն: Ատաբ-Բազարի գործեր, «Բիւրանիա», Իզմիտ, 10 ապրիլ 1910, թիվ 11, էջ 129:

դուրուշ ուղարկեցին «Ազգանվեր հայուհյաց ընկերությանը»⁷¹⁵: Ուներ 170 անդամուհիներ, ովքեր իրենց անդամավճարներով ջանում էին իրականացնել միության ծրագրերը⁷¹⁶: 1911 թ. նոյեմբերին «Մանուհյաց միության» հրավերով Գայանյան վարժարանի 2000 տեղանոց դահլիճում բանախոսեց պոլսահայ մտավորական Ենովք Արմենը⁷¹⁷: Կոմիտաս վարդապետը 1913 թ. մայիսի 28-ին ժամանեց Ադաբազար՝ նախագահելու «Մանուհյաց միության» կազմակերպած գեղարվեստական երեկոն, որտեղ հանդես եկավ դասախոսությամբ և մտադրություն արտահայտեց երկսեռ երգչախումբ ստեղծել Ադաբազարում⁷¹⁸:

Մի քանի ընթերցասեր անձանց ջանքերով 1858 թ. կազմավորված «Ընթերցասիրաց ընկերությունը» գրադարան-ընթերցասրահներ էր բացել Ադաբազարում և Պարտիզակում: 1908 թ. վերակազմավորվելուց հետո «Հայ ընթերցասիրաց ընկերությունն» ավելի լայն գործունեություն ծավալեց, քաղաքում ընթերցանությունը քաջալերելու նպատակով սկսեց ձեռք բերել գրքեր, թերթեր և հանդեսներ, ինչպես նաև բացեց ընթերցասրահ, որից օգտվում էր քաղաքի ընթերցասեր հասարակությունը: 1911 թ. միայն թերթերի ձեռքբերման համար ընկերությունը ծախսել էր 12-13 օսմանյան ոսկեդրամ⁷¹⁹, իսկ ընկերություն անդամների թիվը հասավ 180-ի⁷²⁰:

Թերևս, Ադաբազարի «Ուսումնասիրաց ընկերությունը» ստեղծվել է 1865 թ.-ից առաջ, ինչի մասին վկայում է Կ.Պոլսի «Մասիս» օրաթերթի մի հրապարակում: «Մաների ընկերությունը»

⁷¹⁵ Հայկական լուրեր, «Հեռաձայն», Կ.Պոլիս, 1913, 8 յունիս-1 յուլիս, թիւ 29:

⁷¹⁶ Գասապեան Մ. (Ֆարիատ), նշվ. աշխ., էջ 268:

⁷¹⁷ Տեղական, «Բիւթանիա», Ատա-Բազար, 17 դեկտեմբեր 1911, Գ տարի, թիւ 31, էջ 531:

⁷¹⁸ Սերովբէ քհ. Պուրմաեան, Կոմիտաս վարդ. Ատաբազարի մէջ, «Բիւզանդիոն», Կ.Պոլիս, 11-24 հունիս 1913, թիւ 5067:

⁷¹⁹ Ընկերութեան անդամ մը, Առաջարկ մը Հայ-ընթերցարանի ընկերութեան վարչութեան, «Բիւթանիա», Ատա-Բազար, 21 օգոստոս 1911, թիւ 20-21, էջ 898:

⁷²⁰ Կեանքը Ատաբազարի մէջ, «Բիւթանիա», Իզմիտ, 20 փետրուար 1911, թիւ 5-6, էջ 376:

նյութապես քաջալերվում էր քաղաքի հայ հասարակության կողմից, և 1867 թ. ընկերության կողմից գրադրան-ընթերցասրահ հիմնվեց:

1909 թ. Ս. Կարապետ թաղի կանայք, իրենց հերթին, հիմնեցին «Ընթերցասիրաց կանանց միությունը», որի գործունեության մասին տեղեկությունները պակաս են: Հայտնի է, որ 1910 թ. Սանդիստյան մանկապարտեզի սրահում ներկայացում է կազմակերպել⁷²¹: Ադաբազարի Կեդրոնական վարժարանի բացումից քիչ անց, վարժարանի սաները 1909 թ. հիմնեցին «Սանուց միությունը» և պատրաստեցին կանոնագիր: Միության նպատակն էր հիմնել դպրոցական գրադարան-ընթերցարան⁷²²: Հիշատակվում է նաև «Ուսանողական միությունը» անվամբ: 1912 թ. հունվարին միությունը կազմակերպեց երեկո, որի հասույթը կազմեց 50 օսմանյան ոսկեդրամ⁷²³: Կարճ ժամանակում միությունը հաջողվել էր ավելի քան 200 գիրք հավաքել⁷²⁴:

1873-1874 թթ. ծանր ձմեռվանից հետո, ժողովրդին նյութական ծանր վիճակից դուրս բերելու նպատակով Ադաբազարում կազմավորվել է «Աղքատասիրաց ընկերությունը», որի անդամները 10 դահեկան անդամավճարները հավաքելով՝ աջակցել են քաղաքի աղքատ խավին: 1875 թ. կազմավորվել է «Հոգեսեր ընկերությունը», որի նպատակն էր նպաստել եկեղեցիների պայծառակերպությունը: Հայտնի է, որ այս ընկերությունը 1894 թ. էջմեի գյուղի եկեղեցուն նվիրել է ձեռքի խաչ: 1878 թ. Ս. Ստեփանոս թաղում հիմնված «Բագրատունյաց ընկերության» բարեկարգել էր թաղի երկսեռ վարժարանը, աղքատ աշակերտներին ապահովել գրենական պիտույքներով: 1879 թ. հիմնված «Առաջադիմասեր ընկերությունը» Ս.Հրեշտակապետ թաղում բացեց Կենտրոնական լսարա-

⁷²¹ Պատմագիրք Ատափազար «Աստուածաբեալ» քաղաքին, նշվ. աշխ., էջ 246:

⁷²² Կեդր. վարժարանին շուրջ, «Բիթանիա», Ատա-Բազար, 10 մարտ 1912, թիւ 5, էջ 565:

⁷²³ Տեղական, «Բիթանիա», Ատաբազար, 14 յունուար 1912, թիւ 2, էջ 542:

⁷²⁴ Գասապեան Մ. (Ֆարիստ), նշվ. աշխ., էջ 268:

նը, ուր տարբեր նյութերի շուրջ բանախոսում էին կրթված անձինք: 1882 թ. ստեղծված «Աշխատասիրաց ընկերությունը» նյութապես աջակցել է քաղաքի կրթական հաստատություններին և Կ.Պոլսի «Հայոց միացյալ ընկերությանը»:

1883 թ. «Մասիս» և 1885 թ.«Արևելք» թերթերի հրապարակումներում հայտնվում էր Ադաբազարում լայն գործունեություն ծավալած «Հայուհյաց առաջադիմասեր ընկերության» մասին: Նույն թվականին հիմնված «Սանդխտյան ընկերության» նպատակն էր լուսավորություն տարածել քաղաքի հայ կանանց մեջ: Իր հիմնած գրադարան-ընթերցասրահներում ընկերությունը տարբեր քննարկումներ էր կազմակերպում: 1893 թ. այս ընկերության դրամական միջոցներով Ս.Կարապետ թաղում մանկապարտեզ հիմնվեց⁷²⁵:

«Կանանց կրթասիրաց ընկերությունը» 1909-1910 թթ. գործուն մասնակցություն ունեցավ քաղաքի կրթական կյանքում: Ամենայն հավանականությամբ այն նշված տարիներից առաջ է հիմնվել⁷²⁶: Ընկերությունը նպատակ ուներ Սանդխտյան աղջկանց վարժարանի համար ձեռք բերել կալվածք, որի հասույթը պետք է ծառայեր աղքատ աշակերտուհիների դպրոցական կարիքներին: Ընկերությունն ուներ 150 անդամներ, որոնց 1 ամսվա անդամավճարը կազմում էր 1 դուրուշ⁷²⁷:

1908 թ. վերակազմավորվեց 1883 թ. հիմնադրված «Կրթասիրաց ընկերությունը», որի նպատակն էր քաղաքում հիմնել բարձրագույն վարժարանի և նպաստել արհեստների զարգացմանը: Ընկերության 827 անդամներն իրենց նպատակների իրագործման համար ձեռք էին բերել կալվածքներ (երկու ընդարձակ քարաշեն խանութ, Մեծ շուկայի վերին հարկը, երկու վերնահարկով փայտաշեն խանութ, Սողան փազար կոչված շուկայում վեց խանութ, մեկ

⁷²⁵ Պատմագիրք Ատափազար, նշվ. աշխ., էջ 239-244:

⁷²⁶ Նույն տեղում, էջ 247:

⁷²⁷ Գասապեան Մ. (Ֆարիատ), նշվ. աշխ., էջ 266:

հյուրանոց՝ սրճարանով), որոնք գրանցված էին որպես Ադաբազարի չորս եկեղեցիների սեփականություն: Այս կալվածքները ապահովում էին տարեկան 230 օսմանյան ոսկեդրամի շահույթ:

1909 թ. «Կրթասիրաց ընկերությունը» հիմնեց Ադաբազարի Կեդրոնական վարժարանը՝ ունենալով առաջին տարին՝ 108, երկրորդ տարին՝ 130 աշակերտ, որոնցից 25-30-ը շրջակա քաղաքներից և գյուղերից էին: Աշակերտները վճարում էին 1-6 օսմանյան ոսկեդրամ ուսման վարձ, սակայն կային նաև անվճար սովորող աշակերտներ: Դպրոցը սեփական շենք չուներ, ուստի շենքը վարձվում էր: Վարժարանը կառավարվում էր վարչության և Թաղային խորհուրդների կողմից ընտրված 7 անձից կազմված խնամակալության կողմից: Բյուջեն կազմում էր 650 ոսկեդրամ, որից 200-ը մատակարարվում էր ընկերության կալվածքներից և ազգապատկան բաղնիքից ստացված հասույթներից, իսկ 300-ը՝ ուսման վարձերից: Վարժարանն ուներ գրադարան: 1910 թ. 100 ոսկեդրամ հատկացվեց դպրոցական կահկարասու ձեռքբերման համար⁷²⁸: 1911 թ. հունվարին Ադաբազարի Կեդրոնական վարժարանի շենքի կառուցման նպատակով ստեղծվեց հանձնախումբ, որի ծրագրի իրագործման համար «Կրթասիրաց ընկերության», Կեդրոնականի խնամակալության և Թաղային հանձնախմբի կողմից հատկացվեց 2500 օսմանյան ոսկեդրամ⁷²⁹: Բարձր գնահատելով կրթական վարժարանի տնօրեն Միքայել Շամտանճյանի կատարած աշխատանքը, «Կրթասիրաց ընկերության» վարչական ժողովը որոշեց նրան պարգևատրել 20 օսմանյան ոսկեդրամով⁷³⁰:

Ադաբազարցի Հաճի Հովհաննեսը 1912 թ. որոշում կայացրեց 150 ոսկեդրամ արժողությամբ խանութ նվիրել Ադաբազարի «Կրթասիրաց ընկերությանը», իսկ Ալեքսան Բարթիկյանը նոր ջրաղաց կառուցելու համար հողակտոր նվիրեց այս ընկերությանը:

⁷²⁸ Գասապեան Մ. (Ֆարհատ), նշվ. աշխ., էջ 265-266:

⁷²⁹ Հայկական կենսքեն, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 5-18 յունուար 1911, թիվ 482:

⁷³⁰ Հայկական կենսքեն: Գաւառներ, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 19 օգոստոս-1 սեպտեմբերի 1910, թիվ 364:

Աղաբազարի հայկական գերեզմանատան հանձնախումբը 150 ոսկեդրամ արժողությամբ կալվածք գնեց «Կրթասիրաց ընկերությանը» փոխանցելու համար: Ընկերության անդամների թիվն անընդհատ ավելանում էր և թերևս մինչև 1912 թ. արդեն հասնել էր 2.000-ի⁷³¹: «Կրթասիրաց ընկերությանը» կից՝ 1911 թ. տեղի ունեցավ վերահսկող մարմնի անդամների ընտրությունը: Այն պետք է ջանար գտնել նոր բաժանորդներ և նպաստեր Կեդրոնական վարժարանի առաջադիմությանը⁷³²: 1914 թ. ապրիլին Աղաբազարի «Ադամյան» թատերախումբը հանդես եկավ ներկայացումներով, որոնցից ստացված հասույթը հատկացվեց քաղաքի «Կրթասիրաց ընկերությանը»⁷³³:

Մինչև 1893 թ. Աղաբազարի եկեղեցիներում գործել են դպիրների ընկերություններ, սակայն հայտնի է միայն քաղաքում 1893 թ. արդեն գործող «Դպրաց ընկերություն» մասին, որոնց անդամների տարեկան հասույթները կազմում էին 25-ից մինչև 35 ոսկեդրամ⁷³⁴: Ս. Հրեշտակապետ թաղի Դպրաց դասի խնամակալությունը 1905 թ. նշեց իր ստեղծման 75-ամյակը⁷³⁵: 1890 թ. կազմավորվել է հայ բողոքականների «Օրիորդաց բարեսիրական միությունը», որի նպատակը աղքատ աղջիկներին նպաստով և կրթաթոշակով ապահովելն էր: Ուներ 20-25 անդամուհիներ, որոնց տարեկան անդամավճարը կազմում էր 5-20 դահեկան⁷³⁶: 1908-ից հետո Աղաբազարում սկսեցին կազմավորվել մեծ թվով նոր ընկերու-

⁷³¹ Տեղական, «Բիւթանիա», Ատաբազար, 14 յունուար 1912, թիւ 2, էջ 542:

⁷³² Արգոս, Կրթասիրացի վարչութեան և հսկող մասնախմբի ընտրութիւնները, «Բիւթանիա», Իզմիտ, 10 մայիս 1911, Բ տարի, թիւ 12, էջ 422:

⁷³³ Մանր լուրեր, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 29 մարտ 11 ապրիլ, 1914, թիւ 1475:

⁷³⁴ Ատաբազարի դպիրները, «Հայրենիք», Կ.Պոլիս, 28 սեպտեմբեր 1893, թիւ 589:

⁷³⁵ Ատաբազարէն, «Սուրհանդակ», Կ.Պոլիս, 1905, 17 դեկտեմբեր:

⁷³⁶ Գասապեան Ս. (Ֆարիատ), նշվ. աշխ., 1913, էջ 269:

թյուններ, իսկ գործող ընկերությունները սկսեցին առավել արդյունավետ գործունեություն ծավալել⁷³⁷:

1908 թ. Օսմանյան սահմանադրության վերահռչակումից հետո, մեծ ոգևորություն սկսվեց Ադաբազարի թաղերում: Ս. Լուսավորիչ թաղում 1908 թ. հիմնված և 1910 թ. վերակազմված «Ռուբինյան առաջադիմասիրաց միությունը» անդամների նպատակն էր սատար լինել Ս. Լուսավորիչ թաղի կրթական գործին, որի իրագործման համար նրանք մտադիր էին հիմնել գրադարան և այդպիսով տարածել ընթերցանությունը, կիրականօրյա լսարաններում բանախոսություններ կազմակերպելով՝ նպաստել տեղի բնակչության մակարդակի բարձրացմանը, միության գումարներից հոգալ թաղի աղքատ աշակերտների դպրոցական բոլոր կարիքները: Միությունն ուներ 85 անդամ, որոնք շաբաթական 1 դուրուշ անդամավճար էր մուծում: 1911 թ. տվյալերով՝ Ս.Լուսավորիչ թաղի տղաների վարժարանին նվիրել էր 100 գիրք⁷³⁸:

1908 թ.-ից հետո Ադաբազարն ապրում էր մշակութային աշխույժ կյանքով: Քաղաքում կազմավորվեց «Թատերասիրաց միության», որը ձգտում էր երիտասարդության շրջանում գեղարվեստի նկատմամբ սեր և հետաքրքրություն սերմանել և օգտակար լինել քաղաքի թատերախմբերին⁷³⁹: Այս միության կենտրոնատեղին Ս. Կարապետ թաղի Ներսեայան վարժարանն էր, որ ուներ շարժական բեմ⁷⁴⁰: 1910 թ. հոկտեմբերին տեղի «Ադամյան» թատերախումբը ներկայացրեց Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» և Շիլլերի «Ավագակներ» թատերգություններից արարներ: Ելույթ ունեցան տեղի նվագախումբը, երգչախումբը, տարբեր մենակատարներ: Միջոցառման նպատակն էր աջակցել

⁷³⁷ Թղթակցութիւնք «Ձայն հայրենեաց»ի, Գաւառի նամակներ, «Ձայն հայրենեաց», Կ.Պոլիս, 20 մարտ-2 ապրիլ, 1909, թիւ 22, էջ 232:

⁷³⁸ Գոռակ, Կեանքը Լուսավորիչ թաղի մէջ, «Բիւթանիա», Իզմիտ, 10 դեկտեմբեր 1911, թիւ 29-30, էջ 526:

⁷³⁹ Նույն տեղում:

⁷⁴⁰ Պատմագիրք Ատափազար «Աստուածարեալ» քաղաքին, նշվ. աշխ., էջ 249:

քաղաքի «Հայ որբախնամ տիկնանց միությանը» և ստացված 10 օսմանյան ոսկեդրամ հասույթը հատկացվեց այս հաստատությունը⁷⁴¹:

1909 թ հիմնված «Գեղարվեստական միությունը» գեղարվեստական երեկոներ էր կազմակերպում⁷⁴²: 1911 թ. հունիսի 5-ին կազմավորվեց Աղաբազարի «Ուսուցչական միությունը», որի նպատակն էր պաշտպանել իր անդամների նյութական և բարոյական շահերը: Միության անդամների անդամավճարը կազմում էր իրենց աշխատավարձի 2 տոկոսը⁷⁴³: Միությունն առաջնորդվում էր 41 հոդվածից կազմված իր կանոնադրությամբ⁷⁴⁴: «Թատերական միությունն» ուներ հատուկ թատերասրահ, ուր ներկայացումներով հանդես էին գալիս տեղի և դրսից եկած թատերախմբերը⁷⁴⁵:

Աղաբազարի «Աղամյան» թատերախումբը «Մասիս» թատրոնում 1911 թ. հունիսին ներկայացրեց «Լիոնի սուրհանդակը» մեղեդրաման⁷⁴⁶: Արեւյան-Զարիֆյան թատերախումբը 1910 թ. մարտին հյուրախաղերով հանդես եկավ Աղաբազարում⁷⁴⁷: Հայ դրամատիկ խումբը 1911 թ. մարտին Աղաբազարի նորակառույց «Մասիս» թատերասրահի շենքում հանդիսատեսին ներկայացրեց Շեքսպիրի, Ալեքսանդր Դյումայի թատերգությունները: Իրենց խաղով փալեցին Վահրամ Փափազյանը, Ենովք Շահենը և Զափրաստը: Այս

⁷⁴¹ Դարբին, Թղթակցութիւններ, «Բիւթանիա», Իզմիտ, 1 նոյեմբեր 1910, թիւ 27, էջ 297: Տե՛ս նաև Հայկական կեանքէն: Գաւառներ, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 7-20 հոկտեմբեր 1910, թիւ 406:

⁷⁴² Լրատու, «Բիւթանիա», Իզմիտ, 10 օգոստոս, 1910, թիւ 20-22, էջ 238:

⁷⁴³ Ատաբազարի Ուսուցչական միութիւնը, «Բիւթանիա», Ատա-Բազար, 21 յունիս 1911, թիւ 16, էջ 452-454:

⁷⁴⁴ Ատաբազարի Ուսուցչական միութիւնը Գ ընդհանուր ժողովը, «Բիւթանիա», Ատա-Բազար, 21 յուլիս 1911, թիւ 17, էջ 459-460:

⁷⁴⁵ Պատմագիրք Ատափազար «Աստուածաարբեալ» քաղաքին, խմբագիրներ Արտաշէս Պիպերեան և Վարդան Եղիշեան, Փարիզ, 1960, էջ 249:

⁷⁴⁶ Տեղական, «Բիւթանիա», Ատա-Բազար, 10 մայիս 1911, Բ տարի, թիւ 16, էջ 455:

⁷⁴⁷ Ատաբազարեան նամականի, «Բիւթանիա», Իզմիտ, 20 մարտ 1910, թիւ 9, էջ 102-103:

խումբը հյուրախաղերով հանդես եկավ նաև Իզմիրթում և Պարտիզակում⁷⁴⁸: Մարտիրոս Մնակյանի թատերախումբը 1911 թ. դեկտեմբերի 6 ներկայացումներով հանդես եկավ Ադաբազարում⁷⁴⁹:

1909 թ. «Հայոց միացյալ ընկերությունը» Ադաբազարում բացեց իր մասնաճյուղը⁷⁵⁰: 1910 թ.-ից մինչև 1915 թ. Ադաբազարում գործել է տեղի մտավորականների կողմից կազմավորված «Գրական միությունը», որը գրական ցերեկույթներ և երկոներ էր կազմակերպում⁷⁵¹: 1910 թ. «Գրական ակումբի» ստեղծումից հետո կազմավորվեց նաև Սպորտային ակումբը⁷⁵²:

Ադաբազարում գործում էր «Զարգացման միությունը», որը 1913 թ. Հայոց գրերի գյուտի 1500-ամյա և տպագրության 400-ամյա հոբելյանական միջոցառումների կազմակերպիչներից էր⁷⁵³: ՀՅԴ «Ուսանողական միությունը» 1913 թ. քաղաքում հանդես էր գալիս ներկայացումներով, որի հասույթը հատկացվում էր «Կրթական ֆոնդին»:

«Հայ նվագախումբը» կամ «Ազգային ֆանֆառը» մի միություն էր, որը 1913 թ. ձևավորվել էր «Ժողովասրահի շինության հանձնախումբի» նախաձեռնությամբ: Նվագախմբի միակ նպատակն էր իր վաստակած գումարներով սատարել «Ժողովասրահի շինության հանձնախումբին», որպեսզի այն ավարտին հասցնի դրա շինարարությունը, որն էլ իր հերթին պետք է աջակցեր տեղի «Կրթասիրաց ընկերությանը»: Կարճ չանցած, նվագախումբը հան-

⁷⁴⁸ Հայ դրամտիկ խումբը Ատա-Բազարի մէջ, «Բիւթանիա», Իզմիրտ, 1 ապրիլ, 1911, թիւ 9, էջ 397:

⁷⁴⁹ Տեղական: Մնակեանի թատերախումբը Ատա-Բազարի մէջ, «Բիւթանիա», Ատա-Բազար, 5 յունուար 1912, թիւ 1, էջ 541:

⁷⁵⁰ Հայկական կէտնք, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 6-19 սեպտեմբեր 1909, թիւ 75:

⁷⁵¹ Պատմագիրք Ատափազար «Աստուածաբարբեալ» քաղաքին, խմբագիրներ Արտաշէս Պիպերեան և Վարդան Եղիշեան, Փարիզ, 1960, էջ 249:

⁷⁵² Թղթակցութիւն: Ատաբ-Ազարի գործեր, «Բիւթանիա», Իզմիրտ, 10 ապրիլ 1910, թիւ 11, էջ 129:

⁷⁵³ Մեծ յոբելեանի հանդէսները: Նամակ Ատաբազարէն: Կրկնակ յոբելեանները Ատաբազարի մէջ, «Ժամանակ», Կ.Պոլիս, 15-28 հոկտեմբեր 1913, թիւ 1605:

դես գալով համերգով՝ 50 ոսկու շահույթ ապահովեց: «Ժողովասրահի շինության հանձնախումբը» ձեռք բերեց հողատարածք, որը պետք է հատկացներ Ազգային պարտեզի կառուցմանը, որտեղ պետք է կազմակերպվեին տարբեր հանդեսներ և միջոցառումներ⁷⁵⁴:

1911 թ. նոյեմբերին Ադաբազարում տեղի ունեցավ Արշամ Մինասյանի ղեկավարած երկսեռ քառաձայն երգչախմբի մեծ համերգը, որի ընթացքում կատարվեցին Կոմիտասի, Գրիգոր Սյունու և Արշամ Մինասյանի երգերը⁷⁵⁵: 1914 թ. զարնանից Ադաբազարում արդեն բացվել էր Ազգային պարտեզը, որն ուներ իր փողային նվագախումբը, ժողովասրահը և կարճ ժամանակահատվածում պետք է գործեր կինոթատրոնն ու ջրավազանը: Մպասվում էին ջութակի, մանդոլինի և այլ երաժշտական գործիքներով կազմված նվագախմբի ելույթները: Այս պարտեզը 600-700 օսմանյան ոսկեդրամ հասույթ էր բերում քաղաքի ազգային կրթական հաստատություններին և հիմնականում՝ Կեդրոնական վարժարանին⁷⁵⁶:

«Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը» 1913 թ. Ադաբազարում ստեղծեց իր մասնաճյուղը, որն ուներ 94 անդամներ⁷⁵⁷: Նույն թվականի հունիսին բացվեց Կ.Պոլսի «Ազգանվեր Հայուհյաց ընկերության» Ադաբազարի մասնաճյուղը, որի նպատակն էր անդամուհիների տարեկան անդամավճարներով որոշակի հասույթ են ապահովել ընկերությանը: Դրանից բացի, տեղի Հայուհյաց Բարձրագույն վարժարանի շրջանավարտները 1913 թ. հունիսին կազմակերպելով հանդես՝ 8 օսմանյան ոսկեդրամ

⁷⁵⁴ Զարեհ Պլպուլ, Ատապազարեան նօթեր, «Ժամանակ», Կ.Պոլիս, 1913, 28 ապրիլ-11 մայիս, թիւ 1440:

⁷⁵⁵ Հայկական մեծ համերգ, «Բիւթանիա», Ատա-Բազար, 19 նոյեմբեր 1911, Գ տարի, թիւ 27, էջ 518:

⁷⁵⁶ Թղթակից, Կեանքը Ատաբազարի մէջ, «Ժամանակ», Կ.Պոլիս, 1-14 յուլիս 1914, թիւ 1857:

⁷⁵⁷ Յուշամատեան Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան. Արծաթեայ յոբելեան, Ա. հատոր, Բարիզ, 1935, էջ 99:

հասույթը ուղարկեցին «Ազգանվեր Հայուհյաց ընկերությանը»⁷⁵⁸: 1914 թ. Ադաբազարում և Պարտիզակում ի նպաստ «Ազգանվեր Հայուհյաց ընկերության»՝ կազմակերպվեցին ներկայացումներ, որոնցից ստացված 512.50 դուրուշ գումարը ուղարկվեց այս ընկերությանը⁷⁵⁹:

Գևորգ վարդապետ Դուրյանը տեղեկացնում էր, որ Կ.Պոլսից դուրս, թերևս չգտնվի ուրիշ հայաբնակ քաղաք, որն ունենա այսքան ազգային վարժարան, որքան Ադաբազարը: 1913 թ. տվյալներով քաղաքն ուներ 15 ուսումնական հաստատություն. 5 մանկապարտեզ, աղջիկների 4 և տղաների 4 նախակրթարաններ, աղջիկների և տղաների մեկական միջնակարգ վարժարաններ: Մանուշակ անունը կրող մանկապարտեզը քաղաքի մանկապարտեզներից լավագույնն էր, որն ուներ իր դրոշը և երգը (հիմնը), իսկ սաներն՝ իրենց հատուկ համազգեստը: Մյուս մանկապարտեզները փայլում էին իրենց մաքրությամբ: Մեծ հոգածությամբ էին վերաբերվում մանուկների առողջությանը: Նրանք մշտապես առույգ և առողջ տեսք ունեին⁷⁶⁰:

Ադաբազարի Հայուհյաց վարժարանը նախապես հաստատվել էր Պարտիզակում, իսկ 1885 թ. փոխադրվել՝ Ադաբազար: 1886-1914 թթ. Հայուհյաց վարժարանը 300 հասցրել է շրջանավարտներ, ովքեր մեծ մասամբ ադաբազարից էին և երկրի տարբեր վայրերից: Վարժարանն ուներ երկու մասնաշենք: 1900 թ. ավելացավ ևս մեկը, որն ուներ ընդարձակ ճաշարան, աշակերտուհիների ննջարաններ և վարժուհիների սենյակներ: Վարժարանն ուներ երկրաբանական նմուշներ, մարդակազմության տարբեր պատկերներ, քարտեզներ, բնագիտական սարքեր և այլն: Վարժարանում դասավանդվում էր պատմություն, հայ գրականություն, երկրաչափություն, բնագիտություն, քիմիա, բուսաբանություն, աստղագի-

⁷⁵⁸ Հայկական լուրեր, «Հեռաձայն», Կ.Պոլիս, 1913, 8 յունիս-1 յուլիս, թիւ 29:

⁷⁵⁹ Հայկական կեանք, «Ժամանակ», Կ.Պոլիս, 17-30 մայիս 1914, թիւ 1514:

⁷⁶⁰ Գ. վրդ. Դուրեան, Ատաբազար, «Բիզանդիոն», Կ.Պոլիս, 6-19 մարտ 1913, թիւ 4986:

տություն, նկարչություն, երաժշտություն: Դասավանդվող առարկաներից էր քննադատության դասընթացը, որի ժամանակ աշակերտուհիները քննարկում էին ընթացիկ գրականությունը⁷⁶¹: Տեղացի և ամերիկացի 12 ուսուցիչների խումբ էր դասավանդում այստեղ: Վարժարանում աշակերտուհիներին տրվում է նաև կարու ձևի և ձեռագործության դասեր⁷⁶²: Ադաբազարի Հայուհյաց վարժարանը կառավարվում էր հայերից և ամերիկացիներից կազմված խնամակալությամբ: Այստեղ կրթություն էր տրվում միայն հայ աղջիկներին: Գիշերօթիկ բաժնում սովորողների տարեկան ուսման վարձը կազմում էր 12 օսմանյան ոսկեդրամ: Դաշնամուրի դասավանդման համար աշակերտուհիները վճարում էին 3-5, իսկ երգեհոնի դասերի համար՝ 2,5 ոսկեդրամ⁷⁶³: Վարժարանն ուներ տարեկան 900-1000 օսմանյան ոսկեդրամ բյուջե⁷⁶⁴: Քաղաքի Հայուհյաց վարժարանի շրջանավարտները հիմնեցին «Շրջանավարտների միությունը», որը գործել է մինչև 1915 թ. և 1920 թ. Կ.Պոլսում շարունակել իր գործունեությունը⁷⁶⁵: Այս միությունը պատրաստելով «Շուշան» օպերետը 1911 թ. մարտին 3 ներկայացումներով հանդես եկավ տեղի հանդիսատեսի առջև⁷⁶⁶:

1911 թ. հուլիսի 4-ին Ադաբազարի Արամյան վարժարանի սրահում տեղի ունեցավ տեղի «Ուսուցչաց միության» առաջին դասախոսությունը, որը նվիրված էր քաղաքի ազգային վարժարանների առկա խնդիրներին: Որոշում կայացվեց կարող ուսուցիչների կողմից ստեղծել հանձնաժողով, որը առաջնորդվելով Կ.Պոլսի Ուսումնական խորհրդի ծրագրով՝ Ադաբազարի կրթա-

⁷⁶¹ Հայ դպրոցը անցեալէն և ներկայէն, Ստամբուլ, 2017, էջ 39:

⁷⁶² Հայուհեաց վարժարան Ատաբազար, «Մասիս», Կ.Պոլիս, 15 սեպտեմբեր 1907, թիւ 38, էջ 755:

⁷⁶³ Հայուհեաց վարժարան Ատաբազար, «Բիւրակն», Կ.Պոլիս, 9 յուլիս 1905, թիւ 28, էջ 560:

⁷⁶⁴ Յ. Ա., Ատաբազարի Աւետ. եկեղեցին, «Բիւրակն», Կ.Պոլիս, 20 նոյեմբեր 1902, թիւ 48, էջ 363-364:

⁷⁶⁵ Պատմագիրք Ատափազար «Աստուածաբեալ» քաղաքին, նշվ. աշխ., էջ 249:

⁷⁶⁶ Տեղական, «Բիւթանիա», Բզմիտ, 20 ապրիլ 1911, թիւ 10, էջ 405:

կան հաստատությունների համար պետք է մշակեր ուսումնական ծրագիր, որը կներառեր մանկապարտեզից սկսած մինչ միջնակարգ դպրոցը⁷⁶⁷: Արամյան վարժարանն ուներ բնագիտության և քիմիայի դասաժամերին գիտական փորձերի համար անհրաժեշտ սարքեր, սրվակներ և այլն: Վարժարանը հարուստ էր դասերի համար գործածվող քարտեզներով, պաստառներով և պատկերներով⁷⁶⁸:

Գայանյան և Արամյան վարժարանների հոգաբարձությունը 1911 թ. հոկտեմբերին կազմակերպեց համերգ, որի հասույթը պետք է գործածվեր այս վարժարանների աղքատ սաների ուսումնական կարիքների համար: Համերգին ելույթ ունեցավ 150 հոգանոց երկսեռ երգչախումբը, որի խմբավարն էր Արշամ Մինասյանը⁷⁶⁹: Տարբեր երաժիշտներ հանդես եկան մանդոլինի և դաշնամուրի վրա կատարելով երաժշտական տարբեր համարներ: Նման երեկոները ոչ միայն հասույթ էին ապահովում, այլև ցուցադրում էին ժողովրդի սերը դեպի կրթությունն ու գեղարվեստը⁷⁷⁰: Աղաբազարի Ս. Ստեփանյան վարժարանն ուներ նորակառույց շենք և 1914 թ. այստեղ ուսանում էր 263 երկսեռ աշակերտություն⁷⁷¹:

1909 թ. «Կրթասիրաց ընկերության» հովանու ներքո գործող Կեդրոնական վարժարանն ուներ նաև իր անհատ բարերարները, որոնք հոգում էին աղքատ աշակերտների համազգեստների և նրանց ուսումնական այլ ծախսերը⁷⁷²: Աղաբազարի ազգային բաղնիքը տարեկան 300-350 օսմանյան ոսկեդրամի շահույթ էր

⁷⁶⁷ Ատաբազարի Ուսուցչ. միութիւնը, «Բիւթանիա», Ատա-Բազար, 21 յուլիս 1911, թիւ 18-19, էջ 476-477:

⁷⁶⁸ Հայ դպրոցը անցեալէն և ներկայէն, Ստամբուլ, 2017, էջ 40:

⁷⁶⁹ Ս. Հ., Թաղի վարժարանի հոգաբարձութիւնը կը տեղեկացնէ մեզի, «Բիւթանիա», Ատա-Բազար, 23 հոկտեմբեր 1911, Բ տարի, թիւ 23, էջ 502:

⁷⁷⁰ Նուագահանդէս, «Բիւթանիա», Իզմիտ, 10 մայիս 1911, Բ տարի, թիւ 12, էջ 423:

⁷⁷¹ «Մանիշակ»ի հանդէսը, «Ժամանակ», Կ.Պոլիս, 10-23 յուլիս 1914, թիւ 1866:

⁷⁷² Շնորհակալիք, «Բիւթանիա», Իզմիտ, 10 մայիս 1911, Բ տարի, թիւ 12, էջ 422:

բերում, որը հատկացվում էր Կեդրոնական վարժարանին⁷⁷³: 1913 թ. որպես վարիչ՝ այստեղ պաշտոնավարել է Օքսֆորդի համալսարանի շրջանավարտ Լևոն Լարենցը: Նա ֆրանսերեն լեզվով դասավանդում էր քաղաքակրթություն, փիլիսոփայություն և պատմություն առարկաները⁷⁷⁴: Կեդրոնական վարժարանի ուսուցչական խումբը 1911 թ. ապրիլին կազմակերպեց կոնֆերանս, որի թեման հայերի ծագումն էր⁷⁷⁵: 1913 թ. Ս. Կարապետ թաղի վարժարանի ընդարձակ սրահում բանավեճ տեղի ունեցավ քաղաքի Կեդրոնական վարժարանի և Արմաշի դպրեվանքի սաների միջև: Կեդրոնականցիները առաջ էին քաշել «Պատերազմը որպես քաղաքակրթության ազդակներից մեկը», իսկ արմաշցիները պաշտպանում էին «Պատերազմը՝ թշնամի քաղաքակրթության և հակամարդկային վայրենություն» թեզերը և բերում տարբեր փաստարկներ և հիմնավորումներ: Բուռն քննակումից հետո, ժյուրին հաղթող ճանաչվեց արմաշականներին, որոնց հաղթանակը ողջունեց քաղաքի ազգային նվազախումբը⁷⁷⁶: Կեդրոնական վարժարանում դասավանդվող պարտադիր առարկաներից էր մարմնակրթության դասընթացը⁷⁷⁷: Աղաբազարի Կեդրոնական վարժարանի սաները մեծ հաջողությամբ կարողանում էին ընդունվել երկրի բարձրագույն հաստատություններ: Նրանց կրթական բարձր մակարդակը թույլ էր տալիս շատերին պետական ծախսով ուսանել բարձրագույն հաստատություններում⁷⁷⁸:

⁷⁷³ Կեդրոնականի մեծ հանդեսը, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 11-24 յուլիս 1914, թիւ 1867:

⁷⁷⁴ Հայ դպրոցը անցեալէն և ներկայէն, Ստամբուլ, 2017, էջ 40:

⁷⁷⁵ «Քօնֆերանս Հայոց ծագումի մասին», «Բիւթանիա», Իզմիտ, 20 ապրիլի, 1911, թիւ 10, էջ 415:

⁷⁷⁶ Սիրաք-Սամուէլ, Արմաշ-Ատաբազար, «Բիւզանդիոն», Կ.Պոլիս, 2-15-մայիս, 1913, թիւ 5030:

⁷⁷⁷ Թառիկեան Ս., աշակերտ Կեդրոնական վարժարանի (Ատաբազար), «Մարմնամարզ», Կ.Պոլիս, 1911, յուլիս, թիւ 6, էջ 185:

⁷⁷⁸ Նամակ Ատաբազարէն, (Մասնաւոր թղթակցութիւն), «Ժամանակ», Կ.Պոլիս, 20 սեպտեմբեր-3 հոկտեմբեր 1912, թիւ 1222:

Ս. Ստեփաննոս եկեղեցու և Ս. Մեսրոպյան վարժարանի շինության համար ստեղծված հանձնաժողովը 1914 թ. մարտին Կ.Պոլսի Հայոց պատրիարքությունից արտոնություն ստանալուց հետո, սկսեց հանգանակությունը: Հանգանակություն էր սկսվել նաև Կեդրոնական վարժարանի շենքի շինության համար և հավաքվել էր 3.000-4.000 օսմանյան ոսկեդրամ⁷⁷⁹:

1912-1913 ուսումնական տարում բացվեց Աղաբազարի Աղջիկների կեդրոնական վարժարանը, ուր պետք է դասավանդեին Կեդրոնական վարժարանի ուսուցիչները: Այստեղ դասավանդվում էր հայոց լեզու և գրականություն, մատենագրություն, հայ ժողովրդի և եկեղեցու պատմություն, թուրքերեն, արաբերեն, պարսկերեն, ֆրանսերեն լեզուները, օսմանյան և միջազգային օրենսգիտություն: Բնական գիտությունները դասավանդվում էին թուրքերեն լեզվով, որպեսզի շրջանավարտները բարձրագույն կրթական հաստատություններում դյուրությամբ կարողանան հանձել ընդունելության քննությունները⁷⁸⁰:

1911 թ. ապրիլին Աղաբազարում հիմնվեց «Հայոց հրատարակիչ ընկերությունը» և իր հրապարակային ժողովում համալրվեց նոր անդամներով⁷⁸¹: Աղաբազարում տպարան հիմնելու համար 1911 թ. կազմվեց բաժներտիրական ընկերություն, որի սկզբնական գումարը կազմում էր 200 օսմանյան ոսկեդրամ⁷⁸²: Ըստ «Բյութանիայի հրատարակչական ընկերության» կանոնագրի՝ այն պետք է զբաղվեր «Բյութանիա» գալառաթերթի հրատարակությամբ: Ընկերության դարամագլուխը կազմվում էր անդամների մուտքի՝ 20 և ամսական՝ 5 դուրուշ վճարումներից: Իսկ թերթը ղեկավարվում էր այս ընկերության նախաձեռնող խմբի կողմից ընտրված խմբա-

⁷⁷⁹ Զանազան լուրեր, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 18-31 մարտ, 1914, թիւ 1466:

⁷⁸⁰ Կեդրոնական վարժարան Հայոց Ատա-Բազար, 1912, Դ շրջան, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 31 օգոստոս-13 սեպտեմբեր 1912, թիւ 988:

⁷⁸¹ Հայկական կեանքէն, Մանր լուրեր, Ազատամարտ, Կ.Պոլիս, 1911, 7-25 ապրիլի, թիւ 547:

⁷⁸² Թղթակցութիւններ, «Բիւթանիա», Իզմիտ, 1 ապրիլ, 1911, թիւ 9, էջ 396-397:

գրական 7 և վարչական 5 անդամների կողմից⁷⁸³: Ադաբազարի «Ատրուշան տպարանական ընկերությունը» 1911 թ. քաղաքում հիմնեց «Ատրուշան» տպարանը, որը հրատարակում էր «Բյութանիա» գավառաթերթը⁷⁸⁴: 1912 թ. այն ձեռք բերեց նոր տառատեսակներ և «Բյութանիա» գավառաթերթից բացի հնարավորություն ստեղծվեց տպագրելու նաև գրքեր, բացիկներ, տարբեր ձևաթղթեր, հարսանյաց հրավիրատոմսեր, այցեքարտեր և այն⁷⁸⁵:

Ադաբազարում 1911 թ. հրատարակվել է «Երկիր», 1913 թ.՝ «Պայքար», իսկ 1911-1912 թթ.՝ «Բյութանիա», պարբերականները⁷⁸⁶: Սարգիս Աթանասյանը և Արտաշես Փափագյանը հրատարակում էին այս քաղաքի տեսարանները պատկերող բացիկներ⁷⁸⁷:

Ի դեպ, թուրքերն Ադաբազարում չունեին ոչ ըներցասրահ, ոչ թատերախումբ, ոչ մարզական ակումբ, ոչ լսարան, ոչ երգչախումբ և ոչ էլ տպարան: Իրենց հանդիսություններին կանչվում էր հայկական փողային նվագախումբը, իսկ անհրաժեշտ տպագրական գործերն արվում էին հայերին պատկանող տպարանում⁷⁸⁸:

Մինչև հայերի տեղահանությունը Ադաբազարում գործում էր «Ազգային հրշեջներու խումբը», որը ժողովրդի հանգանակած գումարներով ձեռք էր բերել անդամների արտահագուստն ու անհրաժեշտ սարքերը: Խումբը կազմված էր լավ մարզված 24 երիտասարդներից, ովքեր հրդեհները մարելուց բացի, հայկական թաղերում պահակություն էին անում և հայ բնակչությանը

⁷⁸³ Կանոնագիր «Բիւթանիայի հրատարակչական ընկերութեան», «Բիւթանիա», Ատա-Բազար, Բ տարի, 1 յունիս 1911, թիւ 14, էջ 438-439:

⁷⁸⁴ Տեղական, «Ատրուշան» տպարան, Ատաբազար, «Բիւթանիա», Ատա-Բազար, 23 հոկտեմբեր 1911, Բ տարի, թիւ 23, էջ 502:

⁷⁸⁵ Ուշադրութիւն Ատրուշան տպարան, «Բիւթանիա», Իզմիտ, 10 մարտ 1912, Գ տարի, թիւ 9, էջ 563:

⁷⁸⁶ Բաբլոյան Մ. Ա., նշվ. աշխ., էջ 82, 98:

⁷⁸⁷ Köker O., նշվ. աշխ., էջ 144-145:

⁷⁸⁸ Պատմագիրք Ատափազար «Աստուածարեալ» քաղաքին, նշվ. աշխ., էջ 281-282, 413:

պաշտպանում էին շրջակա գյուղերի թաթարների և չերքեզների հարձակումներից: Տեղահանությունից առաջ Աղաբազարում գործում էր նաև «Կոշկակարների միությունը», որի շաբաթական անդամավճարը կազմում էր 10 փարա: Միությունը հիմնել էր գեղեցիկ զբոսայգի, ուր ամեն կիրակի ելույթ էր ունենում հայկական փողային նվագախումբը⁷⁸⁹:

Աղաբազարի հայ առաքելականներն ունեին գեղեցիկ եկեղեցիներ: Հնագույնը Ս. Հրեշտակապետն էր, որն ուներ վայելուչ եկեղեցատուն: Մյուսները կոչվում էին Ս. Կարապետ, Ս. Լուսավորիչ և Ս.Ստեփաննոս: Այս եկեղեցիների համեմատ հայերը բաժանված էին 4 թաղերի և ամենքն ունեին արական և իգական դպրոցներ, որոնք կոչվում էին Ներսիսյան-Սանդիստյան, Արամյան-Գայանյան, Ռուբինյան-Հռիփսիմյան, Մեսրոպյան-Նունեյան, որոնք միասին XX դարի սկզբին ունեին 2.000 աշակերտներ⁷⁹⁰: Աղաբազարի Ս. Ստեփաննոս եկեղեցին կառուցվել է 1810 թ., Ս. Լուսավորիչը՝ 1830 թ., Ս. Կարապետը՝ 1834 թ., Ս. Հրեշտակապետը՝ 1864 թ.⁷⁹¹: Ս. Կարապետ եկեղեցում պահվել է 1622 թ. Կոստանդնուպոլսում ընդօրինակված Ավետարանը⁷⁹²: 1906 թ. Նիկոմիդիայի առաջնորդ Ստեփաննոս արքեպիսկոպոս Հովակիմյանը Աղաբազարի Ս.Կարապետ եկեղեցում 3 յուղաներկ գեղանկար օծեց: Երկուսը խաչելության տեսարաններով՝ տեղի Ս. Կարապետ և Ս. Հրեշտակապետ եկեղեցիների համար, իսկ երրորդը՝ Ս. Եղիայի պատկերով՝ Ֆերիզլի գյուղի եկեղեցու համար⁷⁹³: 1909 թ. սեպտեմբերին Աղաբազարի Ազգային գերեզմա-

⁷⁸⁹ Կյուլլենկեան Յ., Կեանքը Ատաբազարի մեջ, «Ժամանակ», Կ.Պոլիս, 10 դեկտեմբեր - 8 յունուար 1918, թիվ 3406:

⁷⁹⁰ Էփրիկեան Ս., Բնաշխարհիկ բառարան, Ա հատոր, նշվ. աշխ., էջ 260:

⁷⁹¹ Վիճակագրություն Ատափազար ի և շրջակայից եկեղեցիների և վարժարանների, Գրականության և արուստի թանգարան (ԳԱԹ), Թորոս Ազատյանի ֆոնդ N. 37 (VI բաժին):

⁷⁹² Ցուցակ հայերեն ձեռագրաց Նիկոմիդիոյ և շրջակայից, նշվ. աշխ., էջ 75:

⁷⁹³ Պատրիարքարանին լուրեր, «Սուրհանդակ», Կ.Պոլիս, 2 փետրուար 1906, թիվ 2122:

նատանը տեղի ունեցավ Ս. Հարություն մատուռի օծումը, որը կազմակերպել էր գերեզմանատան հանձնախումբը: Օծմանը ներկա էր 5000 հոգի: Վերջին շրջանում դեպի գերեզմանատուն ջրախողովակներում ջուր էր անցկացվել: Մատուռի շինարարության ծախսերը կազմեցին 250 ոսկեդրամ: Աղաբազարցիները պատրաստվում էին սկսել գերեզմանատան պարսպի կառուցումը, որը 2000 ոսկեդրամ ծախս էր պահանջում⁷⁹⁴: Աղաբազարի Ս. Հրեշտակապետ թաղի Ս. Ստեփաննոս եկեղեցու վերանորոգության համար անհրաժեշտ էր 1500 ոսկեդրամ⁷⁹⁵: Կ.Պոլսի Հայոց պատրիարքությունը կարողացավ ստանալ եկեղեցու նորոգության համար անհրաժեշտ սուլթանական հրովարտակը⁷⁹⁶: Աղաբազարցիների կողմից հանգանակվեց որոշակի գումար, դրան ավելացան առանձին անձանց նվիրատվությունները և սկսվեցին եկեղեցու նորոգության աշխատանքները⁷⁹⁷:

1911 թ. Աղաբազարի Ս. Հրեշտակապետ թաղի Թաղական խորհուրդը Ս. Ստեփաննոս եկեղեցու նորոգության հանձնաժողովի հետ կարողացավ ընդարձակել եկեղեցու բակը և 37 ոսկեդրամով ազգապատկան նոր հողատարածք ձեռք բերել: Եկեղեցու նորոգության համար Թաղական խորհուրդը տրամադրեց 500 ոսկեդրամ: Ս. Ստեփաննոսի Թաղական խորհուրդը ծախսելով 600 ոսկեդրամ՝ կարողացավ նորոգել թաղի փողոցները, անցկացնել ջրատար և կառուցել աղբյուրներ: Քաղաքի մյուս՝ Ս. Կարապետ և Ս. Լուսավորիչ Թաղային խորհուրդները կարողացան կանոնավոր

⁷⁹⁴ Միրաք, Ատաբազարի Ս. Յարութին մատուռի օծման հանդես Ազգ. գերեզմանատան մեջ, «Ժամանակ», Կ.Պոլիս, 12-25 սեպտեմբեր 1909, թիւ 278:

⁷⁹⁵ Տեղական, Եկեղեցիի նորոգութիւն, «Բիւթանիա», Ատա-Բազար, 1 յուլիս 1911, թիւ 17, էջ 462:

⁷⁹⁶ Հայկականլուրեր, «Ժամանակ», Կ.Պոլիս, 11-24 մայիս 1912, թիւ 1106:

⁷⁹⁷ Ատաբազարի եկեղեցիին շինութիւնը, «Ժամանակ», Կ.Պոլիս, 19 յուլիս-1 օգոստոս 1912, թիւ 1166:

հունի մէջ պահել այս թաղերի բնակչության կենսագործունեությունը⁷⁹⁸:

1901 թ. Կ.Պոլսի Ուսումնական խորհրդի հրատարակած վիճակացույցի համաձայն՝ Ադաբազարի Ս. Կարապետ թաղի Ներսիսյան-Սանդիստյան վարժարանում ուսանում էի 680 աշակերտ, որոնց դասավանդում էին 22 ուսուցիչներ, ուսմանական 3337 դուրուշ ամսական անհրաժեշտ գումարը գոյանում էր ուսումնական վարձերից, զանազան նպաստներից և տեղի Թաղական խորհրդի գանձանակից կատարված վճարումից: Նույն վիճակացույցի համաձայն՝ Ս. Հրեշտակապետ թաղի Արամյան-Գայանյան երկսեռ վարժարանն ուներ 865 աշակերտ, 26 ուսուցիչ, իսկ ուսումնական ամսական ծախսերը կազմում էր 4125 դուրուշ, որը հավաքվում էր ուսման վարձերից, զանազան նպաստներից և Թաղական խորհրդի գանձանակից տրամադրված գումարներից: Ս.Լուսավորիչ թաղի Ռուբինյան-Հռիփսիմյան երկսեռ վարժարանի 325 աշակերտներն ունեին 17 ուսուցիչ, 1500 դուրուշ ամսական ծախս, որը փակելու համար օգտագործվում էին ուսման վարձերից, Թաղական խորհրդի գանձանակից և զանազան նպաստներից հավաքված գումարները: Ս.Ստեփաննոս թաղի Մեսրոպյան-Նունեյան երկսեռ վարժարանում ուսանում էին 110 աշակերտներ, նրանց դասավանդում էին 3 ուսուցիչներ: Ուսումնական ծախսերը, որոնք ամսական կազմում էին 500 դուրուշ, գոյանում էին ուսման վարձերից, Թաղական խորհրդի գանձանակից և զանազան նպաստներից հավաքված գումարներից⁷⁹⁹: 1906 թ. Ադաբազարի յուրաքանչյուր թաղի բնակչություն 500 օսմանյան ոսկեդրամ էր տրամադրում կրթության գործին: Վարժարանների բյուջեն կանոնավորելու նպատակով՝ Իզմիթի առաջնորդի, ազգային իշխանությունների և տեղի երևելիների որոշմամբ քաղաքում պետք է

⁷⁹⁸ Անցնող տարին, «Բիթանիա», Ատա-Բազար, 14 յունուար 1912, թիւ 2, էջ 443:

⁷⁹⁹ Վիճակացոյց գաւառական ազգային վարժարանանց Թուրքիոյ: Ա տետր, նշվ. աշխ., 3-րդ աղյուսակ:

կառացվեր շոգեշարժ ալրադաց: Բարեպաշտ ազգայինները նվիրել էին հողատարածք, որի վրա պետք է այն կառուցվեր⁸⁰⁰:

Ադաբազարի Հայ բողոքական եկեղեցին հիմնվել է 1846 թ. հուլիսին, իսկ քարոզչությունը սկսել է եկեղեցու հիմնումից անմիջապես հետո: Եկեղեցին իր աշխատակիցներին ամսական վճարում էր 4-6 օսմանյան ոսկեդրամ: Ամերիկացի միսսներները բնավ գումար չէին վճարում: 1902 թ. տվյալներով հայ բողոքական եկեղեցին ուներ 165 անդամներ: Եկեղեցին կառուցվել է 1875 թ.՝ տեղացի և օտար բարերարների նվիրատվությամբ: Այն ընդարձակ էր և կարող էր ընդգրկել 500 հոգի: Ժողովրդի հոգևոր տուրքը տարեկան կազմում էր 170 ոսկի: Նրանք միսիոներներից օգնություն չէին ստանում: Ադաբազարի հայ բողոքականներն ունեին տղաների և աղջիկների նախակրթարաններ, ուր ուսանում էին շուրջ 100 աշակերտներ: Ժողովուրդը ուսուցիչներին տարեկան 45-50 ոսկի գումար էր վճարում: Քաղաքում կային ամերիկացի միսիոներներ, ովքեր պաշտոնավարում էին Հայուհյաց վարժարանում: «Ամերիկյան պորտ» ընկերությունը վճարում էր միայն միսիոներների աշխատավարձերը, իսկ տեղացի ուսուցիչները վճարվում էին աշակերտուհիների ուսման վարձերից գոյացած գումարներից: Ադաբազարի հայ բողոքականներն ունեին Ս. Հրեշտակապետ հոյակապ եկեղեցին⁸⁰¹, որը կառուցվել է 1875 թ.⁸⁰²: 1905 թ. հոկտեմբեր 15-16-ին քաղաքում տեղի ունեցավ հայ բողոքականների նորակառույց եկեղեցու նավակատիքը: Արարողության ավարտին եկեղեցու պայծառակերպության համար տեղի ունեցած հանգանակության արդյունքում 50 օսմանյան ոսկեդրամ

⁸⁰⁰ Թերզեան Մ. Հ., Ատաբազարի քրոնիկ, «Մանգումեի էֆքեար», Կ.Պոլիս, 23 նոյեմբեր-10 դեկտեմբեր 1906, թիւ 1665:

⁸⁰¹ Ճեզմէճեան Յ. Հ., Ատաբազար և Հայուհեաց վարժարան: Ճամբորդի տպաւորութիւններ Դ, «Բիւրակն», Կ.Պոլիս, 26 յուլիս 1905, թիւ 29, էջ 563:

⁸⁰² Ատանալեան Կ. Պ., նշվ. աշխ., էջ 240:

գոյացավ⁸⁰³։ Այս գեղեցիկ քարաշեն եկեղեցին կառուցվել էր ժողովրդի նյութական մեծ զոհողությունների շնորհիվ⁸⁰⁴։

Հայ բողոքական երիտասարդներից 1883 թ. կազմված «Երիտասարդաց քրիստոնեական ընկերակցության» կանոնադրության համաձայն՝ այն նպատակ ուներ ծառայել հայ առաքելական և բողոքական երիտասարդների մտավոր, հոգևոր և սոցիալական կյանքի բարելավմանը։ Ընկերակցության հովանավորությամբ մշտապես գործել են կիրակնօրյա դպրոցներ, գումարներ է տրամադրել Մալաթիայի, Հաճընի, Պարտիզակի, Բուրսայի, Ադանայի նյութական կարիք ունեցող հայրենակիցներին։ 1913 թ. ընկերակցությունը նշեց իր գործունեության 30-ամյակը։ Հանդիսության ժամանակ հանգանակվեց 42 օսմանյան ոսկեդրամ⁸⁰⁵։ Այն ուներ 20 անդամ, ովքեր տարեկան 1 մեջիդ էին վճարում⁸⁰⁶։ Ավանդույթի համաձայն՝ 1903 թ. ապրիլին ընկերակցության հովանուներքո քաղաքում տեղի ունեցավ համերգ, որից ստացված 5 օսմանյան ոսկեդրամը հատկացվեց Կ.Պոլսի Ս.Փրկիչ Ազգային հիվանդանոցին⁸⁰⁷։ Ընկերակցությունն ուներ գրադարան և պարբերաբար դասախոսություններ էր կազմակերպում⁸⁰⁸։

1910 թ. Ադաբազարում ստեղծված ֆուտբոլային ակումբը, որը կազմված էր 20 անդամներից, նպատակ էր հետապնդում զարգաց-

⁸⁰³ Ատաբազարի նորաշեն եկեղեցու նաւակատիքի հանդէսը, «Բիւրակն», Կ.Պոլիս, 22 հոկտեմբեր 1905, թիւ 42, էջ 830։

⁸⁰⁴ Ալեքսանեան Յ., Ատաբազարի նորակառոյց եկեղեցին, «Բիւրակն», 24 դեկտեմբեր 1904, թիւ 52, էջ 1035-1036։

⁸⁰⁵ Ալեքսանեան Յ., Ատաբազարի Երիտ. Քրիստ. Ընկերակցութեան գործը։ Երեսնամեակին առիթով, Կ.Պոլիս, 1913, էջ 4, 18, 30։

⁸⁰⁶ Գասապեան Մ. (Ֆարիստ), նշվ. աշխ., էջ 269։

⁸⁰⁷ Ճրկայեան Կ., Նուագահանդէս յ'Ատաբազար ի նպաստ Ազգ. Հյուանդանոցին, «Բիւզանդիոն», Կ.Պոլիս, 1903, 15-28 ապրիլ, թիւ 1.997։

⁸⁰⁸ Պատմագիրք Ատափազար «Աստուածարեալ» քաղաքին, նշվ. աշխ., էջ 249։

նել նաև դրան հարակից մարզաձևերը: Ակումբը ձեռք բերեց սպորտային տարեր պարագաներ⁸⁰⁹:

Ինչպես Օսմանյան կայսրության տարբեր քաղաքներում, այնպես էլ Ադաբազարում իրենց գործունեությունն էին ծավալում նաև հայ ազգային կուսակցությունները: 1912 թ.-ից Ադաբազարում գործում էր Հնչակյան կուսակցությունն մասնաճյուղը⁸¹⁰: 1912 թ. կազմակերպվեց ՄԴՀԿ «Ուսանողական միությունը», որում համախմբվել էին քաղաքի Կեդրոնական վարժարանի աշակերտները՝ նպատակ հետապնդելով նպաստել աշակերտության բազմակողմանի զարգացմանը⁸¹¹: 1913 թ. Հնչակյան կուսակցությունն Ադաբազարում ուներ արդեն նոր ակումբ⁸¹², որտեղ պարբերաբար տեղի էին ունենում բանախոսություններ, երեկոներ և այլ միջոցառումներ⁸¹³: ՄԴՀԿ-ն Ադաբազարում ուներ նաև իր երկսեռ երգչախումբը⁸¹⁴, թատերախումբը, որոնք քաղաքում հաճախ համերգներ և ներկայացումներ էր կազմակերպում⁸¹⁵: 1912 թ. ապրիլին Ադաբազարի «Մասիս» թատերասրահում «Հնչակ» թատերախումբը ներկայացրեց ֆրանսերենից թարգմանված «Ընկերավարական գատիկը» պիեսի բեմականացումը, որը ջերմորեն ընդունվեց հանդիսատեսի կողմից⁸¹⁶: Ադաբազարի ՄԴՀԿ ակումբում 1913 թ.

⁸⁰⁹ Ներկարարեան Ե., Ատա-Բազարի գործեր, «Բիթանիա», Իզմիտ, 10 ապրիլ 1910, Ա տարի, թիւ 11, էջ 129:

⁸¹⁰ Կարիճ, Ատաբազար, «Կոհակ», Կ.Պոլիս, 1912, 13-29 փետրուար, թիւ 8, էջ 90:

⁸¹¹ Պսակ, Ատաբազար, «Կոհակ», Կ.Պոլիս, 1912, 1-14 փետրուար, թիւ 4, էջ 42:

⁸¹² Հ., ՄԴ Հնչակեան կեանք, Ատաբազար, «Կոհակ», Կ.Պոլիս, 22 մայիս, 1913, թիւ 22, էջ 237:

⁸¹³ Շաւարշ, Թղթակցութիւնք, «Կոհակ», Կ.Պոլիս, 2-15 յունիս, 1912, թիւ 25, էջ 261:

⁸¹⁴ Ագիմ, Հնչակեան կեանք, Ատաբազար, «Կոհակ», Կ.Պոլիս, 1913, 12-25 ապրիլի, թիւ 13-14, էջ 160:

⁸¹⁵ Վահագն, Թղթակցւոյունք, Ատաբազար, «Կոհակ», Կ.Պոլիս, 1913, 24 ապրիլի, թիւ 15, էջ 179-180:

⁸¹⁶ Հայկ, Հնչակեան բեմ, Ատաբազար, «Կոհակ», Կ.Պոլիս, 1912, 18-21 ապրիլ, թիւ 15, էջ 165:

մայիսին հանդիսատեսին ներկայացվեց հերթական թատերական ներկայացումը⁸¹⁷:

1911 թ. ապրիլին Ադաբազարում մեծ հանդիսավորությամբ բացվեց ՀՅԴ ակումբ-ընթերցարանը⁸¹⁸, որն ուներ սրահ՝ իր բեմահարթակով, ընթերցասրահ և գրքերի հարուստ հավաքածով գրադարան⁸¹⁹: Դաշնակցության ակումբը պարբերաբար ստանում էր Կ.Պոլսի, գավառի և արտասահմանյան թերթեր և պարբերականներ, ինչպես նաև ֆրանսերեն և թուրքերեն լրագրեր⁸²⁰: Ադաբազարի ՀՅԴ անդամների նախաձեռնությամբ քաղաքում պարբերաբար միջոցառումներ էին կազմակերպվում⁸²¹: 1912 թ. հունվարին Ադաբազարի ՀՅԴ ակումբում տեղի ունեցավ միջոցառում, որի ընթացքում ելույթով հանդես եկան տեղի մտավորականները⁸²²: 1912 թ. փետրվարին Դաշնակցության ակումբում կայացավ հերթական երեկույթը, որի ընթացքում հանդես եկավ քաղաքի «Քնար» նվագախումբը⁸²³: 1913 թ. հունվարին ակումբում կազմակերպված միջոցառումը նվիրված էր Ղազարոս Աղայանին: Այս և նմանատիպ երեկոներից ստացված հասույթները ծառայում էին այս կամ այն ազգային խնդրի լուծմանը⁸²⁴:

⁸¹⁷ Հ., ՍԴ Հնչակեան կեանք, Ատաբազար, «Կոհակ», Կ.Պոլիս, 1913, 22 մայիս, թիվ 22, էջ 237:

⁸¹⁸ Դաշնակցական ակումբի մը բացումը, (Մեր մասնաւոր թղթակցէն), «Ազատամարտ», Կ.Պոլիս, 8-26 ապրիլ, 1911, թիվ 548:

⁸¹⁹ Գ. վրդ. Դուրեան, Ատաբազար, «Բիւզանդիոն», Կ.Պոլիս, 6-19 մարտ 1913, թիվ 4986:

⁸²⁰ ՀՅԴ Ատա-Բազարի ակումբը, «Բիւթանիա», Ատա-Բազար, 1 յունիս 1911, Բ տարի, թիվ 14, էջ 439:

⁸²¹ Տեղական Հրապարակային բանախօսութիւններ, «Բիւթանիա», Ատա-Բազար, 20 հոկտեմբերի 1911, Գ տարի, թիվ 25, էջ 500: Տե՛ս նաև Կարիճ, Ատաբազար, «Կոհակ», Կ.Պոլիս, 1912, 7-20 մարտ, թիվ 9, էջ 101:

⁸²² Տեղական: Ընտանեկան երեկոյթ, «Բիւթանիա», Ատա-Բազար, 5 յունուար 1912, թիվ 1, էջ 541:

⁸²³ Նույն տեղում, 1 փետրուար 1912, թիվ 4, էջ 545:

⁸²⁴ Մանր լուրեր, Գրական երեկոյ Ատաբազարի մէջ, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 30 յունուար-12 փետրուար, 1913, թիվ 527:

Քաղաքում գործում էր ՀՅԴ «Արամազդ» մարմնամարզական ակումբը, որը 1912 թ. հունվարին դաշտային մրցումներ կազմակերպեց⁸²⁵: 1913 թ. մայիսին մարմնամարզական ակումբը կրկին մրցույթ կազմակերպեց, որի ժամանակ մարզիկները հանդես եկան բարձր ցուցանիշներով⁸²⁶: Ակումբում պարբերաբար կազմակերպվում էին մարմնակրթության կարևորությանը նվիրված դասախոսություններ⁸²⁷:

Աղաբազարի ՄԴՀԿ և ՀՅԴ կառույցները երբեմն համատեղ միջոցառումներ էին կազմակերպում քաղաքում: 1912 թ. հունիսին նրանց կազմակերպած հանդեսը նվիրված էր Ազգային սահմանադրության 52-րդ տարելիցին, որի ժամանակ հնչեցին բանախոսություններ և ելույթ ունեցավ քաղաքի երգչախումբը⁸²⁸:

Աղաբազարի կազմակերպություններն իրենց ուժերի ներածին չափով մշտապես նյութական օժանդակություն են ցուցաբերել ինչպես թուրքական իշխանությունների բռնությունների հետևանքով ծանր կացության մեջ հայտնված հայրենակիցներին, այնպես էլ սոցիալապես անապահով խավի ներկայացուցիչներին: 1909 թ. Կ.Պոլսի Կիլիկիո որբախնամ կենտրոնական հանձնախմբի անդամների նախաձեռնությամբ՝ Ադանայի որբերին աջակցելու նպատակով Աղաբազարում հիմնվեց է «Որբախնամ տիկնանց միությունը», որն ուներ 90 անդամներ և ամսական 3 ոսկեդրամ էր ուղարկում Կ.Պոլսի Կիլիկիո որբախնամ կենտրոնական հանձնաժողովին⁸²⁹: Աղաբազարի որբախնամ այս մարմինը Արմաշի

⁸²⁵ Աղաբազարի ՀՅԴ Մարմնամարզական ակումբին մրցումները, «Մարմնամարզ», Կ.Պոլիս, 1912, 1 յունուար, թիւ 14-15, էջ 14-15:

⁸²⁶ Աղաբազարի ՀՅԴ «Արամազդ» մարմնամարզական ակումբին մրցումները, «Մարմնամարզ», Կ.Պոլիս, 1913, յուլիս, թիւ 7, էջ 139:

⁸²⁷ Տեղական, Մարմնամարզական ակումբ, «Բիւթանիա», Ատա-Բազար, 10 դեկտեմբեր 1911, Բ տարի, թիւ 29-30, էջ 527:

⁸²⁸ Հայկ, Թղթակցութիւններ, Աղաբազար, «Կոհակ», Կ.Պոլիս, 6-19 յունիս, 1912, թիւ 22, 240:

⁸²⁹ Մարկոսեան Մ., Նուիրական պարտք, «Բիւթանիա», Իզմիտ, 10 փետրուար 1910, Ա տարի, թիւ 5, էջ 57:

դպրեվանքի խնամակալության հետ համատեղ որոշում կայացրեց դպրեվանքում խնամել և դաստիարակել Ադանայի 10 որբերի⁸³⁰:

1911 թ. աշնանը կազմավորված «Նպաստահավաք ընկերության» անդամների թիվը կարճ ժամանակահատվածում հասավ 200-ի: Ընկերությունը նպատակ էր հետապնդում Զեյթունի և Արևմտյան Հայաստանի սովյալների համար հանգանակություն կազմակերպել և օգնել կարոտյալ եղբայրակիցներին: Ընկերության անդամների շաբաթավճարների և Սուրբծննդյան միջոցառումներից ստացված շահույթը 1909 թ. հունվարին և մարտին ուղարկվեց Կ.Պոլսի Հայոց պատրիարքություն՝ հայկական նահանգների սովյալներին⁸³¹:

Ադաբազարցի մի խումբ կանայք 1911 թ. որոշում կայացրին կազմել ընկերակցություն, որը քաղաքում հիվանդանոց հիմնելու համար պետք է կազմակերպեր հանգանակություն⁸³²: 1913 թ. Ադաբազարում գործող «Տիկնանց աղքատախնամ ընկերությունը» կամ «Աղքատախնամ ընկերությունը» ջանում էին օգտակար լինել քաղաքի կարոտյալ խավին⁸³³: Ընկերության միջոցներով կառուցվեց գերեզմանատան մատուռը, որը գործել է մինչև 1915 թ.⁸³⁴: Ընդհանուր առմամբ, Ադաբազարում աղքատների մասին հոգածության գործը հանձնված էր եկեղեցիներին կից ստեղծված «Աղքատանոցներին», որոնք կարոտյալներին շաբաթական որոշ գումար էին հատկացնում: «Աղքատանոցների» հասույթի աղբյուրը պնակներն էին, որոնք դրվում էին եկեղեցում, ուր հավաքվում էին

⁸³⁰ Հայկական կեսնք, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 8-21 սեպտեմբերի, 1909, թիվ 76:

⁸³¹ Թղթակցութիւնք «Ձայն հայրենեաց»ի, «Ձայն հայրենեաց», Կ.Պոլիս, 6-18 յունուար, 1909, թիվ 20, էջ 206:

⁸³² Հյուանդանոց Ատաբազարի մէջ, «Բիւթանիա», Ատա-Բազար, 1 յուլիս 1911, Բ տարի, թիվ 17, էջ 463:

⁸³³ Սիրաք-Սամուէլ, Գաւառային Բարքեր, «Բիւզանդիոն», Կ.Պոլիս, 20 մայիս-2 յունիս 1913, թիվ 5048:

⁸³⁴ Պատմագիրք Ատափազար «Աստուածաբարբեալ» քաղաքին, խմբագիրներ Արտաշէս Պիպերեան և Վարդան Եղիշեան, Փարիզ, 1960, էջ 249-259:

գումարները: Տաղավար տոներին, մկրտություններին, հարսանիքներին հոգեհանգիստյան արարողությունների ժամանակ քաղաքի երեսիներից կազմված հատուկ հանձնախումբը եկեղեցիների մուտքերի մոտ այդ նպատակով հանգանակություն էր կազմակերպում: Հավաքված գումարները լիապես բավարարում էին աղքատների կարիքները հոգալու համար, իսկ ավելացած գումարները օգտագործվում էին վարժարանների կարիքների համար⁸³⁵: 1913 թ.-ից Ադաբազարում գործող «Հայ կիներու հոգեսիրաց ընկերությունը» նույնպես ջանում էին օգտակար լինել տեղի եկեղեցիներին և կարոտյալ խավին⁸³⁶:

Արևմտահայությունը հայ ժողովրդի մյուս հատվածին՝ արևելահայերին ցարական բռնաճնշումներից տուժածներին նյութապես աջակցելու նպատակով, 1911 թ. համազգային հանգանակություն էր սկսել: «Կենտրոնական հանգանակիչ հանձնախումբը» գումարներ էր ստանում աշխարհի տարբեր հայաշատ վայրերից: Հանգանակությանը մասնակցում էր նաև Իզմիրի գավառի հայությունը: Ադաբազարի ՀՅԴ կառույցի նախաձեռնությամբ 1911 թ. փետրվարին կազմակերպվեց հանգանակություն ի նպաստ ցարական իշխանությունների կողմից ձերբակալված հայ մտավորականների ընտանիքներին: Հանգանակված 1.460 դուրուշը ուղարկվեց Կ.Պոլսի «Կենտրոնական հանգանակիչ հանձնաժողովին»⁸³⁷: Գյուղատնտեսական վարժարան հիմնելու համազգային հանգանակությանը մասնակցեցին նաև ադաբազարցիները, որի արդյունքում հանգանակված 301 դուրուշը և 10 փարան ուղարկվեց «Զավարյան

⁸³⁵ Պատմագիրք Ատափազար «Աստուածաարարեալ» քաղաքին, խմբագիրներ Արտաշէս Պիպերեան և Վարդան Եղիշեան, Փարիզ, 1960, էջ 255-256:

⁸³⁶ Սիրաք-Սամուէլ, Գաւառային բարքեր, «Բիւզանդիոն», Կ.Պոլիս, 20 մայիս-2 յունիս 1913, թիւ 5048:

⁸³⁷ Հայ ժողովուրդը ցարական սարսափներու դէմ, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 17 փետրուար-2 մարտ 1911, թիւ 517:

ֆոնդին»⁸³⁸: Կ.Պոլսի Ս.Փրկիչ հիվանդանոցը որպես մարդասիրական հաստատություն՝ մշտապես գտնվում էր հայության հոգածության ներքո: Ադաբազարցի Ակինյանը 11.059 դուրուշ ուղարկեց հիվանդանոցին⁸³⁹:

Առաջին համաշխարհային պատերազմը ստեղծել էր ծանր վիճակ, որի բերած հետևանքները չեզոքացնելու և կարոտյալ ընտանիքներին օգնելու նպատակով, Ադաբազարում տարբեր արհեստավորներ միանալով, ստեղծեցին միություններ և նյութական աջակցություն ցույց տալով չքավորներին՝ իրենց բարեսիրական ձեռնարկներով փորձեցին մեղմել հարաճուն աղքատությունը⁸⁴⁰: Ադաբազարցի Կարապետ Սրապյանն իր ձեթի գործարանն իր շենքերով և պարտեզով, որոնց արժեքը կազմում էր 150 օսմանյան ոսկեդրամ՝ 1912 թ. նվիրեց քաղաքի չորս թաղերի բարեսիրական հաստատություններին⁸⁴¹:

Երիտթուրքական իշխանությունները, որոնք ծրագրել էին ինչպես բնաջնջել կայսրության բոլոր ոչ թուրք ժողովուրդներին, այնպես էլ թուրքացնել երկրի տնտեսությունը՝ չարակամությամբ էին վերաբերվում Ադաբազարից մինչև Բուրսա ընկած տարածքներում հայերի լավ մշակված այգիներին և ագարակներին⁸⁴²: Ադաբազարի հայերի տնտեսական, կրթական և մշակութային վերելքը մշտապես ուղեկցվում էր տեղի թուրքական իշխանությունների հայափառ քաղաքականության տարբեր դրսևորումներով: 1910 թ. Ադաբազարի շրջակայքը գտնվում էր անապահով վիճակում: Հայերը հաճախ հարձակման էին ենթարկվում,

⁸³⁸ Ֆոնտ Զաւարեան գյուղատնտեսական վարժարանի մը համար, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 22 հոկտեմբեր-4 նոյեմբեր, 1913, թիւ 1344:

⁸³⁹ Քրոնիկ, «Մանգումէի էֆէնար», Կ.Պոլիս, 10 յունուար 1906-23 փետրուար 1907, թիւ 1732:

⁸⁴⁰ Ադաբազարի նպաստի և կրթական գործերը, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 12-25 դեկտեմբեր 1914, թիւ 2017:

⁸⁴¹ Տեղական, «Բիւթանիա», Ատաբազար, 3 յունուար 1912, թիւ 1, էջ 541:

⁸⁴² Շթիւրմեր Հ., Պատերազմի երկու տարիները Պոլսի մէջ, «Ժողովուրդի ձայնը», Կ.Պոլիս, 14-27 յունուարի 1919:

կողոպտվում և զրկվում իրենց կյանքից⁸⁴³: 1911 թ. օգոստոսին, երբ Ադաբազարից հայ երիտասարդներ 200 օխա ծխախոտ էին տեղափոխում Արիֆե՝ 6 ոստիկան զիրվորներ հարձակվեցին, վիրավորեցին և կողոպտեցին նրանց⁸⁴⁴: Ադաբազարցի մի երիտասարդ, որն առևտրի համար մոտակա թուրքական գյուղ էր գնացել՝ վիրավորվեց և կողոպտվեց թուրքերի կողմից⁸⁴⁵: 1913 թ. մարտին հարձակում տեղի ունեցավ ադաբազարցի Ստեփան Ստեփանյանի տան վրա, սակայն երջանիկ պատահականությունը ռճրագործին չհաջողվեց սպանել ընտանիքի ոչ մի անդամի⁸⁴⁶: 1913 թ. նոյեմբերին Ադաբազարի իշխանությունները փակեցին ՀՅԴ ակումբը⁸⁴⁷: Ադաբազարցի հայ երիտասարդ սպանվեց թուրքի կողմից, որը կարճ ժամանակահատված մնալով բանտում, ազատ արձակվեց: Մայրաքաղաք առաքված հայերի դիմումները մնացին անպատասխան, իսկ հանցագործը՝ անպատիժ⁸⁴⁸:

Հայերի նկատմամբ թուրք իշխանությունների հայաստյաց քաղաքականությունը ցայտուն կերպով դրսևորվեց 1913 թ. հոկտեմբերի 13-ին, երբ քաղաքում մեծ հանդիսավորությամբ տեղի էին ունենում հայոց գրերի գյուտի 1500-ամյա և տպագրության 400-ամյա հոբելյաններին նվիրված հանդեսները: Հանդեսի ավարտին քաղաքի Ս. Կարապետ եկեղեցու բակից փողային նվագախմբի երաժշտության ներքո, ներկաների հսկա թափորը ուղևորվեց դեպի ազգային մյուս հաստատություններ, սակայն ժողովրդի ոգևորու-

⁸⁴³ Անապահով ճամբաներ և ոճիր մը, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 6-19 սեպտեմբեր 1910, թիւ 361:

⁸⁴⁴ Ռեժիին զոհերը: Նոր սպանություններ, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 1911, 1-14 սեպտեմբեր, թիւ 681:

⁸⁴⁵ Անապահով ճամբաներ և ոճիր մը, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 15-28 օգոստոս 1910, թիւ 361:

⁸⁴⁶ Հայկական կեանքէն, Ռճրափորձ մը, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 10-23 մարտ 1913, թիւ 1158:

⁸⁴⁷ Լրատու բաժին, «Կոհակ», Կ.Պոլիս, 3-20 նոյեմբեր 1913, թիւ 51, էջ 639:

⁸⁴⁸ Ռճրագործը կը զբոսնի, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 18-31 յունուար 1914, թիւ 491:

թյունը և խանդավառությունը բախվեց զինված ոստիկանական արգելքին: Թափորը սկսեց ցրվել: Հետագայում թուրքական «Թանին» թերթը գրեց, որ ցուցարարների և ոստիկանների միջև տեղի ունեցած բախումից մեկ զինվոր է զոհվել և երեքը՝ վիրավորվել են⁸⁴⁹: Արգելվեց հայերի ելքը քաղաքից⁸⁵⁰: 200 հոգանոց զորք մտավ Ադաբազար, պաշարվեցին հայկական թաղերը, ձերբակալվեցին ցույցի 50 մասնակիցներ, սկսվեցին հայերի տների խուզարկությունները և զենքերի բռնագրավումը⁸⁵¹: Ադաբազարցիները խիստ մտահոգված էին, որ զենքերի հավաքելուց հետո, իրենք շրջակա գյուղերի թուրքերի թիրախը կդառնան: Դեպքից անմիջապես հետո, Ալմալը գյուղի հայ ծերունուն գտան հոշոտված⁸⁵²: Պաշտոնական լրատվությունը անտեսում էր այն իրողությունը, որ տեղի է ունեցել պայթյուն, զինվորները սվիններն ուղղելով դեպի ժողովուրդը՝ հարձակում են իրականացրել, որից հետո է սկսել խուճապը և խառնաշփոթը⁸⁵³: Անգամ թուրք լրագրողն էր գտնում, որ տեղի էր ունեցել սադրանք, և հայերը չէին կարող ապօրինի գործողությունների դիմել⁸⁵⁴:

Ադաբազարի դեպքից հետո, քաղաքի հայկական թաղերը երկար ժամանակ մնացին պաշարված, շարունակվեցին խուզար-

⁸⁴⁹ Մեծ յոբելեանի հանդեսները: Նամակ Ատաբազարէն: Կրկնակ յոբելեանները Ատաբազարի մէջ, «Ժամանակ», Կ.Պոլիս, 15-28 հոկտեմբեր 1913, թիւ 1605:

⁸⁵⁰ Հայկական լուրեր: Ատաբազարի դէպքը, «Ժամանակ», Կ.Պոլիս, 17-30 հոկտեմբեր 1913, թիւ 1607:

⁸⁵¹ Հայկական լուրեր: Ատաբազարի դէպքին շուրջ, «Ժամանակ», Կ.Պոլիս, 16-29 հոկտեմբեր 1913, թիւ 1606:

⁸⁵² Հայկական լուրեր: Ատաբազարի դէպքէն ետք: Հայ ծերունի մը հոշոտուած, «Ժամանակ», Կ.Պոլիս, 18-31 հոկտեմբեր 1913, թիւ 1608:

⁸⁵³ Յաւալի դէպք Ատաբազարի մէջ, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 15-28 հոկտեմբեր 1913, թիւ 1338:

⁸⁵⁴ Ճէպէլի Ա., Ատաբազարի դէպքին շուրջ, «Ժամանակ», Կ.Պոլիս, 18-31 հոկտեմբեր 1913, թիւ 1608:

կությունները և զենքերի բռնագրավումները⁸⁵⁵: Թուրքական թերթերը մեղադրում էին հայերին թուրք զինվորի սպանության մեջ⁸⁵⁶: 15 հոգի ձերբակալված ադաբազարցիները կանգնեցին Ռազմական աստյանի առջև⁸⁵⁷: Նրանցից մեկը դատապարտվեց 15, իսկ մյուսները՝ տարբեր տարիների ազատազրկման⁸⁵⁸:

1915 թ. օգոստոսի 11-ին սկսվեց Ադաբազարի և շրջակա հայկական գյուղերի տեղահանությունը⁸⁵⁹: Միայն մի քանի հարուստ ընտանիքներ իրենց տված մեծ կաշառքի շնորհիվ մնացին քաղաքում, սակայն շատ չանցած, նրանք նույնպես տեղահանվեցին⁸⁶⁰: Տեղի իշխանությունները հայերին արգելեցին ամենաչնչին գումարով անգամ վաճառել իրենց կահկարասիները և սպառնալիքի տակ պարտադրեցին ստորագրել մի փաստաթուղթ, որտեղ գրված էր, որ նրանք իրենց կամքով են վաճառել դրանք⁸⁶¹: Տեղահանության օրերին տեղացի թուրքերը 100 ոսկեդրամ արժեք ունեցող իրը հայերից 100 փարայով էին գնում, իսկ շատ հաճախ սպառնալիքի տակ պարզապես յուրացնում էին: Հայերը դեռ կայարանում էին, երբ թուրքերն հարձակվեցին հայկական թաղերի և տների վրա և կողոպտեցին տների կարասիները, դռները, պատուհանները, ապակիները և այն: Հայերի տեղահանությունից հետո, իշխանությունները հայերի տներում Բալկաններից եկած մահմեդական գաղթականներին տեղավորեցին: Չբավարարվելով իրենց նվեր

⁸⁵⁵ Հայկական լուրեր: Ատաբազարի դեպքն ետք, «Ժամանակ», Կ.Պոլիս, 19 հոկտեմբեր-1 նոյեմբեր 1913, թիւ 1609:

⁸⁵⁶ Ատաբազարի դեպքին շուրջ, «Ժամանակ», Կ.Պոլիս, 20 հոկտեմբեր-2 նոյեմբեր 1913, թիւ 1610:

⁸⁵⁷ Հայկական լուրեր: Ատաբազարի դեպքն ետք: «Ժամանակ», Կ.Պոլիս, 22 հոկտեմբեր-4 նոյեմբեր 1913, թիւ 1612: Տե՛ս նաև Հայկական լուրեր, «Ժամանակ», Կ.Պոլիս, 22 հոկտեմբեր-4 նոյեմբեր 1913, թիւ 1613:

⁸⁵⁸ Վերջին լուրեր, Ատաբազարցիներու դատավարութիւնը, «Ժամանակ», Կ.Պոլիս, 24 հոկտեմբեր-5 նոյեմբեր 1913, թիւ 1614:

⁸⁵⁹ Լևոն Վարդան, նշվ. աշխ., 1975, էջ 52:

⁸⁶⁰ Օոցիկեան Ս. Մ., նշվ. աշխ., էջ 84:

⁸⁶¹ Կեանքը Ատաբազարի մէջ, «Ժամանակ», Կ.Պոլիս, 20 յունուար-2 փետրուար, 1919, թիւ 3433:

տրված հարմարավետ տներով, նրանք սկսեցին քանդել մնացած տները և դրանց ատաղձը որպես վառելիք օգտագործեցին: Իշխանությունները քաջալերում էին նրանց այդ գործողությունները: Երիտթուրքական կուսակցության ղեկավարները 1500 հայերին պատկանող 150-200 ոսկեդրամ արժեք ունեցող տները գնելով 8-10 ոսկով՝ հետագայում մաս-մաս վաճառում էին հսկա գումարներով: Որպես վառելանյութ օգտագործվում էին երկար տարիների տքնաջան աշխատանքի արդյունքում ստեղծված պտղատու այգիներն ու թթաստանները: Ադաբազարի Լքյալ գույքերի հանձնաժողովը ոսկյա ու արծաթյա եկեղեցական առարկաները և եկեղեցիների զանգակները փոխադրեցին Կ.Պոլիս⁸⁶²: Ադաբազարի և Իզմիթի հայերի տները կողոպտելուց հետո, հետքերը ոչնչացնելու նպատակով՝ հրդեհվեցին⁸⁶³:

Ադաբազարի հայերի տեղահանությունից հետո, տեղի թուրք պաշտոնական անձինք առաջին հերթին կողոպտեցին հայերի վաճառատները, դպրոցները, եկեղեցիները և հսկայական հարստության տեր դարձան: Ադաբազարի կառավարիչը թուրք մուհաջիրներից յուրաքանչյուր ընտանիքին երկու հայկական տուն էր տալիս՝ մեկում ապրելու, իսկ մյուսը՝ այրելու համար: Կարճ ժամանակահատվածում քաղաքի հայկական տների քարը քարին չմնաց: Հայերի տների քարերը, հայկական գերանգմանատան շիրմաքարերը որպես շինանյութ օգտագործվեցին գործարան կառուցելու համար⁸⁶⁴:

Ադաբազարի հայերի տեղահանության կազմակերպիչներից էր այս քաղաքի երիտթուրքական կուսակցության պատասխանատու Համիդ Բեյը, ով տեղի գործարար Հակոբ Տայլերյանի շնորհիվ հաստատվել էր առևտրի ասպարեզում: Վերջինս որպես բողոքա-

⁸⁶² Ահա եկեր են, բայց ինչ կը գտնեն..., «Արիամարտ», Կ.Պոլիս, 25 դեկտեմբեր 1918, թիվ 31:

⁸⁶³ Ռեֆիկ Ա., Երկու կոմիտե՝ երկու ոճիր, Երևան, 1997, էջ 40:

⁸⁶⁴ Պերպերեան Ա., Ատաբազարի կողոպտիչները, «Ժամանակ», Կ.Պոլիս, 22 նոյեմբեր-5 դեկտեմբեր 1918, թիվ 3375:

կան գերծ պետք է մնար տեղահանությունից, սակայն Համիդ բեյը նրան նույնպես տեղահանեց և տիրացավ նրա ունեցվածքին: Նա և իր նմանները թույլ չտվեցին ադաբազարցիներին իրենց բերքը հավաքել ու վաճառել, ինչը նույնպես մնաց թուրք բնակչությանը: Տարագրությունից առաջ Համիդ բեյը 10.000-12.000 օխա պղինձը 2-3 դուրուշ աննշան գներով առնելով հայերից՝ բարձր գներով վաճառում էր գերմանացիներին՝ նրանց զինագործարաններն աշխատեցնելու համար⁸⁶⁵:

Դեղագործ Օննիկ Պատուհասյանի տունը և դեղատունը կողոպտվել էր, իսկ դեղերն ու բժշկական սարքերը տեղափոխվել էին զինվորական հիվանդանոց: Հակոբ Կոմիկյանի դեղատունը, որի արժեքը 1.000 ոսկեդրամ էր՝ հափշտակվել էր դեղագործ Զիայի կողմից: Անդրանիկ Չալաքյանի դեղատանը տիրացել էր տեղի երիտթուրքական կուսակցության ղեկավար Էոմեր Զադե Համիդը: Ատամնաբույժ Գ. Պետրոսյանի բուժարանը յուրացվել էր տեղի զինվորականների կողմից⁸⁶⁶:

Ադաբազարի Ս. Հրեշտակապետ եկեղեցու բոլոր արժեքավոր առարկաների կողոպտվել էին, իսկ մնացյալը ջարդուփշուր արվել: Եկեղեցու կամարից կախված գեղեցիկ կանթեղները և ջահերը կոտրված նետվել էին գետին: Եկեղեցու տախտակամածն անգամ քանդվել էր՝ գանձ փնտրելու նպատակով: Սրբերի բոլոր յուղաներկ նկարները պատռված վիճակում էին: Մոմակալները, անհաշիվ գրքերը՝ Ավետարանները, ծիսական գրքերը պատառոտված նետվել էին այս ու այն կողմ: Այն, ինչը թուրքերի համար արժեք չէր ներկայացրել՝ ցաք ու ցրիվ էր արվել եկեղեցու մեջ և բակում⁸⁶⁷:

⁸⁶⁵ Նոդկալի դեմք մըն ալ, «Ժամանակ», Կ.Պոլիս, 6-19 դեկտեմբեր 1918, թիւ 3389:

⁸⁶⁶ Արթաքի ճեպելի, Զոհուած Ատաբազարը «Ժամանակ», Կ.Պոլիս, 4-17 ապրիլ 1918, թիւ 3498:

⁸⁶⁷ Գապաքեան Յ., Ատափազար աստուածարեալ ապա նահատակեալ, Փարիզ, 1966, էջ 81:

Աֆիոն Կարահիսարի և Ադաբազարի կայարաններում պաշտոնավարած թուրք մի պաշտոնյա հայտնել էր, որ Ադաբազարի եկեղեցու 5-6 հատ զանգերը հանձնվեցին կայարանի աշխատակիցներին և դրանք Կ.Պոլիս փոխադրվեցին: Դրանց հետ նաև երկու սնդուկ հայկական եկեղեցիներից բերված աշտանակներ, բուրվառներ, խնկամաններ: Լքյալ գույքերի հանձնաժողովը Ադաբազարից գնացքներով Կ.Պոլիս ուղարկեց հայկական վաճառատներից հանված 3 վագոն արկղեր: Հանձնաժողովի անդամները չէին համարձակվել այդ արկղերը բանալ, քանզի դրանք լեցուն էին եղել ոսկով: Հայերը վստահ էին, որ մի քանի ամսով են բացակայելու իրենց տներից և, որ ոչ ոք չէր համարձակվի բացել իրենց խանութները⁸⁶⁸:

«Ժամանակ» թերթի 1918 թ. դեկտեմբերյան համարներից մեկում հրապարակված հողվածագրի տվյալների համաձայն, ով ականատես է եղել Ադաբազարի հայկական թաղամասերի աղետալի վիճակին, միայն եկեղեցիների, վարժարանների և գերեզմանատան հասցված նվազագույն վնասը կազմում էր 70.000-80.000 հնչյուն ոսկի, իսկ տեղի հայության կորուստների ծավալներն անչափելի էին⁸⁶⁹:

Ադաբազարի գավառակի հայաբնակ բնակավայրերից **Ալմալը (Էլմալը, Ալմալու)** գյուղը հիմնվել է 1660 թ. Պարսկահայաստանից և Վանից գաղթած հայերի կողմից⁸⁷⁰: Գտնվում էր Խասկալից դեպի արևելք և հաստատված էր երեք բլուրների վրա: Հայաբնակ այս գյուղը XX դարի սկզբին ուներ ավելի քան 200 բնակիչ: Այստեղ գործում էր Ս. Լուսավորիչ եկեղեցին: Գյուղացիները հիմնականում հողագործ էին և շերամապահ⁸⁷¹: Տեղահանությունից առաջ գյուղն

⁸⁶⁸ Անատոլուի ընկերությունը և Հայոց գույքերը, «Վերջին լուր», Կ.Պոլիս, 12 մարտ 1919, թիվ 1518:

⁸⁶⁹ Ճերբահեան Լ., Կեանքը Ատաբազարի մեջ, «Ժամանակ», Կ.Պոլիս, 8-21 դեկտեմբեր 1918, թիվ 3390:

⁸⁷⁰ Գասապեան Մ. (Ֆարհատ), նշվ. աշխ., էջ 41:

⁸⁷¹ Էփրիկեան Ս., Բնաշխարհիկ բառարան, Բ հատոր, նշվ. աշխ., էջ 55:

ուներ 80 ընտանիքից կազմված 471 հայ բնակչություն⁸⁷²: Ըստ Կ.Պոլսի Ոստումնական խորհրդի 1901 թ. հրատարակած վիճակագրւյցի՝ գյուղում գործող Ս. Լուսավորչյան վարժարանում սովորող 40 աշակերտին դասավանդում էր 1 ուսուցիչ: Ամսական 80 դուրուշ կազմող ուսումնական ծախսը հոգում էր տեղի Թաղական խորհուրդը⁸⁷³: 1911թ. գյուղում հիմնված «Ոստումնասիրաց ընկերության» անդամների նպատակն էր նպաստել գյուղի բնակչության զարգացմանը, նյութապես աջակցել աղքատ աշակերտներին, հիմնել ընթերցասրահ, կազմակերպել բանախոսություններ, արագացնել դպրոցի շենքի կառուցման աշխատանքները: Անդամները շաբաթական վճարում էին 20 փարա անդամավճար⁸⁷⁴:

Գյուղի ավելի քան 80 ընտանիքներից տարագրությունից հետո Ալմալը վերադարձավ միայն 3-ը⁸⁷⁵: 1920 թվականի հոկտեմբերին թուրք ազգայնականներն ամբողջությամբ այրեցին Ալմալը գյուղը⁸⁷⁶, իսկ ահաբեկված գյուղացիները փախան⁸⁷⁷:

Գավառակի հայաբնակ մյուս **Ֆընտքը** գյուղը գտնվում էր Աղաբազարից դեպի հյուսիս-արևելք⁸⁷⁸: Այն հիմնվել է 1610 թ. Ակնից գաղթած առաքելական և հունադավան հայերի կողմից⁸⁷⁹: 1870 թ. տվյալներով՝ Ֆընտքը գյուղում ապրում էր 244 հունադավան և 20 առաքելական ընտանիքներից կազմված հայ բնակ-

⁸⁷² Ղազարեան Հ. Գ., նշվ. աշխ., էջ 157:

⁸⁷³ Վիճակագրոյց գաւառական ազգային վարժարանանց Թուրքիոյ: Ա տետր, նշվ. աշխ., 3-րդ աղյուսակ:

⁸⁷⁴ Էլմալըցի մը: Կրթական ընկերութիւն մը Էլմալի մէջ, «Բիւթանիա», Ատա-Բազար, 29 հոկտեմբեր 1911, Բ տարի, թիւ 24, էջ 505:

⁸⁷⁵ Թէոդիկ, նշվ. աշխ., էջ 371:

⁸⁷⁶ Երկու հայ գյուղեր հրկիզուած, «Երկիր», Կ.Պոլիս, 7 հոկտեմբեր 1920, թիւ 321:

⁸⁷⁷ Միլլիճիներու վայրագութիւնները, «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ», Կ.Պոլիս, 23 սեպտեմբեր-7 հոկտեմբեր 1920, թիւ 603:

⁸⁷⁸ Ֆարիատ, Հայ հոռոմները կամ յունադավան հայերը, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 30 մարտ-12 ապրիլ 1910, թիւ 246:

⁸⁷⁹ Գասապեան Ս. (Ֆարիատ), նշվ. աշխ., էջ 41-42:

չություն: Հունադավանները խոսում էին հայերեն, սակայն եկեղեցական արարողությունները կատարվում էին հունարեն:

Ֆրնտըքլն հարուստ գյուղ էր համարվում, գյուղացիները ապրում էին բարեկեցիկ կյանքով: Զբաղվում էին շերամաբուծությամբ և հողամշակությամբ⁸⁸⁰: Յուրաքանչյուր ընտանիք ուներ թթենիների պարտեզներ, և նրանց հիմնական եկամուտը շերամաբուծությունից էր ստացվում: Գյուղացիների մի մասը շերամները բուծում էր իր տանը, մյուսը՝ հատուկ այդ նպատակի համար կառուցված շինություններում: Շերամատները գտնվում էին դաշտում, գյուղից մեկ ժամվա հեռավորության վրա⁸⁸¹:

Գյուղն ուներ Ս.Կարապետ եկեղեցի, որին կից գործում էր դպրոց⁸⁸²: Եկեղեցում պահվում էր 1626 թ. Ղարաբաղում ընդօրինակված գեղեցիկ մանրանկարներով հարուստ Ավետարան⁸⁸³: 1901 թ. Կ.Պոլսի Ուսումնական խորհրդի հրատարակած վիճակացույցի համաձայն՝ Ֆրնտըքլի Ս. Մեսրոպյան վարժարանում սովորող 20 աշակերտներին դասավանդում էր 1 ուսուցիչ: 80 դուրուշ ուսումնական ամսական ծախսը վճարվում էր Թաղական խորհրդի գանձանակից⁸⁸⁴:

Տեղահանությունից առաջ Ֆրնտըքլը գյուղը կազմված էր 250 հունադավան և 25 առաքելական ընտանիքներից: Առաջինները զերծ մնացին կոտորածներից⁸⁸⁵:

Քեմալական կոտորածներից Ֆրնտըքլի վերապրած հունադավան հայերի տվյալների համաձայն՝ 1914 թ. այստեղ ապրել է 400

⁸⁸⁰ Նաթանեան Պ., Առաջին տեղեկագրություն վիճակին Նիկոմիդիոյ, Կ.Պոլիս 1871, էջ 5-6:

⁸⁸¹ Բարթիկյան Հ., Հայ-Հռոմները (Քաղկեդոնիկ հայերը) հունական պարբերականում, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2008, N. 2, (237), էջ 243:

⁸⁸² Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 372:

⁸⁸³ Ցուցակ հայերէն ձեռագրաց Նիկոմիդիոյ և շրջակայից, նշվ. աշխ., էջ 74:

⁸⁸⁴ Վիճակացոյց գաւառական ազգային վարժարանանց Թուրքիոյ: Ա տետր, նշվ. աշխ., 3-րդ աղյուսակ:

⁸⁸⁵ Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 372:

ընտանիքից կազմված հայ բնակչություն, որոնց թողած ազգապատկան ունեցվածքի արժեքը կազմում էր 250.000, իսկ անհատական սեփականությունը՝ 1.200.000 թուրքական լիրա⁸⁸⁶:

Ադաբազաի գավառակի հայաբնակ գյուղերից էր **Ֆերիզլին**, որը գտնվում էր Ադաբազարից դեպի հարավ-արևելք: Բնակչությունը հիմնականում զբաղվում էր երկրագործությամբ և շերամաբուծությամբ⁸⁸⁷: Գյուղը հիմնվել էր 1610 թ. Պարսկահայաստանից և Կարինից գաղթած հայերի կողմից: Գյուղացիները ապրում էին բարեկեցիկ կյանքով⁸⁸⁸: 1897 թ. տվյալներով՝ Ֆերիզլի գյուղն ուներ շուրջ 200 ընտանիքներից կազմված 1000 բնակչություն⁸⁸⁹: Գյուղացիներն ունեին ընդարձակ հողատարածքներ⁸⁹⁰: Ֆերիզլիի Ս. Աստվածածին եկեղեցին կառուցվել է 1833 թ.: Գյուղի ազգապատկան սրճարանի, երկու խանութների հասույթը ծախսվում էր գյուղի ընդհանուր կարիքների վրա⁸⁹¹: Գյուղի վարժարանի ընդարձակ շենքը գտնվում էր բարեկարգ վիճակում⁸⁹²: 1901 թ. Կ.Պոլսի Ուսումնական խորհրդի հրատարակած վիճակագրոյցի համաձայն՝ Ռուբինյան վարժարանում ուսանում էր 70 երկսեռ աշակերտություն, այստեղ դասավանդում էին 3 ուսուցիչներ: Ուսումնական ամսական ծախսը կազմում էր 300 դուրուշ, որն իր գանձանակից վճարում էր տեղի Թաղական խորհուրդը⁸⁹³:

⁸⁸⁶ Հրաչ Բարթիկյան, նշվ. աշխ., 259-260:

⁸⁸⁷ Ազգային կեանքը: Գաւառական անկյուններ, «Արևելք», Կ.Պոլիս, 30 ապրիլ 1910, թիւ 730:

⁸⁸⁸ Գասապեան Ս. (Ֆարիատ), նշվ. աշխ., էջ 42:

⁸⁸⁹ Ս., Այցելութիւն մը ի Ֆերիզլի, «Բիւզանդիոն», Կ.Պոլիս, 10-22 սեպտեմբեր 1897, թիւ 264:

⁸⁹⁰ Գաւառական անկիւններ, «Արևելք», Կ.Պոլիս, 30 ապրիլ 1910, թիւ 7301:

⁸⁹¹ Վիճակագրութիւն Ատափագար ի և շրջակայից եկեղեցիների և վարժարանների, Գրականության և արուստի թանգարան (ԳԱԹ), Թորոս Ագաոյանի ֆոնդ N. 37 (VI բաժին):

⁸⁹² Նաթանեան Պ., նշվ. աշխ., էջ 6-7:

⁸⁹³ Վիճակագրոյց գաւառական ազգային վարժարանանց Թուրքիոյ: Ա տետր, նշվ. աշխ., 3-րդ աղյուսակ:

1880 թ. մահմեդական գաղթականների կողմից Ֆերիզլիում բռնագրավվել էր 2.000 արտավար հողատարածք⁸⁹⁴: Գյուղից կես ժամ հեռավորության վրա գտնվող Լեմոն-Տերեյի գյուղի մահմեդականները 1894 թ. գրավեցին հայերին պատկանող 1000 դյոնում⁸⁹⁵ բերրի հողերը⁸⁹⁶, և իրենց սեփականության իրավունքի համար հայերի պայքարը թուրքական իշխանությունները 30 տարի շարունակ քաջքշուկի էին վերածել: Այս ամենին զուգահեռ, քանի որ հողերի սեփականության վկայականները գտնվում էին հայ գյուղացիների ձեռքում, ապա նրանց ստիպում էին վճարել բռնագրավված և օրինական տերերի կողմից չշահագործվող հողերի հարկերը: Տարբեր աստյաններին, ընդուպ մինչև Ներքին գործերի նախարարությանը և դատարաններին ուղղված հայերի հայցերը, դիմումներն ու բողոքները մնում էին անպատասխան⁸⁹⁷ կամ դատարանների վճիռները ընդունվում էին ի շահ մուհաջիրների⁸⁹⁸:

Թեև հողային գրավումները մեծ ծավալով տեղի էին ունենում Արևմտյան Հայաստանի բոլոր բնակավայրերում, սակայն այդ բռնագրավումներից զերծ չէին նաև Օսմանյան կայսրության հայաբնակ մյուս վայրերը, մասնավորապես մայրաքաղաքին շատ մոտ գտնվող հայաբնակ գյուղերն ու քաղաքները: 1912 թ. փետրվարին Ադաբազարից հատուկ հանձնախումբ գալով Կ. Պոլիս, դիմեց Պատրիարքությանը, տեղեկացնելով, որ Ֆերիզլիի իշխանությունները 1500 ոսկեդրամ արժեք ունեցող ազգապատկան

⁸⁹⁴ Հողային գրավումներ Հայկական գաւառներէն դուրս ևս, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 2-15 հոկտեմբեր 1910, թիւ 402:

⁸⁹⁵ Ըստ թուրքական դյոնումի՝ յուրաքանչյուր դյոնումը 40x40 կանգուն=1600 քառակուսի կանգուն կամ՝ հողաչափի կանգունը 75 սմ հաշվով՝ 1 դյոնումը 900 մ²: Տե՛ս Եղիայեան Բ., Ատանայի Հայոց պատմութիւն, Անթիլիաս 1970, էջ 146):

⁸⁹⁶ Հայկական կեանք, հողային հարց Ֆերիզլիի մէջ, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 6-18 մարտ 1914, թիւ 1455:

⁸⁹⁷ Ատաբազարի Ֆերիզլի գյուղի գրաւած հողերը և դատարանի վճիռը, «Ժամանակ», Կ.Պոլիս, 6-19 փետրուար 1912, թիւ 1025:

⁸⁹⁸ Ֆերիզլիի հողային խնդիրը, «Բիւթանիա», Ատա-Բազար, 18 փետրուար 1912, Գ տարի, թիւ 5, էջ 548-549:

և անհատ անձանց պատկանող մշակված 200 դյոնում հողատարածքները 200 ոսկեդրամ վճարելով ուզում են բռնագրավել: Սա հայերի հողերի յուրացման մի այլ ձև է, որը տեղի էր ունենում կառավարական մակարդակով⁸⁹⁹:

Ադաբազարի տեղահանություն ժամանակ թուրքական «Կարմիր մահիկը» Ֆերիզլի գյուղի 4 փառավոր տները՝ բնակության, իսկ 300 արտավար հողատարածքը բռնագրավվել էր վարուցանքի նպատակով: Ֆերիզլի վերադարձած սակավաթիվ հայությունը իր ծով կարիքները հոգալու համար «Կարմիր մահիկից» այս հողատարածքների շահագործման դիմաց 2000 ոսկեդրամ էր պահանջել, որը չնչին գումար էր ստացած հասույթների համեմատ⁹⁰⁰:

Սապանջա գյուղաքաղաքը հիմնվել է 1710 թ.: Այն գտնվում էր համանուն լճի հարավային մասում: Ուներ թուրք, վրացի, հայ և հույն բնակչություն: Հայ բնակչությունը կազմված էր 65 ընտանիքից: Ս. Աստվածածին եկեղեցու խաչքարի վրա փորագրված էր 1758 թ., որը գյուղաքաղաքի ամենահին արձանագրությունն էր: Այս բնակավայրը Կ.Պոլիս-Իզմիր-Կաստամունու-Պոնտոս ցամաքային մեծ ճանապարհի կայաններից մեկն էր⁹⁰¹: Գտնվում է Իզմիրի երկաթուղու եզրին: Սապանջան նույնանուն լճի ափերին հիմնված գյուղախմբի կենտրոնն էր: Այստեղ ապրում էին 1000 հայեր, որոնք իրենց ապրուստը վաստակում էին գլխավորապես շերամաբուծությամբ, ինչպես նաև արհեստներով՝ մետաղաձուլությամբ, դարբնությամբ և պտղաբուծությամբ⁹⁰²: Սապանջան Իզմիրի գավառի շերամաբուծության կենտրոններից էր⁹⁰³: Գեղեցիկ բնակավայր էր և շրջապատված՝ պտղատու ծառերով,

⁸⁹⁹ Նոր գրառումներ կառավարության կողմէ, «Ժամանակ», Կ.Պոլիս, 2-15 փետրուար 1912, թիւ 1022:

⁹⁰⁰ Ազգային լուրեր, «Վերջին լուր», Կ.Պոլիս, 11 ապրիլի 1919:

⁹⁰¹ Գասապեան Մ. (Ֆարիատ), նշվ. աշխ., էջ 103, 35-36:

⁹⁰² Նիշանջիք Ի., Ադաբազարի հայկական և Հայրում համայնքի եկեղեցիները, <http://akunq.net/am/?p=43100>

⁹⁰³ Խանճեան Հ. Ս., էջ 42-44:

ուներ նորաշեն դպրոց: Գյուղի կանայք համախմբված էին մի ընկերության մեջ, որի նպատակն էր ավելացրել եկեղեցապատկան կալվածքների ծավալները, արդյունավետ դարձնել դրանց մշակումը և դրանցից ստացված միջոցներն ուղղել աղքատ խավի օգնության գործին⁹⁰⁴: 1901 թ. Կ.Պոլսի Ուսումնական խորհրդի հրատարակած վիճակագրույցի համաձայն՝ Սապանջայի Արամյան երկսեռ վարժարանում սովորող 30 աշակերտներին դասավանդում էր 1 ուսուցիչ, իսկ ուսումնական ամսական 250 դուրուշ ծախսը հոգում էր տեղի Թաղական խորհուրդը⁹⁰⁵:

Բաթումից գաղթած մահմեդական վրացիներն ապրում էին Սապանջա գյուղից 10 րոպե հեռավորության վրա: Նրանք խաշնարած էին և իրենց հոտերը պարբերաբար արածացնում էին Սապանջայի հայերի մշակած հողատարածքներում, այգիներում և պարտեզներում և փչացնում ողջ բերքը: Սապանջայի հայերը ստիպված էին իրենց հողերը էժան գնով վաճառել, ինչպես օրինակ հողատեր Ոսկան աղան 200 ոսկեդրամ արժեք ունեցող իր հողը վաճառեց կես գնով: 1910 թ. հունվարին, երբ նման հերթական դեպքից հետո, տեղի հայերը փորձեցին պաշտպանել իրենց հողատարածքները, նրանց վրա հարձակում տեղի ունեցավ 300 հոգանոց ամբոխի կողմից⁹⁰⁶: Սապանջայի թուրքական իշխանությունները, ինչպես միշտ, ոտնահարելով հայերի իրավունքները, պաշտպանեցին վրացի մահմեդականներին՝ այդպիսով քաջալերելով հայերի նկատմամբ նրանց նոր անօրինությունները⁹⁰⁷:

⁹⁰⁴ Տեսակցութիւն գաւառներու հետ, Սապանձա, «Հայրենիք», Կ.Պոլիս, 1893, 20 ապրիլ, թիւ 452:

⁹⁰⁵ Վիճակացոյց գաւառական ազգային վարժարանանց Թուրքիոյ: Ա տետր, նշվ. աշխ., 3-րդ աղյուսակ:

⁹⁰⁶ Թօլեան Յ. Ս., Լուսաբանութիւն Սապանձայի միջադէպին մասին, «Բիւթանիա», Իզմիտ, 1 փետրուար 1910, Ա տարի, թիւ 4, էջ 45:

⁹⁰⁷ Յ. Ղ. Ս. Սապանձայի միջադէպը: Եղած կարգադրութիւնները բաւակա՞ն են: Թելադրութիւններ, «Բիւթանիա», Իզմիտ, 10 յունուար 1910, Ա տարի, թիւ 2, էջ 1-2:

1902 թ. տվյալներով՝ Սապանջայում ապրում էր 10 հայ բողոքական ընտանիք⁹⁰⁸, որոնք ունեին եկեղեցի⁹⁰⁹ և դպրոց⁹¹⁰: 1915 թ. հունիսի 11-ին 1000 հայեր տեղահանվեցին Սապանջայից⁹¹¹: Տեղահանությունից գերծ մնացին բողոքական մի քանի ընտանիքներ⁹¹²: Սապանջա էր վերադարձել 15 ընտանիք, որոնք ապրում էին անձուկ վիճակում: Նրանց վիճակն էլ ավելի ծանրացավ, երբ այս բնակավայրի շուրջ հայտնվեց հրոսակախումբ, որը սպառնալիքների տակ սապանջացիներից որպես փրկագին պահանջեց 200 օսմանյան ոսկեդրամ, իսկ տեղի իշխանություններն անտարբերությամբ էին արձագանքում այդ դեպքին⁹¹³: Անտեսելով իր նյութական անմխիթար վիճակը, Սապանջայի հայությունը 1919 թ. հունվարին 17,5 ոսկեդրամ հանգանակեց Կ.Պոլսի «Որբախնամ ընկերության» համար⁹¹⁴:

Տուզ Չամ լեռան մոտակայքում գտնվող ամբողջապես հայաբնակ **Սապանջայի Նոր-Գյուղը** հիմնվել է 1874 թ. Գուրտպեղենից և Գընճըլարից այստեղ գաղթածների կողմից: 1911 թ. տվյալներով գյուղը 11 ընտանիքից էր կազմված, որոնց հիմնական զբաղմունքը երկրագործությունն էր: 1880 թ. վրացի և լազ գաղթականները փորձեցին բռնի կերպով տիրանալ գյուղացիների կալվածքներին: Գրավման անհաջող փորձեր եղան նաև 1884-1885 թթ.: Գյուղի Ս. Լուսավորիչ մատուռում պահվում էր 1631 թ. գրչագրված ձեռագիր Տոնացույց⁹¹⁵: Նոր-Գյուղում 6 ընտանիք հայ բողոքականներ էին,

⁹⁰⁸ Յ. Ա., Ատաբազարի Աւետ. եկեղեցին, «Բիւրակն», Կ.Պոլիս, 20 նոյեմբեր 1902, թիւ 48, էջ 363-364:

⁹⁰⁹ Ատանալեան Կ. Պ., նշվ. աշխ., էջ 240:

⁹¹⁰ Տեղեկագիր Նիկոմիդոյ Գաւառական ժողովին՝ Ատաբազարին մէջ, «Բիւրակն», Կ.Պոլիս, 18 յուլիս 1905, թիւ 25, էջ 496:

⁹¹¹ Տրապիզոնի թեմին վիճակաւոր Յովհաննէս Արք. Նազլեանի յուշերը, Պէրոյթ, 1960, էջ 400:

⁹¹² Թէոդիկ, նշվ. աշխ., էջ 370:

⁹¹³ Ազգային լուրեր, «Ժամանակ», Կ.Պոլիս, 5-18 դեկտեմբեր 1918, թիւ 3704:

⁹¹⁴ Նույն տեղում, 22 յունուար 1919, թիւ 95:

⁹¹⁵ Ցուցակ հայերէն ձեռագրաց Նիկոմիդիոյ և շրջակայից, նշվ. աշխ., էջ 69:

ունեին երկսեռ վարժարան, որը ֆինանսավորվում էր Ադաբազարի բողոքական համայնքի աջակցությամբ⁹¹⁶: Նոր-Գյուլը տեղահանությունից առաջ ուներ 15 ընտանիքից կազմված բնակչություն⁹¹⁷:

Թամլըզ (Թամլըխ) հայաբնակ գյուլը հիմնադրվել է 1690 թ., սակայն հայտնի չէ, թե որտեղից էին գաղթել գյուլի հիմնադիրները⁹¹⁸: Փոքրիկ և գեղեցիկ այս գյուլը գտնվում էր Ադաբազարի հյուսիսային մասում և կառուցվել էր բլրակների կիսաշրջանի մեջտեղում՝ բաց թողնելով միայն հյուսիսային կողմը: Բնակչությունն ամբողջապես հայեր էին: XX դարի սկզբին գյուլը կազմված էր 70 ընտանիքներից: Մաքուր օդի և Պապուկին կոչված բուժիչ ջրի պատճառով դարձել էր ադաբազարցիների ամառանոցային վայրը: Գյուլացիները զբաղվում էին շերամաբուծությամբ, ածխագործությամբ և անասնապահությամբ: Գյուլում մշակում էին ցորեն, գարի, վարսակ, եգիպտացորեն, կանեփ և այլն⁹¹⁹: Այստեղ գործում էր քարաշեն գեղեցիկ Ս. Աստվածածին եկեղեցին, ուր շրջակա գյուղերից ուխտի էին գալիս Ս.Աստվածածնի վերափոխման տոնին⁹²⁰: 1901 թ. Կ.Պոլսի Ուսումնական խորհրդի հրատարակած վիճակագրոյցի համաձայն՝ Թամլըքի Ս. Ստեփաննոսյան վարժարանում սովորող 35 աշակերտներն ունեին 1 ուսուցիչ, իսկ ամսական 150 ուսումնական ծախսն իր գանձանակից վճարում էր տեղի Թաղական խոհուրդը⁹²¹: Վարժարանի տարեկան բյուջեն

⁹¹⁶ Գասապեան Մ. (Ֆարհատ), նշվ. աշխ., էջ 103, 73-74:

⁹¹⁷ Թեղդիկ, նշվ. աշխ., էջ 370, 576:

⁹¹⁸ Գասապեան Մ. (Ֆարհատ), նշվ. աշխ., էջ 42-43:

⁹¹⁹ Էփրիկեան Ս., Բնաշխարհիկ բառարան, Բ. հատոր, նշվ. աշխ., էջ 14:

⁹²⁰ Պատմագիրք Ատափազար «Աստուածարեալ» քաղաքին, խմբագիրներ Արտաշէս Պիպերեան և Վարդան Եղիշեան, Փարիզ, 1960, էջ 68:

⁹²¹ Վիճակագրոյց գաւառական ազգային վարժարանանց Թուրքիոյ: Ա տետր, նշվ. աշխ., 3-րդ աղյուսակ:

կազմում էր 1.000 դուրուշ⁹²²:1902 թ. տվյալներով՝ Թամլըգում ապրում էր հայ բողոքականների 7 ընտանիք⁹²³:

Թամլըգի Նոր-Գյուլը հիմնվել է 1700 թ. հայ բռնադատների կողմից, որոնք ավանդության համաձայն գաղթել էին Ակնից: 1781 թ. ամենահին արձանագրությունն է, որը գտնվում էր գյուղի փայտաշեն եկեղեցու ավագանի քարի վրա⁹²⁴: Նոր-Գյուլի Ս. Կարապետ եկեղեցին կառուցվել է 1800 թ.: 1871 թ. 21 ընտանիքներից կազմված հայ բնակչությունից տեղի դպրոց էին հաճախում 10 երկսեռ աշակերտներ⁹²⁵: Ըստ Կ.Պոլսի Ուսումնական խորհրդի 1901 թ. հրատարակած վիճակագրույցի՝ Նոր գյուղի Եղիայան վարժարանում սովորող 15 աշակերտներին դասավանդում էր 1 ուսուցիչ: 80 դուրուշ ուսումնական ամսական ծախսը վճարվում էր Թաղական խորհրդի գանձանակից⁹²⁶:

Գյուլագիների հիմնական զբաղմունքը երկրագործությունն էր: Հարևան չերքեզական գյուղի գյուլագիները 200 արտավար հողատարածք էին բռնագրավել Նոր-Գյուլի բնակիչներից, որոնց բազմաթիվ բողոքներն անարդյունք մնացին⁹²⁷: Նոր-Գյուլում գործում էր Տեր-Սահակյան եղբայրների պատկանող մանարանում աշխատող 97 բանվորները ստանում էին 3-6 դուրուշ աշխատավարձ⁹²⁸:

Տարիների ընթացքում Նոր-Գյուլի հայ բնակչությունն ավելացավ՝ հասնելով 38-40 ընտանիքի, սակայն 1911 թ. այնտեղ

⁹²² Պատմագիրք Ատափագար «Աստուածարեալ» քաղաքին, նշվ. աշխ., էջ 68:

⁹²³ Յ. Ա., Ատափագարի Աւետ. եկեղեցին, «Բիւրակն», Կ.Պոլիս, 20 նոյեմբեր 1902, թիւ 48, էջ 363-364:

⁹²⁴ Գասապեան Ս. (Ֆարիատ), նշվ. աշխ., 1913, էջ 43:

⁹²⁵ Նաթանեան Պ., նշվ. աշխ., էջ 8:

⁹²⁶ Վիճակագրոյց գաւառական ազգային վարժարանանց Թուրքիոյ: Ա տետր, նշվ. աշխ., 3-րդ աղյուսակ:

⁹²⁷ Վիճակագրութիւն Ատափագար ի և շրջակայից եկեղեցիների և վարժարանների, Գրականության և արուստի թանգարան (ԳԱԹ), Թորոս Ագաոյանի ֆոնդ N. 37 (VI բաժին):

⁹²⁸ Գասապեան Ս. (Ֆարիատ), նշվ. աշխ., էջ 211:

մնաց միայն 5 ընտանիք, մեշամասնությունը ցրվեց տարբեր գյուղերով՝ իրենց տներն ու հողերը թողնելով Յուրյուք Մեհմեդ աղային, որը դարձել էր գյուղի բռնապետը: Նա մեծ տոկոսներով գումարներ էր տրամադրել գյուղացիներին, որոնք տարիների ընթացքում քառապատկվել և բազմապատկվել էին, և գյուղացիները չկարողանալով դրանք վճարել՝ գումարի դիմաց իրենց տները հանձնելով աղային՝ ունեզրկված հեռացել են գյուղից⁹²⁹:

Ադաբազարի գավառակի իրավասության տակ էր գտնվում 1876-1903 թթ. հիմնադրված **Գեղամ գյուղը**, որ հայտնի է եղել Գովուզ Փելիդ անունով: Գյուղն ուներ 60-70 ընտանիքներից կազմված 300-350 հայ բնակչություն, դպրոց և եկեղեցի, բնակավայրում գործում էին թաղական խորհուրդներ, որոնք զբաղված էին գյուղացիների կենսական հարցերով⁹³⁰: Գյուղացիների հիմնական զբաղմունքը երկրագործությունն էր և շերամաբուծությունը⁹³¹: Տեղահանությունից առաջ գյուղն ուներ 113 ընտանիքից կազմված 596 հայ բնակչություն⁹³²:

Ադաբազարի գավառակի կազմում գտնվող **Հովիվ** գյուղը հիմնվել է 1884 թ. Օրդուի շրջակա գյուղերից գաղթածների կողմից⁹³³: 1910 թ. ուներ նորաշեն Ս. Կարապետ եկեղեցի, որը կառուցվել էր գյուղացիների հանգանակությամբ⁹³⁴: Հովիվ գյուղը թուրքերը կոչում էին Չոպան-Յաթաղը: Ուներ 150 ընտանիքից կազմված հայ բնակչություն: Գյուղացիների հիմնական զբաղմունքը երկրագործությունն էր և շերամաբուծությունը⁹³⁵: 1901 թ. Կ.

⁹²⁹ Հոդային գրառումներ, «Բիւթանիա», Իզմիտ, 20 ապրիլ 1911, թիւ 10, էջ 406-407:

⁹³⁰ Թամրզգի մը, Տեղագրական, Գեղամ գյուղ, «Բիւզանդիոն», Կ.Պոլիս, 1906, 15-28 դեկտեմբեր, թիւ 3129:

⁹³¹ Գասապեան Մ. (Ֆարհատ), նշվ. աշխ., էջ 103:

⁹³² Ղազարեան Հ. Գ., նշվ. աշխ., էջ 157:

⁹³³ Պատմագիրք Ատափազար «Աստուածաբեալ» քաղաքին, նշվ. աշխ., էջ 65:

⁹³⁴ Անցորդ, Թղթակցութիւններ, «Բիւթանիա», Իզմիտ, 1 հոկտեմբեր 1910, թիւ 26, էջ 283:

⁹³⁵ Թէոդիկ, նշվ. աշխ., էջ 371:

Պոլսի Ուսումնական խորհրդի հրատարակած վիճակացույցի համաձայն՝ գյուղի Վահանյան վարժարանում սովորող 20 երկսեռ աշակերտությանը դասավանդում էր մեկ ուսուցիչ: 50 դուրուշ ուսումնական ամսական ծախսը վճարվում էր Թաղական խորհրդի գանձանակից⁹³⁶: 1896 թվականին Ռումելիի մահմեդական գաղթականները գյուղացիներից բռնագրավեցին 300 արտավար հողատարածք⁹³⁷:

Հայոց գյուղը հիմնվել է 1874 թ. Օրդուի շրջակա գյուղերից գաղթածների և զընճըլարցիների կողմից: Գյուղացիները զբաղվում էին երկրագործությամբ և շերամաբուծությամբ: Ստանում էին ցորեն, վարսակ, խաղող⁹³⁸: Գյուղն ուներ 190 ընտանիքից կազմված 1070 հայ բնակչություն⁹³⁹:

1873 թ. հիմնված **Արամ** գյուղն⁹⁴⁰ ուներ 64 ընտանիքից կազմված 347 հայ բնակչություն: Գյուղացիների հիմնական զբաղմունքը երկրագործությունն էր և շերամաբուծությունը⁹⁴¹: Այստեղ գործել է Ս. Ստեփանոս եկեղեցին և Արամյան դպրոցը⁹⁴²:

2.4. Կելվե գավառակի հայաբնակ բնակավայրերը և դրանց սոցիալ-տնտեսական վիճակը

Կելվե (Գելվե) գավառակում ապրում էր 15.000 հայ բնակչություն⁹⁴³: Ըստ ֆրանսիական «Annuaire Oriental» տարեցույցի 1914 թ. համարի՝ այս գավառակում գործում էին հայերին պատկանող 10

⁹³⁶ Վիճակացույց գաւառական ազգային վարժարանանց Թուրքիոյ: Ա տետր, նշվ. աշխ., 3-րդ աղյուսակ:

⁹³⁷ Գասապեան Մ. (Ֆարհատ), նշվ. աշխ., էջ 197:

⁹³⁸ Նույն տեղում, էջ 91-93, 103, 183:

⁹³⁹ Ղազարեան Հ. Գ., նշվ. աշխ., էջ 157:

⁹⁴⁰ Գասապեան Մ. (Ֆարհատ), նշվ. աշխ., էջ 103:

⁹⁴¹ Ղազարեան Հ. Գ., նշվ. աշխ., էջ 157:

⁹⁴² Köker O. նշվ. աշխ., s. 103.

⁹⁴³ Հայ ժողովրդի պատմություն, նշվ. աշխ. 1974, էջ 537:

առևտրական տներ⁹⁴⁴: Այստեղ կային 6 հայաբնակ գյուղեր: Գյուղացիները գերազանցապես զբաղվում էին շերամաբուծությամբ և այգեգործությամբ⁹⁴⁵: Ըստ թուրքական աղբյուրի՝ Կեյվեյի գավառակի հանքարդյունաբերության ոլորտում հայերը որոշակի դերակատարություն ունեին: Միջազգյուղի մոտ գտնվող երկաթի հանքերի շահագործման մենաշնորհը պատկանում էր Տրդատ Պալյանին⁹⁴⁶:

Գրնճըլար (Ղրնճըլար) գյուղը գտնվում էր Կեյվեյի կայաբանից մեկ ժամ հեռավորության վրա⁹⁴⁷: Հիմնվել է 1577 թ. Խարբերդից և Ակնից գաղթածների կողմից: Գյուղին էր պատկանում մայրաստանը, որտեղ աճում էր 11.000 ծառ⁹⁴⁸: Զուտ հայաբնակ գյուղ էր, շրջապատված՝ թթենիներով, պարտեզներով, այգեստաններով և պարտեզներով⁹⁴⁹: 1893 թ. տվյալներով Գրնճըլարն ուներ 450 ընտանիքից կազմված հայ բնակչություն⁹⁵⁰: Շերամաբուծությունը Գրնճըլար գյուղի հայերի հիմնական գործն էր, որով նրանք զբաղվում էին ավելի քան 100 տարի: Շերամաբուծությունը խոշոր դեր էր կատարում ինչպես ողջ գավառի, այնպես էլ՝ Գրնճըլարի կյանքում: Շերամաբուծության շրջանում՝ ապրիլ և մայիս ամիսներին գյուղի համարյա բոլոր տները վերածվում էին շերամատների: Ունևոր ընտանիքներն ունեին հատուկ շերամատներ: Շերամաբուծությունը թեև աշխատատար և դժվարին, սակայն շահութաբեր գործ էր: 1912 թ. տվյալներով շերամի 1 կգ արժեք 300-400 դուրուշ: Գրնճըլարում գործում էին մետաքսի երկու մանարաններ: Գրիգոր Տեյրմենճյանին պատկանող 80 անիվ ունեցող մանարանում աշխատում էին 135 կին և 4 տղամարդ: Երկրորդ մանարանը

⁹⁴⁴ Տե՛ս Զիթունի, նշվ. աշխ.:

⁹⁴⁵ Գասապեան Մ. (Ֆարհատ), նշվ. աշխ., էջ 179:

⁹⁴⁶ Ստեփանյան Հ., նշվ. աշխ., էջ 144-145: Տե՛ս նաև Köker O., 1 նշվ. աշխ., s. 104.

⁹⁴⁷ Կարմրավարդ, Թղթակցութիւն Նիկոմեդիայէն, «Բիւրակն», Կ.Պոլիս, 23 փետրուար 1902, թիւ 5, էջ 124:

⁹⁴⁸ Գասապեան Մ. (Ֆարհատ), նշվ. աշխ., էջ 46-48:

⁹⁴⁹ Էփրիկեան Ս., Բնաշխարհիկ բառարան, Ա հատոր, նշվ. աշխ., էջ 524:

⁹⁵⁰ Տեսակցութիւն գաւառներու հետ, «Հայրենիք», Կ.Պոլիս, 21 մարտ, 1893, թիւ 424:

պատկանում էր Օգսեն Շամյանին, որն ուներ 64 անիվ և 84 աշխատողներ⁹⁵¹: Շերամաբուծության և մանարաններն աշխատացնելու համար ջուր էր անհրաժեշտ: Այս բնակավայրից երկու ժամ հեռավորության վրա գտնվող Աջը Էլմա կոչված լեռան կողմից բխող խմելու ջուրը երկաթյա խողովակներով գյուղ հասցնելու համար գյուղացիները հավաքեցին 600 հնչուն ոսկի: Թուրք իշխանավորները քանիցս խոչընդոտեցին այս գործի իրականացմանը, սակայն զրնճըլարցիներին հաջողվեց այն ավարտին հասցնել⁹⁵²: Գրնճըլարում զբաղվում էին նաև այգեգործությամբ և խաղողագործությամբ⁹⁵³: Գյուղում քիչ չէին տարբեր արհեստավորները՝ պայտագործները, հյուսները, աստղծագործները, կղմինդրագործները, որոնք սպասարկում էին նաև շրջակա թուրքական գյուղերը: Գրնճըլարի կանայք զբաղվում էին կտավագործությամբ, որոնց վրա պասմաչի (տպածո բանող) արհեստավորները կաղապարներով և բուսային ներկերով տարբեր ծաղկանկարներ էին տպում⁹⁵⁴: Գյուղից շատերը մեկնում էին Կ.Պոլիս՝ աղյուսի գործարանում աշխատելու: 1885 թ. բնակիչների մի փոքր հատված բնակություն հաստատեց Թաշջուր կոչված բնակավայրում՝ կառավարական անտառները շահագործելու և շրջակայքը շենացնելու նպատակով: Հետագայում այդ վայրը կոչվեց Նոր-Գյուղ Գրնճըլարում⁹⁵⁵:

Գրնճըլարի Ս. Սարգիս եկեղեցին կառուցվել է 1832 թ.: Այն ընդարձակ էր ու կարող էր 2.000-3.000 մարդ ընդգրկել: Ուներ 3 ոսկեգոծ խորան: Այստեղ Քրիստոսի խաչելության, մկրտության, հայոց Տրդատ թագավորի քրիստոնեության դարձը պատկերող յուղաներկ աշխատանքներ էին կախված: Եկեղեցին ուներ երկաթյա հսկա դուռ, որը արքունի փողերանոցի տնօրեն և բարերար

⁹⁵¹ Տեյքմենճեան Ն. (Գրնճըլարցի), Գրնճըլար գյուղի պատմութիւնը ազգագրական, տեղագրական, ընկերային և քաղքական, Պէրուս, 1960, էջ 100-102:

⁹⁵² Նույն տեղում, էջ 106-107:

⁹⁵³ Köker O., նշվ. աշխ., s. 104.

⁹⁵⁴ Տեյքմենճեան Ն. (Գրնճըլարցի), նշվ. աշխ., էջ 109-111:

⁹⁵⁵ Էփրիկեան Ս., Բնաշխարհիկ բառարան, Ա. հատոր, նշվ. աշխ., էջ 524:

Հարություն ամիրա Պեզճյանի նվերն էր ⁹⁵⁶: Եկեղեցում պահվել է 1593 թ. Կարնո Դվնիկ գյուղում ընդօրինակված ձեռագիր Ավետարանը, որը գաղթականներն իրենց հետ բերել էին այս գյուղ: Այստեղ պահվում էր նաև 1626 թ. Այնթապում ընդօրինակված ձեռագիր Ավետարան⁹⁵⁷: Այս ձեռագրերը հարուստ էին մանրանկարերով: Դրանք ունեին թավշյա կտորից պատրաստված կազմեր և զարդարված էին արծաթյա ոսկեգոծ տերունական պատկերներով: Եկեղեցին ուներ նաև արծաթ կազմերով 6 տպագիր Ավետարաններ, որոնց վրա նույնպես տերունական պատկերներ էին: Եկեղեցու խորանում զետեղված էր արծաթյա ոսկեգոծ քառաթև ճաճանչավոր խաչը, որը կշռում էր 6 օխա: Եկեղեցին ուներ նաև միջին և փոքր չափերի 8 խաչեր, 3 օխա կշռող արծաթյա խաչ և ևս մի ճանչավոր խաչ, արծաթյա սկիհ, գեղարվեստական մեծ արժեք ներկայացնող ոսկյա սկիհ: Ծածկոցները շատ էին եկեղեցում, որոնցից մեկն աչքի էր ընկնում իր գեղեցկությամբ և գեղարվեստական բացառիկ արժեքով: Այն ուներ ոսկեթել ասեղնագործությամբ արված տերունական պատկերներ և գնահատվում էր 50 հնչուն ոսկի: Եկեղեցուն էին պատկանում պատկերազարդ տպածո երեք վարագույրները, որոնք պատրաստվել էին 1832 թ. Երուսաղեմում: Ավագ խորանի շուրջ զետեղված էին 12 առաքյալների յուղաներկ պատկերները: Եկեղեցին ուներ մեծ և փոքր 12 ապակյա ջահեր և մեծ քանակությամբ արծաթյա ոսկեգոծ ճաճանչավոր խաչեր⁹⁵⁸: 1906 թ. Գընճըլարի կանանց նախաձեռնությամբ և 15 օսմանյան ոսկեդրամի հանգանակությամբ ամբողջապես նորոգվեց եկեղեցու ներքին հարդարանքը⁹⁵⁹: Նրանք նաև նյութապես աջակցեցին գյուղ ջուր փոխադրելու գործին⁹⁶⁰:

⁹⁵⁶ Տէրմէնճեան Ն. (Գընճըլարցի), նշվ. աշխ., էջ 61-67:

⁹⁵⁷ Ցուցակ հայերէն ձեռագրաց Նիկոմիդիոյ և շրջակայից նշվ. աշխ., էջ 67-68:

⁹⁵⁸ Տէրմէնճեան Ն. (Գընճըլարցի), նշվ. աշխ., էջ 61-67:

⁹⁵⁹ Գաւառներէն, «Սուրհանդակ», Կ.Պոլիս, 1906, 14 մարտի, թիւ 2150:

⁹⁶⁰ Քրոնիկ Հայ եկեղեցոյ, «Սուրհանդակ», Կ.Պոլիս, 14 մարտ 1906, թիւ 2156:

Ըստ 1901 թ. Կ.Պոլսի Ուսումնական խորհրդի հրատարակած վիճակացույցի՝ Գընճըլարի Արշարունյանց-Հռիփսիմյան երկսեռ վարժարանն ուներ 260 աշակերտ և 6 ուսուցիչ: 1040 դուրուշ ամսական ուսումնական ծախսը հոգում էր տեղի Թաղական խորհուրդը⁹⁶¹: 1910 թ. գյուղում կառուցվեց Արշարունյանց-Հռիփսիմյան վարժարանի նոր հրաշալի շենքը, որի շինարարության համար ծախսվեց 1600 ոսկեդրամ: Այս վարժարանը համարվում էր լավագույնը շրջակայքում և այստեղ սովորելու էին գալիս Գուրտպեկենից, Ագհիսարից և շրջակա այլ գյուղերից⁹⁶²: Շենքը եռահարկ էր: Առաջին հարկում գտնվում էր մանկապարտեզը, երկրորդում՝ աղջիկների, իսկ, երրորդում՝ տղաների բաժինները: Դպրոցն ուներ հանդեսների համար նախատեսված ընդարձակ սրահ⁹⁶³: Տեղի Ուսուցչական մարմինը որոշում կայացրեց վարժարանի 1911 թ. շրջանավարտերի միջնակարգ կրթությունն ապահովել պետական վարժարաններում⁹⁶⁴: 1910 թ. վարժարանի բյուջեն կազմում էր 300 օսմանյան ոսկեդրամ⁹⁶⁵: 1909-1910 թթ. Գընճըլարի կրթական հաստատությունների վիճակը հետևյալն էր. 151 աշակերտ, 52 աշակերտուհի, 175 մանկապարտեզ այցելող երկսեռ երեխաներ, 9 ուսուցիչներ, տարեկան ծախսը՝ 27.000 դուրուշ (270 օսմանյան ոսկեդրամ)⁹⁶⁶: 1911 թ. արդեն Գընճըլարի Ազգային վարժարանի բյուջեն կազմում էր 320 ոսկեդրամ, 3-ով ավելացել էր

⁹⁶¹ Վիճակացույց գաւառական ազգային վարժարանանց Թուրքիոյ: Ա տետր, նշվ. աշխ., 3-րդ աղյուսակ:

⁹⁶² Օշին, Թղթակցութիւն, «Բիւթանիա», Ատա-Բազար, 21 օգոստոսի 1911, թիւ 20-21, էջ 492:

⁹⁶³ Տէյրմէնճեան Ն. (Գընճըլարցի), նշվ. աշխ., էջ 140:

⁹⁶⁴ Օշին, Թղթակցութիւն, «Բիւթանիա», Ատա-Բազար, 21 օգոստոսի 1911, թիւ 20-21, էջ 492:

⁹⁶⁵ Գաւառներ, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 1910, 12 օգոստոս, թիւ 347:

⁹⁶⁶ Տէյրմէնճեան Ն. (Գընճըլարցի), նշվ. աշխ., էջ 142-143:

ուսուցիչների թիվը, իսկ մանկապարտեզն ուներ ևս մեկ դաստիարակ⁹⁶⁷:

1908 թ. գյուղում հիմնվեց «Գընճըլարի վարժարանի սանուց միությունը», որի նպատակն էր նպաստել վարժարանի սաների մտավոր ու ֆիզիկական զարգացմանը և օգնել աղքատ աշակերտներին: Անդամության ամսավճարը կազմում էր 2 դուրուշ: Կարճ ժամանակահատվածում միությանը հաջողվեց վարժարանի համար ձեռք բերել 70 գիրք⁹⁶⁸: Նույն թվականի հունվարին գյուղի թատերախումբը ներկայացրեց Պետրոս Դուրյանի «Անիի ավերումը» թատերգությունը, որից հետո տեղի ունեցավ «Թատրոնը մեզանում» թեմայով բանախոսությունը⁹⁶⁹: Գընճըլարում գործում էր ՀՅԴ կառույցը⁹⁷⁰: Տեղի բողոքական հայերը կազմված էին 25-30 ընտանիքներից⁹⁷¹ և ունեին իրենց եկեղեցին⁹⁷²:

Ինչպես Իզմիրի գավառի շատ հայկական բնակավայրերում, այնպես էլ Գընճըլարում տեղի էին ունենում հաղային գրավումներ: 1880 թ. Բաթումից գաղթած լազերը բռնագրավել էին գյուղացիներին պատկանող 1.000 արտավար հող⁹⁷³: Մինչև տեղահանությունը Գընճըլարն ուներ 500 ընտանիքից կազմված հայ բնակչություն: 1915 թ. գյուղի բնակչությունն աքառվեց Տեր-Ջոր և Մուսուլ: 1919 թ. հունվարին 40 ընտանիք էր վերադարձել հայրենի գյուղը⁹⁷⁴: Տարագարությունից վերադարձած գընճըլարցիները իրենց 500

⁹⁶⁷ Շրջանէն լուրեր, «Բիւթանիա», Ատա-Բագար, 20 հոկտեմբեր 1911, Բ տարի, թիւ 22, էջ 499:

⁹⁶⁸ Գասապեան Մ. (Ֆարհատ), նշվ. աշխ., 268:

⁹⁶⁹ Մէնուժօ, Թղթակցութիւններ: Գընճըլարի կեանքէն, «Բիւթանիա», Իզմիտ, 20 յունուար 1910, Ա տարի, թիւ 3, էջ 9:

⁹⁷⁰ Նւիրատութիւններ, «Դրօշակ», Վիեննա, 1912, թիւ 2 (220), էջ 48:

⁹⁷¹ Կարմրավարդ, Թղթակցութիւն Նիկոմեդիայէն, «Բիւրակն», Կ.Պոլիս, 23 փետրտուար 1902, թիւ 5, էջ 124:

⁹⁷² Ատանալեան Կ. Պ., նշվ. աշխ., էջ 240:

⁹⁷³ Հողային գրաւումներ Հայկական գաւառներէն դուրս ևս, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 2-15 հոկտեմբեր 1910, թիւ 402:

⁹⁷⁴ Գող մը կ' բռնէ տանտէրը, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 18 յունուար 1919, թիւ 55:

տներից կանգուն գտան միայն 5-10-ը⁹⁷⁵։ Գընճըլարցիները պահանջում էին իրենց կալվածքները, սակայն թուրքերը չէին վերադարձնում դրանք⁹⁷⁶։ 1919 թ. օգոստոսին գընճըլարցի մի խումբ հայեր Կեյվեի շուկայի ճանապարհին հարձակման ենթարկվեցին և կողպավեցին 20 հոգանոց զինված ավազակախմբի կողմից։ Նրանք 700 ոսկու արժողությամբ ապրանք հափշտակեցին գյուղացիներից⁹⁷⁷։ 1919 թ. մարտին Գընճըլարցի հայ արհեստավոր կողոպտվեց և սպանվեց։ Անապոհություն էր տիրում ոչ միայն այստեղ, այլև Կեյվեում և Պարտիզակում, որտեղ հայերի սպանություններն ու կողոպուտները սովորական երևույթ էր դարձել, իսկ տեղի իշխանությունները ոչինչ չէին անում նրանց անվտանգությունն ապահովելու համար⁹⁷⁸։

Գուրտպեւենը (Գայլաբուր) զուտ հայաբնակ խոշոր և շատ հարուստ գյուղ էր, որը 1912 թ. կազմված էր 783 ընտանիքներից։ Ըստ Գընճըլարում պահվող ձեռագիր Ավետարանի՝ գյուղը հիմնվել է 1577 թ. Կիլիկիայից և Կարինից գաղթածների կողմից։ Գուրտպեւենի համայնքին պատկանող մայրաստանում աճում էր 10.000 ծառ⁹⁷⁹։ Գընճըլարից 3-4 ժամ հեռավորության վրա գտնվող Գուրտպեւենը վերջինից բաժանված էր ձորակով։ Գյուղի բնակիչները զբաղվում էին արհեստագործությամբ և շերամապահությամբ։ 1889 թ. 110 լիրայով որպես ազգապատկան կալվածք՝ Ագիխարում գնվեց բաղնիք, որի շահույթն օգտագործվում էր գյուղի ընդհանուր կարիքների համար⁹⁸⁰։ Տեղի կանայք արտադրում էին հյուսված-

⁹⁷⁵ Կեյվե-Գընճըլանի գաղթականները, «Ժամանակ», Կ.Պոլիս, 19 նոյեմբեր-2 դեկտեմբեր, 1918, թիւ 3372։

⁹⁷⁶ Օրը 40 փարա նպաստ, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 18 յունուար 1919, թիւ 55։

⁹⁷⁷ Աւազակային յարձակում Կեյվե-Գընճըլարի Հայոց վրայ, «Ժամանակ», Կ.Պոլիս, 30 յուլիս-20 օգոստոս, 1919, թիւ 3596։

⁹⁷⁸ Նորէն Հայ մը սպանուած, «Ժամանակ», Կ.Պոլիս, 21 մարտ-3 ապրիլ 1919, թիւ 3486։

⁹⁷⁹ Գասապեան Մ. (Ֆարիատ), նշվ. աշխ., էջ 44-46։

⁹⁸⁰ Էփրիկեան Ս., Բնաշխարհիկ բառարան, Ա. հատոր, նշվ. աշխ., էջ 562-563։

քեղեն, որի 1 օխայի գինը 8-11 դուրուշ էր, իհարկե, բամբակի գնի հետ համեմատ: Նրանք զբաղված էին նաև կտավագործությամբ⁹⁸¹: Գյուղում գործում էին Ա. Կարապետյանին պատկանող 112 և 70 անիվներով 2 մետաքսի մանարաններ: Մանարանների 305 աշխատողներն օրական 1.5 դուրուշ աշխատավարձ էին ստանում⁹⁸²: Գուրտպելենում մանգանի հանքերի շահագործման մենաշնորհը պատկանում էր Հովսեփ աղային⁹⁸³:

Գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին շատ գեղեցիկ էր և ուներ խաչագարդ գմբեթ⁹⁸⁴: Այստեղ պահվել է 1700 թ. ընդօրինակված ձեռագիր Մաշտոց⁹⁸⁵: Ըստ 1901 թ. Կ.Պոլսի Ուսումնական խորհրդի հրատարակած վիճակագրւյցի՝ Գուրտպելենի Ներսիսյան-Հռիփսիմյան վարժարանն ուներ 400 երկսեռ աշակերտներ և 7 ուսուցիչներ: Ուսումնական ամսական 500 դուրուշ ծախսը հոգացել է տեղի Թաղական խորհուրդը⁹⁸⁶: Գուրտպելենում կազմված «Ուսումնասիրաց ընկերությունը» թատերական ներկայացումներ էր տալիս և դրանց հասույթը հատկացնում գյուղի դպրոցի նոր շենքի շինարարությանը⁹⁸⁷: 160 անդամուհիներից կազմված «Կանանց առաջադիմասեր միության» նպատակն էր զարկ տալ կրթական գործին, աշխատել կանանց զարգացման ուղղությամբ, լսարաններում կազմակերպել դասախոսություններ, կառուցել մանկապարտեզ, գյուղի կրթական մակարդակը բարձրացնելու համար Կ.Պոլսից մանկավարժներ հրավիրել⁹⁸⁸: Ընկերությանը

⁹⁸¹ Առևտրի կեսնք գաւառներու մէջ: Գուրտպելենի մանածը, «Բիւրակն», Կ.Պոլիս, 17 մարտ 1907, թիւ 23-24, էջ 560-562:

⁹⁸² Գասապեան Մ. (Ֆարհատ), նշվ. աշխ., 1913, էջ 210:

⁹⁸³ Köker O., նշվ. աշխ., s. 104.

⁹⁸⁴ Նաթանեան Պ., նշվ. աշխ., էջ 12-13:

⁹⁸⁵ Ցուցակ հայերէն ձեռագրաց Նիկոմիդիոյ և շրջակայից, նշվ. աշխ., էջ 68:

⁹⁸⁶ Վիճակացոյց գաւառական ազգային վարժարանանց Թուրքիոյ: Ա տետր, նշվ. աշխ., 3-րդ աղյուսակ:

⁹⁸⁷ Հայկական կեանքէն: Գաւառներ, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 24 օգոստոս-6 սեպտեմբեր 1910, թիւ 368:

⁹⁸⁸ Հայկական կեանքէն, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 2-15 մարտ 1911, թիւ 527:

հաջողվեց գյուղում կառուցել մանկապարտեզ⁹⁸⁹: Գուրտպելենում գործում էր ՀՅԴ կուսակցության մասնաճյուղը⁹⁹⁰:

1910 թ. տվյալներով գյուղն ուներ 40 ընտանիքից բաղկացած բողոքական հայություն, որոնց ժողովարանի շենքի արժեքը կազմում էր 200 օսմանյան ոսկեդրամ⁹⁹¹:

1915 թ. հունիսի 11-ին Գուրտպելենի բնակչությունը⁹⁹² տեղահանության ենթարկվեց հարյուր հոգուց կազմված հրոսակախմբի կողմից: Տեր-Ջոր աքսորված գուրտպելենցիներից միայն 20 ընտանիք վերադարձավ, սակայն քանի որ գյուղը հիմնովին ավերված էր, նրանք հաստատվեցին Ագհիսարում⁹⁹³:

Ագհիսարը, Ագ-Հիսարը (Սպիտակ բերդ) Կելվեի գավառակի գյուղերից էր, որը գտնվում էր Սաքարիա գետի ձախ ափին⁹⁹⁴: Կառուցված էր Կելվեի ընդարձակ դաշտի և Անատոլիա երկաթգծի վրա: Այն ուներ հայ և թուրք բնակչություն: Հայերն այստեղ են գաղթել 1860 թ. Միջագյուղից, Գուրտպելենից և Գընճըլարից: Նրանց գոյությունը այս գյուղաքաղաքին փայլ տվեց, և այն սկսեց բարգավաճել⁹⁹⁵: Ագհիսարը շնորհիվ իր կենտրոնական դիրքի՝ շրջակա հայ և թուրք գյուղերի առևտրի կենտրոնն է և գտնվում էր զարգացման ուղու վրա: Գյուղաքաղաքի տնտեսությունը գտնվում էր հայերի ձեռքում: 1895 թ. սեպտեմբերի 27-ին գյուղի շուկայի այն օրերից մեկն էր, երբ ամեն չորեքշաբթի առևտրի համար շրջակա գյուղերից և քաղաքներից գալիս էին այստեղ: Սակայն, մայրաքաղաք Կ.Պոլսում հայկական կոտորածներից սարսափով

⁹⁸⁹ Նույն տեղում, Մանր լուրեր, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 20 յուլիս-2 օգոստոս 1912, թիվ 952:

⁹⁹⁰ Նւիրատուրթիւներ, «Դրօշակ», Վիեննա, 1912, թիվ 2 (220), էջ 48:

⁹⁹¹ Պայլ Հաուզի Ազգապետարան, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 16-29 նոյեմբեր 1910, թիվ 440:

⁹⁹² Տրապիզոնի թեմին վիճակաւոր Յովհաննէս Արք. Նազլեանի յուշերը, Պէյրուս, 1960, էջ 400:

⁹⁹³ Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 374:

⁹⁹⁴ Էփրիկեան Ս., Բնաշխարհիկ բառարան, Ա հատոր, նշվ. աշխ., էջ 9:

⁹⁹⁵ Գասապեան Ս. (Ֆարիատ), նշվ. աշխ., էջ 70-71:

համակված, շատերը չէին եկել շուկա, եկել էին միայն այդ դեպքերից անտեղյակ տեղացի հայերը: Թուրքերը հարձակվեցին նրանց վրա և սկսվեց կոտորածն ու կողոպուտը: Շուկայի կողոպուտից հետո, նրանք հարձակվեցին հայերի տների վրա: Զոհերի թիվը 31-ն էր, իսկ վիրավորների՝ 33⁹⁹⁶: Այդ բռնություններից հետո բնակավայրը կորցրեց իր նախկին փայլը, իսկ հայերից երկար ժամանակ պահանջվեց իրենց վիճակը շտկելու համար⁹⁹⁷: 20-րդ դարի սկզբին Ազհիսարն ուներ 1438 բնակիչ, որոնցից 900-ը հայեր էին⁹⁹⁸: Աքհիսարը համարվում էր Իզմիրի գավառի շերամաբուծության գլխավոր կենտրոններից մեկը⁹⁹⁹: Ըստ ֆրանսիական "Annuaire Oriental" տարեցույցի 1914 թ. համարի՝ Ազհիսարում գործում էին հայերին պատկանող 3 առևտրական տներ¹⁰⁰⁰:

Գյուղում գործում էր Ս.Երրորդություն եկեղեցին¹⁰⁰¹: Ըստ 1901 թ. Կ.Պոլսի Ուսումնական խորհրդի հրատարակած վիճակագրւյցի՝ Ազհիսարի Ներսիսյան երկսեռ վարժարանի 55 աշակերտներին դասավանդում էին 2 ուսուցիչներ: 366 դուրուշ ուսումնական ամսական ծախսը հավաքվում էր ուսման վարձերից և մատակարարվում՝ Թաղական խորհրդի գանձանակից¹⁰⁰²: Ազհիսարում գործում էր նաև Ազգային մանկապարտեզ:

Ազհիսարի «Բարեսեր կանանց ընկերության» նպատակն էր աջակցել տեղի եկեղեցուն, դպրոցին և աղքատներին: Ուներ 17 անդամուհիներ, ովքեր 10 փարա շաբաթավճար էին մուծում: Ազհիսարի «Օրիորդներու դպրոցասեր միությունը» հիմնվել է 1909

⁹⁹⁶ Ազհիսարի կոտորածը, «Դրօշակ», Վիեննա 1 նոյեմբեր, 1895, թիւ 17-18, էջ 8-9:

⁹⁹⁷ Գասապեան Մ. (Ֆարհատ), նշվ. աշխ., էջ 70-71:

⁹⁹⁸ Էփրիկեան Ս., Բնաշխարհիկ բառարան, Ա հատոր, նշվ. աշխ., էջ 9:

⁹⁹⁹ Խանճեան Հ. Ս., նշվ. աշխ., էջ 42-44:

¹⁰⁰⁰ Չիթունի, նշվ. աշխ.:

¹⁰⁰¹ Դիտող, Թղթակցութիւն, «Բիւթանիա», Ատա-Բազար, 21 յուլիս 1911, թիւ 18-19, էջ 477-478:

¹⁰⁰² Վիճակագրոյց գաւառական ազգային վարժարանանց Թուրքիոյ: Ա տետր, նշվ. աշխ., 3-րդ աղյուսակ:

թ. և ջանում էր աջակցել տեղի մանկապարտեզին, դպրոցին և աղքատներին: Միության 15 անդամների ամսավճարը կազմում էր 1 դուրուշ: «Ուսումնասիրաց ընկերությունը» վերահիմնավորվել է 1908 թ.: Նպատակն էր նպաստել գյուղի կրթական գործին, աղքատ երեխաներին ապահովել գրենական պիտույքներով և ստեղծել գրադարան: 20 անդամների շաբաթավճարը կազմում էր 20 փարա: Կարճ ժամանակահատվածում ընկերությունը ձեռք բերեց 70 հատոր գիրք և նորակառույց դպրոցին ապահովեց գրասեղաններով¹⁰⁰³: Ազգիսարում գործում էր ՀՅԴ կուսակցության մասնաճյուղը, որի նախաձեռնությամբ 1912 թ. փետրվարին տեղի ունեցավ հանգանակություն, որից գոյացած 203 դուրուշն ուղարկվեց Կ.Պոլիս կարիքավոր սասունցիներին¹⁰⁰⁴:

Ինչպես համիդյան շրջանում, այնպես էլ Սահմանադրության հռչակումից հետո, շարունակվում են հայերի կյանքի, ինչքի և պատվի նկատմամբ թուրքերի ոտնձգությունները¹⁰⁰⁵: Գերիշխող մահմեդական տարրը համիդյան շրջանում բռնաճնշումներ էր գործադրում գյուղի փոքրամասնություն համարվող հայերի նկատմամբ: Նույն վիճակը պահպանվում էր Սահմանադրության հռչակումից հետո¹⁰⁰⁶:

1915 թ. Ազգիսարի հայերը նույնպես տեղահանվեցին¹⁰⁰⁷: 1919 թ. գյուղը կազմված էր 65-70 հայ ընտանիքներից, որոնք հիմնականում զբաղվում էին արհեստներով: Տարագրյալների օգնելու համար գյուղում հանգանակվեց 1000 ոսկեղրամ և ուղարկվեց Կ.Պոլսի «Տարագրելոց» և «Որբախնամ» հանձնաժողովներ-

¹⁰⁰³ Գասապեան Մ. (Ֆարհատ), նշվ. աշխ., էջ 263, 266-267:

¹⁰⁰⁴ Օգնե՛նք Սասունին, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 24 փետրուար-8 մարտ 1912, թիւ 830:

¹⁰⁰⁵ Քրոնիկ, «Ձայն հայրենեաց», Կ.Պոլիս, 13-26 յունուար, 1909, թիւ 21, էջ 220:

¹⁰⁰⁶ Թղթակցութիւնք «Ձայն հայրենեաց»ի: Գաւառի նամակներ, «Ձայն հայրենեաց», Կ.Պոլիս, 23 յունուար-5 փետրուար, 1909, թիւ 14, էջ 135-136:

¹⁰⁰⁷ Թէոդիկ, նշվ. աշխ., էջ 373:

րին¹⁰⁰⁸: 1920 թ. հուլիսի 26-ին քեմալականներն իրագործեցին Ազիիսարի հայերի կոտորածը, ինչի հետևանքով բնակավայրի 400 հայերից ողջ մնացել միայն մեկ հոգի¹⁰⁰⁹:

Էջմե (Էջմե) գյուղը հիմնվել է 1866 թ. Միջագյուղից այստեղ հաստատված 14 բնակիչների կողմից: Գյուղը գտնվում էր Կեյվեի դաշտավայրի մեջտեղում, ընդարձակ բլրակների վրա: Գյուղից քիչ հեռու կային 400-500 տներ, որը կառուցվել էին շերամաբուծության համար: Գյուղն ուներ Ս. Աստվածածին փայտաշեն եկեղեցին, այստեղ գործում էր Եղիշյան վարժարանը, որը 1893 թ. ուներ 80-90 աշակերտներ: XX դարի սկզբին վարժարանը կոչվում էր Արամյան-Գայանյան¹⁰¹⁰: Ս. Աստվածածին փայտաշեն եկեղեցում էր պահվում 1578 թ. Տարնո Բալու գյուղում գրչագրված մագաղաթյա Տոնացույց¹⁰¹¹: 1911 թ. տվյալներով գյուղն ուներ 180 ընտանիքից կազմված բնակչություն, որը զբաղվում էր շերամաբուծությամբ և մետաքսագործությամբ: 1910-1911-1912 թթ. Էջմեում գործում էր Ա. Կարապետյանին պատկանող 38 անիվ ունեցող մետաքսի մանաբանը, որտեղ 60 աշխատողներն օրական ստանում էին 2 դուրուշ աշխատավարձ¹⁰¹²:

1901 թ. Կ.Պոլսի Ուսումնական խորհրդի հրատարակած վիճակացույցի համաձայն՝ Էջմեի Արամյան-Գայանյան երկսեռ վարժարան էին հաճախում 121 աշակերտներ, այստեղ դասավանդում էին 5 ուսուցիչներ, իսկ 740 դուրուշ ուսումնական ծախսի մի մասը հավաքվում էր ուսման վարձերից, իսկ մյուսը՝ վճարվում էր տեղի Թաղական խորհրդի գանձանակից¹⁰¹³: Էջմեում 1911 թ.

¹⁰⁰⁸ Գաւառի ձայներ, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 11 յուուար 1919, թիւ 48:

¹⁰⁰⁹ Հայերի վիճակը Թուրքիայում: Հայկական ջարդ Ազիիսարում, Յառաջ, Երևան, 13 օգաստոսի 1920, թիւ 172:

¹⁰¹⁰ Էփրիկեան Ս., Բնաշխարհիկ բառարան, Ա հատոր, նշվ. աշխ., էջ 809:

¹⁰¹¹ Տուցակ հայերէն ձեռագրաց Նիկումիդիոյ և շրջակայից, նշվ. աշխ., էջ 68:

¹⁰¹² Գասապեան Ս. (Ֆարիստ), նշվ. աշխ., էջ 72-73, 210:

¹⁰¹³ Վիճակացոյց գաւառական ազգային վարժարանանց Թուրքիոյ: Ա տետր, նշվ. աշխ., 3-րդ աղյուսակ:

բացվեց ուսուցիչ Սուրեն Շիրինյանի մասնավոր դպրոցը¹⁰¹⁴։ Գյուղի երիտասարդների կողմից 1910 թ. կազմվեց հոգաբարձություն, որը տեղի երկսեռ վարժարանը կարգի բերելու նպատակ ուներ և անմիջապես անցավ գործի՝ աշակերտների և ուսուցիչների մասնակցությամբ կազմակերպելով հանդես, համերգ և բանախոսություն¹⁰¹⁵։ 1911 թ. հունվարին տեղի վարժարանի սաները և մանկապարտեզի երեխաները 700 հանդիսատեսի համար փոքրիկ թատերախաղեր ներկայացրին¹⁰¹⁶։ Գյուղի «Կրթասիրաց միության» նախաձեռնությամբ 1910 թ. դեկտեմբերին 5-ին Ազգային վարժարանի սրահում տեղի ունեցավ բանախոսություն և հանդես, որը նվիրված էր կովկասահայ բանտարկյալներին և նրանց ընտանիքներին։ Նրանց նյութապես աջակցելու նպատակով ստեղծված հանգանակիչ հանձնախումբը գումարներ հանգանակեց¹⁰¹⁷։ Քաջատեղյակ լինելով, որ Էջմեի երկրագործների կալվածքները որպես ավանդ դրված էին Երկրագործական դրամատանը, որի ղեկավարությունը, խախտելով բոլոր օրենքները, առանց սեփականատերերին տեղյակ պահելու՝ 1911 թ. հուլիսին հայերի կալվածքները բռնագրավելու որոշում կայացրեց¹⁰¹⁸։

Տեղահանությունից առաջ Էջմեն ուներ 180 ընտանիքից կազմված հայ բնակչություն, սակայն տարագրությունից վերադարձան միայն 15-20 ընտանիքներ, որոնք իրենց գյուղը ավերակների մեջ գտան։ Թուրք մուհաճիբները գրավել էին նրանց տները և չէին ցանկանում վերադարձնել տերերին։ Էջմեի երիտասարդները գյուղի երեխաների ուսման խնդիրները լուծելու և տեղի ազգային

¹⁰¹⁴ Գաւառներ, (Մեր սեփական թղթակցութիւններէ), «Ազատամարտ», Կ.Պոլիս, 1911, 27 փետրուար-12 մարտ, թիւ 520:

¹⁰¹⁵ Նոյն տեղում, 1-14 հոկտեմբեր 1910, թիւ 401:

¹⁰¹⁶ Տօնիկեան Ա., Թղթակցութիւններ, «Բիւթանիա», Իզմիտ, 20 յունուար, 1911, թիւ 3, էջ 358:

¹⁰¹⁷ Գաւառներ, (Մեր սեփական թղթակցութիւններէ), «Ազատամարտ», Կ.Պոլիս, 15-28 դեկտեմբեր 1910, թիւ 465:

¹⁰¹⁸ Զանազան լուրեր, (Մեր սեփական թղթակցութիւններէ), «Ազատամարտ», Կ.Պոլիս, 1911, 27 փետրուար-12 մարտ, թիւ 520:

վարժարանի բացելու նպատակով 1919 թ. սեպտեմբերին հիմնեցին «Լույս կրթասիրաց միությունը»: Նրանց ուժերով բեմադրված ներկայացման շահույթը հատկացվեց տեղի ազգային վարժարանին¹⁰¹⁹: Այդ նույն ժամանակ գյուղի թուրք կառավարիչը մահմեդականներին զենք էր բաժանում՝ էջմեցիներին կրկին կանգնեցնելով բնաջնջման վտանգի առաջ¹⁰²⁰:

Կելվեի արևելյան մասում էր գտնվում 1610 թ. Ակնի գավառակից գաղթածների կողմից հիմնված¹⁰²¹ հունադավան (ուղղափառ) և առաքելական հայերով բնակեցված **Միջագյուղը (Օրթագյուղը)**, որի բնակչությունը նույնպես զբաղվում էր հողագործությամբ և շերամաբուծությամբ և գտնվում էր նյութական ապահով վիճակում: Գյուղում գործում էր Ս. Աստվածածին եկեղեցին: Դպրոցը բարեկարգ վիճակում էր¹⁰²²: 1911 թ. ուներ 900 ընտանիքից կազմված բնակչություն, որից 200 ընտանիքներն առաքելական էին, իսկ մնացածը՝ հունադավան: Գեղատեսիլ տեսարաններով հարուստ Միջագյուղը Իզմիրի գավառի շերամաբուծության կենտրոններից էր¹⁰²³: Հունադավան հայերին էին պատկանում ընդհանուր 490 անիվ ունեցող մետաքսագործական 9 մանարանները¹⁰²⁴: Միջագյուղը Իզմիրի գավառի և շրջակայքի հունադավան հայերի

¹⁰¹⁹ Ե., Կեանքի նշաններ Կելվե-էջմեի մէջ, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 13 սեպտեմբեր 1919, թիւ 257:

¹⁰²⁰ Կելվեի Հայերը, «Արդարամարտ», Կ.Պոլիս, 2 դեկտեմբեր, 1918, թիւ 2:

¹⁰²¹ Ֆարհատ, Հայ հոռոմները կամ յունադավան Հայերը, (Ուսումնասիրութեան փորձ), Գ. Նիկոմիդիոյ գաւառի Հայ-հոռոմները «Ազատամարտ», Կ.Պոլիս, 7-20 մայիս 1910, թիւ 276:

¹⁰²² Նաթանեան Պ., նշվ. աշխ., էջ 13-14:

¹⁰²³ Գասապեան Մ. (Ֆարհատ), նշվ. աշխ., էջ 44: Տե՛ս նաև Հրանտ Ս. Խանճեան, էջ 42-44:

¹⁰²⁴ Դադայան Խ., նշվ. աշխ., էջ 53-54:

կենտրոնն էր¹⁰²⁵: Համանուն մեկ այլ հայաբնակ գյուղ կար Բուրսայի նահանգի Փազարքոյ գավառակում¹⁰²⁶:

1901 թ. Կ.Պոլսի Ուսումնական խորհրդի հրատարակած վիճակացույցի համաձայն՝ Միջագյուղի Ս. Սահակյան-Հռիփսիմյան վարժարանի 235 երկսեռ աշակերտներին դասավանդում էին 9 ուսուցիչներ: Ուսումնական ամսական ծախսը կազմում էր 1250 դուրուշ, որը հավաքվում էր ուսման վարձերից և տեղի Թաղական խորհրդի գանձանակից վճարված գումարներից¹⁰²⁷: 1908 թ. Միջագյուղում հիմնվեց ՄԴՀԿ կառույցը: Գյուղի բնակիչներից մեկը 50-60 ոսկու արժողությամբ իր տունը, իսկ մեկ այլ գյուղացի իր արտը նվիրեց այս կուսակցությանը¹⁰²⁸:

Խուսափելով Միջագյուղի ցրտաշունչ կլիմայից, առաքելական միջագյուղցիներն աստիճանաբար սկսեցին տեղափոխվել Էջմե՝ գյուղը թողնելով հունադավան հայերին¹⁰²⁹: Միջագյուղի բնակիչները Կ.Պոլսի «Ձայն հայրենյաց» թերթի խմբագրությանը ահագանգում էին, որ տեղի թուրքական իշխանությունները առաջնորդվում են համիդյան ռեժիմի օրենքներով և արհամարում են օսմանյան սահմանադրության 23-րդ հոդվածը, որը վերաբերում էր սեփականության անձեռնմխելիությանը: Տեղի հարկահավաքները ապօրինի հարկերով գյուղացիներին հասցնում են աղքատության շեմին: 1909 թ. դեկտեմբերին հարկահավաքները բռնագրավեցին Տեփոյանների և Տունկյուլյանի տներն ու նրանց ընտանի կենդանիները: Բացի այդ, տեղի իշխանությունները կամայականորեն հրամայե-

¹⁰²⁵ Ֆարհատ, Հայ հոռոմները կամ յունադավան Հայերը, (Ուսումնասիրութեան փորձ), «Ազատամարտ», Կ.Պոլիս, 30 մարտ-12 ապրիլ 1910, թիւ 246:

¹⁰²⁶ Աստոյան Ա., Բուրսայի նահանգի հայության տնտեսական վիճակը և նյութական կորուստները Հայոց ցեղասպանության տարիներին, Եր., 2017, էջ 77:

¹⁰²⁷ Վիճակացոյց գաւառական ազգային վարժարանանց Թուրքիոյ: Ա տետր, նշվ. աշխ., 3-րդ աղյուսակ:

¹⁰²⁸ Գաւառներու կացութիւնը: («Թղթակցութիւն Ձայն հայրենեացի»), «Ձայն հայրենեաց», Կ.Պոլիս, 30 հոկտեմբեր, 1908, թիւ 2, էջ 16:

¹⁰²⁹ Գասապեան Մ. (Ֆարհատ), նշվ. աշխ., էջ 72-73:

ցին փակել գյուղի սրճարանն ու ընթերցասրահը¹⁰³⁰: Միջագյուղի շրջակայքում գտնվող հայերին պատկանող հողերն ու արտերը գրավել էին թուրք գաղթականները, ովքեր վար ու ցանք էին անում և վերցնում էին բերքը, սակայն իշխանությունները տուրքերն ու հարկերը հայ գյուղացիներից էին գանձում¹⁰³¹:

Քեմալական կոտրածները վերապրած հունադավան միջագյուղիների տվյալների համաձայն՝ մինչև տեղահանությունն այստեղ բնակվում էր 1200 հայ ընտանիք, որոնց թողած ազգապատկան ունեցվածքի արժեքը կազմում էր 800.000, իսկ անհատականը՝ 7.200.000 թուրքական լիրա ¹⁰³²: Միջագյուղի հայերը՝ շրջակա հունական գյուղերի բնակիչների հետ 1920 թ. վերջին կուտակվելով և փակվելով Սանքարիա գետի Կարա-սու գետակի մոտ գտնվող քարավանատներում՝ մեկ օրում կոտորվեցին քեմալականների կողմից, ողջ մնացածներն էլ հալածվելով լեռներում՝ կոտորվեցին տանջալից մահով¹⁰³³:

Կեռոքը կամ Կապուտիկը հայաբնակ գյուղ էր, որն ուներ մատուռ¹⁰³⁴: Այս գյուղում Գուրտպեղենից գաղթած հայերը հաստատվել են 1840 թ. և դբաղվում էին շերամաբուծությամբ: Գյուղացիներն ունեին 53 շերամատուն, որոնցից 27-ում ապրում էին, իսկ մնացյալը օգտագործում էին շերամապահության համար: Գյուղացիներն ունեին շենք, որը ծառայում էր թե՛ որպես դպրոց և թե՛ եկեղեցի: 1911 թ. գյուղի տնտեսական պայմանները այնպիսին էին, որ հեռանկարներ էր բացում զարգանալու համար¹⁰³⁵:

¹⁰³⁰ Քրոնիկ, Եալովայի Միջագյուղէն կգրեն մեզի, «Ձայն հայրենեաց», Կ.Պոլիս, 26 դեկտեմբեր-8 յունուար, 1909, թիւ 10, էջ 97:

¹⁰³¹ Գաւառներու կացութիւնը: («Թղթակցութիւն Ձայն հայրենեացի»), «Ձայն հայրենեաց», Կ.Պոլիս, 30 հոկտեմբեր, 1908, թիւ 2, էջ 16:

¹⁰³² Բարթիկյան Հ., նշվ. աշխ., էջ 259-260:

¹⁰³³ Նույն տեղում, էջ 257:

¹⁰³⁴ Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 373:

¹⁰³⁵ Գասապեան Մ. (Ֆարիատ), նշվ. աշխ., էջ 71:

2.5.Յալովայի գավառակի հայաբնակ բնակավայրերը և դրանց սոցիալ-տնտեսական վիճակը

Յալովան Իզմիրի գավառակներից էր, որը գտնվում էր Գարամ-սալի արևմուտքում և Իշխանաց կղզիների հարավում¹⁰³⁶: Յալովա գյուղաքաղաքի արևելյան մասում էր գտնվում Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքին պատկանող ընդարձակ ագարակը, որն ուներ 13.000 արտավար հող: Ագարակում աճում էր 6.000-7.000 ձիթենի, 60-70 արտավար թթաստան¹⁰³⁷: Ռուս-թուրքական պատերազմից հետո 1878 թ. Ռուսաստանից Օսմանյան կայսրություն գաղթած չերքեզները Յալովայի երուսաղեմապատկան ագարակից գրավեցին 4.000 արտավար հողատարածք¹⁰³⁸, ինչից հետո այն մշակող Չենկիլերի և Միջագյուղի գյուղացիները թշվառության մեջ հայտնվեցին¹⁰³⁹: 1913 թ. ապրիլին Յալովայի ագարակի նկատմամբ նոր ոտնձգություն տեղի ունեցավ Յուտան գյուղի մահմեդականների կողմից, ինչից հետո բախումներ եղան հայերի և թուրքերի միջև¹⁰⁴⁰: Իզմիրի կառավարիչը խոստացել էր գաղթականներին հեռացնել ագարակից, սակայն հարցը մնաց չլուծված¹⁰⁴¹: Հայերը հայցով դիմեցին դատարան, սակայն այնտեղ նույնպես գործը շարունակվեց ձգձգվել¹⁰⁴²: Դատական մարմիններն ավելի էին խճճում

¹⁰³⁶ Նույն տեղում, էջ 51-52:

¹⁰³⁷ Գասապեան Մ. (Ֆարհատ), նշվ. աշխ., էջ 77-78:

¹⁰³⁸ Հողային գրառումներ Հայկական գաւառներէն դուրս ևս, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 2-15 հոկտեմբեր 1910, թիւ 402:

¹⁰³⁹ Եալովայի երուսաղեմապատկան ագարակը, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 8-21 օգոստոս 1910, թիւ 355:

¹⁰⁴⁰ Հայ-ազգային լուրեր, գաւառներու կացութիւնը, «Բիւզանդիոն», Կ.Պոլիս, 29 ապրիլ-12-մայիս, 1913, թիւ 5030:

¹⁰⁴¹ Եալովայի ագարակին գրաւման խնդիրը, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 20 յունիս-3 յուլիս, 1914, թիւ 1543:

¹⁰⁴² Հայկական լուրեր, «Ժամանակ», Կ.Պոլիս, 20 մայիս-2 հունիս, 1914, թիւ 1915:

գործը¹⁰⁴³: Հակառակ Կ.Պոլսի Հայոց պատրիարքության բազմաթիվ դիմումների՝ մահմեդական գաղթականները ոչ կերպ չէին ցանկանում այս հողերը վերադարձնել տիրոջը: Գործին ընթացք տալու համար Կ.Պոլսո պատրիարք Զավեն Տեր-Եղայանը մեկնեց Յալովա և վերադաձին որոշում կայացրեց այդ հարցով դիմել Բ. Դոանը¹⁰⁴⁴: Նա հատուկ հայտարարությամբ թերթերին տեղեկացրեց, որ բռնագրավված է ազգապատկան հողերի երկու երրորդը, որի արժեքը կազմում է 15.000 օսմանյան ոսկեդրամ: Պատրիարքն իր հայտարարության մեջ նշում էր, որ ինքն անձամբ է դիմելու Թալեաթ բեյին¹⁰⁴⁵: Վերջինս հավաստիացրել էր, թե ազարակը կվերադարձվի Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքին¹⁰⁴⁶, սակայն այս հարցը միննույն է լուծում չէր ստանում¹⁰⁴⁷: Մահմեդական գաղթականներին ի պաշտպանություն հանդես եկավ թուրքական «Թանին» թերթը՝ կեղծ փաստեր բերելով մահմեդական գաղթականների օգտին: Բոլոր փաստաթղթերը հաստատում էին հայերի իրավունքներն այս ազարակի նկատմամբ¹⁰⁴⁸: Եթե նման անօրինությունը կատարվում էր մայրաքաղաքից ոչ հեռու, ապա կարելի է պատկրացնել, թե ինչ ծավալների էին հասնում հայերի հողային բռնագրավումները կայսրության խորքերում¹⁰⁴⁹:

Համիդյան վարչակարգի պայմաններում հայերի հողերի բռնագրավումները մեծ տարածում գտան: Երկրում հայերը հալածվում

¹⁰⁴³ Եալովայի ազարակին խնդիրը, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 3-16 յուլիս, 1914, թիւ 1551:

¹⁰⁴⁴ Եալովայի ազգային ազարակը մուհաճիրներէ գրաւած: Պատրիարք Եալովայի մէջ, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 10-23 յունուար, 1914, թիւ 1534:

¹⁰⁴⁵ Եալովայի ազարակին շուրջ, «Ժամանակ», Կ.Պոլիս, 11-24 յունիս 1914, թիւ 1837:

¹⁰⁴⁶ Հայկական լուրեր, Եալովայի ազարակը վտանգի տակ, «Ժամանակ», Կ.Պոլիս, 2-15 յուլիս 1914, թիւ 1858

¹⁰⁴⁷ Եալովայի ազարակին շուրջ, «Ժամանակ», Կ.Պոլիս, 23 յունիս-6 յուլիս, 1914, թիւ 1918:

¹⁰⁴⁸ Նույն տեղում, 28 յունիս-11 յուլիս 1914, թիւ 1854:

¹⁰⁴⁹ Եալովայի ազարակին գրաւման շուրջ, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 11-24 յունիս 1914, թիւ 1535:

էին և իրավագրկում: 1908 թ. Օսմանյան սահմանադրության վերահռչակումից հետո, նոր իշխանությունները հայերի ոտնահարված իրավունքները վերականգնելու փոխարեն շարունակեցին և էլ առավել սաստկացրին հայահալած քաղաքականությունը: Կ.Պոլսում հրատարակվող թերթերի էջերում գրեթե ամեն օր հրապարակվում էին հայերի հողային գրավումների մասին փաստեր: Կ.Պոլսո Հայոց պատրիարքության բազմաթիվ դիմումներից հետո, Ներքին գործերի նախարարությունը հայկական նահանգներ առաքեց քննիչների, որոնք հապճեպ և մակերեսային քննություն կատարեցին: Հայերի հողային գրավումների հսկա ծավալները և այս հարցի նկատմամբ քննիչների նման մոտեցումը փաստում էին պետության կողմից քաղաքական որոշակի ծրագրի իրականացման մասին: Հայկական հողերի բռնագրավումները տեղի էին ուենում Իզմիթի գավառի գրեթե բոլոր հայաբնակ վայրերում, սակայն դրանք առանձնակի մեծ թիվ էին կազմում Յալովայի և Գարամուսալի գավառակների հայկական գյուղերում¹⁰⁵⁰:

Յալովա գավառակն ուներ 4 հայաբնակ գյուղեր, որոնք կառուցված էին իրար մոտ: Այդ գյուղերն էին Շակ-Շակը, Գըլըճը, Չուքուրը և Քարցին¹⁰⁵¹: Յալովայի և Գարամուսալի հայ բնակչությունը գլխավորապես զբաղվում էր շերամաբուծությամբ, այգեգործությամբ, ձիթենիների մշակությամբ: Ստանում էին նաև հացահատիկ, ընդեղեն, արմատապտուղներ և այն¹⁰⁵²:

Շակ-Շակը (Շաք-Շաք, Ճաղ-Շաղ, Շաղաշեն) Յալովայի հյուսիս-արևելյան մասում, բլրի փեշերին կառուցված գյուղ էր, որի հյուսիս-արևելյան կողմից երևում էին Իշխանաց կղզիները: 110 ընտանիքից կազմված այս գյուղը հիմնվել էր 1560 թ. Խարբերդից,

¹⁰⁵⁰ Հողային գրաւումներ Հայկական գաւառներէն դուրս ևս, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 2-15 հոկտեմբեր 1910, թիւ 402:

¹⁰⁵¹ Թէոդիկ, Գողգոթա հայ հոգևորականութեան և իր հօտին աղետալի 1915 տարիին, Նյու Եորք, 1985, էջ 365:

¹⁰⁵² Գասապեան Մ. (Ֆարիստ), նշվ. աշխ., էջ 179:

Ակնա Ապուշեդ գյուղից գաղթածների կողմից¹⁰⁵³: Շակ-Շակ գյուղը 1894 թ. տվյալներով ուներ 85-100 ընտանիքից կազմված հայ բնակչություն, որը զբաղված էր երկրագործությամբ և շերամաբուծությամբ¹⁰⁵⁴: Գյուղացիները հիմնականում ապահովված էին, և քիչ էին աղքատ ընտանիքները¹⁰⁵⁵: Տեղահանությունից առաջ Շակ-Շակ գյուղն ուներ 147 ընտանիքից կազմված 658 հայ բնակչություն: Գյուղում գործում էր Ս. Նիկողայոս եկեղեցին¹⁰⁵⁶, որտեղ պահվում էր առանց հիշատակարանի, գեղեցիկ մանրանկարներով, արծաթյա կազմով մագաղաթյա ձեռագիր Ավետարան և կրկին առանց հիշատակարանի ձեռագիր Աստենի ժամագիրքը¹⁰⁵⁷:

1909 թ. Ադանայի և Հալեպի նահանգում տեղի ունեցած կոտորածից հետո, Կ.Պոլսի Կեդրոնական վարչության Քաղաքական ժողովը 1909 թ. օգոստոսին ստեղծվեց Կիլիկիո որբախնամ յանձնաժողովը, որ զբաղվելու էր որբացած երեխաների բազմաթիվ հոգսերով: Իզմիթի գավառի հայությունն իր մասնակցությունը բերեց որբախնամ գործին: Շակ-Շակ և Նոր-Գյուղ գյուղերի բնակիչները 107 լիրա նվիրեցին Կիլիկիո որբախնամ հանձնաժողովին¹⁰⁵⁸: Շակ-շակ գյուղի ժողովուրդը մասնակցեց նաև Զեյթունի սովյալների համար կատարվող համազգային հանգանակությանը: Նրանք 1908 թ. 300 դուրուշ ուղարկեցին սովյալներին¹⁰⁵⁹: Գյուղում գործում էր Միքայելյան վարժարանը, որը բարեկարգելու համար 1871 թ.

¹⁰⁵³ Նույն տեղում, էջ 51-52:

¹⁰⁵⁴ Կ. Քինյ. Օհանեան, Թղթակցութիւն Փունջի, «Փունջ», Կ.Պոլիս, 16 յուլիս 1894, թիւ 2417:

¹⁰⁵⁵ Նաթանեան Պ., նշվ. աշխ., էջ 22:

¹⁰⁵⁶ Ղազարեան Հ. Գ., նշվ. աշխ., էջ 157:

¹⁰⁵⁷ Ցուցակ հայերէն ձեռագրաց Նիկոմիդիոյ և շրջակայից, նշվ. աշխ., էջ 74-75:

¹⁰⁵⁸ Կիլիկիոյ որբախնամ կեդր. յանձնաժողով տեղեկագիր 1909-1910, Կ.Պոլիս, 1911, էջ 3, 113, 111, 96:

¹⁰⁵⁹ Թղթակցութիւնք «Ձայն հայրենեաց»ի, «Ձայն հայրենեաց», Կ.Պոլիս, 5-18 դեկտեմբեր, 1908, թիւ 7, էջ 59:

գյուղացիները հանգանակեցին 30.000 դուրուշ¹⁰⁶⁰: 1901 թ. Կ.Պոլսի Ուսումնական խորհրդի հրատարակած վիճակացույցի համաձայն՝ Միքայելյան վարժարանում սովորող 50 աշակերտներին դասավանդում էր 1 ուսուցիչ: 250 դուրուշ ուսումնական ամսական ծախսը վճարվում էր Թաղական խորհրդի գանձանակից¹⁰⁶¹: Այստեղ գործում էր Վերակազմյալ հնչակյան կուսակցության կառույցը¹⁰⁶²:

Շակ-Շակ գյուղում Ռումելիից գաղթած մահմեդական գաղթականները 1901 թ. բռնագրավեցին 5.000 արտավար հող: Նույն թվականին նրանց կողմից բռնագրավվեց ևս 500 արտավար հող¹⁰⁶³:

Ավանդության համաձայն, **Գըլըճ (Խըլըճ)** գյուղը հիմնվել է Վանից գաղթած հայերի կողմից: Գյուղացիներն ապրում էին բարեկեցիկ կյանքով¹⁰⁶⁴, զբաղվում էին շերամաբուծությամբ և երկրագործությամբ¹⁰⁶⁵: 1901 թ. Կ.Պոլսի Ուսումնական խորհրդի հրատարակած վիճակացույցի համաձայն՝ Գըլըճի ազգային վարժարանում սովորող 100 աշակերտներին դասավանդում էր 2 ուսուցիչ: 272 դուրուշ ուսումնական ամսական ծախսը հոգում էր տեղի Թաղական խորհրդը¹⁰⁶⁶: Գյուղը 1911 թ. 100-120 ոսկու բյուջե էր հատկացվում վարժարանի ծախսերի համար: Այստեղ գործում էր «Արաց կրթասիրաց միությունը», որը նպատակ էր հետապնդում նպաստել տեղի դպրոցի առաջադիմությանը¹⁰⁶⁷: Գյուղում գործում

¹⁰⁶⁰ Նաթանեան Պ., նշվ. աշխ., էջ 22:

¹⁰⁶¹ Վիճակացոյց գաւառական ազգային վարժարանանց Թուրքիոյ: Ա. տետր, նշվ. աշխ., 3-րդ աղյուսակ:

¹⁰⁶² Թղթակցութիւնք «Ձայն հայրենեաց»ի, «Ձայն հայրենեաց», Կ.Պոլիս, 16-29 յունուար, 1909, թիւ 13, էջ 126:

¹⁰⁶³ Հողային գրաւումներ Հայկական գաւառներէն դուրս ևս, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 2-15 հոկտեմբեր 1910, թիւ 402:

¹⁰⁶⁴ Գասապեան Մ. (Ֆարհատ), նշվ. աշխ., էջ 52-53:

¹⁰⁶⁵ Նաթանեան Պ., նշվ. աշխ., էջ 23:

¹⁰⁶⁶ Վիճակացոյց գաւառական ազգային վարժարանանց Թուրքիոյ: Ա. տետր, նշվ. աշխ., 3-րդ աղյուսակ:

¹⁰⁶⁷ Վաղարշակ, Դէպի Գըլըճ գյուղ, «Բիւթանիա», Իզմիտ, 10 դեկտեմբեր 1911, թիւ 29-30, էջ 526:

էր Վերակազմյալ հնչակյան կուսակցության կառույցը, որը 1909 թ. բացեց «Ազգայնական» կոչվող ընթերցասրահը և կազմեց հատուկ հանձնաժողով, որի նպատակն էր նպաստել Ազգային վարժարանի շենքի ավարտական աշխատանքներին, դասարանների կահավորմանը և ազգային կալվածքների մատակարարման արդյունավետ կազմակերպմանը¹⁰⁶⁸:

Գյուղում գործում էր Ս. Սարգիս քարաշեն գեղեցիկ եկեղեցին¹⁰⁶⁹, որտեղ պահվում էին 1615 թ. ընդօրինակված ձեռագիր Ավետարանը¹⁰⁷⁰, 1728 թ. Երզնկայում ընդօրինակված Խորհրդատետր, 1771 թ. Եվդոկիայում գրչագրված արծաթյա կազմով մանրանկարներով հարուստ Հայսմավուրքը և առանց հիշատակարանի մեկ այլ ձեռագիր Հայսմավուրք¹⁰⁷¹:

Գլըժժ գյուղի Վերակազմյալ հնչակյան կուսակցության կառույցի անդամները Կ.Պոլիս տեղեկություն էին հաղորդում, որ ժողովրդի նկատմամբ գործադրվում էին կամայական հարկեր¹⁰⁷²: 1892 թ. Ռումելիից գաղթած մահմեդականները բռնագրավել էին գյուղացիների 5.000 արտավար բարեբեր հողատարածքը¹⁰⁷³: Չնայած հողատարածքի բռնագրավմանը, քանի որ գյուղացիների ձեռքում էին բոլոր կալվածագրերը, նրանց տարիներ շարունակ հարկադրում էին վճարել այդ հողերի հարկերն ու տուրքերը: Տեղի իշխանությունների հարցը լուծելու փոխարեն 1911 թ. հուլիսին սուտ մատնությամբ ձերբակալեցին գյուղի 13 այն երևելիներին,

¹⁰⁶⁸ Թղթակցութիւնք «Ձայն հայրենեաց»ի, Գաւառի նամակներ, «Ձայն հայրենեաց», Կ.Պոլիս, 5-18 յունուար, 1909, թիւ 11-12, էջ 113:

¹⁰⁶⁹ Էփրիկեան Ս., Բնաշխարհիկ բառարան, Ա հատոր, նշվ. աշխ., էջ 523:

¹⁰⁷⁰ Գասապեան Ս. (Ֆարիստ), նշվ. աշխ., էջ 52-53:

¹⁰⁷¹ Ցուցակ հայերէն ձեռագրաց Նիկոմիդիոյ և շրջակայից, նշվ. աշխ., էջ 53-55, 74:

¹⁰⁷² Թղթակցութիւնք, «Ձայն հայրենեաց»ի, Գաւառի նամակներ, «Ձայն հայրենեաց», Կ.Պոլիս, 23 յունուար-5 փետրուար, 1909, թիւ 14, էջ 135:

¹⁰⁷³ Տեղեկագիր հողային գրամանց յանձնաժողովոյ, տետր Գ, Կ.Պոլիս, 1912, էջ 1:

որոնք բողոքել էին այդ հողային բռնագրավումների դեմ¹⁰⁷⁴։ Գըլլճի հայերի տեղահանությունից հետո, գյուղի բնակչության միայն բեկորներ վերադարձան իրենց տները¹⁰⁷⁵։

Յալովայի մոտերքում գտնվող **Քարցի (Լալե-Տերե)** գյուղը¹⁰⁷⁶ զուտ հայաբնակ էր, հիմնադրվել էր 1600 թ. Ակնից գաղթածների կողմից¹⁰⁷⁷։ 1911 թ. գյուղն ուներ 270 ընտանիքից կազմված բնակչություն¹⁰⁷⁸։ 1901 թ. Կ.Պոլսի Ուսումնական խորհրդի հրատարակած վիճակագրւյցի համաձայն՝ Քարցիի Մեսրոպյան-Շուշանյան վարժարանում սովորող 100 աշակերտներին դասավանդում էր 2 ուսուցիչ։ 272 դուրուշ ուսումնական ամսական ծախսը վճարվում էր Թաղական խորհրդի գանձանակից¹⁰⁷⁹։

Գյուղում գործում էր Ս. Աստվածածին եկեղեցին¹⁰⁸⁰։ Նիկոմիդիո առաջնորդ Ստեփանոս արքեպիսկոպոս Հովակիմյանը 1907 թ. հոկտեմբերին օծեց նորոգված Ս. Աստվածածին եկեղեցին¹⁰⁸¹, որտեղ պահվում էր մանրանկարներով հարուստ մեծարժեք մագաղայա ձեռագիր Ավետարան¹⁰⁸²։ Քարցիի Ս. Աստվածածին եկեղեցում պահվում էին ևս 9 ձեռագիր մատյաններ՝ 1571 թ. Լիմ անապատում ընդօրինակված Մաշտոց, 1641 թ. Կ. Պոլսում ընդօրինակված մագաղայա Ավետարան, 1589 թ. ընդօրինակված Ավետարան, 1629 թ. Երուսաղեմում ընդօրինակված Հայսմավուրք,

¹⁰⁷⁴ Նոյն դարը հոս ալ։ Գըլլճ գյուղը, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 1911, 3-16 յուլիս, թիւ 630։

¹⁰⁷⁵ Թէոդիկ, նշվ. աշխ., 1985, էջ 366։

¹⁰⁷⁶ Քարցի և Սալանձա։ Խմբագրական Փունջի, «Փունջ», Կ.Պոլիս, 28 մարտ 1892, թիւ 2300։

¹⁰⁷⁷ Գասապեան Մ. (Ֆարհատ), նշվ. աշխ., 1913, էջ 54-55։

¹⁰⁷⁸ Քայքայուած գյուղ մը, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 1911, 30 յունիս-13 յուլիս, թիւ 627։

¹⁰⁷⁹ Վիճակացոյց գաւառական ազգային վարժարանանց Թուրքիոյ։ Ա տետր, նշվ. աշխ., 3-րդ աղյուսակ։

¹⁰⁸⁰ Ղազարեան Հ. Գ., նշվ. աշխ., էջ 157։

¹⁰⁸¹ Նիկոմիդիոյ Ս.Առաջնորդ Հայրը, «Մանգումէի էֆքեար», Կ.Պոլիս, 29 հոկտեմբեր-11 նոյեմբեր 1907, թիւ 1955։

¹⁰⁸² Լ. Տ. ցի, Լալե-Տերե, «Բիւթանիա», Իզմիտ, 10 փետրուար 1910, թիւ 5, էջ 53։

1687 թ. Խասգյուղում ընդօրինակված Ատենի ժամագիրք, առանց հիշատակարանի ևս երկու Ատենի ժամագիրք, Սաղմոսարան և ժամագիրք¹⁰⁸³:

Գրիգոր Գարակյոզյանի կտակով 100 ոսկեդրամով և կազմակերպվելիք հանգանակության շնորհիվ Քարցի գյուղը 1907 թ. ունեցավ կենսական կարևորություն ունեցող խմելու ջուր¹⁰⁸⁴:

Քարցիի հայերը ենթարկվում էին թուրքական իշխանությունների հալածանքներին և հարստահարության: 1909 թ. ապրիլին գյուղի բնակիչ Աբրահամ Խազարյանը ձերբակալվեց սուտ մատնությամբ, իսկ ոստիկանները զինված խմբի հետ սարսափի մատնեցին ողջ գյուղը¹⁰⁸⁵: Գյուղում առաջին անգամ ազարակատեր Թահսին բեյի կողմից բռնագրավել էր 600, իսկ երկրորդ անգամ դադստանցիները տիրացան 1000 արտավար հողի¹⁰⁸⁶: «Ազատամարտ» թերթի սեփական թղթակցը 1914 թ. դեկտեմբերին հայտնում էր, որ քառորդ դար առաջ այստեղ իր տեսակով անհայտ տուրքեր են կիրառվել, որի հետևանքով Քարցիի հայ գյուղանցիներն այդ տուրքերի փոխարեն ստիպված էին վաճառել իրենց պարտեզներն ու արտերը: Թղթակիցի ներկայացրած ծանուցագրում հայտնվում էր, որ Մանուկ Օղլու Մաթոսը 100 քառակուսի արշին իր արտը պարտավոր էր 10 օրվա ընթացքում աճուրդի հանել 80 դուրուշով, Տեաս Օղլու Վարդանը 65 արտավար արտերը՝ 600 դուրուշով, Սահակ Օհանը 2 արտավար պարտեզը՝ 250 դուրուշով, Մանիլ Օղլի Վարդանը 4 արտավար պարտեզը՝ 250 դուրուշով, Թըզըր Օղլու Համբարձումը 16 արտավար արտը՝ 220 դուրուշով: Մինչ կալվածատուրքի փոխարեն

¹⁰⁸³ Ցուցակ հայերեն ձեռագրաց Նիկոմիդիոյ և շրջակայից, նշվ. աշխ., էջ 55-58:

¹⁰⁸⁴ Նիկոմիդիոյ Ս.Առաջնորդ Հայրը, «Մանգումէի էֆքեար», Կ.Պոլիս, 29 հոկտեմբեր-11 նոյեմբեր 1907, թիւ 1955:

¹⁰⁸⁵ Թղթակցութիւնք «Ձայն հայրենեաց»ի: Գաւառի նամակներ, «Ձայն հայրենեաց», Կ.Պոլիս, 10-23 ապրիլ, 1909, թիւ 24-25, էջ 255:

¹⁰⁸⁶ Հողային գրաւումներ Հայկական գաւառներէն դուրս ևս, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 2-15 հոկտեմբեր 1910, թիւ 402:

արտերն ու պարտեզները վաճառվում էին, Երկրագործական դրամատունը պատերազմական տուրքի փոխարեն գյուղացիների անասունները վաճառքի էր հանել: Բայց այս խնդիրը այքանով չէր ավարտվում: Այն գյուղացիները, որոնք ճանապարհի տուրքի պարտք ունեին, ձերբակալվում էին և բանտարկվում: Այս ամենից բացի, գյուղը գտնվում էր բնական ոչ բարենպաստ պայմաններում, քանզի կառուցվել էր սողանքների վրա¹⁰⁸⁷:

Չուքուր հայաբնակ գյուղը հիմնադրվել է 1610 թ. Վանից գաղթածների կողմից: Գյուղացիները հիմնականում զբաղվում էին երկրագործությամբ¹⁰⁸⁸: 1911 թ. գյուղը կազմված էր 75 ընտանիքից, որոնք հիմնականում զբաղվում էին երկրագործությամբ և շերամապահությամբ¹⁰⁸⁹: Այստեղ գործում էր Ս. Աստվածածին եկեղեցին¹⁰⁹⁰: 1901 թ. Կ.Պոլսի Ուսումնական խորհրդի հրատարակած վիճակացույցի համաձայն՝ գյուղի Վահանյան վարժարանում սովորող 35 աշակերտներին դասավանդում էր 1 ուսուցիչ: 150 դուրուշ ուսումնական ամսական ծախսը վճարվում էր Թաղական խորհրդի գանձանակից¹⁰⁹¹: Այս վարժարանի բյուջեն ապահովվում էր եկեղեցապատկան հողատարածքի մշակման շնորհիվ, որը կազմում էր 200 օսմանյան ոսկեդրամ¹⁰⁹²: 1909 թ. գյուղում հիմնվեց Վերակազմյալ հնչակյան կուսակցության մասնաճյուղը¹⁰⁹³:

¹⁰⁸⁷ Քարցիի մէջ տուրքերի հաւաքում, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 25 դեկտեմբեր-7 յունուար 1914, թիւ 1435:

¹⁰⁸⁸ Գասապեան Մ. (Ֆարիստ), նշվ. աշխ., էջ 54:

¹⁰⁸⁹ Հայկական կեանքէն: Մանր լուրեր, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 1911, 3-16 յուլիս, թիւ 630:

¹⁰⁹⁰ Թէոդիկ, նշվ. աշխ., էջ 366:

¹⁰⁹¹ Վիճակացոյց գաւառական ազգային վարժարանանց Թուրքիոյ: Ա տետր, նշվ. աշխ., 3-րդ աղյուսակ:

¹⁰⁹² Հայկական կեանքէն: Մանր լուրեր, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 1911, 3-16 յուլիս, թիւ 630:

¹⁰⁹³ Թղթակցութիւնք «Ձայն հայրենեաց»ի, Գաւառի նամակներ, «Ձայն հայրենեաց», Կ.Պոլիս, 5-18 յունուար, 1909, թիւ 11-12, էջ 113:

1905 թ. լազերի կողմից բռնագրավվել էր գյուղացիների 150 արտավար հողը¹⁰⁹⁴: Չուքուր գյուղի 100 դյոնեմ արտը 50 լիրա տուրքի փոխարեն վաճառվեց 750 դուրուշով¹⁰⁹⁵: 1909 թ. ապրիլին գյուղի երևելիներն ու հոգևորականները Կ.Պոլսի «Ձայն հայրեն-յաց» թերթին անհազանգում էին, որ Նապան-Գյուլ կոչված վայրում մուրհակներ ունեցող հայերի արտերը հարկահավաքները 1905 թ. տուրքի փոխարեն 50 ոսկու արժողությամբ այս հողատարածքը վաճառեցին 750 դուրուշով և չընդունեցին պարտքի գումարը: Նրանք տեղեկացնում էին նաև, որ գյուղի մոտակայքի հայերին պատկանող հողատարածքների վրա սկսել են տներ կառուցել¹⁰⁹⁶:

1915 թվականին գյուղը տեղահանվեց¹⁰⁹⁷: 1919 թ. դեկտեմբերի 20-ին Քարցի գյուղը շրջապատեցին 200 ոստիկան-զինվոր-ներ: Անհետացան դաշտերում աշխատող մարդիք: Այնհուիետն սկսվեց հրաձգություն, ինչի հետևանքով 10 գյուղացիներ սպանվեցին: Նույն օրը Շակ-Շակ, Չուքուր, Գըլըճ գյուղերը շրջապատվեցին քեմալականների կողմից¹⁰⁹⁸: Առևանգեցին մի քանի կանանց, սպանեցին 8 տղամարդու, հափշտակեցին նրանց ձմեռվա մթերքի ողջ պաշարը, ընտանի կենդանիներին և ուրիշ ունեցվածքները¹⁰⁹⁹: Այս սպանություններից և կոդուպուտներից հետո, այս գյուղերի գյուղացիները, փախչելով իրենց տներից, հաստատվեցին Յալովա-յում¹¹⁰⁰: Սակայն այստեղ նույնպես հանգիստ չէր¹¹⁰¹: 1920 թ.

¹⁰⁹⁴ Հողային գրառումներ Հայկական գաւառներէն դուրս ևս, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 2-15 հոկտեմբեր 1910, թիւ 402:

¹⁰⁹⁵ Տեղեկագիր հողային գրառմանց յանձնաժողովոյ, տետր Ա, Կ.Պոլիս, 1910, էջ 11:

¹⁰⁹⁶ Թղթակցութիւնք «Ձայն հայրենեաց»ի: «Ձայն հայրենեաց», Կ.Պոլիս, 22 ապրիլ-5 մայիս, 1909, թիւ 26-27, էջ 274:

¹⁰⁹⁷ Թէոդիկ, նշվ. աշխ., 1985, էջ 366:

¹⁰⁹⁸ Հայկական կէանք, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 2 յունուար 1920, թիւ 345:

¹⁰⁹⁹ Ոճիրներ Եալովայի մէջ, «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ», Կ.Պոլիս, 11-24 դեկտեմբեր 1920, թիւ 671:

¹¹⁰⁰ Հայկական կէանք, «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ», Կ.Պոլիս, 11-24 դեկտեմբեր 1920, թիւ 671:

օգոստոսին շրջակա վայրերից Յալովայում հաստատված 1000 հայերը մտադիր էին Կ.Պոլիս հասնել, սակայն տեղական իշխանությունները արգելում էին նրանց տեղաշարժը¹¹⁰²: 1921 թ. հուլիսին Յալովայի հայերը փոխադրվեցին Կեմլեյիկ¹¹⁰³:

2.6. Գարամուսալ գավառակի հայաբնակ բնակավայրերը և դրանց սոցիալ-տնտեսական վիճակը

Գարամուսալը (Գարամուրսալ) Իզմիրի գավառի կարևոր գավառակներից մեկն էր: Գտնվում էր Իզմիրի ծովածոցի հարավային և կենտրոնական մասերում: Ուներ պտղաբեր և բերրի հողեր: Գավառակի բնակչությունը գրեթե ամբողջապես կազմված էր թուրքերից և մահմեդական գաղթականներից: Այստեղ կային հունական, հույն-բուլղարական և հայկական գյուղեր: Հայերը ապրում էին գլխավորապես երկու գյուղերում՝ Յալաք-Տերեում և Մերտեկյոզում¹¹⁰⁴:

Յալաք-Տերե (Յալախ-Տերե) հայաբնակ գյուղը գտնվում էր Գարամուսալից 3 ժամ հեռավորության վրա¹¹⁰⁵: Կառուցված էր խոշոր ձորի երկու կողմերում: Հիմնվել էր 1600 թ.: Գյուղի Ս. Հրեշտակապետ եկեղեցին կառուցվել 1734 թ.: Գյուղը գտնվում էր բարեբեր հողերի վրա և շրջապատված էր թթաստաններով և անտառներով: Գյուղացիներն զբաղվում էին երկրագործությամբ ու շերամապահությամբ և ապրում՝ բարեկեցիկ կյանքով¹¹⁰⁶: 1911 թ. գյուղն ուներ շուրջ 280 ընտանիքներից կազմված բնակչություն:

¹¹⁰¹ Կացուրթիւնը Եալովայի մէջ, «Հայաստանի կոչնակ», Նյու Եորք, 29 հունուար 1921, թիւ 5, էջ 199:

¹¹⁰² Հայերի վիճակը Թուրքիայում: Հայ գաղթականներ, Յառաջ, Երևան, 13 օգաստոսի 1920, թիւ 172:

¹¹⁰³ Հայկական կեանք: Եալովայի Հայերը Կեմլեյիկ, «Ժողովուրդի կեանքը-Ժամանակ», Կ.Պոլիս, 24 յուլիս-7 յուլիս 1921, թիւ 833:

¹¹⁰⁴ Գասապեան Մ. (Ֆարիստ), նշվ. աշխ., էջ 49:

¹¹⁰⁵ Էփրիկեան Ս., Բնաշխարհիկ բառարան, Ա. հատոր, նշվ. աշխ., էջ 627-628:

¹¹⁰⁶ Գասապեան Մ. (Ֆարիստ), նշվ. աշխ., էջ 49-50, 104.:

1886 թ. այստեղ կառուցվեց ազգային վարժարանի նոր շենքը: 1892 թ. հեռավոր անտառներից ջրատար խողովակներից գյուղ բերվեց անուշահամ «Վարդավառի աղբյուրի ջուրը»¹¹⁰⁷: Ձմռան խստության պատճառով գյուղացիները հաստավեցին ձորի մեջ¹¹⁰⁸:

Ըստ Կ.Պոլսի Ուսումնական խորհրդի 1901 թ. հրատարակած վիճակագրույցի՝ Յալաք Տերե գյուղում գործող Ներսիսյան վարժարանում ուսանում էր 60 աշակերտ, դասավանդում՝ 2 ուսուցիչ: Ամսական ուսումնական 250 դուրուշ ծախսը հոգում էր տեղի Թաղական խորհուրդը¹¹⁰⁹:

Յալաք-Տերեի հայերին պատկանող հողերը գրավվեցին թուրքերի կողմից: Օսմանյան սահմանադրության վերահռչակումից հետո, կառավարությանն ուղղված դիմումներին ի պատասխան Թալեաթ բեյը խոստացավ հայերից բռնագրավված հողերը վերադարձնել տերերին, սակայն դրանք մնացին սոսկ խոստումներ¹¹¹⁰: Յալաք-Տերեում 1898 թ. սուլթան Համիդ Բ-ի զինակիր Մոստաֆայի կողմից բռնագրավվել է հայերին պատկանող 4.000 արտավար հող¹¹¹¹: Հայերի դիմում-բողոքները տարիներ շարունակ մնում էին անպատասխան¹¹¹²: Գյուղի հայ բնակիչները «Ազատամարտ» թերթին հեռագրով տեղեկացնում էին, որ 1911 թ. հունիսի 25-ին ապօրինի գործողությունների արդյունքում Պետական խորհրդի որոշումով և Ներքին գործերի հրամանով գյուղում

¹¹⁰⁷ Յոբելինական մատեան նշվ. աշխ., էջ 46:

¹¹⁰⁸ Էփրիկեան Ս., Բնաշխարհիկ բառարան, Ա հատոր, նշվ. աշխ., էջ 627-628:

¹¹⁰⁹ Վիճակագրոյց գաւառական ազգային վարժարանանց Թուրքիոյ: Ա տետր, նշվ. աշխ., 3-րդ աղյուսակ:

¹¹¹⁰ Գաւառական կեանք, Խապրիկներ, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 1910, 13-26 փետրուար, թիւ 209:

¹¹¹¹ Հողային գրաւումներ Հայկական գաւառներէն դուրս ևս, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 2-15 հոկտեմբեր 1910, թիւ 402:

¹¹¹² Թղթակցութիւնք «Ձայն հայրենեաց»ի, Գաւառի նամակներ, «Ձայն հայրենեաց», Կ.Պոլիս, 5-18 յունուար, 1909, թիւ 11-12, էջ 113:

բռնագրավվել են 200 տներ և 220 հողատարածքներ¹¹¹³: Բոսնիացի մահմեդականները սպառնում են գրավել հայերին պատկանող գյուղի այլ հողատարածքները¹¹¹⁴: Կ.Պոլսո Հայոց պատրիարքը, Քաղաքական ժողովի ատենապետի և պատրիարքական գործակատարի հետ 1913 թ. հունիսին հանդիպեցին ներքին գործոց նախարար Թալեաթ բեյի հետ և հայտնեցին հայերի նկատմամբ երկրում շարունակվող բռնությունների, հալածանքների, նրանց սպանությունների և հողային գրավումների մասին և օրինակ բերեցին Յալաք-Տերե գյուղում հայերից բռնագրավված հողերի մասին, ինչի կապակցությամբ բողոքագիր ներկայացրին Իզմիթի կառավարչին և Բ. Դռանը¹¹¹⁵: Գյուղացիները տուժում էին նաև թուրքական իշխանությունների ապօրինի հարկային քաղաքականության պատճառով: Գարամուսալում մահմեդականներից խաղողի տասնորդի հարկը գանձվում էր 14 փարա, իսկ քրիստոնյաներից՝ 17 փարա¹¹¹⁶:

Յալաք Տերե գյուղը տեղահանվեց և բնակչության մեծ մասը կոտորվեց տարագրության ճանապարհին¹¹¹⁷: Գյուղ էր վերադարձել 39 ընտանիք, ընդամենը 74 հոգի: Գյուղի 239 տներից 146 տներում մի կերպ հնարավոր էր ապրել, 37-ը կիսավեր էին, իսկ 56-ը հիմնահատակ քանդված¹¹¹⁸:

Հայաբնակ **Մերտեկյոզ** գյուղը գտնվում էր Գարամուսալից դեպի հյուսիս-արևմուտք, կառուցված էր երկու լեռնաշղթաների մեջ տարածվող ընդարձակ հովտի վրա: Գյուղում ապրում էին

¹¹¹³ Ասդին ալ հողային խնդիր, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 1911, 26 յունիս-7 յուլիս, թիւ 624:

¹¹¹⁴ Հայկական կեանքէն, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 1911, 8-26 ապրիլի, թիւ 548:

¹¹¹⁵ Հայ-ազգային լուրեր, «Բիւզանդիոն», Կ.Պոլիս, 11-24 յունիս 1913, թիւ 5067:

¹¹¹⁶ Գարամուսուլի խաղողի տուրքի խնդիրը, «Բիւթանիա», Իզմիտ, 10 յունուար 1910, թիւ 2, էջ 9:

¹¹¹⁷ Թէոդիկ, նշվ. աշխ., էջ 365:

¹¹¹⁸ Հայկական կեանք: Գաւառի ձայներ, «Արիամարտ», Կ.Պոլիս, 26 դեկտեմբեր 1918, թիւ 32:

սակավաթիվ թուրքեր՝ 28 հոգի: Ըստ ավանդության՝ Մերտեկյոզի հայերը գաղթել էին Մարդինից, Խարբերդից և Կիլիկիայից ու 1600 թ. հիմնել այս գյուղը¹¹¹⁹: Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ և շերամապահությամբ¹¹²⁰: Մերտեկյոզ գյուղն ուներ շուրջ 300 ընտանիքից կազմված հայ բնակչություն: 1883 կառուցվել է երկսեռ վարժարանի շենքը: 1895 թ. ամռանը ձեռնարկվեց գյուղի Ս. Կարապետ եկեղեցու շինարարությունը, որը փլուզվել էր 1894 թ. երկրաշարժից: Գյուղն ուներ «Հասան-Բունար» կաշված ջուրը, որը առողջարար հատկություններ ուներ: Կ.Պոլսից և այլ վայրերից սկսեցին տակառներով այն տանել: 1902 թ. գյուղ անցկացվեց նոր ջրի խողովակ, որը կոչվում էր «Ժամուն աղբյուրը»: 1903 թ. ձեռնարկվեց ընդարձակ պանդոկի շինարարությունը, որը պիտի ունենար 3 խանութ, 1 սրճարան և ընթերցասրահ: Շինարարությունը տևեց մեկ ու կես տարի¹¹²¹:

Ըստ Կ.Պոլսի Ուսումնական խորհրդի 1901 թ. Հրատարակած վիճակացույցի՝ Մերտեկյոզ գյուղում գործող Ս.Սահակյան երկսեռ վարժարանում սովորում էր 72 աշակերտ, դասավանդում՝ 2 ուսուցիչ: Ամսական ուսումնական 272 դուրուշ ծախսը հոգում էր տեղի Թաղական խորհուրդը¹¹²²:

Արևմտահայության մոտ ընդունված էր հարսանիքների և հողարկավորությունների առիթով «փոխան ծաղկեփնջի» գումարներ ուղարկել Կ.Պոլսի Սուրբ Փրկիչ ազգային հիվանդանոցին: Այդպիսի տեղեկատվություն հաճախ կարելի էր հանդիպել Կ.Պոլսի թերթերում: Նման նվիրատվության մասին հայտնվում

¹¹¹⁹ Գասապեան Մ. (Ֆարհատ), նշվ. աշխ., էջ 50-51:

¹¹²⁰ Նաթանեան Պ., Առաջին տեղեկագրություն վիճակին Նիկոմիդիոյ, Կ.Պոլիս 1871, էջ 33-34:

¹¹²¹ Յոբելիական մատեն, նշվ. աշխ., էջ 46-48:

¹¹²² Վիճակացոյց գաւառական ազգային վարժարանանց Թուրքիոյ: Ա տետր, նշվ. աշխ., 3-րդ աղյուսակ:

Մերտեկյոզ գյուղից¹¹²³: Գյուղի բնակչությունից վերապրել էր միայն 450 հոգին¹¹²⁴: Նրանց 268 տներից բնակելի էին հազիվ 121-ը, 54 բացարձակապես անբնակելի էին, իսկ 94 տների հետքերն անգամ չկային¹¹²⁵: Թուրք ազգայնականները 1920 թ. սեպտեմբերին այրելով Մերտեկյոզ գյուղի մտակայքում գտնվող հունական գյուղը՝ սպառնացին կոտորել Յալաք-Տերեի և Մերտեկյոզի հայությանը: Քեմալականների գործած վայրագությունների, հարձակումների և կոդուպուտների պատճառով 1920 թ. հոկտեմբերին Գարամուսալի, Յալաք-Տերեի, Մերտեկյոզի հայերը թողնելով իրենց ինչքը, տները և բերքը՝ հեռանցան¹¹²⁶:

2.7.Իզմիրի գավառի հայաթափումը և ունեզրկումը

Առաջին համաշխարհային պատերազմում պարտված Օսմանյան կայսրության 1918 թ. հոկտեմբերի 30-ին ստորագրեց Մուդրոսի զինադադարի պայմանագիրը¹¹²⁷: Ըստ Օսմանյան կառավարության 1918 թ. հոկտեմբերին ընդունած օրենքի՝ տեղահանված հայերը կարող էին վերադառնալ իրենց տները, նրանց շարժական գույքերի արժեքը փոհատուցվելու էր, իսկ անշարժ գույքերը վերադարձվելու էին¹¹²⁸: Նախարարների խորհրդի 1918 թ. դեկտեմբերի 1-ի նիստում ընդունված որոշման համաձայն՝ Ներքին գործերի նախարարությունը գավառային իշխանություններին պետք է

¹¹²³ Քրոնիկ, «Մանգումէի էֆքեար», Կ.Պոլիս, 26 յունուար 1906-8 փետրուար 1907, թիւ 1719:

¹¹²⁴ Թեդիկ, նշվ. աշխ., էջ 363:

¹¹²⁵ Հայկական կէանք: Գաւառի ձայներ, «Արիամարտ», Կ.Պոլիս, 26 դեկտեմբեր 1918, թիւ 32:

¹¹²⁶ Նույն տեղում, Կացութիւնը Նիկոմիիոյ շուրջ, «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ», Կ.Պոլիս, 14-27 հոկտեմբեր 1920, թիւ 614:

¹¹²⁷ Ղասաբյան Զ., Նիկոմիդիայի և Արևելյան Թրակիայի հայաթափումը (1921-1922), Երևան, 1998, էջ 5:

¹¹²⁸ Տարագրեալներու վերադարձի օրէնքը, «Ժողովուրդ», Կ.Պոլիս, 30 հոկտեմբեր-12 նոյեմբեր 1919, թիւ 10:

հրահանգեր, որպեսզի նրանք հայ և հույն տարագրեալներին ապրուստի պայմաններ ապահովեին¹¹²⁹։ Հայ տարագրյալների շարժական և անշաժ գույքերը վերադարձնելու արտոնություն ունեցող հանձնաժողովը 1918 թ. նոյեմբերին Բ. Դռանն առաջարկեց անմիջապես կազմակերպել այդ գույքերի վերադարձը, քանզի հայերի լքյալ գույքերի վերադարձի մասին օրինագիծը պետք է հաստատվեր Օսմանյան խորհրդարանի կողմից¹¹³⁰։ Կառավարությունը 1918 թ. դեկտեմբերի 10-ին երկրորդ անգամ գավառական իշխանությունների համար որոշում կայացրեց, որպեսզի նրանք ապահովեն վերադարձող հայերի անվտանգությունը և ապրուստը, սակայն համոզվելով, որ հրահանգը չի իրականացվում, որոշեց ստեղծվել 5 հոգուց բաղկացած հանձնաժողովներ, որոնց կազմում պետք է ընգրկված լինեին Հայոց և Հունաց պատրիարքությունների ներկայացուցիչներ, ովքեր տեղերում պետք է լուծվեին վարադարձողների խնդիրները¹¹³¹։ Ներքին գործերի նախարար Մուստաֆա Արիֆ բեյը 1918 թ. դեկտեմբերի 11-ին հեռագրեր ուղարկեց գավառներ, որպեսզի առանց հապաղման, անմիջապես հայերին վերադարձվեն նրանց սեփական կալվածքները, եթե մինչև այդ դրանք չեն վերադարձված։ Դրանից բացի, նոր կանոնագիր էր պատրաստվում, որը պետք է դրվեր Նախարարների խորհրդի վավերացմանը, ինչից ելնելով «Լքյալ գույքերի մասին» օրենքով վաճառված բոլոր կալվածքները պետք է վերադարձվեին տերերին, իսկ փոխանցվող բոլոր գործողությունները՝ չեղյալ համարվեին, իսկ

¹¹²⁹ Տարագրեալներու համար, «Ժողովուրդ», Կ.Պոլիս, 12-25 դեկտեմբեր 1918, թիւ 53:

¹¹³⁰ Հայ տարագրեալներուն գույքերը, «Ժամանակ», Կ.Պոլիս, 22 նոյեմբեր-5 դեկտեմբեր 1918, թիւ 3375:

¹¹³¹ Տարագրեալներու վերադարձին շուրջ, «Ժողովուրդ», Կ.Պոլիս, 11-21 դեկտեմբեր 1918, թիւ 52:

վաճառված ապրանքների փոխարժեքը՝ տրվել է Լքյալ գույքերի հանձնաժողովների գանձանակից¹¹³²:

Բյուջանիայի բնակավայրերից տեղահանված հայերից 75 տոկոսը նահատակվել էր տարագրության տարիներին: Այդ շրջանի մարդկային կորուստը համեմատաբար ավելի քիչ էր, քան Արևմտյան Հայաստանի նահանգների կորուստը: Նրանց հաջողվել էր մնալ Կոնիայում և շրջակայքում և գրեթե առանց զոհի դիմանալ մինչև զինադադարը¹¹³³: Կոնիայի կուսակալ Ջելալ բեյը, ով դեմ էր հայերի տեղահանությանը, կարողացել 30.000 հայերի պահել Կոնիայում¹¹³⁴:

Իզմիթի շուրջ 1300 հայկական տներից գրեթե 100-ը թուրքերը կրակի էին տրվել, մնացածների դռներն ու պատահանները հափշտակվել էին: Շատ տներ էլ ախոռների էին վերածվել: Իզմիթի շրջակա հայկական բնակավայրերի՝ Պարտիզակի, Օվաճըզի, Ասլանբեկի տները եթե չէին այրված, ապա ավերվել էին և կողոպտվել¹¹³⁵: Իզմիթի գավառի հայկական բնակավայրերի գերեզմանատները ու նշանավոր շենքերը քարուքանդ էին եղած: Ադաբազարի հայկական գերեզմանատան բոլոր շիրմաքարերը և տապանաքարերը ջարդուփշուր էին եղել քաղաքի Սուլթանիեի վարժարանի թուրք ուսանողների կողմից¹¹³⁶: Կ.Պոլսում հրատարակվող «Ճակատամարտ» թերթի թղթակիցը 1919 թ. մարտին շրջելով Պարտիզակով, Օվաճըզով, Ասլանբեկով, Ադաբազարով, Կեյվեով և այլ բնակավայրերով՝ իր տպավորություններն էր հրապարակել թերթում: Ըստ նրա՝ ամենուրեք ավերակներ էին և

¹¹³² Ազգային լուրեր: Տարագրեալ Հայոց կալուածքները, «Ժամանակ», Կ.Պոլիս, 12-25 դեկտեմբեր 1918, թիւ 3395:

¹¹³³ Չոքրիսեան Լ., Գ հատոր, նշվ. աշխ., էջ 648:

¹¹³⁴ Հայութիւնը ի նչպէս մնաց Գոնիա, «Ժամանակ», Կ.Պոլիս, 1-14 դեկտեմբեր, 1918, թիւ 3383:

¹¹³⁵ Իրենց տեղերը վերադարձողներու սրտաճմիկ կացութիւնը, «Ժողովուրդ», Կ.Պոլիս, 20 նոյեմբեր-3դեկտեմբեր 1918, թիւ 31:

¹¹³⁶ Թղթակից, Կեանքը Իզմիտի մէջ, «Ժողովուրդ», Կ.Պոլիս, 4 սեպտեմբեր 1919, թիւ 31:

համատարած թշվառություն: Քանդված էին օջախները, կողոպտված և պղծված՝ եկեղեցիները: Ամենուրեք այնպիսի ավերածություններ էին, որն անգամ երկրաշարժը անկարող էր իրականացնել: Իզմիրի 650 հայկական տներից միայն պատերն էին կանգուն մնացել: Այս մոխրակույտի մեջտեղում իր խորտակված խաչով կանգնած էր մնացել Ս. Աստվածածին եկեղեցին: Այն կանգուն էր, քանզի այստեղ էին հավաքվել հայերի տներից կողոպտված իրերը, որոնք Լքյալ գույքերի հանձնաժողովի կողմից աճուրդի էին հանվել: Կանգուն էր նաև քարաշեն մանկապարտեզը, որը բանտի էր վերածվել: Բնակության համար պիտանի 410 տուն էր մնացել: Իզմիրի 1130 հոգի էր միայն վերադարձել քաղաք, շուրջ 630 մարդ այստեղ էր հաստատվել շրջակա գյուղերից: Ընդհանուր՝ 1760 հոգի¹¹³⁷:

Չորս տարվա տառապալից տարագրությունից հետո վարադարձած իզմիրցիներն իրենց քանդված տները կառուցելու և վերանորոգելու գործին լծվեցին: Այստեղ կազմավորվել էր «Ազգային միությունը», որը քաղաքի հայության կենսական բազմաթիվ խնդիրների լուծման ճանապարհներ էր որոնում¹¹³⁸: 1919 թ. հունվարի սկզբին արդեն ստեղծված էին ազգային այլ մարմիններ՝ Թաղական խորհորդը, Քաղաքական ժողովը, «Նպաստից հանձնաժողովը», որոնք սկսեցին զբաղվել տարագրյալների խնդիրներով¹¹³⁹: Կ.Պոլսում ստեղծված «Տարագրելոց կենտրոնական հանձնաժողովը» 1919 թ. հունվարին սկսեց գավառներում կազմել իր մասնաճյուղերը, որպեսզի համատեղ ուժերով կարողանան լուծել տարագրյալ հայության կենսական բազում խնդիրները¹¹⁴⁰: Իզմիրի

¹¹³⁷ Յուրիսճեան Գ., Դեգերումներ աւերակներուն մէջ, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 5 մարտ 1919, թիւ 97:

¹¹³⁸ Կեանքը Նիկոմեդիայի մէջ, «Ժողովուրդ», Կ.Պոլիս, 14-27 նոյեմբեր 1918, թիւ 25:

¹¹³⁹ Նիկոմիդիոյ Հայերը, «Ժամանակ», Կ.Պոլիս, 3-17 յունուար, 1919, թիւ 3417:

¹¹⁴⁰ Տարագրելոց Կեդր. յանձնաժողովը, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 10-23 յունուար, 1914, թիւ 1534:

հայության կրթական խնդիրների լուծելու համար քաղաքի հայ առաքելական և բողոքական համայնքների երիտասարդ ներկայացուցիչների ջանքերով ստեղծված «Նիկոմիդիայի միացյալ խնամատարության» և Կ.Պոլսի Ազգային խնամատարության համատեղ որոշմամբ ազգային շերամատունը վերածվեց որբանոցի: Ազգապատկան կիսաքանդ պանդոկ-ընթերցատունը դպրոցի վերածելու շինարարական աշխատանքների համար «Ազգային միությունը» 800, իսկ Ազգային խնամատարությունը 350 օսմանյան ոսկեդրամ տրամադրեց¹¹⁴¹: Թաղական խորհուրդն անմիջապես անցավ վարժարանի նորոգման գործին: Եվ շատ շուտով եկեղեցին և դպրոցը պատրաստ էին գործելու համար¹¹⁴²:

Կ.Պոլսում 1919 թ. հունիսին ստեղծվեց «Բյութանիական հայրենակցական միությունը», որն իր մասնաճյուղերը պետք է ստեղծեր Բուրսայի նահանգում և Իզմիթի գավառում: Միության նպատակն էր մասնաճյուղերի հետ համատեղ ջանքերն ուղղել բյութանիահայության ապահովության և նրանց կենսական այլ խնդիրների լուծմանը¹¹⁴³:

1919 թ. վերապրած իզմիթցիները, որոնք հիմնականում արհեստավորներ և առևտրականներ էին՝ վերականգնեցին աղբանոցի վերածված շուկան: 63 հոգուց կազմված «Հայ կարմիր խաչի» մասնաճյուղն արդեն գործի էր անցել և հանգանակել 1650 դուրուշ: Վերակազմվել էր «Աթլաս» մարմնամարզական ակումբը և «Կրթասիրաց ընկերությունը», որի փողային նվազախումբը սկսել էր իր փորձերը¹¹⁴⁴: 1919 թ. փետրվարի սկզբին Իզմիթում հայկական կյանքն աստիճանաբար մտնում էր իր բնականոն հունի մեջ: 200

¹¹⁴¹ Թղթակից, Կեանքը Իզմիտի մեջ, «Ժողովուրդ», Կ.Պոլիս, 4 սեպտեմբեր 1919, թիւ 31:

¹¹⁴² Հայկական կեանք: Հայ վարժարանները Իզմիտի մեջ, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 4 փետրուար, 1919, թիւ 71:

¹¹⁴³ Նաթանեան Մ., Հարենակացական միութիւններ, «Առաւօտ», Կ.Պոլիս, 16 յունիս 1919, թիւ 11:

¹¹⁴⁴ Վահէ, Գաւառի ձայներ, Հայ կեանքը կը վերածնի Իզմիտի մեջ, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 4 մայիս 1919, թիւ 146:

ընտանիքներ էին վերադարձել Իզմիր: Վերադարձվել էին եկեղեցին և զանգերը, սակայն ոչ՝ եկեղեցական ծիսական առարկաները¹¹⁴⁵: Ազգային խնամատարությունը 1919 թ. մարտին որոշում կայացրեց 500 որբերի համար որբանոց հիմնել Իզմիրի գավառում¹¹⁴⁶: Այդ նպատակի համար օգտագործվելու էր ազգային ընդարձակ շտեմարանը¹¹⁴⁷: 1919 թ. հունիսին Իզմիրում ավարտվեցին որբանոցի պատրաստման աշխատանքները¹¹⁴⁸: Ազգային միությունը տեղի որբանոցի շենքի կարգավորման համար 350 օսմանյան ոսկեդրամ տրամադրեց¹¹⁴⁹, Ազգային խնամատարությունը 1919 թ. հուլիսին Իզմիրի որբանոցի համար տրամադրել էր 200, որբուհիների համար՝ 1000, իսկ Իզմիրի կարոտյալներին՝ 250 ոսկեդրամ¹¹⁵⁰: 1919 թ. նոյեմբերի 10-ին Իզմիրում բացվեց Աղջիկների որբանոցը, որը գտնվում էր Ամերիկյան նպաստամատուցի և տեղի հայերի հոգաձության ներքո¹¹⁵¹: Իզմիրի Աղջիկների որբանոցում 1919 թ. սեպտեմբերի տվյալներով ապաստան էին գտել 215 որբուհիներ¹¹⁵²:

Իզմիրի հայության ազգապատկան ջրաղացը բռնագրավվել էր տեղի զինվորական իշխանությունների կողմից¹¹⁵³: Հայերի անհա-

¹¹⁴⁵ Անցորդ, Կեանքը Նիկմիդիոյ մէջ, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 18 փետրուար, 1919, թիւ 84:

¹¹⁴⁶ Որբանոց Նիկմիդիոյ մէջ, «Ժամանակ», Կ.Պոլիս, 31 մարտ-22 ապրիլ 1919, թիւ 3495:

¹¹⁴⁷ Մեծ որբանոց մը Իզմիրի մէջ, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 10 յունիս, 1919, թիւ 176:

¹¹⁴⁸ Հայկական կեանք, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 1 յուլիս, 1919, թիւ 194:

¹¹⁴⁹ Նույն տեղում, Իզմիրի ազգային դպրոցները, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 10 օգոստոս, 1919, թիւ 228:

¹¹⁵⁰ Խնամատարութիւնը գաւառի կարօտութեան հանդէպ, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 9 օգոստոս, 1919, թիւ 228:

¹¹⁵¹ Իզմիրի Աղջկանց որբանոցի բացումը, Հայկական կեանք, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 12 նոյեմբեր, 1919, թիւ 301:

¹¹⁵² Նեկայ մը, Նիկմիդիոյ Ազգկանց որբանոցի ծառահանդէսը, «Ժողովուրդի ձայնը», Կ.Պոլիս, 15-28 յունուար 1921, թիւ 699:

¹¹⁵³ Ազգային կալուածքները ինչ կ'լինան, «Վերջին լուր», Կ.Պոլիս, 1919, 22 փետրուար:

տական և ազգապատկան ունեցվածքները մնում էին թուրք երևելիների և ազդեցիկ անձանց մոտ, որոնք դրանք չէին պատրաստվում վերադարձնել տերերին: Կառավարության կողմից հրահանգ էր եղել թե՛ ազգային և թե՛ անհատական ունեցվածքները վերադարձնելու համար դիմել դատարան, որի ընթացքը կարող էր տևել երեքից մինչև վեց ամիս: Այդ խնդիրներով Օվաճըզ և Տեոնկել գյուղերից Կ.Պոլսի Քաղաքական ժողովին դիմելով՝ ակնկալում էին օգնություն¹¹⁵⁴:

1918 թ. նոյեմբերին Ադաբազարից տարագրված հայերը երկրի տարբեր վայրերից վերադառնում էին քաղաք: Իզմիթի Հայոց առաջնորդության վիճակագրության համաձայն՝ տեղահանությունից առաջ շուրջ 20.000 հայություն կար Ադաբազարում: 3.500 հայ ընտանիքներից հազիվ 800 ընտանիքներ էին կարողացել փրկվել կոտորածներից, որոնց թիվը զգալիորեն կրճատվել էր: Այսպես, Ադաբազարից տեղահանված հայությունից փրկվել էր 5.000-ը միայն, գրեթե 1/4-ը: Ու եթե համեմատելու լինենք Արևմտյան Հայաստանի և կայսրության մյուս հայաբնակ վայրերի հետ՝ ցեղասպանությունից ամենից շատ փրկվածները ադաբազարցիներն են եղել¹¹⁵⁵: Շատերի տները կամ ամբողջապես քանդված էին, կամ դարձել էին անբնակելի: Տեղի թուրքական իշխանություններն անտարբեր էին վերապրող հայ տարագիրների նկատմամբ: Թաղապետության, «Գաղթականական հանձնաժողովի» և «Կարմիր մահիկի» պարտականությունն էր զբաղվել տարագիրներով, սակայն նրանք զբաղված էին սոսկ մահմեդականների խնդիրներով: Այդ կազմակերպություններն աջակցում էին այն թուրքերին, որոնք տիրացել էին հայկական տներին, այգիներին, խանութներին ու պարտեզներին: Առանց բացառության, Ադաբազարի բոլոր թուրքե-

¹¹⁵⁴ Նույն տեղում, 22 փետրուար 1919:

¹¹⁵⁵ Սիփան, Ատափազարի Հայերը, «Արդարամարտ», Կ.Պոլիս, 30 նոյեմբեր 1918, թիվ 10:

րի տներում հայերի ունեցվածք կար¹¹⁵⁶։ Տեղահանությունից առաջ Ադաբազարում գործում էր կոշկակարների միությունը հիմնել էր գեղեցիկ զբոսայգի, ուր ամեն կիրակի ելույթ էր ունենում հայկական փողային նվագախումբը։ Այդ այգին քարուքանդ էր եղել և վերածվել արոտավայրի։ Ս. Լուսավորիչ թաղում գործում էր մետաքսի գործարանը, որը տարագրության տարիներին թուրքերը քանդել էին։ Ազգային բոլոր կալվածքներն անպիտան վիճակում էին։ Մատուռը, որը կառուցված էր «Տիկնանց աղքատախնամ ընկերության» միջոցներով՝ նույնպես քանդված էր։ Գերեզմանատանը ոչ մի տապանաքար չէր մնացել։ Մարմարյա մահարձանները փշուրների էին վերածվել¹¹⁵⁷։ Ադաբազարի հայերի տները, եկեղեցիները և դպրոցները կողոպտվել էին։ Քաղաք վերադարձողներից շատերը ստիպված էին ապրել իրենց մերձավոր ազգականների մոտ, քանզի հայերին պատկանող 3500 տներից կանգուն էր մնացել միայն 100-ը¹¹⁵⁸։ Հայերի տեղահանությունից հետո Ադաբազարում աղքատ թուրք չէր մնացել, բոլորը հարստացրել էին հայերի ունեցվածքի կողոպուտի հաշվին¹¹⁵⁹։ Ս. Կարապետ թաղում կյանքի և կենդանության հետքերը վերածված էին։ Զարհուրելի էր Ս. Լուսավորիչ թաղի վիճակը, որտեղ նույնիսկ փողոցներն էին վերացվել։ Եկեղեցական գույքը, մարմարյա պատերի քարերը քանդվել և տարվել էին թուրքական ապարանքները զարդարելու համար։ Ս. Հրեշտակապետ թաղն ամբողջապես ավերակույտի էր վերածվել։ Կիսավեր էր եկեղեցին, քանզի այն օգտագործվել էր որպես շտերմարան։ Քաղաքի շուկան աղբանոցի և մոխրակույտի էր վերածվել։ Հայերը նորից սկսեցին շենացնել այն։ 300 խանութ-

¹¹⁵⁶ Սիփան, Գաւառի ձայն, Հացն ալ իրենց դանակն ալ, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 7 յունւար 1919, թիւ 44:

¹¹⁵⁷ Կյուլպէնկեան Յ., Կեանքը Ատաբազարի մէջ, «Ժամանակ», Կ.Պոլիս, 10 դեկտեմբեր- 8 յունուար 1918, թիւ 3406:

¹¹⁵⁸ Ահա եկեր են, բայց ինչ կը գտնեն..., «Արիամարտ», Կ.Պոլիս, 25 դեկտեմբեր 1918, թիւ 31:

¹¹⁵⁹ Գաւառի ձայներ: Ատափազարէն, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 1919, 28 փետրուար:

ներն ու արհեստանոցները կարճ ժամանակահատվածում կարգի դրվեցին: Մահմեդականները, որոնք զբաղված էին հայկական կողոպտված ունեցվածքի արևտրով՝ հեռացան շուկայից: Աղաբազարում հայերին պատկանող 7 մանարանները չէին գործում, քանզի դրանք բռնագրավվել էին թուրքերի կողմից, իսկ դրանց տերերը չէին վերադարձել տարագրությունից: Հայերն իրենց ձեռքն առան քաղաքի շուկան: Նրանցից բռնագրավված ապրանքները մնում էին կողոպտիչների մոտ: Տեղի թուրքական իշխանությունները ոչինչ չէին անում դրանք տերերին վերադարձնելու համար¹¹⁶⁰:

Հայ տարգիրների վերադարձից հետո, Կ.Պոլսի բոլոր թաղերում սկսվեց տարվել մեծ աշխատանք՝ հայ տարագիրների և որբերի կարիքները հոգալու ուղղությամբ: Կ.Պոլսում ապրող նախկին աղաբազարցիները ստեղծեցին հանձնախումբ, որը նյութապես պետք է աջակցեր տարագիր հայրենակիցներին¹¹⁶¹: 1918 թ. նոյեմբերին սկսեց գումար հանգանակվել¹¹⁶²: Ողջ հայությունն ի նպաստ հայ տարագրյալների՝ սկսեց հանգանակություն կազմակերպել¹¹⁶³: Կ.Պոլսի «Տարագրելոց հանձնաժողովը» 1919 թ. փետրվարին Աղաբազարի հայերին ուղարկեց 250 օսմանյան ոսկեդրամ¹¹⁶⁴:

Աղաբազարցիների վերադարձից 15 օր հետո, վերաբացվեցին մանկապարտեզն ու նախակրթարանը, որի համար ծախսվեց 450 ոսկեդրամ¹¹⁶⁵: Ստեղծվեցին տարագրյալների հանձնախմբեր,

¹¹⁶⁰ Շրջիկ, Կեանքը Ատափազարի մէջ: Կեանքը կը ծաղկի աւերակներուն մէջէն, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 30 օգոստոս, 1919, թիւ 246:

¹¹⁶¹ Կոչ Ատաբազարցիներուն, «Ժողովուրդ», Կ.Պոլիս, 1918, 4-17 նոյեմբեր, թիւ 15:

¹¹⁶² Հաճի Յար. Պէօրէքճեան, Կոչ մը ատաբազարցիներուն, «Բիւթանիա», 4-17 նոյեմբերի 1918, թիւ 15

¹¹⁶³ Տարագրեալներուն ի նպաստ, «Հայրենիք», Կ.Պոլիս, 17-30 հոկտեմբեր 1918, թիւ 178:

¹¹⁶⁴ Գաւառի նպաստ, «Ժամանակ», Կ.Պոլիս, 6-19 փետրուար 1919, թիւ 3448:

¹¹⁶⁵ Սօս-Վանի, Հայկական կեանք, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 22 մարտ 1919, թիւ 113:

որոնք կազմված էին չորս թաղերի աղքատախնամ ընկերությունների անդամներից: Տարագրյալների տեղավորման, կրթական և ազգային կալվածքների խնդիրներով զբաղվելու համար կազմված էին համապատասխան մարմիններ: Տեղավորման մասնախումբն ուներ երկու մեծ հիվանդանոց, որտեղ պատսպարվում էին վերադարձած ընտանիքները, մինչև նրանց համար հարմար բնակավայր գտնելը: Մատակարար մարմինները հնարավորին չափով օգնում էին կարոտյալ տարագիրներին: 550 կարոտյալներին նպաստ էր բաժավնում: Ամեն օր տարագրյալներին անվճար հաց և շաքարը մեկ անգամ միս էր տրվում՝ ծախսելով 50-60 ոսկեդրամ: Ծախսվում էր Կ.Պոլսից մասնավոր անձանց կողմից ուղարկված 700 ոսկեդրամը: Թուրքական իշխանությունները ոչ միայն գումար չէին հատկացնում տարագրյալներին, այլև հայերից 4 տարվա տուրք էին պահանջում: «Տարագրյալների հանձնախումբը» որոշեց որբանոց հիմնել՝ շահագործելով ազգային կալվածքները, որոնցից ամսական 300 ոսկեդրամ էր գոյանում և իհարկե ազգային բաղնիքը, որը հավելյալ շահույթ էր ապահովում¹¹⁶⁶: 1919 թ. մարտին կազմավորվեց «Հայ կարմիր խաչի» Աղաբազարի մասնաճյուղը¹¹⁶⁷, որն ուներ 140 անդամ, որոնք գործուն մասնակցություն էին ունենում քաղաքի հայ բնակչության կյանքում: Բժշկական բանախոսություններ կազմակերպելուց բացի, «Հայ կարմիր խաչը» բացեց 15 տեղանոց հիվանդանոց¹¹⁶⁸: Կարճ ժամանակահատվածում այստեղ սպասարկվեց 300 հիվանդ¹¹⁶⁹: 1919 թ. ապրիլին քաղաքի կանայք ստեղծեցին «Վերածնունդ միությունը», որի նպատակն էր տեղի

¹¹⁶⁶ Կյուլպէկեան Յ., Կեանքը Ատաբազարի մէջ, «Ժամանակ», Կ.Պոլիս, 10 դեկտեմբեր- 8 յունուար 1918, թիւ 3406:

¹¹⁶⁷ Սօս-Վանի, Գաւառային: Կարմիր խաչի ցերեկոյթը, «Ճակատամարտ», 1919, 9 մարտի 1919, թիւ 101:

¹¹⁶⁸ Նորայր Ա., Հայկական կեանք: Գաւառի ձայներ, Ատաբազար կը վերածնի «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 22 մարտ 1919, թիւ 113:

¹¹⁶⁹ Գաւառի ձայներ: Հայկական կարմիր խաչը Ատաբազարի մէջ, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 27 մայիս, 1919, թիւ 165:

հայության խնդիրների լուծումը¹¹⁷⁰: Մեծ ծավալի գործունեություն էին ծավալում «Հայ մարմնակրթական միությունն» և «Բոյսքաուր» խումբը¹¹⁷¹: 1919 թ. ամռանը Ադաբազարում կազմվեց «Վերածնունդ լսարանական ընկերությունը», որը պարբերաբար բանախոսություններ էր կազմակերպում¹¹⁷²: Ադաբազարի հայությունն իր մասնակցությունն էր բերում անապատի որբերի փրկության գործին: Ամեն հարսանիքի ժամանակ հանգանակություն էին կատարվում ի նպաստ որբերի¹¹⁷³: «Հայ կարմիր խաչի» թատերասրահում 1919 թ. դեկտեմբերին տեղի ունեցավ Ալեքսանդր Շիրվանզադեի «Եվգինե» դրամայի ներկայացումը, որը 120 ոսկեդրամ ապահովեց «Հայ կարմիր խաչի» համար¹¹⁷⁴: Վերջինիս նախաձեռնությամբ «Արարատ» թատերախումբը ներկայացում տվեց քաղաքի հայ հանդեսատեսին, որից ստացված հասույթը ծառայեցվեց «Հայ կարմիր խաչի» կարիքներին¹¹⁷⁵: Իզմիրի «Հայ կարմիր խաչի» մասնաճյուղը նույնպես օգնում էր Ադաբազարի որբերին և կարոտյալներին¹¹⁷⁶: Կարճ ժամանակահատված հետո, հայերի տներն ու շուկան կարգավորված էր և նրանք անցել էին բնականոն կյանքի: Բոլոր կազմակերպությունները հոգում էին իրենց աղքատ և կարոտյալ ազգակիցների հոգսերը: Քաղաքում մուրացիկ հայ

¹¹⁷⁰ Սու-Վանի: Գաւառի ձայներ, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 18 ապրիլի 1919, թիւ 133:

¹¹⁷¹ Սու-Վանի, Գաւառներ, Երիտասարդութիւն Ատափազարի մէջ, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 1 յուլիս, 1919, թիւ 194:

¹¹⁷² Սու-Վանի, Հայկական կեանք, Գաւառներ, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 4 սեպտեմբեր, 1919, թիւ 249:

¹¹⁷³ Հայկական կեանք: Գաւառներ, Ատափազար և անապատի որբերը, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 4 նոյեմբեր, 1919, թիւ 294:

¹¹⁷⁴ Ազգային լուրեր, «Ժամանակ», Կ.Պոլիս, 11-24 դեկտեմբեր, 1919, թիւ 3709:

¹¹⁷⁵ Թղթակից, Գաւառներ, Ատափազարի կեանքէն, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 28 դեկտեմբեր, 1919, թիւ 341:

¹¹⁷⁶ Համառօտ տեղեկագիր Հայ կարմիր խաչի եօթնամեայ գործունեութեան, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 10 դեկտեմբեր, 1919, թիւ 325:

հնարավոր չէր գտնել¹¹⁷⁷: 1919 թ. ապրիլին Ադաբազարում տեղի ունեցավ «Հայ կարմիր խաչի» պարահանդեսը, որին ներկա էին ամերիկացիներ և հույներ: Նույն օրը կայացած համերգից գոյացած 300 օսմանյան ոսկեդրամը հատկացվեց «Հայ կարմիր խաչին»¹¹⁷⁸:

Ադաբազարում գործում էր Ամերիկյան որբանոցը, ուր 1919 թ. օգոստոսին ապաստանել էին 99 որբուհիներ¹¹⁷⁹: Ադաբազարի Ամերիկյան որբանոցի տեսչությանը որբուհիների խնամքի համար 1919 թ. սեպտեմբերի 14-ին կազմակերպեց դաշտահանդես և հանգանակություն, որի արդյունքում հավաքվեց 100 ոսկեդրամ¹¹⁸⁰:

Պարտիզակի 10.000 հայ բնակչությունից միայն 1.000-1.500 էր վերադարձել: Տների մեծամասնությունը քանդված էին¹¹⁸¹: Ս. Հակոբ և Ս. Թազվոր եկեղեցիները ախոռի և մթերանոցի էին վերածված: Հակառակ դժնդակ պայմաններին, պարտիզակցիներն առանց հուսահատվելու, փարվեցին իրենց հայրենի գյուղաքաղաքը վերականգնելու գործին: Անտոններն ապաստան գտան կանգուն տուն ունեցողների մոտ: Սկսեցին մշակել իրենց արտերն ու այգիները¹¹⁸²: 1919 թ. հունվարին արդեն ազգային կյանքը Պարտիզակում սկսել էր ծաղկել: Քաղաք էին վերադարձել 1200 վերապրածներ: Պարտիզակցիների մեկ մասը դեռ գտնվում էին Իզմիրում և Կ.Պոլսում: Արձանագրվել էին 270 երկսեռ աշակերտներ, ովքեր շուտով պետք է հաճախեին վարժարաններ: Ազգային կալվածքներից ստացվող 100 ոսկեդրամը տրամադրվում էր վարժարաններին:

¹¹⁷⁷ Սու-Վանի, Գաւառի ձայներ, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 16 փետրուար 1919, թիւ 83:

¹¹⁷⁸ Սու-Վանի, Գաւառի ձայներ, Սարսափի շաքաթը, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 5 ապրիլ 1919, թիւ 122:

¹¹⁷⁹ Սու-Վանի, Հայ կեանք: Գաւառներ, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 4 նոյեմբեր, 1919, թիւ 294:

¹¹⁸⁰ Որբերի դաշտահանդեսը, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 18 սեպտեմբեր, 1919, թիւ 261:

¹¹⁸¹ Բիրթանիոյ աւերակներուն մէջէն, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 10 օգոստոս, 1919, թիւ 228:

¹¹⁸² Փաթուքեան Վ. Օ., Պարտիզակ հայաքաղաքը, <https://azator.gr/?p=522>

Վերակազմավորվել էր «Նուպարյան միությունը», որն արդեն բացել էր իր ընթերցասրահը¹¹⁸³։ Պատերազմի ընթացքում թուրքերն արմատախիլ էին արել Պարտիզակի և շրջակայքի բոլոր թթաստանները¹¹⁸⁴։ Տեղի հայերի տեղահանությունից հետո Հայոց եկեղեցում էին հավաքվել նրանցից կողոպտված իրերը։ Չորս տարի շարունակ այդ իրերը վաճառվել էին և կողոպտվել, մեկ մասը փոխադրվել էր Կ.Պոլիս, սակայն դրանց մեկ մասը դեռ եկեղեցում էր և պարտիզակցիները ճանաչում էին իրենց իրերը¹¹⁸⁵։

1919 թ. Պարտիզակի ազգային իշխանությունները որոշում կայացրին 200, իսկ հետագայում 500 որբերի համար որբանոց բացել¹¹⁸⁶։ Պարտիզակի որբանոցին աջակցելու համար «Բյութանիական հայրենակցական միության» և տեղի «Կանանց միությունը» կամակերպեցին հանդես, որից գոյացած 80 օսմանյան ոսկեդրամը տրամադրվեց որբանոցին։ Թաղական խորհրդը նույնպես ամսական գումարներ էր տրամադրում որբանոցին¹¹⁸⁷։

Առաջին համաշխարհային պատերազմում պարտված Օսմանյան կայսրության կողմից Մուդրոսի զինադադարի պայմանագրի կնքումից հետո, համաշխարհային հասարակության ճնշման տակ, թուրքական նոր կառավարությունը որոշեց պատասխանատվության ենթարկել Օսմանյան կայսրությունը պատերազմի մեջ ներքաշած և հայերի ցեղասպանությունը կազմակերպած մեղավորներին։ 1918 թ. դեկտեմբերի 16-ի որոշմամբ կազմվեցին արևմտահայության կոտորածներին վերաբերող մեղադրական ապացույցներ՝ հրամաններ, ծածկագիր հեռագրեր, պաշտոնական գրություններ, ականատեսների վկայություններ հավաքող հարցաքննիչ հանձնա-

¹¹⁸³ Պարտիզակը կը ծաղկի (Սեփական թղթակցութիւն), «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 31 յունուար 1919, թիւ 67։

¹¹⁸⁴ Բիւթանիական նամականի, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 2 յուլիս, 1919, թիւ 195։

¹¹⁸⁵ Հայկական կեանք, «Արիամարտ», Կ.Պոլիս, 22 դեկտեմբեր, 1918 թիւ 28։

¹¹⁸⁶ Ազգային լուրեր, «Ժամանակ», Կ.Պոլիս, 27 յունիս-10 յուլիս 1919, թիւ 3568։

¹¹⁸⁷ Հայկական կեանք։ Գաւառներ, Պարտիզակէն լուրեր, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 13 նոյեմբեր, 1919, թիւ 302։

ժողովներ¹¹⁸⁸: Տարագրության և ջարդարարների հեղինակներին գտնելու համար գավառ ուղարկված հանձնաժողովի անդամներն իրենց տեղեկագրերը կազմեցին և ներկայացրին իշխանություններին: 1919 թ. սեպտեմբեր ամսին ձերբակալված և դատական նախարարություն էին հանձնված արդեն 400 ջարդարարներ¹¹⁸⁹: Իզմիթ մեկնած կառավարական հանձնաժողովի տեղեկագրում ասվում էր, որ ոստիկանական զորքերի հրամանատարի տեղակալ Աճեմ Իբրահիմը 500 զորքերով գնացել է Ասլանբեկ և ծեծով ու մահվան սպառնալիքով 300 ոսկեդրամ է խլել ասլանբեկցիներից, իսկ հրամանատար Սուլեյմանը յուրացրել է գյուղացիների ողջ նախիրը: Մեկ ուրիշ պաշտոնյա 350 հոգու հետ հափշտակել է գյուղացիների ունեցվածքը: Պարտիզակի կառավարիչ Ալի Շուրին հափշտակել էր իրեն հանձնված եկեղեցական գույքը և Պարտիզակի հայերի ունեցվածքը: Տեղեկագրից պարզ էր դառնում, որ Իզմիթի կառավարիչ Մազհարը Լքյալ գույքերի հանձնաժողովի նախագահի հետ յուրացրել է իզմիթցի հայերի գույքերը: Ադաբազարցի Մահմուդը և Քահվեճի օղլու Շեֆիքը տիրացել էին 5.000-6.000 ոսկու արժողությամբ հայերի գույքերին: Բանտապետ Իբրահիմը խոշտանգել էր շատ հայերի և որոշներին ազատ էր արձակել միայն մեծ փրկագներ վերցնելով¹¹⁹⁰:

1919 թ. հունվարին Իզմիթի հայերի տարագրության և կոտորածների կազմակերպիչները խիստ հսկողության ներքո բերվեցին Կ.Պոլիս՝ Մահմուդ Հայրեթ փաշայի նախագահությամբ գործող պատերազմական աստյանի առջև դատվելու համար¹¹⁹¹: Իզմիթի երիտթուրքական կուսակցության պատվիրակ Մյումթազը

¹¹⁸⁸ Հայկական հարց հանրագիտարան, Երևան, 1996, էջ 125:

¹¹⁸⁹ Վերջին լուրեր, Չորս հայուր ջարդարարներ, Յառաջ, Երևան, 23 սեպտեմբեր, 1919, թիւ 3:

¹¹⁹⁰ Իզմիթի Քննիչ յանձնաժողովի տեղեկագիրը, «Ժամանակ», Կ.Պոլիս, 8-21 յունուար, 1919, թիւ 3421:

¹¹⁹¹ Իզմիթի ջարդարարները Պոլիս կը բերուեն, «Ժամանակ», Կ.Պոլիս, 30 հունվար-8 փետրուար 1919, թիւ 3441:

1919 թ. մարտին ձերբակալվեց և տեղափոխվեց Կ.Պոլիս¹¹⁹²: 1919 թ. մարտին ձերբակալվեցին Ադաբազարի հայերի տեղահանության կազմակերպիչ Պարտիզակի կառավարիչ Ալի Շուրին, Ուզուն Թարլանը և Վեհիճը ու տեղափոխվեցին Կ.Պոլիս¹¹⁹³: Նույն ամսին Ադաբազարում ձերբակալվեցին տեղի և Բուրսայի երիտթուրքական կուսակցության պարագլուխները¹¹⁹⁴: Տարագրության ժամանակ Ադաբազարի նախկին կոմիսար Հելմին աչքի էր ընկել հայերի նկատմամբ ցուցաբերած դաժանությամբ: Նա մի ձեռքին մտրակը և մյուսին՝ ասորճանակը Ս. Կարապետ եկեղեցում խոշտանգում էր հազարավոր հայերի: 1919 թ. նա նույնպես ձերբակալվեց և տեղափոխվեց Կ.Պոլիս¹¹⁹⁵: 1919 թ. հունվարի 6-ին Կ.Պոլսում կազմվեցին ռազմական աստակարգ ատյաններ, որոնք սկսեցին քննել Հայոց ցեղասպանության կազմակերպիչների և իրականացնողների՝ երիտթուրքական կուսակցության պարագլուխների, կառավարության անդամների, կուսակցական, պետական ու զինվորական բարձրաստիճան այլ պաշտոնյաների գործերը¹¹⁹⁶: Ռազմական ատյանի որոշմամբ 1919 թ. ապրիլի 1-ին ձերբակալված Ադաբազարի երիտթուրքական կուսակցության պատվիրակ Համիդ բեյը հանցագործ ճանաչեց: Որոշման մեջ ասված էր, որ Համիդ բեյը որպես երիտթուրքական կուսակցության ազդեցիկ անդամ՝ մեծ դերակատարություն է ունեցել Ադաբազարի հայերի տեղահանության և նրանց ունեցվածքի յուրացման գործում: Հայերի տարագրության ժամանակ նա չնչին գնով ձեռք էր բերել

¹¹⁹² Մանր լուրեր: Ձերբակալություններ, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 29 մարտ 1919, թիւ 116:

¹¹⁹³ Ջարդարարները կը ձերբակալուին, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 1919, 12 մարտի 1919, թիւ 103:

¹¹⁹⁴ Ձերբակալություններ Ատափազարի մէջ, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 5 ապրիլ 1919, թիւ 122:

¹¹⁹⁵ Հրէշ մը ալ ձերբակալուած, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 18 ապրիլի 1919, թիւ 133:

¹¹⁹⁶ Անումյան Մ., Երիտթուրքերի 1919-1921 թթ. դատավարությունների վավերագրերը ըստ օսմանյան մամուլի, Երևան, 2011, էջ 8:

նրանց թողած իրերը: Վաճառական Յովհաննես Մուրադյանին ծեծելով և սպառնալիքներով տիրացել էր նրա մեծ գումարներին¹¹⁹⁷: Ադաբազարի նորանշանակ կառավարիչը դատարանում վկայել էր, որ Համիդ բեյը ադաբազարցի հայ գործարար Արթաքիին արքային տրամադրել էր տվել և մի թուրքի հետ տիրացել նրա գործարանին և հսկա հարստություն ղիզել: Այդ մարդը մինչև պատերազմը հազիվ 4.000-5.000 ոսկու տեր էր, իսկ այժմ արդեն 50.000 կարողություն ուներ¹¹⁹⁸:

1919 թ. դեկտեմբերին տեղի ունեցավ Պարտիզակի նախկին գյուղապետ Ալի Շուրի դատավարությունը, որտեղ փաստեր բերվեցին ամբաստանյալի հանցագործությունների մասին: Վկաները փաստեցին, որ նրա հանցակից Իբրահիմը ծեծով և սպառնալիքներով Սվաճյանից 500 ոսկեդրամ էր խլել¹¹⁹⁹: Ալի Շուրիի դատի ժամանակ փաստեր ներկայացվեց այն մասին, որ նա տեղի հայերի տեղահանությունը կազմակերպելուց և իրականացնելուց հետո, հափշտակել էր Միհրան աղայի 600 և Ասատուր աղայի 500 ոսկու արժողությամբ ապրանքները¹²⁰⁰:

Իզմիթի գավառի հայությունը ջանում էր կենդանություն հաղորդել իրենց բնակավայրերին, սակայն բախվում էր տեղի մահմեդական բնակչության չարակամ վերաբերմունքին: Թուրք հասարակությունը խիստ անհանգստացած էր հայերի և հույների վերադարձի կապակցությամբ: Թուրքական «Վաքըտ» թերթը մտահոգված էր, որ հայերի և հույների վերադարձը վտանգելու է թուրքերի անվտանգությունը և այդ առիթով ղիմել էր Հարօզուտ

¹¹⁹⁷ Հայոց դահիճներեն մեկուն դատավարությունը, «Ժամանակ», Կ.Պոլիս, 23 յուլիս-5 օգոստոս 1919, թիւ 3590:

¹¹⁹⁸ Համիտ պեյի դատավարությունը, Ատապազարի գայմամգամ Նուզհետ պեյի մերկացումները, «Ճակատամարտ» 1919, 15 օգոստոսի:

¹¹⁹⁹ Պարտիզակի մյուտիքին դատը, «Ժամանակ», Կ.Պոլիս, 6-19 դեկտեմբեր 1919, թիւ 3705:

¹²⁰⁰ Պարտիզակի մյուտիքի Ալի Շուրիի դատը, «Ժամանակ», Կ.Պոլիս, 15-28 նոյեմբեր 1919, թիւ 3687:

շինության նախարար Ֆերիտ բեյին, պահանջելով միջոցներ ձեռք առնել այդ շարժման դեմ¹²⁰¹:

Ադաբազարի այն պաշտոնյաները, որոնք կազմակերպել էին հայերի ունեցվածքի կողոպուտն ու հափշտակությունները՝ համարձակ և հպարտորեն քայլում էին քաղաքում: Ադաբազարի շրջակայքում ազատորեն շրջում էին ավագակներ, որոնք կողոպտում և սպանում էին քրիստոնյաներին¹²⁰²: 1919 թ. մարտին Իզմիրում թուրքերը գրգռված վիճակում էին, մանավանդ ոստիկանները, ովքեր բնավ չէին քաշվում հրապարակավ սպառնալիքներ հնչեցնել հայերի հասցեին: Իշխանությունները երիթուրքական կուսակցության ներկայացուցիչներ էին, ովքեր վերջին օրերին կազմակերպեցին իզմիրցի հայ երիտասարդի սպանությունը¹²⁰³:

Կ.Պոլսո կառավարությունը հայերի և թուրքերի միջև համերաշխություն, հաշտություն և խաղաղություն քարոզելու նպատակով պատվիրակներ ուղարկեց երկրի տարբեր վայրեր: Այս պատվիրակների Կ.Պոլիս վերադառնալուց հետո, երկրով մեկ ծայր առավ անապահով վիճակը: Իրականում նրանք ապահովեցին երիթուրքերի հայաջինջ քաղաքականության շարունակությունը: Զինադադարից հետո տարբեր քաղաքներում սպանված հայերի թիվը հարյուրների էր հասնում և շարունակում է շատանալ: Թուրքական թերթերի լրատվության համաձայն կառավարությունը ծրագրել է կրկին պատվիրակներ ուղարկել նահանգներ: Կարելի էր ենթադրել, որ թուրքերի հայահալած քաղաքականությունն իր շարունակությունն էր ունենալու¹²⁰⁴:

¹²⁰¹ Վերադարձուող Հայերը չեն ընդունուիր, Վերջին լուր, Կ.Պոլիս, 1919, 15 հուլիսի:

¹²⁰² Հայկական կեանք: Աւագակները ազատօրէն կը գործեն, «Արիամարտ», Կ.Պոլիս, 21 դեկտեմբեր 1918, թիւ 27:

¹²⁰³ Գիշեր ցորեկ ժողով կ'ընեն-կը սպաննեն, «Հակատամարտ», Կ.Պոլիս, 1919, 13 մարտի 1919, թիւ 104:

¹²⁰⁴ Կէպէնէլեան Ս., Յորդորիչ մարմիններ ինչ կընեն, Հայ ձայն, Ադանա, , 12 օգոստոսի 1919:

Ադաբազարի երիտթուրքական կուսակցության ներկայացուցիչները շարունակում էին ազատ գործել քաղաքում և տարբեր մեթոդներով ահաբեկել հայերին¹²⁰⁵: Հայերի գույքերը չէին վերադարձվում, և նրանք ստիպված էին դիմել դատարան, որն ամեն հնարք գործադրում էր նրանց ունեցվածքը չվերադարձնելու համար¹²⁰⁶: Իզմիթի և Պարտիզակի և շրջակա գյուղերի հայերի գլխին կրկին կախվում էր կոտորածի վտանգը: Այս վայրերի մոլեռանդ մահմեդականները, որոնք տիրացել էին հայերի ունեցվածքին, առևանգված կանաց, աղջիկներին, մահմեդականացված հայ որբերին չվերադարձնելնելու համար զինվում էին յաթաղաններով, ատրճանակներով, կառավարական զենքերով և սպառնում հայերին: Հայությունը գտնվում էր սարսափած և անճար վիճակում¹²⁰⁷:

1919 թ. փետրվարին Պարտիզակի կառավարչի դրդմամբ բախում տեղի ունեցավ զինված լազերի և պարտիզակցի երիտասարդների միջև¹²⁰⁸: 1919 թ. մարտին չորս հայեր սպանվեցին Պարտիզակի և Օվաճըզի միջև ընկած ճանապարհի հատվածում: Մարդասպանները մնացին ահայտ: Պարտիզակի և շրջակայքի հայերը գտնվում էին լուրջ սպառնալիքի տակ¹²⁰⁹: Իզմիթում մշտապես տեղի էին ունենում հայերի սպանություններ¹²¹⁰:

1919 թ. նոյեմբերին Պարտիզակում կար 2500 հայություն, որը լծված էր գյուղաքաղաքի վերաշինության գործին և այն աստիճանաբար կենդանանում էր, որից դժգոհ թուրքերը առիթը բաց չէին

¹²⁰⁵ Հայահալած դեմքեր Ատաբազարի մէջ, «Ժամանակ», Կ.Պոլիս, 6-19 փետրուար, 1919, թիւ 3449:

¹²⁰⁶ Ճէպէլի Ա., Ջոհուած Ատաբազարը «Ժամանակ», Կ.Պոլիս, 4-17 ապրիլ 1918, թիւ 3498:

¹²⁰⁷ Ջարդի ուրվականը վերադրձող Հայերու գլխին, «Ժողովուրդ», Կ.Պոլիս, 14-27 նոյեմբերի 1919:

¹²⁰⁸ Ծանր դէպք մը Պարտիզակի մէջ, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 9 փետրուար 1919, թիւ 76:

¹²⁰⁹ Չորս հայ կը սպանուի Պարտիզակի մէջ, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 4 մարտ 1919, թիւ 96:

¹²¹⁰ Անապոհովութիւնը Պոլսոյ քրին տակ, «Վերջին լուր», Կ.Պոլիս, 15 յունիս 1919, թիւ 1559:

թողնում հարձակվել հայերի վրա և ոճիրներ գործել: Մուստաֆա Քեմալի ղեկավարած թուրք ազգայնական շարժման գործիչները սեպտեմբերին Պարտիզակի և Արմաշի շրջակայքի թուրքական, չերքեզների և լազերի գյուղերին զենք բաժանեցին, ինչից հետո սկսվեցին հակաքրիստոնեական քարոզչությունն ու հայերի վրա հարձակումները: Նոյեմբերի առաջին օրերին մի ավազակախումբ հարձակում գործեց տղաների որբանոցի վրա, որը գտնվում էր նախկին Ամերիկյան վարժարանում: Այն հիմնվել էր 1919 թ. օգոստոսին և այստեղ ապաստանել էին 340 որբեր¹²¹¹: Դեկտեմբերին կրկնվեց որբանոցի վրա ավազակային հարձակումը¹²¹²: Աղաբազարում և շրջակայքում անարգել գործում էին հրոսակախմբեր, որոնք հարձակվում և կոդոպտում էին տեղի հայությանը¹²¹³: Յալովայում և շրջակայում զինված ավազակախմբերը գյուղեր մտնելով՝ մեծ փրկագին էին պահանջում բնակիչներից: Այս շրջանում ավարառություններն ու գողությունները սովորական երևույթ էին¹²¹⁴: 1919 թ. մայիսին Միջազգյուղի շրջակայքում վիստում էին ավազակախմբերը, և հայերը չէին համարձակվում իրենց բնակավայրերից դուրս գալ¹²¹⁵: 1919 թ. հունիսին Աղաբազարի իշխանությունները 300 զինյալ չեչեներ էին տեղակայվել քաղաքում, ովքեր զիշերները շրջվում են այն փողոցներով, որտեղ հայեր էին ապրում և ահաբեկում նրանց¹²¹⁶:

¹²¹¹ Պարտիզակի որբանոցը և լազ չեթներու յարձակումը, «Վերջին լուր», Կ.Պոլիս, 19 նոյեմբեր 1919, թիւ 1729:

¹²¹² Գիշերային բռնի յարձակում Պարտիզակի որբանոցին վրայ, «Ժամանակ», Կ.Պոլիս, 22 դեկտեմբեր 1919-4 յունուար 1920, թիւ 3720:

¹²¹³ Թուրք հրոսակախմբերը կը գործեն, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 1919, 30 յունուար:

¹²¹⁴ Սարսափը Յալովայի մէջ.-Աւազակները գործի վրայ են, «Ճակատամարտ», 1919, Կ.Պոլիս, 11 փետրուար:

¹²¹⁵ Գաւառի ձայներ, Ամէն օրուան պատմութիւն, (Սեփական թղթակցութիւն), «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 13 մայիս 1919, թիւ 153:

¹²¹⁶ Զինեալ Չէչէններ Աղաբազարի մէջ, «Ժամանակ», Կ.Պոլիս, 4-16 յունիս, 1919, թիւ 3548: Տէս նաև ՌՃԻր մը Ատաբազարի մէջ, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 12 յուլիս 1919, թիւ 204:

1919 թ. օգոստոսի 8-ին Կելվեում ավազակային հարձակում տեղի ունեցավ հայերի վրա և նրանցից կողոպտվեց շուրջ 700 ոսկու ապրանք¹²¹⁷: 1920 հուլիսին թուրք ազգայնականները կոտորեցին Կելվեի, Միջագյուղի, Գընճըլարի, Ագհիսարի, Էջմեի հայերին: Առանձնակի դաժանությամբ սպանվեցին հարուստները, կողոպտվեց նրանց ունեցվածքը և առևանգվեցին գեղեցիկ աղջիկները¹²¹⁸: 1920 թ. քեմալականներն այրեցին Միջագյուղ և Ալմալը գյուղերը, իսկ հայ գյուղացիները փախան այս վայրերից¹²¹⁹:

1919 թ. սեպտեմբերին Ադաբազարում և շրջակա գյուղերում ավազակային ընդարձակ գործունեություն էին ծավալում քեմալականները, որոնք հայերին պատանդ վերցնելով՝ մեծ փրկագներ էին պահանջում¹²²⁰: Ազգայնականները երիտթուրքերի նման շարունակում էին արևմտահայության բեկորների հալածանքի, տեղահանության, ոչնչացման և նրանց ունեցվածքի կողոպուտի քաղաքականությունը¹²²¹: Ադաբազարի հայերը 1920 թ. սեպտեմբերին կողոպտվեցին թուրք ազգայնականների կողմից¹²²²: Քաղաքում տիրող անապահով վիճակի հետևանքով տեղի բարեկեցիկ դասը սեպտեմբերին հառացավ քաղաքից դեպի Իզմիթ և Կ.Պոլիս¹²²³: Հոկտեմբերին այստեղ անիշխանություն էր տիրում: Սկզբից ազգայնականները կողոպտեցին ժողովրդին, այնուհետև չերքեզների կամավոր խմբերը քաղաքում վերցրին իշխանությունը և տեղի

¹²¹⁷ Աւազակները Կելվեի շրջանին մեջ, «Ճակատամարտ» Կ.Պոլիս, 1919, 12 օգոստոսի:

¹²¹⁸ Պօմպայով կը սպանեն և քարյուղով կայրեն: Կելվեի ջարդը, «Երկիր», Կ.Պոլիս, 24 յուլիս 1920, թիւ 263:

¹²¹⁹ Միլլիճիներու վայրագութիւնները, «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ», Կ.Պոլիս, 23 սեպտեմբեր-7 հոկտեմբեր 1920, թիւ 603:

¹²²⁰ Ազգային լուրեր, «Վերջին լուր», Կ.Պոլիս, 1 հոկտեմբեր 1919, թիւ 1690:

¹²²¹ Üngör Ü., Polatel M., Confiscation and Distruction, Continuum International Publishing Group, London, 2011, p. 145-146.

¹²²² Ատաբազարի հայերը, «Երկիր», Կ.Պոլիս, 23 սեպտեմբեր 1920, թիւ 309:

¹²²³ Ատաբազարի բարեկեցիկ դասը, «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ», Կ.Պոլիս, 22 սեպտեմբեր-5 հոկտեմբեր 1920, թիւ 602:

Ժողովրդից 300.000 ոսկի պահանջեցին¹²²⁴: 1920 թ. հուլիսին 500 հոգանոց ազգայնական զորքը պաշարեց Պարտիզակը: Պարտիզակից փախչող կանայք ձերբակալվեցին և կողոպտվեցին: Քեմալականների կողմից կողոպտվեցին շրջակա հայկական գյուղերը՝ Օվաճըզը, Ասլանբեկը, Նոր-Գյուղը¹²²⁵: Նրանք ավերի ենթարկեցին Պարտեզակի այգիներն ու պարտեզները, որից հետո պարտիզակցիների մեկ մասը ապաստան գտավ Իզմիրում¹²²⁶: 1920 թ. հունիսի 28-ին քեմալականները հարձակվեցին Իզմիրի գավառակի հայաբնակ գյուղերի վրա¹²²⁷: 1920 թ. հոկտեմբերին Իզմիրից՝ Կ.Պոլսո Հայոց պատրիարքությանն ուղարկած հեռագիրը տեղեկացնում էր, որ շրջակա բնակավայրերից այստեղ հաստատվել էին 7.000 հայեր, որոնցից 5.000-ը՝ Ադաբազարից¹²²⁸: Նոյեմբերին Ադաբազարում մի քանի հարյուր հայեր էին մնացել¹²²⁹: 1920 թ. սեպտեմբերին գավառի տարբեր գյուղերից հայերը փախչելով քեմալականների հարձակումներից՝ հաստատվեցին Իզմիրում¹²³⁰: Քաղաքի 4.000 գաղթականներին ավելացան Ադաբազարից, Բալուից և շրջակա բնակավայրերից գաղթած 7.000 նոր գաղթականներ¹²³¹: Քեմալականների Իզմիր մտնելուց հետո, սկսվեց հայերի ունեցվածքի կողոպուտը: Նրանք սպառնալիքի տակ մտնում էին հայերի տներն

¹²²⁴ Կացութինը Ադաբազարի շրջանին մեջ, «Երկիր», Կ.Պոլիս, 7 հոկտեմբեր 1920, թիւ 321:

¹²²⁵ Միլլիճիների յարձակումը Պարտիզակի վրայ, Յառաջ, Երևան, 15 օգոստոսի 1920, թիւ 174:

¹²²⁶ Կացութինը Պարտիզակի մեջ, «Երկիր», Կ.Պոլիս, 29 յունիս 1920, թիւ 241:

¹²²⁷ Միլլի վայրագութիւնները Իզմիրի շրջանին մեջ, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 6 յուլիս, 1920, թիւ 494:

¹²²⁸ Հայկական կեանք: Կացութինը Նիկոմիոյ մեջ «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ», Կ.Պոլիս, 6-19 հոկտեմբեր 1920, թիւ 614:

¹²²⁹ Նոյն տեղում, «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ», Կ.Պոլիս, 7-20 նոյեմբեր 1920, թիւ 642:

¹²³⁰ Նոյն տեղում, 2-15 սեպտեմբեր 1920, թիւ 585:

¹²³¹ Իզմիրի գաղթականութեան ցաւալի կացութիւնը, «Երկիր», Կ.Պոլիս, 16 սեպտեմբերի 1920, թիւ 303:

ու խանութները և վերցնում իրենց ցանկացած իր¹²³²։ Իզմիրի հայերը ստիպված էին թողնել քաղաքը։ 1921 թ. փետրվարին Իզմիրի հայերը փախան Կ.Պոլիս, սակայն այստեղ նույնպես ենթարկվեցին հալածանքների։ Ոստիկանները խուզարկում և բռնագրավում էին իզմիրցի հայերի իրերը¹²³³։ 1921 թ. հունիսի 20-ին հունական նավերով 900 հայեր տարհանվեցին Հունաստան։ Նրանք Պարտիզակից, Ասլանբեկից, Արմաշից, Խասկալից և Թամլըքից փախածներն էին, որոնք ապաստան էին գտել Իզմիրում¹²³⁴։ 1921 թ. հուլիսին 3.000 հայեր Իզմիրից տեղափոխվեցին Ռոդոս-թո¹²³⁵։ Նրանց միացան 600 պարտիզակիցներ¹²³⁶։ 1921 թ. հուլիսին Ադաբազարի հայ գաղթականները մեծավ մասամբ Միտիլի փոխադրվեցին¹²³⁷, իսկ օգոստոսին՝ այստեղ փոխադրվեցին նաև Ռոդոս-թոյում ապաստանած 4.000 իզմիրցի գաղթականները¹²³⁸։

Այսպես, Իզմիրի գավառի հայերը տևականորեն ենթարկվելով քեմալականների հարձակումներին և կողոպուտին՝ ստիպված եղան թողնել իրենց տները և ցրվել տարբեր երկրներով մեկ։ Նրանք հաստատվեցին Բուլղարիայում, Հունաստանում, Ֆրանսիայում և այլուր¹²³⁹։ Պարտիզակից 50 ընտանիք տեղափոխվեց Խորհրդային Հայաստան¹²⁴⁰։ Պարտիզակից, Իզմիրից ու Ադաբա-

¹²³² Փախստական հայերն Իզմիրում, «Յառաջ», Երևան, 25 յունիս 1920, թիւ 122։

¹²³³ Իզմիրի փախստականները։ Ոստիկանական հալածանք, «Վերջին լուր», Կ.Պոլիս, 1921, թիւ 2215։

¹²³⁴ Հազարի չափ հայ գաղթականներ կը զետեղուէն յունական նոր գյուղի մէջ, «Հայաստանի կոչնակ», Նյու Եորք, 17 յուլիս 1921, թիւ 30, էջ 994։

¹²³⁵ Հայկական կեանք։ Նիկոմիդիայի Հայերը ի Ռոտոսթո, «Ժողովուրդի կեանքը-Ժամանակ», Կ.Պոլիս, 24 յուլիս-7 յուլիս 1921, թիւ 833։

¹²³⁶ Պարտիզակի Հայերը կը գաղթէն, «Հայաստանի կոչնակ», Նյու Եորք, 23 յուլիս 1921, թիւ 30, էջ 994։

¹²³⁷ Ատաբազարցիները Միտիլիի մէջ, «Հայաստանի կոչնակ», Նյու Եորք, 6 օգոստոսի 1921, թիւ 32, էջ 1065։

¹²³⁸ Իզմիրի գաղթականները Ռոտոսթոյի մէջ, «Հայաստանի կոչնակ», Նյու Եորք, 6 օգոստոսի 1921, թիւ 32, էջ 1065։

¹²³⁹ Յոբելիական մատեան նշվ. աշխ., էջ 5։

¹²⁴⁰ Հայ Սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003, էջ 182։

գարից գաղթած հայերի այդ բեկորներ հաստավեցին Երևանի Բյուրանիա թաղամասում¹²⁴¹:

Մինչև 1922 թ. Իզմիրի գավառն ամբողջապես հայաթափված էր¹²⁴²: 1921 թ. հուլիսին արդեն Իզմիրում կազմվել էր Լքյալ գույքերի հանձնաժողով՝ այստեղից փախչող հայերի ունեցվածքը հաշվառելու համար¹²⁴³: Այն պետք է հավաքեր հայերի թողած գույքը և հսկողություն սահմաներ պահեստներում թողնված մթերքների նկատմամբ: Հանձնաժողովն իր հավաքած ապրանքները և հայերի պարտեզների ու այգիների բերքը սկսեց աճուրդով վաճառել, ճիշտ այնպես, ինչպես 1915 թվականին¹²⁴⁴:

1923 թ. ապրիլի 15-ին հրապարակելով 333 թվակիր օրենքը՝ թուրքական իշխանությունները շարունակեցին իրականացնել հայերի ունեգրվման երիտթուրքերի կիսատ թողնված գործը: Հանրապետական շրջանում կրկին գործողության մեջ դրվեց Լքյալ գույքերի հանձնաժողովը, որը պարտականություն ուներ իրականացնելու հայերի և հույների գույքերի իրացման գործընթացը: Վերը նշված օրենքն ուժի մեջ մնաց մինչև 1988 թվականի նոյեմբերը¹²⁴⁵:

Մինչև 1988 թվականը թուրքական պետությունը շարունակեց տիրանալ հայերի թողած ունեցվածքին, սակայն այս գործընթացը չի դադարել նաև այսօր: Տակնուվրա անելով պահպանված հայկական տները, եկեղեցիներն ու գերեզմանատները՝ պետության և բնակչության կողմից յուրացվում են հայերի կողմից թաքստոց-

¹²⁴¹ Ավետիսյան Կ., Ավետալյան Ա., Հայրենագիտական էտյուդներ, Երևան, 1979, էջ 300-301:

¹²⁴² Ղասաբյան Զ., Նիկոմիդիայի և Արևելյան Թրակիայի հայաթափումը (1921-1922), Երևան, 1998, էջ 37:

¹²⁴³ Լքեալ գույքերի յանձնաժողով մը Իզմիրտի մէջ, «Երկիր», Կ.Պոլիս, 1 յուլիս 1921:

¹²⁴⁴ Հայկական կեանք: Կացութիւնը գաւառի մէջ, «Ժողովուրդի կեանքը-Ժամանակ», Կ.Պոլիս, 27 յունիս-10 յուլիս 1921, թիւ 836:

¹²⁴⁵ Onaran N., EMVAL-İ METRUK OLAYI, Osmanlı'da ve Cumhuriyet'te Ermeni ve Rum Mallarının Türkleştirilmesi, İstanbul, 2010, s. 153-157:

ներում պահված ոսկիներն ու թանկարժեք առարկաները¹²⁴⁶, գույքերի վաճառքով զբաղվող թուրքական տարբեր կայքեր պարբերաբար վաճառքի են հանում տասնյակ և հարյուր հազարավոր դոլարներ արժեցող հայկական տներ¹²⁴⁷, եկեղեցիներ¹²⁴⁸, հայկական արվեստի նմուշներ¹²⁴⁹, որոնք նրանց համար դարձել են հարստության աղբյուր: Այս ամենը վկայող մեկ ուշագրավ փաստ էլ վերաբերում է Իզմիրի գավառին: Անշարժ գույքի վաճառքով զբաղվող թուրքական ամենախոշոր կայքում 2017 թ. վաճառքի է հանվել 110 տարվա հայկական ձեռագործ գորգ, որը հայտնաբերվել է Թուրքիայի Իզմիր նահանգում: Գորգի արժեքը գնահատվել է 50.000 ԱՄՆ դոլար¹²⁵⁰:

¹²⁴⁶ Ինչպե՞ս գտնել հայերի գանձերը. թուրքերը տեսաուղեցույց են ստեղծել, <https://news.am/arm/news/188715.html>.

¹²⁴⁷ Թուրքիայում վաճառվող հողատարածքը հայտարարության մեջ նշված է որպես հին հայկական բնակավայր, <http://akunq.net/am/?p=41103>.

¹²⁴⁸ Բուրսայի հայկական եկեղեցին 1.5 մլն դոլարով վաճառքի է հանվել, <http://www.karabakh-open.info/hy/societiam/15192-am101177>.

¹²⁴⁹ Թուրքիայում հին հայկական գորգեր են հանվել վաճառքի, գինը՝ 150 հազար ԱՄՆ դոլար, <https://www.yerkir.am/news/view/186784.html>

¹²⁵⁰ Թուրքիայում 110 տարվա հայկական գորգ է վաճառքի հանվել 50.000 դոլարով, <http://hayatsk.info/news/25847>.

3.ԱՅՆԹԱՊԻ ՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ. 1915 Թ. ԲՆԱԶՆՁՈՒՄԸ ԵՎ ՈՒՆԵԶՐԿՈՒՄԸ

3.1.Այնթապը Հալեպի նահանգի վարչական բաժանումներում և նրա ժողովրդագրական պատկերը

Օսմանյան նվաճումից հետո Կիլիկիան, ենթարկվելով բազմաթիվ վարչական բաժանումների, XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին բաժանվում է Ադանայի և Հալեպի նահանգների միջև: Պատմական Կիլիկիայի հիմնական մասը ընդգրկվեց Ադանայի, իսկ հարավ-արևելյան հատվածը՝ Հալեպի նահանգի կազմում: XIX դարի վերջին Ադանայի նահանգն իր չորս գավառներով ամբողջապես ընդգրկում էին պատմական Կիլիկիայի տարածքները, իսկ Հալեպի նահանգի որոշ գավառներ, ինչպես, օրինակ, Անտիոքը, Ալեքսանդրեթը, և այլն, դուրս էին պատմական Կիլիկիայի սահմաններից: Չնայած դրան, Հալեպի նահանգը եկեղեցական-վարչական առումով գտնվում էր Սսի կաթողիկոսության իրավասության ներքո, և տվյալ ժամանակահատվածի վարչական բաժանումով, տնտեսական ու ազգագրական պայմաններով կապված էր Կիլիկիայի հետ¹²⁵¹:

Հալեպի նահանգի սահմանները հյուսիսից եզերում էին Մեքաստիայի, Խարբերդի և Տիգրանակերտի նահանգները, արևելքից՝ Զորի գավառը, հարավից՝ Դամասկոսի նահանգը, իսկ արևմուտքից՝ Բեյրութի և Ադանայի նահանգները և Միջերկրական ծովը: Հալեպի նահանգի հյուսիսային և արևմտյան կողմերը լեռնային են՝ Կիլիկյան Տավրոսի և Ամանոսի շղթաները, արևելյան ու հարավային կողմերը՝ դաշտային¹²⁵²:

¹²⁵¹ Առաքելեան Հ., Զեյթուն: Տեղագրական, ազգագրական եւ վարչական տեսություն, Թիֆլիզ, տպ. Յ. Մարտիրոսեանցի, 1896, էջ 36:

¹²⁵² «Կոչնակ», Նիւ Յորք, 1916, թիւ 28, 8 հուլիս, էջ 725:

Հալեպի նահանգի անտառները լի էին կաղնու և սոսու ծառերով, հաստաբուն ընկուզենիներով, որոնց հատումից ու մշակումից հետո պատրաստի նյութերն արտահանվում էին շրջակա գավառներ՝ բերելով մեծ եկամուտներ: Նահանգի կազմում գտնվող լեռնադաշտերը հնարվարություն էին տալիս զբաղվել խաշնարածությամբ ու անասնապահությամբ: Հալեպի նահանգը հայտնի էր նաև երկաթի հանքերով և երկաթագործությամբ, ընդ որում, այս ոլորտն ամբողջովին գտնվում էր հայերի ձեռքին: Հաղորդակցության ուղիների ոչ բարվոք վիճակը նպաստում էր Հալեպի նահանգի բնակչության որոշակի մեկուսացվածությանը, ինչի արդյունքում զարգանում են ձեռքի բանվածքները¹²⁵³:

Օսմանյան կայսրության վարչական բաժանումների հետևանքով Այնթապի գավառը ներառված էր Հալեպի նահանգում՝ սկզբում հանդիսանալով Հալեպի գավառի գավառակ, իսկ ավելի ուշ՝ նահանգի առանձին գավառ: XIX դարի վերջին, Հ. Առաքելյանի տեղեկությունների համաձայն, Հալեպի նահանգը վարչականորեն բաժանվում է 3 գավառի, 22 գավառակի և 24 գյուղախմբի՝

1. Հալեպի գավառի գավառակներն էին՝ Հալեպ, Այնթապ, Քիլիս, Բեյլան, Ալեքսանդրետ, Անտիոք, Հարեմ, Ջիզր-Շուր, Իդլիբ, Մաարա-Նուման, Բահ-Ջեբուլ, Մեմրիջ, Բեկկա:

2. Ուրֆայի գավառի գավառակներն էին՝ Ուրֆա, Ռուս-Կալե (Հռումկլա), Սուրուճ, Բիլեջիկ:

3. Մարաշի գավառի գավառակներն էին՝ Մարաշ, Ալբիստան, Ջեյթուն, Անդերին, Բազարջիկ¹²⁵⁴:

1914 թ. վարչական փոփոխություններից հետո Հալեպի նահանգը բաժանվում է չորս գավառի, որոնցից մեկն ինքնավար էր և ուներ ինքնակառավարման որոշ դրսևորումներ:

¹²⁵³ Սիմոնյան Հ., Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ), Եր., ԵՊՀ հրատ., 2009, էջ 26-27:

¹²⁵⁴ Առաքելյան Հ., նշվ. աշխ., էջ 35-36:

1. **Հալեպի գավառի** գավառակներն էին՝ Հալեպ, Իսկենդերուն (Ալեքսանդրեթ), Իդլիբ, Անթաքիա (Անտիոք), Բաբ, Բեյլան, Չիսրի-շուղուր, Հարեմ:

2. **Ջեբելիսեմանի գավառի** գավառակներն էին՝ Ջեբելիսեման, Մաարաթալնաման, Մյունքիջ:

3. **Այնթապի գավառի** գավառակներն էին՝ Այնթապ (Անթեպ), Քիլիս, Ռումկալե (Հռոմկլա):

4. **Մարաշի ինքնավար գավառի** գավառակներն էին՝ Մարաշ, Փազարջիկ Ալբիստան, Ջեյթուն, Գյոքսուն (Կոկիսուն)¹²⁵⁵:

Այնթապի քարտեզը*



1894 թ. Պետերբուրգում հրատարակված «Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ» գրքի համաձայն, Այնթապը

¹²⁵⁵ Karpat K., Ottoman Population: 1830-1914, Demographic and Social Characteristics, London, The University of Wisconsin Press, 1985, p. 176,186:

* Ընդարձակ քարտեզ Օսմանյան պետութեան, Կ.Պոլիս, հրատարակության թվականն անհայտ է: Ծրագրեց Ա. Պիպեռճեանը, գծագրեց Յ. Փափագեանը:

Հալեպի նահանգին ենթակա գավառակ էր, ուներ 346 գյուղ և 87 000 բնակիչ: Այնթապ քաղաքի դիրքը լեռնադաշտային է, ծովի մակերեսից բարձր է 2500 մ, գտնվում է Մարաշի և Հալեպի միջև: XIX դարի վերջին Հալեպից Այնթապ կառուցվում էր 150 կմ երկաթուղամբ ճանապարհ¹²⁵⁶: Ս. Էփրիկյանի տեղեկությունների համաձայն, Այնթապը Հալեպի նահանգի համանուն գավառի գլխավոր քաղաքն է, գտնվում է Մարաշի և Հալեպի միջև դեպի արևելք, առաջինից գտնվում է 18, իսկ երկրորդից՝ 24 ժամվա ճանապարհի հեռավորության վրա: 1900-ականների սկզբին ունեցել է նորաշեն կառքի ճանապարհ մինչև Հալեպ, որի երկարությունն է 150 հազար մետր էր¹²⁵⁷:

1901 թ. հրապարակված «Առաջնորդ Վաճառականաց կամ Տարերք Առևտրական գիտութեան» աշխատանքում նշվում է, որ Հալեպի նահանգի Այնթապ գավառն ուներ 8 գյուղախումբ և 202 գյուղ¹²⁵⁸: 1907 թ. Կ. Պոլսի «Բյուրակն» թերթում Այնթապը նշվում է Հալեպի նահանգի Այնթապի *սանջաք*ում (գավառ) որպես *քազա* (գավառակ), ուներ 8 *նահիյե* (գյուղախումբ)՝ Օրել, Հեզեք, Ճիյտե, Գըզըլիխար, Քըզըք, Չարբըն, Թեպչար, Բեչ և 202 գյուղ¹²⁵⁹:

Օտար և հայկական աղբյուրներում Այնթապը հիշատակվում է 12-րդ դարից սկսած որպես «Մեծն, անուանի և անառիկ Անթապ»: Քաղաքի հայ ազգաբնակչության կորիզը կազմել է 1064 թ. Անիի գրավումից հետո Կարինի նահանգի Անթեպ համանուն գավառից գաղթած հայությունը: Հետագայում առևտրական նպատակներով այնտեղ հաստատվել են Արևմտյան Հայաստանի տարբեր բնակավայրերից և Պարսկաստանից գաղթած հայերի նոր խմբեր: Այնթա-

¹²⁵⁶ Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ, Պետերբուրգ, տպ. Ի. Լիբերմանի, 1894, էջ 353:

¹²⁵⁷ Էփրիկեան Հ. Ս., Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, հ. 1, գ. Ա, երկրորդ տպագրություն, Վենետիկ, Ս. Ղազար, 1903, էջ 144:

¹²⁵⁸ Չեօկէքճեան Ս., Առաջնորդ Վաճառականաց կամ Տարերք Առևտրական գիտութեան, հ, Բ, Կ. Պոլիս, տպագր. Նշան Կ. Պերպերեան, 1901, էջ 13:

¹²⁵⁹ «Բիւրակն», Կ. Պոլիս, թիւ 17-18, 1907, 24 փետրուար, էջ 101:

պի հայությունն ուներ իր գավառաբարբառը: 1600-ական թթ. սկսած կազմակերպում է իր կրոնական-եկեղեցական-ազգային կյանքը, որպես համայնք: Հիմնադրվում է եկեղեցի, գրվում են բազմաթիվ արժեքավոր ձեռագրեր, կար թեմակալ առաջնորդ: Այնթապի հայ բարձրաստիճան հոգևորականներից ոմանք դառնում են կաթողիկոսներ. Հովհաննես Դ կաթողիկոսը (1602-1621)՝ Կիլիկիո, Բաբկեն Ա աթոռակից կաթողիկոսը՝ Անթիլիասի կիլիկյան Աթոռի (1931-1936), իսկ Եղիազար Այնթապցին (1682-1691), Պետրոս Քյոթյուրը (1748-1749)՝ ս. Էջմիածնի¹²⁶⁰:

Այնթապ քաղաքը կառուցված էր երեք բլուրների վրա, շրջապատված էր այգիներով ու ծառաստաններով: Նահանգում Այնթապն իր շքեղությամբ և տնտեսական զարգացմամբ զիջում էր միայն Հալեպին, իսկ կլիմայի տեսակետից Հալեպից ավելի նպաստավոր էր: Քաղաքի մոտ կային բազմաթիվ քարհանքեր, հիշատակվում է Չարփըն գյուղի կարմիր քարհանքը¹²⁶¹:

Քաղաքի ջրամատակարարումը ապահովված է հատուկ ջրմուղով, ջուրը բերված էր Սաջուր գետի աղբյուրից, որը գտնվում էր դեպի արևմուտք 3 ժամվա ճանապարհի հեռավորության վրա: Սաջուր գետը ձևավորվում է Օսնա-օն-տերե և Ղարդայ-չայ գետակներից, անցնում է Այնթապի արևելյան կողմից և մի հատվածում կոչվում է Այնթափի ջուր, ապա առաջանալով՝ թափվում է Եփրատ գետը: Բացի վերոհիշյալ գետից, գավառակի մեջ կան նաև ուրիշ մի քանի գետակներ, իսկ լեռներից նշանավոր են Գարապըլըզը գյուղի սարերը¹²⁶²: «Հայաստանի Կոչնակ» թերթը, նշելով Այնթապ քաղաքի առավելությունները, հատկապես առանձնացնում է. «առողջ կլիմայ, ընտիր ջուր, բանուկ առեստուր եւ հոծ

¹²⁶⁰ Հատիտյան Ա., Հայ Այնթապը և իր հերոսամարտը, «Էջմիածին», Էջմիածին, 1970, Գ., էջ 21:

¹²⁶¹ Գուտուլեան Գ., Կիլիկեան Աշխարհագրութիւն պատկերագարդ եւ քարտի-սաւոր, Կ. Պոլիս, տպագ. Պ. Պալըքճեան, 1922, էջ 59:

¹²⁶² Էփրիկեան Հ. Ս., նշվ. աշխ., էջ 144:

հայություն¹²⁶³» բնորոշումները: Այնթապում հայերը միննույն թաղամասում չէին կենտրոնացած, հիմնական հայաբնակ թաղերը գտնվում էին Ս. Աստվածածին եկեղեցու շուրջ՝ Հայիկ, Սողանլը, Պուճաղը, Թեփե Պաշը, Էպլահան, Գայաճըգ, Գասթել Պաշը, սակայն նկատելի թվով հայեր կային նաև քաղաքի Բահան Սոքաղը, Քյուրտ Թեփե, Թապագխասնե և այլ մասերում¹²⁶⁴:

1850 թ. Վիկտոր Լանգուլայի Սսի կաթողիկոսության իրավասության տակ գտնվող հայերի թվի մասին հաղորդած տեղեկությունների համաձայն Այնթապի հայությունը 1300 տուն էր¹²⁶⁵: 1884 թ. «Արևելյան մամուլ» թերթը հաղորդում է, որ Այնթապն ուներ 4000 բնակիչ, որից 8000 հայ լուսավորչական էր, 3000 հայ բողոքական և կային որոշ թվով կաթոլիկ ու անգլիկանական հայեր¹²⁶⁶: 1887 թ. «Արաքս» պարբերականը Այնթապ քաղաքում նշում է 13000 հայ¹²⁶⁷:

XIX դարի երկրորդ կեսին Այնթապում նշվում էր 43000 բնակիչ՝ 6500 տուն, որից 16900-ը հայ, 3500 հայ բողոքական և 400 հայ կաթոլիկ: Կաթոլիկ հայերը կազմում էին փոքրաթիվ համայնք, ունեին եկեղեցի, դպրոց և Ֆրանչիսկյանների վանքը: Բողոքական հայերի թիվը 4000 էր, ունեին երեք եկեղեցի և ութ վարժարան¹²⁶⁸: Նույն ժամանակահատվածի համար Հ. Խանջյանը Այնթապի բնակչության թիվը նույնպես 43000 է նշում¹²⁶⁹: XIX դարի վերջին Այնթապի 43000 բնակչից 16500 հայեր էին, 857 հրեա, մնացածը՝ արաբ ու

¹²⁶³ Քիւրքճեան Վ. Ս., Ազգային Յուշեր, Կիլիկիոյ Գիշերօթիկ վարժարանը, «Հայաստանի Կոչնակ», 1928, թիւ 6, Փետրուար 11, էջ 173:

¹²⁶⁴ Պատմութիւն Անթէպի Հայոց, աշխատասիրեց ու խմբագրեց Սարաֆեան Գ., Ա. հատոր, Լոս Անճելըս, 1953, էջ 737:

¹²⁶⁵ Առաքելեան Հ., նշվ. աշխ., էջ 46:

¹²⁶⁶ «Արևելյան Մամուլ», Զմյուռնիա, 1884, թիւ 6, Յունիս, էջ 319:

¹²⁶⁷ «Արաքս», Ս. Պետերբուրգ, 1887, Գիրք Ա., Նոյեմբեր, էջ 85:

¹²⁶⁸ Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ, էջ 356-358:

¹²⁶⁹ Խանճեան Հ. Ս., Պատկերազարդ Նոր Աշխարհագրութիւն, Բ. Մաս Աշխարհագրութիւն Օսմանեան կայսրութեան, Կ. Պոլիս, տպ. Յ. Մատթէոսեան, 1900, էջ 90:

թուրք, կային նաև Հալեպից գաղթած սակավաթիվ հույներ, ասորիներ և մարոնիներ: Հայերը կրոնական երեք բաժանումներ ունեին՝ լուսավորչական, բողոքական և կաթոլիկ: Հայ լուսավորչականները 12000 էին՝ 2400 տուն, բողոքականները՝ 4000, իսկ կաթոլիկները՝ մոտ 400-500¹²⁷⁰: Խ. Պողարյանի ժողովրդագրության համաձայն, 1899 թ. Այնթապի ընդհանուր բնակչությունը 55000 էր, որից մուսուլմանները կազմում էին 36000 մարդ, քրիստոնյաները՝ 18000, հրեաները՝ 1000: 1913 թ. Բաբկեն եպիսկոպոսը նշում է 4000 տուն հայ¹²⁷¹:

1914 թ. օսմանյան մարդահամարի համաձայն, Այնթապի գավառակում կար 19494 հայ, որից 14466 լուսավորչական, 393 կաթոլիկ և 4635 բողոքական, նշվում էր նաև, որ նրանց մեծագույն մասը գավառակի կենտրոնական քաղաքում էր բնակվում¹²⁷²:

2005 թ. Թուրքիայի Գլխավոր շտաբի Անկարայի արխիվի հրապարակված փաստաթղթերի առաջին հատորում ներկայացվում է Հալեպի նահանգի և Այնթապի գավառի հայության հետևյալ պատկերը. ըստ որի՝ 1914 թ. պաշտոնական տվյալներով հայերի թիվը Հալեպի նահանգում 40843 էր¹²⁷³: Նույն թվականին տարբեր ազգությունների պաշտոնական վիճակագրությունների տվյալներով Հալեպի նահանգում ապրում էր 86085 հայ բնակչություն¹²⁷⁴: Նույն գրքի մեկ այլ աղյուսակում Այնթապի գավառում կաթոլիկները նշված են՝ 7662 տղամարդ, 6445 կին, որոնցից 201 կաթոլիկ հայ տղամարդ և 187 կին, ընդհանուր թվով նշված են նաև բողոքականները՝ 2316 տղամարդ, 2228 կին¹²⁷⁵: Թուրքական պաշտոնական

¹²⁷⁰ Էփրիկեան Հ. Ս., նշվ. աշխ., էջ 145:

¹²⁷¹ Պողարեան Գ., Այնթապցիներուն թիվը, «Հայ Անթեպ», Պեյրուք, 1967, թիւ 1 (25), էջ 6-7:

¹²⁷² Köker O., 100 yıl önce Türkiye'de Ermeniler, İstanbul, Birzamanlar yayıncılık, 2005, s. 267.

¹²⁷³ Arşiv Belgeleriyle Ermeni Faaliyetleri 1914-1918, Cilt I (1914-1915), Genelkurmay Başkanlığı, Ankara, 2005, s. 605.

¹²⁷⁴ Նույն տեղում, էջ 609:

¹²⁷⁵ Նույն տեղում, էջ 655:

վիճակագրությունը մշտապես հակված է եղել Արևմտյան Հայաստանի նահանգներում, Կիլիկիայում, ինչպես նաև կայսրության այլ հատվածներում բնակվող հայերի թվաքանակը հնարավորինս նվազ ներկայացնել և այս առումով Թուրքիայի Գլխավոր շտաբի Անկարայի արխիվի հրապարակված փաստաթղթերի ժողովածուն ամեննին էլ բացառություն չի կազմում: Այսօր ևս շարունակաբար հրատարակվող թուրքական արխիվային փաստաթղթերի ժողովածուները ներկայացնում են հայերի իրական թվաքանակը աղճատող, ժողովրդագրական պատկերը խեղաթյուրող տեղեկություններ, որոնց միակ նպատակը պետական ժխտողական քաղաքականությունը հիմնավորելն է:

Մ. Օրմանյանը նշում է, որ Այնթապը եպիսկոպոսական վիճակ էր, որի ենթակայության ներքո են Այնթապ ու Քիլիս քաղաքները, որտեղ գործում էր վեց եկեղեցի: Հայ բնակչության վերաբերյալ ներկայացնում է հետևյալ թվերը՝ առաքելական 30000, կաթոլիկ 1000, բողոքական 4000¹²⁷⁶:

Համաձայն Հայոց պատրիարքարանի (1913 թ. փետրվար-1915 թ. օգոստոս) մարդահամարի տվյալների, Այնթապում կար 36448 հայ, 8 եկեղեցի, 25 դպրոց և 5000 աշակերտ¹²⁷⁷: Մեկ այլ աղբյուրի համաձայն, Առաջին աշխարհամարտի նախաշեմին Այնթապի գավառում հաշվվում էր 30825 հայ¹²⁷⁸:

1914 թ. դրությամբ Այնթապի գավառակում ապրում էր 36448 հայ: Այնթապ քաղաքի ընդհանուր բնակչությունը 80000 էր, որոնցից 36000 հայեր էին¹²⁷⁹: «Էջմիածին» ամսագիրը նշում է, որ մինչև 1915 թ. Այնթապի հայությունը 30000 էր, իսկ 1918 թ. արքունից

¹²⁷⁶ Օրմանեան Մ. Արքեպիս., Հայոց եկեղեցին, երկրորդ տպ., Կոստանդնուպոլիս, հրատ. Վ. և Ն. Տէր-Ներսէսեան, 1912, էջ 208:

¹²⁷⁷ Kevorkian R. H., Paboudjian P. B., 1915 Öncesinde Osmanlı İmparatorluğu'nda Ermeniler, İstanbul, Aras, 2012, s. 63.

¹²⁷⁸ Karayan S. Y., Armenians in Ottoman Turkey, 1914 A Geographic and Demographic Gazetteer, London, 2018, p. 115.

¹²⁷⁹ Kevorkian R. H., Paboudjian P. B., նշվ. աշխ., էջ 323-324:

վերադարձել էր 17000 մարդ¹²⁸⁰: 1915 թ. հուլիսի 31-ին Կայսերական գերմանական հյուպատոսություն ուղարկված հաղորդագրություններից մեկում Հալեպում հյուպատոս Ռյուսլերն Այնթապի հայ բնակչության թիվը նշվում է 38000, ապա հավելում, որ նրանք կարևոր տարր էին տարածքի տնտեսական կյանքի համար¹²⁸¹:

Մեկ այլ աղբյուր 1915 թ. դրությամբ Այնթապում հայերի թվաքանակի վերաբերյալ ավելի նվազ տվյալ է ներկայացնում, նշելով միջին թվով մոտ 400 ծուխ, ինչից ելնելով եզրակացվում է, որ հայ առաքելականների թիվը 22500-ից ավելի չէր, բողոքականները հաշվվում էին՝ 6500, կաթոլիկները՝ 1000, ընդհանուր՝ 30000 հայ¹²⁸²: Քաղաքի բնակչության հիմնական մասը բաղկացած էր մուսուլմաններից, հատկապես թուրքերից, կար մոտ 1500 հրեա և սակավաթիվ արաբախոս կաթոլիկներ՝ հույն, ասորի, մարոնի: Քաղաքի արևմտյան մասը, որ ավելի բարձր էր, շեն ու մաքուր, պատկանում էր հայ բնակչությանը: Տեղահանությունից առաջ հայ ժողովուրդը բաժանալված էր երեք կրոնական հատվածների՝ լուսավորչական, բողոքական և կաթոլիկ, հետևյալ տոկոսային հարաբերակցությամբ՝ 70 %, 28 %, 2 %: Ֆրանչիսկյաններն ունեին եկեղեցի և վարժարան՝ 30-40 աշակերտներով: Տեղահանությունից հետո հայ բնակչության միայն ¼ էր մնացել տեղում, իսկ Մուղրոսի զինադադարից հետո հայերի թիվը հասավ 25000, որոնց թվում նաև գաղթականներ էին՝ առավելապես Մեքսաստիայից, Կյուրինից և Խարբերդից¹²⁸³:

¹²⁸⁰ Հատիտյան Ա., Հայ Այնթապը և իր հերոսամարտը, «Էջմիածին», Էջմիածին, 1970, Գ., էջ 24:

¹²⁸¹ Հայոց ցեղասպանությունը Գերմանիայի դիվանագետների հաղորդագրություններում (1915-1918 թթ.), ըստ կայսերական Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի վավերագրերի, կազմող և առաջաբանի հեղինակ՝ Վ. Ա. Միքայելյան, Եր., ՀՅԹԻ, 2004, էջ 53:

¹²⁸² Պողարեան Գ., Այնթապցիներու թիվը, «Հայ Անթէպ», Պէրույթ, 1967, թիւ 1 (25), էջ 7:

¹²⁸³ Բակուրյան, Այնթապ եւ շրջակայքը, «Կոչնակ Հայաստանի», Նիւ-Եօրք, 1920, թիւ 25, Յունիս 19, էջ 793:

Այսպիսով, Առաջին աշխարհամարտում Օսմանյան կայսրության պարտությունից և 1918 թ. Մուդրոսի զինադադարի ստորագրումից հետո Կիլիկիա վերադարձավ աքսորյալ հայության որոշ մասը, որոնց թվում էին ոչ միայն Ադանայի նահանգի կամ Մարաշի, Այնթապի և Ուրֆայի գավառների նախկին հայ բնակիչները, այլև Արևմտյան Հայաստանի և կայսրության հայաբնակ այլ վայրերից բռնագաղթյալներ: Այս համգամանքը պետք է հաշվի առնվի պատերազմից հետո Կիլիկիայի հայ բնակչության թիվը ներկայացնելիս, հակառակ պարագայում կարող է թյուր տպավորություն ստեղծվել, թե հայ բնակչության թվաքանակի փոփոխություն, հետևաբար՝ նաև Կիլիկիայում հայերի կոտորածներ տեղի չեն ունեցել:

3.2. Այնթապի հայերի տնտեսական վիճակը

XIX դարի երկրորդ կեսին Այնթապը, որպես Հալեպի նահանգի կենտրոն Հալեպից հետո երկրորդ խոշոր առևտրային քաղաքն էր: Նահանգում հիմնական առևտրաշրջանառությունը կատարվում էր Այնթապի ու Հալեպի միջև, թեև բավականին լուրջ գործարքներ կային արդեն Բեյրութի, Ջմյունիայի, Ալեքսանդրիայի, Կ. Պոլսի և այլ քաղաքների հետ, ինչպես նաև շարունակաբար հաստատվում էին առևտրային նոր կապեր ու հարաբերություններ:

XIX դարի վերջին Այնթապից գլխավորապես արտահանվում էր հացահատիկ, չամիչ, խաղող, խաղողի տնկի (մատ) գլխտոր¹²⁸⁴,

¹²⁸⁴ Փոքր ընկույզի մեծությամբ պինդ նյութ է, որն առաջ է գալիս մի քանի բույսերի և մանավանդ կաղնու տերևների վրա՝ մունի (cynips) խայթվածքից, որն այնտեղ ձու է դնում: Բույսից դեպի խայթված տեղը հոսող հյութերն են, որ պնդանալով կազմում են գոթորք: Գոթորքից ստացվում է ընտիր սև ներկ, որը գործածվում էր թանաք պատրաստելու համար: Տե՛ս Մալխասեանց Ս., Հայերեն բացատրական բառարան, Երեւան, 1944, էջ 474:

սակամոնի¹²⁸⁵, այծի մագ, այծի կաշվի մարոկենի¹²⁸⁶, մարագորեն, օճառախոտ, սիսեռ, բամբակ, բուրդ, մեծ քանակությամբ կտավեղեն՝ մանուսա¹²⁸⁷, կաշեգործ իրեր և այլն: Մեծ համարում ունեւր Այնթապից արտահանվող օղին, որը սպառվում էր կայսրության բոլոր զավառներում¹²⁸⁸: Ծխախոտի արդյունաբերությունն և արտահանությունը նույնպես առաջնային դիրքերում էր: 1890 թ. Այնթապում արտադրվում էր 142147 քաշ ծխախոտ, մինչդեռ Հալեպի նահանգի ամբողջ արտադրանքը կազմում էր 218861 քաշ¹²⁸⁹:

Վաճառականությունը նույնպես առաջատար դիրքերում էր, գլխավոր արհեստներն էին ատաղձագործությունը, կաշեգործությունը, կոշկակարությունը ներկարարությունը, ոսկերչությունը, որմնադիրությունը: Այնթապում արտադրվող կերպասը՝ մանուսան, տեղական վաճառականության ամենամեծ եկամտի աղբյուրն էր: Տեղական սպառումից բացի արտահանվում էր Բաղեշ, Վան, Տիգրանակերտ, Կարին, Խարբերդ և կայսրության եվրոպական շրջաններ: Պիստակը՝ առավել հայտնի էր «շամ ֆըստըդը» անվամբ, մեծ քանակությամբ ուղարկվում էր Եվրոպա, դեղին կաշին՝ Եգիպտոս և այլն¹²⁹⁰:

XIX դարի վերջին Կիլիկիայում արտադրվող ապրանքներին և ցանքատեսակներին է անդրադառնում նաև Պետերբուրգի «Արաքս» պարբերականը, հատկապես առանձնացնելով մեծ ծավալների հասնող ատաղձագործությունը¹²⁹¹: Պարբերականի մեկ այլ համարում ներկայացվում է՝ Այնթապում աճող ցորենի, գարու,

¹²⁸⁵ Սակամոնի - սակամոնի, հովանոցավորների կարգին պատկանող խոտ, որից ստացվող կաթից կամ խեժից պատրաստում էին նույնանուն դեղը:

¹²⁸⁶ Մարոկենի - այծի մորթուց պատրաստված կաշի՝ գրակազմության համար:

¹²⁸⁷ Մանուսա - բամբակե զովավոր կտոր, որի անունը ստացել է Փոքր Ասիայի Մանիսի քաղաքից: Մալխասեանց Ս., նշվ. աշխ., էջ 255:

¹²⁸⁸ Էփրիկեան Հ. Ս., նշվ. աշխ., էջ 145:

¹²⁸⁹ Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ, էջ 356:

¹²⁹⁰ Վարդ, Այնթապ քաղաք, «Արաքս», Ս. Պետերբուրգ, 1888, Գիրք Բ., Մայիս, էջ 58:

¹²⁹¹ Նույն տեղում, 1887, Գիրք Ա., Նոյեմբեր, էջ 83:

կորեկի, սիսեռի, ոսպի, եգիպտացորենի արտերը, ընկույզի այգիները, չափազանց առատ խաղողի լավագույն տեսակները և չամիչի արտադրությունը¹²⁹²:

Այնթապի և Բում Կալեի միջև գտնվող լեռնային հողամասն ամբողջությամբ պիստակի այգիներ էին, այս հողամասը արտադրում է կայսրության արտադրած ամբողջ պիստակի քանակի 9/10-ը տարեկան՝ զուտ հասույթը կազմում էր մոտավորապես 150000 ոսկի: Այս կալվածքների 1/4-ը պատկանում էր հայերին, 1/4-ը՝ քրդերին, 1/4 -ը՝ եզդիներին և 1/4 -ը՝ թուրքերին: Թուրք հողատերի հողերը գտնվում էին Գազայի հարավային դաշտավայրում (Թըլլպաշարի գյուղախումբ), իսկ հայերին պատկանող հողերը հարավից՝ առավել մոտակա և արևելքից, արևմուտքից, հյուսիսից երիզող գյուղերում են. «ուր կը տիրէ պարտիզպանութեան, այգեգործութեան և պիստակի՝ համեմատաբար ասելի զարգացած մշակութիւնը: Բուն Այնթապ ասանի հովտին հողերուն մեծագոյն մասը հայերուն կը վերաբերի»¹²⁹³:

XIX դարավերջին քաղաքում կար 13 բաղնիք, 4 բեդեսթեն¹²⁹⁴, 31 խան, 30 փուռ, 45 ներկատուն և կաշվի գործարան, 11 ջրաղաց, 8 զինետուն, 5 օճառի գործարան, 2300 խանութ և 3800 մանուսայագործների և ջուլհակների դագախ¹²⁹⁵: XIX դարի երկրորդ կեսին հիմնականում վաճառականությամբ և արհեստագործությամբ զբաղվող Այնթապի բնակչության մեծ մասը մանուսայագործ էր: Երկրորդ տեղում էր կաշեգործությունը: Արտադրված իրերը լայն սպառում ունեին Հալեպում, Եգիպտոսում և այլուր: Քաղաքն ուներ ընդարձակ և պտղաբեր այգիներ, լայն հնարավորություններ

¹²⁹² Նույն տեղում, 1888, Գիրք Բ., էջ 57:

¹²⁹³ Պաղտոեան Ն., Այնթապի լեռնագավառի մասին, Հալեպ, 18.6.19, էջ 8-9 (ձեռագիր): Բնագիրը տե՛ս՝ Փարիզի Նուբարյան գրադարան, Անտոնյանի հավաքածու, թղթածրար թիվ 4, Այնթապ, 0023-0024:

¹²⁹⁴ Bedesten (թրք.) - ընդարձակ փակ շուկա :

¹²⁹⁵ Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ, էջ 356:

կային նաև շերամաբուծության զարգացման համար¹²⁹⁶: 1900-ական թթ. քաղաքի շրջակայքում թթենիների տունկ է ձեռնարկվում, 1908 թ. առաջին կեսին 30-35 տուփ հունտ էր սպառվում¹²⁹⁷:

XX դարասկզբին ևս մանուսայգործությունը և կաշեգործությունը շարունակում էր մնալ առաջնային դիրքերում, քաղաքի բնակչության գրեթե 3/8-ը զբաղվում էր այս երկու արհեստներով: 1908 թ. «Բյուրակն» թերթի տվյալներով կար մոտ 150 վարպետ մանուսայագործ, շաբաթական միջին հաշվով արտադրվում էր 1600 լիրա արժողությամբ 2600 ծրար մանած: Քաղաքում կար երկու մեծ շուկա և 3000 դագգահ: Մանուսայագործության հետ մեկտեղ զարգանում էր ներկարարությունը, բարելավվում էր ներկերի, հատկապես՝ կարմիր և մանուշակագույն գույների որակն ու կայունությունը, ինչի հետևանքով նվազում էր եվրոպական ներկի ներկրումը¹²⁹⁸: Թերթի այլ համարում նշվում է, նաև որ այնթապցիներն անգլիական 20 համարի թելից ծաղկավոր և գույնզգույն կտավ էին պատրաստում, որը կոչում էին ալաճա¹²⁹⁹: Արհեստավորներն իրենք էին պատրաստում ներկը, որը չէր թափվում և տոկուն էր, արտադրանքը լայն պահանջարկ ուներ¹³⁰⁰:

«Բյուրակն» առևտրային թերթի հավաստմամբ, XX դարասկզբին Այնթապը նահանգի նավահանգիստ Ալեքսանդրետի միջոցով արդեն ուղղակի հաղորդակցվում էր Զմյուռնիայի, Բեյրութի և Կ. Պոլսի առևտրային հրապարակների հետ: Այնթապում որոշ արհեստներ բարձր զարգացման էին հասել՝ հյուսվածքների, անուշեղենի արտադրությունը, օձառաշիներությունը, կոշկակարությունը, զինեգործությունը, գորգագործությունը և այլն: Այնթապից մեծ

¹²⁹⁶ Պողոսեան Հ. Ե., Նոթեր Այնթապի մասին, «Հայ Անթեպ», Պեյրուք, 1963, թիվ 2 (10), էջ 41:

¹²⁹⁷ Ճարտարարուեստակ Յառաջադիմութիւնը Այնթապի մէջ, «Բիւրակն», Կ. Պոլիս, 1908, թիւ 27, 28 յուլիս, էջ 859:

¹²⁹⁸ Նույն տեղում, էջ 858:

¹²⁹⁹ Alaca (թրք.) – գույնզգույն, խայտաբղետ :

¹³⁰⁰ «Բիւրակն», Կ. Պոլիս, 1908, թիւ 18, 26 ապրիլ, էջ 552:

քանակությամբ արտահանվում էր ալաճա, կաշի, չիր և պիստակ: Վերջինս արտահանվում էր 22-25000 օսմ. ոսկու, իսկ սև չամիչը առավել նվազ ճափերով¹³⁰¹: Նույն թերթի մեկ այլ համարում ևս առանձնացվում է Այնթապից և շրջակա գյուղերից պիստակի արտահանության մասին տեղեկությունը¹³⁰²: Գ. Գուտուլյանը նույնպես առանձնացնում է Այնթապի ընդեղենը, չամիչը, ռուփը, գլխոտը, ճեհրին, սակամոնին, բուրդը, այծի մազը, ալաճա, սումախը՝ նշելով, որ տեղական արտադրանքներից էր բարձրորակ մանուսան և սեկը, կաշվե ապրանքները և պղնձեղենը, նշանավոր էր Այնթապի օղին և ձեթը, առաջընթաց էր ապրել ջուլիակությունը, օճառագործությունը և ժանեկագործությունը¹³⁰³: Նույն տեղեկությունն է հաղորդում նաև Նյու-Յորքում հրատարակվող «Կոչնակ Հայաստանի» թերթն իր «Այնթապ եւ շրջակայքը» հոդվածում¹³⁰⁴:

Այնթապը հիմնականում ներմուծում էր սուրճ, շաքար, նավթ, երկաթեղեն, պղինձ, անագ, ապակի, մետաքսեղեն և այլն: Կտավագործության համար մեծ պահանջարկ ունեւր և զգալի քանակով ներմուծվում էր սպիտակ, կարմիր, ինչպես նաև այլ գույների բամբակյա թել¹³⁰⁵:

XX դարի սկզբին Այնթապում 87 հայ վաճառական կար, որոնցից 57-ը գործում էին խաների գրասենյակներում, իսկ 30-ը վաճառատների սեփականատերեր էին: Նրանց մեջ կային մեծաքանակ կերպասեղենի, մանածի, կաշվի, սուրճի, շաքարի, մետաղների, բամբակի, յուղի, օճառի, դեղորայքի, գորգի առևտրականներ: Քաղաքի արհեստավորների երեք քառորդից ավելին հայեր էին¹³⁰⁶:

¹³⁰¹ Նույն տեղում, 1907, թիւ 17-18, 24 փետրուար, էջ 101:

¹³⁰² Նույն տեղում, 1906, թիւ 26, 22 յուլիս, էջ 622:

¹³⁰³ Գուտուլեան Գ., նշվ. աշխ., էջ 60:

¹³⁰⁴ Բակուրյան, Այնթապ եւ շրջակայքը, «Կոչնակ Հայաստանի», Նիւ-Յորք, 1920, թիւ 25, Յունիս 19, էջ 792:

¹³⁰⁵ Էփրիկեան Հ. Ս., նշվ. աշխ., էջ 145: Տե՛ս նաև Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ, էջ 356:

¹³⁰⁶ Չորմիսեան Լ., Համապատկեր Արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, Ա. հատոր, (1850-1878), Պէրութ, տպ. Սեւան, 1972, էջ 170-171:

1908 թ. «Բյուրակն» թերթը Այնթապի առևտրային ոլորտը ներկայացնող հոդվածում արժեքավոր տեղեկություններ է հաղորդում տարբեր ապրանքների ներկրումների ու արտահանումի, ապրանքների և արտարդարտեսակների գների մասին: Այսպես, 1908 թ. Այնթապից 20 հակ բուրդ է արտահանվել Դամասկոս, որի գինը տատնվել է օխան 5-5½ դուրուշի միջև: Նշվում է նաև, որ բրդի գինը, ինչպես ամենուր նշված ժամանակահատվածում ընկած էր, Եվրոպայից նույնպես պահանջարկ չկար: Բամբակը արժեր 6-6⅓ դուրուշ, պահանջարկը շատ մեծ էր: Մանածի շուկայում 20 համարի «Համպերը» 57½ դուրուշ էր, 20 համարի “David mill”ը՝ 53¼ դուրուշ, իսկ 20 համարի “Anchor”ը՝ 53¼ դուրուշ: Քաղցր նուշի գինը կախված սեզոնից և պահանջարկից տատանվում էր 13-14½ դուրուշի միջև: Պիստակը վաճառվում էր 18-18¼ դուրուշով, վնասված կամ առատ բերքի դեպքում գինը ընկնում էր 13-13½ դուրուշի: Քիթրեն վաճառվում էր 5¾-6 դուրուշ, ճեիրիի գները չափազանց ընկած էին՝ 3-3¼ դուրուշ: Յուղը վաճառվում էր 17-17¼ դուրուշ, իսկ՝ 1908 թ. 13½-13¾: Տեղի շաքարի արժեքը 3⅝ դուրուշ էր, իսկ եգիպտականն արժեր 3 դուրուշ: Այնթապում տարեկան սպառվում էր 550-600 հազար այծի մորթի, 1907 թ. մեկ օխա կշռող մաքուր ապրանքն արժեր 21 դուրուշ, իսկ 1908 թ. այն 17-17¾ դուրուշ էր¹³⁰⁷: Նույն թերթի տեղեկությունների համաձայն, 1908թ. Այնթապում օսմ. մեկ ոսկին¹³⁰⁸ համարժեք էր 127½ դուրուշին, 23¼ մեջիդին:

¹³⁰⁷ Ճարտարարուեստակ Յառաջադիմութիւնը Այնթապի մեջ, «Բիւրակն», Կ. Պոլիս, 1908, թիւ 27, 28 յուլիս, էջ 859-861:

¹³⁰⁸ Օսմանյան կայսրության մեջ գործածվում էր երեք տեսակի դրամ՝ ոսկի, արծաթ և պղինձ: Ամենաբարձ գինն ուներ ոսկի դրամը՝ լիրան: XIX դարի վերջին լիրան ռուսական դրամով արժեր մոտ 9-10 ռուբլի, երբեմն ավելի, կախված խաղաղ և պատերազմական վիճակներից: Ոսկեդրամները կազմում էին լիրայի մասերը՝ կես լիրա և քառորդ լիրա: Մեկ լիրան 108 դուրուշ էր, կես լիրան՝ 54 դուրուշ, քառորդը՝ 27 դուրուշ: Ղուրուշը, դահեկանը և պիաստրը նույնարժեք դրամներն էին, առաջինը՝ օսմաներեն է, երկրորդը՝ հայերեն, երրորդը՝ ավստրիացիների նույն արժեքն ունեցող դրամի անունն է: Ղուրուշի

Ուշագրավ է, որ 1906 թ. Այնթապում հաստատվում է Օսմանյան կայսերական բանկի մասնաճյուղ, որը ինչպես նշում է «Բյուրակներ» նպաստում էր առևտրաշրջանառությանը¹³⁰⁹: 1907 թ. Օսմանյան բանկի Այնթապի մասնաճյուղի տնօրենն էր Միհրան Բյուզանյանը¹³¹⁰:

Այնթապի նշանավոր ընկերությունները, ընտանիքներն ու անհատ վաճառականները

Այնթապի հայության տնտեսության պատմությունն իր բազմաշերտ ու բազմոլորտ գործունեությամբ առանձնակի է: Այս մեծ առաջընթացը հնարավոր դարձավ հատկապես որոշ ընտանիքներին ու ընկերություններին ձեռքբերումներին արդյունքում:

XIX դարի Այնթապի հայոց պատմությունն անձնավորող նշանավոր գերդաստաններից էր Նազարեթյան ընտանիքը: Նազար Նազարեթյանը (1815-1887) Այնթապում պարսկական հյուպատոսն էր, հմուտ ոսկերիչ էր ու մեծ վաճառական, համարվում է XIX դարի Այնթապի ամենահարուստ մարդը, քաղաքում առավել հայտնի էր Քարա Նազար (Սև Նազար) անունով: Նիկողոս Նազարեթյանը (1843-1899) Քարա Նազարի ավագ որդին էր, հետագա-

արժեքը նույնպես համաձայն բորսայի փոփոխվում էր՝ 8½-10 կոպեկ, նաև՝ բարձր: Արծաթյա դրամներն էն՝ մեջիտ, կես մեջիտ, քառորդ մեջիտ, 2½ դուրուշանոց, երկու դուրուշանոց, 11/4 դուրուշանոց, մեկ դուրուշանոց և կես դուրուշանոց: Մեջիտը 20 դուրուշ է, տատանվում է 2 ռուբլու սահմաններում, կես մեջիտը՝ 10 դուրուշ, 1 ռուբլի կամ բարձր: Պղնձե դրամները կոչվում էին փարա: Քառասուն փարան 1 դուրուշ էր: Այս հաշվով 2½ դուրուշանոց դրամը գործածության մեջ 100 փարայանոց էին անվանում, 11/4 դուրուշանոցը՝ 50, ½ դուրուշանոցը՝ 20, 1/4 դուրուշանոցը՝ 10, 1/8 դուրուշանոցը՝ 5, վերջինս օսմանյան ամենափոքրածեք դրամն էր: 5 փարան արժեք 11/3 կոպեկ, 10՝ 22/3, 20՝ 51/3 և այլն: Տե՛ս «Արաքս», Ս. Պետերբուրգ, 1887, Գիրք Ա., Նոյեմբեր, էջ 142-143:

¹³⁰⁹ Ճարտարարուեստակ Յառաջադիմութիւնը Այնթապի մէջ, «Բիւրակն», Կ. Պոլիս, 1908, թիւ 27, 28 յուլիս, էջ 860:

¹³¹⁰ Նույն տեղում, 1907, թիւ 50, 8 դեկտեմբեր:

յում՝ մեծանուն վաճառական, որը հոր անունով կառուցում է հանրաժանոթ «Նազար Աղա մեծ Խանը»¹³¹¹, որին կից գործում էր նաև Նազարեթյանների «մասպանան» (օճառի գործարան)¹³¹²:

Նիկողոս Նազարեթյանը ժամանակի կրթված և առաջադեմ մարդկանցից մեկն էր. «*Լուսաւորեալ* մըն էր ան, բարեկամ ու խորհրդակից *լուսամիտներու...*»¹³¹³: 1863 թ. Ազգային սահմանադրության հաստատումից հետո Այնթապի առաջին Թաղական խորհուրդն¹³¹⁴ ընտրվում է 1866 թ. շնորհիվ Նիկողոս Նազարեթյանի և իր առաջադեմ գործակիցների՝ Գևորգ Սյուլահյանի, Հակոբջան Յաղուբյանի, Հակոբ Առաքելյանի, Ավետիս Միրիճանյանի, Հովհաննես Լուսարարյանի, Ներսես Պալյանի, Խաչատուր Պողարյանի, Ավետիս Բարսեղյանի, Հաննե Թախթաճյանի, Գալուստ Ղազարյանի և այլոց: Նիկողոս Նազարեթյանը հինգ անգամ դառնում է ազգային այդ կարևոր մարմնի ատենապետ ու ծավալում բեղուն գործունեություն այս բնագավառում ևս¹³¹⁵: Թաղական խորհրդում Նազարեթյանի աշխատանքը տևում է մոտ 20 տարի, ընտրվում է

¹³¹¹ «Խան» (թարգմանաբար՝ տուն), խոշոր առևտրական կենտրոն, որտեղ գտնվում էին գրասենյակներ, խանութներ և առևտրային այլ տարածքներ:

¹³¹² Պատմություն Անթեպի Հայոց, աշխատասիրեց ու խմբագրեց Սարաֆեան Գ., Լոս Անճելես, Բ. հատոր, 1953, էջ 751:

¹³¹³ Նիկողոս Աղա Նազարեթյան, «Հայ Անթեպ», Պեյրուք, 1964, թիւ 4 (16), էջ 10:

¹³¹⁴ Թաղական խորհուրդները բաղկացած էին 3-ից 9 անդամներից: Թաղական խորհրդի պարտականությունն է թաղի ժողովրդի ազգային գործերի կարգավորումը: Յուրաքանչյուր Թաղական խորհուրդ իր թաղի ժողովրդի կողմից է ընրվում՝ երկու տարի ժամկետով: Տե՛ս *Փոփոխեալ տրամադրութիւնք Ազգային Սահմանադրութեան եւ Տեղեկագիր Վերաքննիչ Յանձնաժողովայ առ ազգային ընդի. Ժողովն, Կ. Պոլիս, տպ. Յ. Գալաֆեան եւ Յ. Պարոնեան, 1874, էջ 37-38*: Թաղական խորհուրդը հաշվետու էր Գավառական վարչությանը: Թաղերի մեջ թե եկեղեցական և թե դպրոցական յուրաքանչյուր կալվածք Թաղական խորհրդի անմիջական տնօրինության տակ է: Տե՛ս *Ազգային Սահմանադրութիւն Հայոց, 1860, Կ. Պոլիս, էջ 9, 21*:

¹³¹⁵ Նիկողոս Աղա Նազարեթյան, «Հայ Անթեպ», Պեյրուք, 1964, թիւ 4 (16), էջ 9-11:

նան «Մէճլիսի Իտարե»ի անդամ, մասնակցում էր նաև նահանգային ընդհանուր ժողովներին¹³¹⁶:

Այնթապցի Երուսաղեմի միաբաններից Հովսեփ սարկավագ Աշճյանն իր միջոցներով կառուցել է տալիս Այնթափի «Նոր դարպասը» (Առաջնորդարանը), իսկ մահից հետո Նիկողոս աղա Նազարեթյանի ջանքերի շնորհիվ 1868 թ. սարկավագի ունեցվածքը հատկացվում է «Միլլէթ խանի» (Ազգային տուն) շինությանը: Շենքը պետական արձանագրության մեջ գրանցված է «Ազիզիե խան»*: Գալաթա-Ալթը թաղամասում գնված հողամասի վրա կառուցված, ժամանակի համար արդիական Խանը համարվում էր Ազգային ամենահաստիքաբեր կալվածքներից մեկը և մինչև 1915 թ. ապահովում «Ներսէսեան», «Հայկանուշեան» և «Հայկազեան» վարժարանների անխափան գործունեությունը¹³¹⁷:

Հովսեփ սարկավագ Աշճյանի միջոցներով և Նիկողոս Նազարեթյանի գործուն ջանքերով կառուցվում է նաև «Միլլէթ խանին» կից սրճարանը, «Ազգային Ներսէսեան» վարժարանի շենքը և Այնթափի Հայոց Առաջնորդարանը¹³¹⁸:

Նազարեթյանի աշխատանքի արդյունքում են կազմավորվել «Վարդանանց Թանգարան» ընկերությունը (1867 թ.), իր հիմնադրած «Վարդանեան» կրթարանով (1882-1915 թթ.), ինչպես նաև «Ազգային Ներսէսեան» վարժարանը (1866-1915 թթ.), «Ազգային Հայկանուշեան» վարժարանը (1878-1915 թթ.) և Կիլիկիո Գիշերօթիկ վարժարանը (1873-1877 թթ.): Նրա հեռատես գործողությունների շնորհիվ այնթապահայերն ունեցան այնպիսի ազգապատկան կալվածքներ, ինչպիսիք «Միլլէթ խանն» էր, *Չուգուր Պոսթանի*

¹³¹⁶ Պատմութիւն Անթէպի Հայոց, Բ., էջ 753:

* Նիկողոս աղայի առաջարկով խանն անվանակոչվել է այդ ժամանակ կառավարող սուլթան Աբդուլ-Ազիզի անունով:

¹³¹⁷ Նոյն տեղում, Ա., էջ 653-654:

¹³¹⁸ Պատմութիւն Անթէպի Հայոց, Բ., էջ 755:

*Տեյլիպը*¹³¹⁹, ինչպես նաև 1873-1874 թթ. ընթացքում նոր եկեղեցու շինարարությանը զուգահեռ, Հին եկեղեցու առջևում ընկած հողամասի վրա կառուցված 14 խանութները. «որպես հասութաբեր կալուած»¹³²⁰:

Մեծ է Նիկողոս Նազարեթյանի ներդրումը նաև Ս. Աստվածածին եկեղեցու կառուցման գործում: Եկեղեցու շինարարական աշխատանքները ընդհատումներով տևում են շուրջ 20 տարի՝ 1874-1894 թթ., նշանավոր եկեղեցու հատակագծի հեղինակը արքունի ճարտարապետ Սարգիս բեյ Պալյանն էր, իսկ կառուցման ծախսը կազմում էր 10 000 օսմ.ոսկի¹³²¹:

Այնթապահայության առաջընթացի և կրթական համակարգի զարգացման համար նյութական միջոցներ ապահովող կառույցներ ստեղծելուց բացի, Նազարեթյանը նաև քաջալերում և սատարում էր շնորհալի երիտասարդների ուսման հնարավորությունը Էջմիածնում, Երուսաղեմում և այլուր, որպեսզի նրանք վերադառնալուց հետո նոր որակ հաղորդեին ազգային-կրթական զարգացմանն ու առաջընթացին¹³²²:

Քարա Նազարի կրտսեր որդին՝ Կարապետ բեյ Նազարեթյանը, հորից հետո դարձավ Այնթապում պարսկական հյուպատոսը¹³²³: Նշանավոր վաճառական էր, ուներ օճառի գործարան, դրամական

¹³¹⁹ Նիկողոս Աղա Նազարեթյան, «Հայ Անթեպ», Պեյրութ, 1964, թիւ 4 (16), էջ 9-11:

¹³²⁰ Պողարեան Գ., Կիլիկիոյ Գիշերօթիկ վարժարանը, Այնթապ (1873-1877), «Նոր Այնթապ», Պեյրութ, 1973, թիւ 3 (55), էջ 18:

¹³²¹ Պատմութիւն Անթեպի Հայոց, Ա., էջ 421-425:

¹³²² Նիկողոս Աղա Նազարեթյան, «Հայ Անթեպ», Պեյրութ, 1964, թիւ 4 (16), էջ 9-11:

¹³²³ Նազարեթյանների մյուս եղբայրը՝ Արթին Նազարեթյանը 1895 թ. ջարդերից հետո հաստատվում է Հալեպում, հետո՝ Կիպրոսում, այնուհետև մեկնում է Ալեքսանդրիա, զբաղվում չոր մրգերի առևտրով, հիմնադրում «Հասան Քէֆ» անունը կրող ծխախոտի գործարանը: Քաղաքական ժողովի անդամ էր: Պատմութիւն Անթեպի Հայոց, Բ., էջ 756:

նվիրատվություններով մասնակցում էր ազգային նախաձեռնություններին¹³²⁴:

Նազարեթ Մանուշակյանը Նազար Նազարեթյանի թոռն էր, Մեննուշ Նազարեթյանի որդին, որը 1890 թ. ավարտելով «Վարդանեան» վարժարանը՝ իր ընկերների հետ հիմնադրում է առևտրական շահակցական տուն՝ «Ն. Մանուշակեանի եւ Ընկ.» ձեռնարկությունը: 1895 թ. ջարդերի օրերին շատ առևտրական և մտավորական ընտանիքների նման հեռանում է Այնթապից՝ չորս տարի մնալով Կիպրոսում: Քաղաքական վիճակի փոփոխությունից հետո վերադառնում է Այնթապ և վերահաստատում իր առևտրական տունը: Բացի այդ Խաչատուրյան եղբայրների հետ սկսում է զբաղվել նաև ներկի ներմուծման գործով: Երկար տարիներ հանդիսացել է Այնթապի Գավառական ժողովի անդամ, Քաղաքական ժողովի ատենապետ, ինչպես նաև Ուսումնական խորհրդի, «Վարդանեան» կրթարանի և «Հայկանուշեան» վարժարանի հոգաբարձուների խորհրդի անդամ: Ն. Մանուշակյանն Այնթապի առաջին հայկական մանկապարտեզի՝ «Վարդանեան» մանկապարտեզի հիմնադիրներից է (1899 թ.): Անդամակցում էր Այնթապի Առևտրական դատարանին, ինչպես նաև Զորահավաքի հանձնաժողովին: 1910 թ. Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Այնթապի մասնաճյուղի հիմնադրումից հետո Մանուշակյանն ընտրվում է միության ատենադպիր: 1915 թ. ապրիլին Այնթապի տեղահանությունից երեք ամիս առաջ ձերբակալվում է և այլ մտավորականների ու գործարարների հետ ուղարկվում Հալեպի բանտ ու թեև բանտից ազատվում և վերադառնում է Այնթապ, սակայն չի խուսափում բռնագաթից ու կողոպուտից¹³²⁵:

Նազարեթյանների ընտանիքի հետ ինչպես բարեկամական, այնպես էլ գործնական կապերով կապված էր Այնթապի մեկ այլ

¹³²⁴ Տե՛ս նույն տեղում:

¹³²⁵ Պողարեան Գ., Այնթապականք, Բ. Մահարձան, տպ.Ատլաս, Պէյրուք, 1974, էջ 537-539: Պատմություն Անթեպի Հայոց, Բ., էջ 767-768:

խոշոր ազգային գործիչներից Գալուստ Ղազարյանը: «...Աղա մըն էր Գալուստ Ղազարեանը, Ազգային բարերար, մեր օրերուն յատուկ բացատրութեամբ մը, որ կու տար, կը շինէր, կը բաշխէր, ոչ ի ցոյց մարդկանց այլ որպէս հոգիէն բխած սրտագին նուէր¹³²⁶»:

Գալուստ Ղազարյանն իր գործունեությունը սկսում է Սարգիս Սահակյանի հետ, որպէս պտուղ-բանջարեղենի ու հացահատիկի արտահանող-ներկրող: Այնթապում հաստատվելուց հետո, նրանք գործունեություն են ծավալում «Նազար խանում» և սկսում զբաղվել մանուսայի վաճառքով: Այնթապից գնված մանուսան արտահանում էին Թոքաթ՝ այնտեղից ներմուծելով *եսգմա* (կանացի հատուկ գլխակապ): Որոշ ժամանակ անց Գալուստ Ղազարյանը և Սարգիս Սահակյանը հիմնադրում են բանկ. «Սերայի, Կեդրանական շուկայի եւ պատասթեններու (պեզգագիսթան՝ կերպասավաճառներու և վաճառականներու շուկա) մօտակայ վայր մը, Նազար Աղայի Խանին եւ Կարապետ Պէյ Նազարէթեանի մասպանային (օճառանոց) գրեթէ դրացի»¹³²⁷: Նորաբաց «Պանքա Խանի» կառուցման 60%-ը հոգացել էր Սարգիս Սահակյանը, իսկ 40%-ը Գալուստ Ղազարյանը: «Պանքա Խանը» առևտրային գործունեությունից բացի, զբաղվում էր զուտ դրամատնային գործունեությամբ և կարճ ժամանակահատվածում տարբեր շահութաբեր գործարքներ իրականացնելուց հետո իրական բանկի է վերածվում: Սարգիս Սահակյանը և Գալուստ Ղազարյանն ունեին նաև շքեղ առանձնատեղի Այնթապում, որոնք հիշատակվում են որպէս «ապարանքներ», առաջինը գտնվում է Գայաճըզ թաղամասում, երկրորդը՝ Եկեղեցու թաղում՝ Գուզանլի և Գասթել Բաշիի ճանապարհին¹³²⁸:

Գալուստ Ղազարյանը հայտնի էր նաև իր բարեգործական գործունեությամբ, որի արդյունքում հիմնանորգվում են ազգապատկան բազմաթիվ կառույցներ, ինչպէս նաև կառուցվում նոր շէնքեր:

¹³²⁶ Պողարեան Գ., Այնթապականք, Բ., էջ 167:

¹³²⁷ Նույն տեղում, էջ 170:

¹³²⁸ Նույն տեղում, էջ 167-170:

Գալուստ Ղազարյանի կատարած ազգանպաստ գործերի մասին գրում էր նաև Պետերբուրգի «Արաքս» ամսագիրը՝ հիշատակելով նրա կատարած մեծ գործերը կրթական շարժման մեջ¹³²⁹։ Բարեգործական գործունեությունից անմասն չի մնացել նաև Գալուստ Ղազարյանի կինը՝ Լուսիա Նազարեթյան-Ղազարյանը. «Տիկին Լուսիա, Հայկանուշեան աղջկաց վարժարանի նոր շէնքը կառուցանել տուած է իր դրամով ու նուիրած է զայն Ազգին»¹³³⁰։

Այնթապի առաջին հարուստներից էր նաև վաճառական ու գործարար Պետրոս Աշճյանը, ով հայտնի բարերար սարկավագ Հովսեփ Աշճյանի թոռն էր։ Պետրոս Աշճյանը նախապէս զբաղվում է մանուֆակտուրայի գործով, այնուհետև սկսում է զբաղվել պիստակի առևտրով։ Պատվաստման շնորհիվ բարձրացնում է պիստակի բերքատվությունը, ընդլայնում ծառաստանները։ Հալեպի և Կ. Պոլսի պիստակի շուկան նվաճելուց հետո Աշճյանը ընդլայնում է պիստակի արտահանման ծավալները՝ ընդհուպ մինչև Ամերիկա։ Աշճյանի կարողությունը կազմում էր 100000 օսմ. հնչուն ոսկի, ուներ պալատանման տուն, գյուղեր, ագարակներ, ոչխարի հոտեր և, անշուշտ, պիստակի մեծածավալ անտառներ։ Ժամանակակիցների բնորոշմամբ «թագավորն էր պիստակին»¹³³¹։ Աշճյանը հայտնի էր նաև իր բարեգործական գործունեությամբ, մասնավորապէս նրա նախաձեռնությամբ և գլխավորությամբ կազմված հանգանակիչ հանձնաժողովը 2500 օսմ. ոսկի և 7500 ոսկու արժեքով անհրաժեշտ պարագաներ են տրամադրվում 1909 թ. Ադանայի ջարդը վերապրած աղետյալներին։ Աշճյանը մահանում է աղքատության մեջ՝ Ալեքսանդրիա քաղաքում՝ վարձված մի բնակարանում¹³³²։

Կարուճ Գարամանուկյանը (Ջիվան Կարուճ) Այնթապի մեծանուն վաճառականներից ու կալվածատերերից էր։ Գարամանուկ-

¹³²⁹ «Արաքս», Ս. Պետերբուրգ, 1887, Գիրք Ա., Նոյեմբեր, էջ 21։

¹³³⁰ Պատմություն Անթեպի Հայոց, Բ., էջ 757։

¹³³¹ Նույն տեղում, էջ 755-756։

¹³³² Նույն տեղում, էջ 756։

յանի կարողությունը, արձանագրությունների տեսքերի¹³³³ համաձայն, կազմում էր 45000 օսմ. ոսկի, որից 15000 օսմ. ոսկին ներդրված էր անշարժ գույքի մեջ: Գարամանուկյանի անշարժ կալվածքների թվին էին պատկանում խանութներ քաղաքում և արտեր, այգիներ ու պիստակի շահութաբեր պարտեզներ շրջակա գյուղերում: Հաջորդ 15000 ոսկին ներդրված էր ասեղնագործության ոլորտում, և 4-5000 կին ներգրավված էին այդ ոլորտի աշխատանքներում: Ասեղնագործ-ձեռագործ աշխատանքներն արտահանվում էին ԱՄՆ: Արտադրանքի սպառումը ապահովելու նպատակով նախապես ԱՄՆ էր ուղարկվել Գարամանուկյանի որդին՝ Մովսես Գարամանուկյանը: Գումարի երրորդ մասը՝ 15000 ոսկին, հատկացված էր Մուպուրճու պողոտայում գտնվող մանուֆակտուրայի ընդարձակ վաճառանոցին, որտեղ աշխատում էին երեք գրագիր, 8-18 ապրանք վաճառող, ինչպես նաև բոլոր գործերի ընդհանուր հաշվապահն ու «հաւասարակշռող արկղակալ» գրագիրը¹³³⁴ (գանձապահ):

Հովհաննես Ճեպեճյանը նույնպես զբաղվում էր պիստակի առևտրով: Նա վայրի պիստակի թփերի ընդարձակ անտառներ էր գնել և պատվաստել՝ պիստակի ծառեր ստանալու համար: Հաջողելով պիստակի արտադրման և արտահանման գործում՝ Ճեպեճյանը նոր ընդարձակ կալվածքներ էր ձեռք բերել: Նրա կինը Գարամանուկյանների ընտանիքից էր՝ Մանուշակ Գարամանուկյանը¹³³⁵: Ճեպեճյան ընտանիքը զբաղվում էր նաև մանուսայի արդատությամբ: Նրանց «առևտրական գոտին» հասնում էր մինչև Տիգրանակերտ, 1912 թ. Տիգրանակերտում հաստատված գրասենյակի պատասխանատուն էր Տիգրան Ճեպեճյանը: 1914 թ. երիտթուրքական կառավարության գիտությամբ կանխամտածված

¹³³³ Տվյալ նյութի հեղինակը Հակոբ Գապպենճյանն է, որը 1910 թ. Կարուճ Գարամանուկյանի հաշվապահն էր և գանձապահը:

¹³³⁴ Պատմություն Անթեպի Հայոց, Բ., էջ 769-770:

¹³³⁵ Ճեպեճեան Ռ., Ինքնակենսագրություն, Յուշեր և Գործություններ, Հալեպ, 1999, էջ 19:

Տիգրանակերտում հրկիզվեցին 1500 հայկական խանութներ, և Ճեպեճյանների ապրանքը ևս հրո ճարակ դարձավ¹³³⁶:

Հրանտ Սյուլահյանը 1890-ական թթ. սկսած հետամուտ է լինում ընտանեկան առևտրական գործին, սակայն չսահմանափակվելով առևտրային գործունեությամբ, լուրջ հաջողությունների է հասնում նաև հասարակական ու կուսակցական գործունեության ոլորտում: 1896-1910 թթ. ընկած ժամանակահատվածում գործունեություն է ծավալում որպես Այնթապի Հայոց թեմի առաջնորդարանի անդամ: Մեծ էր նրա ներդրումը նաև «Վարդանեան» կրթարանի ժողովներում, Կիրակնօրյա լսարանում: Սյուլահյանի կինը Նազարեթյանների հայտնի ընտանիքից էր՝ Կարապետ Նազարեթյանի դուստրն էր¹³³⁷: Սյուլահյանը Այնթապի «ունեւոր ազգայիններէ կազմուած շահակցական ընկերութեան» կողմից գործուղվում է Եվրոպա արտադրական մեքենաների գործածությանը ծանոթանալու համար, վեց ամիս Փարիզում և Լոնդոնում մնալուց հետո վերադառնում է՝ իր հետ բերելով ջաղաց և այլ մեքենաներ¹³³⁸:

Այնթապում ներկարարների զավակ Ատուր Նիզիպյանը դառնում է ժամանակի ամենաուսյալ և ամենահարուստ վաճառականներից մեկը, որն իր ողջ կարողությունն ուղղում էր ազգի բարգավաճմանը: Նիզիպյանը հիմնադրում է «Ռուբինեան ընկերությունը», որն ուներ լսարան, մատենադարան-ընթերցասրահ, գիշերային դասընթաց և թատրոն, ինչպես նաև մեծ ներդրում է ունենում Այնթապում թե՛ արական, և՛ թե՛ իգական սեռի կրթության կազմակերպման գործում¹³³⁹: Նիզիպյանը կտակում է 750 օսմ. ոսկի (3300 դոլար) Ավետարանական եկեղեցու հովիվ, պրոֆ. Ալեքսան Պեգ-

¹³³⁶ Պողարեան Գ., Տիգրան Ճեպեճեան, «Հայ Անթէպ», Պէրոյթ, 1962, թիւ 7, էջ 37:

¹³³⁷ Պատմութիւն Անթէպի Հայոց, Բ., էջ 759:

¹³³⁸ Հրանդ Գ. Սիւլահեան, «Նոր Այնթապ», Պէրոյթ, 1972, թիւ 2-3 (50-51), էջ 10-11:

¹³³⁹ Պողարեան Գ., Ատուր Աղա Նիզիպլեան, «Հայ Անթէպ», Պէրոյթ, 1967, թիւ 2 (26), էջ 18-19:

ճյանին՝ երկու նպատակ իրագործելու համար (վախճանվում է 1863 թ.): Կտակով նախատեսված գումարի 1100 դոլարը տրամադրվում էր Հայիկ թաղամասի Ավետարանական եկեղեցու բեմական, կրթական և աղքատախնամ գործունեությանը, իսկ մյուս 2200 դոլարը ծախսվելու էր «Երիտասարդասիրաց Քրիստոնեական ընկերության» հոգատարածքը ընդարձակելու համար: Բարերարի միջոցներով կառուցված ընկերության շենքը նրա անունով անվանակոչվում է «Նիզիպլեան թանգարան»: Հարկավոր է նշել, որ կտակի իրագործումը հանդիպում է դժվարությունների, գումարի մի մասը տեղափոխվում է ԱՄՆ-ը, որտեղ էլ ստեղծվում է «Adoor Agha Trust Fund» հիմնադրամը¹³⁴⁰: Նիզիպլյանն առևտրական ասպարեզ էր մտնել առանց որևէ դրամագլխի, սակայն թուրքերենի բացարձակ իմացությունը նրան շատ ձեռնարկատերերի գործընկեր դառնալու հնարավորություն է տալիս: Ամենաեկամտաբեր գործարքը կնքում է 1862 թ., ինչը նրան հնարավորություն է տալիս 1862-1865 թթ. ընթացքում ԱՄՆ-ից մեծ քանակությամբ կտոր և թել ներմուծել: XIX դարի երկրորդ կեսին Ատուր Նիզիպլյանը Այնթապի համար բոլորվին նոր նախագծով և գեղարվեստական լուծումներով 8000 ոսկի արժողության տուն է կառուցում, որը ժամանակակիցների վկայությամբ նման էր ապարանքի: Վերապատվելի Մ. Կ. Փափազյանի գնահատումով Ատուր Նազիպլյանի կարողությունը կազմում էր 25000 դոլար¹³⁴¹:

XIX դարի վերջին Կ. Պոլսում իրավաբանական բարձրագույն կրթություն ստացած Ավետիս Միրիճանյանը Այնթապում հինադրում է փաստաբանական գրասենյակ և մեծապես օժանդակում հայերի իրավունքների պաշտպանությանը: Հանդիսացել է նաև Այնթապի Թաղական խորհրդի ատենադպիրը¹³⁴²:

¹³⁴⁰ Ատուր Նիզիպլեան եւ Նիզիպլեան թանգարան, «Հայաստանի Կոչնակ», Նյու-Եորք, 1931, թիւ 47, Նոյեմբերի 21, էջ 1486:

¹³⁴¹ Հալեպլեան Լ., Ինքնակենսագրութիւն Ատուր Աղա Նիզիպլեանի, «Հայ Անթէպ», Պէյրոս, 1967, թիւ 3 (27), էջ 28-29:

¹³⁴² Պողարեան Գ., Այնթապականք, Բ., էջ 614:

1900-1913 թթ. «Ադենական» վարժարանի տնօրեն Ղազարոս Ղալիկյանը պաշտոնավարելուց հետո, երկու տարի Այնթապի ներկայացուցիչն էր ֆրանսիական «Ֆենիքս» ապահովագրական ընկերությունում¹³⁴³:

«Ավետիս Խանզեդեան եւ ընկ.» ընկերությունը առևտրական գործակցական կազմակերպություն էր, որը ստեղծվել էր 1909 թ.: 1911 թ. որպես իրենց ընկերության մասնաճյուղ Այնթապի Սուպուրջու պողոտայում հիմնադրում են առևտրական տպարան՝ փոքրիկ ձեռնաշարժ մեքենայով, իսկ երկու տարի անց «երկրորդ մամուլ մըն ալ բերել կու տան, նախորդէն քիչ մը մեծ եւ ոտքով շարժվող: ...Մեքենաներէն մեկը 22x23 սմ.նոց է իսկ միւսը 35x45 սմ. Քաղաքիս տպարաններուն մեծագոյնը այս վերջինն է եւ առևտրական գործերով ամենէն գործոնը»¹³⁴⁴: Առևտրական տպարանը հնարավորություն ուներ տպագրելու երեք լեզուներով՝ հայերէն, օսմաներէն, ֆրանսերէն, տպվում էին նաև նամակագրուխներ, հրավիրագրեր, վկայագրեր, տոմսակներ, այցեքարտեր, Օսմանյան բանկի և վաճառականների տարատեսակ թղթեր, հայտագրեր, ոսկեգօծ հարսանեկան հրավիրատոմսեր, բացի այդ, հրատարակվում էին թերթեր, գրքույկներ և այլն¹³⁴⁵:

¹³⁴³ Նույն տեղում, էջ 352:

¹³⁴⁴ Պողարեան Գ., Նօթեր Այնթապի տպարանական ու լրագրական պատմութեանց համար, Գարեգին քինյ. Պողարեանի նամակը, «Հայ Անթէպ», Պէյրութ, 1966, թիւ 3 (23), էջ 42-43:

¹³⁴⁵ Այնթապի Առևտրական տպարանում տպված թերթերի, գրքույկների ցանկ՝ գրված Գարեգին քահանա Պողարյանի կողմից 1914 թ. հոկտեմբերի 21-ին ի պատասխան Արշակ Ալպոյաճյանի՝ Այնթապում տպարանների առկայության և գործունեության վերաբերյալ հարցմանը: Ստորև ցանկը.

« 1) Կիլիկիան Ճեմարանի *Համառոտ Ցայտագիրը* (1912 եւ 1914)

2) Ն. Ս. Օծուրին Սահակ Կաթողիկոսի շրջաբերական կոնդակը, ուղղուած Կիլիկիան Ճեմարանին:

3) ՀԱԳԻԳԱԹ [Ճշմարտություն] կրօնական ամսաթերթը, 16 էջնոց, հայատառ թրքերէն, խմբագրուած Խարտլամպոս Պոսթանձը Օղլույէն, եւ որուն երկու ամսաթիւերը լոյս տեսած են դէռ:

4) ՎԱՐԴԱՆԵԱՆ ԿՐԹԱՐԱՆԻ Հիմնական կանոնագիրը (1913):

1880-ական թթ. հայտնի պատմագիր և հրապարակագիր Մարկոս Աղաբեկյանը, (եղել է Վանի նահանգապետի օգնական) նշանակվում է Ծխախոտի Ռեժիի ընկերության Այնթապի տնօրեն¹³⁴⁶:

Այնթապում օճառաշինությունը նույնպես կարևոր տեղ էր զբաղեցնում, քաղաքում պատրաստվում էին բարձրորակ օճառներ, հիմնականում ձիթապտղի յուղից, իսկ պատրաստման համար օգտագործվող ձիթապտուղը ներկրվում էր Քիլիսից: Այս գործում լուրջ հաջողությունների էին հասել նաև Հաննե Քյուրքչյանը և Արտաշես Ատանալյանը¹³⁴⁷:

1908 թ. «Բյուրակն» թերթում «Այնթապի օճառը» վերնագրով և հունիսի 28-ի ամսաթվով Նազարեթ Մանուշակյանը Այնթապի առևտրական հրապարակի վերաբերյալ հաղորդում է, որ ձեթի բերքը միջակ է եղել և որոշ մասի արտահանումից հետո, 140 «ղազան» օճառ է եփվում հետևյալ գործարաններում.

49 ղազան Չիթճի գատե Ապտուլլահ էֆ. և Ընկ. մօտակայ Նիզիպ գիւղաքաղաքի մէջ.

23 ղազան Արտաշէս էֆ. Ատանալեան.

21 ղազան Միւֆթի գատե Մէհմէտ Խայրի էֆ.

21 ղազան Մէօյլէմէղ գատե Ապտիւլգատէր էֆ.

16 ղազան Մուզաֆֆէր գատե Հաֆըզ էֆ.

7 ղազան Յ. և Կ. էֆ. Նազարէթեան.

3 ղազան Հապիպ էֆ Քիւրքճեան

Արտադրողներն առանց սակարկելու ձեթը դեկտեմբեր և հունվար ամիսներին օճառատներին էին հանձնում, իսկ գինը, սովորության համաձայն, որոշում էին մայիս և հունիս ամիսներին.

5) *Գոլերա*. Արաբատառ գրքոյկը 1914, պատրաստուած Պայրամգատէ Հաճի Ապտուլլահ էֆ.էն:

6) *Աղզը Տիւտիքլի Միքրոպլար* [Բերանաշրթնային միկրոպները] Նոյն հեղինակէն, արաբատառ (1914): Նամակն ամբողջությամբ տե՛ս «Հայ Անթէպ», Պէյրուք, 1966, թիւ 3 (23), էջ 42-47:

¹³⁴⁶ Քիւրքճեան Վ. Մ., Ազգային Յուշեր, Վարդանեան կրթարանի ներսն ու շուրջը, «Հայաստանի Կոչնակ», Նյու-Եորք, 1928, թիւ 46, Նոյեմբերի 17, էջ 1456:

¹³⁴⁷ Պատմութիւն Անթէպի Հայոց, Բ., էջ 292 :

«վաճառողներ և գնողներ գումարելով ձեթին գինը կ'որոշեն, շաբթուս այս գումարումը տեղի ունեցաւ և ձեթի գինը լիտրը (1000 տրմ.) $10^{7/8}$ դրշ. որոշուեցաւ (Լ.Օ. $127\frac{1}{2}$), մէկ դագանը կը պատրաստուի 1224 լիտր ձեթով $\times 10^{7/3}=104$ Լ. 51 դրշ. + 28 Լ. Օսմ. այլ ծախք և եփողչէք = 132 Լ. Օ. 51 դրշ. ապրանք եղաւ»¹³⁴⁸: 140 «դագանի» ընդհանուր արժեքը 21000 լիւրա էր կազմում, արտադրանքը սպառվում էր ինչպէս ներքին, այնպէս էլ արտաքին շուկայում¹³⁴⁹:

Նույն թերթի մէկ այլ համարում նշվում է, որ Այնթապում կար 5 մասպանա, որտեղ միջին հաշվով տարեկան 100 պղինձ օճառ էր եփվում, ընդ որում, յուրաքանչյուր պղինձը կշռում էր 3900-4000 օխա: 1908 թ. կանխիկ ծախվել է 140-148 լիւրայի նոք եփած օճառ: 1907 թ. ձեթի օխան արժէր $4\frac{3}{8}$ դուրուշ, 1908 թ. կախված բերքից կազմելու էր $4\frac{1}{4}$ դուրուշ¹³⁵⁰: Այնթապից տարեկան արտահանվում էր մոտ 600000 օխա օճառ¹³⁵¹:

Գարեգին ավագ քահանա Պողարյանը մինչև քահանայական ձեռնադրություն ստանալը 1883-1893 թթ. զբաղվում էր մանուսալագործությամբ, սկզբում որպէս աշակերտ, հետո՝ վարպետ և վաճառող: Երկու տարի Կարուձ Մերձենյանի գործընկերն էր, սակայն «Մերձենեան» վաճառատան ընդարձակումից հետո ստիպված է լինում զբաղվել ընկերության միայն հաշվապահական և գրասենյակային գործերով՝ ստանալով աշխատավարձ: 1895-1903 թթ. որպէս գրագիր-հաշվապահ աշխատում է «Լէյլէկեան եղբարց» վաճառատանը¹³⁵²:

Գրիգոր Լէյլէկյանը նույնպէս Այնթապի մեծանուն վաճառականներից էր, քաղաքի ազնվագարմ աղաներից Ներսէս Լէյլէկյանի

¹³⁴⁸ «Բիւրակն», Կ. Պոլիս, 1908, թիւ 29, 12 յուլիս, էջ 923:

¹³⁴⁹ Նույն տեղում:

¹³⁵⁰ Ճարտարարուեստակ Յառաջադիմութիւնը Այնթապի մէջ, «Բիւրակն», Կ. Պոլիս, 1908, թիւ 27, 28 յուլիս, էջ 859:

¹³⁵¹ Գալուստեան Գր. Ն., Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Զէյթուն, Նիւ Եորք, «Կոչնակ», 1934, էջ 501:

¹³⁵² Պողարեան Գ., Այնթապականք, Բ., էջ 11:

որդին, երկար տարիներ վարել է ազգային տարբեր ժողովների ատենապետությունը, «Ադենական» ընկերության հիմնադիրներից է¹³⁵³: Լեյլեկյանների վաճառատունը գտնվում էր «Միլլէթ խանում»:

Հակոբջան Յաղուպյանն Այնթապի հայտնի վաճառականներից էր և զբաղվում էր սուրճի, շաքարի և կաշվի առևտրով, նրա գրասենյակը գտնվում էր «Միլլէթ խանում»¹³⁵⁴:

Ծագումով թալասցի Գրիգոր Քյուրուկյանը Այնթապում հիմնադրում է առևտրական տուն¹³⁵⁵, որը նույնպես իր գրասենյակն ուներ «Միլլէթ խանում»: 1905-1910 թթ. Քյուրուկյանը Այնթապի Քաղաքական ժողովի անդամ էր, գործուն մասնակցություն ուներ նաև «Ադենական» դպրոցի և «Ազգային Հայկանուշեան» վարժարանի հոգաբարձության գործունեության մեջ¹³⁵⁶:

Պերդուտյանների ընտանիքը Այնթապի հին գերդաստաններից էր, որի մասին տեղեկություններ կան դեռևս Ս. Աստվածածին եկեղեցու 1820-ական թթ. Մկրտության տոմարի մեջ՝ «Բերդուտեան» գրությամբ: Կարապետ Պերդուտյանը մրգավաճառի որդի էր, 12 տարեկանից շուկայում աշխատում էր հոր հետ՝ միաժամանակ կիսատ մնացած ուսումը լրացնելով գիշերային դպրոցների դասընթացներով: 18 տարեկանում Կարապետը եղբոր հետ միասին հիմնադրում են հացագործի սեփական խանութ, որը մեծ համբավ է ձեռք բերում՝ վերածվելով առևտրային տան: Կարճ ժամանակ անց «Պերդուտեանների տունը» առաջնային դիրք է զբաղում Այնթապի հացի և կարկանդակի արտադրության ոլորտում¹³⁵⁷:

Հացագործության ասպարեզում կար 36 խանութ՝ նվազագույնը վեց աշխատող ունեցող: Հացագործությամբ զնաղվող բոլոր արհեստավորները բարեկեցիկ էին, հիշատակվում էին Քիլեճյան, Իսաիր-

¹³⁵³ Պողարեան Գ., Կիլիկիոյ գիշերօթիկ վարժարանը, Այնթապ (1873-1973), «Նոր Այնթապ», Պէրուլթ, 1973, թիւ 4 (56), էջ 33:

¹³⁵⁴ Պողարեան Գ., Այնթապականք, Բ., էջ 698:

¹³⁵⁵ «Նոր Այնթապ», Պէրուլթ, 1973, թիւ 1-2 (53-54), էջ 114:

¹³⁵⁶ Պողարեան Գ., Այնթապականք, Բ., էջ 347:

¹³⁵⁷ Նույն տեղում, էջ 312-313:

յան, Բոստանյան, Օհանյան, Չամիչյան, Փարմագարզյան ընտանիքները և բազմաթիվ «Էքսլեքճեան»ներ (Հացագործյաններ): Կարկանդակի արտադրությունը նույնպես հայերի ձեռքում էր: Կարկանդակ պատրաստող փոքրերը 14-ն էին, յուրաքանչյուրում նվազագույնը կար երկու աշխատող, կարկանդակագործները նույնպես բարեկեցիկ էին: Հայտնի էին «Գաբարիկեան», «Ուզգուշեան», «Սէրայտարեան» տները և բազմաթիվ «Քեահքէճեան»ները¹³⁵⁸:

Այնթապը մրգաշատ այնգիների և բարձրորակ ընպելի ջրի քաղաք էր, ինչը նպաստում էր գինու և օղու արտադրությանը: Օղու արտադրությունը հիմնականում գտնվում էր հայերի ձեռքում և դարձել էր լայն տարածում ունեցող ու շահութաբեր գործ: Այնթապի օղին արտահանվում և վաճառվում էր ողջ կայսրության տարածքում: Այնթապի օղի արտադրողներից թերևս ամենահայտնի ու ամենահաջողակ գործարանատերը Ներսես Պարոնյանն էր: Պարոնյանին էին պատկանում քաղաքի ամենախոշոր երկու գտարանները, որտեղ օրական 800-1000 «կէլըն» զուտ օղի էր արտադրվում: Ձմռանը արտադրողականությունը իջնում էր 200-300 «կէլըն»ի: Ներսես Պարոնյանը զբաղվում էր նաև սեփական արտադրանքի արտահանումով: Նա մասնավոր ջորեխումբ ուներ, որոնք օղին շուրջօրյա փոխադրում էին տարբեր քաղաքներ: Նշվում է նաև, որ Կեսարիայի օղու շուկան ամբողջությամբ պատկանում էր Պարոնյանին: Ներսես Պարոնյանը անմասն չէր նաև ազգային տարբեր հարցերում և ձեռնարկներում: Նա տարբեր տարիների ընթացքում հանդիսանում էր նաև «Ազգային Ներսեսեան» և «Ադենական» վարժարանի հոգաբարձու¹³⁵⁹:

Խաչատուրյանների ընտանիքը Այնթապում հայտնի էր որպես կառապան կամ ջորեպան: Նրանք իրենց գործունեությունը սկսել էին ընդամանը մեկ ջորիով և վերածվել ժամանակի չափանիշներով մարդկանց տեղափոխումներ ու բեռնափոխադրումներ կա-

¹³⁵⁸ Պատմություն Անթեպի Հայոց, Բ., էջ 289-290:

¹³⁵⁹ Նույն տեղում, էջ 771:

տարող «տան», մեր ընկալմամբ՝ ընկերության: Գործը ձեռնարկողը եղբայներից ավագն էր՝ Հաճին և կարճ ժամանակ անց մեկ ջորին վերածեց 10-ի: «Խաչատուրեան եղբայրների» ընկերության կամ Հարություն (Հաճի), Խաչատուր (Ճիրճի), Գրիգոր, Ներսես (Ներսո) Խաչատուրյանների գործունեությունը ներառում էր կայսրության հյուսիսային, հյուսիս-արևմտյան շրջաններից մինչև Բսկանդերուն-Անտիոք, իսկ սպասարկվող երթուղիներն էին՝ Անտիոք, Ադանա-Մերսին, Հալեպ-Այնթապ, Այնթապ-Մուհտիա, Ալեքսանդրես, Կեսարիա, Սդերդ, Տիգրանակերտ, Սամսոն: Եղբայրները վճարում էին առևտրական հարկեր, շրջանառում դրամ: Եղբայրներից Հարությունն առանձին ուրիշ գործ ևս ուներ. Անտիոքում պատրաստել էր տալիս օձառ և այն մեծաքանակ վաճառում Այնթապի վաճառականներին: 1910-1912 թթ. նա կառուցում է առանձնատուն, որը հիշատակվում է իբրև «ապարանք»: Իր մյուս եղբայրների նման որպես թուրք պաշտոնյաների կառապան սկզբում զերծ է մնում տարագրությունից, սակայն ավելի ուշ բռնագաղթի է ենթարկվում. «...«ապարանքը» պատճառ եղաւ, որ տեղահանուի. թուրք պաշտօնատար մը, նախանձագրգիռ, աչք դրած էր Հաճիին տան վրայ», իր գորգերը և արժեքավոր կահ-կարասի մի մասն ի պահ թողնելով Հաֆրզ էֆենտի անունով մի թուրքի¹³⁶⁰:

Ջորեապանության ասպարեզում հայտնի էին նաև Փանոսյան, Կիրակոսյան, Սանոսյան ընտանիքները, նրանցից ոմանք ունեին 40-50 ջորի¹³⁶¹:

Արմենակ Մումճյանը սերում էր Այնթապի հին ու հայտնի Մումճյան ընթանիքից: Որպես պայտար 1915 թ. Այնթապում մնալու արտոնագիր է ստանում, որի շնորհիվ կարողանում է փրկել իր ազգականներին և շատ թվով հայուհիներ: Արմենակ Մումճյան զբաղվում էր նաև պիստակամշկությամբ, Բաշ Փունար-Սամ շրջա-

¹³⁶⁰ Պողարեան Գ., Այնթապականք, Բ., էջ 436, 480-482:

¹³⁶¹ Պատմութիւն Անթէպի Հայոց, Բ., էջ 290:

նում գնում է ընդարձակ հողամաս՝ լի վայրի պիստակի ծառերով: 1918 թ. Մոմձյանը ունենում է արդեն իր մշակած առաջին բերքը¹³⁶², իսկ հաջորդ՝ 1919 թ. բացառիկ բերքատվությամբ տարի էր¹³⁶³:

Իլիաս Պռզկեզենյանը (Նորյան) Առաջին աշխարհամարտից առաջ Այնթապի հաջողակ առևտրական-վաճառականներից էր: Պատերազմի ավարտից հետո համագործակցում էր իր ազգականներ Պերդուսյան եղբայրների հաստատած «Նորեան» առևտրական ընկերության հետ: Պիստակի առևտուրը ընկերության թիվ մեկ զբաղմունքն էր՝ արձանագրելով մեծ հաջողություններ: Պիստակի հայթայթիչ-մատակարարը Իլիասն էր, իսկ սպառողը՝ «Նորեան» առևտրի տունը: Հետագայում ընկերությունը ընդարձակվելով վերածվում է «Զենոպիա» առևտրական մեծ տան¹³⁶⁴:

Հրադացը Այնթապում հայտնվում է սկսած 1900-ական թթ.: Գործում էր հինգ հրադաց, որոնցից չորսը պատկանում էին հայերին՝ արաբկիրցի Սիմոն և Աստվածատուր աղաներին, կյուրինցի Թոփբաշյան ընտանիքին և Քյուրքչյաններին¹³⁶⁵:

Այնթապի արհեստներն ու հայ արհեստավորները

Մանուսայագործություն

Այնթապի տնտեսական վերելքը առավելապես պայմանավորված էր մանուսայագործության աննախադեպ առաջընթացով: Այն սկսում է զարգանալ 1840-ական թթ. ու դառնում Այնթապի ամենալայն տարածում ունեցող արհեստը: Մանուսայագործությունը

¹³⁶² 1920 թ. Այնթապի ինքնապաշտպանության առաջին երկու ամիսներին մթերված, գնված կամ գրավված պիստակը պաշարված հայերի համար հանդիսացել է գլխավոր պարենը: Օգտագործվել է որպես ալյուրիացի պատրաստման համար, նույնիսկ քամել են ու կիրառել որպես յուղ ու ձեթ, չորացած արտաքին կեղևը օգտագործել են որպես ծխախոտ: Պողարեան Գ., Այնթապականք, Բ., էջ 78:

¹³⁶³ «Հայ Անթեպ», Պէյրուի, 1965, թիւ 2 (18), էջ 47:

¹³⁶⁴ Պողարեան Գ., Այնթապականք, Բ., էջ 267-268:

¹³⁶⁵ Պատմութիւն Անթեպի Հայոց, Բ., էջ 290:

Այնթապ մուտք է գործել, թերևս Արաբկիրից: Դերձանը (թել) գալիս էր Եվրոպայից, որով գործվում էին տարատեսակ գծագրություններով ալաճաներ: 1850-ական թթ. սկսած ավելի բարձրորակ սպիտակ ու գունավոր թելերի ներկրմամբ տեղական արտադրությունը ենթակվում է որոշակի փոփոխությունների՝ ստեղծվում են նոր և ավելի կարտարելոգործված դազգահներ, որոնք և դառնում են մանուսայագործության՝ գունավոր կատավների արտադրության հիմնաքարը¹³⁶⁶: Աստիճանաբար լայն թափ ստացող արհեստագործությունը վերածվում է արդյունաբերության՝ բարելավելով Այնթապի հայության տնտեսական վիճակը:

Մինչև XIX դարի կեսերը Այնթապում աշխատում էին նախնական ձևի՝ տեղական սպիտակ կտավ գործող դազգահներ, որոնց համար բամբակե թելը պատրաստվում էր ճախարակով: Գործում էին հաստ ու ամուր կտոր, որը հիմնականում տեղական սպառման համար էր: Այս ձևի դազգահների կիրառությունը, տարեցտարի նվազելով, պահպանվում է մինչև 1915 թ.¹³⁶⁷: 1900 թ. քաղաքում այս գործով զբաղվում էր 300 վարպետ, կիրառվում էր 3000 դազգահ, որոնց վրա աշխատում էին հայ և թուրք բանվորները: Բոլոր վարպետ գործատերերը հայեր էին (կար 2-3 թուրք վարպետ): Վարպետներից յուրաքանչյուրն ուներ հինգից 100 դազգահ, որոնց կեսը զետեղված էր արհեստանոցներում, մյուս կեսը՝ ցրված տներում: Աշխատողների վճարը կազմում էր շաբաթական 40-60 դուրուշ, որը տվյալ ժամանակաշրջանի համար համարվում էր գոհացուցիչ: Ինչպես մանուսայի արտադրությամբ, այնպես էլ ներկարարությամբ, դազգահի շինությամբ և այլ հարակից արհեստներով ու արտադրանքի վաճառքով զբաղվող 21000 մարդ կար քաղաքում, որից 14 000 հայեր էր: Մանուսա վաճառող և արտահա-

¹³⁶⁶ Պատմություն Անթեպի Հայոց, Բ., էջ 286:

¹³⁶⁷ Նույն տեղում, էջ 295-296:

նող հայ վարպետ-առևտրականները 50-ից ավելի էին¹³⁶⁸: Այնթապից տարեկան արտահանվում էր 200000 ոսկու մանուսա¹³⁶⁹:

Յուրաքանչյուր դազգահը միջին հաշվով օրական գործում էր երեք թոփ մանուսա՝ ամեն թոփը ութ կանգունի հաշվով, ստացվում է, որ Այնթապում օրական արտադրվում էր 10000 թոփ կամ 80000 կանգուն¹³⁷⁰ մանուսա¹³⁷¹: Փաստորեն, Այնթապում միայն մեկ օրում 54400 մ կտոր էր արտադրվում: Միայն այս մեկ տվյալն արդեն փաստում է մանուսայագործության ասպարեզում առևտրաշրջանառության հսկայական ծավալները: Ինչպես նշում է Հ. Գապպեն-ճյանը. «միջին հաշվով 300 վարպետներու դրամագլուխները հաշուելով 150-ական դեղին ոսկի, մանուսայագործութեան յատկացումած ընդհանուր դրամագլուխը կ'ունենանք 50,000 մետաղ ոսկի: Սոյն պատկառելի գումարը տեղոյն եւ ժամանակին համար արժեքաւոր եւ վարպետներուն աստիճանական յառաջադիմութեան ու զարգացումին ցուցանիշը կը կազմէ»¹³⁷²: Համաձայն առակա տվյալների, նշված ժամանակահատվածում 10000 օսմ. ոսկին համապատասխանում էր 44000 դոլարին¹³⁷³, ուստի 50000 ոսկին համարժեք էր 220000 դոլարին: Պետք է նշել, որ վարպետների և դազգահների այս թվաքանակը միայն սկզբնավորման փուլում էր, և թե՛ վարպետների ու դազգահների քանակությունը, թե՛ շրջանառվող գումարը տարեցտարի ավելանում էր:

XX դարի սկզբին արտադրված ապրանքը արտահանության ծավալներով գրավում էր առաջին տեղը: Աստիճանաբար զարգանալով, դազգահների թիվը գերազանցում է 4000-ը, որոնց վրա արդեն աշխատում էր 20 000 մարդ: Եթե այս թվին ավելացնենք

¹³⁶⁸ Չոբմիսեան Լ., նշվ. աշխ., էջ 170-171:

¹³⁶⁹ Գալուստեան Գր. Հ., նշվ. աշխ., էջ 501:

¹³⁷⁰ Կանգուն - երկարության և լայնության չափ, մեկ կանգունը հավասար է 68 սմ : Տե՛ս Բառգիրք հայերեն լեզուի: Անդրանիկ Վրդ. Կոստեան, Պէյրուօ, 1998:

¹³⁷¹ Պատմություն Անթեպի Հայոց, Բ., էջ 295:

¹³⁷² Նոյն տեղում, էջ 296:

¹³⁷³ Նոյն տեղում, Ա., էջ 425:

նան մանուսայագործությանն առնչվող, հարակից այլ աշխատանքներ կատարողներին, ապա ոլորտում զբաղվածների թիվը հասնում է 25 000-ի: Նախապես արհեստը տարածված էր միայն հայերի շրջանում, սակայն հետագա ծավալների մեծացման հետևանքով այդ գործում նաև այլ ազգերի ներկայացուցիչներ ընդգրկեցին¹³⁷⁴:

Ժամանակի մամուլի բնորոշմամբ՝ Այնթափում և այլ քաղաքներում արտադրված տեղական կտավները. «իրենց նրբութեամբը ու ազնուութեամբը հաւասարապէս կրնան մրցել Եւրոպականներուն հետ, տոկոնութեան գերազանցութիւնը պահելով միշտ»¹³⁷⁵: Իսկ ներքին շուկայում թերևս քիչ քաղաքներ կամ գավառներ կարող էին համեմատվել, առավել ևս մրցել, Այնթափի կտավի և այս բնագավառում այնթափցիների գրանցած հաջողությունների հետ:

Պահանջարկով պայմանվորված առաջ եկան այնպիսի տեղական արտադրողներ, որոնք, մեծածավալ արտադրություն իրականացնելուց բացի, ունեին նաև իրենց առևտրի տները, ինչպես Այնթափում, այնպես էլ կայսրության ու դրանից դուրս գտնվող քաղաքներում: Բացի այդ, Այնթափի «Խաներում» տարբեր նահանգների բազմաթիվ քաղաքներից կային 40 հանձնակատարներ, որոնք գնում էին տեղական արտադրանքը և ուղարկում իրենց հաճախորդներին: Տարբեր վայրերից կային նաև գնորդ վաճառականներ, որոնք անձամբ էին գնում իրենց նախընտրած ապրանքը և հարյուրավոր հակերով ուղարկում կենտրոններ: Հաճախ էր պատահում, որ քաղաքի շուկաներում մանուսայագործ վարպետների ողջ ապրանքը միանգամից սպառվում էր. «փոխարենը քսակներով լեցուն դեղին ոսկի ձգելով»¹³⁷⁶:

Այնթափի մանուսան արտահանվում էր Վան, Մուշ, Բիթլիս, Կարին, Սեբաստիա, Մալաթիա, Յոզղատ, Կյուրին, Խարբերդ,

¹³⁷⁴ Նույն տեղում, Բ., էջ 286:

¹³⁷⁵ «Բիւրակն», Կ. Պոլիս, թիւ 38, 1907, 11 սեպտեմբեր, էջ 1401:

¹³⁷⁶ Պատմութիւն Անթէպի Հայոց, Բ., էջ 298:

Տիգրանակերտ, Քիլիս, Ադանա, Մերսին, Կոնիա, Զմյուռնիա, Կեսարիա, Կ. Պոլիս, Հալեպ, Դամասկոս և այլուր¹³⁷⁷: 1907 թ. «Բյուրակներ» հաղորդում է, որ Կեսարիայում Այնթապի, Մարաշի և Հալեպի կտավի առևտրով էին զբաղվում Մեսրոպյանը, Մխճավագյանը, Պողոս Սեֆերյանը, Տիգրան Թաթարյանը, Գիրգոր Քեհեյանը, Մեղրակ Հովսեփյանը, Հակոբ Մանուկյանը և Հմայակ Գապագյանի «Յ. Գապագեան եղբարք» ընկերությունը¹³⁷⁸:

Խարբերդում, նույնպես սպառվում էր մեծ քանակությամբ Այնթափի ալաճա. «13,000 ոսկւոյ չափ կ'ըսպառի, 7,000 Այնթափի ապրանք, 5-6,000 մ'ալ Արաբկիրի»¹³⁷⁹: Բացի այդ, Խարբերդը մորթեղենի (ուլ, այծ, ոչխար) առևտուր է անում Այնթափի հետ՝ ներմուծելով մեծ քանակությամբ ապրանք¹³⁸⁰:

Այնթափում մանուսայի արդյունաբերությամբ զբաղվող նշանավոր տները կամ ընկերություններն էին «Նորտիկեանը», «Փափագեանը», «Մէրճէնեանը», «Գապագեանը», «Լէյլէկեանը», «Պասմաճեանը», «Մանուշակեանը», «Միւլահեանը», «Սաաթճեանը», «Հասըրճեանը» և այլն: Այս տներն իրենց ներկայացուցիչներն ունեւրին Ադանայում, Կեսարիայում, Խարբերդում, Էրզրումում, Վանում, Տիգրանակերտում և այլ քաղաքներում¹³⁸¹:

XX դարասկզբին Այնթապում մանուսայագործության ոլորտում ներգրավված անձանց թվական տվյալների և նրանց վարձատրության չափի մասին ընդհանուր պատկերացում է տալիս հետևյալ աղյուսակը.

¹³⁷⁷ Նույն տեղում, էջ 286, 297:

¹³⁷⁸ Կեսարիոյ վաճառականութիւնը, «Բիւրակն», Կ. Պոլիս, 1907, թիւ11-12, 3 փետրուար, էջ 283:

¹³⁷⁹ Վաճառականութիւն եւ ճարտուարութեամբ Խարբերդի Մէջ, «Բիւրակն», Կ. Պոլիս, 1907, թիւ 15-16, 17 փետրուար, էջ 377:

¹³⁸⁰ Նույն տեղում, էջ 376:

¹³⁸¹ Պատմութիւն Անթէպի Հայոց, Բ., էջ 286:

Ընտանիք	Միջին հաշուով 5-ական հոգի	Գումար
300 մանուսայի վարպետներու	-----	1500
30 ներկարարներ	-----	150
40 սանտր քաշողներ	-----	200
300 Աեագ խալֆէի	-----	1500
3000 բանուոր (տեղկեահ իշճիսի)	-----	15,000
25 ալիւր ծախողներ	-----	125
50 արտածող յանձնակատարներ	-----	250
25 մանած ներածող վաճառական	-----	125
5 հիւսն (տեղկահ, ճախարակ էւն.)	-----	25
5 թախագճիներ	-----	25
մանած փաթթող կիներ	-----	1100
Բանուորի աշակերտներ	-----	1000
		Ընդհ. գումար՝ անձի 21,000

Ներկայացված ընդհանուր թվից 1500 թուրք բանվոր ընտանիքներին (7500 անձ) առանձնացնելուց հետո ստացվում է, որ մանուսայագործությամբ զբաղվող հայերի թիվը Այնթապում հայ բնակչության գրեթե կեսն էր կազմում¹³⁸²:

¹³⁸² Պատմութիւն Անթէպի Հայոց, Բ., էջ 301:

Մանուսյագործ մեկ բանվորը շաբաթական գործում էր 20-30 թոփ և ստանում էր $2\frac{1}{2}$ դուրուշ աշխատավարձ, ինչը համարժեք էր $\frac{1}{3}$ կամ $\frac{1}{2}$ օսմ. ոսկուն, որն այդ ժամանակվա փոխարժեքով կազմում էր 4-5 ամերիկյան դոլար: Մեկ թոփ մանուսան, որի միջին լայնությունը $\frac{3}{4}$, իսկ երկարությունը՝ ութ կանգուն էր, 8-10 դուրուշ արժեր: Մանուսան վաճառվում էր ինչպես մեծածախ, այնպես էլ մանրածախ, մեծածախը գնվում էր կիլոգրամով, իսկ մանրածախը՝ թոփով, կային մինչև 15 կամ 20 փարա շահով վաճառողներ¹³⁸³:

Ընդհանրապես, կայսրությունում 50 տեսակի տարբեր անուններով կտորներ էին արտադրվում, և յուրաքանչյուր նահանգ կամ քաղաք իր նախընտրելի տեսակն ուներ: Այս առումով չափազանց կարևոր էր կտորի ներկի որակը, հատակապես բարդ էր ստանալ կարմիր չգունաթափվող ներկ, որի գաղտնիքը հաջողվել էր բացահատել Ճիրճի Պարսումյանին: Անգամ 1894 թ. մասնավոր հանձնաժողով է ստեղծվում՝ ներկված կտորները քննության ենթարկելու և օգտագործման արտոնություն շնորհելու համար¹³⁸⁴:

XIX դարի երկրորդ կեսին Ներսես Սյուլահյանը «Միլլէթ խանում» հիմնում է «Ներսես Սիւլահեան եւ Ռդդիք Ֆիրմա»¹³⁸⁵ անունով վաճառատունը, որը զբաղվում էր մանուսայի և *Կյուրինի շալի* արտադրությամբ և վաճառքով, ինչպես նաև իրականացնում էր մանածի, ներկի, պղնձի և պիստակի ներկրում ու արտահանում¹³⁸⁶:

Սկզբնական շրջանում Սանոսյան ընտանիքի գործունեության ոլորտը այլ էր, XIX դարի վերջին Ավետիս Սանոսյանը զբաղվում էր Այնթապ-Կեսարիա, Այնթապ-Տիգրանակերտ երթուղիներով ուղևորների ու բեռների փոխադրմամբ: Ավետիսի որդին՝ Սանտըր, աշխատանքի է անցնում մանուսյագործական վաճառատանը, այնուհետև գնում է երկու դազգահ, սկսում զբաղվել մանուսայի

¹³⁸³ Նույն տեղում, էջ 297, 299:

¹³⁸⁴ Պատմություն Անթէպի Հայոց, Բ., էջ 298-299:

¹³⁸⁵ «Միլլէթ խանում» վաճառատուն կամ գրասենյակ ունեցող վաճառականների ցուցակում գանցված է «Ներսես Սիւլահեան եւ Եղբարք»:

¹³⁸⁶ Պողարեան Գ., Այնթապականք, Բ., էջ 628-629:

արտադրանքով ու վաճառքով: Արտադարված ապրանքը սկսում է արտահանել Բեյլան, Ալեքսանդրետ, Ադանա և այլուր: Կարճ ժամանակահատվածում դազգահների թիվը հասցնում է 50, իսկ աշխատողների թիվը՝ 300-ի, ընդլայնում է սպառման շուկան՝ հասնելով Կեսարիայի և Տիգրանակերտի շրջանները¹³⁸⁷:

Աստվածատուր Դեմիրճյանը XIX դարի երկրորդ կեսին Այնթապի հմուտ մանուսայագործներից մեկն էր՝ «այագ խալֆեսի», մինչև նույն ժամանակ՝ ատաղձագործ: Դեմիրճյանի որդիները հմտանում են եփված հյուսվածքեղենի գործում¹³⁸⁸: Գևորգ և Արտաշես Թահթաճյանները շարունակում էին ընտանեկան արհեստը՝ արտադրում էին մանուսա և այն սպառում տեղական շուկայում¹³⁸⁹: Գապպենճյան ընտանիքը նույնպես զբաղվում էր մանուսայի արտադրությամբ¹³⁹⁰:

«Վարդանեան» կրթարանի շրջանավարտներից Հակոբ Համալյանը, 1890 թ. մտնելով մանուսայագործության ասպարեզ, կարողանում է հասնել բարձր դիրքի որպես վարպետ և վաճառական: Հետագայում Համալյանը դառնում է «Վարդանեան» կրթարանի գործուն անդամներից մեկը, մասնակցում էր գործադիր ժողովներին, ինչպես նաև Հոգաբարձուների կազմում էր: Համալյանը նաև Կիլիկեան ճեմարանի հիմնադիր հոգաբարձուներից էր¹³⁹¹: 1915 թ. Համալյան ընտանիքը Դեր-Զորի աքսորյալների թվում էր: Կաշառքի միջոցով ընտանիքի հայր՝ մանուսայագործ Հակոբը կարողանում է հետ դառնալ Բերեջիկից Նիզիպ և մտնել աշխատանքի պետական արհեստանոցում: Նրա որդի Գուրգեն Համալյանը նույնպես աշխատում էր արհեստանոցում՝ որպես ատաղձագործ¹³⁹²:

¹³⁸⁷ Պողարեան Գ., Այնթապականք, Բ., էջ 638:

¹³⁸⁸ Նույն տեղում, էջ 93:

¹³⁸⁹ Նույն տեղում, էջ 179:

¹³⁹⁰ Նույն տեղում, էջ 413:

¹³⁹¹ Պատմություն Անթեպի Հայոց, Բ., էջ 765:

¹³⁹² Պողարեան Գ., Այնթապականք, Բ., էջ 193-194:

Կարուճ կամ Կարապետ Թերզիպաշյանը հայտնի մանուսյագործ էր, ուներ 350 դագգահ, արտադրանքն արտահանում էր Կյուրին, Սեբաստիա, Կարս, Արդահան: Թերզիպաշյանը «Ադենական» վարժարանի հիմնադիրներից էր, երկար տարիներ անդամակցում էր Թադական խորհրդին, ապա Գավառական ու Քաղաքական ժողովներին¹³⁹³:

Գրիգոր Գապագյանը հոր և եղբոր հետ զբաղվում էր մանուսյագործությամբ ու մանուսյի առևտրով: «Գապագեան» վաճառատան արտադրանքը մեծ համարում ուներ Այնթապում, վաճառատան մասնաճյուղը գործում էր նաև Կեսարիայում¹³⁹⁴:

Մանուսյագործության հետ սերտորեն կապված արհեստներից մեկը ներկարարություն էր, որը՝ իր *չիվիտ*, *ալ*, *սարը*, *գասարլը* և այլ տեսակներով, ևս կենտրոնացած էր Այնթապի հայությունը ձեռքում: Դեռևս XIX դարից Այնթապում ներկարարության արհեստի մեջ հայտնի էր Իգնատոսյան ընտանիքը, Իգնատիոս Ամմին Այնթապի Էպլահան թաղամասից էր և հայտնի էր իր ալ կարմիր ներկերով¹³⁹⁵: «Պէտիրեան» եղբայրները նույնպես այդ գործում ամենահաջողածներից էին¹³⁹⁶:

Այնթապում կար մոտ 35 ներկատուն, որոնցից յուրաքանչյուրն ուներ նվազագույնը 3-4 աշխատող: Նշանավոր էին «Պօսնուեան», «Պալեան», «Եսայեան», «Աբօշեան» և տարբեր «Պօյաճեաններ» (Ներկարարյաններ): Գասարճությամբ (կտորը սպիտակեցնել) զբաղվում էր Գասարճյան ընտանիքը, այս գործն ավելի ուշ կատարում էին ներկարաները¹³⁹⁷:

¹³⁹³ Պօղարեան Գ., Ազգային ժողովական կեանքը Այնթապի մեջ, «Հայ Անթէպ», Պէրյութ, 1967, թիւ 3 (27), էջ 65:

¹³⁹⁴ «Նոր Այնթապ», Պէրյութ, 1973, թիւ 1-2 (53-54), էջ 117:

¹³⁹⁵ Պօղարեան Գ., Յարութիւն Իգնատոսեան, «Հայ Անթէպ», Պէրյութ, 1964, թիւ 1 (13), էջ 63:

¹³⁹⁶ Պօղարեան Գ., Մինաս Պետիրեան, «Նոր Այնթապ», Պէրյութ, 1972, թիւ 4 (52), էջ 104:

¹³⁹⁷ Պատմութիւն Անթէպի Հայոց, Բ., էջ 287:

Կաշեգործություն (խաղախորդություն)

Ժամանակի մամուլի բնորոշմամբ Այնթապի արհեստների մեջ մանուսայագործությունից հետո երկրորդ տեղում էր կաշեգործությունը: Այս գործում ներգրավված էր 160-170 վարպետ: Արտադրված կաշին չափազանց որակյալ էր՝ գրեթե մրցակցությունից դուրս: 1908 թ. դեղին կաշվի օխան արժեք 32-36 դուրուշ, իսկ կարմիրինը՝ 42-45 դուրուշ, ընդ որում, արտադրված կաշվի միայն փոքր մասն էր գործածվում տեղական կոշիկի պահանջարկի համար, մեծ մասը արտահանվում էր Հալեպ, Եգիպտոս և այլուր:¹³⁹⁸ Այնթապում կոշկակարությամբ զբաղվող 40 խանութ կար, յուրաքանչյուրում աշխատում էր 5-10 կոշկակար¹³⁹⁹:

Մինչև 1870 թ. արհեստը գտնվում էր միայն հայերի ձեռքում, այնուհետև այլ ազգերի ներկայացուցիչներ ևս ներգրավվեցին: Քաղաքում անգամ կաշեգործների առանձին թաղամաս առաջացավ՝ «Թապագխանե» անունով, գլխավոր վարպետները 35 էին, իսկ արհեստավորների ընդհանուր թիվը հասնում էր 10000-ի: Յուրաքանչյուր խումբ կազմված էր մեկ վարպետից և 4-5 աշխատողից: Վարպետ-վաճառականների շահույթը բավարար էր բարեկեցիկ ապրելու համար, սակայն շարքային աշխատողների կենսամակարդակը միջինից ցածր էր: Նշանավոր հայ վարպետներից էին «Վանըսեան», «Գասարճեան», «Սրապիռնեան», «Բանոյեան», «Ատանալեան», «Տիզտապանեան» ընտանիքները, նաև բազմաթիվ «Թապագեան»ներ, որոնք արհեստի բերումով կորցրել էին իրենց նախկին ազգանունները:

1915 թ. կաշեգործությունը Այնթապում հասել էր իր զարգացման բարձրակետին, հնարավոր էր դարձել եվրոպական որակի կոշիկներ արտադրելը: Հումքը ներկրվում էր Արևմտյան Հայաստանի նահանգներից, մինչև 1910 թ. օգտագործվում էին միայն

¹³⁹⁸ Հարտարարունեստակ Յառաջադիմությունը Այնթապի մեջ, «Բիւրակն», Կ. Պոլիս, 1908, թիւ 27, 28 յուլիս, էջ 858:

¹³⁹⁹ Պատմութիւն Անթէպի Հայոց, Բ., էջ 288:

տեղական ներկեր: Արտադրանքը լայն տարածում ուներ, արտահանվում էր Կիլիկիայի տարբեր քաղաքներ, հարակից նահանգներ, Եգիպտոս, մինչև իսկ Սուդան և Հնդկաստան¹⁴⁰⁰:

Հյուսվածքեղեն

Այնթապում կարպետագործությունը հայերի արհեստն էր և բավականին լայն տարածում ուներ: Գորգագործությունն ավելի փոքր ծավալների էր հասնում: Գորգագործության ասպարեզում առավել հայտնի էր Ուզունյան ընտանիքը¹⁴⁰¹: Կարպետ (քիլիմ) գործող դագգահները լիովին ապահովում էին տեղական սպառման պահանջները¹⁴⁰², գործում էր կարպետներ, գոտիներ, շալեր գործող 200 դագգահ, որոնց վրա աշխատում էր 1500 մարդ¹⁴⁰³: Ապրանքն արտահանվում էր Ադանա, Ջմյուռնիա, Կ. Պոլիս, ինչպես նաև Հալեպ և դեպի հարավ՝ արաբական այլ երկրներ¹⁴⁰⁴: Աղբյուրներում հիշատակվում է Կյուլեսերյան ընտանիքն, որը Այնթապի շուկայում կարպետի ու հագուստի վաճառակետ ուներ¹⁴⁰⁵:

Գոտեգործությունը մուտք է գործում Այնթապ կյուրինցիների միջոցով 1895 թ. սկսած, նախապես աշխատում էր 100 մեքենա: Արհեստը բավականին լայն տարածում է ստանում և ձեռք բերում զարգացման լուրջ հեռանկարներ: Հայտնի էին «Աբանեան», «Կէտիկեան», «Մէրթախանեան» տները¹⁴⁰⁶: Հատկապես Կյուրինի «գօտիի» ճյուղով էին զբաղվում Յադսըզյանները, որոնց արտադրանքը քաղաքում և շրջակայքում լայն սպառում ուներ¹⁴⁰⁷:

1890-ական թթ. բամբակյա գուլպայագործությունը նոր է զարգանում, դեռևս կար 5-6 մեքենա: 1895 թ. հետո այնթապցիները

¹⁴⁰⁰ Պատմութիւն Անթէպի Հայոց, Բ., էջ 283-284:

¹⁴⁰¹ Նույն տեղում, էջ 285:

¹⁴⁰² Նույն տեղում, էջ 294:

¹⁴⁰³ Չորմիսեան Լ., նշվ.աշխ., էջ 170:

¹⁴⁰⁴ Պատմութիւն Անթէպի Հայոց, Բ., էջ 301-302:

¹⁴⁰⁵ Պողարեան Գ., Այնթապականք, Բ., էջ 147:

¹⁴⁰⁶ Պատմութիւն Անթէպի Հայոց, Բ., էջ 285:

¹⁴⁰⁷ Պողարեան Գ., Այնթապականք, Բ., էջ 625:

սկսում են արտադրել բաղնիքի պարագաներ, որը դեռևս բավարարում էր միայն տեղական սպառողի պահանջները¹⁴⁰⁸: Բաղնիքի սրբիչներ, անձեռոցիկներ և այլն արտադրող 10 դագգահ էր գործում¹⁴⁰⁹: Հյուսվածքեղենի, կտորի և «տպածոյի»¹⁴¹⁰ վաճառականությամբ զբաղվող տներից հիշատակվում են «Քէօրճէմեան» (հետագայում դարձել են «Գարամանուկեան»), «Պազարպաշեան», «Գուզուկեան» և «Պարսումեան» ընտանիքները¹⁴¹¹:

Կարապետ Գարդայանը (հիշատակվում է նաև Գարկայան ձևով), «Ազգային Ներեսեան» վարժարանն ավարտելուց հետո սկսում է զբաղվել հյուսվածքեղենով: Կարճ ժամանակ անց դառնում է մանուսա վաճառող վարպետների հյուլի կարևոր անդամներից մեկը: Հաստատում է վաճառատուն «Իքի Գաբուլու Խանում»: «Գարկայեան» տունը մասնաձյուղեր է բացում նաև Խարբերդում և Սևերեկում: Այնթապում ընկերությունն առաջինն է ձեռնակում հյուսվածքեղենի մեքենայացման գործընթացը՝ հաստոց ներկրելով Անգլիայից¹⁴¹², ինչպես նաև «տպածոյ» կտորեղենի արտադրությունը, որը տեղահանության պատճառով իրականություն է դառնում արդեն Հալեպում¹⁴¹³:

Գևորգ Գուզուկյանը եղբայրների հետ Այնթապում հիմնադրում է «պասմաձիութեան եւ եազմաձիութեան» (կտորի վրա դաջելու, դաջելով նկարազարդելու) արհեստը: Շնորհիվ իր գեղարվեստական ճաշակի Գուզուկյանը ստեղծում է անհատական կադապարներ և, տիրապետելով ներկելու գաղտնիքներին՝ սկսում է արտադրել գեղեցիկ գործեր՝ աստիճանաբար արհեստը զարգացնելով ու վերածելով ընտանեկան գործի: Նրա հիմնադրած

¹⁴⁰⁸ Պատմություն Անթեպի Հայոց, Բ., էջ 285:

¹⁴⁰⁹ Նույն տեղում, էջ 301-302:

¹⁴¹⁰ Տպածոյ – Տպելով ստացված գործ, կտավի զարդ: Բառգիրք հայերեն լեզուի: Անդրանիկ Վրդ. Կռանեան, Պէրոյթ, 1998, էջ 460:

¹⁴¹¹ Պատմություն Անթեպի Հայոց, Բ., էջ 286-287:

¹⁴¹² «Հայ Անթեպ», Պէրոյթ, 1965, թիւ 2, էջ 48:

¹⁴¹³ Պողարեան Գ., Այնթապականք, Բ., էջ 590:

արտադրությունը ստեղծում է աշխատատեղեր նաև այլ ընտանիքների համար: Գուգուկյանը հետզհետե մասնաճյուղեր է բացում նաև տարբեր քաղաքներում՝ ամենուր ձեռք բերելով ճանաչում¹⁴¹⁴:

Ավանդական հագուստի դերձակների խանութների թիվը սկզբնապես 30-ն էր, այնուհետև նվազում է՝ հասնելով 15-ի, յուրաքանչյուր խանութում կար՝ 2-3 աշխատող: Նշանավոր տներն էին՝ «Միսիրեան», «Հատիտեան», «Չեքիչճեան», «Տէր Սարգիսեան» և այլն: 1890-ականներից հետո եվրոպական նորաձև հագուստի դերձակների խանութների թիվը հասնում էր մոտ 10-ի, յուրաքանչյուր խանութում՝ 3-5 աշխատող: Այս բնագավառում հիշատակվում են «Բագրպեան», «Մաթոսեան», «Պռոկեզնեան», «Պիլպիլեան» ընտանիքները և Թերզի (դերձակ) Միհրանը¹⁴¹⁵:

Ասեղնագործություն

Ինչպես նշում է ձեռագործի մեծ գիտակ և հավաքորդ Երանուհի Կեոթինկ-Հայտոսյանը, եվրոպացիներն «Այնթապի գործին»՝ ասեղնագործությանը, ծանոթացել են խաչակիրների միջոցով: Այնթապի ասեղնագործությանը վերաբերող արժեքավոր տեղեկություններ են պահպանվել պրոֆ. Ալեքսան Պեզդյանի, ինչպես նաև Արյուսակ Գայմագամյանի՝ իր մոր Վարդուհի Սեֆերյան-Գայմագամյանի մասին գրված հուշերում¹⁴¹⁶: Վերջինս հայ աղջիկներին ի թիվս այլ առարկաների, սովորեցնում էր նաև ձեռագործ:

Հատկանշական է, որ 1877 թ. հիմնադրված «Հայկանուշեան» վարժարանի համար դրամական լրացուցիչ մուտք էր ապահովվում տարեվերջյան ձեռագործի վիճակահանությամբ: Ձեռագործի առանձնակի կարևորությունը և անհրաժեշտությունը տվյալ ժամանակահատվածում հստակ երևում է հատկապես «Հայկանուշեան» վարժարանի դասացուցակից:

¹⁴¹⁴ Պատմություն Անթեպի Հայոց, Բ., էջ 773:

¹⁴¹⁵ Նույն տեղում, էջ 288:

¹⁴¹⁶ Թոքմաճեան Հ., Այնթապի ասեղնագործություն, հ. Ա, Հալեպ, Երևան, 2015, էջ 89-93 :

Ձեռագործին հատկացված դասերը բաշխված էին հետևյալ կերպ.

Ա. տարի - ձեռագործ, «խարճ» հյուսելու սկզբնավորություն՝ 8 ժամ;

Բ. տարի - ձեռագործ, շարունակությունը «խարճի» և սկզբնավորություն ասեղնագործ տանթելի և «Այնթապու նագըշ»;

Գ. տարի - ձեռագործ, շարունակություն նախորդի, ավելի բարդ օրինակներ, սկզբնավորում «պրօտերի», «քանավելա» և «Այնթապու նագըշով» նուրբ փորձեր՝ 8 ժամ;

Դ. տարի - ձեռագործ թավիշի վրա ու բեհեզի վրա, մետաքսով և ուլունքով գործեր, «պրօտե» և այլն՝ 8 ժամ;

Ե. տարի - ձեռագործ, շարունակություն մետաքսե նուրբ գործերի, զանազան՝ 8 ժամ:

Պետք է նշել, որ ձեռագործին տրամադրված դասաժամերը դասավանդվող այլ առարկաների համեմատ ամենաշատն էին, որևէ այլ առարկայի շաբաթական 8 դասաժամ չէր հատկացվում¹⁴¹⁷:

Այնթապի ասեղնագործությունն ունի իրարից բոլորովին տարբեր գլխավոր երեք տեսակ. ա) պարզ ասեղի գործ կտավի վրա *կարի ձևով*, բ) *Օյա*՝ գավառացի հայ կանայք հաստ թելով էին պատրաստում առանց կտավի, միայն թելով, գ) թել կտրելու կամ թել քաշելու գործը, որը պատրաստվում է կտավի թելերից ոմանք կտրելով և բացվածքը նուրբ ասեղնագործությամբ լցնելով¹⁴¹⁸: Ասեղնագործությունն Այնթապում առաջընթաց ունեցավ և վերածվեց գումար վաստակելու միջոցի Համիդյան ջարդերից հետո: Մեծ թվով տղամարդկանց ոչնչացումից հետո գումար վաստակելու անհրաժեշտությունը կանանց մղում է փնտրելու աշխատանքի նոր հնարավորություններ: Էլիզա Մելքոնյան-Սաչազյանի վկայությամբ, Այնթապում ասեղնագործությամբ գումար աշխատելու

¹⁴¹⁷ Թոքմաճեան Հ., Այնթապի ասեղնագործություն, հ. Ա, էջ 93-95:

¹⁴¹⁸ Պատմություն Անթեպի Հայոց, Բ., էջ 308:

առաջին փորձերը կատարել են վերջինիս հորաքույրը՝ Խաչ-խաթուն Կեմիրձյանը ու մայրը՝ Թրուանտա տեր Մելքոնյանը, որոնք ոչ միայն ստեղծում էին գեղեցիկ աշխատանքներ, այլև վաճառում դրանք¹⁴¹⁹:

XIX դարի երկրորդ կեսին Այնթապում հաստատված ամերիկացի միսիոներուհի Շեփըրտը մեծապես օժանդակում է այս գործի հաստատմանը և վաճառքին: Տարիների աշխատանքի և ներդրումների արդյունքում՝ 1906-1907 թթ. Շեփըրտի ղեկավարությամբ ասեղնագործության գործը այնպես էր ընդարձակվել, որ. «Անգլիային և Ամերիկային եկած ապսպրանքներուն հազիւ կը հասներն»¹⁴²⁰: Շեփըրտի գործատունն ուներ 2500 ավելի գործավորուհիներ, գործերն ընդունող սխալները շտկող մեկ աշխատավորուհի և մեկ քարտուղար-գծագրիչ¹⁴²¹:

Ասեղնագործությունը բավական շահավետ գործ էր համարվում: Հիմնականում սպառվում էր արտասահմանում, արտահանվում էր Ամերիկա, Անգլիա և եվրոպական այլ երկրներ: Շաբաթական վաճառվում էր 300 լիրայի ապրանք, որից 200 լիրան գործողների աշխատավարձն էր¹⁴²²:

XIX դարի վերջին և XX դարի սկզբին Գրաձյան եղբայրները զբաղվում էին ասեղնագործությունների արտադրությամբ և վաճառքով, եղբայրերից Ավետիսը 1907 թ. մեկնում է Ֆրանսիա ընտանեկան գործն ընդլայնելու համար, Նազար Գրաձյանը եղբայրների և քրոջ՝ Խանում Լեյլեկյանի համագործակցությամբ Լոնդոնում Այնթապի ասեղնագործական արտադրության վաճառատուն է հիմնում¹⁴²³:

¹⁴¹⁹ Էլիզա Ա. Սաչագլեան, Ասեղնագործությունը Այնթապի մեջ, «Հայ Անթեպ», Պեյրուք, 1966, թիւ 2 (22), էջ 29-30:

¹⁴²⁰ Պատմություն Անթեպի Հայոց, Բ., էջ 306:

¹⁴²¹ Նույն տեղում:

¹⁴²² Ճարտարարուեստակ Յառաջադիմությունը Այնթապի մեջ, «Բիրակն», Կ. Պոլիս, 1908, թիւ 27, 28 յուլիս, էջ 859:

¹⁴²³ Պողարեան Գ., Այնթապականք, Բ., էջ 116:

Լուսանկարչություն

Լուսանկարչությունը Այնթապում, մինչև քաղաքի հայաթափումը, գոտ հայկական արվեստ էր, մինչև 1921 թ. ոչ հայ որևէ լուսանկարիչ չկար: Լուսանկարչությունը Այնթապ մուտք է գործել 1884 թ. Հովհաննես Հալլաճյան-Հովհաննիսյանի միջոցով, որը 1883-1884 թթ. Կ.Պոլսոում լուսանկարչություն էր սովորել ֆրանսիացի նշանավոր մի վարպետից, ապա՝ վերադառնալով ծննդավայր, 1884-1894 թթ., 10 տարի զբաղվել է այդ գործով՝ մեկ տասնամյակ լինելով քաղաքի միակ լուսանկարիչը:

Միհրան Հարություն Հալլաճյան-Հովհաննիսյանն Այնթապի նշանավոր լուսանկարիչներից մեկն էր: Լուսանկարչական նախնական գիտելիքները ստացել է եղբորից՝ Հովհաննեսից, այնուհետև գիտելիքները կատարելագործելու համար մեկնել է Անգլիա: 1898 թ. վերադարձել է Այնթապ և ստանձնել եղբոր լուսանկարչատունը, որը 1894 թ. եղբոր քաղաքից մեկնելու պատճառով թափուր էր մնացել: Միհրան Հալլաճյանն Այնթապի «Կեդրոնական Թուրքիոյ գովէճի» պաշտոնական լուսանկարիչն էր, հետևաբար քոլեջի շրջանավարտների տարեկան բոլոր անստորագիր խմբանկարներն իր գործը պետք է որ լինեն¹⁴²⁴:

Միհրան Մինասյանի արխիվային հավաքածուում առկա է Միհրան Հալլաճյանի լուսանկարչական տան երկու կավձաթուղթ (թափու), որոնցից առաջինը տրված է օսմանյան *մալի* տոմարով օգոստոս 1321-ին (14 օգոստոս-13 սեպտեմբեր 1905), իսկ երկրորդը՝ իսլամական *հիջրի* տոմարով 29 Սաֆար 1324-ին (24 Ապրիլ 1906): Կավձազրերից պարզ է դառնում, որ Միհրան Հալլաճյանի լուսանկարչատունը գտնվել է Այնթապի Հայիկ Պապա (Հեյիկ) թաղամասում և գնահատվել 2000 դուրուշ՝ 20 օսմ. ոսկի: Նախորդ սեփականատերն էր Արթին (Հարություն) Հովհաննիսյանը (Հալլաճյան, իր հայրը), որից անցել է Միհրան Հովհաննիսյանին (Հալ-

¹⁴²⁴ Minassian M., Les Photographes Arméniens D'Ayntab et de la Cilicie, Les Arméniens de Cilicie, Hanitat, mémoire et identité, Beirut, 2012, p. 138.

լաճյան): Լուսանկարչատունը տեղակայված էր աջից՝ Բանուկի որդի Գաբրիելի և բոյաջը (ներկարար) Մուրատի խանութների և ձախից՝ կոշկակար Հակոբի որդի Սարգիսի խանութի (երկրորդ կալվածաթուղթի մեջ՝ Հակոբի որդի Հովհաննեսի) միջև, հետևից՝ Ետիկյան Գևորգի խանութն էր, իսկ առջևից գլխավոր ճանապարհը¹⁴²⁵: Ըստ 1906 թ. կալվածաթղթի, Միհրան Հովհաննիսյանի (Հալլաճյանի) լուսանկարչատան տարածությունը 1,5 հին *դոնում* էր, 13 *սուլլըք* և 78 նոր արշին, ինչը համապատասխանում է 1350 քառ. մետրի¹⁴²⁶:

Այնթապի նշանավոր լուսանկարիչներից էր Գասպար Խոճա Փիլավճյան-Գրգարյանը՝ Շահե Արք. Գասպարյանի հայրը: Ժամանակի լավագույն լուսանկարիչներից էր համարվում նաև Զորաբաբել Տոնաթոսյանը: Մինչև Բաղդադում վերջնականապես հաստատվելը Տոնաթոսյանը գործունեություն էր ծավալել Այնթապում, Կարինում, Կ.Պոլսում, Բասրայում, թերևս նաև Արաբկի-րում, Նիկոմիդիայում և այլ քաղաքներում:

Հակոբ Մուրատյանը նույնպես Այնթապի հայտնի լուսանկարիչներից և ազգային գործիչներից էր, որը 1892 թ. ավարտել էր «Կեդրոնական Թուրքիոյ գոլէճը», այնուհետև բացել իր լուսանկարչատունը: Պահպանվել են 1895 թ., 1896 թ. և հաջորդ տարիների ընթացքում նրա կատարած լուսանկարները:

Այնթապի «Կեդրոնական Թուրքիոյ գոլէճի» շրջանավարտների ցուցակում հիշատակվում է նաև Տիգրան Իվանյանը, որը նույնպես զբաղվում էր լուսանկարչությամբ: Հարություն Ն. Պոշկեզեյանը նշված է 1908 թ. Այնթապի «Վարդանեան» կրթարանի շրջանավարտների ցանկում, որտեղ սսվում է նաև, որ նա եղել է լուսանկարիչ:

Լուսանկարիչ և նկարիչ Տիգրան Չազմագճյանը Կիլիկեան ճեմարանում սովորելու շրջանում շահում է նկարչական մրցանակ

¹⁴²⁵ Միհրան Մինասյանի արխիվային հավաքածու:

¹⁴²⁶ Նույն տեղում:

ու Կրթության նախարարության կողմից Այնթապի թուրք վարժապետանոցի նկարչության ուսուցիչ է նշանակվում, որտեղ և աշխատում է մինչև տարագրությունը: Այնթապի Սբ. Աստվածածին եկեղեցու համար նկարում է երկու նկար՝ «Ծնունդ» և «Սբ. Յարութիւն», որոնք բռնագաղթից հետո տարվում են Հալեպ ու հանձնվում տեղի համանուն եկեղեցուն:

XX դարասկզբին Այնթապում գործունեություն ծավալած կամ ծագումով այնթապցի հայ լուսանարիչներից էին Ջեյմս Հալլաճյան-Հովհաննիսյանը, Եղիա Աթթարյանը (Աթթար Եղիա), Զատիկ Գուգույան (Գուգյան-Կուգուկյան), Գասպար Նաճարյանը, Ներսես Գ. Նիկողոսյանը, Լևոն Տարագճյանը, Ալբերտ Պեգճյանը, Գուրգեն Չագմագճյանը և այլոք¹⁴²⁷:

Ոսկերչություն

XIX դարի սկզբին ոսկերչության բնագավառում առավելապես պատրաստվում էին զարդեր, եկեղեցական սպասք, բուրվառ, սկիհ, կանթեղ, քռոց, աշտանակ, խաչ, ավետարանի և աղոթագրքերի կազմեր և այլն: 1850-ականներից սկսած լայն տարածում են գտնում սեղանի սպասքը, կանացի առավել նորաճ զարդերը, որոնց մաս էր կազմում նաև փորագրությունն ու քանդակը:

Ոսկերչությունն Այնթապում իր բարձրակետին է հասնում հայ վարպետների ստեղծած բարձրաճաշակ և նրբագեղ զարդերի (մատանիներ, ապարանջաններ, ականջօղեր, ժամացույցի նուրբ շղթաներ, խաչեր) շնորհիվ: Հատկապես նշանավոր էին *անթիքա* կոչված ակով մատանիները, ընդ որում, վերջիններս նույնպես պատրաստվում էին վարպետների կողմից: Նյութը հանվում էր Այնթապի հյուսիս-արևելյան կողմում գտնվող Քեպեր կոչված բլրից, ակերը 1/2 մատնաչափ տրամագիծ ունեին, թափանցիկ կարմիր ու մուգ կարմիր գույներով: Մատանիները կոչվում էին

¹⁴²⁷ Մինասյան Մ., Այնթապ, Լուսանակարիչներ, <https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/vilayetaleppo/ayntab/economy/tradesphotographers.html>

անթիքա այն պատճառով, որ դրանց վրա հռոմեական զինվորի կամ կնոջ փորագրություններ կային: Նմանատիպ մատանիները շատ պահանջված էին Այնթապի հարուստ ընտանիքներում¹⁴²⁸:

Այնթապի ոսկերչության ասպարեզում ավանդույթներ ունեցող ընտանիքներից էր Նազարյան ընտանիքը: Ոսկերիչ Կարապետ Նազարյանի ավագ որդին՝ Հարությունը բարձրորակ արհեստավոր էր, հայտնի էր նաև իր բարեգործական գործունեությամբ, իր կատարած նվիրատվությունների համար բազմաթիվ անգամներ արաժանանում է Սահակ Բ կաթողիկոսի կոնդակներին¹⁴²⁹: Նրա կրտսեր եղբայր՝ Լևոնը չի շարունակում ընտանեկան գործը: Նազարեթ Մանուշակեանի աջակցությամբ մտնում է առևտրական ասպարեզ և կարճ ժամանակահատվածում հասնում լուրջ հաջողությունների¹⁴³⁰:

1915 թ. Այնթապում կային հայերին պատկանող 50-ից ավելի ոսկերչական խանութներ, որոնցից յուրաքանչյուրն ուներ 3-5 աշխատակից: Նշանավոր էին «Նազարեան», «Տաղլեան», «Տառյան», «Բանճարճեան» ոսկերչական տները: Այնթապի մեծանուն Նազարեթյան տոհմը նույնպես զբաղվել է ոսկերչությամբ¹⁴³¹:

Պղնձագործություն

Պղնձագործությունն Այնթապում նույնպես հայերին պատկանող արհեստ էր: Հայ վարպետների գործերն այնքան հղկված էին, որ իրավամբ արվեստի նմուշներ կարող էին համարվել: Պղնձագործների թե պղնձով, և թե արծաթով պարտաստված աշխատանքները մրցում էին եվրոպական գործերի հետ: Այս ոլորտ ավելի լայն թափ ստացավ 1840-50-ական թթ., հիմնականում պատրաստում էին խոհանոցային և կենցաղային պարագաներ, օղու թորիչ կաթսաներ, տարատեսակ կրակարաններ, ինքնաեռներ և այլն:

¹⁴²⁸ Ներսէս, Ոսկերչութիւնը եւ Պղնձագործութիւնը Անթէպի մէջ, «Հայ Անթէպ», Պէյրութ, 1964, թիւ 2 (14), էջ 36-37:

¹⁴²⁹ Պատմութիւն Անթէպի Հայոց, Բ., էջ 769:

¹⁴³⁰ «Հայ Անթէպ», Պէյրութ, 1962, թիւ 7, էջ 17:

¹⁴³¹ Պատմութիւն Անթէպի Հայոց, Բ., էջ 277:

1880-ական թթ. Այնթապում պարտրաստված պղնձյա իրերը սկսում են նաև արտահանվել: Արտահանման հիմնական շուկաներն էին Ադանան, Ջեյթունը, Մալաթիան, Սևերեկը, Ուրֆան, Անտիոքը, Հալեպը և Դամասկոսը: Այնթապում պղնձագործության 60-ից ավելի խանութներ կային, յուրաքանչյուրը՝ 4-10 աշխատողով: Պղնձյա իրերը պահանջարկը բավարարելու համար 1910 թ. ներմուծվում է պղնձեղեն պատրաստող մեքենա¹⁴³²: Արհեստն աշխատողներին ապահովում էր միջին բարեկեցություն, կային նաև հարստություն ձեռք բերած վարպետներ:

XIX դարի սկզբին Գալլաճը (կլայակող) Կարապետ խալֆեն, սկիզբ է դնում մետաղե իրերի վրա փորագրությանն ու քանդակին՝ «գալեմքեար»ութեանը, հասնում է մեծ հաջողությունների. «Գալլաճը» մականունը փոխելով «Գալեմքեար»եանի»¹⁴³³: Մելքոն Ուստան ընտանեկան արհեստը վերածում է արվեստի՝ իր քանդակած ու փորագրած աշխատանքները կնքելով «Մելքոն Գալեմքեարեան եւ Որդիք» կնիքով: Մելքոնը վարպետացած էր նաև հյուսնագործության մեջ, լայն գիտելիքներ ուներ ճարտարագիտությունից և մեքենագիտությունից: Մելքոնի որդին՝ Հարություն Գալեմքեարյանը ցուցաբերում է բացառիկ ունակություններ գծագրության ասպարեզում և 11 տարեկանից սկսած ընդգրկվում ընտանեկան գործում¹⁴³⁴:

Գալեմքեարյանները կատարելագործում էին իրենց պատրաստած իրերը ոչ միայն գեղարվեստորեն, այլև աշխատում էին դրանք կիրառության առումով ավելի հարմար դարձնել: Մելքոն Գալեմքեարյանը հնարում է թորիչ կաթսայի շրջանակաձև խողովակաշարով ձև, որն ավելի ճշգրիտ էր ցույց տալիս օդու աստիճանը¹⁴³⁵: Ինչպես նշում են Ժամանակակիցները, վարպետ Մելքոնը որևէ

¹⁴³² Պատմություն Անթեպի Հայոց, Բ., էջ 278:

¹⁴³³ Վահե Ն. Գիլեմքեան, Գալեմքեարեան Գեղարուեստի վարպետները, «Հայ Անթեպ», Պեյրուժ, 1962, թիւ 6, էջ 18:

¹⁴³⁴ Նույն տեղում, էջ 20-21:

¹⁴³⁵ Պատմություն Անթեպի Հայոց, Բ., էջ 280:

գործ սկսելիս, նախ պատրաստում էր անհրաժեշտ գործիքները, սալերը, մուրձերը, երբեմն գործի նախապատրաստական աշխատանքները երկարում էին ավելի շատ, քան բուն գործը¹⁴³⁶։

Մելքոն Գալեմքեարյանի նշանավոր գործերից է Ս. Աստվածածին եկեղեցու ջահը, որը 1897 թ. վարպետը նվիրում է եկեղեցուն։ Ջահը մեծ վարպետությամբ և գեղեցիկ համաչափություններով կոփածո ստեղծագործություն էր, որն ուներ 12 ոճավորված ճյուղեր, որոնց վրա տեղադրված էին լապմերը, ճյուղերի միջև ընկած մասերում տեղավորված էին դեպի ներքև նայող 12 համաչափ, թևատարած հրեշտակներ։ Բացառիկ վարպետությամբ էր պատրաստված նաև տեղահանությունից առաջ շինված կրակարանը¹⁴³⁷։ Ընդհանրապես, Գալեմքեարյանների կերտած ջահերը, սկիհները, քշոցները, բուրվառները, բաժակները և ափսեները համարվում էին շքեղության ու պերճանքի առարկաներ աշխարհի տարբեր կողմերում։ Նրա պատրաստած բազմաթիվ կրակարանները, թեյի եռոցները, կոնքերը, արծաթյա ու ոսկեջրած ափսեները և սպասքի այլ պարագաները զարդարում էին շատ մեծամեծների տներ¹⁴³⁸։

Գալեմքեարյանների գործունեությունը ծավալվել է շուրջ 200 տարի։ Նրանք աշխատել են երեք տարբեր քաղաքներում։ Այնթապի խանութ-արհեստանոցը գտնվում էր ոսկերիչների շուկայի սկզբում։ Հին կամարակապ շուկայում Մելքոն վարպետի հարևան էր ոսկերիչ Գրիգոր Տաղըլյանը, խանութի վրա երկրորդ հարկում թուրքական դպրոց էր։ Տեղացիների վկայությամբ քաղաքի այդ հատվածը քանդվել է։ 1915 թ. բռնագաղթից հետո հաստատվում և աշխատում են Դամասկոսում՝ Համիդիե շուկայում։ Զինադադարից հետո կրկին վերադառնում են Այնթապ, սակայն որոշ ժամանակ անց վերջնականապես աքսորվում են՝ կրկին հաստատվելով Դա-

¹⁴³⁶ Թոքմաճեան Հ., Գալեմքեարեաններ։ Այնթապ-Դամասկոս. Հալեպ, Հալեպ, 2016, էջ 28։

¹⁴³⁷ Նույն տեղում, էջ 32-33։

¹⁴³⁸ Պողարեան Գ., Այնթապականք, Բ., էջ 107-109։

մասկոտում: 1924 թ. Գալեմքեարյանները տեղափոխվում են Հալեպ, հիմնադրում աշխատանոց Խանտակ փողոցում, որը գործում է մինչև 1961 թ.: Այնուհետև խանութներ են հաստատում Մալպիյե և Սուլեյմանիե թաղամասերում¹⁴³⁹: Այնթապի, և ոչ միայն Այնթապի, արծաթագործության ու պղնձագործության ոլորտում մրցակցությունից դուրս էր Գալեմքեարյան ընտանիքը՝ բոլորովին նոր ասելիքով և կատարողականությամբ:

Գալեմքեարյանների ընտանիքից հետո Այնթապում պղնձյա և արծաթյա իրեր պատրաստելու, դրանք փորագրելու և քանդակելու գործում երկրորդ հայտնի ընտանիքը Արսլանյանների ընտանիքն էր՝ «Արսլան Կարապետի» տղաներն էին, առավել հայտնի «Պապաշահի տղաքը»՝ Ներսեսը, Ատուրը և Հովհաննեսը: Նրանք ստեղծում էին խոհանոցի սպասք, զարդանոթներ, կանթեղներ, նախշազարդում էին Ս. գրքերի կազմեր և այլն¹⁴⁴⁰: Ասպարեզում կարևոր տներն էին՝ «Ասլանեանները»¹⁴⁴¹, այս ընտանիքի չորս սերնդի ներկայացուցիչներ զբաղվում էին պղնձագործությամբ (Ասլան պապա, Գարնը Պեոյուք (բույուք-մեծ), Պապա Շահ և Զհուտ Ասլան), «Գնաճեան», «Արըճեան», «Սրապիոնեան», «Մադաքեան», «Մանուկեան» (Գյավուր Մանիկ), «Փաթանեան»: Նրանցից ոմանք նաև վաճառական-պղնձագործներ էին: Որպես լավ արհեստավորներ հայտնի էին Պարապա Կարուճ (Կարապետ) վարպետը, Սրապիոնյան Սրապիոնը, Մանուկյան Ներսեսը, Ասլանյան Ներսեսը, Ատուր և Հովհաննես եղբայրները, Փաթանյան Գևորգը, Ներսես Կյուլեսերյանը և այլն¹⁴⁴²: Գևորգ Կյուլեսերյանը նույնպես պղնձագործ-անագիչ էր¹⁴⁴³, իսկ պղնձագործ ու վաճառական Գնաճյանների ընտանիքի արտադրած կամ վաճառած

¹⁴³⁹ Թոքմաճեան Հ., Գալեմքեարեաններ..., էջ 16:

¹⁴⁴⁰ «Հայ Անթեպ», Պեյրուք, 1965, թիւ 2, էջ 49:

¹⁴⁴¹ Տարբեր աղբյուրներում հիշատակվում է Արսլանյան կամ Ասլանյան ձևերով:

¹⁴⁴² Պատմութիւն Անթեպի Հայոց, Բ., էջ 277-278:

¹⁴⁴³ Պողարեան Գ., Այնթապականք, Բ., էջ 147:

պղնձեղենը մեծ սպառում ուներ Ադանայից մինչև Մալաթիա, Ուրֆայից մինչև Դամասկոս¹⁴⁴⁴:

Երկաթագործություն և Դարբնություն

Երկաթագործությունն ու դարբնությունը լայն տարածում ունեցող հնագույն արհեստներից էին, վարպետներ էին պատրաստվում՝ տարբեր աշխատանքներ կատարելու համար, ինչպես նաև կենցաղում օգտագործվող բոլոր առարկաները: Պատրաստված իրերը բավարարում էին ներքին շուկայի պահանջները, անգամ արտահանվում շրջակա գյուղեր և նահանգներ:

Մինչև 1870-ական թթ. հումքը ներկրվում էր Զեյթունի երկաթահանքերից, հավաքվում և օգտագործում էին հին ու մաշված երկաթյա իրերը նույնպես: 1880-ական թթ. հումքի ներկրման գործն ընդլայնվում է: Քաղաքում կար 50-ից ավելի խանութ՝ հավասար բաժանված երկաթագործների և դարբինների: Յուրաքանչյուր խանութում աշխատում էր 4-5 երկաթագործ կամ դարբին:

Հայտնի երկաթագործներ էին Նասանյանը, Բարսեղյանը, Զեյթունյան և տարբեր ընտանիքներ Տեմիրձյան (Երկաթագործյան) ազգանունով, հատկապես՝ «Պրուսա Տեմիրձիսի»: Դարբիններից նշանավոր էին Հակոբ Զաթմաձյանը և որդին՝ Գևորգը, Կեոյշենյան Նազարը և որդիները՝ Միքայելը և Գևորգը: Անգուղական վարպետ էր «Ֆիրէնկ» (Կաթուիկ) Կարապետ ուստան և նրա որդին՝ Հաճի Հարությունը (վերջինս կարողացել էր պատրաստել «մարթին» պետական հրացանը): Դարբիններից ոմանք պատրաստում էին միայն գամեր: Հատկանշական է, որ մինչև եվրոպական գամերի ներկրումը Այնթապում բոլոր գամերը հայտնի էին «Մըխճեան» տարբերանշանով¹⁴⁴⁵:

Չուլագործություն

Այնթապում ձուլագործության հիմքերը դրվել են 1800-ականներին, երբ սկսվեցին պատրաստվել գյուղատնտեսական գործիք-

¹⁴⁴⁴ Պողարեան Գ., Այնթապականք, Բ., էջ 296:

¹⁴⁴⁵ Պատմություն Անթեպի Հայոց, Բ., էջ 281-282:

ներ, մասնավորապես՝ արոր, ինչպես նաև զենքերի մասեր, բոժոժներ (շերամի պատյան), զանգակներ, կաղամար (թանաքաման), դգալներ (փոքր շերեփներ), պղնձյա ամանների թափածո մասեր, ջրհաններ և այլն: Պատրաստի ապրանքը արտահանվում էր սիրիական շուկա, Սուեիի և Եգիպտոս: Հումքը՝ ցինկ, անագ, կապար ներկրվում էր Հալեպից: 1915 թ. Այնթապում կար 22 խանութ, յուրաքանչյուրը՝ 3-4 աշխատողով: Նշանավոր արհեստավորներն էին Իշխանյանները, Պանծալյանները, Իսկենյանները, Համապանները և Պռզկեզենյանները: Թերևս այս գործի ամենահայտնի վարպետներն էին Պռզկեզենյանները:

XIX դարի սկզբին հայտնի զինագործ էր Հակոբջանը՝ «Պռզկեզենեան» տնից, միննոյն ժամանակ վարպետը նաև փորագրում էր երկաթի և արուրի վրա: Նրա փորագրություններով զենքերն ու կնիքները մեծ համարում ունեին: Գրիգոր ու Հովհաննես Պռզկեզենյանները սկսում են տեղական միջոցներով ջրհաններ պատրաստել, ինչը համարվում էր մեծ հաջողություն տվյալ ժամանակահատվածի համար¹⁴⁴⁶:

Անվանի մտավորական Գևորգ Պարսումյանի հայրը Այնթապի ձուլագործներից էր, Գևորգը նույնպես սկզբնական շրջանում զբաղվում էր ձուլագործությամբ, հոր արհեստի շնորհիվ ընտանիքը զերծ էր մնում տեղահնությունից, նրանք Այնթապից գաղթում են 1922 թ.: Պարսումյանի որդիներն արդեն Հալեպում ընտանեկան արհեստը վերածում են արվեստի¹⁴⁴⁷:

Զինագործություն

Զինագործության ասպարեզում ավանդույթները փոխանցվում էին սերնդեսերունդ, կային արհեստում հմտացած առանձին ընտանիքներ: Զինագործությամբ զբաղվող մոտ 25 խանութ կար, յուրաքանչյուրում՝ 3-4 աշխատող: Ապրանքը պատրաստվում էր թե՛ ներքին, և՛ թե արտաքին շուկայի համար: Առավել հայտնի էին

¹⁴⁴⁶ Պատմություն Անթեպի Հայոց, Բ., էջ 276:

¹⁴⁴⁷ Պողարեան Գ., Այնթապականք, Բ., էջ 190-191:

«Պոշկեզենեան», «Մագսուտեան» և «Քիւրիւմլեան» տները: 1860-1915 թթ. ընթացքում որպէս լավագոյն վարպետներ հայտնի էին Մահտեսի Եղիա և Նազար Պոշկեզենյանները¹⁴⁴⁸:

Նազար Պոշկեզենյանը Այնթապի զինագործ վարպետներից էր: Նա և որդիները՝ Շովհաննես, Լևոն, և Հարություն Ձենյանները բռնագաղթի սկզբին չեն տեղահանվում, Շովհաննեսը որպէս «կկոց (մաքոք) շինող մասնագետ վարպետ», իսկ եղբայրները որպէս դերձակ, տարատեսակ միջոցների դիմելով, կարողանում են մտնել Զինվորական արհեստանոց: Այնուհետև տարագրվում են Հալեպ, իսկ 1917 թ. կրկին վերադառնում են Այնթապ¹⁴⁴⁹:

Այնթապում դանակագործությամբ և դաշույնագործությամբ զբաղվող 30 խանութ կար, յուրաքանչյուրում՝ 5-6 աշխատող: Հայտնի էին «Պչագճեան» և «Գամաճեան» ազգանունով բազմաթիվ ընտանիքներ: Հիշարժան են «Կէօյօղլուեան» եղբայրները, որոնք նախապէս շրջակա քաղաքներում վաճառում էին իրենց արտադրանքը, այնուհետև դառնում են երկաթի վաճառականներ¹⁴⁵⁰:

Պայտարարություն

1915 թ. Այնթապում պայտարարությամբ զբաղվող 33 խանութ կար, հիշատակվում են Իլիկյան, Սուլազյան, Գարաօղլանյան, Հինտոյան, Իփեկյան, և բազմաթիվ Նալբանդյաններ (Պայտարյան), որոնք սերնդեսերունդ զբաղվում էին այս արհեստով¹⁴⁵¹:

Հյուսնագործության և կահույքագործության ասպարեզում հիշատակվում են էին «Նագաշեան», «Գայմագամեան», «Գրիգորեան», «Ճըպըրգճեան» տները, ինչպէս նաև բազմաթիվ Նաջարյաններ, որոնցից առանձնանում էր Նաջար Գասպարը¹⁴⁵²: Հարություն Գանտահարյանը զբաղվում էր ատաղձագործությամբ և ատաղձի

¹⁴⁴⁸ Պատմութիւն Անթէպի Հայոց, Բ., էջ 282-283:

¹⁴⁴⁹ Պողարեան Գ., Այնթապականք, Բ., էջ 521:

¹⁴⁵⁰ Պատմութիւն Անթէպի Հայոց, Բ. հատոր, էջ 284:

¹⁴⁵¹ Նույն տեղում, էջ 287-288:

¹⁴⁵² Նույն տեղում, էջ 288-289:

վաճառքով¹⁴⁵³: Համետագործությունը և փալանագործությունը նույնպես հատուկ էր հայերին, կար մոտ 30 խանութ, յուրաքանչյուրն ուներ 2-3 աշխատող¹⁴⁵⁴:

Ամփոփելով Այնթապի հայերի ձեռնարկատիրական ու արհեստագործական բնագավառների գործունեությունն ու նրանց կարողությունները, կարող ենք արձանագրել, որ Այնթապի հայերի տնտեսական առաջընթացը փոխկապակցված ու համագործակցված աշխատանքի արդյունք էր, որը համակարգված էր ինչպես անհատական, այնպես էլ ազգային մակարդակներում: Այնթապի հայերի տնտեսական կարողությունների ուսումնասիրությունը բացահայտում է կոնկրետ ազգային գործիչների, որոնք, ընդլայնելով իրենց գործունեության ոլորտն, կարողանում էին ազդեցություն ունենալ ազգային բոլոր գործընթացների վրա: Ազգային դիմագիծ ունեցող անհատների համախմբված ու նպատակային աշխատանքի արդյունքում ձևավորվում էր ազգային գործընթացն առաջ մղող համակարգված մի մարմին, շարժում, որն ազգային կյանք ներթափանցելուց բացի, մտնում էր նաև յուրաքանչյուր անհատական տնտեսություն: Արդյունքում արագանում էր հայերի ազգային առաջընթացը ոչ միայն տնտեսության, այլև գիտակրթական և մշակութային բնագավառներում, իսկ Այնթապում այդ ամենի դրսևորումն առանձնակի էր: Բերված տվյալներն, անշուշտ, չեն ներկայացնում Այնթապի հայերի տեսության ամբողջական պատկերը, սակայն մոտավոր պատկերացում են տալիս Հայոց ցեղասպանության նախօրեին Այնթապի հայապատկան անհատական ու ազգային կալվածքների, ֆինանսական կարողությունների, ինչպես նաև ոչնչացված հայկական կրթամշակութային կառույցների ու դրանց գույքի բռնագրավման մոտավոր ծավալների մասին:

¹⁴⁵³ Պողարեան Գ., Այնթապականք, Բ., էջ 176:

¹⁴⁵⁴ Պատմություն Անթեպի Հայոց, Բ., էջ 290:

3.3. Այնթապի հայերի կրթական հաստատությունները, ընկերությունները և մամուլը

Այնթապի դպրատների պատմությունը, գրչագիրների գործունեությունը սկսվում է հայերի Այնթապում հաստատվելու թվականից ի վեր: Սակայն XIX դարն իրավամբ կարելի է համարել Այնթապի հայոց կրթության ամենաբեղուն ժամանակաշրջանը, հատկապես երկրորդ կեսից սկսած Այնթապում շարունակաբար բացվող հայկական կրթական հաստատություններն իրենց ազգային գործունեությամբ ոչ միայն նպաստում են թրքախոսության շեշտակի նվազմանը, այլև խթանում են այնթապահայության զարգացման ու առաջընթացի բոլոր հիմնական նախապայմանները:

Այնթապում առաջին արական դպրոցը բացվում է 1815-1817 թթ.¹⁴⁵⁵, իսկ արդեն 1912 թ. մեծանուն պրոֆ. Ա. Պեզճյանի ներկայացրած տվյալների համաձայն Այնթապի հայ համայքն ընդհանուր ուներ մոտ 32 դպրոց, 100 երկսեռ ուսուցիչ, 3175 երկսեռ աշակերտ, ինչպես նաև «Կեդրոնական Թուրքիոյ Գոլէճի» 244 ուսնողները (12 մուսուլման), «Ամերիկյան Աղջկաց Բարձրագոյն Վարժարանի» 155 աշակերտները և անգլիացի օրիորդ Ֆրիսսլենի որբանոցում պատսպարվող 250 երկսեռ որբերը¹⁴⁵⁶:

1815?-1830 թթ. Այնթապում գործում էր Աբրահամ և Մուրատ (Հարություն) վարժապետների դպրատունը: Հայր և որդի վարժապետները Հալեպից էին: Հաստատվելով Այնթապում՝ ստեղծում են «Ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի» դպրատունը, որը հանդիսանում է կրթական նոր շարժման ռահվիրան¹⁴⁵⁷:

Աբրահամ և Մուրատ վարժապետների դպրատան սաները հետագայում նույնպես վարում են ուսուցչական գործունեություն:

¹⁴⁵⁵ Հատիտյան Ա., Հայ Այնթապը և իր հերոսամարտը, «Էջմիածին», Էջմիածին, 1970, Գ., էջ 22:

¹⁴⁵⁶ Պեզճեան Յ.Ա., Այնթապի կրթական կացութիւնը, Անցյալն ու ներկան, «Գոչնակ», Նիւ-Եօրք, 1912, թիւ 13, Մարտ 30, էջ 306-307:

¹⁴⁵⁷ Պատմութիւն Անթէպի Հայոց, Ա., էջ 640-641:

Նրանցից չորս առաջատարների (Հաֆրզ (աչագուրկ) Գևորգ Խալֆե, Մասերեճյան Հակոբջան Խալֆե, Պողոս Խալֆե, Գրաճյան Հակոբջան Խալֆե և այն) ջանքերով հիմնադրվում և 1830?-1873 թթ. ընթացքում, քաղաքի հին եկեղեցու վրայի մի քանի սենյակներում, գործում էր Վերի վարժատունը: Նշվում է, որ ուսուցման առարկաները պետք է որ կրկնեին Աբրահամ և Մուրատ վարժապետների դպրատան ծրագիրը, որոնք էին՝ ընթերցանություն, քերականություն, վերլուծություն, երգեցողություն, գիր կամ գրքերի օրինակում¹⁴⁵⁸:

1856 թ. Այնթապում հիմնադրվում է հայկական առաջին կանոնավոր ուսումնական հաստատությունը՝ «Ազգային Ներսեսեան վարժարանը», որն անվանակոչվում է ի պատիվ Ներսես Շնորհալու: Վարժարան իր գործունեությունը շարունակում է մինչև 1915 թ.:

Քաղաքի Զուգուր թաղամասում էր գնվում 1600 դուրուշ արժողությամբ հողամաս, որի վրա կառուցվում է ընդարձակ սրահով և յոթ սենյակներով, երկհարկանի դպրոցի շենքը: Աշխատանքներին օժանդակում է ազգային երևելիներից Նազար աղայի որդին՝ Նիկողոս Նազարեթյանը և Հովսեփ սարկավազ Աշճյանը:

1870 թ. աշակերտների թվի ավելացմանը զուգահեռ կառուցում է գետնահարկ մեկ սրահ, որը 500 մարդ տեղավորելու հնարավորություն ուներ: Վարժարանին կից կար ընդարձակ խաղահրապարակ, ծառաստան ու պարտեզ¹⁴⁵⁹:

«Ազգային Ներսեսեան» վարժարանը վեցամյա նախակրթարան էր՝ Ծաղկոցի¹⁴⁶⁰ առաջին բաժնով: Վարժարանը կառավարում էր Ազգային վարչության կողմից նշանակված Հոգաբարձությունը: Մինչև 1880-ական թթ. սոցիալական բոլոր շերտերին պատկանող

¹⁴⁵⁸ Պատմություն Անթեպի Հայոց, Ա., էջ 646-650:

¹⁴⁵⁹ Նույն տեղում, էջ 652-654:

¹⁴⁶⁰ Ծաղկոց կամ նախապատրաստական, երբեմն կոչվել է նաև Սկասնակ, նախատասեված էր 6-8 տարեկանների համար, տնում էր երկու տարի: Այնուհետև նախակրթարանն է կամ կրթարանը՝ 9-16 տարեկանների համար:

երեխաները հաճախում էին «Ներսեսեան» վարժարան: «Վարդան-եանի» և «Ադենականի» հիմնադրումից հետո միայն անապահով խավի երեխաները մնացին «Ներսեսեանում»: Նշվում է, որ նրանց թիվը երբեք 400-ից չի պակասել: «Ազգային Ներսեսեան» վարժարանի բյուջեն ձևավորվում էր «Ազգային Միլլէթ խանի» եկամուտներով, որի մոտ 2/3-ը պատկանում էր վարժարանին¹⁴⁶¹:

1965 թ. «Հայ Անթէպ» պարբերականում հրապարակված է «Ներսեսեան» վարժարանի կալվածքի առք ու վաճառքի (իլամ կամ հուճճէթ) փաստաթղթի լուսապատճենը, ինչպես նաև փաստաթղթի թարգմանությունը, որը ներկայացնում ենք ստորև.

1) «Թաղը ի հնուց անդի կոչուած է *Չուգուր Մահալլէ* եւ անկէ՝ *Չուգուր Պոսթան* բացատրութիւնը:

2) Կալուածը պատկանած է Հալէպ բնակող մի ոմն Սիւլէյման Պին Հաճի Մուհամէտ Պին Ապտալլայի, որուն Այնթապի փոխանորդները եղած են Մուհսին Զատէ էլ Հաճ Հիւսէյն պէյ Պին Մուհամէտ Աղա եւ Գտն Ալըճը Զատէ Սէյտ Մահմուտ Աղա Պին Հիւսէյն:

3) Կալուածին մաս կազմած են *միւսթազ* (ընտիր) տուն մը կրկնակ *նէրտիւպէնով* (սանդուխ), երկու պատուհանով, *խազինէ-յով* (մթերանոց) եւ խոհանոց, մթերանոց ու ախոռ պարունակող ներքնայարկով մը:

4) Գնորդն է, իբրեւ Հայոց ներկայացուցիչ, Գրիգորի որդի Մահտեսի Կարապետ, ի ներկայութեան *Թա'իֆէի էրմէնի* (Հայ ժողովուրդ) *գոճապաշը*ներէն (երեւելի) *Միւսպայա'աճը* (արծաթ եւ ոսկի գնող) Մահտեսի Արթինի որդի Նազարի:

5) Գնումը կատարուած է *Միլլէթի Արմենեանի* (Հայ Ազգ) մանուկներուն, *Ինճիլի Շէրիֆ* (Ս. Աւետարան) ուսուցանելու եւ գիր սովորեցնելու, համաձայն իրենց ծէսին:

6) Կալուածին արժէքը եղած է 1600 դրուշ:

¹⁴⁶¹ Պատմութիւն Անթէպի Հայոց, Ա., էջ 658-659: Տե՛ս նաև Մայիս, Վարդ, Այնթապ քաղաք, «Արաքս», Ս. Պետերբուրգ, 1888, Գիրք Բ., էջ 60:

7) Գնումի թուականն է 7 Շա'յան 1267, որ կը համապատասխանէ Փրկչական 7 Յունիս 1851 թուականին»¹⁴⁶²:

1858 թ. Խաչատուր Պողարյանի, Գրիգոր Կյուլեսերյանի և տվյալ ժամանակ դեռևս աշխարհական Գևորգ աղա Սյուլահյանի կողմից հիմնադրվում է Այնթապի հայոց առաջին խնամակալությունը (ընկերությունը) «Մարդասիրական» անունով: Գործին մեծ եռանդ և առաջընթաց է հաղորդում Հովհաննես Քյուրքչիանովը՝ նախաձեռնությունն առավել կազմակերպված ու կանոնավոր դարձնելով¹⁴⁶³:

«Մարդասիրական» ընկերության նպատակներից հիմնականը արհեստավոր երիտասարդներին, չափահաս մարդկանց գրել կարդալ սովորեցնելն էր: Ստեղծվում է «Գիշերային վարժարանը», դասերը կազմակերպվում են շաբաթը երեք անգամ՝ 12 և 24 մարդուց բաղկացած խմբերում: Զարգացման ու առաջընթացի արդյունքում ընկերությունը վերակազմավորվում է՝ ընդլայնելով գործունեությունը: 1860 թ. այն վերանվանվում է «Ուսումնասիրաց Թանգարան» ընկերություն: 1862 թ. հիմնադրվում է Այնթապի հանրային առաջին Մատենադարանը, որտեղ հավաքվում են բազմաթիվ գրքեր ու բերում ժամանակի գրեթե բոլոր թերթերը: Նորահաստատ Մատենադարանն ուներ մոտ 1000 կտոր գիրք (հետագայում՝ «Վարդանեան» Մատենադարան)¹⁴⁶⁴: «Թանգարանի» գրադարանի «մեծարժեք գրքերու» հիմնական նվիրատուն է Հովսեփ սարկավազ Հովսեփյանն էր¹⁴⁶⁵:

1865 թ. Կ. Պոլսում հրատարակված «Մասիս» թերթի ներկայացնելով «Թանգարան» ընկերության գործունեությունը, նշում է,

¹⁴⁶² «Հայ Անթեպ», Պէրոյթ, 1965, թիւ 2 (18), Այնթապի Ներսէսեան Վարժարանը, էջ 43-45:

¹⁴⁶³ «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, 1899, թիւ 696, Յունուար 30-12, էջ 1:

¹⁴⁶⁴ Պատմութիւն Անթեպի Հայոց, Ա., էջ 660:

¹⁴⁶⁵ Վ. Ն. Կ., Վ. Ս. Քիւրքճեանը եւ Վարդանանց կրթարանը, «Հայ Անթեպ», Պէրոյթ, 1962, թիւ 5, էջ 4:

որ հիմնադարումից ի վեր երեք տարվա գործունեության ընթացքում, նրա դրամագլուխը կազմել է 10000 դուրուշ¹⁴⁶⁶:

Շարունակելով գիշերային դպրոցների և մատենադարանի կարևորագույն գործունեությունը, բացվում է նաև կիրակնօրյա լսարանը: Ընկերության եկամտի գլխավոր աղբյուրը հանդիսանում էին եկեղեցու և Լսարանի առջև դրված կիրակնօրյա պնակները¹⁴⁶⁷: Իսկ արդեն 1867 թ. ընկերությունը՝ Գրիգոր Աբարդյանի ու Հովհ. Քյուրքչիանովի խորհրդով նպատակադրվում է Այնթապում իգական վարժարան հիմնադրել¹⁴⁶⁸: Ընկերությունն ուներ նաև նախակրթարան «Մեսրոպեան Սանուց» անունով, որը սուղ նյութական միջոցների պատճառով շուտով փակվում է¹⁴⁶⁹:

1864 թ. Այնթապի Հայոց առաջնորդ Մկրտիչ Սրբազանի նախաձեռնությամբ, ազգային երևելիների ու Այնթապի Թաղական խորհրդի հետ համագործակցությամբ, դեկտեմբերի 15-ին գումարված ժողովում ստեղծվում է «Սահմանադրական Ուսումնասեր» ընկերությունը, որի առաջին բաժանորդը դառնում է Սրբազանը՝ նվիրաբերելով 10 լիրա: Նվիրատվությունները շարունակվում են մյուս մասնակից անդամների կողմից՝ նույն օրն իսկ հավաքելով 280 լիրա: Հանգանակված գումարը դեկտեմբերի 27-ին արդեն հասել էր 430 լիրայի, որին գումարվելու էր «Թանգարան» ընկերության 100 լիրան և ևս 100 լիրա «եկեղեցւոյն սնտուկէն»: Նախատեսվում էր ստեղծել 1000 լիրա դրամագլուխ. «...եւ յատուկ յանձնաժողովի մը ձեռք շահու դրուելով՝ արդիւնքը վարժապետաց ամսականին պիտի յատկանայ¹⁴⁷⁰»:

1867 թ. ազգային-կրթական տարբեր ընկերությունների ձուլմամբ (Ուսումնասիրաց Թանգարան, Լսարան և այլն) կազմվում է

¹⁴⁶⁶ «Մասիս», Կ. Պոլիս, 1865, թիւ 676, 23 Յունվար, էջ 3:

¹⁴⁶⁷ Պատմութիւն Անթէպի Հայոց, Ա., էջ 660:

¹⁴⁶⁸ «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, 1899, թիւ 696, Յունուար 30-12, էջ 1:

¹⁴⁶⁹ Վ. Ն. Կ., Վ. Մ. Քիւրքճեանը եւ Վարդանանց կրթարանը, «Հայ Անթէպ», Պէյրութ, 1962, թիւ 5, էջ 4:

¹⁴⁷⁰ «Մասիս», Կ. Պոլիս, 1865, թիւ 676, 23 Յունվար, էջ 3:

նոր ընկերություն, ի հիշատակ Վարդանանց և կոչվում է «Սրբոց Վարդանանց Թանգարան» («Վարդանանց ընկերություն») ընկերություն: Ընկերության նախագահն էր Այնթապի Հայոց թեմի առաջնորդ Գրիգորիս Ծ. վարդապետ Աբարդյանը, ատենապետ է ընտրվում Նիկողոս Նազարեթյանը, իսկ ատենադպիր Հովհաննես Լուսարարյանը¹⁴⁷¹:

«Արևելք» թերթի բնորոշմամբ «Վարդանանց» ընկերությունը հաստատվել է. «...խումբ մը տեղացի գործօն ուսումնասերներու ձեռամբ, մայրենի լեզու և կրթութիւն ծաւալելու նպատակաւ»: Հրապարակային գործունեությունը սկսել է 1882 թ. «Վարդանանց» կրթարանի բացումով, որը «Կիլիկիոյ բոլոր վարժարանաց բարձրագոյնը հանդիսանալով, գովելի արդեամբ պսակած է հիմնադիրներուն աշխատութիւնը»¹⁴⁷²: Վարդանյան ընկերության վարկանիշը շատ բարձր էր ողջ Կիլիկիայում, և ժամանակակիցների վկայությամբ լիովին համապատասխանում էր այդ գնահատականներին: «Վարդանանցի» գործունեության արդյունքում լայն թափ է ստանում հայոց լեզվով կրթության տարածումը Այնթապում, նրա բեմադրած թատերական ներկայացումները լուրջ ազդեցություն էին ունենում ազգաբնակչության կրթական վիճակի բարձրացման վրա: Ընկերության ջանքերի արդյունքում Այնթապ է

¹⁴⁷¹ «Վարդանանց» ընկերության «Կանոնագրութիւնը» հետևյալն էր.

ա) Շաբաթական նուազագոյն մէկ մէթալիկ տուրք վճարել:

բ) Շաբաթը երեք օր գիշերային դպրոց պահել, կարդալ չգիտցողներուն կարդալ սորվեցնելու համար:

գ) Պայման է հայերէն խօսիլ:

դ) Ազգային Սահմանադրութեան գործադրութիւնը ապահովել եւ Եկեղեցիի բարեկաման աշխատիլ:

ե) Ընտանեկան դաստիարակութիւնը ապահովելու համար բանալ աղջկանց յատուկ դպրոց մը:

զ) Երբ բաւարար դրամագլուխ գոյանայ՝ սեպհական դպրոց մը բանալ նաեւ մանչերու համար, որք ու աղքատ տղաքը ձրի օրէն կարդացնելու»: Տե՛ս Պատմութիւն Անթէպի Հայոց, Ա., էջ 666:

¹⁴⁷² Վարդանանց ընկ. Այնթապի, «Արեւելք», Կ.Պոլիս, 1890, 24 Յունուար-5 Փետրուար, էջ 3:

մուտք գործում մեծածավալ գրականություն, այդ թվում պարբերական մամուլ¹⁴⁷³, դրանից բացի, «Վարդանեանի» ուսուցչական և աշակերտական կազմի կողմից ստեղծվում ու լայն տարածում են գտնում տեղում հրապարակվող տարբեր թերթեր: Ընկերության գործունեությունը, հիրավի, շրջադարձային էր Այնթապի հայոց կրթության ոլորտի զարգացման ու առաջընթացի գործում:

«Վարդանեան» ընկերությունը շարունակում է գիշերային վարժարանի աշխատանքները, իսկ 1874 թ. հաստատում է «Վարդանեանց Մեսրոպեան Սանուց» վարժարանը: Նախապես վարժարանը Թաղական խորհրդի կարգադրությամբ հաստատվում է «Ազգային Ներսէսեան» վարժարանի շենքում: Առաջին տարում աշակերտների թիվը 30 էր՝ 2 մեջիտ թոշակով, հաջորդ տարի աշակերտները կրկնապատկվում են և վարժարանն իր գործունեությունը շարունակում է Եկեղեցու թաղում՝ Տուգճու Թորոսի տանը՝ ազգային բարերար վաճառական Գալուստ Ղազարյանի դրամական օժանդակությամբ և Վահան Քյուրքչյանի տնօրինությամբ: 1878 թ. ընկերությունը ստեղծում է կիրակնօրյա լսարան, բացի այդ, որոշակի եկամուտ ապահովելու նպատակով ժամանակ առ ժամանակ կազմակերպվում էին թատերական ներկայացումներ¹⁴⁷⁴:

1884 թ. «Արևելյան մամուլը» հայտնում է, որ «Վարդանեանն» ունի 50 աշակերտ¹⁴⁷⁵, «Փունջ, Առաջին Նուէր Յաշակերտաց Վարդանեան Կրթարանին Այնթապի» նկարագրող, հայերեն ու հայատառ թուրքերեն գրքույկում 1884 թ. ներկայացվում են 54 աշակերտի անունները. «Անուանք աշակերտաց Վարդանեան կրթարանին» համաձայն որի Ա. դասարանում սովորում էին 9, Բ.՝ 8, Գ.՝ 16, Դ.՝ 14, Ե.՝ 7 աշակերտ¹⁴⁷⁶: «Արևելքի» տվյալներով «Վարդանեանը» 1885 թ.

¹⁴⁷³ Վարդանեան ընկ. Այնթապի, էջ 3:

¹⁴⁷⁴ Պատմություն Անթեպի Հայոց, Ա., էջ 668, 714:

¹⁴⁷⁵ Այնթապի Վարդանանց Ընկերություն, «Արևելյան Մամուլ», Զմյուռնիա, 1884, թիվ 6, էջ 320:

¹⁴⁷⁶ Փունջ, Առաջին Նուէր Յաշակերտաց Վարդանեան Կրթարանին Այնթապի, Կ. Պոլիս, տպ. Նշան Կ. Պերպերեան, 1884, էջ 30-32:

արդեն ուներ 75 աշակերտ և 9 ուսուցիչ¹⁴⁷⁷, նույն թերթի հրապարակման համաձայն, 1890 թ. «Վարդանեան» ընկերության գործունեությունը հետեզհետե ընդլայնվում էր, նշյալ տարում շրջանավարտների թիվը 9 էր, որոնց մեծամասնությունն անվճար էին սովորում, միաժամանակ, նշվում էր, որ մշտապես 20 ուսանողներ կրթարանում անվճար են կրթություն ստանում¹⁴⁷⁸:

1888 թ. Պետերբուրգի «Արաքսը» գրում է, որ տվյալ ժամանակամիջոցում հայերն Այնթապում ունեին 7 երկսեռ վարժարան, որոնց մեջ առաջատարն էր «Վարդանեանը»¹⁴⁷⁹: Այնթապի հայոց կրթության հիմնասյուներից մեկը հանդիսացող՝ «Վարդանեան» կրթարանն իր գործունեության 33 տարիների ընթացքում տվել է 118 շրջանավարտ, հարկավոր է նշել, որ մեծ թիվ են կազմել վարժարանի թերավարտները¹⁴⁸⁰:

1914 թ. հրատարակված տվյալների համաձայն «Վարդանեան»-ի շրջավարտները բաշխվել են հետևյալ կերպ¹⁴⁸¹.

Տարի	Թիվ	Տարի	Թիվ	Տարի	Թիվ	Տարի	Թիվ
1888	6	1896	6	1903	8	1910	8
1889	4	1898	3	1905	8	1911	5
1890	9	1899	3	1906	10	1912	6
1891	8	1900	9	1908	11	1913	14

«Վարդանեանի» առաջին բարերարներն էին Նիկողոս Նազարեթյանը և Գալուստ Ղազարյանը, իսկ հիմնադիր-հոգաբարձուները՝ Գալուստ Ղազարյանը, Խաչատուր Պողարյանը, Հովհաննես Յաղուպյանը, Հակոբ Թերզիպաշյանը և Վահան Քյուրքչյանը

¹⁴⁷⁷ «Արեւելք», Կ. Պոլիս, 1885, թիւ 358, 16 ապրիլ:

¹⁴⁷⁸ Վարդանեան ընկ. Այնթապի, «Արեւելք», Կ. Պոլիս, 1890, թիւ 1809, 24 Յունուար, էջ 3:

¹⁴⁷⁹ Վարդ, Այնթապ քաղաք, «Արաքս», Ս. Պետերբուրգ, 1888, Գիրք Բ., Մայիս, էջ 60:

¹⁴⁸⁰ Պողարեան Գ., Այնթապի Վարդանանց ընկերութեան Հարիւրամեակին առիթով, «Հայ Անթէպ», Պէրուրթ, 1967, թիւ 2 (26), էջ 2:

¹⁴⁸¹ Գ. Պ., Վարդանեան կրթարան, «Հայ Անթէպ», Պէրուրթ, 1967, թիւ 2 (26), էջ 10:

(ուսումնապետ): Հետագայում, որպես հոգաբարձու երկար տարիներ ծառայում էին Գարեգին քահանա Պողարյանը, որը 1906 թ. սկսած «Վարդանեան» ընկերության նախագահն էր, Հակոբ Համալյանը, Հրանտ Սյուլահյանը, Հակոբ Ղազարյանը, Սահակ Սահակյանը, Սարգիս Սապունձյանը, Թորոս Ղազարյանը, Հովհաննես Խաշխաշյանը և այլն¹⁴⁸²:

«Փունջ, Առաջին Նուէր Յաշակերտաց Վարդանեան Կրթարանին Այնթապի» գրքույկում նշվում է, որ դպրոցի եկամտի աղբյուրներին էին աշակերտների ուսման վարձը և Գալուստ Ղազարյանի կողմից հատկացվող տարեկան 4000 դուրուշ նպաստը, իսկ տարեկան հաշվով 50 ոսկու չափ պակասը լրացվում էր տարբեր ճանապարհներով, օրինակ նշված գրքույկի հրատարակման նպատակը նույնպես նրա վաճառքից վարժարանին հասույթ ապահովելն էր: Նշվում էր նաև, որ բազմաթիվ ուսուցիչներ սկզբնապես աշխատում էին առանց վճարվելու¹⁴⁸³, ինչը նույնպես ներդրում էր վարժարանի կայացման համար:

XIX դարի վերջին և XX դարի սկզբին վարժարանի տարեկան ծախսը հասնում էր 20000 դուրուշի: Վարժարանի գործունեության համար մեծ ներդրումներ է կատարում Գալուստ Ղազարյանը, շինարարության ծախսերը փակելու համար միջոցներ է հայթայթում Նիկողոս Նազարեթյանը, նվիրատվություններ էին կատարում տարբեր վաճառականներ ևս, սակայն մշտապես հավելյալ գումար հայթայթելու անհրաժեշտություն կար: Վարժարանը հրատարակում էր ժողովրդական գրքույկներ՝ առողջապահական, աղոթագրքեր և այլն: «Միացեալ» ընկերության կողմից ևս եղել են հատկացումներ՝ գրենական մեծարժեք պիտույքների տեսքով: Փարիզի «Ալիանս Ֆրանսէզ» ընկերությունը տարկեան հատկացնում էր 300 ֆրանկ ֆրանսերենի ուսուցման համար, Լոնդոնի

¹⁴⁸² Գ. Պ., Վարդանեան կրթարան, էջ 9:

¹⁴⁸³ Փունջ, Առաջին Նուէր Յաշակերտաց Վարդանեան Կրթարանին Այնթապի, էջ 4-5:

«British and Foreign School Society»-ին տրամադրում է դասագրքեր, քարտեզներ և այլն: Ռուսաստանից Խորեն վարդապետ Ստեփանեն հատկացնում է նաև իր «Սահակ-Մեսրոպեան» մրցանակի գումարը՝ 10 օսմ. ոսկի¹⁴⁸⁴:

1899 թ. «Վարդանեան» ընկերության նախաձեռնությամբ և ջանքերով հիմնադրվում է «Վարդանեան» մանկապարտեզը: Վարչական պատասխանատվությունը ստանձնում է «Վարդանեան» կրթարանի հոգաբարձությունը՝ Նազարեթ Մանուշակյանի գլխավորությամբ: Առաջին տարում սաների թիվը մոտ 50 էր, ապա հասնում է 100-ի:

Պահպանվել է 1909-1910 թթ. ուսումնական տարված ծնողների վճարած կրթաթոշակի ցուցակը¹⁴⁸⁵, որը հնարավորություն է տալիս որոշակի պատկերացում կազմել ինչպես հաստատության ֆինանսական հատկացումների մասին, այնպես էլ տեսնել վերոնշյալ տարեշրջանի սաների քանակը.

Անձ	Գումար
66	2½ - ական մեջիտ / 3918.75 դահ.
6	2 - ական մեջիտ / 285. դահ.
10	1 - ական մեջիտ / 237.50 դահ.
2	½ - ական մեջիտ / 23.75 դահ.
4	անվճար
Ընդհանուր	
88	4465.00 դահ

«Վարդանեանի» Այնթապում գտնվող շրջանավարտները 1913 թ. հունվարի 22-ին հիմնադրում են շրջանավարտների միություն, որի առաջին վարչության կազմում էին Հրանտ Սյուլահյանը՝ Ատենապետ, Սարգիս Թոփալյանը՝ Ատենադպիր, Հովհաննես Տեր-

¹⁴⁸⁴ Քիրքճեան Վ. Մ., Ազգային Յուշեր, Վարդանեան կրթարանի ներսն ու շուրջը, «Հայաստանի Կոչնակ», Նյու-Եորք, 1928, թիւ 46, Նոյեմբերի 17, էջ 1456:

¹⁴⁸⁵ Պատմություն Անթեպի Հայոց, Ա., էջ 769:

Ղազարյանը՝ Գանձապահ և խորհրդականներ՝ Ավետիս Խան-զատյանը, Խորեն Վարժապետյանը, պրոֆ. Զամիչյանը¹⁴⁸⁶:

«Սրբոց Վարդանանց Թանգարան» ընկերությունը հաստատում է Այնթապի առաջին «Գործակցական» ընկերությունը «Անձնական» ընկերություն անունով: Նորաբաց ընկերությունը 1 մեջիտ բաժնետոմսերով գոյացնում է 400 օսմ. ոսկի դրամագլուխ, երեք տարբեր թաղամասերում հաստատում է նպարատներ, որտեղից գնումներ էին կատարում ընկերության բոլոր անդամները: Հաստատվելուց կարճ ժամանակ անց ընկերության անդամների թիվը անցնում էր 300-ը¹⁴⁸⁷:

1873 թ. մարտի 1-ին Կիլիկիո կաթողիկոս Մկրտիչ Քեֆսիզյանի նախաձեռնությամբ ու այնթապցիների նյութական և բարոյական աջակցությամբ բացվում է «Կիլիկիոյ Գիշերօթիկ վարժարանը»¹⁴⁸⁸: Վարժարանի հիմնական ծախսերը հոգում էին Թաղական խորհուրդը և Այնթապի *աղաները*¹⁴⁸⁹: Նշվում է, որ Գիշերօթիկը բացվում է «Հայկանուշեան» վարժարանի հին սրահում և հանդիպակաց մի քանի սենյակների մեջ: Աշակետների թիվը պետք լիներ 30 (առաջին տարին վարժարանը ունենում է 16 գիշերօթիկ աշակերտ, մի մասը ընտրված Այնթապի ազգային վարժարանից, մյուսը՝ Կիլիկիայի տարբեր քաղաքներից¹⁴⁹⁰) ինչպես նաև թեմական այլ քաղաքներից: Աշակերտները բաժանվում էին երկու խմբի՝ երեցներ և կրտսեր, կրում էին համազգեստ¹⁴⁹¹, վերարկուի օձիքի

¹⁴⁸⁶ Գ. Պ., Վարդանեան կրթարան, «Հայ Անթեպ», Պեյրութ, 1967, թիւ 2 (26), էջ 11:

¹⁴⁸⁷ Պատմութիւն Անթեպի Հայոց, Ա., էջ 668:

¹⁴⁸⁸ Քիւրքճեան Վ. Մ., Ազգային Յուշեր, Կիլիկիոյ Գիշերօթիկ վարժարանը, «Հայաստանի Կոչնակ», Նյու-Եորք, 1928, թիւ 6, Փետրուար 11, էջ 173:

¹⁴⁸⁹ Պօղարեան Գ., Կիլիկիոյ Գիշերօթիկ վարժարանը, Այնթապ (1873-1877), «Նոր Այնթապ», Պեյրութ, 1973, թիւ 3 (55), էջ 20:

¹⁴⁹⁰ Քիւրքճեան Վ. Մ., Ազգային Յուշեր, Կիլիկիոյ Գիշերօթիկ վարժարանը, «Հայաստանի Կոչնակ», Նյու-Եորք, 1928, թիւ 6, Փետրուար 11, էջ 174:

¹⁴⁹¹ «...պաշտօնական համազգեստը,- սեւ ցիսիէ կապայ (սաքօ), մուր-կապոյտ «աղտկորուս» կտաւէ էնթարի, սեւ կաշիէ եէմէնի: Անոնց հետ կար ուրիշ

վրա կրելով «Կիլիկիոյ Վարժարան» արծաթագոծ մակագրությունը¹⁴⁹²: 1875 թ. խոլերայի համաճարակի պատճառով վարժարանը ողջ տարին փակ է մնում, իսկ նոր ուսումնական տարում աշակերտների թիվը բավականին պակասում է, եկամուտը նվազում է ու սկսում չբավարարել: 1876 թ. որոշում է կայացվում փակել Գիշերօթիկի բաժինը, մեկ տարի հետո փակվում է նաև Ցերեկօթիկը¹⁴⁹³: Վ. Քյուրքչյանը «Կիլիկիոյ Գիշերօթիկ վարժարանի» փակման տարին նշում է 1877 թ. «Գիշերօթիկ դրությւնը ջնջուած էր 1877-ին սկզբները, եւ մնացեր էին տեղացիները միայն, իբրեւ ցերեկեայ ուսանողներ: Շատ չանցած անոնք ալ ցրուեցան եւ կամ ազգ. վարժարանին ուսուցչութեան կոչուեցան»¹⁴⁹⁴:

«Կիլիկիոյ Գիշերօթիկ վարժարանի» «կրտսեր» խմբի սաներից՝ Վահան Քյուրքչյանը, Նազարեթ Ներսեայանը, Ռաֆայել Մինասյանը (Դերձակյան) 1874 թ. հիմնադրում են «Եղեմեան» ընկերությունը, որի նպատակն էր «ծառայել Հայ ազգին բարեխաղութեանը»: Հիմնադիրները նախատեսում էին նաև ստեղծել տպարան:

Կարճ ժամանակ անց ընկերությունը վերակազմավորվում է «Ադինական» ընկերության, որը միննույն «դրախտ» բառի եբրայական ձևի այլ տառադարձումն էր: Այնթապի «Ադենական» ընկերությունն իր գործունեության 40 տարիների ընթացքում աշխատում է մեծ արդյունավետությամբ՝ թե՛ որպէս կրթական, և՛ թե՛ որպէս

որոշիչ նշան մըն ալ գոր կ'ուզէի ցուցադրել առաւելապէս: Վերարակուի օձիքը, հանգրիճման կէտին երկու կողմը կարուած էին մէյմէկ ճերմակ թիթեղ, արծաթագոծ,- մէկուն վրայ դրոշմուած «վարժարան» բառը եւ միւսին վրայ «Կիլիկիոյ» բառը»: Տէս «Հայաստանի Կոչնակ», Երու-Եորք, 1929, թիւ 5, Փետրուար 2, Ազգային Յուշեր, Կիլիկիոյ Տ. Մկրտիչ կաթողիկոսը, (Պատանեկան ակնոցով), Քիւրքճեան Վ. Մ., էջ 142:

¹⁴⁹² Պատմութիւն Անթէպի Հայոց, Ա., էջ 681:

¹⁴⁹³ Նույն տեղում, էջ 682:

¹⁴⁹⁴ «Հայաստանի Կոչնակ», Երու-Եորք, 1928, թիւ 6, Փետրուար 11, Ազգային Յուշեր, Կիլիկիոյ Գիշերօթիկ վարժարանը, Քիւրքճեան Վ. Մ., էջ 175:

բարեգործական-որբախնամ կազմակերպություն¹⁴⁹⁵: Կ. Պոլսի «Բյուրակն» թերթը հակիրճ ներայացնում է «Ադենական» վարժարանն ու խրախուսում դառնալ ադենական. «կ'ուսուցանէ Օսմ., Հայ, Անգղ. Նաեւ ՄԷՃԷԼԼԷ, տոմարակալութիւն, քաղ. տնտեսութիւն եւ գիտական դասեր: Ընթերցավարտները առանց քննութեան քաղաքին Կ. Թ. Քօլէճի Freshman կարգը կ'ընդունուին: Վարժարանը, թէեւ ցերեկօթիկ, ամէն դիրտութիւն կ'ընծայէ դրսեցի ուսանողաց: Դիմել տնօրինութեան»¹⁴⁹⁶:

1882-1884 թթ. «Ադենական» ընկերությունը մեծ առաջընթաց է ապրում, կարողանում է տարածք գնել վարժարանի համար, նախ՝ քառորդ մասով, այնուհետև, 6 տարին չլրացած, ամբողջությամբ: «Հասիրիի Տուա Երիի» որբանոցը տեղափոխվում է նոր վայր, իսկ 1885 թ. արդեն վերածվում որբանոց դպրոցի՝ ցերեկօթիկ աշակերտներով: Կարճ ժամանակ անց որբանոցը վերածվում է «Ադենական» վարժարանի՝ պահելով նաև որոշակի թվով որբեր: 1896 թ. ջարդերից հետո Հին դարպասի սենյակները դառնում են որբերի ապաստարան: Վարժարանն ուներ ծաղկոցի, նախակրթարանի և կրթարանի բաժիններ, կիրակնօրյա լսարան: Հոգաբարձուների և խնամակալների թվում էին Այնթապի լավագույն մտավորականներն ու վաճառականները՝ հանձինս՝ Հակոբ Գարամանուկյանի, Կարուճ Մերճենյանի, Հովսեփ Առաքելյանի, Հարություն Գրաճյանի, Հովսեփ Աշճյանի, Գրիգոր Ասեյանի, Հարություն Պասամճյանի, Մելքոն Գապագյանի, Կարապետ Գարդայանի և այլոց¹⁴⁹⁷: 1885 թ. Կ.Պոլսի «Արևելքը» հաղորդում է, որ նույն տարում բացված Որբանոց-դպրոցում արդեն անվճար սովորում էր 15 աշակերտ¹⁴⁹⁸, 1887 թ. աշակերտների թիվը հասնում է 20-ի¹⁴⁹⁹:

¹⁴⁹⁵ Քիւրքճեան Վ. Ս., Ազգային Յուշեր, Ադինական եւ Վարդանեան, Նույն տեղում, թիւ 38, Մեպտեմբեր 22, էջ 1195-1196:

¹⁴⁹⁶ «Բիւրակն», Կ. Պոլիս, թիւ 28, 1906, 5 օգոստոս:

¹⁴⁹⁷ Պատմութիւն Անթէպի Հայոց, Ա., էջ 742-743:

¹⁴⁹⁸ «Արեւելք», Կ. Պոլիս, 1885, թիւ 383, 13 Ապրիլ:

1892 թ. «Ադենական» վարժարանը տալիս է առաջին շրջանավարտները, իսկ արդեն 1911 թ. Օսմանյան կայսրության կրթության նախարարության վավերացումով դառնում յոթամյա¹⁵⁰⁰ Երկրորդական վարժարան՝ 1913 թ ունենալով առաջին շրջանավարտները: Ավելացող աշակերտների թվի հետ, (օր. 1913-1914 թթ. ուսումնական տարում աշակերտների թիվը հասնում էր 288-ի) առաջանում է ավելի ընդարձակ շենք ունենալու խնդիրը¹⁵⁰¹: «Ադենական» վարժարանի Խնամակալության անդամ և մշտապես կրթարանի գործունեությանն աջակից Սարգիս Գրաճյանի ջանքերով քաղաքից դուրս գնվում է 10000 կանգուն հող՝ դպրոցը ընդարձակելու նպատակով¹⁵⁰²: Մինչ այս ընդարձակ կալվածքի գնումը նորահաստատ «Ադենական» որբանոց-դպրոցն իր գործունեությունը սկսել էր Գասթել-բաշի թաղամասում վարձակալած Հասերլի դպրոց (հետագայում այս շենքը վերածվում է Նիզիպլեան թանգարանի) կոչված հին շենքում: 1890 թ. առաջին կալվածքն է ձեռք բերվում՝ եկեղեցու թաղում ընդարձակ բակ ունեցող մի քանի սենյակներով որտեղ կառուցվում է նաև ընդարձակ սրահ: 1906 թ. դպրոցի դասասենյակներն այրվում են, սակայն անմիջապես տեղում կառուցվում են ութ խանութ, իսկ խանութների վրա էլ վեց դասասենյակ և մեկ սրահ:

«Ադենական» վարժարանի նյութական հիմնական աղբյուրներն էին՝

1. Աշակերտների կրթաթոշակը;
2. Կիրակնօրյա լսարանի հասույթը;
3. Ութ խանութի վարձը;

¹⁴⁹⁹ Ղեռնդ քահանա Տեր-Նահապետեան, Գաւառք, «Երկրագունտ», Կ. Պոլիս, 1887, թիւ 3-4, Մարտ-Ապրիլ, էջ 159:

¹⁵⁰⁰ Նշվում է նաև, որ նախապես դառնում է վեցամյան նախակրթարան Օադկոցից առանձին, այնուհետև իննամյա բարձրագույն նախակրթարան՝ Երկրորդական վարժարանի աստիճանով: Պատմութիւն Անթէպի Հայոց, Ա., էջ 749:

¹⁵⁰¹ Նույն տեղում, էջ 743-747:

¹⁵⁰² Նույն տեղում, էջ 763:

4. Հանդես-ներկայացումների հասույթը;
5. «Ադենական» ընկերության անդամների տարեվճարը;
6. Սափրիչի մեկ խանութի հասույթը;
7. Հարսանիքի, մկրտության, թաղումի առթիվ նվիրատվություններ:

1885 թ. 15 որք սասներով իր գործունեությունը սկսած որքանոց դպրոցը, վերածվելով վարժարանի 1892-1913 թթ. ունենում է 97 շրջանավարտ: 1915 թ. «Ադենականը» բարձրագույն վարժարանի աստիճանի էր հասել ու ուներ 300 աշակերտ¹⁵⁰³:

Հայտնի է, որ Այնթապում առաջին իգական վարժարանները բացվել են բողոքական միսիոներների նախաձեռնությամբ: Սակայն միսիոներական դպրոցի աշխատանքներին զուգահեռ՝ մինչև Այնթապում հայկական իգական առաջին կանոնավոր դպրոցի հաստատումը, վարժուհի Վարդեր Սեֆերյան-Գայմագամյանը¹⁵⁰⁴, աստիճանաբար աշակերտուհիներ հավաքելով, իր տանը դասավանդում էր հայերեն: Տնային պայմաններում դասավանդման առաջին 12 տարիների ընթացքում աշակերտուհիների թիվը հասցնում է ավելի քան 20-ի: Դասերին հարակից Վարդեր Սեֆերյան-Գայմագամյանն աշակերտուհիներին ուսուցանում էր կարուձև, ձեռագործ և եկեղեցական շարականասացություն: Վարդեր վարժուհու գործունեությունը արածանանում է Մկրտիչ Քեֆսիզյան կաթողիկոսի ուշադրությանը, կաթողիկոսը սենյակ է վարձում, հատկացնում երկու մեջիտիե ամսաթոշակ և վարժապետ Ղարլանկըչին (Օիծեռնակ) նշանակում Վարդերին օգնական,

¹⁵⁰³ Պատմություն Անթեպի Հայոց, Ա., էջ 751-752:

¹⁵⁰⁴ Վարդեր Սեֆերյան-Գայմագամյանը ծնվել է Այնթապում 1835 թ.: Մանուկ հասակում կորցնում է ծնողներին և հանձնվում հարազատների խնամքին: Աղջիկը մեծ սեր ուներ ուսման նկատմամբ և սողոսկելով «Ներսէսեան» արական վարժարանի դռներից ներս ականջ էր դնում դասերին: Մեծ մորաքրոջ օժանդակությամբ և «Ներսէսեանի» ուսուցիչ Արիստակես վարժապետի աջակցությամբ աղջկան վերցնում են «տղայոց» դասարան: Վարդեր Սեֆերյան-Գայմագամյանը 1915 թ. բռնագաղթի է ենթարկվում ու նահատակվում անապատում: Տե՛ս Պատմություն Անթեպի Հայոց, Ա., 686-688:

հետագայում ևս մեկ օգնականուհի է ավելանում: Աշակետների թիվը հասնում է 60-ի, միանում են նաև ավելի մանկահասակ աղջիկներ: Դասավանդվող առարկաներին ավելանում են կրոնագիտությունը, աշխարհագրությունը և թվաբանությունը¹⁵⁰⁵:

Դեռևս «Սրբոց Վաղանանց Թանգարան» ընկերությունն իր ծրագրերում ուներ «Աղջկաց յատուկ վարժարան» հաստատելու թե՛ գաղափար, և՛ թե այդ նպատակի համար հատկացված դրամական միջոցներ, սակայն Այնթապում իզական առաջին կանոնավոր դպրոցը՝ «Ազգային Հայկանուշեան» վարժարանը, բացվում է 1878 թ. մարտի 1-ին: 1877 թ. «Կիլիկիո Գիշերօթիկ» վարժարանի փակվելուց հետո թաղական խորհուրդը Նիկողոս Նազարեթյանի գլխավորությամբ որոշում է նույն շենքի՝ Վերին Վարժատան սրահում և երեք սենյականերում բացել Այնթապի առաջին «Աղջկաց յատուկ դպրոցը»: Աղջիկների՝ դպրոց հաճախելը խրախուսելու նպատակով, առաջին աշակերտների թվում էին Նիկողոս աղայի դուստրերը՝ Եփրուհի և Զմրուխտ Նազարեթյանները: Առաջին տարում աշակերտուհիների թիվը հասնում է 120-ի: Դասավանդում էին ընթերցանություն, քերականություն, թվաբանություն, կրոնագիտություն, Հայոց պատմություն, գծագրություն, գեղագիտություն և ձեռագործ, ավելի ուշ որպես օտար լեզու ավելանում են թուրքերենն ու անգլերենը: «Հայկանուշեան» վարժարանի բյուջեն ձևավորվում էր «Միլլեթ խանի» եկամուտից¹⁵⁰⁶: Նախապես հիմնադրված լինելով իբրև ծաղկոց, տարիների ընթացքում դառնում է վեցամյա նախակրթարան, աշակերտուհիների թիվը հասնում է 500-ի՝ Ծաղկոցում՝ 300, նախակրթարանում՝ 190-200¹⁵⁰⁷:

Ծաղկոցի համար գործածվում էր Եկեղեցու բակի հյուսիսային կողմում գտնվող Հին Դարպասը՝ իր երկու սենյակով և վրայի սրահով: 1893 թ. նոր եկեղեցու շինարարության ավարտից հետո

¹⁵⁰⁵ Պատմություն Անթեպի Հայոց, Ա., 686-688:

¹⁵⁰⁶ Նույն տեղում, էջ 690-692, 695:

¹⁵⁰⁷ Նույն տեղում, էջ 694:

հին եկեղեցին հատկացվում է «Հայկանուշեանի» Ծաղկոցի բաժնին: Նախակրթարանը գտնվում էր Վերի Վարժարանի հին սյունավոր սրահում, 1902 թ. շնորհիվ բարերար ամուսիններ Լուսիա և Գալուստ Ղազարյանների ունենում է նոր սրահ՝ բարեկարգ սենյակներով¹⁵⁰⁸:

Ազգային «Հայկանուշեան» վարժարանն ուներ տարեկան հատկացում «Ազգային Պանդոկէն», ինչպես նաև աշակերտուհիների կրթաթոշակը: Ամենաբարձրը կես օսմնայան ոսկի էր, երբեմն նույնիսկ ավելի շատ, նվազագույնը՝ տարեկան՝ 12½ դահեկան: Վարժարանի բյուջեի ձևավորման մեջ աննշան էր ծնողներինների մասնաբաժինը. երկու մեջիտ ամբողջական թոշակը նրանցից քչերն էին վճարում, սովորաբար վճարվում էր շաբաթը մեկ մեթալիկ, որը տարեկան կես մեջիտ էր: Դպրոցական 10 ամիսը 40 շաբաթ հաշվելով, ստացվում էր 40 մեթալիկ, որը հավասար է 12½ դուրուշի:

Ամանորին տեղի էր ունենում դպրոցական հանդես վճարովի տոմսերով, կազմակերպվում էր ձեռագործի վիճակահանություն: Տարբեր տարիներին վարժարանի հոգաբարձուներ են հանդիսացել Նազարեթ Մանուշակյանը, Հրանտ Սյուլահյանը, Գրիգոր Քուրթուկյանը, Արմենակ Պաղտասարյանը, Գևորգ Թովբաշյանը, Կարապետ Յաղսըզյանը, Գրիգոր Լեյլեկյանը, Հակոբ Գարամանուկյանը, Ղազարոս Ղալիկյանը, Հակոբ Ղազարյանը, Սարգիս Պ. Նազարյանը, Նազարեթ Ֆրսթըզճյանը, Մովսես Գազանճյանը և այլք: 1904 թ. սկսած «Հայկանուշեանը» ուներ մասնաձյուղեր Թապազխանե, Բահան Սոքաղը և այլ թաղերում¹⁵⁰⁹:

«Հայկանուշեան» վարժարանի նախակրթարանի և ծաղկոց բաժիններում ամեն տարի կային 12-13 մնայուն ուսուցիչներ, չորս այցելու դասատու՝ նախակրթարանի, երկու տնտեսուհի: Այս աշխատակիցներին ամսեկան վճարված գումարը լինում էր 8-9

¹⁵⁰⁸ Պատմություն Անթեպի Հայոց, Ա., էջ 695:

¹⁵⁰⁹ Նույն տեղում, էջ 696, 705:

օսմանյան ոսկի, պաշտոնյաները ամսական միայն 10 ոսկի էին ստանում: Արձակուրդի երկու ամիսների ընթացքում վճարում չէր լինում¹⁵¹⁰:

1890 թ. «Արևելք» թերթն անդրադառնալով «Աղջկաց Ազգային վարժարանի» գործունեությանը նշում է, որ այն առանձնակի ծառայություն է մատուցել ազգին և, որ. «Վարժարանի աշակերտուհիք մաքուր հայերէն լեզու եւ մշակեալ միտք ստացած են...»¹⁵¹¹: Իր գործունեության շուրջ 40 տարիների ընթացքում «Հայկանուշեանը» տվել է 281 շրջանավարտ հետևյալ հարաբերակցությամբ¹⁵¹².

Տարի	Անձ	Տարի	Անձ
1882	6	1902	11
1883	10	1903	13
1884	11	1904	11
1885	5	1905	11
1888	7	1906	13
1889	9	1908	10
1890	12	1909	7
1892	13	1910	10
1893	8	1911	12
1894	12	1912	7
1899	7	1913	18
1900	9	1914	20
1901	11	1915	18

1882 թ. «Հայկանուշեանի» առաջին շրջանավարտները (թվով վեց) կազմեցին 1879 թ. Արմենակ Վարժապետի և Տեր Եղիշե Քահանա Քիլիսյանի ջանքերով հիմնադրված «Հռիփսիմեանց Պարզասիրաց» իգական առաջին ընկերությանը, որի նպատակն էր

¹⁵¹⁰ Պատմություն Անթեպի Հայոց, Ա., էջ 705:

¹⁵¹¹ Գավառական սուրհանդակ, «Արևելք», Կ. Պոլիս 1890, թիւ 1846, Մարտ 9/21, էջ 2-3:

¹⁵¹² Պատմություն Անթեպի Հայոց, Ա., էջ 697:

սատարել իգական սեռի դաստիարակությանը, որբուհիների կրթությանը և այլն: «Հռիփսիմեանց» ընկերությունը Թաղական խորհրդի պաշտպանության ներքո էր, 1890-ական թթ. ձեռք է բերում սեփական շենք Գապթել – Բաշի թաղում, որտեղ և հաստատվում է իգական տարրական նախակրթարան: Նախակրթարանը, երբեմն որպես ծաղկոց շարունակում է իր գործունեությունը մինչև 1905 թ., իսկ 1905-1915 թթ. վերածվում է մանկապարտեզի:

Մինչև 1892 թ. «Հռիփսիմեանց» ընկերությունը բոլոր միջոցներով սատարում և պահում էր «Հայկանուշեան» վարժարանում սովորող 60 սանուհի՝ նրանց տրամադրելով կրթաթոշակ և հագուստ¹⁵¹³: 1887 թ. «Հռիփսիմեանց Պարզասիրաց» ընկերությունն ուներ 150 աշակերտուհի¹⁵¹⁴, իսկ 1888 թ., իր գործունեության 9-րդ տարում, ընկերությանն անդամակցում էր 300 կին, որոնք ղեկավարում էին 250 աշակերտուհիներից բաղկացած հինգ դպրոց¹⁵¹⁵:

1896 թ. մի խումբ ուսանողներ Նազարեթ Իփեքյանի և դոկտ. Եղիա Արոյանի, Նուրիջան Նիզիպյանի և այլոց գլխավորությամբ հաստատում է լսարան՝ իգական սեռի դաստիարակության համար: Հանդիպումները տեղի էին ունենում «Հայկանուշեանի» հին սրահում՝ միմիայն կանանց մասնակցությամբ: Որոշվում է հիմնադրել նոր ընկերություն Կրթասիրաց անունով, որն օժանդակելով «Ազգային Հայկանուշեան» վարժարանի գործունեությանը, հաստատելու էր նոր վարժարան: Նվիրատվությունների և ժողովրդական հանգանակության արդյունքում ստեղծվում է հիմնադրամ՝ շենք վարձելու ու կահավորելու համար: 1898 թ. հիմնադրվում է Այնթապի «Հայոց Աղջկանց Երկրորդ Նախակրթարանը»՝ «Կրթասիրաց» (1898-1915) անունով: Աշակերտների թիվը հասնում էր 150-ի, բոլորն էլ բարեկեցիկ և ունևոր ծնողների զավակներ էին: Դպրոցի բյուջեն

¹⁵¹³ Պատմութիւն Անթէպի Հայոց, Ա., էջ 692-693, 769-761:

¹⁵¹⁴ Ղ. քահ. Տէր-Նահապետեան, Այնթապի Ազգային Վիճակն, «Արեւելյան Մամուլ», Զմիւռնիա, 1887, Մարտ, էջ 100:

¹⁵¹⁵ Վարդ, Այնթապ քաղաք, «Արաքս», Ս. Պետերբուրգ, 1888, Գիրք Բ., Մայիս, էջ 60:

ձևավորվում էր կրթաթոշակներով, ինչպես նաև լսարանի պնակի և ձեռագործի տարեկան վաճառքի հասույթով¹⁵¹⁶:

1889 թ. Այնթապի «Հայկանուշեան» վարժարանի սանուհիները հիմնադրում են «Ընթերցասիրաց» ընկերությունը, որի առաջնային նպատակներից էր զարգացնել ընթերցասիրություն կանանց և աղջիկների շրջանում¹⁵¹⁷:

«Հայկազեան» ընկերությունը հիմնադրվում է 1883 թ. Րահան Սոքաղը թաղամասում և գործում՝ մինչև 1915 թ.: Այնթապի մյուս կրթական ու դպրոցական ընկերությունների նման «Հայկազեանը» նույնպես ուներ թանգարան-գրադարան, Գիշերային դասեր ու Կիրակնօրյա լսարան: 1884 թ. այս ընկերության կողմից հիմնադրվում է «Ազգային Հայկազեան» վարժարանը: Նախապես վարժարանը գործում է Աշըգ Վարդանի տանը և միայն 1900 թ. ունեցավ սեփական շենք՝ սրահով, չորս սենյակներով, երկու բակով և պարտեզով: Ուներ մոտ 100 աշակերտ: «Հայկազեանը» լրիվ նախակրթարան չէր, և վարժարանի աշակերտներն իրենց ուսումն ամբողջացնելու համար պետք է դիմեին «Ներսիսեան», «Աղեմական», «Վարդանեան» և այլն¹⁵¹⁸: Ղևոնդ քահանա Տեր-Նահապետյանի հաղորդած տեղեկությունների համաձայն, 1887 թ. ընկերությունն ուներ մոտ 30 ուսանող և գործում էր Գրիգոր Մանուշակյանի և նրա «ազգասէր» ընկերների ջանքերով¹⁵¹⁹:

1901 թ. հրատարակված «Վիճակացոյց Գաւառական Ազգային Վարժարանաց Թուրքիոյ» առաջին տետրը համապարփակ տեղեկությունն է տալիս տվյալների կրթական հաստատությունների և դրանց ֆինանսական վիճակի մասին: Վիճակացույցում ներկայացված է, որ տվյալ տարում Այնթապի գավառի 10 կրթական հաստա-

¹⁵¹⁶ Պատմութիւն Անթէպի Հայոց, Ա., էջ 762-766:

¹⁵¹⁷ Հայուհեաց Յատուկ Շաբաթաթերթ մը Պէտք, «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, 1899, թիւ 776, Մայիս 5/17, էջ 1:

¹⁵¹⁸ Պատմութիւն Անթէպի Հայոց, Ա., էջ 737-739:

¹⁵¹⁹ «Երկրագունտ», Կ. Պոլիս, 1887, թիւ 3-4, Մարտ-Ապրիլ, էջ 159: Տե՛ս նաև «Արեւելյան Մամուլ», Զմիւռնիա, 1887, Մարտ, էջ 100:

տությոններից յոթ վարժարան և մեկ որբանոց գործում էին Այնթապ քաղաքում, մեկը՝ Օրուլ գյուղում, մյուսը՝ Քիլիսում¹⁵²⁰:

Այնթապի ութ վարժարաններից «Ներսէսեանում» վերոնշյալ ուսումնական տարում սովորում էր 400 տղա, դասավանդում էր 11 ուսուցիչ՝ կրկին արական սեռի, իսկ վարժարանի ամսական հասույթը և ծախսը կազմում էր 1750 դուրուշ: «Վարդանեան» վարժարանում սովորում էր 179 աշակերտ, որից 171-ը տղա էր, իսկ ութը՝ աղջիկ, դասավանդում էր կրկին 11 ուսուցիչ, որից երեքը՝ կին, ամսական ծախսն ու հասույթը 1250 դուրուշ էր: «Ադենական» վարժարանն ուներ 160 աշակերտ և վեց ուսուցիչ՝ բոլորն էլ արական սեռի, հասույթն ու ծախսը՝ 1620 դուրուշ էր: «Հայկազեան» վարժարանում սովորում էր 400 տղա, դասավանդում էր երկու ուսուցիչ և մեկ ուսուցչուհի, իսկ հասույթն ու ծախսը կազմում էր 470 դուրուշ: «Հայկանուշեան» վարժարանում կար 470 աշակերտուհի և 14 ուսուցչուհի, ծախսն ու հասույթը 2000 դուրուշ էր՝ ամենաբարձրը տվյալ ուսումնական տարում: «Հռիփսիմեանց» վարժարանում սովորում էր 150 աղջիկ, դասավանդում էր չորս ուսուցչուհի, իսկ ծախսն ու հասույթը 400 դուրուշ էր: «Կրթասիրացը» ուներ 75 աշակերտուհի, հինգ ուսուցչուհի, ծախսն ու հասույթը կազմում էր՝ 300 դուրուշ: Այնթապի որբանուցում ուսանում էր 38 տղա, մանկավարժների թիվը՝ երեքն էր ծախսն ու հասույթը՝ 560 դուրուշ: Այնթապում կար նաև «Մեսրոպեան» մասնավոր վարժարանը, որն ուներ 100 աշակերտ և չորս ուսուցիչ:

Օրուլ գյուղում էր գտնվում «Ս. Սահակեան» վարժարանը, որտեղ սովորում էր 34 աշակերտ՝ 29 տղա և հինգ աղջիկ, դասավանդում էր մեկ ուսուցիչ, ծախսն ու հասույթը կազմում էր 200 դուրուշ: Օրուլի նախակրթարանի ամսական ծախսի 100 դուրուշը վճարվում էր եկեղեցին¹⁵²¹: Քիլիսի «Ազգային վարժարանում»

¹⁵²⁰ Վիճակացոյց Գաւառական Ազգային Վարժարանաց Թուրքիոյ, Տեսր Ա., Կ. Պոլիս, տպ. Յ. Մատթէոսեան, 1901, աղ. 25, 27:

¹⁵²¹ Նոյն տեղում, աղ. 25:

սովորում էր 380 աշակերտ՝ 270 տղա և 110 աղջիկ, ուներ վեց ուսուցիչ և երկու ուսուցչուհի, իսկ ծախսն ու հասույթը կազմում էր 1041¼ դուրուշ¹⁵²²:

1909 թ. Այնթապի «Քրիստոսասիրաց» ընկերության մտահղացմամբ հիմնադրվում է «Լուսինեան» վարժարանը: Նախապես հաստատվելով վարձակալական հիմունքներով՝ վարժարանը երկու տարվա ընթացքում հնարավորություն է ունենում սեփական շենք ձեռք բերել. 200 օսմ. ոսկով գնում են Սեպուհ Չագմագչյանի տունը, 100 օսմ. ոսկի էլ ծախսում են դպրոցը վերակառուցելու համար: Աշակերտների թիվն առաջին տարում 60-ից ավելի էր, 1913 թ.՝ արդեն կրկնապատկվում է՝ դառնալով 120-ից ավելի¹⁵²³:

1908-1909 թթ. Այնթապում Հայկական բարձրագույն վարժարան հիմնադրելու գաղափարն արդեն գործուն քայլերով առաջ էր տարվում: «Վարդանեան» ընկերությունը իր պահեստային գումարներից 1000 ոսկի և «Ադենականը» 500 ոսկի դրամագլուխ են տրամադրում այս գործին: «Երիտասարդաց» ընկերությունը, որ գործում էր շուրջ 15-20 տարի տրամադրում է 650 ոսկի, իսկ ծախսերի մնացած մասն փորձում են լրացնել նպաստահավաքությամբ: Գալուստ Ղազարյանի 300 ոսկի նվիրաբերելուց հետո, Վարդապետ Ներսես Դանիելյանը դրամահավաք աշխատանքն արագացնելու համար սկսում է շրջայց կատարել քաղաքներում: Կատարված նվիրատվություններից սպասվում էր, որ կգոյանա ևս 1000 ոսկի գումար: Կառուցվելիք վարժարանի հողատարժքը հատկացված էր ազգային կալվածքներից և արդեն իսկ պատրաստ էր շինարարական աշխատանքները սկսելու համար: Բազմաթիվ երիտասարդներ ապագա քոլեջում դասավանդելու նպատակով ուղարկվել էին սովորելու Ամերկիա, Գերմանիա և Կ. Պոլիս¹⁵²⁴: Այս բոլոր նախապատրաստական աշխատանքները տարվում

¹⁵²² Վիճակացոյց Գաւառական Ազգային Վարժարանաց Թուրքիոյ, աղ. 27:

¹⁵²³ Պատմութիւն Անթէպի Հայոց, Ա., էջ 773-774:

¹⁵²⁴ Տաճկահայք, «Արարատ», Էջմիածին, 1909, թիւ 3, մարտ, էջ 284:

Էին Այնթապի կրթության պատմության ամենահեղինակավոր հաստատություններից մեկի՝ «Կիլիկեան ճեմարանի» ստեղծման համար:

Համալսարանական կրթություն ստանալու նպատակով 1906 թ. «Վարդանեան» կրթարանի շրջանավարտներից Արմենակ Չամիչյանը և Հարություն Խաչատուրյանը Պողոս Նուբար փաշայի հովանավորությամբ ուղարկվում են Ամերիկա, Այնթապի «Եկեղեցասիրաց» ընկերության հովանավորությամբ էլ սովորելու է ուղարկվում Գրիգոր Մասերճյանը: 1911 թ. հուլիսին վերոնշյալ երիտասարդները և Ամերիկայի տարբեր համալսարաններում արդեն իսկ ուսանող այլ այնթապցի երիտասարդներ՝ Արմենակ Գասարճեանը, Գրիգոր և Գևորգ Սարաֆյանները, Արամ Խաչատուրյանը ու Սարգիս Պաղտոյանը դիմում են Այնթապի Ազգային գավառական ընդհանուր ժողովին, «Ադենական», «Վարդանեան» ու «Եկեղեցասիրաց» ընկերություններին «Կիլիկեան բարձրագույն վարժարան» հաստատելու ծրագրին աջակցելու կոչով: Գավառական ժողովը խնդիրը ներկայացնում է Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ-ին, որը հայրապետական կոնդակով օրհնում և քաջալերում է այնթապցի ուսանողներին, որոնք խոստանում էին վերադառնալ ու դասավանդել ստեղծվելիք հաստատությունում: 1912թ. մայիսի 28-ին «Վարդանեան» ու «Եկեղեցասիրաց» ընկերություններն իրենց ընդհանուր ժողովների միջոցով ընտրում են հոգաբարձուների խորհուրդ, որը «Կիլիկեան բարձրագույն վարժարանի» տեսուչ է նշանակում Արմենակ Չամիչյանին՝ վերջինիս լիազորելով Ամերիկայում ուսուցչական մարմին ձևավորել, աղքատ ուսանողների համար գտնել հովանավորներ և նախաձեռնել գրադարան ստեղծելու աշխատանքներ, ինչը Չամիչյանը հաջողությամբ իրականացնում է: Ուսուցչական մարմնում Ա. Չամիչյանից բացի ընդգրկվում են Հ. Միսիրյանը և Գ. Մասերճյանը, օգնական ուսուցիչների ընտրությունը վերապահվում է Այնթապին: Հաջողվում է հավաքագրել 54 բարեկամ-պաշտպանյալի, որոնք ձևավորում են «օժանդակ մասնախումբ» և ապագա բարձրագույն վարժարանի գրադարանին 400

կտոր գիրք են նվիրաբերում: Հսկայական նախապատրաստական աշխատանքների ավարտից հետո՝ 1912 թ. սեպտեմբերի 6/19-ին, ի վերջո, բացվում է «Կիլիկեան բարձրագոյն վարժարանը»:

Օսմանյան կայսրության Կրթության նախարարության կողմից «Կիլիկեան բարձրագոյն վարժարանի» պաշտոնական հաստատումը ստացվում է 1913 թ. մարտի 19-ին. «Կրթական Գործոց Նախարարութեան պաշտոնագրով (1912 Դեկ. 31 թուակիր ու 3704/152851 համարաւ) Հալէպի Կրթական Տեսչութունից, «Կիլիկեան Էրմէնի Տար իւլ Սուալիմիյն ի Բիւշտի» արձանագրութեամբ (Թիւ Արտօնագրի 130)»: 1913 թ. օգոստոսի 11-ի 237 համարի Կոնդակով Կիլիկիո կաթողիկոս և հաստատության նախագահ Սահակ Բ Խապայանը բարձրագոյն վարժարանը վերանվանում է «Կիլիկեան Ճեմարան»¹⁵²⁵: «...Վարժարանը բացուած է Այնթապի բարձրադիր, օդասուն և յարմար շէնքի մը մէջ, քառասուն և ութ ցերեկայ ուսանողներու երեք կանոնավոր դասարաններով, մէկ Տեսչի և վեց մնայուն և այցելու ուսուցիչ (երկուքը Համալսարանական) հսկողութեամբ և դասախօսութեամբ և տարեկան 550 ոսկիի պիւտճէով: ...Հայրապետական Կոնդակով յայտնելով մեր գոհունակութիւնն և համեմատութիւնն Այնթապցոց վճռական նախաձեռնութեան մասին և հաստատութեան ճեմարան յորջորջումը աւելի պատշաճ գտնելով իր նպատակին ու ծրագրին յետ այսու Կիլիկեան Ճեմարան կ'անուանենք»¹⁵²⁶:

«Կիլիկիեան Ճեմարանի»¹⁵²⁷ պաշտոնական լեզուն հայերէն էր, թուրքերէնին որպէս պետական լեզվի, կարևոր տեղ էր հատկաց-

¹⁵²⁵ Կիլիկեան Ճեմարան, Այնթապ-Կիլիկիա, Առաջին տեղեկագիր 1912-1914, Կ.Պոլիս, տպ. Յ. Մատթէոսեան, 1914, էջ 14-15:

¹⁵²⁶ Նույն տեղում, էջ 4-5:

¹⁵²⁷ «Կիլիկյան Ճեմարանի» մասին ավելի մանրամասն տե՛ս «Հայ Անթէպ», Պէյրոյթ, 1965, թիւ (3), Գր. Ա. Սարաֆեան, Այնթապի Կիլիկեան Ճեմարանը, էջ 3-8; Գեորգ Ա. Սարաֆեան, Վարդանեան կրթարանի դերը Կիլիկեան Ճեմարանի հաստատումին մէջ, էջ 9-12; Կուրկէն, Կիլիկեան Ճեմարան (1912-1915), Յուշեր Յիսնամեակի մը Առթիվ, էջ 13-27: Վ. Ն. Կիւլէսէրեան, Յետադարձ հայացք Կիլիկեան Ճեմարանի 50-ամեկանին առիթով, էջ 28-33; Պողարեան Գ.,

վում: Ուսումնական ծրագիրը քառամյա էր, որի առաջին երկու տարիները «Ընդհանուր դասընթացքն» էր, իսկ վերջին երկու տարիները համարվում էր Մասնագիտական՝ մանկավարժական և եկեղեցագիտական դասընթացով¹⁵²⁸:

Ճեմարան ընդունվելու համար կարող էին դիմել 15 տարին լրացած բոլոր հայ պատանիները, որոնք Ազգ. Բարձրագույն նախակրթարանի շնջանավարտ էին եղել կամ դրան համապատասխան կրթություն էին ստացել: Ընդունելության համար դիմորդները պետք է հանձնեին կրոնագիտություն (Հայ եկեղեցու համառոտ պատմություն և ներածություն Ավետարանի, ժամանակագրական և մեկնաբանական ծանոթություններով), հայերեն (Ա. Աշխարհաբար՝ Ճաշակ նոր գրականության, քերականություն, շարադրություն և այլն, Բ. Գրաբար՝ հատընտիր ընթերցանություն, քերականություն), օսմաներեն, անգլերեն, ֆրանսերեն, պատմություն ընդհանուր պատմություն, (ընդարձակ Օսմանյան պատմություն և Հայոց պատմություն), երկրաչափություն, աշխարհագրություն, կենդանաբանություն, բնախոսություն: Դիմորդներից պահանջվում էր ներկայացնել հետևյալն փաստաթղթերը.

1. «Իր *վարք ու բարքի* մասին գոհացուցիչ *Վկայագիր* մը այն վարժարանէն որմէ ընթերցավարտ եղած է:

2. *Բժշկական Վկայագիր* մը իր առողջութեան գոհացուցիչ վիճակը հաստատող, ու *Պատրաստի Վկայագիր* մը:

3. Ուսումնական կարողութեան մէկ *Վիճակացոյցը*:

4. Իր *Անձնագիրը* (Նուֆուս թէգքերէսի) եւ *Ծննդեան վկայագիրը*:

5. Նպաստընկալ ուսանողները պետք է ներկայացնեն նաեւ իրենց կարօտութեան մասին *Յանձնարարական* մը, պաշտօնական մարմնոյ մը կողմէ»¹⁵²⁹:

Ճեմարան ու Ճեմարանցիները տեղահանության տարիներուն եւ այնուհետեւ, էջ 35-42:

¹⁵²⁸ Կիլիկեան Ճեմարան, Առաջին տեղեկագիր 1912-1914, էջ 24, 17:

¹⁵²⁹ Նույն տեղում, էջ 18-20:

Ճեմարանի ուսումնական և գիշերօթիկ բաժինները տեղավորված էին երկու առանձին շենքերում: Ուսումնական բաժինն իր առաջին տարեշրջանում աշխատանքները սկսեց իրականացնել ավելի ուշ գիշերօթիկ բաժնին հատկացված շենքում, երկրորդ ուսումնական տարվա սկզբին տեղափոխվեց Այնթապի արևմտյան կողմում «Վարդանեան» ընկերությանը պատկանող եռահարկ նոր շենք, որն ուներ գետնահարկ, վեց սենյակ՝ երեքը վերածված դասասենյակի, մյուսները՝ ուսուցիչների և գիտական աշխատանոցների համար, կար ընդհանուր մեկ սրահ, որտեղ տեղավորված էր մատենադարանը, որը գործածվում էր նաև տարբեր հանդիսությունների և մարզանքի համար: Դասարանները կահավորված էին յուրաքանչյուր ուսանողի համար առանձին գրասեղանով և թիկնաթոռով: Ճեմարանն ուներ հարակից ընդարձակ պարտեզ, որը նախատեսվում էր վերածել բուսաբանական այգու:

Ճեմարանի գիշերօթիկ բաժինը ևս եռահարկ էր: Վերևի երկու հարկերը հատկացված էին ննջարանի, դասարանի, ճաշարանի և տնօրինության գրասենյակի համար, առաջին հարկը ծառայում էր որպես շտեմարան, խոհանոցի հատվածը շենքից առանձին էր: Կար ներքին ու արտաքին երկու ընդարձակ բակ, արտաքինը գործածվում էր իբրև խաղավայր, ձեռնարկվում է նաև նոր շենքի շինարանությունը՝ երկու բաժինները միևնույն շենքում միացնելու նպատակով¹⁵³⁰:

Ճեմարանի ուսումնական տարեթոշակը՝ վճարը, բոլոր ուսանողների համար սահմանված էր երեք օսմ. ոսկի, դասագրքերը, գրենական, գիտական աշխատանոցի համար անհրաժեշտ պիտույքները նույնպես ուսանողներն էին ձեռք բերում, գիշերօթիկի համար հավելյալ վճարից բացի, ուսանողները հոգում էին իրենց համազգեստի ծախսը, որը կազմում էր վեց մեջիթ, ընդունելության քննությունների համար վճարվում էր կես օսմ. ոսկի, Ճեմարանի

¹⁵³⁰ Կիլիկեան Ճեմարան, Առաջին տեղեկագիր 1912-1914, էջ 25-27:

ընդհանուր դասընթացի վկայագրի համար՝ կես օսմ. ոսկի, իսկ մատենագիտական դասընթացի վկայագրի համար՝ մեկ:

Ճեմարանում գործում էր ուսանողների նպաստ տրամադրելու համակարգը, համաձայն որի նյութական աջակցություն կարող էին ստանալ դրամական միջոցներից զուրկ այն բոլոր ուշիմ ուսանողները, որոնք հատկապես «ուխտագիր մը կուտան» մանկավարժական կամ եկեղեցական ասպարեզում ընդգրկվելու համար: Նպաստը նշնակվում էր միայն մեկ տարի ժամկետով և դրա շարունակելությունը կախված էր ուսանողի առաջադիմությունից: Յուրաքանչյուր ուսանողի տարեկան նպաստը չէր կարող գերազանցել երեք օսմ. ոսկին՝ հաստատության տարեկան վճարը, բացառություններ կարող էին լինել եկեղեցական ասպարեզը ընտրող ուսանողների համար¹⁵³¹:

Ճեմարանի հասույթի առաջին աղբյուրը ուսանողների ուսման վարձն էր, որը ցերեկօթիկի համար կազմում էր 3, իսկ գիշերօթիկի համար՝ 13 օսմ. ոսկի: 1912-1913 թթ. ուսումնական տարում գիշերօթիկ բաժինը դեռևս չէր գործում, ուստի ցերեկօթիկի համար գանձվում էր 55 օսմ. ոսկի: 1913-1914 թթ. ցերեկօթիկի և գիշերօթիկի ուսանողներից գանձվում էր 392,18 օսմ. ոսկի, նախապատրաստական բաժնի համար՝ 2½, իսկ ճեմարանի համար՝ 3 օսմ. ոսկի հաշվով:

«Վարդանեան» ընկերությունը ճեմարանի ծախսերի համար հատկացնում էր տարեկան 50 օսմ. ոսկի, «Եկեղեցասիրաց» ընկերությունը՝ 25 օսմ. ոսկի: Նախապես ստեղծված 54 ամերիկահայ «պաշտպանների» խումբը պարտավորվել էր տարեկան 12-ական դոլար վճարել անվճարունակ ուսանողների համար, իսկ տեղեկագրի հրապարակման պահին այդ «պաշտպանների» թիվը դարձել էր 69-ը¹⁵³²:

¹⁵³¹ Գիլիկեան Ճեմարան, Առաջին տեղեկագիր 1912-1914, էջ 21-22:

¹⁵³² Նույն տեղում, էջ 53-54:

Ուսման վարձը և վերոնշյալ երկու ընկերությունների կողմից կատարվող վճարումների ձեմարանի բյուջեի ձևավորման հիմնական աղբյուրներն էին, որոնցից բացի կատարվում էին դրամական այլ փոխանցումներ կամ նվիրատվություններ, որոնք կարող էին լինել միանվագ: Նշվում է, օրինակ, որ 1912-1913 թթ. անդրանիկ տարեշրջանի ելք ու մուտքի բացը լրացվել է ամերիկահայ բարերար Միհրան Գարակյոզյանի միանվագ նվիրատվությամբ՝ 130 օսմ. ոսկի¹⁵³³:

Ստորև ներկայացվում է մինչև տեղեկագրի հրապարակման պահը Ամերիկայի մասնախմբի կողմից ներկայացված հովանավորների նվիրատվությունների ցանկը¹⁵³⁴.

Տոլար	
ՆԻԻԵՕՐՔԷՆ	
Յարութիւն Կիւլպէնկեան	36
Տոքթ. Ա. Այվազեան	12
Ս. Թիմուրեան եւ Որդիք	12
Յ. Մարտիկեան	12
Հայ Գաղթային Ընկերակցութիւն	12
ՊՈՍԹՈՆԷՆ	
Հայ Օրիորդաց Յառաջադիմասէր Ընկ.	25
Ա. Պ. Սէլեան (2 տարուան)	24
Տիկին Ա. Պ. Սէլեան	12
Յովհաննէս Պ. Սէլեան	12
Յովհաննէս Կիրեղեան	12
Մինաս Ս. Գոնտազեան	12
Խաչիկ Գրիգորեան	12
Բենիամին Ճանճիկեան	12
Տոքթ. Կ. Յ. Գալուստեան	12

¹⁵³³ Կիլիկեան ձեմարան, Առաջին տեղեկագիր 1912-1914, էջ 54:

¹⁵³⁴ Նույն տեղում, էջ 55-56:

Frederick Early	12
Miss Alice Stone Blackwell	12
Ղազարեան Նազարեթեան ընկ.	12
Արսեն եւ Արմենակ Գաբրիէլեան	12
Գարեգին Մանուկեան	12
Կ. Յ. Գարակիլեան	12
Յարութիւն Թերճանեան	12
Խորեն Նազարեթեան	12
Rev. G. Fiske	12
Գ. Մ. Կիրակոսեան	12
Miss Anna Brown, H. A. Murphy and H. J. Margeson	12
Սարգիս Մալեմեզեան	12
Վահան Մ. Քիրքճեան (2 տարուան)	24
Տոքթ. Փ. Աղամեան (Ուստր)	12
Մ. Պօզեան (Լինա, Օհայօ)	24
Տոքթ. Յ. Տատուրեան (Նիւհեյվն)	12
Սողոմոն Պասթաճեան (Նիւհեյվն)	12
Գրիգոր Սեւուկեան (Պրիճուօթր)	12
Miss Florerce J. Davis (Պրիճուօթր, 3 տարուան)	37.50
Գ. Սեւուկեանի հարսանիքին առթիւ (Պրիճուօթր հանգանակուած)	20
Ուէսթ Հօպքընի Հայ Աւետ, Կիրակնօրեայ դպրոցէն	12

Սահակ Բ. կաթողիկոսը 1913 թ. օգոստոսի 11-ին կոնդակով հանձնարարում է բարեխնամ վերաբերմունք դրսևորել Ճեմարանի նկատմամբ և որդեգրում է գիշերօթիկի երկու ուսանողի: Այնթապի գավառական ժողովը տարեկան 40 օսմ. ոսկի էր հատկացնում և երկու տարի վճարում էր դպրոցական շենքի վարձավճարը: Հալե-պի օժանդակ մասնախումբը պարտավորվում էր վճարել տարե-

կան առնվազն 50 օսմ. ոսկի, Քիլիսի օժանդակ մասնախումբը, և Կիլիկյան տարբեր թեմեր պարտավորվում էին տարատեսակ օժանդակություն տրամադել՝ ինչպես դրամական, այնպես էլ գրենական պիտույքների և պարենի տեսքով:

Կտակների և միանվագ օժանդակությունների տեսքով հաստատությանը բազմաթիվ դրամական միջոցներ էին տրամադրվում, տարբեր անհատների կողմից հանգանակություններ էին կազմակերպվում և այլն: Տրամադրված գումարների մի մասն օգտագործվում էր տվյալ պահին ճեմարանի անհրաժեշտությունները հոգալու համար, մյուս մասը դրվում էր շրջանառության մեջ, ինչից ստացված եկամուտն օժանդակելու և նպաստելու էր ճեմարանի հետագա գործունեությանը:

«Վարդանեան» ընկերության կողմից տրամադրվել էր 200 օսմ. ոսկի, որի մեջ էր մտնում նաև վերոնշյալ 50 ոսկին, ՀԲԸՄ-ը տրամադրել էր 50 օսմ. ոսկու նպաստ: Ճեմարանի բացման հանդիսության ժամանակ հանգանակություն կազմակերպվեց, որին մասնակցեցին Այնթապի և Կիլիկիայի տարբեր քաղաքներից ժամանած հյուրերը: Այնթապցի բարերար Սարգիս Նազարյանը ճեմարանի բացմանը նվիրեց 1000 օսմ. ոսկի, Ռաֆայել Մարկոսյանը՝ 500 ֆրանս. ոսկի, Գալուստ Ղազարյանը՝ 200 օսմ. ոսկի, Կարապետ Նազարեթյանը՝ 160 օսմ. ոսկի, տեր և տիկին Գևորգ Պալյանները՝ 2500 ֆրանկ, իսկ ճեմարանի հոգքարձության նախագահ Գեր. Տ. Փառեն Ծ. Վարդ. Կլայեցին՝ իր կյանքի ապահովագրության 5000 ֆրանկը: Հանգանակության ընթացքում հավաքված ընդհանուր գումարը կազմեց 2630 օսմ. ոսկի¹⁵³⁵:

Ճեմարանի մատենադարանին տեր և տիկին Չամիչյանները տրամադրեցին 42 դոլար, իսկ ԱՄՆ-ի տարբեր քաղաքներում Գրիգոր Սարաֆյանի և Ամերիկայի «օժանդակ մասնախմբի» կազմակերպած հանգանակությունների արդյունքում 1913-14 թթ. ուսումնական տարվա ծախսերի համար հավաքվեց 208.10 դոլար:

¹⁵³⁵ Կիլիկեան ճեմարան, Առաջին տեղեկագիր 1912-1914, էջ 56-63, 75-80:

XIX դարի երկրորդ կեսին լուրջ հաջողություններ արձանագրեց նաև հայ բողոքական համայնքը: 1855 թ. Գայաճրգ կենտրոնական թաղամասում հիմնադրվեց բողոքականների առաջին եկեղեցին, 1868 թ. կառուցվեց երկրորդ եկեղեցին Հայել թաղամասում, նախատեսվում էր ևս մեկ եկեղեցի կառուցել Ալայ Բեյ թաղամասում¹⁵³⁶: 1852 թ. տիկին Շնայտլըն իր սեփական տանը փոքրաթիվ աշակերտներով բացեց իգական առաջին դպրոցը, այնուհետև 1859 թ. տիկին Մայտա Բրաքթըրն այն կանոնադրոց երեկոթիվ վարժարանի վերածեց¹⁵³⁷:

1860 թ. օրիորդ Փրաքթըրի ղեկավարությամբ հիմնադրվեց Այնթապի «Աղջկաց բարձրագույն վարժարանը», որը հիմնադրման օրից մինչև 1910-ական թթ. արդեն ուներ 500 շրջանավարտ: Առաջին աշխարհամարտից առաջ վարժարանն ուներ քարաշեն նոր շենք, որը միաժամանակ 150-200 ուսանողուհու դասընթաց էր կարողանում ապահովել¹⁵³⁸: 1874 թ. հիմնադրվեց արական հատուկ երկրորդական քոլեջը¹⁵³⁹: 1912 թ. տվյալներով Այնթապի բողոքականներն ունեին երեք եկեղեցի, ութ դպրոց՝ 445 աշակերտով, որից 210 աղջիկ: Առաջին կամ Գայաճրգ եկեղեցին ուներ յոթ դպրոց 319 աշակերտով, որից 135-ը աղջիկ, իսկ Երկրորդ եկեղեցին ուներ մեկ երկսեռ դպրոց՝ 73 աշակերտով: Այնթապի բողոքական համայնքն ուներ 16 դպրոց՝ երկու տեսուչների և 27 երկսեռ ուսուցիչների հսկողության ներքո, 837 աշակերտ, որի 44 %-ը՝ աղջիկ: Հայիկ եկեղեցին ուներ նաև կույրերի դպրոց՝ 12 ուսանողով, որից երեքը

¹⁵³⁶ Պողարեան Գ., Կիլիկիոյ Գիշերօթիկ վարժարանը, Այնթապ (1873-1877), «Նոր Այնթապ», Պէյրուօ, 1973, թիւ 3 (55), էջ 18:

¹⁵³⁷ Պատմութիւն Անթէպի Հայոց, Ա., էջ 689:

¹⁵³⁸ Պէգճեան Յ.Ա., Այնթապի կրթական կացութիւնը, Անցյալն ու ներկան, «Կոչնակ», Նիւ-Եօքք, 1912, թիւ 13, Մարտ 30, էջ 306:

¹⁵³⁹ Պողարեան Գ., Կիլիկիոյ Գիշերօթիկ վարժարանը, Այնթապ (1873-1877), «Նոր Այնթապ», Պէյրուօ, 1973, թիւ 3 (55), էջ 18:

մուսուլման էին, տարբեր համայնքների էին պատկանում նաև մանկապարտեզ հաճախող 68 սաները¹⁵⁴⁰:

Այնթապի «Կեդրոնական Թուրքիոյ քոլեջը» 1876 թ. սեպտեմբերի 11-ին սկսեց ուսումնական կանոնավոր ընթացքը¹⁵⁴¹՝ 1880 թ. արդեն ունենալով առաջին յոթ շրջանավարտը¹⁵⁴²: 1904 թ. «Կեդրոնական Թուրքիոյ քոլեջն» ուներ յոթամյա դասընթաց, դասավանդվում էր՝ քրիստոնեություն, բնագիտություն, չափագիտություն, կենսաբանություն, պատմություն, իմաստասիրություն, տնտեսագիտություն, օսմաներեն, հայերեն, հունարեն, անգլերեն, ֆրանսերեն և երաժշտություն: Ուսման վարձը կազմում էր 9 և 10 օսմ. ոսկի¹⁵⁴³: Քոլեջում դասավանդում էին մեծ թվով ամերիկացի և հայ բողոքական պրոֆեսորներ, որոնք հիմնականում կրթություն էին ստացել Ամերիկայում¹⁵⁴⁴:

XIX դարի վերջին Ֆրանչիսկյան կորնավորների վանքը ուներ մոտ 100 աշակերտ, որոնք մեծամասամբ հայեր էին¹⁵⁴⁵, «Արաքս» ամսագիրը նշում է 200 երկսեռ հայ երեխաներ¹⁵⁴⁶:

1886 թ. ապրիլի 28-ին հին եկեղեցու շենքում բացվում է «Կիրակնօրեայ» Վարժարանը՝ «Կդերասիրաց» ընկերության հովանավորությամբ (Գարեգին Պողարյան, Հակոբ Համալյան, Մովսես Գազանձյան, Արսեն Հարությունյան) և տիկին Շեփրըսի աջակցությամբ, որն իր գործունեությունը շարունակում է մինչև 1900 թ.: Դասընթացը կազմակերպվում էր թուրքերեն լեզվով, հին եկեղեցու

¹⁵⁴⁰ Պեղզեան Յ.Ա., Այնթապի կրթական կացութիւնը, Անցյալն ու ներկան, «Կոչնակ», Նիւ-Եօք, 1912, թիւ 13, Մարտ 30, էջ 306:

¹⁵⁴¹ Catalogue of Central Turkey College at Aintab, Constantinople. Press of H. Matteosian, 1901, p.5.

¹⁵⁴² Պեղզեան Յ.Ա., Այնթապի կրթական կացութիւնը, Անցյալն ու ներկան, «Կոչնակ», Նիւ-Եօք, 1912, թիւ 13, Մարտ 30, էջ 306:

¹⁵⁴³ «Արեւելք», Կ. Պոլիս, 1904, թիւ 5635, Օգոստոս 4/17, էջ 2:

¹⁵⁴⁴ Վարդ, Այնթապ քաղաք, «Արաքս», Ս. Պետերբուրգ, 1888, Գիրք Բ., Մայիս, էջ 59:

¹⁵⁴⁵ Էփրիկեան Հ. Ս., նշվ.աշխ., էջ 146:

¹⁵⁴⁶ Վարդ, Այնթապ քաղաք, «Արաքս», Ս. Պետերբուրգ, 1888, Գիրք Բ., Մայիս, էջ 59:

շենքում՝ 6-12 տարեկան աղջիկների համար և «Ներսեսեան» դպրոցում՝ տղաների համար: Հայ Առաքելական եկեղեցու հովանու ներքո «Կեդրոնական Թուրքիոյ քոլեջի» մի խումբ ուսանողների ջանքերով «Կիրակնօրեայ» դպրոցի ստեղծման երկրորդ փորձը կատարվում է 1914 թ.-ին: Դպրոցը կրկին գործում էր հին եկեղեցու կամ Ազգային Լսարանի շենքում և «Վարդանեան» դպրոցում: Այս անգամ դասընթացը տեղի էր ունենում հայերեն, և ձեռնարկը մեծ հաջողությամբ է ընդունվում ոչ միայն Կրոնական ժողովի և Ուսումնական խորհրդի, այլև նույն տարում հիմնադրված Ուսուցչական Միության կողմից, որի վարչության անդամներից՝ «Կիլիկեան Ճեմարանի» տեսուչ պրոֆ. Արմենակ Չամիչյեանը: Ուսուցիչների համար մանկավարժական դասախոսությունների հատուկ շարք կազմակերպվեց: Ինչպես Այնթապի մյուս դպրոցների, այնպես էլ «Կիրակնօրեայ» դպրոցի պատմությունն ավարտվում է 1915 թ.-ին, երբ ամռանը սկսվեց տեղի հայերի տեղահանությունը¹⁵⁴⁷:

XIX դարի երկրորդ կեսին Ատուր Նիզիպյանի ջանքերով և ներդրումներով, հիմնադրվում է «Ռուբինեան» ընկերությունը, որի առաջնային գործառույթը երիտասարդների կթրությունն էր: Ընկերությունը շաբաթական երկու անգամ կազմակերպում էր գիշերային դասընթացներ և մեկ անգամ ընթերացանության երեկոները, ինչպես նաև՝ թատերական ներկայացումներ: Ընկերության գործունեությունը տևում է 15 տարի, լուծարումից հետո մատենադարանը անցնում է Հ.Ե.Ք.Ը. ընկերությանը, վերջինիս է փոխանցվում նաև գանձարանում մնացած 60 օսմ. Ոսկին՝ գիրք և թերթ առնելու պայմանով: Այնուհետև հիմնադրվում է Նիզիպյան թանգարանը, որը որպես մշակութային տուն պետք է ծառայեր Այնթապի բողոքական երիտասարդներին: Ատուր Նիզիպյանը հատուկ կանոնագրությամբ այդ շենքը փոխանցում է Այնթապի հայ

¹⁵⁴⁷ Պողարեան Գ., Այնթապի եւ Այնթապցիներու դերը Հայ Առաքելական Եկեղեցիոյ կիրակնօրեայ դպրոցին հաստատման ու տարածման մէջ, «Հայ Անթէպ», Պէրյոթ, 1966, թիւ 4 (24), էջ 30-31:

Ավետարանական երեք եկեղեցիներին, իսկ 1892 թ. հունվարին ստեղծում է հիմնադրամ՝ հատկացնելով 500 օսմ. ոսկի¹⁵⁴⁸:

1900-ական թթ. Այնթապի Ագյոլ թաղում հիմնադրվում է «Կրթասիրաց» ընկերությունը: Նախաձեռնությունը պատկանում էր բողոքականներին, սակայն անդամակցելու կամ լսարան հաճախելու համար համայնքին պատկանելը պարտադիր չէր: Ընկերության նպատակն էր կրթել, զարգացնել Ագյոլ թաղի ռամիկ ժողովրդին և վարժարան բացել չքավոր ընտանիքների երեխաների համար: 1908 թ. հետո ընկերությունն ու դպրոցը առաջընթաց են ունենում: Դպրոցում աշխատում էր երեք ուսուցչուհի, երկսեռ երեխաների համար գործում էր «Կիրակնօրյա» դպրոց և լսարան, բացի այդ ընկերությունը նաև փողերախումբ ուներ¹⁵⁴⁹:

1905 թ. Լևոն Հովհաննես Լևոնյանի և Սարգիս Պալապանյանի ջանքերով հիմնադրվում է Այնթապի «Ուսումնասիրաց» ընկերությունը՝ Y.M.C.A. (Young Men's Christian Association - Քրիստոնեայ Երիտասարդներու Ընկերակցութիւն), բողոքական և ոչ բողոքական անդամներով ու մարզական, կրթական, մշակութային բաժիններով, 1908 թ. Սահմանադրության վերահաստատումից հետո ավելանում է նաև զինավարժությունը: Ընկերակցությունն ուներ գիշերային վարժարան և կիրակնօրյա լսարան, հրատարակում էր խմորատիպ «Ուսում» թերթը¹⁵⁵⁰: 1909 թ. Հայ ուսումնասիրաց ընկերության մարզական ակումբն ուներ բազմաթիվ անդամներ և մասնավոր մարզարան¹⁵⁵¹:

1913 թ. սեպտեմբերին «Կիլիկեան Ճեմարանում» ստեղծվում է «Գրական միութիւն» անվամբ ուսանողական ընկերակցությունը,

¹⁵⁴⁸ Հալեպլեան Լ., Ինքնակենսագրութիւն Ատուր Աղա Նիզիպլեանի, «Հայ Անթէպ», Պէյրուք, 1967, թիւ 3 (27), էջ 29-30:

¹⁵⁴⁹ Լալէեան Ս., Ագեօլի Կրթասիրաց ընկերութիւնը, «Հայ Անթէպ», Պէյրուք, 1968, թիւ 2 (30), էջ 57:

¹⁵⁵⁰ Պողարեան Գ., Այնթապականք, Բ., էջ 277-278:

¹⁵⁵¹ Չորմիսեան Լ., Համապատկեր Արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, Գ. հատոր, (1908-1922), Պէյրուք, տպ. Սեւան, 1975, էջ 200:

որի կազմակերպած հավաքություններին ուսանողները հատուկ խմբագրական մարմնի հսկողության ներքո կարդում և խմբագրում էին «Կիլիկիա» ամսօրյա հանդեսը, միությունն ուներ նաև գրադարան: Ճեմարանի առաջին տարեշրջանում կազմվեցին ֆուտբոլի և երաժշտական խմբեր¹⁵⁵²:

Այնթապում Հայ Բարեգործական Ընդհանուր Միության կառույցը հիմնադրվեց 1910 թ. Հարություն Ճեպեճյանի ջանքերով և Գալուստ Ղազարյանի աջակցությամբ: Կազմվեց հանձնախումբ, որը 1911 թ. հունվարի 1-ին հաստատեց ՀԲԸՄ-ի տեղական մասնաճյուղը հետևյալ ղեկավար կազմով՝ Հովսեփ Պեզճյան՝ ատենապետ, Գալուստ Ղազարյան՝ փոխատենապետ, Նազարեթ Մանուշակյան՝ ատենադպիր, Գրիգոր Սարգիսյան՝ գանձապահ, խորհրդականներ՝ Կարապետ Նազարեթյան, Յագուպ Քյուրքճյան և Սահակ Սահակյան: Միության առաջին քայլերի շարքում էր չունենոր խավերին անվճար բժշկական ծառայությունների մատուցումը, ընդ որում, բժշկին ճանապարհաձախսի և աշխատավարձի գումարից բացի նաև հատկացվում էր 60 ոսկի՝ անվճար դեղորայքի համար: Հատկանշական է նաև որ, կենտրոնի կողմից 50 ոսկի է հատկացվում Կիլիկյան Ճեմարանին՝ Միության անունով դասընթաց հաստատելու համար: 1914 թ. Միության Այնթապի անդամների թիվը հասնում էր 156-ի¹⁵⁵³:

Այնթապի հայերի տնտեսական և կրթական առաջընթացը չէր կարող չարտահայտվել նաև գրատպության ասպարեզում: Հրատարակվող, հաճախ ձեռագիր, երբեմն եզակի օրինակով թերթերը, կամ նրանց մասին տրված տեղեկությունները, մեծապես փոխան-

¹⁵⁵² Կիլիկեան Ճեմարան, Առաջին տեղեկագիր 1912-1914, էջ 25-26:

¹⁵⁵³ Գեորգեան Յ. Ռ., Թաշճեան Վահէ, Դար մը պատմութիւն Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան, Կեդրոնական վարչութիւն, 1906-1940, հ. 1, Գահիրէ-Փարիզ-Նիւ Եորք, Հայկական բարեգործական ընդհանուր միություն, թարգմ. Գրիգոր Շահինեան, Շաղիկ Արծրունի, "Impression Brochage" 2006, էջ 143-144:

ցում են Այնթապի հայության ստեղծարար միտքը, կրթության որակն ու շարունակաբար զարգանալու որոշումը:

1872 թ. հրատարակվում էր «Այնլեպեն» ամսագիրը (Այնթապի գետակի անունով) «Ազգային Ներսեսեան» վարժարանի կողմից, Հովհաննես Քյուրքչյանովի ջանքերով և ղեկավարությամբ: Թերթը հայատառ թուրքերեն էր, բովանդակությամբ՝ ազգային և կրթական, ուներ *Հրատու* բաժին:

1875 թ. «Բյուրակն» ամսագիրը խմբագրվում էր «Կիլիկեան գիշերօթիկ վարժարանի» սաների կողմից և բազմացվում մեկ տասնյակ օրինակով: Թերթը հայատառ թուրքերեն և հայերեն բաժիններով էր¹⁵⁵⁴: 1876 թ. լույս է տեսավ նաև «Շիրակ» պատկերազարդ ամսագրի միայն մեկ համար, որի խմբագիրը, գրողը, գծագրողը, թղթակիցը, ցրողն ու ընթերցողը Վահան Քյուրքչյանն էր¹⁵⁵⁵:

1877-1887 թթ. «Դրախտ» նաև «Հանդես Հայրենաներ» («Դրախտ» անվամբ, «Հանդես Հայրենանուէր»¹⁵⁵⁶ մակագրութեամբ¹⁵⁵⁷) ամսագիրը հայատառ թուրքերեն և հայերեն բաժիններ ուներ: Հրատարակիչը «Սրբոց Վարդանեանց Մեսրոպեան Սանուց» ընկերությունն էր՝ Վահան Քյուրքչյանի խմբագրությամբ, պարունակում էր ազգային, կրթական, գիտական և առողջապահական հոդվածներ, թերթի յուրաքանչյուր համարն ընդօրինակվում էր 20 անգամ և վաճառվում մեկ մեջիտով:

1878 թ. Այնթապի «Կեդրոնական Թիւրքիոյ քուլեջի» աշակերտների խմբագրությամբ, հայատառ թուրքերենով, հրատարակվում

¹⁵⁵⁴ Պողարեան Գ., Նօթեր Այնթապի տպարանական ու լրագրական պատմութեանց համար, «Հայ Անթէպ», Պէյրուի, 1966, թիւ 3 (23), էջ 35-37:

¹⁵⁵⁵ Քիւրքճեան Վ. Մ., Ազգային հուշեր, Յիսուն տարի առաջ, «Հայաստանի Կոչնակ», Նյու-Եորք, 1928, թիւ 4, էջ 106:

¹⁵⁵⁶ 1870-ականների վերջին լույս տեսնող այս ձեռագի հանդեսը ականավոր մտավորական Վահան Քյուրքչյանի խմբագրական առաջին փորձն էր: Տե՛ս Քիւրքճեան Վ. Մ., Ազգային Յուշեր, Ադինական եւ Վարդանեան, «Հայաստանի Կոչնակ», Նյու-Եորք, 1928, թիւ 38, Մեպտեմբեր 22, էջ 1197:

¹⁵⁵⁷ Պատմութիւն Անթէպի Հայոց, Ա., էջ 667:

էր երկշաքաթյա հանդէս, որը նախատեսված էր ներքին, փակ հավաքույթների ընթացքում հարպարակային ընթերցումների համար:

1888 թ. «Աստղիկ Վարդանեան» և «Ախթերի Վարդանեան» ամսագրերը երբեմն նաև կիսամյա հարաբերականությամբ հրատարկվում էին «Վարդանեան» կրթարանի կողմից, փոխարինելով 1886 թ. դեկտեմբերին իր աշխատանքները դադարեցրած «Մենտորին»: «Ախթերի Վարդանեանը» թուրքերեն էր և շարունակում էր հրապարակվել մինչև 1900 թ., իսկ «Աստղիկ Վարդանեանը»՝ հայերեն և հրատարակվում էր մինչև 1914 թ.:

Նախքան 1908 թ. Սահմանադրության վերահաստատումը Այնթապում միակ հայկական տպագիր թերթը 1886 թ. հիմնադրված «Մենտորն» էր: Այն հրատարակվում էր «Վարդանեան» կրթարանի տեսուչ Վահան Քյուքչյանի խմբագրությամբ: «Մենտոր» թերթը կիսամյա էր, տպագրվում էր Կ. Պոլսի «Գ. Պադտատլեան» տպարանում՝ հայատառ թուրքերեն և հայերեն լեզուներով: Հրատարկվել է 24 համար, իսկ թերթերի ամբողջական հանրագումարն էր 350 էջ:

1897-1900 թթ. «Ադենական» վարժարանը հրապարակում էր ձեռագիր պարբերաթերթ՝ «Առաջին քայլերը»: Կային նաև մտավորականներ, որոնք խմբագրում և հրատարակում էին նմանատիպ թերթեր: Հակոբ տեր Մելքոնյանը 1898 թ. սեպտեմբերից 1899 թ. հունիս ընկած ժամանակահատվածում հրատարակում էր «Դողդոջուն քայլեր» շաբաթաթերթը: Հրատարակվել է 36 համար՝ ութ էջով: Ձեռագիր թերթ ուներ նաև Ա. Ն. Նազարը¹⁵⁵⁸, նշանվոր Նազարեթյան ընտանիքից, Նիկողոս Նազարեթյանի որդի՝ Արմենակ Նազարեթյանը: Նա նաև 1903 թ. Այնթապում կազմված առաջին ուումնական խորհրդի ատենադպիրն էր¹⁵⁵⁹:

¹⁵⁵⁸ Պողարեան Գ., Նոթեր Այնթապի տպարանական ու լրագրական պատմությանց համար, «Հայ Անթեպ», Պէրուք, 1966, թիւ 3 (23), էջ 34-38:

¹⁵⁵⁹ Պողարեան Գ., Ազգային ժողովական կեանքը Այնթապի մէջ, «Հայ Անթեպ», Պէրուք, 1967, թիւ 3 (27), էջ 70:

Տարբեր տարիների ընթացքում Այնթապում հրատարակվում էին նաև «Նոր կեանք» և «Ճշմարտութիւն» հայատառ թուրքերեն թերթերը¹⁵⁶⁰, ինչպես նաև «Բահնիւմա» օսմաներեն և հայատառ թուրքերեն թերթը¹⁵⁶¹: XIX դարի վերջին և XX դարի սկզբին Այնթապում տպվում է մոտ 30 հայատառ գիրք և նույնքան ձեռագիր ու տպագիր թերթ¹⁵⁶²:

Այնթապի հայերի կրթական վերելքի պատմությունն ավարտվում է 1915 թ.: Ինչպես ամենուր, այնպես էլ այստեղ ոչնչացվում էին հայկական քաղաքակրթության հետքերը: Այնթապի հայերի տնտեսական առաջընթացն ամուր հիմքեր էր ստեղծել կրթական հաստատությունների անարգելք գործունեության համար: XX դարասկզբին Այնթապում այսչափ կրթական հաստատությունների գոյությունն արդեն իսկ վկայում է այն մասին, որ հայկական ձեռնարկատիրական ընտանիքներն ու կազմակերպությունները բավական լուրջ ֆինանսական ներդրումներ են կատարել ու լայն հնարավորություններ ստեղծել դրանց բուռն գործունեության համար: Ակնհայտ է, որ կրթական հաստատությունների հողատարածքները, շենք-շինությունները և շարժական գույքն ազգապատկան կամ անհատական հսկայական ունեցվածք էին հանդիսանում:

Կրթական խոշոր հաստատություններն իրենց մասնաճյուղերն ունեին քաղաքի տարբեր թաղամասերում, հայկական առևտրատնտեսական ու հասարակական կազմակերպությունները համագործակցված աշխատանքներ էին տանում, որպեսզի ամենուր հայկական կրթական հաստատություններ բացվեին: Ամեն բան հաշվարկվում էր այնպես, որ կրթական հաստատու-

¹⁵⁶⁰ Kevorkian R. H., Paboudjian P. B., նշվ. աշխ., s. 324.

¹⁵⁶¹ Բակուրյան, Այնթապ եւ շրջակայքը, «Կոչնակ Հայաստանի», Նիւ-Յորք, 1920, թիւ 25, Յունիս 19, էջ 793:

¹⁵⁶² Մինասեան Մ., Անտիպ փաստաթուղթեր Կիլիկեան կոտորածներու օրերուն Այնթապի հայութեան իրավիճակին մասին, «Ցեղասպանագիտական հանդես», 4 (2), Երևան, 2016, էջ 131:

թյունները հնարավորինս հավասար բաշխվեն քաղաքում և կրթության հնարավորություն ունենային սոցիալական բոլոր շերտերի հայ երեխաները: Որքերն ու սոցիալապես անապահով խմբերում եղած հայ երեխաները ազգային մարմինների ուշադրության կենտրոնում էին: Գրեթե բոլոր վարժարանների կամ ընկերությունների կողմից կազմակերպվող գիշերային դպրոցներն ստեղծվում էին տարիքային բոլոր խմբերի մարդկանց կրթելու գործին: Կարելի է պնդել, որ Այնթապի հայերի կողմից ստեղծվել էր կենսական գործիքակազմ ունեցող փոխկապակցված և ներդաշնակ ազգային մի համակարգ, որն արդյունավետ ձևով հանգեցնում էր առաջընթացի: Մի կողմից հայերի ֆինանսատնտեսական միջոցներն ուղղվում էին կրթական համակարգի զարգացմանը, իսկ մյուս կողմից՝ հայկական կրթական հաստատություններն տնտեսական ոլորտն ապահովում էին բանիմաց ազգային կադրերով ու գիտական նորամուծություններով, ինչով ապահովվում էր Այնթապի հայերի տնտեսական բարգավաճման շարունակականությունը:

3.4. Այնթապի հայերի տեղահանությունը և ունեզրկումը

1914 թ. օգոստոսին Գերմանիայի հետ ռազմական և քաղաքական գաղտնի համաձայնագրի ստորագրումից հետո Օսմանյան կայսրությունը հայտարարում է համընդհանուր զորակոչ: Զորակոչին զուգահեռ սկսվում է պատերազմական կարիքների համար պարենի բռնագրավումը: Օգտվելով առիթից, թուրքական իշխանությունները բռնագրավում էին ամեն ինչ, անգամ այն ապրանքները, որոնք բանակի կարիքների համար չէին ծառայելու: Պաշտոնյաները մտնում էին մեծ ու փոքր խանութներ, թուրքերից գրավում էին ընդամենը 5 % ապրանք, իսկ հայերից՝ 90 %¹⁵⁶³: Սա

¹⁵⁶³ Վարանդյան Մ., Չ'ողբանք-Հասկանանք, «Հորիզոն», Թիֆլիս, 1915, թիվ 288, դեկտեմբերի 23, էջ 1:

դեռևս պատերազմով պատճառաբանված նախնական կոդոպուտն էր, որը պետք է ավարտվեր հայերի ամբողջական ունեզրկմամբ:

1915 թ. մայիսի 26-ին «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեն հաստատում է Թալեաթի կողմից ներկայացված ոչ թուրք բնակչության տեղահանումը թույլատրող օրինագիծը, իսկ մայիսի 30-ին կառավարությունը հաստատում է «Տեղահանության մասին» ժամանակավոր օրենքը¹⁵⁶⁴: 1915 թ. հունիսի 10-ին հրապարկվեցին «Պատերազմական և քաղաքական արտակարգ պայմանների անհրաժեշտության բերումով տարագրված հայերին պատկանող անշարժ և շարժական լքյալ գույքերի, վարչական կարգադրությունների մասին» 34 հոդվածից բաղկացած հրահանգները¹⁵⁶⁵: 1915 թ. հունիսի 10-ին ուժի մեջ մտած Լրացուցիչ օրենքը ցուցումներ էր պարունակում, թե ինչպես գրանցել բռնի տեղահանվածների ունեցվածքը, երաշխավորել դրա պահպանումը մի դեպքում, և ինչպես զանգվածային աճուրդների միջոցով վաճառել այն՝ ստանալով հսկայական եկամուտ, որը պատերազմից հետո իբր թե պետք է փոխանցվեր օրինական տերերին, սակայն գործնականում յուրացվում էր թուրք բարձրաստիճան պաշտոնյաների կողմից կամ փոխանցվում կայսրության զանձարան: 1915 թ. սեպտեմբերի 26-ին «Լքյալ գույքի մասին» հրապարակված երկրորդ ժամանակավոր օրենքով սահմանվում էր, թե ինչպես պետք էր տնօրինել բռնի տեղահանվածների ունեցվածքն ու գույքը, նրանց ավանդներն ու բանկային հաշիվները և ինչպես մարել պարտքերը¹⁵⁶⁶:

Օսմանյան կայսրությունում իտալահպատակների պաշտպանության հանձնակատար Տալիանին՝ Իտալիայի արտաքին գործե-

¹⁵⁶⁴ Մարության Ա., Հայոց Ցեղասպանության նյութական հետևանքների հաղթահարման հիմնահարցը, Երևան, 2015, էջ 16:

¹⁵⁶⁵ Աստոյան Ա., Դարի կոդոպուտը. Հայերի ունեզրկումը Օսմանյան կայսրությունում 1914-1923 թթ., Երևան, 2013, էջ 42:

¹⁵⁶⁶ Дадрян В. Н., История Армянского геноцида, Этнический конфликт от Балкан до Анатолии и Кавказа, Ереван, 2007, с. 285.

րի նախարար Սոննինոյին (Կ.Պոլիս, 9 հոկտեմբերի 1915 թ., հեռագիր թիվ 4021/856) գրում էր, որ 1915 թ. մայիսի 14-ին օսմանյան կառավարությունը հրապարակում է «Ժամանակավոր օրենքը», որը իրավունք էր տալիս զինվորական հրամանատարներին որոշված բնակավայրերից տեղահանել բնակչությանը: Տեղահանվածներից շատերը բնաջնջվում էին նախքան նոր բնակավայրեր հասնելը: Ի լրումն այս օրենքի, օսմանյան կառավարությունը 1915 թ. սեպտեմբերի 13-ին¹⁵⁶⁷ ընդունում է մի այլ օրենք, որով վարչակազմին կարգադրում էր բռնագրավել տեղահանվածների ունեցվածքը¹⁵⁶⁸: Հատկանշական է, որ օրենքը գործի դնելու հենց առաջին օրերից իտալացի դիվանագետը առավել քան վստահ էր, որ այն ընդունվել է ավելի դյուրին և «օրինական» կողոպուտ իրականացնելու համար: Տալիանին նշում էր, որ օրենքը կեղծարարություն է՝ տեղահանվածների գույքին տիրանալու համար, քանզի տեղահանվածների մեծ մասն իրենց ընտանիքներով ճանապարհին բնաջնջվելու են: Իսկ գույքը որոշված գնով վաճառվելու էր և դրանից ստացված գումարը ֆինանսների նախարարության պահոցներում դրվելու էին տերերի անունով, որոնք հայտնի պատճառներով չէին կարողանալու պահանջ ներկայացնել այդ գումարի համար¹⁵⁶⁹:

Հալեպում Կայսերական Գերմանիայի հյուպատոս Ռյոպերը դեսպան իշխան Հոհենլոռ-Լանդենբուրգին՝ Հալեպից 1915 թ. հուլիսի 31-ին (Կայսերական գերմանական հյուպատոսություն N 1665) գրում է, որ եկել է Այնթափը, Քիլիսը և Հալեպի նահանգի ավամերձ շերտը ազատելու հրամանը: Այսպիսով, կրկին աղքատ

¹⁵⁶⁷ Օրենքների հրապարակման ամսաթվերի տարբերությունը պայմանավորված է հին և նոր տոմարով:

¹⁵⁶⁸ Իտալիայի Արտաքին գործերի նախարարության պատմական դիվանագիտական արխիվի վավերագրերը Հայկական հարցի մասին (1913-1923թթ.), հ. Ա (1913-1917), նյութը հավաքեց, կազմեց, թարգմանեց, առաջաբանը գրեց և հրատարակման պատրաստեց Ա. Բալոյանը, ՅՅԹԻ, Եր., 2008, էջ 175-176:

¹⁵⁶⁹ Նույն տեղում, էջ 176:

տության մեջ է ընկնելու 50.000 մարդ: Նշվում էր, որ կառավարությունը նրանցից իսկում է աշխատանքը, աշխատավարձը և անկասկած չի կերակրելու նրանց. «...Այնթափ քաղաքի նկատմամբ, որտեղ ապրում են կրթված և համամատաբար ունևոր ընտանիքներ, տեղահանության իրականացումը կլինի հատկապես անարդարացի և դաժան... Այնուամենայնիվ, Այնթափը չի գտնվում ոչ ռազմական գործողությունների գոտում և ոչ էլ տեղահանության ճանապարհին¹⁵⁷⁰»: Իսկ Հալեպում ԱՄՆ-ի հյուպատոս Ջեյմս Բ. Ջեկսոնը 1915 թ. օգոստոսի 19-ին Հենրի Մորգենթաուին զեկուցում է, որ Այնթափի հայ համայքն ամենահարուստն է կայսրությունում, և որ այնտեղ լավ հնարավորություն է ստեղծվում թալանի համար: Քաղաքացիների տնային իրերը թողնվել են և հենց առաջին կողոպտիչները կարող են տանել դրանք: Քանի որ քաղաքի վաճառականներից շատերը հայեր են, թալանվում են նաև նրանց խանութները¹⁵⁷¹:

XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին, մրցակցային բարդ և անհավասար պայմաններում, Այնթափի հայերը տնտեսության բոլոր ճյուղերում մեծ զարգացում էին ապրել ու գտնվում էին առաջնային դիրքերում: Միաժամանակ, կայսրության բոլոր նահանգներում թուրքական իշխանությունների կողմից կոշտ միջոցներ էին գործադրվում հայերի տնտեսական գործունեությունը կասեցնելու ուղղությամբ: 1915 թ. առաջ առավել տարածվածը՝ հայ վաճառականների և հայկական արտադրանքի նկատմամբ իրականացվող բռնկոտն էր:

Այնթապում Առաջին աշխարհամարտի նախաշեմին ձևավորվում են տարբեր ընկերություններ, որոնց գործունեության հիմնա-

¹⁵⁷⁰ Հայոց ցեղասպանությունը Գերմանիայի դիվանագետների հաղորդագրություններում (1915-1918 թթ.), էջ 52-53:

¹⁵⁷¹ Ամերիկայի Միացյալ Նահանգների պաշտոնական վավերագրերը Հայոց ցեղասպանության մասին, Փաստաթղթերի ժողովածու, կազմ.՝ Ա. Սարաֆյան, թարգմ.՝ Շ. Հայրապետյան, իսմբ. և առաջաբ. Լ.Ա. Բարսեղյան, Երևան, ՀՅԺԻ, 2004, էջ 55:

կան առանցքը հայերի առաջխաղացումը կասեցնելն էր, իսկ թուրքերինը՝ խրախուսելը: Քաղաքում ստեղծվել էին «*Թուրք Եուրդու*»¹⁵⁷² և «*Թուրք Կիւճիլ*»¹⁵⁷³ անուններով կազմակերպություններ: Քաղաքի շրջակայքում գտնվող հողի մեծ մասը գրանցվում էր որպես այս կազմակերպությունների սեփականություն: Շատ գյուղերի հողեր բռնի կամ տարբեր սպառնալիքներով նույնպես գրանցվում և վերոնշյալ հաստատությունների անուններով *թափու*¹⁵⁷⁴ էին հատկացվում¹⁵⁷⁵:

Այնթապի շրջակա Ուրուլ¹⁵⁷⁶ գյուղի Գըսանճըք Պապոյին կալվածագրով պատկանող 4 ձիթաստանը, արտերը և ծառերը բռնագրավվել էին համագյուղացի Ահմեդ Ֆադըլ օղլու եղբայրների և Տանենին օղլու Ասլանի, Քեոբեղի մեմեղի Ահմեդի կողմից: Խնդրի հետ կապված դատական գործընթաց է սկսվում և անգամ վճիռ է կայացվում, սակայն ոչինչ չէր փոխվում¹⁵⁷⁷: Դարեր ի վեր Հայ ազգային սեփականությունը հանդիսացող գերեզմանատան կարևոր մի մասը «*Թուրք Մէարըֆի*»¹⁵⁷⁸ միջոցով հայերի ձեռքից խլվում է: Տուժող կողմը կրկին դիմում է դատարան, սակայն սկսվում է բռնագաղթը և դատը մնում է անլուծելի¹⁵⁷⁹:

¹⁵⁷² Türk Yurdu (թրք.) -Թուրքական երկիր, հայրենիք:

¹⁵⁷³ Türk Gücü (թրք.) -Թուրքական ուժ:

¹⁵⁷⁴ Tapu (թրք.) -սեփականության վկայական, կալվածագիր:

¹⁵⁷⁵ Փարիզի Նուբարյան գրադարան, Անտոնյանի հավաքածու, թղթածրար թիվ 4, Այնթապու Հայոց Արտագաղթը, 1-2, 0001:

¹⁵⁷⁶ Ուրուլ կամ Օրուլ - 19-րդ դարավերջին Այնթապի գավառակի միակ հայաբնակ գյուղն էր: Տե՛ս Էփրիկեան Հ. Ս., նշվ. աշխ., էջ 146:

¹⁵⁷⁷ Տեղեկագիր հողային գրաւմանց յանձնաժողովոյ, Տետր Բ., Պաշտօնական հրատարակութիւնք Ազգային Պատրիարքարանի, Կ. Պոլիս, 1911, էջ 10:

¹⁵⁷⁸ Maarif (թրք.) - գիտելիք, կրթություն: Կարելի է ենթադրել, որ Թուրքական կրթական ընկերության կամ տեղական կրթական գրասենյակի միջոցով հողային գրավումները տարածված էին: 1872 թ. Ադանայում որպես կրթության տուրք նույնպես գրավվել են հայապատկան կալվածքներ: Թեոդիկ Ա., Ամիս մը՝ի Կիլիկիա, Կ. Պոլիս, տպ. Վ. Է. և Հ. Տէր Ներսէսեան, 1910, էջ 79-80:

¹⁵⁷⁹ Փարիզի Նուբարյան գրադարան, Անտոնյանի հավաքածու, թղթածրար թիվ 4, Այնթապու Հայոց Արտագաղթը, 2, 0001:

Հողային գրավումներից բացի, թուրք երևելիները ստեղծում են «Ինթիպահ»¹⁵⁸⁰ ընկերությունը, որի նպատակն էր խաթարել հայ արհեստավորների և վաճառականների գործունեությունը, բոյկոտել նրանց ապրանքները: Հորդորում էին թուրքերին չվճարել հայերի պարտքերը, չմշակել հայերի հողերը. «յայտարաելով անոնց, որ արդէն քիչ ատէնէն Այնթապու մէջ Հայ մը իսկ չպիտի մնար»¹⁵⁸¹: Նույնիմաստ քարոզներ էին արվում նաև քաղաքի մզկիթներում:

1915 թ. մարտի կեսին արդեն Ադանայում և Մարաշում ջարդի նախանշաններ էին երևում: Տվյալ ժամանակահատվածում թուրքական 16-րդ գորագունդը գտնվում էր Ադանայում, իսկ 24-րդ՝ Այնթապում¹⁵⁸²: 1915 թ. ապրիլի 15-ին Ադանայից Սահակ Բ կաթողիկոսը գրում էր, որ Մարաշի, Այնթապի և Քիլիսի՝ Ջեյթունի բախտին արժանանալու հավանականությունը մեծ է: Այդ ժամանակ արդեն Ջեյթունից բռնագաղթածների թիվը 3000-ից անցնում էր: Կաթողիկոսը նշում էր նաև Չորբորդ բանակի հրամանատար Ջեմալ փաշայի փոխանորդ Ֆահրեթին փաշայի հետ իրենց հանդիպման մասին, որի ընթացքում վերջինս ասել էր հարուստներին հեռացնելու անհրաժեշտության մասին, որ աղքատ դասակարգը հանգիստ ապրի¹⁵⁸³: Ջեմալ փաշայի հրամանով որպէս քննիչ Այնթապ է ուղարկվում Ֆահրի փաշան, սակայն խուզարկության ընթացքում ոչինչ չի հայտնաբերվում: Ֆահրի փաշան սկսում է տեղացի թուրքերի հետ գաղտնի ժողովներ գումարել հայերի տեղահանության հետ կապված, ինչից հետո մի խումբ հայերի կանչելով հայտարարում. «Տեղահանությունը կառավարութեան իրաւասութիւնն է, և եթէ հայ անհատ մը Թուրքի մը իրավունքին դեմ գործ է աստոր հաշիւը ամբողջ Հայ ազգը պիտի

¹⁵⁸⁰ İntibah (թրք.) – վերածնունդ:

¹⁵⁸¹ Փարիզի Նուբարյան գրադարան, Անտոնյանի հավաքածու, թղթածրար թիվ 4, Այնթապու Հայոց Արտագաղթը, 2, 0001:

¹⁵⁸² Ղազարեան Հ., Ցեղասպան թուրքը, Բեյրութ, «Համազգային», 1968, էջ 176:

¹⁵⁸³ Կիլիկեան Կսկիծներ, 1903-1915, կազմ.՝ Ջ. Պզտիկեան, Պեյրութ, «Հրազդան», 1927, էջ 155-156:

վճարի»¹⁵⁸⁴։ Այնուհետև փաշան հանձնարարում է, որ հայերը՝ որպես պատերազմական տուգանք մեծ գումար վճարեն կառավարությանը¹⁵⁸⁵։

Օսմանյան խորհրդարանի պատգամավոր Ալի Ջենանիի հանձնարարությամբ *Էշրեֆ*¹⁵⁸⁶ մասնախմբի *չեթե*¹⁵⁸⁷ բաշի¹⁵⁸⁸ Ալի բեյը կանչվում է Այնթապ, որտեղ արդեն հավաքվել էին նաև շրջակա *աշիրեթներ*¹⁵⁸⁹ պետերը։ Գաղտնի ժողովներն ավելի հաճախակի են դառնում։ Ալի բեյն անգամ մահվան դատավճիռ է արձակում Օսմանյան բանկի աշխատակից Տիգրան Խրլագյանի նկատմամբ, որը հարմարակցվել էր մի թուրքի թղթախաղի ժամանակ «խարդախ» անվանել, սակայն բեյի շրջապատում այդ գործողությունը դիտարկում են վտանգավոր, քանի որ Խրլագյանը օտարահպարակ էր, նրան հասցնում են միայն գավազանի 20 հարված¹⁵⁹⁰։

1915 թ. ապրիլի 18-ին հայտնի հայերից շատերի տները խուզարկվում են. «զենքի և վնասակար գրություններու համար»¹⁵⁹¹։ Գտնվում է որսի մի քանի հրացան, ձկնորսության համար գործածավող դինամիտներ, հին ու խանութներում իբրև կշռաքար օգտագործվող պայթուցիկ գնդակներ, սակայն մեծ թվով մարդկանց ձերբակալում են և բանտարկում «*Պեշտիլեյի խանում*»¹⁵⁹²՝ արգելելով հաղորդակցությունը։ Կ.Պոլիս հեռագրվում է, որ հայերի մոտ զենք և ռումբեր են գտնվել, փակվում են դեռևս Աբդուլ Համիդի ժամանակներից գործող հայկական բոլոր լսարանները, մինչդեռ

¹⁵⁸⁴ Փարիզի Նուբարյան գրադարան, Անտոնյանի հավաքածու, թղթածրար թիվ 4, Այնթապու Հայոց Արտագաղթը, 5, 0003:

¹⁵⁸⁵ Նույն տեղում:

¹⁵⁸⁶ Eşref (թրք.) – ազնվական, նաև՝ ազդեցիկ, բարձր դիրք ունեցող իմաստով:

¹⁵⁸⁷ Çete (թրք.) – պարտիզանական ջոկատ, ապստամբների փոքր ջոկատ, ավազակախումբ:

¹⁵⁸⁸ Baş (թրք.) – գլխավոր, առաջնորդ:

¹⁵⁸⁹ Aşiret (թրք.) – (քոչվոր) ցեղախումբ, ցեղ:

¹⁵⁹⁰ Փարիզի Նուբարյան գրադարան, Անտոնյանի հավաքածու, թղթածրար թիվ 4, Այնթապու Հայոց Արտագաղթը, 5, 0003:

¹⁵⁹¹ Նույն տեղում, 6, 0003:

¹⁵⁹² Belediye (թրք.) – քաղաքապետարան :

թուրքական լսարանները լայն թափով հակահայկական քարոզչություն էին տարածում: Ալի բեյն իր չեթեական խմբով քաղաքի շրջակայքում սպանություններ ու կողոպուտներ է սկսում: Հայերը դիմում են Հալեպի նահանգապետ Ջելալ բեյին՝ զրպարտությունները և ոճիրները կանխելու համար: Վերջինս խուզարկություններ իրականացնելուց հետո հաստատեց հայերի անմեղությունը, իսկ ձերբակալվածներին ազատ արձակեց: Չնայած դրան թուրքերը շարունակում էին ձերբակալել հայերին և ուղարկել Բերեջիկի *քայմաքամի*¹⁵⁹³ մոտ՝ Ուրֆայի զինվորական ատյան, իսկ ձերբակալված քահանաներին զինվորականների հսկողությամբ ուղարկում էին Հալեպ¹⁵⁹⁴:

Գ. Պողարյանը նույնպես հաստատում է 1915 թ. ապրիլի 17-ին սկսված խուզարկությունների ու ձերբակալությունների փաստերը, որոնք աննշան ընդմիջումներով շարունակվեցին մինչև ապրիլի 29-ը: Ձենք և արգելված գրականություն փնտրելու պատրվակով ձերբակալվածների և հսկողության տակ վերցվածների թիվը հասնում էր 200-ի: Ձերբակալվածների շարքում էին նաև ճանաչված վաճառականներ Պետրոս Աշճյանը, Նազարեթ Մանուշակյանը, Ղազարյան եղբայրները, Կարուճ Մերձանյան, Հարություն Պասմաճյանը, Հակոբ և Հովսեփ Մյուրեքյան եղբայրները, Տեր Մովսես քահանա Ժամկոչյանը, ինչպես նաև կուսակցական ղեկավարներ և այլն: Որոշ ժամանակ անց նրանք ազատ են արձակվում, նրանցից միայն 30-ն է ուղարկվում Հալեպ՝ նահանգապետի մոտ հարցաքննության¹⁵⁹⁵:

Հուլիսի 15-ին մուներտիկները, ինչպես նաև քաղաքի պատերին փակցված հայտարարությունները ազդարարում էին, որ Այնթապի հայերը պետք է տեղահանվեն¹⁵⁹⁶: Նշվում էր նաև, որ շարժական

¹⁵⁹³ Kaymakam (թրք.) – գավառակի ղեկավար:

¹⁵⁹⁴ Փարիզի Նուբարյան գրադարան, Անտոնյանի հավաքածու, թղթածրար թիվ 4, Այնթապու Հայոց Արտագաղթը, 6, 0003:

¹⁵⁹⁵ Պողարեան Գ., Ցեղասպան Թուրքը, Պէրյութ, «Շիրակ», 1973, էջ 121-122:

¹⁵⁹⁶ Նույն տեղում, էջ 122:

գույքը կարող են վաճառել, տները թողնել ինչպես որ կա և բանալին հանձնել *մըխթարին*¹⁵⁹⁷: Եկեղեցապատկան բարձրարժեք սպասքը, շուրջառները, արծաթապատ կամ ոսկեպատ գրքերը փոխանցվում են «Կեդրոնական Թուրքիոյ գոլեճի» տնօրեն դոկտ. Մերիլին, իսկ դպրոցական գրադարանները եկեղեցապատկան այլ առարկաների հետ տեղավորում են եկեղեցու ավագ խորանի հետևում կառուցված թաքստոցի մեջ¹⁵⁹⁸:

Այնթապ եկած իթթիհադական «*Միլֆեթթիշ*»¹⁵⁹⁹ Ջեմալ բեյը տեղի երիտթուրքերի և թուրք երեսելիների հետ տարբեր հանդիպումներ ու ժողովներ էր գումարում: 1915 թ. հուլիսի 16-ին կայացած ժողովից հետո հայտարարվեց հայերի առաջին խմբին արտաքսելու մասին: Հայերին տրվում էր 24 ժամ և արգելվում վերցնել դրամ կամ արժեքավոր որևէ իր: Հուլիսի 17-ի առավոտյան սկսվում է հայերի բռնագաղթը: Առաջին խումբը տեղահանվում է քաղաքի արևմտյան կողմից, թալանի համար կազմակերպված չեթեական խմբերից մեկը, չհասնելով տեղահանվածների առաջին խմբին, հարձակվում և կողոպտում է փոքր ինչ հետ մնացած Այնթապի վարչական ժողովի անդամ Նազարեթ Մանուշակյանի կառքը¹⁶⁰⁰ (հատկանաշական է, որ Մանուշակյանը Այնթապի ամենահարուստ մարդկանցից մեկն էր): Երկրորդ խմբի կողոպուտն ավելի կազմակերպված է տեղի ունենում, քանի որ նրանց թույլատրվել էր գումար և իրեր վերցնել. «Երկրորդ փարթին մեկնած օրը, կանոնաւոր չեթէները և Թըլպաշլար, Մեզրա, Քինիյոք, Գանդաթա, Էքիզ Գոյու, Պահնէ, Համէյլի և Սազդըն գիւղերու գիւղացիներ, Այնթապու ազնուական [...] թուրքերէն «Ջրաաթ պանքա»¹⁶⁰¹»-ի տնօրէն Էմին Էֆ. ալ «լիտըր»ներըէն մեկը ըլլալով, յար-

¹⁵⁹⁷ Muhtar (թրք.) – թաղապետ:

¹⁵⁹⁸ Պողարեան Գ., Ցեղասպան Թուրքը, էջ 123:

¹⁵⁹⁹ Müfettiş (թրք.) – ռևիզոր, վերստուգիչ:

¹⁶⁰⁰ Փարիզի Նուբարյան գրադարան, Անտոնյանի հավաքածու, թղթածրար թիվ 4, Այնթապու Հայոց Արտագաղթը, 8, 0004:

¹⁶⁰¹ Ziraat Bankası (թրք.) – Գյուղատնտեսական բանկ:

ձակում գործեցին և երկրորդ փարթիին խիստ մեծ քանակությամբ դրամ, գոհարեղեն և ուրիշ առարկաներ կողոպտեցին»¹⁶⁰²: Գաղթականների պաշտպանության համար նշանակված Քուրդ Հաճի Նուրին ծեծելով սպանում է Նազար Նազարյանին, կողոպտում և մերկացնում դիակը¹⁶⁰³: Ազարակատեր Հովսեփ Քենտերձյանի որդիները զորակոչվում են, ապա սպանվում, իսկ ազարակատեր եղբայրներ՝ Մինասն ու Հովսեփը աքսորվում: Դեր Ջոր աքսորված Քենտերձյանների մասին մյութասերիֆ¹⁶⁰⁴ Ահմետ բեյն ասում էր. «ինչպես կրնայ ըլլալ, որ 200 մեհմետական աշխատին ալ ատոր պտուղը քրիստոնեայ մը քաղե»¹⁶⁰⁵: Այնթապում գերմանական բանկի ներկայացուցիչ Լևա Սահակյանը և Այնթապի Ադենական վարժարանի տնօրեն Հակոբ Զեյթունցյանը ձերբակալվում են և առանց հարցաքննության ուղարկվում Դեր-Ջոր: Նրանք, ուրիշ այլ մարդկանց հետ միասին, բազում չարչարանքներից հետո սպանվում են բանտում: Բացի այդ, Այնթապի թուրք երևելիներից ոմանք նենգաբար իբր թե մտերմանում էին ունևոր հայերի հետ, խոստանանում նրանց Հալեպ տանել ու տեղավորել, գործնականում, սակայն, այդ կերպ տիրանում էին նրանց ունեցվածքին և հետամուտ լինում, որ վերջիններիս ոչնչացվեին Դեր Ջորի ճանապարհին¹⁶⁰⁶:

Հուլիսի 17-ին տեղահանված առաջին քարավանը բաղկացած էր մոտ 50 ընտանիքից «ունեւորներ, մեծաւորներ, ժողովականներ...»¹⁶⁰⁷: Երկրորդ քարավանը դուրս է գալիս հուլիսի 20-ին, Հայեկ և Եկեղեցու թաղերի բնակիչները, մոտ 80 ընտանիք: Երրորդ քարավանը տեղահանվում է հուլիսի 24-ին՝ մոտ 100 ընտանիք,

¹⁶⁰² Փարիզի Նուբարյան գրադարան, Անտոնյանի հավաքածու, թղթածրար թիվ 4, Այնթապու Հայոց Արտագաղթը, 8, 0004:

¹⁶⁰³ Նույն տեղում:

¹⁶⁰⁴ Mutasariff (թրք.) – գավառապետ:

¹⁶⁰⁵ Նույն տեղում, 10, 0005:

¹⁶⁰⁶ Փարիզի Նուբարյան գրադարան, Անտոնյանի հավաքածու, թղթածրար թիվ 4, Այնթապու Հայոց Արտագաղթը, 13, 0007:

¹⁶⁰⁷ Պողարեան Գ., Ցեղասպան Թուրքը, էջ 123:

կրկին Հայեկ և Ագեոլ թաղամասերի հայերը, չորրորդն էլ արտորվում է հուլիսի 27-ին, որում Գայաճըզ, Իրն Էյուպ, Գասթել Բաշի թաղամասերի մոտ 100 հայ ընտանիքներ էին ընդգրկված: Հինգերորդ քարավանի տեղահանության հրահանգը ստացվում է հուլիսի 23-ին. «թաղը կը դառնայ «պագար», ծախու ապրանք ամեն դուռի նոյնիսկ փողոցներու առջեւ, ամեն տղա վագ ի վագ բան մը կը հանէ վաճառումի, արժէքը որոշելը ձգելով գնորդին»¹⁶⁰⁸: Ապրանքները վաճառվում էին իրենց արժեքից 10 կամ 20 անգամ նվազ գնով: Հինգերորդ քարավանը տեղահանվում է հուլիսի 29-ին ավելի քան 120 ընտանիք, մոտ 1200 հոգի, Էպլահան, Հայեկ և Ագեոլ թաղերի բնակիչները¹⁶⁰⁹: Այնթապի հայերի առաջին արտագաղթի խմբի անձանց ծանուցումից հետո, երբ վերջիններս փորձում են վաճառել իրենց գույքերը, թուրք ժողովրդին պաշտոնապես հաղորդվում է, որ հայերից որևէ ապրանք չգնեն, քանի որ դրանք այնպես էլ իրենց էին մնալու: Մի կին հասնւմ է առնում վաճառել հայերի ոսկեղենը և գոհարեղենը, որոշ ժամանակ անց գտնում են նրա դին ջրհորի մեջ, կառավարությունը գործին հետամուտ չի լինում: Նշվում է, որ բավականին քիչ քանակությամբ գույք հնարավոր եղավ վաճառել, այն էլ քսան անգամ էժան գնով. «Թշուառութեան և անօթի մնալու պատճառներէն մէկն ալ աս եղաւ»¹⁶¹⁰:

Մելքոն Գալեմքեարյանի ընտանիքը ևս Այնթապից առաջին տեղահանվածների թվում էր: Հայ ընտանիքները հավաքվում էին հրապարկում և խումբ-խումբ տեղափոխվում կայարան: Ակտիվացած գողերն ու վերավաճառող առևտրականները բղավում էին, որ պատրաստ են Գալեմքեարյանների գործ կրակարան, ինքնաեռ, ճաշամաններ և այլն գնել. «Դեպի կայարան հեռանալիս վարպետների ականջներում արաձագանքում էր իրենց գործերը փնտրող գնորդների կանչը: Թերեւս ճակատագրի հեգնանքն էր, որ վար-

¹⁶⁰⁸ Նույն տեղում, էջ 123-124:

¹⁶⁰⁹ Նույն տեղում:

¹⁶¹⁰ Փարիզի Նուբարյան գրադարան, Անտոնյանի հավաքածու, թղթածրար թիվ 4, Այնթապու Հայոց Արտագաղթը, 17, 0009:

պետներն իրենք յանձնուած էին բախտի քմահաճութեանը, նրանցով հետաքրքրուողներ չկային: Սակայն իրենց գործերը փնտռուած էին, կարելի էր առիթից օգտուելով գնել եւ յետոյ ավելի թանկ գնով վերավաճառել»¹⁶¹¹:

Այնթապցի վերապրողների հուշերում բազմաթիվ են փաստերը տեղահանւթյանը նախորդող առուծախի, հայերի անելանելի վիճակի, իրական աժեքից մի քանի անգամ ցածր գնով վաճառվող ապրանքների, լավագոյն դեպքում վաճառվող ապրանքների (հիմնականում դրանք հայերից պարագապես խլվում էին), թուրքերի և տեղի այլ մահմեդականների անուններով հայապատկան տների վերագրանցումների մասին, ինչը վկայում է հայերի ունեցվածքի զանգվածային ունեզրկման պետական մակարդակով իրականացվող համակարգված գործողությունների մասին: Նույն հետևողականությամբ գործողությունները շարունակվում էին նաև ավելի ուշ՝ նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին բողոքական հայերի տեղահանւթյան օրերին. «Թուրքերը հայ թաղերը թափված են ապրանք գնելու: Ապրանքներու գինը շատ իջած է. մանածը 180էն ինկած է 160ի: Արգուհալներ¹⁶¹² կը տրուին գումիսիոնի, միայն 22 ժամ պայմանաժամ կը տրուի: Դրամ չկա, Սենայի 650 հայ աշխատավոր զինվորների տները նույնպես «գրի առնուած» են¹⁶¹³»: Նկարագրելով բռնագաղթի ընթացքը, Գուրգենն իր օրագրության մեջ նշում է, որ շարունակվում են պատրաստությունները, ապրանքների վաճառքը և թուրքերի անուններով տների վերագրանցումները, դեկտեմբերի 8-ին վերագրանցվում է նաև իրենց տունը¹⁶¹⁴:

Տեղահանւթյան օրերին պաշտոնանկ է արվում Այնթապի կառավարիչը, նորանշանակ կառավարիչը Կ. Պոլսի ոստիկանւթյան տնօրեն Ահմետն էր: Այս փոփոխւթյանը հետևում է արքուն

¹⁶¹¹ Թոքմաճեան Հ., Գալէմքեարեաններ..., էջ 38:

¹⁶¹² Arzuhal (թրք.) – խնդրագիր, դիմում:

¹⁶¹³ Կուրկէն, Սեւ Օրագիր, (1915 Նոյմ. 20- 1916 Ապրիլ 21), «Հայ Անթէպ», Պէրոյթ, 1966, թիւ 1(21), էջ 34:

¹⁶¹⁴ Նույն տեղում:

րավայրի փոփոխությունը, այսուհետև Հալեպ-Համա-Հաուրան ուղղության փոխարեն այնթապահայերը տեղահանվում են Մեսքենե-Դեր Զոր¹⁶¹⁵: Այնթապից Դեր Զոր աքսորվածների ջարդին մասնակցում են իթթիհադականները և երևելի թուրքերը, ինչպես նաև մյուսասերիֆ Ահմեթ բեյը: Աքսորյալների ոչնչացումը իրականացնելու համար գործադիր մարմնի անդամ են ընտրվում Դաբադ Քրմյազադեի որդին, Նուրի բեյի որդի Գատերը և Սեյաֆզադեի փեսա ու Հաջի Հալիլի որդի Զեքին: Նրանք հասնում են մինչև Դեր Զոր. «ամենայն ճիկ ըրին որպեսզի Տեր Զորի ծանոթ հայակույ Ձեքի պելի սուրեն Այնթապցի հայ մըն իսկ չազատի, անոնք յաջողեցան մասնակցիլ 15,000 Այնթապցի հայերուն Տեր Զորի մէջ ջարդուելուն: Մեծ եղաւ Այնթապու թրքութեան խնջոյքն վերոյիշեալ մարմնոյ գործունէութեան տեղեկագիրը լսելով»¹⁶¹⁶: Ասվածից կարելի է ենթադրել, որ Այնթապի թուրքերը հայերի ոչնչացման հրամանի մասին հստակ իմանալուց բացի նաև ցանկանում էին հավաստիանալ հրամանի իրագործման մեջ՝ կողոպուտին վստահաբար ու անարգելք տիրանալու նպատակով:

Տեղահանությունից ամիսներ անց, եթե որոշ հայերի հաջողվում էր վերադարձի արտոնագիր ստանալ, թուրքերը՝ ինչպես տեղական կառավարության ներկայացուցիչները, այնպես էլ հասարակ քաղաքացիները, գույքն ու ունեցվածքը չվերադարձնելու համար տարբեր պատճառներով ամբաստանելով հայերին, կարողանում էին հասնել նրանց կամ բանտարկմանը, կամ հետ վերադարձին համակենտրոնացման ճամբարներ: Տեղահանությունից 8-10 ամիս հետո, երբ տներն արդեն կառավարության կողմից գրավված, իսկ կահկարասիները կողոպտված էին տեղի մահմեդականների կողմից, աքսորավայրից կանչվում են Պետրոս Աշճյա-

¹⁶¹⁵ Պողարեան Գ., Ցեղասպան Թուրքը, էջ 125:

¹⁶¹⁶ Փարիզի Նուբարյան գրադարան, Անտոնյանի հավաքածու, թղթածրար թիվ 4, Այնթապու Հայոց Արտագաղթը, 10, 0005:

նը¹⁶¹⁷, Կարուճ Մերճանյանը¹⁶¹⁸, Հրանտ Սյուլահյանը¹⁶¹⁹ և Հարություն Բասմաճյանը, որոնք ամբաստանվում են իշխանությունների դեմ գործելու՝ զենք վերցնելու և փախչելու մեջ: Վերջիններս պահակախմբի ուղեկցությամբ բերվում են Այնթապ և հանձնվում Պատերազմական ատյանին, ամիսներ տևած դատն ավարտվում է նրանց անմեղության հաստատումով, սակայն դրանից հետո էլ նրանք կրկին ուղարկվում են աքսորավայր: Այնթապի թուրքերը դիմում են Ջեմալ փաշային, որը բեկանում է Այնթապի պատերազմական ատյանի վճիռը և այս անգամ նրանց հանձնում Հալեպի պատերազմական ատյանին: Երկարատև բանտարկությունից հետո Աշճյանն ու Բասմաճյանը ազատ են արձակվում, իսկ Մերճանյանը և Սյուլահյանը մահվան են դատապարտվում: Կ. Պոլիս ուղարկված բազմաթիվ դիմումների արդյունքում հնարավոր է լինում մահավճիռը վերանայել: Երկուսն ու կես տարվա դատական գործընթացը բավականին լուրջ ծախսերի և տանջանքի պատճառ է դառնում¹⁶²⁰: Կարելի է պնդել, որ այս երևելի հայերի

¹⁶¹⁷ Պետրոս Աշճյանի կարողությունը կազմում էր 100000 օսմ. հնչուն ոսկի, ուներ պալատանման տուն, գյուղեր, ագարակներ, ոչխարի հոտեր, պիստակի ընդարձակ անտառներ:

¹⁶¹⁸ Կարուճ Մերճանյանը մանուսայագործ էր, «Մերանճեան» վաճառատան սեփականատերը: Հիշատակվում է նաև Մերճեյան ձևով:

¹⁶¹⁹ Հրանտ Սյուլեյանն Այնթապի հայտնի երևելիներից էր, կրթամշակութային և հասարակական գործիչ: Անդամակցել է Հնչակյանին, ապա հարել՝ Ռամկավար կուսակցությանը: 1915 թ. ապրիլին Այնթապում ձերբակալվել է և մի քանի օր բանտարկվել, հոկտեմբերին ընտանիքի հետ միասին աքսորվել է Դամասկոս: 1916 թ. մարտին կրկին ձերբակալվել և տարվել է Այնթապ, բանտարկվել՝ երեք ամսով: Որոշ ժամանակ անց կրկին բանտարկվել և տարվել է Հալեպ: Պատերազմական ատյանը Սյուլահյանին, որպես հեղափոխական և ազգային գործիչ, մահվան է դատապարտել, սակայն Կ. Պոլիս հղված բազմաթիվ դիմումներից ու բողոքներից, ինչպես նաև Ջեմալ փաշայի միջամտությունից հետո մահվան դատավճիռը բեկանվել է և 19-ամյա բանտարկությունից հետո ազատ է արձակվել: Տե՛ս Հրանդ Գ. Սիւլահեան, «Նոր Այնթապ», Պէրույօ, 1972, թիւ 2-3 (50-51), էջ 8-11:

¹⁶²⁰ Փարիզի Նուբարյան գրադարան, Անտոնյանի հավաքածու, թղթածրար թիվ 4, Այնթապու Հայոց Արտագաղթը, 12, 0006:

նկատմամբ իրականացվող հետևողական հետապնդումները պայմանավորված էին տեղի թուրքերի պաշտոնյաների կողմից նրանց հարստությանը և ունեցվածքին տիրանալու մոլուցքով: Վերոնշյալ անձանց Այնթապ վերադառնալու մասին տվյալներ կան նաև այլ աղբյուրներում, մասնավորապես, Գուրգենը նշում է մարտի 15 (1916) Պետրոս Աշճյանի, մարտի 21-ին Հրանտ Էֆենդիի, Մերճենյանի և Պասաճյանի Այնթապ գալու, իսկ ապրիլի 8-ին Մերճենյանի տան ու հարևան տների խուզարկությունների մասին¹⁶²¹:

Պատերազմի օրերին Այնթապում մնացած հայերը գտնվում էին մշտական հսկողության տակ, վախի ու հալածանքի պայմաններում: Զինվորական «*Իմալեթհաններում*»¹⁶²² աշխատող հայերի աշխատավարձը չէր տրվում, ծեծը և ամեն տեսակի անարգանքը սովորական երևույթ էր դարձել: Կատարվում էին նաև հայերին բռնի իսլամացնելու փորձեր¹⁶²³: Այնթապում մնալու արտոնություն է տրվում միայն մոտ 100 ընտանիքի, մասնավորապես, զինվորականների ընթանիքներին (որոնք նյութապես վատ վիճակում էին և 18 տարեկան դարձած տղա երեխա չունեին), «սէնա՛իները»՝ որոնք «Արհեստանոցում» էին աշխատում զինվորական կարիքների համար և քաղաքային արհեստավորներին, որոնք կենսական կարևորության ու թուրքերի համար անմատչելի մնացած արհեստների էին տիրապետում: 1916 թ. հոկտեմբերին Այնթապում արտոնագրով մնացած բոլոր արհեստավորների 90%-ը տեղեփոխվում է Հալեպի «թէշքիլաթ»¹⁶²⁴ը¹⁶²⁵:

Այնթապում թողնված արհեստավորներից բացի, 50 տուն տարբեր արհեստավորներ ուղարկվում են Տիգրանակերտ, Ուրֆա,

¹⁶²¹ Կուրկեն, Սեւ Օրագիր, (1915 Նոյմ. 20- 1916 Ապրիլ 21), «Հայ Անթեպ», Պէրուր, 1966, թիւ 1(21), էջ 38:

¹⁶²² İmalathane (թրք.) – գործարան, արհեստանոց:

¹⁶²³ Փարիզի Նուբարյան գրադարան, Անտոնյանի հավաքածու, թղթածրար թիվ 4, Այնթապու Հայոց Արտագաղթը, 15, 0008:

¹⁶²⁴ Teşkilat (թրք.) – կազմակերպություն:

¹⁶²⁵ Կիլիկիական Վ. Ն., Յուշեր ու Փուշեր 1915-1918 Սեւ Օրերէն, «Հայ Անթեպ», Պէրուր, 1964, թիւ 2 (14), էջ 12-14:

Սևերեկ, Ադիամանի շրջան, քանի որ այնտեղ արհեստավորներ չէին մնացել¹⁶²⁶: Չնայած հալածանքներին ու ծանր պայմաններին, հայերը փորձում էին տարբեր ճանապարհներով, հաճախ կաշառքով, արտոնագրեր ստանալ աշխատանոցներում մնալու համար, քանի որ այդ դեպքում կար փրկվելու չնչին հնարավորություն: Օսմանյան պետությունը նրանցից որոշներին իրենց բնակավայրերում «մնալու» հնարավորություն էր տալիս բացառապես այն պատճառով, որ այդ հայ մասնագետների տեղահանությունից հետո տարբեր աշխատանքային գործընթացներ պարզապես կաթվածահար էին լինելու:

Արևմտյան Հայաստանի նահանգների և կասրության այլ բնակավայրերի գաղթական հայերը, որոնք անցնում էին Այնթապով, տեղակայվում էին քաղաքից քառորդ ժամ ճանապարհի հեռավորության վրա գտնվող «Գավազչըզ» կոչվող մարգագետնում, գետակի կողքին, սակայն գաղթականներին արգելվում էր խմել ջրից, այն վաճառում էր ¼ մեջիդով: Շատերը, չկարողանալով վճարել այդ գումարը, մահացած ընկնում էին հենց գետի ափերին: Գիշերակացի ժամանակ, ինչպես ամենուր, սկսվում էր կողոպուտը, կանանց ու աղջիկների առևանգումը¹⁶²⁷: Ինչպես այնթապցիները, այնպես էլ այլ վայրերից բռնագաղթվածները արտաքսվում էին Ագչե Գոյունը կայարանից: Կայարանի հրամանատար Ռում-բլաեցի Յասինը հայերին անգամ ձմռանը դրսում էր թողնում, գնացքի համար նրանցից մեծ գումարներ էր կորզում. «Նոյնը Այնթապու ազնուականներուն հետ համախորհուրդ ընկերութիւն մը կազմեց, և վնասակար թուղթեր և կամ զէնք փնտռելու պատրուակով բեռները բանալով թանկագին գոյքերը գրաւեցին, իսկ գույքերու մնացած մասը անոնց ձեռքէն առնուեցաւ ըսելով որ

¹⁶²⁶ Կուրկէն, Սեւ Օրագիր, (1915 Նոյմ. 20- 1916 Ապրիլ 21), «Հայ Անթէպ», Պէյրուք, 1966, թիւ 1(21), էջ 36:

¹⁶²⁷ Փարիզի Նուբարյան գրադարան, Անտոնյանի հավաքածու, թղթածրար թիվ 4, Այնթապու Հայոց Արտագաղթը, 17, 0009:

«դրէնը բեռ չընդունիր»¹⁶²⁸: «Խուզարկություններից» մեկի ժամանակ առաջնորդական փոխանորդ Տեր Հարություն քահանայի 14-ամյա որդու հուշատետրում Յասին էֆենդին գտնում է գաղթի թվականը և երեխային չպատժելու համար պահանջում 30 ոսկի: Քահանան չի կարողանում վճարել, երեխային ուղարկում են Մարաշ և կախաղան բարձրացնում¹⁶²⁹:

Հայերը կողոպտվում էին անընդհատ, ելնելով իրենց ունեցվածքի չափից և կողոպտիչների կարգավիճանից, հայերի ունեցրկելու գործընթացն ընթանում էր ինչպես անհատական, այնպես էլ պետական մակարդակով: Այնթապի հայերի գույքերի բռնագրավման գործում կարևոր դեր ունեւ օսմանյան բանկի տեղական մասնաճյուղի տնօրեն Լեոն Տահերը: Նա մասնակցում էր թուրքերի ժողովներին, խրախուսում նրանց, հուշում ճանապարհներ հայերին կողոպտելու համար: Մյուս կողմից, նա վստահություն է ստեղծում հայերի մոտ և հորդորում, որ իրենց արժեքավոր գույքերը, արժեթղթերը, ոսկեղենը, գոհարեղենը հանձնեն բանկին: Որոշ ժամանակ հետո բանկի տնօրենը թուրքերի հետ կազմում է ընկերություն և բանկում դրված գույքերն ու վաճառականական թղթերը վաճառքի են հանվում¹⁶³⁰:

Հայոց ցեղասպանությունը վերապրած այնթապցի Տիգրան Ամմիյանը ներկայացնում է օսմանյան բանկի մասնակցությամբ իր ընտանիքի կողոպտման պատմությունը: Նա գրում է, որ տեղահանության հրամանից հետո Այնթապի հայությունը փորձում էր վաճառել ունեցվածքի գոնե որոշ մասը, քանի որ սահմանափակ քանակությամբ ապրանք կարող էին վերցնել իրենց հետ: Տիգրանի ընտանիքը, իր բնորոշմամբ, համարվում էր միջին կարողության տեր, և կենցաղային իրերից բացի ուներ հակերով մանուսա, բուրդ,

¹⁶²⁸ Նույն տեղում, 13, 0007:

¹⁶²⁹ Նույն տեղում, 14, 0007:

¹⁶³⁰ Փարիզի Նուբարյան գրադարան, Անտոնյանի հավաքածու, թղթածրար թիվ 4, Այնթապու Հայոց Արտագաղթը, 14, 0007:

մեծ քանակությամբ պղնձեղեն և գորգեր¹⁶³¹: Տիգրանի եղբայրներից Մովսեսը հիշատակվում է 1909 թ. Այնթապի վաճառականների ցուցակում, որտեղ նշվում է, որ Մովսես Ամմիյանը բամբակի վաճառատուն ուներ «Իքի Գաբարլը» խանում¹⁶³²:

Ամմիյանների ընտանիքը նույնպես իր ամբողջ գույքը ի պահ հանձնեց օսմանյան բանկին: Բանկի տնօրեն Տահերը ապրանքները տեղավորելու համար յուրաքանչյուր հաճախորդի առանձին սենյակ էր տրամադրում, և Ամմիյանների ընտանիքի սենյակի համարը 24 էր: Տիգրանի վկայությամբ այդ սենյակում բանկին ի պահ էր հանձնվել. *«100 հակ մանուսայ (ամեն հակի մեջ 150 թոփ), 50 տոպրակ Մալաթիայէ եկած նուշի միջուկ, 10 հակ լուացուած բուրդ, 30 մեծ ու փոքր գորգեր եւ մօտ 500 լիդր պղնձեղեն, բացի եղբայրներուս տան կարասիներէն ու գորգերէն»*¹⁶³³: Ընդհանուր առմամբ բանկին հանձնված գույքը գնահատվել էր 4.500 օսմ. ոսկի: Տնօրինության կողմից սենյակը կողպել և վրան փակցվել է «Օսմ. Պանքային կը պատկանի» գրությունը, իսկ Տիգրանի հորը՝ Հարություն Ամմիյանին 4.500 ոսկու ստացական է տրվել: Նման սենյակներ և ստացականներ էին տրվել նաև Ներսես Սյուլահյանին և նրա զավակներին, որոնք հակերով գոտի, գորգեր և այլ ապրանքներ էին թողել¹⁶³⁴: Այնուհետև Տիգրանի ընտանիքը Այնթապից արտաքսվում է 96 ընտանիքից բաղկացած չորրորդ քարավանով, որում ընդգրկված էին միջին դասի հարուստներ և մտավորկաններ՝ Ներսես քահանա Թավուզյանը, պրոֆ. Արմենակ Չամիչեանը և այլոք¹⁶³⁵: Տեղում թալանվելուց բացի, գաղթականները կողպվեցին նաև կայարանում, գաղթականներին տեղափոխող գնացքից

¹⁶³¹ Ամմիեան Տ., Թէ ինչպէս «կողոպտեցին», «Հայ Անթէպ», Պէրուօ, 1966, թիւ 2 (22), էջ 8:

¹⁶³² Պատմութիւն Անթէպի Հայոց, Բ., էջ 312:

¹⁶³³ Ամմիեան Տ., Թէ ինչպէս «կողոպտեցին», «Հայ Անթէպ», Պէրուօ, 1966, թիւ 2 (22), էջ 8:

¹⁶³⁴ Ամմիեան Տ., Թէ ինչպէս «կողոպտեցին», էջ 8:

¹⁶³⁵ Նույն տեղում, էջ 9:

անջատվում էին գույքով բեռնված վագոնները, իսկ գաղթականներին իջեցրեցին Համայնի կայարանում: Տեղահանությունից երկու ամիս անց, Համայնում գտնվող Ներսես Սյուլախյանը և Հարություն Ամմիյանը նամակ են գրում Օսմանյան բանկի տնօրեն Տահերին՝ հայտնելով իրենց տեղը ու խնդրելով դրամի առաքում: Ստացված պատասխանը ներկայացվում է ստորև. «Ստացանք ձեր նամակը. բարեկամական յանձնարարություն մը ձեզի. ձեր ինքնությունը եւ ուր ըլլալը գաղտնի պահեցէք. կառավարությունը եթէ գիտենայ թէ ուր էք կրնայ ձեզի համար աղիտատր ըլլալ, եւ ասկէ վերջ տնօրէնութեան բան մը մի գրէք»: Ինչպէս նկատում է հոդվածագիրը. «Հաշիւը մաքրուած էր»¹⁶³⁶:

Ի պահ թողնված և յուրացվող գույքերի վերաբերյալ վկայություններից մեկի համաձայն, մյութասերիֆ Ահմետ բեյը Օսմանյան բանկում դրված մետաքսյա ասեղնագործ իրերը ձեռք է բերում չնչին գնով: Վերջինս շահագործում էր նաև «*Իմալեթհանենում*» աշխատող հայ կանանց ու աղջիկներին, նրանց աշխատանքները, որպես թուրքական ձեռագործ էր ներկայացնում, նվիրում էր աշխատանքները տարբեր բարձրաստիճան պաշտոնյաների, անգամ ցուցահանդես է կազմակերպում¹⁶³⁷:

Եկեղեցիների և բարեսիրական հաստատությունների բոլոր գույքերը, ոսկյա ու արծաթյա սպասքը կողոպտվում են, սրբավայրերը անարգվում են ու պղծվում: Նշանավոր հայկական եկեղեցին (Ս. Աստվածածին) դատավոր Բիլալ Հիլմիի հրամանով վերածվում է ախոռի¹⁶³⁸: Եկեղեցական առարկաները հանվում էին աճուրդի¹⁶³⁹:

¹⁶³⁶ Նույն տեղում, էջ 10:

¹⁶³⁷ Փարիզի Նուբարյան գրադարան, Անտոնյանի հավաքածու, թղթածրար թիվ 4, Այնթապու Հայոց Արտագաղթը, 15, 0008:

¹⁶³⁸ Փարիզի Նուբարյան գրադարան, Անտոնյանի հավաքածու, թղթածրար թիվ 4, Այնթապու Հայոց Արտագաղթը, 11, 0006:

¹⁶³⁹ «Հայ Անթեպ», Պէրյուք, 1966, թիւ 1(21), Կուրկէն, Սէւ Օրագիր, (1915 Նոյմ. 20- 1916 Մայրիլ 21), էջ 38:

Հատկանշական է, որ Այնթապի Մայր Տաճարի 2035 կտոր առարկաները «Լքյալ գույքերի» վարչական հանձնախմբի 1915 թ. օգոստոսի 23-ի որոշմամբ գնահատվել են ընդամենը 6690 դուրուշ ընդհանուր արժեքով*։ Այս ցուցակի մեկ օրինակը հանձնվել էր թուրքական պետությանը, իսկ մյուսը՝ հայերին¹⁶⁴⁰։

Գ. Պողոթյանը, ներկայացնելով իրենց ընտանիքին պատկանող գույքը, նշում է, որ իրենք համարվում էին ոչ այնքան ունևոր

* «Քահանայից Խուցի Յատուկ գույքեր՝ 2 քանեփայ (2 դրուշ), 2 սատիր (3), 2 սեղան (3), 1 ժամացոյց (15), 1 ձեռնաջահ (3), 1 սինկեր կարի մեքենայ (20), 1 փաշա մանկալը (10), կաթողիկոսի նկար, գրքեր, քարտեսներ (-)»։

«Առաջնորդարանի Յատուկ գույքեր՝ 2 եայլը քանեփայ (10), 10 սեւ թիկնաթոռ (20), 1 ժամացոյց (15), 1 օթոց-սեճճատէ (5), 1 ընդօրինակութեան տետրակի մամուլ (3), 1 վառարան խողովակներով (5), 2 փոքր արմոնիք (60), 1 մեծ արմոնիք (80), 28 շուրջառ (100), 1 գոյգ վարագոյր (9), 1 սրմա-թագ (10), 9 գոյգ սրմա-հողաթափ (65), 3 արծաթապատ Ս. Գիրք (-), 4 գրակալ (2), 2 խաչ, մէկը արծաթ, մյուսը անագապղինձ (-), 80 շապիկ դայիրներու (20), 2 քոնց (-), 2 Ս. Աստուածածնի պատկեր (-), 1 խնկաման (1), 1 խաչ սատափեայ (-), 2 խաչելիութեան նկար (-), 1 մեծ ձեռաջահ յախճապակեայ 12 մոմով (50), 1 Ս. Ծնունդի պատկեր (-), 3 կապերտ (70), 7 նոր գորգ (550), 2 հին գորգ (150), 2 Պաղտատի գորգ (40), 11 քրտական կապերտ թել-գրմա (550), 1 բուրվառ արծաթեայ (10), 3 արծաթ խաչ (-), 3 զանգակ (3), 3 ծնծղայ (3), 1 սկիհ (-), 1 դեղին պղինձէ լական, ըպրըգով (23), 36 աշտանակ, մեծ ու փոքր (15), 1 ոսկեգոծ արծաթ գոտի (47.5), 11 ուրար (15), 1 շիշ միւռն (-), 15 կրօնական գրքեր (-), 1 արծաթ գոտի (7.5), 12 անագապղինձէ կանթեղ (6), 2 մետաքսայ վարագոյր (25), 79 խսիր (100), 1 աթլաս շուրջառ (40), 1 արծաթապատ չաթալ-թագ (20), 1 ձեռք կաթողիկոսական զգեստ հնդկական կերպասէ (30), 1 դեղին ձեռնաջահ, Գալեմքեարի (5) գործ (127.5), 2 պատի մեծ ժամացոյց (100), եւն.»։

«Դպրոցներու յատուկ գույքեր՝ 80 նոր գրասեղան (100), 80 տախտակէ աթոռ (100), 15 մեծ սեղան (10), 22 նստարան (15), 1 արմոնիք (20), եւն. եւն.»։

«Զանազան Յատուկ գույքեր՝ 1 պղնձէ լուացքի կաթսայ (20), 1 մեծ սեմավար (10), 3 թիկնաթոռ (2), 9 նոր գորգ (350), 3 քրտական կապերտ (150)»։

«Հրանտ Սիւլահեանի յատուկ սնտուկ մը, մէջը՝ 2 վերմակ, 1 կարի մեքենայ, 1 դեղին պղինձէ կրակարան եւ 4 արդուկ, համագումար՝ 300 դրուշ»։ «35 սնտուկ գիրք, Պօղարեան գրատունի եւ Վարդանեան ընկերութեան յատուկ (-), եւն. եւն.»։ Տե՛ս «Հայ Անթէպ», Պէյրութ, 1966, թիւ 2 (22), Կուրկէն, Ինչ եղան Այնթապի եկեղեցիին գույքերը, էջ 41։ Տե՛ս նաև Վարդան Լ., Հայկական տասնհինգը եւ Հայերու լքեալ գույքերը, Պէյրութ, 1975, էջ 102-103։

¹⁶⁴⁰ Վարդան Լ., նշվ.աշխ., էջ 103-04 :

ընտանիք. «որպես դրամ հայրս ուներ մոտ 25 օսմ. ոսկի (ոսկի, արծաթ, մեծիտ - իր մասնիկներով և 100 ու 50 փարանոցներ): Ոսկիները մայրս ներքին հագուստներուն մէջ կարած էր, մաս մը արծաթեղէն և ոսկեղէն զարդեղէններու հետ: Հայրս վրան առած էր արծաթ դրամներ, իսկ իմ պարեգօտիս ծայրը կարած էին 100-նոցներու 3 փամփուշտ, 3 ոսկի արժողությամբ»¹⁶⁴¹: Պողարյանը ցավով է անդրադառնում եկեղեցում թողնված 15 սունդուկ գրքին և իրենց տանն՝ այլ իրերի թվում, մնացած «Բիւզանդիոն» օրաթերթի 1896-1915 թթ. ամբողջական հավաքածուին: Պողարյաններն իրենց տան բանալիները հանձնել էին թաղապետին¹⁶⁴²:

Այնթապի տեղահանության մանրամասներ նկարագրող մեկ այլ վկայություն է «Սև օրագիր» (1915 նոյմ. 20 - 1916 ապրիլ 21)» խորագրով օրագրությունը, որի հեղինակը նշում է, որ իր հայրն ամիսը 3 ոսկի կաշառք էր տալիս Գուզանլը թաղի Առնավուտ կոմիսարին: Վերջինս նրանց նախապես տեղեկացնում էր խուզարկությունների մասին, ինչը երկու որդիների ջրհորում թաքնվելու հնարավորություն էր տալիս¹⁶⁴³: Նշվում է նաև, որ լուսավորչական երկու հայ ամբաստանվել ու բանտարկվել են արքայապետի համար՝ իրենց դրացի թուրքերին կաշառք չտալու պատճառով¹⁶⁴⁴:

Բռնագրավվել էին Այնթապի բողոքականների Բ. և Գ. Աղոթարանները: Բողոքական Նորտիկ Վարդանի մեծ տունը հանձնվել էր բանակին, իսկ տիրոջը բնակության համար մի հին տուն էր տրամադրվել¹⁶⁴⁵: Նշվում է նաև, որ 1915 թ. նոյեմբերի 20-ի դրությամբ Հայոց Մայր եկեղեցին արդեն օսմանյան բանակի տրամադրության տակ էր, դատարկված էին Համալյան և Պերեճիկյան եղբայրների տները, ինչպես նաև «Պարսումեան» վարժարանը և

¹⁶⁴¹ Պողարեան Գ., Ցեղասպան Թուրքը, էջ 127:

¹⁶⁴² Նույն տեղում:

¹⁶⁴³ Կուրկէն, Սեւ Օրագիր, (1915 Նոյմ. 20- 1916 Ապրիլ 21), «Հայ Անթէպ», Պէյրուժ, 1966, թիւ 1(21), էջ 32:

¹⁶⁴⁴ Նույն տեղում:

¹⁶⁴⁵ Նույն տեղում:

այդ ամբողջը տրամադրվելու էր բանակին. «մօտ 1000 զինուոր լեցուած են Հայոց եկեղեցին, Պարսումեան վարժարան, բողոքականաց Ա. եկեղեցին եւն., մինչ պանդոկները պարապ կը կենան: Եկեղեցւոյ անօթները ու գոյքերը փոխադրուեցան հին եկեղեցի: Պարպուեցաւ Հալլաճեան Ուրբանոցը»¹⁶⁴⁶:

1916 թ. հունվարին Այնթապից տեղահանվածները պատմում են «Վարդանեան» կրթարանի մանկապարտեզը, եկեղեցին զինվորական կենտրոնի, իսկ «Կիլիկեան Ճեմարանը»՝ հիվանդանոցի վերածելու մասին: Եկեղեցում թողնված գրքերն ու այլ գույքերը վաճառված են կամ հափշտակված, հայերեն գրքերը տարբեր խանութներում օգտագործվում են որպես փաթեթավորման թուղթ¹⁶⁴⁷: Քենտերձյանի ազարակում եղած տները, ինչպես նաև թուրք փախստականների մոտ գտնվող որոշ տներ ամբողջությամբ ավերված են, կառավարությունն անգործությամբ և լուրջությամբ քաջալերում էր այս գործողությունները: Նույնիսկ զինադադարից հետո, երբ կենտրոնից պաշտոնական հրահանգներ են հասնում հայերի տները և կալվածքները վերադարձնելու մասին, շատ անգամ անկարելի և խիստ դժվար է լինում վերադարձնել ավերակ դարձած հայերի տները: Անգամ երբ ունեցվածքի տերերը վերադառնում էին և պահանջում իրենց գույքը, ապա դժվարություններ էին հարուցվում դրանք չվերադարձնելու համար¹⁶⁴⁸: Եթե անգամ կենտրոնից հրամաններ էին գալիս հայերի որոշ կալվածքներ վերադարձնելու մասին, ապա դրանց չկատարումը կառավարությունն ավելի մեծ գոհունակությամբ է ընդունում, քան կատարումը:

Հայոց ցեղասպանությունից 50 տարի անց այնթապցի վերապրողի՝ ծննդավայր այցելության պատմությունն ու տպավորություններն ավելի քան արժեքավոր են՝ հայերի բնաջնջումից ու նրանց ունեցվածքը բռնազավթելուց հետո կոնկրետ այդ բնակավայրում

¹⁶⁴⁶ Նույն տեղում, էջ 32-33:

¹⁶⁴⁷ Պողարեան Գ., Ցեղասպան Թուրքը, էջ 156:

¹⁶⁴⁸ Փարիզի Նուբարյան գրադարան, Անտոնյանի հավաքածու, թղթածրար թիվ 4, Այնթապու Հայոց Արտագաղթը, 16, 0008:

թուրքական իշխանությունների քաղաքականությունը հասկանալու տեսակետից: Այդ պատմությունն իրենից ներկայացնում է ականտես-վերապրող Գուրգեն Համալյանի՝ դեպի իր ծննդավայր Այնթապ ճամփորդությունն ոչ թե տարածության, այլ ժամանակի մեջ՝ հայկականությամբ լեցուն Այնթապից դեպի ցեղասպանության սարսափները վերհիշեցնող և, ի վերջո, հայի հետքերը ջնջված և օտարացած մի բնակավայր: Ինչպես նշում է Համալյանը, Այնթապի նախկին շինություններից գրեթե ոչ մի հետք չի մնացել, «Նազարեթեան» խանից (Գարա Նազարի խան) դեպի Ջամի երկարող բարձր պատի հատվածը քանդված է և տեղը խանութներ ու շինություններ են: Կարապետ բեյ Նազարեթյանի օճառի գործարանն ու գրասենյակները ևս ձևափոխված են: Արասայի մուտքի մոտ գտնվող ջրավազանը քանդված է, իսկ շուկան ընդհանուր առմամբ նախկին ձևն է պահպանում: «Պուղտապագարը», «Քիւրքճեան» խանը, հարակից այլ խաները ու «Պետէստէնները» նախկին ձևով են պահպանվել: «Գարապասամպազը Պետէստէնը»՝ հյուսվածքեղենով զբաղվող հայ վարպետների խանութներից մինչև պղնձագործների խանութները տանող հատվածը հատակացված է բանջարեղեն և միս վաճառողներին: «Ուզուն չարչըն» կիսավեր վիճակում է, իսկ երկու մուտքով «Իքի Գափալը խանը» ամբողջությամբ քանդել են, քանդելու ընթացքում գտնվել են նաև գանձեր: Թորոս աղա Սահակյանի խանը նույնությամբ շարունակում է մնալ: Ազգապատկան «Միլլէթ խանը» կիսավեր վիճակում է: Կողքին գտնվող «Գարանլըզ պետէստէնը» ոչնչացված է: «Գալէ Ալթը» հայ ոսկերիչների շուկան լքված է, և մոտակա խաներն ու խանութներն էլ վատ վիճակում են: Հայկական Գայաճըզ, Էյուպ Օղլու, Իքի Գափուլը Համամի շրջանը, Էպլահան, Ժամ Մահալլէսի, Հայիկ, Թէփէ Պաշը, Ագեռլ, Գուզանլը, Սողանլը Պուճաղը, Գասթէլ Պաշը թաղամասերը անփոփոխ վիճակում են, ավերակ ու գրեթե լքված... բացի Գայաճըզը թաղամասից: Բողոքականների Ա. (Գայաճըզ) եկեղեցին հիմնովին քանդված է: Կարապետ բեյ Նազարեթյանի,

Սարգիս և Թորոս աղա Սահակյանների ու մեծահարուստ այլ հայերի բնակարանները անեղծ են մնացել: Մանկապարտեզի շենքը կանանց հատուկ բանտի, իսկ «Հայկանուշեան» վարժարանը՝ գորամասի է վերածվել: «Աղենական» վարժարանը խարխուլ վիճակում է: «Վարդանեան» դպրոցի դուռն ու պատուհանները փակված են, վրան հարկ է ավելացված, մոտակա Լևոնյան եղբայրների տները քանդված են և «Վարդանեանի» ոճով միացված են իրար մինչև Գալուստ Ղազարյանի տունը, բողոքականների Բ. եկեղեցին և դրանց միջև ընկած տարածությունը վերածվել է հյուսվածքեղենի մեծ գործարանի: «Պարսումեան» դպրոցն ու մոտակա սրճարանը, ինչպես նաև «Հալաճեան» որբանոցը, Ամերիկեան հիվանդանոցը, «Աղջկաց» քոլեջը և դրա հանդիպակաց «Կիլիկեան ճեմարանի» առաջին շենքը մնացել են նույնությամբ: «Կեդրոնական Թուրքիոյ Գուլէճը» վերածվել է թոքախտի հիվանդանոցի: Կիլիկեան ճեմարանի հիմնական շենքի տեղում հաստատավել է Գազիանթեպի լիցեյը... Նիկողոս Նազարեթեանի տան փոխարեն զբոսայգի է¹⁶⁴⁹:

Այնթապի հայերի տեղահանության և կողոպուտի կազմակերպումն ու գործադրումը հստակ պատկերացում է տալիս տեղական մակարդակում օսմանյան իշխանությունների՝ կայսրության հայ բնակչության նկատմամբ իրագործվող բնաջնջման և ունեզրկման քաղաքականության մասին: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում այն փաստը, որ Այնթապում ազդեցիկ թուրքերը հատուկ կազմակերպություններ ու հանձնախումբ էին ստեղծել՝ հայերի տեղահանության ու բնաջնջման գործընթացը վերահսկելու համար: Կարելի է ենթադրել, որ այս հանձնախմբի հիմնական գործառույթը հայերի ունեցվածքի կողոպուտն «արդյունավետ» կազմակերպելն էր, ինչպես նաև հասվաստիանալը, որ գույքի օրինական տերերն աքսորավայրից, համակենտրոնացման ճամ-

¹⁶⁴⁹ Ավելի մանրամասն տե՛ս Համալեան Գ., Այցելութիւնս Այնթապ, «Հայ Անթէպ», Պէյրուօ, 1968, թիւ 1 (29), էջ 31-41:

բարներից այլևս չեն վերադառնալու: Յուրահատուկ ճշգրտությամբ առաջին քարավաններով տեղահանվում էին քաղաքի ամենահարուստ ընտանիքները, ապա՝ միջին ունեցվածքի տերերը և այդպես աստիճանական հերթականությամբ՝ մինչև վերջին մանր վաճառականներն ու արհեստավորները: Հայերի բռնագաղթի և կողպուտի մեջ շահագրգռված էին ինչպես հասարակ թուրքերը, որոնք իրակացնում էին նրանց շարժական ու անշարժ գույքի թալանը և հափշտակված գույքով բարելավում իրենց կենսապայմանները, այնպես էլ տեղական իշխանությունները, պետական այլ հաստատությունները, բանկերը, տարբեր ապահովագրական ընկերությունները, որոնք անթիվ յուրացումների հետևանքով հսկայական կապիտալ էին կուտակում: Իսկ թուրքական պետությունը Հայոց ցեղասպանությամբ ոչ միայն «ազատվեց» հայ ազգաբնակչությունից և տիրանում նրանց ազգային ու անհատական մեծածավալ հարստությանը, այլև ձեռք էր բերում կենսատարածք՝ իր հետագա գոյության ու զարգացման համար՝ բռնագավթելով հայերի բնօրրանի մեծագույն մասը՝ Արևմտյան Հայաստանը:

4. МЕТОДОЛОГИЯ КВАЛИМЕТРИЧЕСКОЙ* ОЦЕНКИ КУЛЬТУРНОГО НАСЛЕДИЯ

Теоретико-методологические основы экономической оценки историко-культурного наследия (памятников истории, архитектуры и археологии) народов мира, повреждения и утраты наследия, примеры подходов и методов экономической оценки объектов культурного наследия и христианских ценностей изложенные в работах, были открытием в теории оценки и стали основой образовательного процесса цикла сертификации для подготовки оценщиков-экспертов по экономической оценке культурного наследия многих стран.

Уровень сохранности и качества управления культурным наследием занимает особое место в определении степени развитости любого города. На сегодняшний день наследие активно вовлекается в хозяйственную деятельность города для реализации крупномасштабных проектов в социальной, экономической, рекреационной и других сферах жизнедеятельности крупных городов. Вместе с тем, повышаются требования по охране культурного наследия. Все чаще в экспертном сообществе говорится об острой нужде проведения эколого-экономической оценки культурного наследия, по которой уже сегодня начинается выстраиваться комплексная методология.

Возмещение реального ущерба, нанесенного объектам археологического наследия, занимает важное место в структуре прав граждан и определено в Конституции в понятиях

* Квалиметрия – это научная область, в рамках которой изучаются методология и проблематика комплексного количественного оценивания качества объектов любой природы (одушевленных или неодушевленных, предметов или процессов, продуктов труда или продуктов природы), имеющих материальный или духовный характер, искусственное или естественное происхождение.

«право на доступ к культурным ценностям» и обязанность «заботиться о сохранении исторического и культурного наследия, беречь памятники истории и культуры». Особенность права на возмещение реального ущерба, нанесенного объекту археологического наследия, как базовой составляющей культурного наследия государства связана с тем, что оно имеет своей задачей защиту уже нарушенного права на пользование культурным наследием. В этом смысле возможность требовать возмещения ущерба может рассматриваться как «гарантия гарантий» конституционного права на пользование гражданами культурным наследием и обязанности заботиться о его сохранении.

Оценка стоимости реального ущерба позволяет реализовать решение вопросов по охране объектов культурного наследия истории и культуры страны и субъектов в соответствии с актами международного законодательства, ратифицированными международными правовыми актами в области культурного наследия, конвенцией «Об охране всемирного, культурного и природного наследия» и Европейской конвенцией «Об охране археологического наследия».

Проблема возмещения ущерба, нанесенного объектам культурного наследия археологического наследия, юридически достаточно сложна. Главный источник трудностей заключается в особенностях происхождения и проявления нанесенного вреда. По источнику происхождения он характеризуется как антропогенный, нанесенный в форме внешнего воздействия, а по характеру проявления затрагивает культуру и науку, внутреннюю, духовную составляющую человека.

Методические рекомендации разработаны с целью создания единых методологических подходов к оценке объектов культурного

наследия армянского народа на основании общей классификацией. На основе Международных конвенций создана единая квалификация объектов национального культурного наследия, где приведены категории по материальным и нематериальным объектам, по видам, типам, по значимости историко-культурного значения. В Единую квалификацию объектов культурного наследия помимо недвижимых объектов культурного наследия включены движимые объекты также.

Объекты культурного наследия являются особыми объектами собственности, имеющие ряд свойств, отличающиеся от других объектов собственности. Методы оценки применимые к оценке объектов недвижимости, имущественных комплексов, машин, оборудования, материалов и иных видов имущества обычного делового оборота не могут в полной мере применяться к объектам национального наследия.

На сегодняшний день оценка объектов культурного наследия не имеет теоретической экономической базы и в этом виде оценочной деятельности отсутствуют единые методологические подходы к оценке данных объектов. Экономическая оценка культурного наследия - недвижимых памятников истории и культуры представляет в настоящее время нерешенную задачу оценочной теории как в отдельных субъектах международного права, так и в мире. Сложность проблемы обусловлена диалектическим дуализмом объекта: как недвижимого имущества с одной стороны и как формы исторического и культурного наследия, обеспечивающего сохранения памяти *человечества*, с другой. В результате субъекты рынка по-разному определяют набор ценообразующих факторов и инвестиционную мотивацию, что влияет на методологию, и как следствие, на стоимость таких объектов. В профессиональном сообществе и научных кругах за последние годы предпринимают целенаправленные шаги для разработки адекватного стандарта оценки объектов культурного наследия.

В Методических рекомендациях дан обзор Международных конвенций об охране и оценке всемирного культурного наследия, где определены основные цели, даны понятия и определения, принадлежность к субъектам права, рассмотрены международные подходы к оценке стоимости движимого и недвижимого исторического имущества.

Для выбора метода оценки объектов культурного наследия применены Международные стандарты финансовой отчетности общественного сектора (МСФО ОС и Международные стандарты финансовой отчетности), которые оказывают существенное влияние при выборе метода оценки для данного имущественного сектора. Впервые даны рекомендации по признанию объектов культурного наследия в зависимости от их классификации, прав собственности, текущего и будущего использования. Так же дан анализ применимости общепризнанных методов оценки недвижимости к объектам культурного наследия, даны подходы к оценке объектов архитектурного наследия. Предложены методики оценки стоимости реального ущерба, нанесенного объектам археологического наследия и методика стоимости земельных ресурсов на территории объектов исторического и культурного наследия. Представленная комплексная методика оценки недвижимых зданий-объектов культурного наследия истории и культуры, включающая методические материалы и конкретные предложения, даёт возможность оценивать техническое состояние подсистемы «здание - памятник» в системе «памятник техногенно-природная среда», а также текущую рыночную стоимость с учётом их ценности как объектов наследия.

Комплексная методика может быть востребована Республикой Арменией, которая должна проводить инвентаризацию, учёт, оценку технического состояния, балансовую оценку объектов наследия армянского народа не только на территории своего суверенитета, но и той части исторической родины армян (Западной Армении), которая находится вне ее государственности. Материальная оценка

недвижимых объектов культурного наследия армянского народа на территории Западной Армении важна с точки зрения финансового выражения ценности всего фонда (подобно производимой оценке музейных и частных коллекций). Методика может быть использована инвесторами, определяющими целесообразность вложения средств в реконструкцию зданий и отчуждения или передачи прав собственности, для целей реституции и пр. Независимо от ситуации, оценка, выполненная в соответствии с комплексным подходом, явится отправной точкой для возможного торга, установления стартовой цены сделки, которая определится только в конкретных условиях рынка.

Разработанная комплексная методика оценки объектов культурного наследия представляет собой рационально построенное информационное обеспечение архитектурных, строительно-конструктивных, исторических, социально-экономических исследований при решении задачи оценки объектов культурного наследия как объектов недвижимости и частично при решении вопросов ремонтно-восстановительных работ, что позволяет: сократить сроки, повысить эффективность и качество принимаемых оценочных решений, их корректность; улучшить условия и повысить производительность труда исследователей и оценщиков.

Состояние большинства объектов культурного наследия зависит от процессов, связанных с быстрыми темпами урбанизации и поэтому их сохранность связана с окружающей средой и необходимостью её мониторинга на основе опыта и знаний, позволяющих решать вопросы защиты объектов историко-культурного наследия в системе памятник техногенно-природная среда (памятник техногенно-природная среда), а также обеспечить качественное проведение ремонтно-восстановительных работ. Для этого необходимо обратиться к изучению и обобщению факторов, приводящих к повреждениям конструкций, проблемам исследования влияния техногенных факторов на сохранность объектов культурного наследия для

установления диагноза деформаций их конструкций, что позволяет сделать вывод по ремонтно-восстановительным работам и корректировать проектные решения.

Всесторонняя оценка ущерба объекта археологического наследия позволяет реалистически оценить ущерб исходя из количественных и качественных характеристик. Состояние поверхности, водный режим и ветровая эрозия, кислотность грунта, сохранность артефактов – это только некоторые параметры оценки ущерба и прогноза развития деструктивных процессов. Эта оценка может применяться также для определения стоимости нанесенного ущерба недвижимым объектам археологического наследия, находящимся под водой. Здравый смысл и критический подход необходим при проведении вычислений и интерпретации результатов. Стоимость ущерба оценивается с помощью коэффициентов, которые используются при оценке максимального материального и специального ущерба.

4.1.Международные конвенции об охране и оценке всемирного культурного наследия

Всего в современном международном праве в настоящий период насчитывается более 100 международно-правовых актов универсального и регионального характера, регламентирующих вопросы выявления, сохранения, охраны, изучения и популяризации культурных ценностей.

Правовые акты ЮНЕСКО (в первую очередь, конвенции и рекомендации), составляя их значительную часть, образуют собой фундамент системы международной охраны этих ценностей и представляют значительный интерес как с точки зрения развития национальной охраны памятников, так и в контексте развития международной нормативной системы.

Необходимо заметить, что объектом охраны в соответствии с правовыми актами ЮНЕСКО, как и в целом, в международном праве, являются все культурные ценности в самом широком смысле этого понятия как недвижимые, так и движимые.

Термин «недвижимые культурные ценности», несомненно, является наиболее универсальным, включая в себя и наиболее значимую, наиболее ценную их часть – недвижимое культурное наследие (достояние) народов. Поскольку культурное наследие (достояние) представляет из себя особый случай культурных ценностей, то и категориальную проблематику недвижимого культурного наследия (достояния) необходимо рассматривать в более широком контексте – в контексте проблематики недвижимых культурных ценностей.

Исходя из принципа относительности международно-правовых обязательств, в существующих международных правовых актах не дается универсальных дефиниций применяемых понятий. Практически в каждом правовом акте содержатся свои определения, используемые в рамках той или иной конвенции, рекомендации и т.д., исходя из ее конкретных целей и задач.

Наряду с этой дискретностью, присущей международно-правовым актам в целом, исходя из признания доктрины в качестве одного из вспомогательных источников международного права согласно ст. 38 Статута Международного Суда ООН, нужно видеть, что, образно выражаясь, отдельные деревья составляют целостный лес, и поэтому доктринальный анализ, кодификация и разработка универсальных понятий не только возможны, но и жизненно необходимы.

Наиболее универсальное определение культурных ценностей, на наш взгляд, содержится в ст.1 Гаагской конвенции об охране культурных ценностей в случае вооруженного конфликта 1954 г., принятой на дипломатической конференции под эгидой ЮНЕСКО. И хотя понятие «недвижимые культурные ценности» не выделяется

в Конвенции особо, к ним, согласно настоящей статье, можно отнести независимо от их происхождения и владельца:

а) ценности..., которые имеют большое значение для культурного наследия каждого народа, такие как памятники архитектуры, искусства или истории, религиозные или светские, археологические месторасположения, архитектурные ансамбли, которые в качестве таковых представляют исторический или художественный интерес, произведения искусства;

б) здания, главным и действительным назначением которых является сохранение или экспонирование движимых культурных ценностей, указанных в пункте (а), такие как музеи, крупные библиотеки, хранилища архивов, а также укрытия, предназначенные для сохранения в случае вооруженного конфликта движимых культурных ценностей, указанных в пункте (а);

с) центры, в которых имеется значительное количество культурных ценностей, указанных в пунктах (а) и (б), так называемые «центры сосредоточения культурных ценностей»¹⁶⁵⁰.

Как следует из п. (б) определения, к недвижимым культурным ценностям могут быть отнесены и здания, которые не являются памятниками.

Добавим также, что отнесение к культурным ценностям центров их сосредоточения (ст. 1(с)) следует оценить, как позитивное явление, поскольку это позволяет взять под охрану и такие крупные территориальные комплексы как достопримечательные места, исторические поселения и города, историко-культурные заповедники, что само по себе значительно расширяет толкование традиционного цивилистического понятия «недвижимость» в национальном праве.

¹⁶⁵⁰ Международные нормативные акты ЮНЕСКО, сост. И.Д. Никулин, М., Изд. фирма “Логос”, 1993, с. 259.

В Рекомендации ЮНЕСКО о сохранении культурных ценностей, подвергающихся опасности в результате проведения общественных или частных работ 1968 г. под термином "культурные ценности" понимаются недвижимые объекты, как-то местности археологического, исторического или научного значения, сооружения или другие объекты, представляющие историческую, научную, художественную или архитектурную ценность, как религиозные, так и светские, включая архитектурные традиционные ансамбли, исторические кварталы в городах или сельских населенных пунктах и этнологические сооружения предыдущих культур, все еще находящиеся в хорошем состоянии. Это относится к таким недвижимым объектам, как развалины, сохранившиеся на поверхности земли, а также археологические или исторические остатки, обнаруженные в земле (п. (а) ст.1).

Особо следует выделить, что термин «культурные ценности» распространяется также на непосредственно окружающую их обстановку¹⁶⁵¹. В Рекомендации ЮНЕСКО о сохранении и современной роли исторических ансамблей 1976 г. под «окружением» подразумевается естественная или созданная руками человека окружающая среда, которая влияет на статичное или динамическое восприятие этих ансамблей или непосредственно связана с ними в пространстве или в социальном, экономическом или культурном отношении (п.(b) ст.1).

В настоящей Рекомендации также дается определение «исторических или традиционных ансамблей». Таковыми считаются любые совокупности зданий, сооружений и открытых пространств, включая места археологических и палеонтологических раскопок, составляющие людские поселения в городской или сельской местности, целостность и ценность которых признаны с археологической, архитектурной, предысторической, исторической,

¹⁶⁵¹ Международные нормативные акты ЮНЕСКО, с. 323-324.

эстетической или социально-культурной точек зрения. Среди этих весьма разнообразных ансамблей можно, в частности, выделить до-исторические места, исторические города, старинные городские кварталы, деревни и небольшие селения, а также однородные монументальные ансамбли, имея при этом в виду, что эти последние, как правило, должны тщательно сохраняться во всей своей целостности (п.(а) ст.1)¹⁶⁵².

Рекомендация ЮНЕСКО о сохранении красоты и характера пейзажей и местностей от 11.12.1962 г. выделяет в качестве объекта охраны такие недвижимые ценности как пейзажи и виды городских или сельских местностей, созданных как природой, так и трудом человека, представляющих культурный или эстетический интерес, или же являющихся примерами характерной естественной среды (ст.1). Среди них Конвенция выделяет также обширные пейзажи, выделяемые в «особые зоны» (ст. ст. 16-19), отдельные местности (ст. ст. 20-27), естественные заповедники и национальные парки (ст.28).

Рекомендация ЮНЕСКО от 15 ноября 1989 г. о сохранении фольклора относит к этому проявлению индивидуального или коллективного интеллектуального творчества, являющегося частью общего наследия человечества, в том числе и архитектуру, и другие виды художественного творчества (ст.ст. F, A).

Наряду с понятием «cultural property» (дословно: культурная собственность) – «das Kulturgut – biens culturels», переводимый на русский язык, в зависимости от контекста, как культурные ценности или культурное достояние, в большинстве международно-правовых актов универсального и регионального характера применяется термин «cultural heritage - das Kulturerbe – patrimoine culturel – культурное наследие».

¹⁶⁵² Международные нормативные акты ЮНЕСКО, с. 358.

Конвенция ЮНЕСКО об охране всемирного культурного и природного наследия 1972 г. относит к культурному наследию три категории недвижимых объектов: памятники, ансамбли и достопримечательные места. В качестве основного критерия отнесения культурных ценностей к охраняемым категориям в Конвенции 1972 г. принят критерий «выдающаяся универсальная ценность». Однако, что понимается под этим критерием, в конвенции не уточняется. В какой-то степени толкованию критерия «выдающаяся универсальная ценность» может способствовать содержащееся в преамбуле конвенции указание на то, что речь идет о сохранении «уникальных и незаменимых ценностей, независимо от того, какому народу они принадлежат». В отличие от Конвенции 1972 г. в Рекомендации об охране в национальном плане культурного и природного наследия 1972 г. указанный выше критерий «выдающаяся универсальная ценность» не применяется, но говорится о признаке «особая ценность».

Представляемая рекомендация дает следующие определения трех категорий недвижимых объектов (ст.1):

- памятники - произведения архитектуры, монументальной скульптуры и живописи, включая пещерные жилища и надписи, а также элементы, группы элементов или структуры, имеющие особую ценность с точки зрения археологии, истории, искусства или науки;
- ансамбли - группы изолированных или объединенных строений, которые в силу их архитектуры, единства или связи с пейзажем представляют особую ценность с точки зрения истории, искусства или науки;
- достопримечательные места - топографические зоны, совместные творения человека и природы, представляющие особую ценность в связи с их красотой или интересом с точки зрения археологии, истории, этнологии или антропологии.

Если учесть, что, как указывается в Преамбуле, «каждый предмет (item) культурного и природного наследия является уни-

кальным» и «каждая страна, на территории которой находятся предметы культурного и природного наследия, обязана сохранить эту часть наследия человечества и обеспечить ее передачу будущим поколениям», а также положение ст. 5 о том, что культурное или природное наследие должно рассматриваться как единое целое, которое включает не только творения, представляющие свойственную им большую ценность, но также и самые скромные объекты, приобретающие со временем культурную или природную ценность, то фактический пообъектный состав недвижимого культурного наследия народов согласно Рекомендации 1972 г. следует считать практически ничем не ограниченным¹⁶⁵³.

На основе анализа правовых актов ЮНЕСКО совершенно обоснованно делает вывод, что понятие «культурные ценности» однозначно с понятием «культурное наследие»¹⁶⁵⁴. Вместе с этим следует подчеркнуть и практически полную юридическую не дифференцируемость в рамках указанных правовых актов терминов «культурное наследие» и «культурное достояние»¹⁶⁵⁵.

Необходимо также добавить, что все процитированные выше международно-правовые источники исходят из принципа суверенитета государства. Все они в той или иной форме относятся к компетенции самого государства право устанавливать критерии отнесения культурных ценностей, находящихся на его территории, к культурному наследию (достоянию) народов. Это положение носит решающий характер, поскольку, несмотря на почти полную взаимозаменяемость в рамках международного права терминов

¹⁶⁵³ Международные нормативные акты ЮНЕСКО, с. 331-332.

¹⁶⁵⁴ Богуславский М.М., Международная охрана культурных ценностей, М., Международные отношения, 1979, с. 23.

¹⁶⁵⁵ Молчанов С.Н., Об определении понятий «недвижимые культурные ценности» и «недвижимое культурное наследие», доклад, прочитанный на Второй межрегиональной научно-практической конференции «ИРИТОП – 2000» в г. Москве 25.04.2000 г.

культурные ценности – культурное наследие – культурное достояние правовой режим объектов всемирного культурного наследия (достояния) и правовой режим «просто» культурных ценностей – различаются кардинальным образом.

4.2.Применимость методик оценки недвижимости к объектам культурного наследия

Перед государством и обществом стоит основная задача - сохранить объекты культурного наследия, как элементы историко-культурного наследия, как носители историко-культурная ценность страны. Решение этой задачи возможно при включении такой недвижимости в экономический оборот, когда при решении вопросов оценки будут учитываться следующие два взаимосвязанных вида существования объектов культурного наследия: материальный результат труда людей различных поколений и формы исторического, культурного наследия, обеспечивающего сохранение памяти человечества. При оценке объектов культурного наследия учитываются, кроме данных инженерно-строительного характера, итоги историко-культурных исследований и знания в области ремонтно-восстановительных работ - определения перечня и величины затрат на их выполнение.

При таком подходе оценку объектов культурного наследия проводят путём использования классических методов оценки недвижимости - затратного, сравнительных продаж, доходного, но с учётом их специфики, определяемой особенностями такого типа недвижимости.

Метод сравнительных продаж опирается на рынок, предполагающий:

- массовые продажи и покупку идентичных по потребительским свойствам объектов;

- равновесие спроса и предложения при сложившихся рыночных ценах; наличие у агентов рынка полной информации, необходимой для совершения сделок.

Для оценки необходимо решить ряд задач:

- описать объект с помощью идентификационных признаков;
- проклассифицировать объект и подобрать эталоны-аналоги;
- определить принадлежность анализируемого объекта к тому или иному эталону.

Однако число эталонов-аналогов ограничено или может вообще отсутствовать на рынке. Рынок далёк от равновесного спроса и предложения, а данные о фактической цене аренды (продажи) конкретному эксперту доступны по ограниченному числу сделок. Поэтому возможность использования данного метода сложна, так как объекты культурного наследия по своей архитектурной форме, историческому, культурному содержанию несравнимы. Корректировка стоимости объектов-аналогов по сравнению с объектом оценки по методу попарного сравнения также не даёт условия сопоставимости, так как не обеспечена формальная сопоставимость по размаху шкалы и временной, на основе которой можно скорректировать изменения во времени.

При использовании доходного метода учитывается информация о рыночной величине годовой оплаты за аренду аналогичных зданий (А). При оценке стоимость объекта культурного наследия оценивается по формуле:

$$C = A/k,$$

где: k - годовой коэффициент капитализации.

При наличии информации, содержащей данные, как о ценах предложения, так и о ценах спроса на аренду ЗП, возможно определить расчётные цены сделок по аренде и вычислить стоимость объекта. Алгоритм применения доходного метода при оценке объектов культурного наследия тот же, что и при оценке других

Эффективный возраст - это экспертно установленный возраст здания, исходя из его внешнего вида, состояния, дизайна и экономических факторов, влияющих на его стоимость. Согласно определению, эффективный возраст - это не расчетная, а экспертно устанавливаемая величина. Встречаются, тем не менее, попытки рассчитать эффективный возраст здания расчетным путем в виде произведения хронологического возраста на коэффициент, который определяется износом объекта недвижимости. Этот коэффициент больше единицы, если износ объекта превышает нормальный; меньше единицы, если износ меньше нормального. Под нормальным износом понимается некий средний износ, типичный для зданий сходного типа и целевого назначения, расположенных в данной местности, которые обслуживаются, ремонтируются или модернизируются с примерно равным качеством и периодичностью. Как видно, определение нормального износа также носит достаточно субъективный и экспертный характер. Учитывая изложенное, оценщик применяет экспертный метод расчета эффективного возраста здания. Типичный срок экономической жизни - это отрезок времени, в течение которого здание можно использовать, извлекая прибыль. Для целей расчета этот отрезок времени можно считать примерно равным среднему предельному сроку службы строений. Для кирпичных жилых домов, в частности, типичный срок экономической жизни (средний предельный срок службы) равен 150 годам. Таким образом, износ недвижимости от внешних воздействий (далее - Ивв), то есть материальный ущерб в процентах, может быть вычислен как разность между накопленным износом недвижимости и накопленным износом дома (в основном, физическим износом) по формуле:

$$C_{вв} = C_p - C_r \text{ из,}$$

Расчет рыночной стоимости недвижимости без износа от внешних воздействий методом сравнения продаж.

Стоимость объекта методом сравнения продаж определяется на основе анализа недавних продаж сопоставимых объектов недвижимости, которые схожи с оцениваемым объектом по размеру, производимому доходу и использованию. Данный подход к оценке стоимости предполагает, что рынок установит цену для оцениваемого объекта тем же самым образом, что и для сопоставимых, конкурентных объектов. Ни один из выбранных объектов сравнения (аналогов) не может практически полностью соответствовать оцениваемому объекту. Поэтому сравнению подлежат какие-то общие единицы, которые могут быть физическими или экономическими. На практике разные сегменты рынка недвижимости используют разные единицы сравнения. Элементами сравнения называют характеристики объектов недвижимости и сделок, которые вызывают изменения цен на недвижимость. К рассмотрению принимаются объекты, конкурентоспособные с точки зрения типично информированного покупателя. Это означает, что сделка продажи была честной, обе стороны имели соответствующую информацию и поступали экономически целесообразно, а условия финансирования были нормальными рыночными. Особую осторожность применяют при анализе сделок между связанными каким-либо образом сторонами, при поспешно совершенных сделках и т.д. При определении элементов, от которых зависит стоимость, необходим подробный анализ рыночных условий. Чтобы привести объекты сравнения (аналоги) к оцениваемому на дату оценки, требуется выполнить корректировки продажной цены объекта сравнения (аналога) по каждой позиции элементов сравнения. При этом

корректировка может применяться либо к общей цене, либо к цене за единицу сравнения. Общая величина коррекции зависит от степени различия между объектами. Поправки бывают процентными и денежными. В принципе, все поправки могут быть денежными при наличии хорошо подобранных аналогов. При этом все корректировки на отличие вносят в стоимость сопоставимых объектов (а не оцениваемого), т.е. если сопоставимый объект, по мнению оценщиков, уступает оцениваемому, то в его стоимость вносят повышающие корректировки, и, наоборот, если сопоставимый объект превосходит оцениваемый, то вносимые в стоимость корректировки должны быть понижающими.

Скорректированные значения цены продаж 1 м² аналогов по всем параметрам сравнения усредняются, и средняя арифметическая величина из этих значений представляет собой усредненную скорректированную цену продажи 1 м² оцениваемого объекта. Рыночная стоимость оцениваемого объекта C_p определялась как произведение ее площади на вычисленную выше цену продажи 1 м². Расчет рыночной стоимости износа (ущерба) недвижимости от внешних воздействий. Выше было установлено, что износ, обусловленный внешними воздействиями (то есть материальный ущерб в процентах, Ивв), может быть вычислен как разность между накопленным износом недвижимости и накопленным износом дома (в основном, физическим износом). После того, как определены износ Ивв и рыночная стоимость оцениваемой недвижимости без учета износа от внешних воздействий, может быть вычислена ее рыночная стоимость с учетом износа, обусловленного внешними воздействиями, по формуле:

$$C_{p \text{ из}} = C_p \times (1 - \text{Ивв} / 100),$$

Тогда денежное выражение износа недвижимости (материального ущерба), обусловленного внешними воздействиями, равно:

$$С_{вв} = С_{р} - С_{р \text{ из}},$$

$С_{р}$ - рыночная стоимость недвижимости без учета износа от внешних воздействий, руб.;

$С_{р \text{ из}}$ - рыночная стоимость недвижимости с учетом износа, руб.;

$И_{вв}$ - износ недвижимости от неблагоприятных внешних воздействий, %;

$С_{вв}$ - рыночная стоимость износа (материального ущерба) недвижимости от неблагоприятных внешних воздействий, руб.

Таким образом, рыночная стоимость материального ущерба, причиненного недвижимости, определяется по представленным формулам с применением сравнительного подхода и с помощью метода сравнения продаж.

Расчет износа (ущерба), причиненного недвижимости, затратным подходом (методом объектной сметы затрат на восстановление квартиры).

Одним из методов оценки стоимости недвижимости затратным подходом является метод количественного анализа, в котором составляется объектная смета всех трудозатрат (по объему и стоимости), необходимых для воссоздания отдельных элементов и объекта в целом. В данном случае речь идет об объектной (полной) смете воссоздания недвижимости в том виде, в котором она находилась до причинения ей повреждений. Для составления указанной сметы обычно привлекаются высококвалифицированные специалисты-сметчики, поскольку метод достаточно трудоемок и требует соответствующей квалификации. Перед составлением объектной сметы специалист проводит

фактические обмеры объемов работ в недвижимости в натуре и по поэтажному плану, изучает и учитывает акты обследования состояния квартиры официальными комиссиями, разрабатывает «Дефектную ведомость для составления сметы ремонтно-восстановительных работ по воссозданию в первоначальном виде недвижимости, поврежденной неблагоприятными внешними воздействиями». Далее специалист-сметчик составляет несколько локальных смет с пересчетом в текущие цены на дату проведения оценки. В результате проведенных расчетов с использованием затратного подхода (метода количественного анализа) определяется объектная (общая) сметная стоимость затрат на восстановление недвижимости.

Согласование результатов.

Как известно, согласование результатов - это процесс, в ходе которого для получения окончательной величины стоимости объекта оценки выносятся определенные суждения. Это не механическое усреднение результатов, это процесс логических рассуждений и принятия решения, в ходе которого появляется (определяется, собственно, рыночная стоимость объекта. Целью согласования результатов используемых подходов является определение преимуществ и недостатков каждого подхода в оценке недвижимости и принятие решения об итоговой величине рыночной стоимости объекта. Выше упоминалось, что в идеале все методы должны дать одно и то же значение стоимости оцениваемого объекта, однако, так практически никогда не бывает по ряду причин. Довольно часто оценки по разным методам раскладываются так: нижняя граница стоимости - это значение, полученное затратным методом, где-то посередине - величина по методу сравнения продаж и верхняя граница - доходный метод. Однако, это не общее правило, и в зависимости

от конкретных условий оценки и конкретных допущенных ошибок можно получить другие результаты. Большую роль при их согласовании играет интуиция и опыт оценщиков, их способность принимать экспертные решения. Учитывая изложенное, оценщик, согласовывая результаты двух подходов, применяет экспертную оценку этих результатов с присвоением весов для сравнительного и затратного подходов и выведением средневзвешенной величины рыночной стоимости. Существуют различные технологии взвешивания результатов. Например, в практике оценки бизнеса эксперты часто пользуются методикой, разработанной в 1999 году известной аудиторско-консалтинговой фирмой Deloitte & Touche, суть которой состоит в выявлении определяющих факторов для каждого подхода и экспертного присвоения им баллов по схеме: да – (+1), нет – (-1), затруднение в оценке – (0). В оценке недвижимости иногда применяется установление весов различных подходов с помощью метода анализа иерархий (МАИ), который представляет собой систематическую процедуру для иерархического представления элементов, определяющих суть любой проблемы, и состоит в расчленении (декомпозиции) задачи на более простые составные части и дальнейшей обработке последовательных суждений оценщика по парным сравнениям.

В МАИ оценочные подходы сравниваются по следующим критериям:

1. Возможность отразить действительные намерения потенциальных инвесторов и продавца.
2. Тип, качество и обширность информации, на основе которой проводится анализ.

3. Способность учитывать специфические особенности объекта, влияющие на его стоимость, такие как использование, потенциальная доходность.

4. Учёт экономических, политических и физических сил, действующих в рассматриваемом регионе, районе.

Именно этот метод был использован, например, в проекте «Рекомендаций по применению единой методологии оценки объектов недвижимости при определении рыночной стоимости для расчета арендной платы» Экспертного совета при департаменте имущества от 11.07.2002, согласно которым наиболее вероятные значения весов следующие: для затратного подхода - 0,2; для сравнительного - 0,4 и для доходного - 0,4.

Описанная методология была применена для определения рыночной стоимости материального ущерба, причиненного различным объектам недвижимости неблагоприятными внешними воздействиями в мирное время, от военных действий и терроризма.

4.9. Определение справедливой стоимости утерянного имущества.

Одной из важнейших проблем, возникающих в мировой практике при учете утерянной собственности, является определение ее справедливой стоимости. Напомним, что оценку утерянной собственности по справедливой стоимости в обязательном порядке (для отражения в отчетности или для раскрытия информации) требуют как международные стандарты финансовой отчетности, так и большинство национальных стандартов учета в странах, которые либо используют международные стандарты финансовой отчетности (МСФО) в качестве основы

для реформирования, либо приняли МСФО в качестве национальных учетных стандартов. Порядок определения справедливой стоимости при формировании финансовой отчетности в формате МСФО регламентирует МСФО (IFRS) 13 «Оценка справедливой стоимости» (вступил в силу с 01.01.2013). Правила МСФО (IFRS) 13 применяются в тех случаях, когда какой-либо другой стандарт требует или разрешает использовать оценку по справедливой стоимости. Методология оценки справедливой стоимости, урегулированная МСФО (IFRS) 13, является единой для большинства статей. В МСФО (IFRS) 13 «Оценка справедливой стоимости» подчеркивается, что справедливая стоимость – это рыночная оценка, а не оценка, формируемая с учетом специфики организации. Несмотря на то, что по некоторым объектам существует рыночная информация, а по некоторым отсутствует, в любом случае цель оценки – определить цену, по которой проводилась бы операция, осуществляемая на организованном рынке, по продаже актива или передаче обязательства между участниками рынка на дату оценки в текущих рыночных условиях.

Стандарт устанавливает иерархию справедливой стоимости, которая делит исходную информацию, используемую для оценки справедливой стоимости, на три уровня.

Первый уровень информации – это котируемые цены, которые не нуждаются в корректировке на активных рынках для идентичных активов или обязательств, к которым организация имеет возможность получить доступ на дату оценки. Второй уровень включает информацию, не входящую в первый уровень, но которая прямо или косвенно является наблюдаемой для актива или обязательства. К третьему уровню информации относятся ненаблюдаемые исходные данные.

МСФО (IFRS) 13 «Оценка справедливой стоимости» отдает наибольший приоритет котироваемым ценам (некорректируемым) на активных рынках для идентичных активов или обязательств (первый уровень) и наименьший приоритет ненаблюдаемым исходным данным (третий уровень).

Руководства по оценке справедливой стоимости МСФО (IFRS) 13, применимые к утерянной недвижимости, и МСФО (IAS) 40 в значительной степени совпадают. При оценке справедливой стоимости нефинансовых активов (в том числе утерянной имущества) учитывается способность участника рынка генерировать экономические выгоды посредством наилучшего и наиболее эффективного использования актива (ННЭИ) или посредством его продажи другому участнику рынка, который использовал бы данный актив наилучшим и наиболее эффективным образом. Наилучшее и наиболее эффективное использование актива определяется с точки зрения участников рынка, даже если организация предусматривает иное использование. Принцип наиболее эффективного использования (НЭИ) применяется в оценочной деятельности при определении рыночной стоимости имущества (обычно недвижимости и связанных с ней элементов). Общепринятые принципы оценки исходят из того, что стоимость имущества устанавливается посредством оценивания его полезности с учетом юридических, физических, функциональных, экономических и других факторов, соответственно, оценка стоимости коренным образом зависит от способа его использования. В Принципах Международных стандартов оценки (Принципы МСО - IVS Framework) 2011 определено, что рыночная стоимость активов отражает их наиболее эффективное использование

(п. 33)¹⁶⁶⁷. Определения ННЭИ и НЭИ, содержатся в МСФО (IFRS) 13, в Своде стандартов оценки 2010 ССО РОО 2-01-2010, в Принципах Международных стандартов оценки. В соответствии с Международными стандартами оценки, наиболее эффективное использование представляет собой такое использование актива, которое максимизирует его продуктивность и которое физически возможно, юридически допустимо и финансово реализуемо.

Введение концепции ННЭИ в МСФО устранило последнее отличие для полной совместимости понятий рыночной стоимости в общепринятых принципах оценки и справедливой стоимости в МСФО и общепринятых принципах бухгалтерского учета США (US GAAP).

В соответствии с МСФО (IFRS) 13 рекомендуется применять методы оценки, совместимые с одним или несколькими из подходов, широко применяющихся в оценочной практике: рыночным, затратным и доходным¹⁶⁶⁸. ОПБУ США и МСФО (IFRS) 13 взяли из оценочных стандартов общепринятую аналитическую методологию. Но в отличие от методологии, применяемой в оценочной деятельности, правила МСФО (IFRS) 13 не требуют обязательного использования всех трех подходов (либо мотивированного отказа от применения какого-либо подхода), сравнения и взвешивания величин, полученных с применением этих подходов, для расчета справедливой стоимости. МСФО (IAS) 40 «Инвестиционной имущество» рекомендует (но не требует)

¹⁶⁶⁷ Международные стандарты оценки 2011/Пер. с англ. под ред. Г.И. Микерина, И.Л. Артеменкова. – М.: Саморегулируемая общероссийская общественная организация «Российское общество оценщиков», 2013, с.188.

¹⁶⁶⁸ МСФО 13 «Оценка справедливой стоимости», введен в действие на территории РФ Приказом Минфина РФ от 25 ноября 2011 г. N 160н.

определять справедливую стоимость путем привлечения профессионального оценщика¹⁶⁶⁹.

Несмотря на то, что требования к оценке справедливой стоимости элементов финансовой отчетности, в том числе разрешенные подходы (рыночный, затратный, доходный) установлены в МСФО (IFRS) 13 «Оценка справедливой стоимости», функции профессиональных оценщиков при определении справедливой стоимости путем использования любого из подходов, усиливаются. Роль оценщика при составлении финансовой отчетности практически сводится к обеспечению предприятия информацией, необходимой для представления в отчетности объектов в соответствии с правилами бухгалтерского учета.

Для проведения профессиональной оценки объектов учета по справедливой стоимости в целях отражения их в финансовой отчетности оценщикам необходимо руководствоваться определенными правилами и использовать специальную для данной области деятельности терминологию, что в совокупности представляет собой своеобразный профессиональный «инструмент» оценщика. Таким «инструментом» на мировом уровне являются несколько основных сводов стандартов: американские стандарты оценки – USPAP, стандарты Американского общества оценщиков – ASA, международные стандарты оценки – IVS, разрабатываемые Международным советом по стандартам оценки IVSC, а также стандарты оценки Королевского общества сертифицированных сюрвейеров – RICS.

Международные стандарты оценки (далее – МСО) разрабатываются и утверждаются Международным Советом по стандартам оценки (The International Valuation Standards Council –

¹⁶⁶⁹ См. МСФО 13 «Оценка справедливой стоимости».

IVSC), который был образован в 1981 году. Международный совет по стандартам оценки (далее – МССО) является независимой некоммерческой частной организацией, цель деятельности которой – служить общественным интересам¹⁶⁷⁰. Совет издает стандарты для оценщиков начиная с 1985 года. В июне 2012 года МССО принял решение о разработке новой редакции стандартов с целью обеспечения их актуальности и внесения изменений, необходимых для облегчения их понимания. Пересмотренные стандарты в редакции от 2013 года вступили в силу с января 2014 года¹⁶⁷¹.

Международный стандарт оценки 300 «Оценка для финансовой отчетности» регламентирует оценку объектов по справедливой стоимости для включения ее результатов в финансовую отчетность. В бухгалтерском учете МСО 300 может применяться, например, в следующих случаях:

- оценка стоимости актива или обязательства для его включения в отчет о финансовом положении;
- определение цены приобретаемого бизнеса;
- тестирование на обесценение;
- классификация договоров аренды и получение входных оценочных данных для расчета амортизационных отчислений в счете прибылей и убытков.

Стандарт и руководство к его применению разработаны для того, чтобы помочь профессиональным оценщикам и пользователям понять отдельные требования к оценке для подготовки отчетности в формате МСФО. Хотя целью руководства является отображение общепринятой практики оценки, существующей на дату публикации, оно не содержит обязательных к исполнению

¹⁶⁷⁰ Международные стандарты оценки 2011, с. 188.

¹⁶⁷¹ МСФО 13 «Оценка справедливой стоимости».

требований. Требования к учету и отражению в отчетности устанавливаются соответствующими МСФО, а в случае возникновения разногласий между руководством и МСФО, предпочтение отдается МСФО.

МСО 300 «Оценка для финансовой отчетности» дает определение справедливой стоимости, ссылаясь на МСФО 13 (IFRS) «Оценка справедливой стоимости»¹⁶⁷². Стоит также отметить, что это определение отличается от того, которое содержится в «Принципах МСО» и которое обычно используется для целей, кроме финансовой отчетности: справедливая стоимость – это расчетная соответствующая цена при передаче активов или обязательств между конкретными осведомлёнными и заинтересованными сторонами, отражающая интересы каждой из сторон.

В стандарте подчеркивается, что это определение и связанный с ним комментарий в МСФО (IFRS) 13 «Оценка справедливой стоимости» однозначно указывают на то, что справедливая стоимость, по МСФО, представляет собой другое понятие, чем справедливая стоимость, которая была сформулирована и изложена в «Принципах МСО». Комментарий к МСФО(IFRS) 13 и, в частности, уточнения понятий участников рынка, упорядоченной сделки, сделки, происходящей на главном или наиболее выгодном рынке, а также наиболее эффективного использования актива, позволяют понять, что справедливая стоимость по МСФО, как правило, соответствует концепции рыночной стоимости в том виде, как она была определена и обсуждена в «Принципах МСО». Таким образом, для большинства практических нужд рыночная стоимость, согласно МСО, удовлетворяет требования к оценке справедливой стоимости, согласно МСФО (IFRS) 13, с

¹⁶⁷² Международные стандарты оценки 2011, с. 188.

учетом отдельных специальных предположений, которые требуют стандарта бухгалтерского учета, такие, как положение о единице учета или игнорирование ограничений на продажу.

Принципиальные отличия между рыночной и справедливой стоимостью исходят из самих процедур, которые связаны с их определением оценщиками. К примеру, если объект оценки находится на активном и хорошо организованном рынке, то не составит труда подобрать объекты аналоги. Однако если объект уникален и рынок слабо развит или вовсе отсутствует, то определение той самой «рыночной» стоимости может стать затруднительным. Основным отличием при расчете справедливой стоимости от рыночной является исключение затрат на реализацию объекта оценки, так как согласно допущению МСФО о непрерывности деятельности предприятие продолжит свою деятельность в обозримом будущем и не имеет намерения ликвидировать или существенно сокращать масштабы своей деятельности.

На территории Армении оценочную деятельность регламентируют Закон РА «Об оценочной деятельности» и стандарты оценки. В стандартах оценки приведен перечень видов стоимости, которые может определять оценщик: рыночная, инвестиционная, ликвидационная и кадастровая. Армянский термин «рыночная стоимость» близок к определению справедливой стоимости, данной в международных стандартах оценки, однако полную аналогию провести нельзя, поскольку нет однозначной трактовки этих понятий. Безусловно, сложность перехода к «справедливой стоимости», приведенной в МСО, обусловлена отсутствием конкретного определения или метода оценки этой стоимости.

В основе применяемой в МСФО концепции справедливой стоимости лежит тот факт, что система информации может быть

полезной для принятия управленческих решений только тогда, когда она базируется на реальной экономической ситуации, которая не может быть ограничена применением метода оценки по фактическим затратам либо других методов оценки, исходящих из каких-либо жестко предписанных норм. Справедливую стоимость объектов учета можно определить только при условии гибкого подхода к оценке конкретных объектов учета и подбора наиболее подходящего в каждом отдельном случае метода, отражающего реальную экономическую ситуацию.

На практике независимые оценщики при определении справедливой стоимости для отражения в финансовой отчетности используют стандарты МСФО (IFRS) 13 и МСО 300. Следует отметить, что стандарт МСО 300 в большей своей части ссылается на стандарт МСФО по справедливой стоимости, соответственно первостепенным документом, который необходимо использовать для оценки и есть стандарт финансовой отчетности МСФО (IFRS) 13 «Оценка справедливой стоимости».

6 марта 2014 года Фонд МСФО и Совет по МСО начали совместную работу над стандартами МСФО и Международными стандартами оценки, был подписан протокол о совместной работе двух организаций. Основной задачей подписанного соглашения является обеспечение эффективного сотрудничества по регламентации применения справедливой стоимости¹⁶⁷³. При этом организации сохраняют за собой всю полноту ответственности за свои стандарты, т.е. МСФО и МСО, соответственно. По мнению председателя комитета попечителей Фонда МСФО М. Прада: «Справедливая стоимость для целей финансовой отчетности – проблемная область с далеко идущими последствиями. Мы уже

¹⁶⁷³ См. Официальный сайт Международного Совета по стандартам оценки, <http://www.ivsc.org/>

проделали большую работу в этой области, но для того, чтобы обеспечить последовательное измерение по справедливой стоимости, необходимо взаимодействие и информационный обмен с независимыми организациями – такими как Международный совет по стандартам оценки»¹⁶⁷⁴.

Обобщая вышесказанное, можно констатировать, что имея армянских специалистов в области оценки недвижимости (в т.ч. переоценка основных средств, ремонта и ущерба, имущества физических лиц); земельных участков; машин, оборудования; транспортных средств (авто, воздушных и морских судов, ремонта и ущерба); нематериальных активов и интеллектуальной собственности (в т.ч. ноу-хау, технологии, гудвилла, товарных знаков, лицензий); ценных бумаг; предприятия (бизнеса) (в т.ч. финансовых активов, дебиторской задолженности и ликвидационной стоимости, объектов лизинговых отношений, права требования); потребительских товаров; природно-сырьевых ресурсов (в т.ч. ювелирного сырья); инвестиционных проектов; для целей залога; таможенной стоимости; банковской деятельности и кредитных организаций, экономической оценки **объектов культурного наследия**, армянский народ и Республика Армения в состоянии защитить свои права и интересы, в разных инстанциях предъявляя обоснованные требования преступному государству – Турции, которая совершением преступления геноцида лишила армянский народ большей части его родины – Западную Армению, захватила его движимое и недвижимое имущество и пытается присвоить также его культурное наследие. **Наше культурное наследие – это наша нефть и газ.**

¹⁶⁷⁴ См. Официальный сайт Международного Совета по стандартам оценки, <http://www.ivsc.org/>

**5. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ
ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՎՐԱ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ**

**5.1. Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման
հիմնահարցի վրա աշխարհաքաղաքական գործընթացների
ազդեցությունը**

Պետական մակարդակով Հայոց ցեղասպանության ժխտման իր քաղաքականությամբ հենց ինքը Թուրքիան հայ ժողովրդի նկատմամբ իր կողմից իրագործված այդ հանցագործության հարցը դուրս է բերել պատմական հարթությունից՝ վերածելով այն քաղաքական հարցի: Մի շարք կառավարական և ոչ կառավարական միջազգային կազմակերպությունների, շուրջ երեք տասնյակ պետությունների կողմից Հայոց ցեղասպանությանը տրվել է քաղաքական գնահատական և դատապարտվել է հայ ժողովրդի նկատմամբ իրագործված այդ ծանր միջազգային հանցագործությունը: Թուրքիան, սակայն, չի ցանկանում առերեսվել պատմության հետ և ոչ միայն չի համակերպվում Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման վերաբերյալ միջազգային կազմակերպությունների ու պետությունների խորհրդարանների ընդունած որոշումների հետ, այլև միջոցներ է ձեռնարկում նոր երկրներում ու միջազգային կառույցներում նման փաստաթղթերի ընդունումը թույլ չտալու համար:

Բավական երկար ժամանակ տարածված էր կարծրատիպային այն տեսակետը, թե Թուրքիան՝ որպես ՆԱՏՕ-ի անդամ, ԱՄՆ-ի ռազմավարական դաշնակից, աշխարհի 16-րդ տնտեսությունն ունեցող երկիր և Եվրամիության անդամության թեկնածու ու տարածաշրջանային կարևոր դերակատարություն ունեցող երկիր, փայլուն փոխշահավետ հարաբերություններ ունի համաաշխարհային քաղաքականության ուժային կենտրոնների՝ ԱՄՆ-ի, Եվրամիության և Ռուսաստանի հետ: Այս մոտեցումների հիման վար

եզրակացվում է, թե նշված ուժային կենտրոնները Թուրքիայի վրա ճնշումներ չեն գործադրի և վերջինիս չեն հարկադրի ճանաչել ու դատապարտել Հայոց ցեղասպանությունը, առավել ևս քայլեր չեն ձեռնարկի այդ հանցագործության հետևանքների հաղթահարման ուղղությամբ: Իրականությունը, սակայն, այն է, որ աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային զարգացումների հետևանքով ինչպես ԱՄՆ-ի, Եվրամիության ու Ռուսաստանի հետ Թուրքիայի երկկողմ հարաբերությունների մակարդակում, այնպես էլ միջազգային հարաբերությունների կարևոր հարցերի վերաբերյալ նրանց դիրքորոշումներում նկատելի են սկզբունքային տարբերություններ ու շահերի լուրջ բխումներ, որոնք արդեն վերածվել են խոր հակասությունների:

Ներկայիս Թուրքիայի կողմից արտաքին նոր քաղաքականության հիմքում դրվել է նեոսամանականության գաղափարախոսությունը: Թուրքիայի նախկին արտգործնախարար և վարչապետ Ահմեդ Դավութօղլուն իր «Ռազմավարական խորություն» աշխատության մեջ Թուրքիայի գլխավոր դժբախտությունը համարում է իսլամական քաղաքակրթությունից կտրվելն ու օտար քաղաքակրթության մեջ մտնելը: Իսլամակենտրոն աշխարհընկալումից բացի, նրա աշխատանքում նկատելի է Թուրքիայի իսլամական ուժերին բնորոշող նեոսամանական աշխարհընկալումը և տեսականը: Դավութօղլուի աշխատության մեջ առաջ է քաշվում Թուրքիայի կողմից տարածաշրջանային խնդիրների լուծման գործում Օսմանյան կայսրության անցյալի փորձառության օգտագործման գաղափարը, ինչը նշանակում է, որ առնվազն նախկին կայսրության և դրան հարակից տարածքներում՝ Բալկաններ, Հյուսիսային Աֆրիկա, Մերձավոր Արևելք, Անդրկովկաս, Կենտրոնական Ասիա և այլն, Թուրքիան պետք է վերածվի «տարածաշրջանային կարգ հաստատողի» ու «կենտրոնական երկրի»¹⁶⁷⁵: Անշուշտ, Թուրքիայի

¹⁶⁷⁵ St' u Davutoğlu A., Turkey's Foreign Policy Vision: An assessment of 2007, Insight Turkey, Vol. 10, No. 1, p. 79.

տարածաշրջանային հեգեմոն դառնալու ձգտումները, ինչպես նաև համաշխարհային քաղաքականության ազդեցիկ դերակատար դառնալու անթաքույց հավակնությունները մտահոգիչ ու անընդունելի են վերընշված բոլոր ուժային կենտրոնների համար:

Թուրքիայի հարաբերությունները գնալով ավելի են հակադրվում համաշխարհային քաղաքականության առաջատար ուժային կենտրոն համարվող ԱՄՆ-ի հետ: Իսրայելի հետ մեկտեղ Թուրքիան տասնամյակներ շարունակ մերձավորարևելյան տարածաշրջանում ավանդաբար համարվում էր ԱՄՆ-ի հավատարիմ դաշնակիցը, սակայն ԽՍՀՄ-ի փլուզումից և խորհրդային սպառնալիքի վերացումից հետո մի կողմից Թուրքիան կորցրեց իր երբեմնի նշանակությունը ԱՄՆ-ի համար, մյուս կողմից՝ թուրքական իշխանությունները դադարեցին զգալ Վաշինգտոնի պաշտպանության կարիքը և սկսեցին ավելի անկախ և ինքնուրույն քաղաքականություն վարել, ուստի ԱՄՆ-ի համար Թուրքիայի՝ որպես առանցքային դաշնակցի, դերը տարածաշրջանում զգալիորեն նվազեց¹⁶⁷⁶: Նոր իրողություններից ելնելով, ԱՄՆ-ը զգալիորեն կրճատեց նաև Թուրքիային տրամադրվող ռազմական օգնության ծավալները¹⁶⁷⁷: ԱՄՆ-ի համար Թուրքիայի դերի նվազման վկայություն կարելի է համարել նաև այն փաստը, որ Թուրքիայում գտնվող ամերիկյան ռազմակայանների մեծ մասը փակվեց կամ հանձնվեց թուրքական կողմին, պահպանելով միայն Ինջիրլիկ ռազմակայանը, որի շահագործման ժամկետը երկարաձգելու համար ամերիկյան կողմը պարբերաբար հարկադրված է լինում դիմել Թուրքիային, իսկ վերջինս այդ գործոնը Վաշինգտոնի նկատմամբ որպես ճնշման լծակ է բանեցնում¹⁶⁷⁸:

¹⁶⁷⁶ Торбаков И., Изменения в Турции и кавказская политика в 2004 г., Кавказ-2004, Ер., 2006, с. 184.

¹⁶⁷⁷ St u Hale W. M., Turkish Foreign Policy 1774-2000, Routledge, 2002, p. 218-219.

¹⁶⁷⁸ Պողոսյան Բ., Թուրք-ամերիկյան հարաբերությունները և ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը 1991-2007 թթ., Եր., 2011, էջ 65:

1990-ական թվականներին իր մերձավորարևելյան քաղաքականության մեջ ԱՄՆ-ը Քրդական հարցը սկսեց օգտագործել որպես Թուրքիայի վրա ճնշում գործադրելու միջոցներից մեկը: 1996 թ. ԱՄՆ-ի Կոնգրեսը սահմանափակումներ մտցրեց Թուրքիային զենքի վաճառքի հարցում, ինչը հիմնավորվում էր խաղաղ քուրդ ազգաբնակչությանն ամերիկյան զենքով սպանելու հանգամանքով: Ամերիկյան վարչակարգն անգամ փորձում էր Թուրքիայում քրդերի ոչ պաշտոնական կենտրոն համարվող Դիարբեքիրում հյուպատոսություն բացել, ինչին թուրքական իշխանությունները բացասաբար արձագանքեցին: Քրդական աշխատավորական կուսակցությունն (այսուհետ՝ ՔԱԿ) անգամ ընդգրկելով ահաբեկչական կազմակերպությունների ցուցակում և թուրքական իշխանությունների աջակցելով այդ կազմավորման դեմ պայքարում՝ ԱՄՆ-ը մշտապես ընդգծում էր այդ կազմակերպության և քուրդ ազգաբնակչության խնդիրների տարանջատման անհրաժեշտությունը¹⁶⁷⁹:

2002 թ. Թուրքիայում չափավոր իսլամական «Արդարություն և զարգացում» կուսակցության (այսուհետ՝ ԱԶԿ) իշխանության գալուց հետո ԱՄՆ-ի վարչակարգն արդեն սկսեց կասկածել Թուրքիայի դաշնակցային հավատարմությանը: 2003-2007 թթ. թուրք-ամերիկյան հարաբերություններն աստիճանաբար վատթարանում էին, և Թուրքիայում ակտիվորեն քննարկվում էր երկրի արտաքին քաղաքական կողմնորոշումների փոփոխման հնարավորության հարցը, ընդ որում, ԱՄՆ-ից կախվածության թուլացումը և վերջինիս մրցակիցների հետ հարաբերությունների խորացումը համարվում էր հավանական սցենարներից մեկը:

Թուրքիան երբևէ չի թաքցրել Սևծովյան տարածաշրջանում, Անդրկովկասում, Կենտրոնական Ասիայում և Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի դիրքերի թուլացման հարցում իր շահագրգռվածությունը: Իր ռազմավարական ծրագրերում կողմնորոշվելով

¹⁶⁷⁹ Торбаков И., Изменения в Турции и кавказская политика в 2004 г., с. 185.

դեպի Ասիայի այնպիսի ուժային կենտրոններ, ինչպիսիք են Չինաստանն ու Հնդկաստանը, Թուրքիան ձգտում է վերածվել մահմեդական երկրների տնտեսական միության առաջատարի, ինչը նույնպես ունի ակնհայտ հակաամերիկյան ուղղվածություն և նշված տարածաշրջաններում հակադրվում է ԱՄՆ-ի տարածաշրջանային շահերին:

Ամերիկա-թուրքական դաշնակցային հարաբերությունների վրա ոչ մի խնդիր այնպիսի բացասական ազդեցություն չունեցավ, ինչպես ամերիկյան ներխուժումը Իրաք¹⁶⁸⁰: Իրաքի ռազմական գործողության նախապատրաստման և իրականացման ժամանակ ԱՄՆ-ը բացարձակապես հաշվի չէր նստում Թուրքիայի շահերի հետ, երբ փորձում էր վերջինիս համաձայնությունը ստանալ նրա տարածքից Իրաք ներխուժելու հարցում: Թուրքական կողմն իր համաձայնությունը պայմանավորում էր նրանով, որ իր ցամաքային ուժերին նույնպես թույլ տրվի մտնել Հյուսիսային Իրաք, որտեղ տեղակայված էին ՔԱԿ-ի ճամբարները, ինչն անընդունելի էր ԱՄՆ-ի համար, քանզի Վաշինգտոնը չէր ցանկանում զրկվել Իրաքում իր նկատմամբ լոյալ տրամադրված միակ ուժի՝ քրդերի աջակցությունից: Ի պատասխան 2003 թ. մարտի 1-ին Թուրքիայի խորհրդարանը մերժեց ամերիկյան զորքերին թուրքական տարածքից Իրաք ներխուժելու թույլտվության տրամադրման առաջարկը¹⁶⁸¹: Թուրքիան փաստորեն արգելեց իր տարածքում շուրջ 60 հազարանոց ամերիկյան զորախմբի տեղակայումը, չնայած որ դրա դիմաց Վաշինգտոնը թուրքական իշխանություններին 15 մլրդ դոլարի ֆինանսական օգնություն էր խոստացել: Թուրքիայի այս որոշումը ոչ միայն ԱՄՆ-ին և նրա դաշնակիցներին հարկադրեց փոխել իրաքյան պատերազմի նախնական ծրագրերը,

¹⁶⁸⁰ St' u Lesser I. O., Turkey, the United States and the Delusion of Geopolitics, "Survival", Vol. 48, No. 3, Autumn 2006, p. 83.

¹⁶⁸¹ St' u Hill F., Taspinar O., Turkey and Russia: Axes of the Excluded? "Survival", Vol. 48, No. 1, Spring, 2006, p. 82.

այլև բացասական հետևանք ունեցավ հետագայում Իրաքում ստեղծված անկայուն վիճակի վրա¹⁶⁸²:

Թուրքիայի դժգոհությունները հաշվի չառնելով, պատերազմից քայքայված Իրաքում իր համար կայուն հենարան ստեղծելու նպատակով ԱՄՆ-ը հետևողական քայլեր ձեռնարկեց Իրաքը դաշնային պետության վերածելու և այդ երկրում քրդերի դիրքերն ամրապնդելու ուղղությամբ: 2005 թ. նոր սահմանադրությամբ Իրաքի հյուսիսարևելյան մասում ստեղծվեց Իրաքյան Քրդստանի ինքնավարությունը, որը կենտրոնական իշխանությունների կողմից ստանձնած պարտավորությունների խախտման դեպքում կարող էր հանրաքվեով դուրս գալ դաշնության կազմից¹⁶⁸³: Անկախ Քուրդիստանի ստեղծումը Ջ. Բուշ Կրտսերի վարչակարգի ծրագրի հիմնական բաղկացուցիչներից մեկն էր: «Մեծ Մերձավոր Արևելքը» ծրագրվում էր որպես տարածաշրջանի գոյություն ունեցող քարտեզի վերաձևում ԱՄՆ-ի կողմից կառավարվող համակարգ ստանալու նպատակով: Իրաքյան Քուրդիստանը ԱՄՆ-ից մեծաքանակ սպառազինություն ստացավ, և Թուրքիան այդ կապակցությամբ իր դժգոհությունն էր արտահայտում՝ մտավախություն ունենալով, որ այդ զենքը հետագայում կհայտնվի ՔԱԿ-ի զինյալների ձեռքում: Այդ մտավախությունները հաստատվեցին 2007 թ., երբ Թուրքիան ՔԱԿ-ի մարտիկներից ամերիկյան արտադրության զենքեր առգրավեց և պաշտոնապես բացատրություն պահանջեց ԱՄՆ-ից¹⁶⁸⁴:

Այս զարգացումները լրջորեն մտահոգում էին Թուրքիային, որը ոչ առանց հիմքի մտավախություն ուներ, որ Իրաքյան Քուրդիստանի օրինակը վարակիչ կարող է դառնալ ոչ միայն Սի-

¹⁶⁸² Տե՛ս Պոդոյան Բ., Թուրք-ամերիկյան հարաբերությունները ..., էջ 49:

¹⁶⁸³ Տե՛ս Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հիմնահարցը համաշխարհային քաղաքականության ազդեցիկ դերակատարների՝ Թուրքիայի հետ հարաբերությունների համատեքստում, Եր., 2015, էջ 89:

¹⁶⁸⁴ Տե՛ս McGregor A., PKK Arms Scandal Fuels Turkish Suspicions Terrorism Focus, Vol. IV, Issue 27, August 14, 2007, p. 4.

րիայի, այլև Թուրքիայի քրդերի համար: Դրանից ելնելով, Թուրքիան սկսեց քայլեր ձեռնարկել Հյուսիսային Իրաքում իր դիրքերն ամրապնդելու ուղղությամբ: Չնայած Վաշինգտոնի նախագգուշացումներին, 2007 թ. դեկտեմբերին ՔԱԿ-ի զինյալների ռազմականացմանը հարված հասցնելու անվան տակ Թուրքիան Իրաքի հյուսիսում լայնածավալ ռազմական գործողություն իրականացրեց հարևան երկրի տարածքում, որի իրական նպատակն էր խարխլել Իրաքյան Քուրդիստանի ինքնավարությունը:

Թուրք-ամերիկյան հարաբերությունների վատթարացման պատճառներից մեկն էլ դարձավ Թուրքիայի հարաբերությունների սրումը ԱՄՆ-ի տարածաշրջանային դաշնակից Իսրայելի հետ: Չնայած Իսրայելի հետ ունեցած երկարամյա ռազմաքաղաքական գործակցությանը¹⁶⁸⁵՝ Թուրքիան գիտակցաբար հարաբերությունների սրման գնաց Մերձավոր Արևելքում իր և ԱՄՆ-ի ավանդական դաշնակցի՝ Իսրայելի հետ: ԱԶԿ-ի իշխանության գալուց կարճ ժամանակ անց Իսրայելի նկատմամբ Թուրքիայի վարած քաղաքականության մեջ կտրուկ շրջադարձ կատարվեց: Արաբական երկրների հետ Իսրայելի դիմակայության մեջ Թուրքիայի չափավոր իսլամիստական կառավարությունը սկսեց պաշտպանել արաբական երկրների շահերն ու իրավունքները և անհամաձայնություն հայտնել պաղեստինյան հիմնահարցում Իսրայելի գործողությունների հետ, ինչպես նաև հարաբերությունները խորացնել ԱՄՆ-ի կողմից ահաբեկչական կազմակերպություն համարվող ՀԱՄԱՍ-ի հետ¹⁶⁸⁶:

2010 թ. մայիսի 31-ին Թուրքիայի կողմից պաղեստինցիներին մարդասիրական օգնություն ցուցաբերելու անվան տակ «Մավի Մարմարա» խաղաղության նավատորմն ուղարկվեց Գազայի

¹⁶⁸⁵ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Минасян С. М., Стратегическое сотрудничество Израиля и Турции в контексте проблем региональной безопасности. Информационно-аналитический журнал “21-й век”, № 2 (4), Ер., 2004, с. 94-115.

¹⁶⁸⁶ Տե՛ս Մարության Ա., Հայոց ցեղասպանության հիմնահարցը համաշխարհային քաղաքականության..., էջ 95:

հատված: Իսրայելական հատուկ ջոկատայինների ձեռնարկած պատասխան գործողության արդյունքում զոհվեց 19, վիրավորվեց 30 և ձերբակալվեց 480 մարդ, որոնք հիմնականում Թուրքիայի քաղաքացիներ էին: Թուրքական կողմն Իսրայելից պահանջեց ներողություն խնդրել Թուրքիայի քաղաքացիների մահվան համար, սակայն Իսրայելը, կասկածի տակ դնելով նավատորմի խաղաղ լինելը, հրաժարվեց կատարվածում իր մեղքն ընդունել: Երկու երկրների միջև խզվեցին դիվանագիտական հարաբերությունները, և Թուրքիան հայտարարեց Իսրայելի հետ ռազմական ոլորտում համագործակցության կասեցման մասին: Թուրքիայի այս քաղաքական շրջադարձը հարված հասցրեց ԱՄՆ-ի տարածաշրջանային շահերին, որը մտահոգված էր թուրք-իսրայելական հարաբերությունների այդ աստիճան սրմամբ և հարկադրված էր լուրջ ջանքեր գործադրել իր դաշնակիցներին հաշտեցնելու ուղղությամբ¹⁶⁸⁷: Վաշինգտոնի տևական դիվանագիտական ջանքերի շնորհիվ թեև հաջողվեց որոշակիորեն մեղմել թուրք-իսրայելական հարաբերությունների լարվածությունը, սակայն դա ձևական և ժամանակավոր բնույթ էր կրում:

Թուրք-իսրայելական հարաբերությունների սրումը հիմք հանդիսացավ, որ Իսրայելի կառավարությունը և ԱՄՆ-ի կառավարող վերնախավում ազդեցիկ դիրքեր ունեցող ծագումով հրեա գործիչները հիմնավոր ձևով սկսեն կասկածի տակ դնել Թուրքիայի՝ ԱՄՆ-ի հավատարիմ դաշնակից լինելու ավանդական տեսակետը¹⁶⁸⁸:

2009-2010 թթ. Հյուսիսային Աֆրիկայի և Մերձավոր Արևելքի որոշ պետությունների վարչակարգերի տապալման ու դրանց «ժողովրդավարացման» գործում ԱՄՆ-ը որոշեց օգտագործել

¹⁶⁸⁷ Аватков В.А., Доманов А. О., Военно-политические отношения в треугольнике США-Турция-Франция: 2009-2012 гг., “Сравнительная политика”, N1, М., 2013. с. 66.

¹⁶⁸⁸ Տե՛ս Մարության Ա., Հայոց ցեղասպանության հիմնահարցը համաշխարհային քաղաքականության..., էջ 103:

Թուրքիայի տարածքն ու ռեսուրսները՝ վերջինիս ներգրավելով այդ գործընթացների մեջ: Թուրքիան դա ընկալեց որպես ԱՄՆ-ի հետ մերձավորարևելյան տարածաշրջանում իրավահավասար գործընկերության առաջարկ, ինչից ելնելով «արաբական գարնան» գործընթացում Անկարան ինքն իրեն սկսեց վերագրել այնպիսի արտոնություններ ու այն աստիճան հավակնություններ դրսևորել, որ այդ ամենը լուրջ գլխացավանք դարձավ հենց Վաշինգտոնի համար:

ԱՄՆ-ի ու Թուրքիայի միջև լուրջ տարաձայնություններ առաջացան նաև սիրիական ճգնաժամի կարգավորման հարցում: Թեև երկու կողմերն էլ համակարծիք են Սիրիայի նախագահ Բ. Ասադին իշխանությունից հեռացնելու հարցում, սակայն տարբեր էին այդ նպատակին հասնելու նրանց մարտավարությունները: ԱՄՆ-ի համար անընդունելի էր Թուրքիայի համառությունը սիրիական հակամարտության մեջ արագ ռազմական միջամտություն իրականացնելու հարցում: Թուրք-ամերիկյան հարաբերություններում նոր ճգնաժամը սկսվեց այն ժամանակ, երբ Կոնգրեսը մերժեց 2013 թ. աշնանը Սիրիայում ցամաքային ռազմական գործողություն իրականացումը, ինչը թուրքական կողմը դավաճանություն որակեց: Սիրիական ճգնաժամի կարգավորման հարցում թուրք-ամերիկյան տարաձայնությունները կապված էին նաև սիրիական ընդդիմությանը զենք մատակարարելու հարցին: Թուրքիան սիրիացի ընդդիմադիրներին, այդ թվում՝ «Ջաբհաթ ալ-Նուսրա» ահաբեկչական խմբավորմանը զենք է մատակարարում, իսկ ԱՄՆ-ը հիմնավոր կասկածներ ուներ, որ այն հայտնվում էր ծայրահեղականների ձեռքում, որոնք կռվում են ոչ թե Ասադի, այլ բոլորի, այդ թվում՝ Արևմուտքի դեմ¹⁶⁸⁹: Թուրք-ամերիկյան հարաբերությունների վրա բացասաբար անդրադարձան թուրքական և միջազգային մամուլի այն հրապարակումները, որոնց համաձայն

¹⁶⁸⁹ St' u Аватков В.А., Доманов А. О., Военно-политические отношения в треугольнике США-Турция-Франция: 2009-2012 гг., с. 67.

Թուրքիան զինամթերք էր տրամադրել և թիկունքային օժանդակություն էր ցուցաբերել անգամ «Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորմանը¹⁶⁹⁰:

ԱՄՆ-ի կողմից Իրանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների պայմաններում Թուրքիան սկսեց համագործակցել վերջինիս հետ, քանի որ բնական գազի իր պահանջարկի 18-20 %-ը ապահովվում է այդ երկրից: Ի հեճուկս Իրանի նկատմամբ ԱՄՆ-ի դիրքորոշման, Թուրքիան և Բրազիլիան «դեմ» քվեարկեցին Իրանի նկատմամբ հերթական պատժամիջոցների վերաբերյալ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշմանը և առաջարկեցին իրենց տարածքում իրանական ցածր հարստացված ուրանի վերամշակման գործարան կառուցել: Իրանի միջուկային ծրագրի հարցում ԱՄՆ-ի հետ առճակատման գնալու գնով Թուրքիան ցանկանում էր սեփական միջուկային էներգետիկան զարգացնել¹⁶⁹¹:

Թուրք-ամերիկյան հարաբերություններում առկա այս հիմնական խնդիրներից ելնելով, ամերիկյան վերնախավում գնալով մեծանում է այն մտայնությունը, որ Թուրքիան ԱՄՆ-ի համար նախկինի պես վստահելի և կանխատեսելի գործընկեր այլևս չի հանդիսանում: Արմատական տրամադրված ամերիկյան քաղաքական գործիչները հույսեր են փայփայում, որ Էրդողանի իսլամիստական վարչակարգի հեռացման և քեմալականների ու զինվորականների դիրքերի վերականգնման միջոցով իրենց կհաջողվի Թուրքիային ԱՄՆ-ի վերահսկողության տակ վերադարձնել: Ամերիկյան քաղաքական վերնախավի ոչ արմատական հատվածը գտնում է, որ Վաշինգտոնի համար դեռևս վաղ է ի դեմս Թուրքիայի կորցնել ուժեղ տարածաշրջանային գործընկերոջ,

¹⁶⁹⁰ Տե՛ս Գեղամյան Վ., Թուրքիայի դերը «Իսլամական պետություն» կազմակերպության կայացման գործում, ԵՊՀ քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոնի «Վերլուծական տեղեկագիր», N 7, Եր., 2015, էջ 178:

¹⁶⁹¹ Տե՛ս Аватков В.А., Доманов А. О., Военно-политические отношения в треугольнике США-Турция-Франция: 2009-2012 гг., с. 66.

քանզի Իրաքից ԱՄՆ-ը գորքերը դուրս բերելուց հետո Վաշինգտոնը այնտեղ իրավիճակը վերահսկելու կարիք ուներ, իսկ Թուրքիայի հարավ-արևելքում գտնվող Ինջիրլիք ռազմակայանը դրա համար շատ հարմար պլացդարմ է: Նրանց կարծիքով Թուրքիան ԱՄՆ-ին անհրաժեշտ է նաև Իրանի տարածաշրջանային նկրտումները զսպելու համար¹⁶⁹²: Այսպիսով, ամերիկյան վերնախավում չափավոր իսլամիստական վարչակարգ ունեցող Թուրքիայի նկատմամբ կարծիքները կիսվում են և այդ երկրի նկատմամբ ԱՄՆ-ի քաղաքականության իրականացումը պայմանավորված կլինի այն հանգամանքով, թե նշված հոսանքներից որի մոտեցումը կոնկրետ ժամանակահատվածում կհաղթանակի:

Բոլոր դեպքերում ԱՄՆ-ում թուրքական լոբբինգը հայտնվել է դժվարին իրավիճակում, քանզի թուրքամետ գործիչների համար գնալով դժվարանում է ամերիկյան քաղաքական վերնախավում Թուրքիայի շահերի պաշտպանության օգտին փաստարկներ բերելը նաև հրեաների հակադեցության պատճառով: ԱՄՆ-ի վարչակարգի վերլուծաբանների տարբեր խմբեր աստիճանաբար հանգում են այն տեսակետին, որ Թուրքիան այլևս չի դասվում համաշխարհային քաղաքականության ազդեցիկ պետությունների շարքին, ուստի պրակտիկ քաղաքականության մեջ Եվրոպայի և Ասիայի խոշոր տերությունների կողքին այդ երկրին հարկավոր չէ լուրջ դերակատարում հատկացնել՝ գիտակցելով հանդերձ, որ ինքնուրույն քաղաքականություն վարելու համար վերջինիս հայեցողության տակ դեռևս կան որոշակի ռեսուրսներ: Թուրքիայի կողմից իր հնարավորությունների գերազնահատման և որոշակի սահմաններն անցնելու դեպքում ԱՄՆ-ը վերջինիս նկատմամբ կսկսի որոշակի զսպման լծակներ կիրառել իր հսկողության տակ գտնվող միջազգային կառույցների՝ ՆԱՏՕ-ի և Արժույթի միջազգային հիմնադրամի միջոցով: Այս առումով չի կարելի բացառել

¹⁶⁹² Տե՛ս Մարության Ա., Հայոց ցեղասպանության հիմնահարցը համաշխարհային քաղաքականության..., էջ 120:

նան ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության հարցի նոր շահարկումները, ինչը Վաշինգտոնի համար դարձել է Թուրքիայի նկատմամբ կիրառվող ավանդական ճնշման միջոցներից մեկը:

ԵՄ-ի և Թուրքիայի միջև նույնպես նկատվում են շահերի բախումներ, որոնք խորանալու միտում ունեն և լարվածություն են առաջացնում երկկողմ հարաբերություններում: Թուրքիայի ԵՄ-ին անդամակցելու տևական գործընթացը նրանց հարաբերություններում բազմաթիվ խնդիրներ ի հայտ բերեց: Ինչպես հայտնի է, ԵՄ-ին անդամակցելու բոլոր թեկնածու պետություններին, այդ թվում՝ Թուրքիային, որոշակի պայմաններ են ներկայացվում, որոնք սահմանվել են դեռևս 1993 թ. հունիսի 21-22-ին Կոպենհագենի գագաթաժողովում: Այսպես կոչված «կոպենհագենյան չափանիշները» ենթադրում են, որ անդամության թեկնածու պետությունը ԵՄ-ի անդամ դառնալու համար պետք է բավարարի ժողովրդավարության, գերակայության, մարդու իրավունքների պաշտպանության, արդյունավետ գործող շուկայական տնտեսության և մի շարք այլ պահանջների: Առաջին խմբի պահանջների բավարարումից հետո թեկնածու պետությանը ներկայացվում է պահանջների նոր փաթեթ և այդպես շարունակ¹⁶⁹³:

ԵՄ-ն թուրքական իշխանություններից պահանջում էր օրենսդրությունը ներդաշնակեցնել ԵՄ-ի օրենսդրությանը, հստակեցնել թուրքական բանակի լիազորությունները՝ բացառելով պաշտպանությանը չվերաբերող ոլորտներում զինված ուժերի ազդեցությունը, համապատասխան փոփոխություններ կատարել դատական համակարգում, կոռուպցիայի դեմ պայքարում և այլն: Թուրքական իշխանությունները 2002-2005 թթ. մեծ ջանքեր գործադրեցին խորհրդարանում օրենսդրական բարեփոխումների միջոցով ԵՄ-ի պահանջները բավարարելու ուղղությամբ: ԵՄ-ի չափանիշներին համապատասխանելու նպատակով թուրքական

¹⁶⁹³ St' u Старченков Г. И., Турция: долгий путь в Евросоюз, «Современная Европа», М., 2002, № 4, с. 78.

կողմի իրականացրած բարեփոխումները թեև երկրում հանգեցրին որոշակի դրական տեղաշարժերի, սակայն դրանք հիմնականում մակերեսային բնույթի էին, ինչն արձանագրվեց նաև ԵՄ-ի համապատասխան մարմինների կողմից: Օբյեկտիվ գնահատելով Թուրքիայի կողմից ԵՄ-ին անդամակցելու ուղղությամբ կատարված քայլերը, պետք է արձանագրել, որ ո՛չ ներպետական օրենսդրության, ո՛չ հարևան երկրների հետ հարաբերությունների բարելավման և ոչ էլ իրական ժողովրդավարության՝ խոսքի ազատության, ազգային փոքրամասնությունների պաշտպանության տեսակետից Թուրքիան դեռևս չի համապատասխանում ԵՄ-ի անդամակցության չափանիշներին¹⁶⁹⁴:

Ազգային փոքրամասնությունների, առաջին հերթին՝ քրդերի, իրավունքների պաշտպանության հարցը հանդիսանում է ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության լուրջ խոչընդոտներից մեկը: Քրդական հարցում ԵՄ-ն ձգտում է հասնել քրդերի հնարավորինս լայն ինքնավարության, ինչին Թուրքիան խիստ բացասաբար է արձագանքում: 2001 թ. հոկտեմբերին Թուրքիայի սահմանադրության մեջ կատարվեցին որոշ փոփոխություններ, որոնց համաձայն ցանկացած լեզվի կիրառության իրավունքը կարող է սահմանափակվել, եթե դա պայմանավորված է երկրի ազգային անվտանգության և հասարակական կարգի պաշտպանությամբ, իսկ թուրքերենը շարունակում է մնալ դասավանդման միակ լեզուն: 2002 թ. ԵՄ-ի ճնշման տակ Թուրքիան իր տարածքում թույլատրեց քրդերեն լեզվով հեռուստառադիոհաղորդումների հեռարձակումը, սակայն Սահմանադրության մեջ ամրագրվեց ուսումնական հաստատություններում թուրքերենով դասավանդելու պարտադիր լինելը¹⁶⁹⁵:

¹⁶⁹⁴ St' u Старченков Г. И., Турция: долгий путь в Евросоюз, с. 78.

¹⁶⁹⁵ St' u Մարտիյան Ա., Հայոց ցեղասպանության հիմնահարցը համաշխարհային քաղաքականության..., էջ 169:

ԵՄ-ի հետ հարաբերությունների լրջագույն խնդիրներից է նաև Թուրքիայի կողմից Կիպրոսի Հանրապետության ճանաչման հարցը: Միջերկրածովյան ավազանի արևելյան հատվածում իր ռազմավարական շահերի պաշտպանության տեսակետից Թուրքիան կարևոր է համարում միջազգային հանրության կողմից չճանաչված Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության գոյության պահպանումը և այնտեղ իր զորքերի տեղակայումը: Կիպրոսի հյուսիսային հատվածը տնտեսական զարգացման մակարդակով էապես հետ է մնում հարավային հատվածից, իսկ Թուրքիան բավարար միջոցներ չունի Հյուսիսային Կիպրոսի ֆինանսական կարիքները լիովին բավարարելու համար: Հյուսիսային Կիպրոսի գոյության պահպանումը ոչ միայն ծանր բեռ է Թուրքիայի տնտեսության համար, այլև լրացուցիչ խոչընդոտ՝ այդ երկրի ԵՄ-ին անդամակցելու գործում¹⁶⁹⁶: 2002 թ. ԵՄ-ն բավարարեց միայն Կիպրոսի Հանրապետության անդամակցության հայտը, որը դարձավ կառույցի լիիրավ անդամ, իսկ կղզու հյուսիսային հատվածի կարգավիճակը շարունակում է անորոշ մնալ: Այս որոշումից հետո, սակայն, ԵՄ-ն նույնպես հայտնվեց բարդ իրավիճակում, քանզի նրա անդամ պետություններից մեկի տարածքի մի հատվածն օկուպացված է կառույցի անդամ չհանդիսացող պետության կողմից: Թերևս դա է նաև պատճառը, որ կիպրական հարցն անկյունաքարային նշանակություն ունի ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության բանակցություններում, որի լուծմանը թուրքական կողմը դեմ է արտահայտվում՝ դրանով անդամակցության բանակցություններ մտցնելով փակուղի¹⁶⁹⁷:

ԵՄ-ի ազդեցիկ պետությունների առաջնորդները մտավախություններ ունեն, որ ԵՄ-ին Թուրքիայի անդամակցությունը Եվրոպայի մահմեդականացման գործընթացի և ԵՄ-ի թուլացման

¹⁶⁹⁶ Տե՛ս Մարության Ա., Հայոց ցեղասպանության հիմնահարցը համաշխարհային քաղաքականության..., էջ 162:

¹⁶⁹⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 163:

նոր խթան կհանդիսանա՝ ամրապնդելով Թուրքիայի դիրքերը, որը միջազգային հարաբերություններում ուժեղ և ինքնուրույն դերակատար դառնալու հավակնություններ է դրսևորում¹⁶⁹⁸։ ԵՄ-ի առաջատար երկրները՝ Ֆրանսիան և Գերմանիան, Թուրքիայի անդամակցությունը ԵՄ-ի լուրջ մարտահրավեր են համարում այդ կառույցի համար, քանզի այդ երկրի մեծաթիվ բնակչություն ունենալը նրան իրավունք կտա Եվրախորհրդարանում ունենալ Գերմանիային հավասար պատգամավորական տեղեր՝ հնարավորություն ընձեռնելով ազդել ԵՄ-ի քաղաքականության վրա։ ԵՄ-ի երկրներն առանց Թուրքիայի անդամակցության էլ արդեն մտահոգված են իրենց տարածք միլիոնավոր թուրք ներգաղթյալների ներթափանցումով, ինչի հետևանքով ԵՄ-ի պետությունները մահմեդական, այդ թվում՝ Թուրքիայից ներգաղթածների սոցիալ-տնտեսական, քաղաքական և քաղաքակրթական լրջագույն խնդիրների առաջ են կանգնում։ Ակնհայտ է, որ Թուրքիայի անդամակցության պարագայում եվրոպական երկրներ են ուղղվելու թուրք միլիոնավոր ներգաղթյալների նոր հոսքեր, և այդ երկրներն ուղղակի չեն կարողանա դիմակայել դրա հետևանքով առաջացած նոր ժողովրդագրական ճգնաժամին, ինչը կործանարար կդառնա դարերով ձևավորված եվրոպական ինքնության համար։ ԵՄ-ի ազդեցիկ պետությունների առաջնորդները բազմիցս նշել են, որ Թուրքիայում իսլամի դերի բարձրացումը ուղղակիորեն հակադրվում է եվրոպական ընդհանուր արժեհամակարգին, ուստի Թուրքիայի անդամակցությունը կարող է կործանարար դառնալ հենց ԵՄ-ի համար։ Նույն մտահոգությունն արտահայտվում է նաև թուրքական համեմատաբար անորակ ու էժանագին ապրանքներով եվրոպական շուկաները նվաճելու հետ կապված, ինչը եվրոպական արտադրողների սնանկացմանը կհանգեցնի։

Մերձավոր Արևելքում իրավիճակի սրման հետևանքով Եվրոպա ուղղվող ներգաղթյալների հոսքը զսպելու հարցում ԵՄ-ի

¹⁶⁹⁸ Торбаков И., Изменения в Турции и кавказская политика в 2004 г., с. 186.

ու Թուրքիայի մեջն պայմանավորվածությունն ձեռք բերվեց այն մասին, որ այդ հարցում Թուրքիայի օժանդակման դիմաց ԵՄ-ն վերջինիս 3 մլրդ եվրո գումար պետք է հատկացներ՝ գաղթականների կենտրոնների բարեկարգման համար և Թուրքիայի քաղաքացիների համար կթեթևացնի շենգենյան երկրների վիզային ռեժիմը¹⁶⁹⁹։ Խորացող հակասությունների ու դրանց պատճառների չվերացման պայմաններում այս նախաձեռնության շրջանակներում ԵՄ-ի ու հատկապես Թուրքիայի կողմից ստանձնած պարտավորությունների կատարումը հավատ չէր ներշնչում։ Ներգաղթյալների հարցի շուրջ կողմերի միջև առաջացած տարաձայնությունները էլ ավելի սրեցին առանց այդ էլ լարված հարաբերությունները։

Ստեղծված պայմաններում թուրքական իշխանությունները, թերևս վերջնականապես համոզվեցին ԵՄ-ին Թուրքիայի անդամակցելու անհեռանկար լինելու մեջ և ԵՄ-ի դեմ բացահայտ առձակատման գնացին։ Իր հերթին, ԵՄ-ն, իր տրամադրության տակ եղած ճնշման բոլոր միջոցները, այդ թվում՝ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը ժամանակ առ ժամանակ օգտագործում է Թուրքիայի հավակնությունները զսպելու գործում։

Համաշխարհային քաղաքականության մյուս ուժային կենտրոնի՝ Ռուսաստանի հետ Թուրքիայի հարաբերություններում նույնպես նկատվում է շահերի բախվում, ինչը երբեմն հանգեցնում է երկու երկրների միջև լուրջ դիմակայության։

Նախ պետք է նշել, որ պատմական անցյալից եկող փոխադարձ անվստահությունն իր բացասական ազդեցությունն է ունենում կողմերի հարաբերություններ վրա։ Բացի այդ, հաստատվեցին այն մտավախությունները, որ ԽՍՀՄ փլուզումից հետո Թուրքիան կփորձի ոչ միայն հաստատվել հետխորհրդային տարածքում, այլև կձգտի մեծացնել իր ազդեցությունը ինչպես

¹⁶⁹⁹ Տե՛ս Մարության Ա., Հայոց ցեղասպանության հիմնահարցը համաշխարհային քաղաքականության..., էջ 177։

նախկին խորհրդային հանրապետությունների, այլև բուն Ռուսաստանի տարածքում: Թուրքիան իսկապես սկսեց ակտիվություն դրսևորել Կենտրոնական Ասիայի երկրներում՝ ձգտելով սերտացնել հարաբերությունները նրանց հետ: Թուրքիայի աշխարհագրական դիրքը նպաստավոր է այն առումով, որ որպես մահմեդական երկիր նա փորձի Արևմուտքի և Արևելքի միջև կամրջի դեր կատարել, այսինքն՝ ստանձնել այն դերակատարությունը, ինչին միշտ ձգտել է Ռուսաստանը: Սկզբնական շրջանում Թուրքիային հաջողվեց հասնել որոշ հաջողությունների, նա առաջիններից մեկը ճանաչեց Ադրբեջանի և Կենտրոնական Ասիայի երկրների անկախությունը՝ հույս ունենալով այդ տարածաշրջաններում զբաղեցնել Ռուսաստանի տեղը: Բազմաթիվ պանթուրանական կազմակերպություններ իրենց մասնաճյուղերը բացեցին Անդրկովկասում և Կենտրոնական Ասիայի երկրներում: Թուրքիան Կենտրոնական Ասիայի երկրներում կատարեց ֆինանսական ներդրումներ, հիմնեց իր բանկերի մասնաճյուղեր, թուրքական տարբեր կազմակերպություններ ու ընկերություններ ակտիվ գործունեություն սկսեցին ծավալել այդ երկրներում, սակայն շուտով Ռուսաստանը սկսեց վերականգնել դիրքերն իր համար կենսական նշանակություն ունեցող Անդրկովկասում և Կենտրոնական Ասիայում:

Լեոնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորման գործընթացում Թուրքիան մշտապես քաղաքական ու ռազմական աջակցություն է ցուցաբերել Ադրբեջանին և ներկայումս էլ բացահայտ շարունակում է այդ քաղաքականությունը: 1992 թ. մայիսի 20-ին ԱՊՀ զինված ուժերի գերագույն հրամանատար Ե. Շապոշնիկովը Թուրքիային ստիպված եղավ զգուշացրել, որ նրա կողմից նման քայլերի շարունակության դեպքում բոլորը կարող են հայտնվել Երրորդ համաշխարհային պատերազմի եզրին¹⁷⁰⁰:

¹⁷⁰⁰ St' u Маршал Шапошников: «Мы рискуем оказаться на грани мировой войны», «Известия», 21 мая 1992 г.

Թուրք-ադրբեջանական գործակցությունը հակակշռելու նպատակով Ռուսաստանի ու Հայաստանի միջև ստորագրվեց հայթորքական սահմանին տեղակայված 102-րդ ռուսական ռազմակայանը 25 տարով տեղակայելու մասին պայմանագիր, որի ժամկետը երկարաձգվեց 49 տարով և փոփոխություններ կատարվեցին ռազմակայանի կարգավիճակի և գործունեության մեջ¹⁷⁰¹:

Արխագական ազգային շարժման սկզբից մինչև 1995 թ. Թուրքիան ոչ պաշտոնապես աջակցում էր արխագներին, ինչը պայմանավորված էր թե՛ Անդրկովկասի նկատմամբ նրա հեռահար ծրագրերով և թե՛ Թուրքիայում բնակվող մեծաքանակ արխագական համայնքով: Հետագայում, սակայն Վրաստանով իր տարածք էներգակիրների փոխադրումն, ինչպես նաև այդ երկրի տարածքով հյուսիսկովկասյան անջատողականներին ցուցաբերվող գաղտնի օժանդակության հանգամանքները Թուրքիային հարկադրեցին Արխագիայի հետ հարաբերություններում որոշակի զսպվածություն ցուցաբերել: Հետագայում Թուրքիան ձգտում էր «աջարական սցենարը» կիրառել նաև ռուսական ազդեցության գոտի համարվող Արխագիայում՝ ընդլայնելով իր տնտեսական ազդեցությունը այդ տարածքում, որպեսզի նրա տնտեսությունը այն աստիճան կախված լինի թուրքականից, որ Արխագիայում ռուսական ազդեցությունը դառնա ձևական: Թվում էր, թե 2008 թ. օգոստոսյան պատերազմից հետո Արխագիայի նկատմամբ Թուրքիայի նկրտումները պետք է զսպվեին, սակայն Ռուսաստանի կողմից Արխագիայի անկախության ճանաչումից հետո էլ Թուրքիան դեռևս չի հրաժարվել այնտեղ իր ազդեցությունը հաստատելու մտադրությունից:

Թուրքիան մշտապես փորձել է օգտագործել նաև Ղրիմի թաթարների գործնը թերակղզում իր դիրքերն ամրապնդելու նպատակով՝ ձգտելով թուլացնել այնտեղ Ռուսաստանի ռազմական ու քաղաքական ներկայությունը: ԽՍՀՄ փլուզումից հետո

¹⁷⁰¹ Տե՛ս Մարության Ա., Հայոց ցեղասպանության հիմնահարցը համաշխարհային քաղաքականության..., էջ 34:

Թուրքիան սկսեց ստեղծել Ղրիմի թաթարների թուրքամետ հասարակական կազմակերպություններ, իսկ ուկրաինական իշխանությունները որևէ կերպ չէին խոչընդոտում Ղրիմի թաթարների հետ թուրքերի սերտ հարաբերություններ հաստատմանը: Երկու երկրների միջև պայմանավորվածություններ ձեռք բերվեցին Ղրիմում Թուրքիային նախապատվություն տալու հարցում, և Ուկրաինան իր համար դրանում սպառնալիք չէր տեսնում: Թուրքական իշխանությունները հետևողական քայլեր էին կատարում Ղրիմում իրենց ազդեցությունը մեծացնելու նպատակով, թերակղզում բավական ազատ գործում էին թուրքական հիմնադրամներն ու կրոնական կազմակերպությունները, որոնց միջոցով ֆինանսավորվում էր թուրքամետ կազմակերպությունների գործունեությունը և աջակցություն էր ցուցաբերվում Թուրքիայում Ղրիմի թաթարների վերաբնակեցմանը և այլն:

Ուկրաինական ճգնաժամի ժամանակ թուրքական այս նկրտումներն ավելի ցայտուն դրսևորումներ ունեցան: Ղրիմի Ռուսաստանին միանալու գործընթացի ժամանակ Թուրքիան անընդհատ բարձրացնում էր Ղրիմի թաթարների իրավունքների պաշտպանության հարցը: Ղրիմի բնակչության հանրաքվեից հետո Ռուսաստանը պաշտոնապես հայտարարեց Ղրիմի բոլոր ազգային ու կրոնական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը երաշխավորելու իր պատրաստակամության մասին: Սակայն անգամ դրանից հետո թուրք քաղաքական գործիչները Ռուսաստանին մեղադրում էին ագրեսիա իրականացնելու և Ղրիմի թաթարների իրավունքները ոտնահարելու մեջ¹⁷⁰²:

Ղրիմի հարցը շահարկելուց բացի, Թուրքիան տարբեր ձևաչափերով անընդհատ հետխորհրդային թուրքախոս հանրապետությունների ներկայացուցիչների հավաքներ էր նախաձեռնում: Թուրքական իշխանությունների նեոպանթուրանական

¹⁷⁰² Տե՛ս Մարության Ա., Հայոց ցեղասպանության հիմնահարցը համաշխարհային քաղաքականության..., էջ 40:

նկրտումները չէին սահմանափակվում միայն միջինասիական հանրապետություններով, Այսրկովկասում ու Ղրիմով, որոնք համարվում էին Ռուսաստանի կենսական շահերի տարածքներ, այլ անմիջականորեն ներառում էին նաև Ռուսաստանի Դաշնության տարածքը, մասնավորապես՝ Հյուսիսային Կովկասն ու Թաթարստանը¹⁷⁰³:

Չեչենական հարցը բավական երկար ժամանակ սրություն էր հաղորդում ռուս-թուրքական հարաբերություններին: Առաջին չեչենական պատերազմի ժամանակ, Թուրքիան ոչ պաշտոնապես անջատողականներին ակտիվորեն օժանդակում էր ինչպես մատակարարման, այնպես էլ տեղեկատվական և տնտեսական հարցերում: Չեչենական երկրորդ պատերազմի ժամանակ անկախ Իչկերիայի ջոկատներում մեծամասնություն էին կազմում Թուրքիայում բնակվող հյուսիսկովկասյան համայնքի ներկայացուցիչները, որոնք խրախուսվում էին թուրքական կառավարության կողմից, իսկ Թուրքիայի տարբեր բնակավայրերում բացահայտ գործում էին մարտնչող Չեչնիային օգնություն ցուցաբերող բազմաթիվ հիմնադրամներ: Միայն անջատողականների պարտությունը Թուրքիային հարկադրեց վերանայել այդ տարածաշրջանում իր քաղաքականությունը և համակերպվել Ռուսաստանի շահերի հետ:

Չեչենական հարցում Թուրքիայի ակտիվությանը Ռուսաստանը փորձում էր պատասխանել քրդական շարժմանը ոչ պաշտոնական աջակցություն ցուցաբերելու խորհրդային ավանդական քաղաքականությամբ, որի համաձայն ՔԱԿ-ի գործունեությունը համարվում էր ազգային-ազատագրական պայքար: Հատկանշական է, որ Ռուսաստանը դեռևս այդ կազմակերպությանը չի ներառել ահաբեկչական կազմակերպությունների իր ցուցակում:

¹⁷⁰³ St' u Семедов С., Основные аспекты современной политики Турции на Кавказе. /Вестник. М. ун-та. Сер. 18. Социология и политология. 2008, № 2, с. 29–52.

1994 թ. աշնանը Ռուսաստանի Արտաքին հետախուզության ծառայության (ԱՀՕ) և Անվտանգության դաշնային ծառայության (ԱԴՕ) ղեկավարներ Ե. Պրիմակովի ու Ս. Ստեպաշինի Անկարա կատարած այցի ժամանակ թուրքական հատուկ ծառայությունների ներկայացուցիչների հետ Չեչնիայում գործողությանը նախորդած բանակցությունների ժամանակ Ռուսաստանը պարտավորվեց հրաժարվել ՔԱԿ-ին աջակցելու խորհրդային քաղաքականությունից¹⁷⁰⁴: Սակայն դրանից հետո քրդական վտարանդիական խորհրդարանը տեղափոխվեց Մոսկվա և 1995 թ. հոկտեմբերի 30-ին Պետդոմայի շենքում գումարվեց քրդական վտարանդիական խորհրդարանի 3-րդ նստաշրջանը: Թուրքական կողմի բողոքներին Ռուսաստանը պատասխանեց, որ նստաշրջանի գումարումը մասնավոր միջոցառում է¹⁷⁰⁵: Այսպիսով քրդական հարցում Ռուսաստանը որդեգրել էր նույն գործելաոճը, ինչ Թուրքիան՝ չեչենական հարցում, երկու կողմերն էլ պաշտոնապես հայտարարում էին անջատողականներին չօժանդակելու մասին, սակայն ոչ պաշտոնապես այդ հարցերն օգտագործում էին միմյանց նկատմամբ ճնշում գործադրելու համար:

Ամփոփելով ԽՍՀՄ փլուզումից հետո հետխորհրդային տարածքում հաստատվելու Թուրքիայի փորձերը, պետք է արձանագրենք, որ թուրքական իշխանությունները, փաստորեն, չէին տիրապետում բավարար տնտեսական ռեսուրսների ու քաղաքական միջոցների, որպեսզի կարողանային այդ տարածաշրջաններում մրցակցել Ռուսաստանի հետ¹⁷⁰⁶:

Որպես ՆԱՏՕ-ի անդամ, Թուրքիան ակտիվորեն մասնակցում էր Ռուսաստանի դեմ ուղղված ԱՄՆ-ի ծրագրերին: 2011 թ. սեպտեմբերի 14-ին Թուրքիան ԱՄՆ-ի հետ ստորագրեց համաձայ-

¹⁷⁰⁴ Տե՛ս Մարության Ա., Հայոց ցեղասպանության հիմնահարցը համաշխարհային քաղաքականության..., էջ 49:

¹⁷⁰⁵ Տե՛ս Չաքրյան Հ., Ռուսաստան-Թուրքիա հակասությունները տարածաշրջանային վճռորոշ գործոն, «Հայացք Երևանից», թիվ 2, 1996, էջ 59:

¹⁷⁰⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 54:

նագիր, որի համաձայն Անդրկովկասի և Կենտրոնական Ասիայի, այլև Ռուսաստանի հարավային օդային տարածքների հսկելու նպատակով Իրանի սահմանին մինչև 2000 կմ հեռավորությամբ թիրախների հայտնաբերման համար նախատեսված ՆԱՏՕ-ի հակահրթիռային ռադար տեղակայվեց: Բացի այդ, 2012 թ. նոյեմբերին թուրքական իշխանությունների խնդրանքով ՆԱՏՕ-ն՝ թուրքսիրիական սահմանին «Պատրիոտ» տեսակի պաշտպանական հրթիռներ տեղակայեց¹⁷⁰⁷: Ի պատասխան՝ Ռուսաստանը Հայաստանի տարածքում տեղակայեց բարձր ճշգրտության «Իսկանդեր-Մ» հրթիռային համակարգեր, որոնց թիրախը ոչ այնքան աղբյուրական տարածքն էր, որքան Թուրքիայում տեղակայված ամերիկյան հակահրթիռային համակարգի բաղադրիչները՝ վաղ արձագանքման ռադարը և «Պատրիոտ» հրթիռային համակարգերը¹⁷⁰⁸:

Տարածաշրջանային և աշխարհաքաղաքական կարևոր հարցերում նույնպես Ռուսաստանը և Թուրքիան տարբեր դիրքերում են գտնվում: Եթե Իրանին Թուրքիան մերձավորարևելյան տարածաշրջանում մրցակից է համարում, ապա Ռուսաստանի կողմից Իրանը հիմնականում ընկալվում է որպես դաշնակից, եթե Թուրքիան ակտիվորեն ներգրավվեց «արաբական գարնան» գործընթացներում, ապա Ռուսաստանն այդ զարգացումներին խիստ քննադատաբար էր վերաբերվում: Ռուս-թուրքական հարաբերությունները հատկապես սրվեցին սիրիական ճգնաժամի պատճառով, որի ընթացքում Թուրքիան հանդես էր գալիս որպես սիրիական ընդդիմության պաշտպան և պնդում է, որ Բ. Ասադը պետք է հեռացվի իշխանությունից, իսկ Ռուսաստանը Ասադի իշխանությանը սատարող գլխավոր ուժն էր և բազմիցս Թուրքիային կոչ է արել ուղիղ երկխոսություն սկսել Բ. Ասադի հետ:

¹⁷⁰⁷ Տե՛ս Մարգարյան Ս., Ռազմաքաղաքական համագործակցությունը եվրասիական ինտեգրման համատեքստում, «21-րդ ԴԱԸ», № 2 (48), էջ 22-23:

¹⁷⁰⁸ Տե՛ս Մարտիկյան Ա., Հայոց ցեղասպանության հիմնահարցը համաշխարհային քաղաքականության..., էջ 55:

2012 թ. հոկտեմբերի 10-ին թուրքական ռազմական ինքնաթիռները Մոսկվայից Դամասկոս թռչող սիրիական քաղաքացիական օդանավին Սիրիա գնալ տեղափոխելու կասկածանքով հարկադրեցին վայրէջք կատարել Անկարայում: Օդանավի խուզարկությունից հետո ուղեբեռն առգրավվեց թուրքական իշխանությունների կողմից: Իրականում սիրիական օդանավում հակաօդային պաշտպանության համակարգի պահեստամասեր էին¹⁷⁰⁹:

2013 թ. ապրիլի 17-ին Ստամբուլում կայացավ Ռուսաստանի և Թուրքիայի արտաքին քաղաքական գերատեսչությունների դեկլարանտների հանդիպումը, որի ընթացքում Սիրիայի հարցում կողմերի դիրքորոշումների մերձեցման հասնել չհաջողվեց, իսկ 2014 թ. նոյեմբերի 9-ին սիրիական ճգնաժամի շուրջ հեռախոսագրույցի ընթացքում Ռուսաստանի նախագահը թուրք գործընկերոջը մեղադրեց ահաբեկիչներին աջակցելու, սիրիական ճգնաժամում սխալ և ագրեսիվ քաղաքականության վարելու մեջ, ինչը տասնյակ հազարավոր անմեղ մարդկանց կյանքեր խլեց և զգուշացրեց, որ պատերազմ սանձազերծելու Թուրքիայի հետագա քայլերի դեմ Ռուսաստանը պատասխան միջոցներ կձեռնարկի¹⁷¹⁰:

2015 թ. հոկտեմբերի 3-ին «Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորման (այսուհետ՝ ԻՊ) դիրքերին ավիահարվածներ հասցնելու ժամանակ ռուսական ռազմական ինքնաթիռի կողմից Թուրքիայի օդային տարածքի խախտումը խստորեն դատապարտվեց Թուրքիայի նախագահ Էրդողանի կողմից: Այդ միջադեպին հաջորդեց թուրքական օդուժի կողմից նոյեմբերի 24-ին ռուսական ռազմական ինքնաթիռի խոցումը, որը ԻՊ-ին օդային հարվածներ հասցնելիս իբր կրկին խախտել էր Թուրքիայի օդային տարածքը: Եթե հոկտեմբերի 3-ի միջադեպի հետ կապված ռուսական կողմն ընդունել էր թուրքական օդային

¹⁷⁰⁹ Տե՛ս Մարության Ա., Հայոց ցեղասպանության հիմնահարցը համաշխարհային քաղաքականության..., էջ 59:

¹⁷¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 62:

տարածքը կարճաժամկետ խախտելու փաստը, ապա երկրորդ դեպքում հայտարարվեց, որ ռուսական ինքնաթիռը խոցվել է Միրիայի տարածքում: Միջադեպի կապակցությամբ Ռուսաստանի նախագահը հանդես եկավ բավականին կոշտ հայտարարությամբ՝ Թուրքիային անվանելով ահաբեկիչների աջակից և մեղադրելով ԻՊ-ի կողմից վերահսկվող տարածքներից նավթի և նավթամթերքի վաճառքով զբաղվելու մեջ: Պուտինը նաև զգուշացրեց, որ ռուսական ինքնաթիռի խոցումը լուրջ հետևանքներ կունենա ռուս-թուրքական հարաբերությունների վրա¹⁷¹¹:

Նոյեմբերի 24-ին ռուսական ռազմական ինքնաթիռի խոցումը առիթ հանդիսացավ, որ «Արդար Ռուսաստան» կուսակցության խմբակցությունը Պետդումայում շրջանառության մեջ դնի Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնելու օրինագիծը: Ռուսաստանում քաջ գիտակցում էին Հայոց ցեղասպանության և այդ հանցագործության ժխտումը քրեականացնելու նկատմամբ Թուրքիայի ծայրահեղ զգայունությունն, ուստի այս քայլի ընտրությունն ամենևին էլ պատահական չէր: Թեև քաղաքական իրավիճակի փոփոխության հետևանքով օրինագիծը Պետդումայի օրակարգ չմտավ, այդուհանդերձ, տվյալ քայլով Ռուսաստանը թուրքական իշխանություններին փորձում էր հասկացնել, որ ի թիվս այլ միջոցների, որպես պատժամիջոց չի բացառում Թուրքիայի դեմ նաև Հայոց ցեղասպանության ժխտման քրեականացման օրենքի ընդունումը:

Համաշխարհային քաղաքականության նշված բոլոր ուժային կենտրոնների հետ Թուրքիան ներկայումս էլ բավական բարդ ու լարված հարաբերություններ ունի, և նպաստավոր պայմաններ են ստեղծվում, որպեսզի ԱՄՆ-ի, ԵՄ-ի և Ռուսաստանի հետ թուրքական պետության անշեղորեն խորացող հակասությունները

¹⁷¹¹ Տե՛ս Մարության Ա., Հայոց ցեղասպանության հիմնահարցը համաշխարհային քաղաքականության..., էջ 64:

հնարավորինս օգտագործվեն վերջինիս դեմ՝ հանգեցնելով Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարմանը:

Հայոց ցեղասպանության իրագործմամբ թուրքական պետությունը տիրացավ այդ հանցագործության զոհ դարձած ժողովրդի ոչ միայն հայրենիքի մեծ մասին՝ Արևմտյան Հայաստանին, այլև նրա մշակութային ժառանգությանն ու նյութական ամբողջ ունեցվածքին: Թուրքիայի այս գործելառճը լիովին ժառանգել է նրա կրտսեր դաշնակից Ադրբեջանը, որն իր տարածքային ամբողջականությունը պահպանելու անվան տակ պատերազմական հանցագործությունների, էթնիկ զտումների ու ցեղասպանական քաղաքականության միջոցով է փորձում հասնել իր նպատակներին: Այս հանցավոր քաղաքականությունը բացահայտորեն դրսևորվեց 2020 թ. Արցախյան երրորդ պատերազմի ընթացքում, երբ Թուրքիայի անթաքույց համակողմանի, այդ թվում՝ ռազմական և սպառազինման աջակցությամբ, նույնիսկ կողմից ահաբեկիչների ներգրավմամբ Ադրբեջանը Արցախի Հանրապետության դեմ հերթական ագրեսիան ձեռնարկեց՝ կանգ չառնելով պատերազմական հանցագործությունների (արգելված զինատեսակների՝ կասետային և ֆոսֆորային ռումբերի օգտագործում, քաղաքացիական օբյեկտների հրետակոծություն, տազմագերիների և պատանդների նկատմամբ բռնությունների իրականացում և այլն) և մարդկության դեմ կատարված հանցագործությունների առաջ:

Ցավոք, այսօր էլ աշխարհում կան ազդեցիկ, հզոր պետություններ, որոնք ոչ միայն չեն կանխում կամ զոնե դատապարտում հանցավոր վարչակարգերի կողմից այլ ազգերի ու պետությունների նկատմամբ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերին հակասող վերընշված հանցագործողությունները, այլ թաքուն կամ բացահայտ օժանդակում են նրանց, փորձելով վերջիններիս միջոցով տարածել իրենց ազդեցությունը, տիրանալ զոհ ժողովրդի տարածքում եղած բնական պաշարներին, զբաղվել զենքի վաճառքով և գումարներ վաստակել զոհ ժողովուրդների արյան վրա: Նման տեսակի երկրների կողքին կան նաև այնպիսի

պետություններ, որոնք չեն ցանկանում իրենց վրա զգալ թվարկված միջազգային հանցագործությունների ծանր հետևանքները՝ զաղթականների հոսքերը և դրա հետ կապված համաճարակների տարածումը, սոցիալական խնդիրների առաջացումը և այլն: Ի տարբերություն նախորդ տեսակի երկրների, այս կարգի պետությունները պատրաստ են ոչ միայն դատապարտել այդ հանցագործությունները, այլև միջոցներ ձեռնարկել դրանք կանխարգելելու ուղղությամբ:

Դառը ճշմարտություն է, որ ցեղասպանության և այլ միջազգային ծանր հանցագործությունների նկատմամբ պետությունների դիրքորոշումները պայմանավորված են ոչ թե մարդասիրական մոլմամբով կամ միջազգային իրավունքի նորմերով, այլ տվյալ երկրների պետական շահերով: Այս իրողությունից ելնելով, ցեղասպանության հանցագործության զոհ դարձած հայ ժողովուրդը և նրա շահերն ու իրավունքները հանդիսացող Հայաստանի Հանրապետությունը Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման ու դրա հետևանքների հաղթահարման գործում պետք է առաջնորդվի այն մոտեցմամբ, որ համաշխարհային քաղաքականության ուժային կենտրոններին՝ ԱՄՆ-ին, ԵՄ-ին ու Ռուսաստանին հիմնավոր կերպով կարողանա ներկայացնել տվյալ գործընթացից վերջիններիս ակնկալվող շահը, ինչից հետո նրանք գուցեև աջակցություն ցուցաբերեն այդ գործում: Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործընթացից որպես նշված ուժային կենտրոնների ակնկալվող շահ կարող է ներկայացվել Թուրքիային ավելի թուլացած, ինչու չէ, նաև՝ տրոհված տեսնելը, ինչով վերջնականապես կգսպվեն վերջինիս տարածաշրջանային և նույնիսկ համաշխարհային դերակատար դառնալու հավակնությունները, որոնք միանշանակ հակադրվում են ինչպես ԱՄՆ-ի ու ԵՄ-ի, այնպես էլ Ռուսաստանի շահերին:

Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչություններին ու Սփյուռքի լոբբիստական կառույցների ներդաշնակ ու համաձայնեցված աշխատանքի դեպքում հնարավոր կլինի այդ ուժային

կենտրոններում Հայոց ցեղասպանության հիմնահարցում ձևավորել այնպիսի մտայնություն, որ նրանք, եթե նույնիսկ հենց իրենք այդ հարցով անմիջական ճնշում չգործադրեն Թուրքիայի վրա, ապա սատարեն Հայաստանի ջանքերին, երբ վերջինս Հայոց ցեղասպանության դատապարտման ու այդ հանցագործության հետևանքների հաղթահարման հարցով միջազգային դատական ատյանում Թուրքիայի դեմ իրավական գործընթաց նախաձեռնի:

Ամփոփելով արձանագրենք, որ նշված ուժային կենտրոնները Թուրքիայի վրա ճնշում գործադրելու և վերջինիս հետ իրենց քաղաքական խնդիրները լուծելու նպատակով վաղուց են շահարկում Հայոց ցեղասպանության հարցը: Տվյալ պայմաններում Հայաստանը և Մփյուռքը պետք է ձգտեն համաշխարհային քաղաքականության ուժային կենտրոնների շահերը մերձեցնել մեր ազգային-պետական շահերին, ճիշտ գնահատեն և բաց չթողնեն աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային գործընթացների հետևանքով մեր ազգի ու պետության համար ստեղծված բարենպաստ հնարավորությունները, հաշվենկատ ու շրջահայաց քայլերով փորձեն Թուրքիայի վրա աստիճանաբար ավելացող ճնշումն ուղղորդել դեպի ցեղասպանության զոհ դարձած հայ ժողովրդի խախտված իրավունքների վերականգնման նպատակակետը:

5.2.Հայոց ցեղասպանությունը ճանաչած պետությունների խորհրդարանների ընդունած փաստաթղթերի պատմաիրավական քննությունը

Պետության կողմից որևէ էթնիկ, ռասայական կամ կրոնական խմբի նկատմամբ իրագործված ցեղասպանության հանցագործության ճանաչում կարող է համարվել ոչ միայն օրենսդիր մարմնի կողմից ընդունված բանաձևի, հայտարարության կամ օրենքի ընդունումը, այլև իշխանության մյուս ճյուղերի՝ կառավարության կամ դատարանի որոշման կամ վճռի ընդունման եղանակով:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման առաջին լուրջ քայլ պետք է համարել հայերի զանգվածային բնաջնջման քաղաքականության հենց իրագործման պահին Անտանտի տերությունների՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի ու Մեծ Բրիտանիայի կառավարությունների կողմից կայացված միաժամանակյա որոշումը՝ 1915 թ. մայիսի 24-ի համատեղ հռչակագիրը, որով հայերի զանգվածային սպանությունների պատասխանատվությունը դրվում էր թուրքական իշխանության վրա՝ վերջինիս այդ քաղաքականությունը որակելով որպես հանցագործություն, որն ուղղված էր «մարդկության և քաղաքակրթության դեմ»¹⁷¹²: Հետագայում այս ձևակերպումը ՄԱԿ-ի կողմից նույնականացվեց ցեղասպանություն՝ «գենոցիդ» եզրույթի հետ:

1918 թ. հոկտեմբերի 30-ին կնքված Մուլդոսի զինադադարով Առաջին աշխարհամարտում Օսմանյան կայսրության պարտության ճանաչումից հետո, նոյեմբերի 4-ին օսմանյան խորհրդարանը չեղյալ համարեց երիտթուրքական կառավարության կողմից ընդունված և ապօրինաբար գործադրված 1915 թ. մայիսի 30-ի «Տեղահանության մասին» ժամանակավոր օրենքը¹⁷¹³, որը երիտթուրքական վարչակարգի կողմից «իրավական հիմնավորում» ծառայեցվեց հայերի զանգվածային բռնազաղթն ու բնաջնջումը արդարացնելու համար: Այնուհետև նոյեմբերի 18-ի նիստում հայերի զանգվածային կոտորածների նկատմամբ հստակ դիրքորոշում չհայտնելու և կրավորական կեցվածք որդեգրելու հետևանքով թուրքական նոր կառավարությունն իր պարտականությունների կատարմանն անցնելու համար օսմանյան խորհրդարանի կողմից

¹⁷¹² Международные отношения в эпоху империализма, Документы из архивов Царского и Временного правительства, 1878–1917, М.-Л. 1931–1940, серия III, т. 7, ч. 2, с. 252.

¹⁷¹³ Հայոց ցեղասպանություն. Աշխարհի տերությունները, ազգային խորհրդարանները և միջազգային կազմակերպությունները դատապարտում են և ճանաչում (նյութերի ժողովածու), կազմող, պատ. խմբ., առաջաբանի հեղինակ Լ. Բարսեղյան, Եր., ՀՀ ԳԱԱ, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2005, էջ 148-149:

վստահության քվե չստացավ¹⁷¹⁴։ Ավելին՝ պատերազմի ընթացքում նախկին երիտթուրքական կառավարության կատարած հանցագործություններն, այդ թվում՝ հայերի զանգվածային կոտորածները հետաքննելու նպատակով ստեղծվեց խորհրդարանական հատուկ Հինգերորդ հանձնաժողովը, որի անցկացրած քննության արդյունքում կազմված նյութերը հետագայում փոխանցվեցին երիտթուրք պարագլուխների գործերը քննող թուրքական ռազմական տրիբունալներին¹⁷¹⁵։ Օսմանյան խորհրդարանի նոյեմբերի 4-ի և 18-ի նիստերում կայացված որոշումները, ինչպես նաև հայերի զանգվածային կոտորածները հետաքննող հատուկ հանձնախմբի ստեղծումն ու դրա գործունեությունը հստակ վկայում են այն մասին, որ այդ երկրի օրենսդիր մարմինն անուղղակիորեն ճանաչել է հայերի զանգվածային բնաջնջման՝ ցեղասպանության փաստը։

Օսմանյան խորհրդարանի կողմից 1918 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին կայացրած այս որոշումներից հետո ստեղծված թուրքական ռազմական տրիբունալի 1919 թ. հուլիսի 5-ի դատավճռով երիտթուրք պարագլուխները մեղավոր էին ճանաչվում պատերազմի ընթացքում հայերի զանգվածային կոտորածներ կազմակերպելու և այլ հանցանքների մեջ՝ հեռակա կարգով դատապարտվելով մահապատժի¹⁷¹⁶։ Այսպիսով, հայերի զանգվածային կոտորածների՝ ցեղասպանության փաստն, ըստ էության, թեև անուղղակիորեն, բայց ճանաչվում էր թուրքական պետության ոչ միայն օրենսդիր, այլև դատական իշխանության կողմից։ Այս հանգամանքներից ելնելով, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման համար մղվող քարոզչական

¹⁷¹⁴ Տատրեան Վ., Հայկական ցեղասպանութիւնը խորհրդարանային և պատմագիտական քննարկումներում, Ուոթթթաուն, «Պայքար», 1995, էջ 42։

¹⁷¹⁵ Տերնոն Ի., Անպատժելիություն, վրեժ և ժխտում. հայկական ցեղասպանությունը միջազգային ատյանների առջև, Եր., «Նահապետ», 2003, էջ 20։

¹⁷¹⁶ Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի։ Առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Շ. Փափազյանի, Եր., ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1988, էջ 126

աշխատանքներում արդեն պետք է շեշտադրվի, որ մեր պայքարը Թուրքիայի, որպես հանցավոր պետության, կողմից 1918-1919 թթ. ընթացքում թուրքական պետության օրենսդիր ու դատական իշխանությունների կողմից հայերի նկատմամբ իրագործված ցեղասպանության նախկին ճանաչումների վերահաստատման համար է։ Տեղեկատվական պատերազմի տրամաբանությունից բխող այս արձանագրումով թուրքական կողմին կպարտադրվի հանդես գալ պատասխանողի դերում՝ հարկադրելով վերջինիս պարզաբանումներ տալ օսմանյան կայսրության խորհրդարանի ընդունած որոշումների և թուրքական ռազմական տրիբունալների կայացրած դատավճիռների վերաբերյալ։ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման պայքարում մարտավարական այս նոր մոտեցումը միջազգային հանրության համար նույնպես կարևոր ազդակ կդառնա, վերջինիս իրագեկելով թուրքական պետության կողմից հայերի զանգվածային բնաջնջման փաստն արդեն իսկ նախկինում ճանաչելու մասին, ինչը ներկայումս ժխտվում է թուրքական ներկայիս իշխանությունների կողմից՝ այդ հանցագործության համար պատասխանատվությունից խուսափելու նպատակով։

Հայոց ցեղասպանության գոհերի հիշատակի 50-րդ տարելիցից՝ 1965 թվականից՝ Ուրուգվայի խորհրդարանի ընդունած որոշմամբ¹⁷¹⁷ մեկնարկեց հայ ժողովրդի նկատմամբ իրագործված այդ հանցագործությունը ճանաչելու ու դատապարտելու միջազգային գործընթացի խորհրդարանական փուլը, որը դրսևորվեց տարբեր պետությունների օրենսդիր մարմինների կողմից ամբողջությամբ կամ դրանց պալատներից որևէ մեկի կողմից ընդունված հայտարարությունների և բանաձևերի միջոցով։

¹⁷¹⁷ Տե՛ս The Armenian Genocide. The World Speaks Out 1915-2015, Documents & Declarations compiled and with an introduction by H. Sassounian, Glendale, 2015, p. 72.

Խորհրդարանական մակարդակով Հայոց ցեղասպանությունը ճանաչած ու դատապարտած պետություններին պայմանականորեն կարելի է բաժանել հայ ժողովրդի նկատմամբ կատարված հանցագործությունը պաշտոնապես և ոչ պաշտոնապես ճանաչած երկրների խմբերի: Պաշտոնապես ճանաչած պետությունների շարքին են դասվում այն երկրները, որոնց օրենսդիր մարմիններում հայ ժողովրդի նկատմամբ իրագործված հանցագործության ճանաչման գործընթացը ինչպես ընթացակարգային, այնպես էլ բովանդակային առումներով հասցված է իր տրամաբանական ավարտին: Եթե որևէ երկրի խորհրդարանը երկպալատ է, ապա համարվի հայ ժողովրդի նկատմամբ կատարված հանցագործությունը ճանաչելու և դատապարտելու որոշումը պետք է կայացվի երկու պալատների կողմից, որպեսզի այն Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչած պետություն համարվի: Խորհրդարանի պալատներից միայն մեկի կողմից ընդունված որոշման պարագայում ընթացակարգային առումով այդ գործընթացը չի համարվում ավարտված, ուստի տվյալ դեպքում կարելի է խոսել պետության կողմից ոչ պաշտոնական ճանաչման մասին: Միապալատ խորհրդարան ունեցող երկրներն էլ հայ ժողովրդի նկատմամբ կատարված ոճրագործությունը պետք է ճանաչվի ու դատապարտվի ոչ թե խորհրդարանի հանձնաժողովների կամ կուսակցական խմբակցությունների մակարդակով, այլ լիազումար նիստում ընդունված համապատասխան որոշմամբ, ինչի հիմք կտա պնդելու, որ տվյալ պետությունը պաշտոնապես ճանաչել է Հայոց ցեղասպանությունը:

Ընթացակարգային խնդիրներից բացի, առկա է նաև հարցի բովանդակային կողմը: Որևէ պետության օրենսդիր մարմնի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը չի կարող համարվել պաշտոնական, եթե հայ ժողովրդի նկատմամբ կատարված հանցագործությունը խորհրդարանի ընդունած բանաձևում հստակ չի որակվում որպես ցեղասպանություն, այլ դրա փոխարենն

գործածվում են այլ եզրույթներ կամ տրվում են տվյալ միջազգային հանցագործության սահմանումից տարբերվող բնութագրումներ:

Ցավոք, խորհրդարանների ընդունած հայտարարություններում ու բանձներում կարելի է տեսնել հայ ժողովրդի նկատմամբ իրագործված հանցագործության անորոշ, երբեմն լրոզված որակումներ ու բնութագրումներ, պատմական փաստերի ոչ ճշգրիտ գնահատականներ, երբեմն նկատվում են նաև որոշ վիճելի ձևակերպումներ և հակասական դատողություններ: Նշված հանգամանքներից ելնելով, անհրաժեշտություն է առաջանում որոշակի չափանիշների հիման վրա համալիր բովանդակային և համեմատական վերլուծության ենթարկել Հայոց ցեղասպանության ճանաչման խորհրդարանական փաստաթղթերը՝ վեր հանելով դրանց առավելություններն ու թերությունները:

Քանի որ խոսքն այնպիսի ծանր միջազգային քրեական հանցագործության մասին է, ինչպիսին ցեղասպանությունն է, ապա չափազանց կարևոր է, որ այն ճանաչող և դատապարտող փաստաթղթերում հստակեցված լինեն տվյալ հանցագործության հանցակազմի տարրերը՝ օբյեկտը, օբյեկտիվ կողմը, սուբյեկտը և սուբյեկտիվ կողմը: Հայոց ցեղասպանությունը ճանաչող յուրաքանչյուր փաստաթղթի արժեքն ու նշանակությունը պարզ է դառնում հետևյալ հարցերին տրված պատասխանների առկայությունից կամ բացակայությունից՝ ո՞վ է հանցագործության զոհը, ի՞նչ բնույթի հանցագործություն է կատարվել և ի՞նչ հետևանքներ է այն ունեցել տուժող կողմի վրա, ու՞մ կողմից է իրականացվել հանցագործությունը և ի՞նչ շարժառիթներով ու նպատակներով է առաջնորդվել հանցագործություն կատարող կողմը: Խորհրդարանական փաստաթղթերը գնահատելիս նաև ուշադրության պետք է դարձնել, թե արդյո՞ք անդրադարձ է կատարվում Հայոց ցեղասպանության այնպիսի փաստական հանգամանքներին, ինչպիսիք են՝ հանցագործության կատարման վայրը, ժամանակը և զոհերի թիվը: Չափազանց կարևոր է այն փաստի ամրագրումը, որ ցեղասպանությունն իրագործվել է զոհ ժողովրդի հայրենիքում՝ Արևմտյան

Հայաստանում, ինչի հետևանքով հայերը զրկվել են իրենց բնօրրանի մեծագույն մասից: Հայոց ցեղասպանության իրագործման ժամանակահատվածի հստակեցումն էլ կարևոր է այնքանով, որ այդ հանցագործության իրագործման ժամանակը չսահմանափակվի միայն Մեծ եղեռնի խորհրդանշական 1915 թվականով: Ինչ խոսք, 1915 թ. հայերի բնաջնջման քաղաքականությունը հասավ իր գագաթնակետին, սակայն դա բնավ չի նշանակում, որ այդ թվականով հանցագործությունն ավարտվեց և շարունակություն չունեցավ: Հանցագործության կատարման ժամանակահատվածը 1915 թվականով ամփոփելու դեպքում հանիրավի սահմանափակվում են նաև հանցագործության ծավալները, իսկ հայերի ցեղասպանությունը դիտարկվում է բացառապես Առաջին աշխարհամարտի իրադարձությունների հոլովոյթում և այդպիսով առնվազն լղոզվում է, եթե ոչ պատերազմական հանգամանքներով արդարացվում թուրքական իշխանությունների պատասխանատվությունը: Հայոց ցեղասպանության իրագործման ժամկետը 1915 թվականով կամ Առաջին աշխարհամարտի տարիներով չսահմանափակելով, ամրագրվում է այն իրողությունը, որ տվյալ հանցագործությունը 1918-1923 թթ. շարունակվել է նաև երիտթուրքերին փոխարինած քեմալական վարչակարգի կողմից:

Հայոց ցեղասպանության ճանաչման փաստաթղթերում զոհերի թվին անդրադառնալու պարագայում չափազանց կարևոր է, որ նշվի արդեն տարածում ստացած և հիմնականում ընդունված 1.5 մլն. թիվը: Այս հանգամանքը կարևոր է այնքանով, որ, զոհերի այլ թիվ նշելու և այդ հարցում խառնաշփոթ առաջացնելու միջոցով պատմության կեղծարարների ու Հայոց ցեղասպանության ժխտողների համար պարարտ հող չստեղծվի:

Հանցագործության փաստական հանգամանքների հստակեցումից բացի, խորհրդարանական փաստաթղթերը պետք է գնահատվեն նաև Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցադրումներին պատասխանելու տեսանկյունից: Ցեղասպանության զոհ դարձած հայ ժողովրդի ժառանգների համար

յուրաքանչյուր ընդունված բանձնի հետ կապված սկզբունքային նշանակություն ունեն հետևյալ հարցադրումների պատասխանները՝ արդյո՞ք Հայոց ցեղասպանությունը ճանաչող պետությունը բավարարվում է միայն ճանաչումով, թե՞ նաև դատապարտում է այդ հանցագործությունը և թուրքական իշխանությունների ժխտողական քաղաքականությունը, արդյո՞ք Թուրքիային՝ որպես Օսմանյան կայսրության ինքնությունը շարունակող պետության, կոչ է արվում ճանաչել այդ հանցագործությունը և առերեսվել սեփական պատմության հանցավոր էջերին և արդյո՞ք ընդունվում է հայ ժողովրդի խախտված իրավունքների վերականգնման, այսինքն՝ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման անհրաժեշտությունը:

Վերընշված չափանիշներից ելնելով, Հայոց ցեղասպանությունը ճանաչող տարբեր երկրների խորհրդարանների բանաձևերի բովանդակությունների համեմատական վերլուծությունը հնարավորություն է ընձեռում ի ցույց դնել դրանց միջև եղած ընդհանրություններն ու տարբերությունները:

Հայոց ցեղասպանության փաստական հանգամանքների հստակեցման տեսակետից կարևոր է խորհրդարանական բանաձևերում հանցագործությունն իրագործած սուբյեկտների հիշատակումը: Փաստաթղթերից շատերում նշվում է, որ հանցագործությունն իրագործվել է Օսմանյան կայսրության կամ օսմանյան կառավարության կողմից (Լիբանան¹⁷¹⁸, Կանադա¹⁷¹⁹, Բելգիա¹⁷²⁰, Սլովակիա¹⁷²¹, Չիլի¹⁷²², Բոլիվիա¹⁷²³): Որոշ պետությունների խոր-

¹⁷¹⁸ St' u Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, М., 2003, с. 736:

¹⁷¹⁹ Հայոց ցեղասպանություն. Աշխարհի տերությունները, ազգային խորհրդարանները և միջազգային կազմակերպությունները դատապարտում են և ճանաչում, էջ 298:

¹⁷²⁰ St' u Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 740:

¹⁷²¹ St' u The Armenian Genocide. The World Speaks Out 1915-2015, p. 61.

հրդարանների բանաձևերում էլ որպես հանցագործության սուբյեկտ մատնանշվում են ոչ թե թուրքական պետությանը, այլ երիտթուրքական վարչակարգը կամ «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը (Գերմանիա¹⁷²⁴, Վենեսուելա¹⁷²⁵):

Թեև հայերի զանգվածային բնաջնջման քաղաքականությունը «ցեղասպանություն» որակելով այդ հանցագործության կանխամտածված բնույթն արդեն իսկ ենթադրվում է, այդուհանդերձ, որոշ երկրների օրենսդիր մարմինների ընդունած փաստաթղթերում լրացուցիչ ընդգծվում է հայերի դեմ կատարված հանցագործության նախապես ծրագրված և ազգայնամոլ գաղափարախոսության՝ պանթուրքիզմի հիման վրա կատարված լինելու փաստը (Արգենտինա¹⁷²⁶, Շվեյցարիա, Շվեդիա, Բուլղարիա¹⁷²⁷):

Խորհրդարանների ընդունած փաստաթղթերում հանցագործության կատարման վայրին անդրադառնալիս երբեմն տարբեր աշխարհագրական եզրույթներ են գործածվում: Հիմնականում նշվում է, որ Հայոց ցեղասպանությունն իրագործվել է Օսմանյան կայսրության տարածքում (Շվեյցարիա¹⁷²⁸, Շվեդիա¹⁷²⁹, Լիտվա¹⁷³⁰, Իտալիա¹⁷³¹, Վենեսուելա¹⁷³², Ավստրիա¹⁷³³, Լյուքսեմբուրգ¹⁷³⁴): Որոշ

¹⁷²²Տե՛ս Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում, էջ 46:

¹⁷²³ Տե՛ս The Armenian Genocide. The World Speaks Out 1915-2015, p. 37.

¹⁷²⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 49:

¹⁷²⁵ Տե՛ս Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում, էջ 43:

¹⁷²⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 31:

¹⁷²⁷ Տե՛ս The Armenian Genocide. The World Speaks Out 1915-2015, p. 37, 62-63, 68.

¹⁷²⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 68:

¹⁷²⁹ Տե՛ս Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 793 .

¹⁷³⁰ Տե՛ս Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում, էջ 43:

¹⁷³¹ Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 817.

երկրների խորհրդարանների բանաձևերում որպես հայերի ցեղասպանության իրագործման տարածքի անվանում գործածվում է «Անատոլիա» արհեստական աշխարհագրական անվանումը (Կանադա¹⁷³⁵, Գերմանիա¹⁷³⁶, Բուլվիա¹⁷³⁷, Դանիա¹⁷³⁸): Նման ձևակերպումների կողքին հանդիպում են այլ պետությունների խորհրդարանների ընդունած փաստաթղթեր, որոնցում հայերի ցեղասպանության իրագործման տարածք է նշվում «Արևմտյան Հայաստան» կամ «Հայաստան» անվանումը (Հայաստան¹⁷³⁹, Ռուսաստան¹⁷⁴⁰, Սլովակիա¹⁷⁴¹, Չիլի¹⁷⁴²):

Որպես հանցագործության կատարման ժամկետ խորհրդարանական բանաձևերում հիմնականում նշվում է Հայոց ցեղասպանության խորհրդանշական տարեթիվը՝ 1915 թ.: Որոշ երկրների խորհրդարանների ընդունած փաստաթղթերում էլ հանցագործության կատարման ժամկետի մասին հիշատակումն առհասարակ բացակայում է և միայն ապրիլի 24-ն է նշվում որպես Հայոց

¹⁷³² Տե՛ս Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում, էջ 43:

¹⁷³³ Տե՛ս Austria Parlament Resolution, http://www.armenian-genocide.org/Affirmation.538/current_category.7/affirmation_detail.html

¹⁷³⁴ Տե՛ս Grand Duchy of Luxembourg Chamber Resolution, http://www.armenian-genocide.org/Affirmation.459/currentcategory.7/affirmation_detail.htm

¹⁷³⁵ Տե՛ս Геноцид армян. Ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 858.

¹⁷³⁶ Տե՛ս The Armenian Genocide. The World Speaks Out 1915-2015, p. 49.

¹⁷³⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 37:

¹⁷³⁸ Տե՛ս Denmark Parliament Resolution, http://www.armenian-genocide.org/Affirmation.597/current_category.7/affirmation_detail.html

¹⁷³⁹ ՀՀ Գերագույն խորհուրդ, Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995թթ.), Եր., 1995, էջ 10:

¹⁷⁴⁰ Տե՛ս Заявление Государственной Думы Федерального Собрания Российской Федерации “Об осуждении Геноцида армянского народа в 1915-1922 годах” от 14 апреля 1995 года, Собрание законодательств РФ, М., 1995, N 17, с. 1497.

¹⁷⁴¹ Տե՛ս Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 2, с. 60.

¹⁷⁴² Տե՛ս Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում, էջ 43, 46:

ցեղասպանության զոհերի հիշատակի օր (Իտալիա¹⁷⁴³, Վենեսուելա¹⁷⁴⁴, Հունաստան¹⁷⁴⁵): Կան պետություններ, որոնց օրենսդիր մարմինների ընդունած փաստաթղթերում Հայոց ցեղասպանության իրագործման ժամկետը սահմանափակվում է Առաջին աշխարհամարտի տարիներով (Շվեյցարիա¹⁷⁴⁶, Լեհաստան¹⁷⁴⁷, Ավստրիա¹⁷⁴⁸): Միայն Լիբանանի¹⁷⁴⁹, Արգենտինայի¹⁷⁵⁰, Չիլիի¹⁷⁵¹ և Սլովակիայի¹⁷⁵² խորհրդարանների ընդունած փաստաթղթերում է նշված 1915-1923 թթ., իսկ Ռուսաստանի Պետդումայի 1915 թ. ապրիլի 14-ի բանաձևում՝ 1915-1922 թթ.¹⁷⁵³:

Փաստաթղթերում անդրադարձ է կատարվել նաև ցեղասպանության զոհ դարձած հայ ժողովրդի վրա այդ հանցագործության ունեցած հետևանքների վրա: Գրեթե բոլոր բանաձևերում ցեղասպանության իրագործումով զոհված հայերի թիվը նշվում է մեկ ու կես միլիոն: Մի քանի երկրների խորհրդարանական փաստաթղթերում ընդգծվում է, որ ցեղասպանության իրագործմամբ հայերը զրկվեցին իրենց նախնիների հողերից, հայրենիքից,

¹⁷⁴³ Տե՛ս The Armenian Genocide. The World Speaks Out 1915-2015, p. 56.

¹⁷⁴⁴ Տե՛ս Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում, էջ 43:

¹⁷⁴⁵ Տե՛ս Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 734:

¹⁷⁴⁶ Տե՛ս The Armenian Genocide. The World Speaks Out 1915-2015, p. 68.

¹⁷⁴⁷ Տե՛ս Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 2, с. 62.

¹⁷⁴⁸ Տե՛ս Austria Parlament Resolution, http://www.armenian-genocide.org/Affirmation.538/current_category.7/affirmation_detail.html

¹⁷⁴⁹ Տե՛ս Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 736:

¹⁷⁵⁰ Տե՛ս The Armenian Genocide. The World Speaks Out 1915-2015, p. 33.

¹⁷⁵¹ Տե՛ս Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում, էջ 46:

¹⁷⁵² Տե՛ս The Armenian Genocide. The World Speaks Out 1915-2015, p. 61.

¹⁷⁵³ Տե՛ս Заявление Государственной Думы Федерального Собрания Российской Федерации “Об осуждении Геноцида армянского народа в 1915-1922 годах” от 14 апреля 1995 года.

ինչպես նաև ունեցվածքից (Կիպրոս¹⁷⁵⁴, Արգենտինա¹⁷⁵⁵, Կանադա¹⁷⁵⁶): Հատկանշական է, որ կան պետությունների խորհրդարաններ, որոնք իրենց բանաձևերում ոչ միայն ընդունել են ցեղասպանության իրագործմամբ հայ ժողովրդի խախտված իրավունքների վերականգնման անհրաժեշտությունը, այլև սատարել են հայ ժողովրդին այդ իրավունքների վրականգնման պայքարում (Կիպրոս¹⁷⁵⁷, Արգենտինա¹⁷⁵⁸, Վենեսուելա, Զիլի, Բոլիվիա¹⁷⁵⁹):

ԵՄ անդամ որոշ պետությունների խորհրդարանների ընդունած բանաձևերում Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության փաստի ճանաչման անհրաժեշտությունը դիտարկվում է ԵՄ-ին Թուրքիայի անդամակցելու հարցի համատեքստում (Իտալիա, Շվեդիա, Նիդերլանդներ¹⁷⁶⁰): Որոշ երկրների խորհրդարաններ էլ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը դիտարկվում է հայ-թուրքական հարաբերությունների հաստատման ու զարգացման համատեքստում (Բելգիա¹⁷⁶¹, Շվեյցարիա¹⁷⁶², Գերմանիա¹⁷⁶³): Դրանից ելնելով, վերընշված եվրոպական երկրների խորհրդարաններն իրենց բանաձևերն ավարտում են Հայոց ցեղասպանությունը ճանաչելու Թուրքիային ուղղված կոչերով:

¹⁷⁵⁴ Տե՛ս Հայոց ցեղասպանություն. Աշխարհի տերությունները, ազգային խորհրդարանները և միջազգային կազմակերպությունները դատապարտում են և ճանաչում, էջ 221:

¹⁷⁵⁵ Տե՛ս The Armenian Genocide. The World Speaks Out 1915-2015, p. 34.

¹⁷⁵⁶ Տե՛ս Геноцид армян. Ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 858.

¹⁷⁵⁷ Տե՛ս Բարսեղյան Լ., Հայոց ցեղասպանության հրապարակայնորեն դատապարտման և ճանաչման ժամանակագրություն (1915-2000 թթ.), Եր., 2001, էջ 29:

¹⁷⁵⁸ Տե՛ս Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 2, с. 23.

¹⁷⁵⁹ Տե՛ս The Armenian Genocide. The World Speaks Out 1915-2015, p. 38, 44, 76.

¹⁷⁶⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 55, 56, 67:

¹⁷⁶¹ Տե՛ս Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 740:

¹⁷⁶² Տե՛ս նույն տեղում, т. 2, ч. 2, с. 42.

¹⁷⁶³ Տե՛ս նույն տեղում, էջ 62:

Մի շարք երկրների խորհրդարանների ընդունած փաստաթղթերում դատապարտվում է Թուրքիայի ժխտողական քաղաքականությունը և պատմական փաստերի նենգափոխման գործելանձը, ընդգծելով, որ դա կարող է հանգեցնել նման հանցագործությունների կրկնությանը (Արգենտինա¹⁷⁶⁴, Կանադա¹⁷⁶⁵, Շվեյցարիա¹⁷⁶⁶, Սլովակիա¹⁷⁶⁷, Գերմանիա¹⁷⁶⁸, Բոլիվիա¹⁷⁶⁹, Դանիա¹⁷⁷⁰):

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների անցկացումից հետո էլ հայ ժողովրդի դեմ իրագործված հանցագործության միջազգային ճանաչման ու դատապարտման ուղղությամբ տարվող աշխատանքները չդադարեցին: Սփյուռքի համայնքները և հայկական լոբբիստական կազմակերպությունները շարունակեցին տարբեր երկրների խորհրդարանների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձևերի ընդունման ուղղությամբ իրենց աշխատանքները: Այդ աշխատանքների արդյունքում որոշ երկրների խորհրդարաններ Հայոց ցեղասպանության վերաբերյալ երկրորդ անգամ բանաձևեր ընդունեցին: 2016 թ. հունիսի 2-ին Գերմանիայի Բունդեսթագը¹⁷⁷¹, իսկ 2019 թ. ապրիլի 10-ին Իտալիայի Պատգամավորների պալատն ընդունեցին Հայոց ցեղասպանությունը ճանաչող ու դատապարտող երկրորդ բանաձևերը¹⁷⁷²,

¹⁷⁶⁴ Տե՛ս Argentina Senate Resolution, http://www.armenian-genocide.org/Affirmation.335/current_category.7/affirmation_detail.html

¹⁷⁶⁵ Տե՛ս Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 832-833.

¹⁷⁶⁶ Տե՛ս The Armenian Genocide. The World Speaks Out 1915-2015, p. 68.

¹⁷⁶⁷ Տե՛ս Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 2, с. 61.

¹⁷⁶⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 65:

¹⁷⁶⁹ Տե՛ս The Armenian Genocide. The World Speaks Out 1915-2015, p. 39:

¹⁷⁷⁰ Տե՛ս Denmark Parliament Resolution, http://www.armenian-genocide.org/Affirmation.597/current_category.7/affirmation_detail.html

¹⁷⁷¹ Տե՛ս Germany Parliament Resolution, http://www.armenian-genocide.org/Affirmation.528/current_category.7/affirmation_detail.html

¹⁷⁷² Տե՛ս Italy Chamber of Deputies Resolution, https://www.armenian-genocide.org/Affirmation.651/current_category.7/affirmation_detail.html

որոնց բովանդակությունը շահեկանորեն տարբերվում էր նախկինում ընդունված փաստաթղթերի տեքստերից: Այս ժամանակահատվածում հայ ժողովրդի դեմ կատարված ոճրագործությունը դատապարտեցին նաև նոր երկրների խորհրդարաններ, որոնց թվում՝ 2017 թ. հունվարի 26-ին Դանիայի խորհրդարանը՝ ֆոլքետինգը¹⁷⁷³, իսկ ապրիլի 25-ին Չեխիայի Սենատի¹⁷⁷⁴ ընդունած բանաձևերն էին Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման վերաբերյալ: 2018 թ. փետրվարի 22-ին¹⁷⁷⁵ և 2019 թ. հունիսի 6-ին¹⁷⁷⁶ Նիդերլանդների խորհրդարանի պալատները Հայոց ցեղասպանության վերաբերյալ բանաձևեր ընդունեցին: 2019 թ. ապրիլի 24-ին հայ ժողովրդի նկատմամբ կատարված հանցագործությունը ճանաչվեց և դատապարտվեց նաև Պորտուգալիայի խորհրդարանի կողմից¹⁷⁷⁷:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման պայքարում խոշոր հաջողություն պետք է համարել 2019 թ. հոկտեմբերի 29-ին ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի թիվ 296¹⁷⁷⁸ և դեկտեմբերի 12-ին՝ Սենատի թիվ 150¹⁷⁷⁹ բանաձևերի ընդունումը, ինչի հետևանքով գերտերություն համար-

¹⁷⁷³Տե՛ս Dutch Parliamentary Resolution, https://www.armenian-genocide.org/Affirmation.714/current_category.7/affirmation_detail.html

¹⁷⁷⁴ Տե՛ս Czech Republic Senate Resolution, https://www.armenian-genocide.org/Affirmation.789/current_category.7/affirmation_detail.html

¹⁷⁷⁵ Տե՛ս Dutch Parliamentary Resolution, February 22, 2018, https://www.armenian-genocide.org/Affirmation.713/current_category.7/affirmation_detail.html

¹⁷⁷⁶ Տե՛ս Dutch Parliamentary Resolution, June 6, 2019, https://www.armenian-genocide.org/Affirmation.714/current_category.7/affirmation_detail.html

¹⁷⁷⁷ Տե՛ս Portugal Parliamentary Resolution, https://www.armenian-genocide.org/Affirmation.657/current_category.7/affirmation_detail.html

¹⁷⁷⁸ Տե՛ս United States House of Representatives Resolution 296, https://www.armenian-genocide.org/Affirmation.780/current_category.7/affirmation_detail.html

¹⁷⁷⁹ Տե՛ս United States Senate Resolution 150, https://www.armenian-genocide.org/Affirmation.783/current_category.7/affirmation_detail.html

վող ԱՄՆ-ը խորհրդարանական մակարդակով միացավ հայ ժողովրդի դեմ կատարված հանցագործությունը դատապարտած երկրների շարքին:

ԱՄՆ-Թուրքիա երկկողմ հարաբերությունների աննախադեպ ցածր մակարդակը հանգեցրեց նրան, որ նախագահական ընտրություններից հետո Թրամփին փոխարինած ԱՄՆ-ը նոր նախագահ Բայդենը ավանդական դարձած նախագահական ուղերձում 2021 թ. ապրիլի 24-ին Օսմանյան կայսրությունում հայերի զանգվածային կոտորածները ցեղասպանություն անվանեց¹⁷⁸⁰: Հատկանշական է, որ Բայդենի ուղերձում հայ ժողովրդի նկատմամբ թուրքական իշխանությունների կողմից կատարված հանցագործության վերաբերյալ երկու անգամ «ցեղասպանություն» եզրույթի օգտագործմանը զուգահեռ գործածվում է նաև «Մեծ եղեռն» եզրույթը¹⁷⁸¹: Ըստ ամենայնի, այս կերպ նախագահ Բայդենի վարչակարգը փորձում էր ընդգծել, որ ԱՄՆ-ի նախորդ երկու նախագահների՝ Օբամայի և Թրամփի ուղերձներում նշված «Մեծ եղեռն» եզրույթն ու իր կողմից կիրառվող «ցեղասպանություն» եզրույթը նույնական են: Բայդենի ուղերձում «ցեղասպանություն» եզրույթի գործածումով փաստորեն ավարտին հասցվեց դեռևս 2019 թ. վերջին ԱմՆ-ի օրենսդիր մարմնի՝ Կոնգրեսի երկու պալատների կողմից Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման գործընթացը, որին միացավ նաև երկրի գործադիր իշխանությունն՝ ի դեմս նախագահի վարչակարգի:

Այս կապակցությամբ կարևոր է նշել, որ ԱՄՆ-ի նախագահի ուղերձից առաջ՝ 2021 թ. ապրիլի 14-ին ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի նախաձեռնությամբ Հայաստանի պատմաբանները բաց նամակ հղեցին ԱՄՆ-ի նախագահ Զոգեֆ Բայդենին՝ Հայոց ցեղասպանությունը ճանաչելու կապակցությամբ, և ապրիլի 20-ին

¹⁷⁸⁰ Տե՛ս Statement by President Joe Biden on Armenian Remembrance Day, https://www.armenian-genocide.org/Affirmation.825/current_category.4/affirmation_detail.html

¹⁷⁸¹ Տե՛ս նույն տեղում:

Բայդենի վարչակարգը դրան արձագանքեց պատասխան նամակով, որում շնորհակալություն էր հայտնվում ԱՄՆ-ի նախագահի վարչակարգին տրամադրված տեղեկատվության համար, որն օգնում է հասկանալ ԱՄՆ-ի առջև ծառացած մարտահրավերները¹⁷⁸²:

2020 թ. փետրվարի 13-ին Հայոց ցեղասպանությունը ճանաչեց նաև քաղաքացիական պատերազմի մեջ գտնվող Սիրիայի խորհրդարանը¹⁷⁸³:

2021 թ. մայիսի 6-ին Լիտվայի հետո Մերձբալթյան երկրորդ երկիրը՝ Լատվիան միացավ Հայոց ցեղասպանությունը ճանաչած երկրների շարքին, որի խորհրդարանը՝ Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձև ընդունեց¹⁷⁸⁴:

Անշուշտ, Հայոց ցեղասպանության այս վերջին ճանաչումները միայն Սփյուռքի համայնքների ու լոբբիստական կառույցների տասնամյակների ընթացքում հետևողականորեն տարվող աշխատանքի արդյունք չէին, այլ պայմանավորված էին աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային գործընթացներով, Թուրքիայի հետ տվյալ պետությունների ունեցած լուրջ հակասություններով: Այս նոր բանաձևերի ընդունումով և ԱՄՆ-ի նախագահի ուղերձով էլ ավելի սահմանափակվեցին Հայոց ցեղասպանության ժխտման թուրքական պետական քարոզչության հնարավորությունները:

Թեև տարբեր երկրների խորհրդարանների կողմից Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչումները չեն հանգեցնում Թուրքիայի կողմից այդ հանցագործության ճանաչմանը, այնուամենայնիվ, դրանց ընդունումով ոչ միայն բարոյական ու քաղաքական ճնշում է գործադրվում թուրքական իշխանություններ-

¹⁷⁸² Տե՛ս Հայաստանի պատմաբանների բաց նամակը ԱՄՆ-ի նախագահ Զոգեֆ Բայդենին՝ Հայոց ցեղասպանությունը ճանաչելու կապակցությամբ, <http://www.academhistory.am/images/GIT/13.04.2021.pdf>

¹⁷⁸³ Տե՛ս Syrian People's Assembly Resolution, https://www.armenian-genocide.org/Affirmation.790/current_category.7/affirmation_detail.html

¹⁷⁸⁴ Տե՛ս Declaration of the Saeima of the Republic of Latvia about the Armenian genocide perpetrated during the time of Ottoman Empire, https://www.armenian-genocide.org/Affirmation.827/current_category.7/affirmation_detail.html

րի վրա, այլև իրավաքաղաքական հիմքեր են նախապատրաստվում Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման ուղղությամբ քայլեր ձեռնարկելու համար: Թերևս այս գիտակցությունից ելնելով է, որ թուրքական իշխանությունները մեծ ջանքեր են գործադրում ամեն մի նոր երկրի կողմից խորհրդարանական մակարդակով Հայոց ցեղասպանության ճանաչումը թույլ չտալու համար:

Հայոց ցեղասպանությունը խորհրդարանական մակարդակով ոչ պաշտոնապես ճանաչած պետություններ են համարվում այն երկրները, որոնց օրենսդիր մարմիններում հայ ժողովրդի նկատմամբ իրագործված հանցագործության ճանաչման գործընթացը տարբեր պատճառներից ելնելով ընթացակարգային կամ բովանդակային տեսակետից դեռևս ավարտին չի հասցվել: Ընթացակարգային պատճառներով Հայոց ցեղասպանության ճանաչումն ավարտին չհասցրած պետությունները երկպալատ օրենսդիր մարմին ունեցող այն երկրներն են, որոնց խորհրդարանների պալատներից միայն մեկն է ընդունել համապատասխան բանաձև: Ընթացակարգային պատճառով Հայոց ցեղասպանության ճանաչումն ավարտին չհասցրած Հարավային Ամերիկայի երկպալատ խորհրդարաններով պետություններից են Բրազիլիան և Պարագվայը, որոնց օրենսդիր մարմինների դեռևս պալատներից մեկն է համապատասխան որոշում կայացրել, իսկ եվրոպական երկրներից՝ Չեխիան, որի միայն Սենատն է դեռևս նման բանաձև ընդունել:

Բովանդակային առումով էլ Հայոց ցեղասպանության ճանաչումը դեռևս ավարտին չեն հասցրել Բուլղարիան և Դանիան, որոնց խորհրդարանների ընդունած բանաձևերի բովանդակությամբ հարկ ենք համարում անդրադառնալ ստորև:

2015 թ. Բուլղարիայի խորհրդարանի ընդդիմադիր «Ատակա» կուսակցությունը խորհրդարան ներկայացրեց բանաձևի նոր նախագիծ, որում հայերի նկատմամբ իրագործված հանցագործությունը ցեղասպանություն էր որակվում: Նախագծի շուրջ

խորհրդարանում կրկին բուռն քննարկումներ ծավալվեցին և արդյունքում ընդունվեց երկրի վարչապետ Բոյկո Բորիսովի «ցեղասպանություն» եզրույթը «զանգվածային սպանություն» ձևակերպմամբ փոխարինելու առաջարկը: Ընդունված բանաձևում ապրիլի 24-ը հռչակվում էր Օսմանյան կայսրությունում հայերի զանգվածային սպանությունների գոհերի հիշատակի օր: Փաստաթղթում հայերի դեմ իրագործված հանցագործության կատարման վայր նշելով Օսմանյան կայսրությունը, իսկ ժամանակահատվածը՝ 1915-1922 թթ., բուլղար խորհրդարանականները շտապեցին ընդգծել, որ Բուլղարիան Օսմանյան կայսրության պատմական անցյալը սահմանազատում է Թուրքիայի Հանրապետության պատմությունից և որ իրենք ողջունում են պատմական ճշմարտությունը պարզելու շուրջ Թուրքիայի և Հայաստանի միջև երկխոսությունը¹⁷⁸⁵: Օսմանյան կայսրության պատմական անցյալը սահմանազատելով նրա իրավական ինքնության շարունակող Թուրքիայի Հանրապետության պատմությունից, բուլղար պատգամավորների մեծամասնությունը փորձում էր ժամանակակից Թուրքիայից հեռացնել հայերի ցեղասպանության համար պատասխանատվությունը: «Թուրքիայի և Հայաստանի միջև պատմական ճշմարտությունը պարզելու շուրջ երկխոսություն» ձևակերպմամբ, ըստ էության, ակնարկվում էր Հայոց ցեղասպանության իրողությունը պարզելու շուրջ պատմաբանների հանձնաժողով ստեղծելու թուրքական հայտնի թեզը, որը վերախմբագրված ձևով իր արտահայտությունն էր գտել նաև հայ-թուրքական ցյուրիխյան արձանագրությունների տեքստում: Փաստաթղթի ընդունումից հետո «Ատակա» կուսակցության խմբակցության անդամները նշեցին, որ խորհրդարանում ներկայացված մյուս կուսակցությունները տուրք տվեցին Թուրքիայի դեսպանատան ու Բուլղարիայի թուրքական համայնքի թելադրանքին: Բուլղարիայի խորհրդա-

¹⁷⁸⁵ St' u Bulgaria National Assembly, http://www.armenian-genocide.org/Affirmation.523/current_category.7/?affirmation_detail.html

րանի բանաձևում հայերի նկատմամբ իրագործված հանցագործությունը ցեղասպանություն չորակելու հանգամանքն այդ երկիրը դասում է Հայոց ցեղասպանությունը ոչ լիարժեք ճանաչած երկրների շարքին:

Դանիայի խորհրդարանի՝ ֆոլքետինգի կողմից 2017 թ. հունվարի 19-ին Հայոց ցեղասպանության մասին ընդունված բանաձևը նույնպես բովանդակային առումով խնդրահարույց է, քանզի հայ ժողովրդի դեմ իրագործված հանցագործությունը միանշանակ չի որակվում որպես «ցեղասպանություն»: Դանիական խորհրդարանում այս հարցի շուրջ առաջին քննարկումները տեղի էին ունեցել դեռ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին՝ 2015 թ. մայիսի 19-ին, իսկ 2016 թ. հոկտեմբերի 5-ին շրջանառության մեջ դրվեցին բանաձևերի երկու նախագծեր, ինչից անմիջապես հետո Դանիայի թուրքական կազմակերպությունները ագրեսիվ արշավ սկսեցին այդ նախաձեռնությունները տապալելու ուղղությամբ: Ընդհանուր առմամբ նախագծերն ունեին գրեթե միևնույն բովանդակությունը, սակայն տարբերվում էին սկզբունքային հարցերի նկատմամբ ունեցած մոտեցումներով: Նախագծերից մեկում հայերի զանգվածային բնաջնջումը բնութագրվում էր «ջարդեր և հարկադիր տեղահանումներ» ձևակերպմամբ, իսկ հանցագործության կատարման վայր նշվում էր Օսմանյան կայսրությունը: Մյուս նախագծում «ջարդեր և հարկադիր տեղահանումներ» ձևակերպման փոխարեն գործածվում էր «ողբերգական և արյունալի իրադարձություններ» բառակապակցությունը, իսկ Օսմանյան կայսրության փոխարեն նշվում էր «Արևելյան Անատոլիա» արհեստածին աշխարհագրական անվանումը: Երկու նախագծերում էլ կրկնվում էին երկու երկրների երկխոսության և երկու ժողովուրդների հաշտեցման եվրոպական կառույցների փաստաթղթերում անընդհատ շրջանառվող դրույթները:

Դանիայի արտգործնախարար Անդերս Սամուելսենը, խորհրդարանում ներկայացնելով կառավարության դիրքորոշումը, նշեց, որ այն, ինչ բանաձևի հեղինակներն անվանում են «հայերի

ցեղասպանություն», պատմական, քաղաքական և իրավական համալիր հարց է, որը պետք է քննարկվի ոչ թե Դանիայի խորհրդարանի կամ կառավարության կողմից, այլ Հայաստանի և Թուրքիայի միջև: Նախարարի ելույթը ոգևորեց դանիական խորհրդարանում բանաձևի ընդունման հակառակորդներին, որոնք առաջարկում էին այդ հարցի վերաբերյալ առհասարակ որևէ բանաձև չընդունել: Հնչեցին նաև ելույթներ, որոնցում թեև չէր հերքվում հայերի ցեղասպանության իրողությունը, սակայն կասկածի տակ էր դրվում բանաձևի ընդունման նպատակահարմարությունը: Պատգամավորների մի խումբն էլ, ոգևորվելով Գերմանիայի Բունդեստագի ընդունած որոշումով, պնդում էր, որ 1915 թ. հայերի հետ տեղի ունեցածը ցեղասպանություն է, և վաղուց հասունացել է իրերն իրենց անունով կոչելու ժամանակը: Բանաձևի ընդունման օգտին ելույթ ունեցող դանիացի խորհրդարանականները նշում էին նաև, որ չի կարելի թույլ տալ Թուրքիայի անդամակցությունը ԵՄ-ին, քանի դեռ թուրքական իշխանությունները նման ժխտողական վարքագիծ են որդեգրել և իրենց երկրում հետապնդում են խոսքի և արտահայտման ազատությունը:

Քննարկումների արդյունքում 89-ը՝ «կողմ», 9-ը՝ «դեմ» և 11-ը՝ «ձեռնպահ» ձայների հարաբերակցությամբ երկու նախագծերից ընդունվեց «վատագույն» տարբերակը: Դանիայի խորհրդարանի ընդունած բանաձևում բացակայում է «ցեղասպանություն» եզրույթը և դրա փոխարեն գործածվում է «ողբերգական և արյունալի իրադարձություններ» ձևակերպումը, իսկ որպես հանցագործության կատարման վայր նշվում է «Արևելյան Անատոլիան»: Այդուհանդերձ, Գերմանիայի Բունդեստագի 2005 թ. առաջին բանաձևի օրինակով Դանիայի խորհրդարանը նախընտրեց «ցեղասպանություն» եզրույթը գարծածել միջնորդավորված: Բանաձևում ավստոսանք էր հայտնվում, որ թուրքական օրենսդրությամբ քաղաքացիներին և ԶԼՄ-ներին արգելվում էր այդ իրադարձությունների կապակցությամբ «ցեղասպանություն» եզ-

րույթի կիրառումը, ինչը համարվում է խոսքի և գիտական ազատության անհիմն սահմանափակում¹⁷⁸⁶: Փաստորեն, դանիացի օրենսդիրները Թուրքիային հանդիմանում են «ցեղասպանություն» եզրույթի օգտագործումն արգելելու համար, մինչդեռ հենց իրենք խուսափում են բանաձևի տեքստում տվյալ եզրույթի գործածումից: Բանաձևում տեղ գտած վիճելի որակումներն ու կրավորական ձևակերպումները Դանիայի օրենսդիր մարմինը փորձում էր արդարացնել պատմական փաստերի մասին դատողություններ չանելու իր ավանդույթին հավատարիմ մնալու հանգամանքով: Իրականում Դանիայի օրենսդիր մարմնի ընդունած բանաձևի հակասական բովանդակությունը պայմանավորված էր Թուրքիայի հետ առևտրատնտեսական և այլ ոլորտներում համագործակցությանը չվնասելու հանգամանքով:

Այսպիսով, խորհրդարանական մակարդակով Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործընթացի ուսումնասիրության արդյունքում կարող ենք արձանագրել, որ հայ ժողովրդի նկատմամբ իրագործված հանցագործությունը պաշտոնապես ճանաչվել է 28 (Ուրուգվայ, Կիպրոս, Արգենտինա, Հայաստան, Ռուսաստան, Կանադա, Հունաստան, Լիբանան, Բելգիա, Ֆրանսիա, Շվեդիա, Վատիկան, Իտալիա, Շվեյցարիա, Սլովակիա, Նիդերլանդներ, Լեհաստան, Գերմանիա, Վենեսուելա, Լիտվա, Չիլի, Բոլիվիա, Ավստրիա, Լյուքսեմբուրգ, ԱՄՆ, Պորտուգալիա, Սիրիա, Լատվիա), իսկ ոչ պաշտոնապես՝ 5 (Բրազիլիա, Պարագվայ, Չեխիա և Բուլղարիա, Դանիա) պետությունների կողմից:

Հայոց ցեղասպանության խորհրդարանական ճանաչման աշխարհագրությունը հիմնականում սահմանափակվում է Եվրոպայի և Հարավային Ամերիկայի պետություններով, Հյուսիսային Ամերիկայում էլ այն ճանաչվել է միայն Կանադայի խորհրդարանի և ԱՄՆ-ի Կոնգրեսի երկու պալատների կողմից: Ավստրալիայում

¹⁷⁸⁶ St. u Denmark Parliament Resolution, http://www.armenian-genocide.org/Affirmation.597/current_category.7/affirmation_detail.html

ճանաչման գործընթացը դեռևս նահանգային օրենսդիր մարմինների մակարդակում է գտնվում: Ասիայում Հայոց ցեղասպանությունը փաստացի ճանաչվել է միայն Լիբանանի և Միրիայի կողմից, իսկ Աֆրիկայի պետություններից միայն Եգիպտոսի խորհրդարանն է հանդես եկել Հայոց ցեղասպանությունը ճանաչող ոչ պաշտոնական հայտարարությամբ:

Խորհրդարանական մակարդակով Հայոց ցեղասպանության ճանաչման աշխարհագրությունը որոշակի ազդեցությունն է ունենում նաև տարբեր պետությունների խորհրդարանների ընդունած բանաձևերի բովանդակության վրա: Եվրոպական երկրները, աշխարհագրորեն ավելի մոտ գտնվելով Թուրքիային, սերտորեն համագործակցում են վերջինիս հետ առևտրատնտեսական ու ռազմաքաղաքական ոլորտներում, ուստի Հայոց ցեղասպանությունը ճանաչող այդ պետությունների խորհրդարանների բանաձևերում նկատելի են անորոշ ձևակերպումներն ու փաստերի զգուշավոր ներկայացումը: Ի տարբերություն եվրոպական երկրների, Թուրքիայից աշխարհագրորեն ավելի հեռու գտնվող Հարավային Ամերիկայի պետություններն այդ աստիճան սերտ հարաբերություններ չունեն Անկարայի հետ, ուստի կաշկանդված չեն վերջինիս հետ համագործակցությունը վտանգելու հարցում, ուստի այդ երկրների խորհրդարանների կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևերում հանցագործության փաստական հանգամանքները ներկայացվում են ավելի հստակ և ճշգրիտ, իսկ որակումներն ու ձևակերպումներն ավելի անաչառ են ու օբյեկտիվ: Այս լույսի ներքո միանգամայն բնական պետք է համարել, որ Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման հայտարարություն կամ բանաձև ընդունելիս ցանկացած պետություն, այդ թվում՝ Հայաստանին բարեկամ երկրները, նման քաղաքական որոշումներ կայացնելիս նախևառաջ առաջնորդվում են իրենց ազգային-պետական շահերով և հետո միայն ձգտում ընդառաջել հայկական համայնքի արդարացի պահանջներին:

Միջկառավարական ու ոչ կառավարական միջազգային կազմակերպությունների ընդունած որոշումների հետ մեկտեղ տարբեր պետությունների խորհրդարանների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձևերը հայ ժողովրդի նկատմամբ իրագործված այդ հանցագործության միջազգային ճանաչման ու դատապարտման գործընթացի հիմքն են հանդիսանում: Այս առումով չափազանց կարևոր է, թե տարբեր պետությունների օրենսդիր մարմինների ընդունած փաստաթղթերը Հայոց ցեղասպանության ճանաչումից ու դատապարտումից զատ բովանդակային ինչ շեշտադրումներ են պարունակում: Տարբեր երկրների խորհրդարանների կողմից ընդունված փաստաթղթերում պատմական փաստերի ստույգ ներկայացումը, կատարված իրադարձությունների ճիշտ գնահատականներն ու որակումները, ինչ խոսք, բարձրացնում են դրանց կշիռն ու նշանակությունը: Հակառակ պարագայում դրանք նմանվում են հերթական ձևական փաստաթղթերի, որոնք թեն քանակական առումով ավելացնում են Հայոց ցեղասպանությունը ճանաչած երկրների թիվը, սակայն որակական առումով չեն նպաստում այդ հանցագործության պատշաճ դատապարտմանը և առավել ևս՝ հայ ժողովրդի խախտված իրավունքների վերականգնմանը:

Պետք է փաստենք, սակայն, որ տարբեր երկրների խորհրդարանների կողմից ընդունված Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձևերն ու հայտարարություններն այդ երկրների ներպետական օրենսդրության տեսակետից ոչ նորմատիվային փաստաթղթերն են, այսինքն՝ պարտադիր չեն տվյալ երկրների արտաքին քաղաքականություն իրականացնող գործադիր իշխանության համար: Որպես կանոն, Հայոց ցեղասպանությունը խորհրդարանական բանաձևերով ճանաչած երկրների գործադիր մարմինները, այդ հարցի վերաբերյալ դիրքորոշում չեն արտահայտում, իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ օրենսդրի որոշմանը հակառակ տեսակետ են արտահայտում: Գործադիր իշխանության համար օրենսդիրի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման որոշումը պարտադիր

է դառնում և իր արտահայտությունն է գտնում տվյալ երկրի արտաքին քաղաքականության մեջ միայն այն դեպքում, երբ այն ընդունվում է ոչ թե բանաձևի կամ հայտարարության տեսքով, այլ օրենքի մակարդակով:

Այս առումով պետք է նշենք, որ Հայոց ցեղասպանությունը ճանաչած պետություններից դեռևս միայն երեք երկրների խորհրդարաններն են այդ փաստն ամրագրել օրենքով՝ Ֆրանսիան՝ 2001 թ.¹⁷⁸⁷, Ուրուգվայը՝ 2004 թ.¹⁷⁸⁸, և Արգենտինան՝ 2004 և 2007¹⁷⁸⁹ թթ.: Շվեյցարիայի, Սլովակիայի, Հունաստանի ու Կիպրոսի խորհրդարաններն էլ, բանաձևերով ճանաչելով ու դատապարտելով Հայոց ցեղասպանությունը¹⁷⁹⁰, այնուհետև ընդունել են օրենքներ, որոնցով ի թիվս այլ ցեղասպանությունների քրեականացրել են նաև Հայոց ցեղասպանության ժխտումը¹⁷⁹¹: Բելգիայում և Շվեդիայում մարդկության դեմ կատարված հանցագործությունների, այդ թվում նաև Հայոց ցեղասպանության ժխտման համար 45 հազար եվրոյից մինչև մեկ տարվա ազատազրկման պատասխա-

¹⁷⁸⁷ Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 818.

¹⁷⁸⁸ St' u The Armenian Genocide. The World Speaks Out 1915-2015, p. 73.

¹⁷⁸⁹ St' u Argentina Law, http://www.armenian-genocide.org/Affirmation.300/current_category.7/affirmation_detail.html, տե՛ս նաև http://www.armenian-genocide.org/Affirmation.374/current_category.7/affirmation_detail.html

¹⁷⁹⁰ St' u Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий. Составитель, отв. редактор, автор предисловия и комментария д.и.н., профессор Ю.Г.Барсегов, т. 2, ч. 2, М., 2005, с. 40, 61, տե՛ս նաև The Armenian Genocide. The World Speaks Out 1915-2015, p. 54, Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում, կազմող Վ. Քոչարյան, Եր., 2014, էջ 21; Բարսեղյան Լ., Հայոց ցեղասպանության հրապարակայնորեն դատապարտման և ճանաչման ժամանակագրություն (1915-2000 թթ.), Եր., 2001, էջ 29; Հայոց ցեղասպանություն. Աշխարհի տերությունները, ազգային խորհրդարանները և միջազգային կազմակերպությունները դատապարտում են և ճանաչում, էջ 221-222:

¹⁷⁹¹ St' u Մարության Ա., Հայոց ցեղասպանության հիմնահարցը համաշխարհային քաղաքականության ազդեցիկ դերակատարների՝ Թուրքիայի հետ հարաբերությունների համատեքստում, Եր., 2015, էջ 187-189, 195:

նատվություն է նախատեսված¹⁷⁹²: Ֆրանսիայի խորհրդարանը երեք անգամ՝ 2006 թ., 2012 թ. և 2016 թ. ընդունեց ցեղասպանությունների, այդ թվում՝ Հայոց ցեղասպանության, ժխտումը քրեականացնող օրենքներ¹⁷⁹³, սակայն երկրի Սահմանադրական խորհուրդը դրանք ճանաչեց հակասահմանադրական¹⁷⁹⁴: 2015 թ. Ռուսաստանի Պետդումայում նույնպես մշակվեց Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնելու օրինագիծ, որը, սակայն, քաղաքական իրավիճակի փոփոխության հետևանքով օրենսդիր մարմնի քննարկման այդպես էլ չներկայացվեց¹⁷⁹⁵: Հայոց ցեղասպանության ժխտման քրեականացումն էլ գործնականում դժվարեցնում է տվյալ պետության տարածքում հայ ժողովրդի նկատմամբ իրագործված հանցագործության կասկածի տակ դնելը, քանզի ժխտողների համար քրեական պատասխանատվություն է նախատեսվում:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման գործընթացն ավելի արդյունավետ ու նպատակային դարձնելու առումով կարծում ենք, որ ուշադրություն պետք է դարձվի հետևյալ ուղղությունների վրա.

1. Կարևոր տեղ պետք է հատկացվի ցեղասպանության հանցագործությունից տուժած ժողովուրդների խախտված իրավունքների վերականգնման պայքարի ընդհանուր ճակատի ձևավորմանը, ինչը զգալիորեն կբարձրացնի տարվող աշխատանքների արդյունավետությունը և հաջողության հասնելու հավանականությունը: Պետք է նշել, որ այս գործընթացի հիմքերն արդեն իսկ դրվել են

¹⁷⁹² Տե՛ս Վարդանյան Վ., Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և հետևանքների վերացման իրավական հիմնախնդիրները, Եր., 2017, էջ 22:

¹⁷⁹³ Տե՛ս Մարտիքյան Ա., Պատմություն և իրավունք, Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնելու դեմ ուղղված Պիեռ Նորայի փաստարկները, «ՎԷմ» համահայկական հանդես, 2013, 2(42), էջ 12-13:

¹⁷⁹⁴ Տե՛ս Մարտիքյան Ա., Հայոց ցեղասպանության հիմնահարցը համաշխարհային քաղաքականության..., էջ 186-194:

¹⁷⁹⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 73:

Օսմանյան կայսրության և նրա ինքնության շարունակող Թուրքիայի Հանրապետության կողմից ցեղասպանության ենթարկված ժողովուրդների՝ հայերի, ասորիների ու հույների սերտ համագործակցության ձևաչափով, որին կարող են միավորվել նորանոր ժողովուրդներ ու երկրներ: Այս տեսակետից կարևոր քայլ պետք է համարել Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի նախօրյակին՝ մարտի 24-ին, ՀՀ Ազգային ժողովի կողմից 1915-1923 թթ. Օսմանյան կայսրությունում ասորիների և հույների ցեղասպանությունը դատապարտող հայտարարության ընդունումը:

2. Անհրաժեշտ է զարգացնել Հայոց ցեղասպանությունն արդեն ճանաչած ու դատապարտած երկրներում ձեռք բերված հաջողություններն այն իմաստով, որ ռացիոնալացվեն նրանց կողմից ընդունված բանաձևերն ու հայտարարությունները: Հարկավոր է հասնել նրան, որ խորհրդարանների կողմից ընդունված բանաձևերն ու հայտարարությունները վերածվեն օրենքների և, այդպիսով, պարտադիր դառնան տվյալ երկրների համար:

3. Հարկավոր է շարունակել աշխատանքները ցեղասպանության ժխտողականությունը քրեականացնող օրենքների ընդունման ուղղությամբ: Եվրոպական որոշ երկրների կողմից Հայոց ցեղասպանության ժխտումը օրենսդրորեն քրեականացնելու նախադեպերը՝ Շվեյցարիայում, Սլովակիայում, Հունաստանում և Կիպրոսում, օրենսդրական նոր նախաձեռնությունը Ֆրանսիայում, եվրոպական մյուս երկրների հայկական համայնքները պետք է աշխատեն տարածել նաև իրենց երկրների վրա: Այս առումով նպաստավոր է նաև այն հանգամանքը, որ Եվրամիության անդամ երկրները, 2008 թ. նոյեմբերի 28-ին ստորագրելով «Ռապիդի և այլատյացության առանձին ձևերի և բացասական դրսևորումների դեմ քրեական օրենսդրության միջոցով պայքարելու մասին» շրջանակային համաձայնագիրը, պարտավորություն են ստանձնել իրենց օրենսդրությունը համապատասխանեցնել նրա դրույթներին:

4. Հայկական լոբբիստական կառույցները բացի խորհրդարաններից իրենց աշխատանքների թիրախ պետք է դարձնեն նաև

գործադիր մարմինները, քաղաքական որոշումները նախապատ-
րաստող փորձագիտական կառույցներն ու «ուղեղային կենտրոն-
ները»: Անհրաժեշտ է հասնել նրան, որ Հայոց ցեղասպանությունը
ճանաչած ու դատապարտած երկրներն իրենց քաղաքականությամբ
սատարեն Հայաստանին, երբ հասունանա Հայոց ցեղասպանության
հայցը միջազգային դատարան ներկայացնելու պահը:

5. Այն երկրներում, որոնք դեռևս չեն ճանաչել ու դատապար-
տել Հայոց ցեղասպանությունը, հարկավոր է ստեղծել ու տարածել
հանրամատչելի տեղեկատվական բուկլետներ, բրոշուրներ՝ տար-
բեր լեզուներով: Գերադասելի է դա անել Հայաստանի դիվանագի-
տական ներկայացուցչությունների միջոցով, որպեսզի գործին տրվի
պաշտոնական բնույթ: Նույնը պետք է արվի նաև էլեկտրոնային
լրատվական միջոցների և համացանցի միջոցով: Այդ երկրներում
հարկավոր է ստեղծել բարենպաստ հասարակական կարծիք Հայոց
ցեղասպանության ճանաչման ու դատապարտման համար: Այս
գործողությունների թիրախը պետք է դառնան հիմնահարցին ան-
տեղյակ կամ թուրքական ժխտողական քարոզչության միջոցով ա-
պակողմնորոշված զանգվածները, որոնց հանրամատչելի և անա-
ռարկելի ձևով պետք է ներկայացվի պատմական ճշմարտությունը:
Հայ ժողովրդի նկատմամբ կատարված հանցագործությունը
չճանաչած երկրների գիտնականների մասնակցությամբ պետք է
կազմակերպվեն Հայոց ցեղասպանության տարբեր հիմնահարցերի
շուրջ միջազգային գիտաժողովներ՝ դրանց արդյունքում ընդունված
հայտարարություններն ուղղելով ոչ միայն միջոցառման
անցկացման պետություններին, այլև Թուրքիայի նախագահներին:

5.3. Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հնարավոր գործընթացի վրա Թուրքիայի ներքաղաքական գարգացումների ազդեցությունը

Թուրքական իշխանությունների կողմից պաշտոնապես իրականացվող Հայոց ցեղասպանության ժխտողական քաղաքականությունը պայմանավորված է ոչ միայն հանցագործության զոհ դարձած հայ ժողովրդին հասցված նյութական, տարածքային և բարոյական կորուստների հատուցման պարտավորությունից խուսափելու հանգամանքով, այլև թուրքական ազգային ինքնության հնարավոր խաթարման վախով: Թուրքական իշխանությունները քաջ գիտակցում են, որ ինքնության խնդիրը կարող է հանգեցնել ոչ միայն քաղաքացիական, այլև էթնոկրոնական ուղղվածություն ունեցող մեծ հուզումների, ինչը երկրում առկա բազմէթնիկության և բազմակրոնության պարագայում թուրքական պետության միասնականության համար կարող է վտանգավոր լինել: Այդ մտավախությունից ելնելով, այսօր էլ թուրքական իշխանությունները սեփական բնակչությանը շարունակում են հրամցնել Հայոց ցեղասպանության ժխտողական թեզերը, որոնք, սակայն, նախկինի պես միանշանակ չեն ընդունվում: Թուրք հասարակության որոշ խմբեր, քաջատեղյակ լինելով հայ ժողովրդի նկատմամբ կատարված հանցագործության մասին, բացահայտ քննադատում են Թուրքիայի պաշտոնական մոտեցումն այդ հարցում:

Թուրքական պաշտոնական քարոզչությունից կարող է տպավորություն ստեղծվել, թե իշխանություններին հաջողվել է հաղթահարել ներքաղաքական բոլոր խնդիրները, ինչը հնարավորություն է տվել արդեն ակտիվորեն զբաղվել Թուրքիայի աշխարհաքաղաքական հավակնությունների կենսագործման հարցերով: Թուրքիայի քաղաքական համակարգի և տնտեսության հիմնական խնդիրների ու մարտահրավերների ակունքները տանում են նախորդ հարյուրամյակի 20-ական թվականներ, երբ Օսմանյան կայսրության փլատակների վրա Մուստաֆա Քեմալի կողմից դրվում էին Թուրքիայի

Հանրապետության հիմքերը: Անցած տասնամյակների ընթացքում այդ խնդիրներն ու մարտահրավերները ոչ միայն չեն լուծվել, այլ ավելի են խորացել՝ վերածվելով երկրի համար լուրջ սպառնալիքների, որոնք կարող են առնվազն հանգեցնել նրա տարածքային ամբողջականության խաթարմանը:

Թուրքիայի քաղաքական համակարգին մշտապես բնորոշ է եղել անկայունությամբ, այն անընդհատ գտնվել է ցնցումների մեջ, իշխանությունը պարբերաբար փոփոխվել է զինվորական հեղաշրջումների միջոցով, ինչն իր ազդեցությունն է ունեցել երկրում տեղի ունեցող հետագա զարգացումների վրա: Թուրքիայի քաղաքական համակարգի հիմնական խնդիրների շարքում նախևառաջ պետք է նշել վառ արտահայտված գաղափարական առճակատումը աշխարհիկության և իսլամի միջև, ինչն իր հերթին երկրի քաղաքական դաշտում հանգեցնում է բանակ-քաղաքական իշխանություն դիմակայության, որում բանակը հանդես է գալիս՝ որպես աշխարհիկության սկզբունքների պահպան, իսկ ներկայիս քաղաքական իշխանությունները կանգնած են իսլամի սկզբունքների պաշտպանության դիրքերում¹⁷⁹⁶:

Ինչպես հայտնի է, Թուրքիայում աշխարհիկության հիմքերը դրվեցին Մ. Քեմալի կողմից, ով հաշվի չառնելով Օսմանյան կայսրության կառավարման համակարգում դարերով արմատավորված իսլամական ավանդույթները, Թուրքիայի Հանրապետության հռչակումից հետո երկիրը կտրուկ տարավ արևմտականացման և աշխարհիկացման ուղղությամբ՝ ձգտելով հետևողականորեն նվազեցնել իսլամի դերը պետության և հասարակության մեջ: Իրականությունը սակայն այն էր, որ, թեև տասնամյակներ շարունակ քեմալական աշխարհիկության սկզբունքներով կառավարվող Թուրքիայում իսլամը մղված էր հետին պլան, այն նմանվում էր սեղմված մի գույանակի, որը պատեհ առիթի էր սպասում, որ երբ իրեն սեղմած պահող ուժը թուլանար՝ ամբողջ թափով կարողանար

¹⁷⁹⁶ St' u Турция: новая роль в современном мире, М., 2012, с. 15.

դուրս պրծնել կապանքներից: Իսլամի դերի աճը կանխելու նպատակով մի շարք միջոցների ձեռնարկումը և քաղաքական կուսակցությունների գործունեության կասեցումը աշխարհիկ վարչակարգին առավելություններ տվեց ժողովրդավարական բազմակարծության նկատմամբ՝ անտեսելով իսլամական ինքնությունն ու նրա դերը երկրի սոցիալ-տնտեսական կյանքում: Այս փաստը միևնույն ժամանակ հանգեցրեց հասարակության բևեռացմանը՝ ստեղծելով քեմալականների և իսլամիստների հակադիր հատվածներ, որոնք հերքում են ընդհանուր մշակույթը և հրաժարվում են միմյանց հետ հարաբերվելուց: Թվացյալ աշխարհականացումն ավելի խորացրեց պետության և հասարակության պառակտումը. պետությունը շարժվում էր եվրոպական արժեհամակարգի ուղղությամբ, իսկ հասարակությունը հիմնականում շարունակում էր մնալ ավանդապահ¹⁷⁹⁷: Թուրքիայում իսլամական շարժումների աստիճանական ակտիվացումը, մեծ թվով կրոնական միաբանությունների, շարժումների, կազմակերպությունների ու հիմնադրամների գործունեության ծավալումը թուրքական հասարակության յուրատեսակ պատասխանն էր երկրում ընթացող ժողովրդավարական զարգացումներին և այլընտրանքային աշխարհայացքների ներմուծմանը: Իսլամի հասարակական ազդեցության դեմ հետևողական պայքար էին մղում քեմալիզմին հավատարիմ ուժերը՝ Աթաթուրքի հիմնածողովրդա-հանրապետական կուսակցությունը (այսուհետ՝ ԺՀԿ) և երկրի զինված ուժերը: Բանակն ավանդաբար կարևոր դերակատարում է ունեցել հանրապետական Թուրքիայի քաղաքական կյանքում: Այն հանդես է գալիս Աթաթուրքի հիմնադրած հանրապետության հիմնարար արժեքների և քեմալիզմի գաղափարախոսության պաշտպանի դիրքերից¹⁷⁹⁸: Թուրքիայի պատմության վերջին հինգ տասնամյակների ընթացքում բանակն արդեն չորս ան-

¹⁷⁹⁷ Տե՛ս Թուրքիա-ԵՄ-Հայաստան. մարտահրավերները և հնարավորությունները, Եր., 2009, էջ 21:

¹⁷⁹⁸ Տե՛ս Турция: новая роль в современном мире, с. 9.

գամ ուղղակիորեն միջամտել է երկրի քաղաքական կյանքին (1960 թ., 1971 թ., 1980 թ., 1997 թ.)՝ իր գործողությունները հիմնավորելով Աթաթուրքից ժառանգած գաղափարական և քաղաքական արժեքները պաշտպանելու անհրաժեշտությամբ:

2002 թ. Թուրքիայի արտահերթ խորհրդարանական ընտրություններում հաղթանակ տարավ չափավոր իսլամական «Արդարություն և զարգացում» կուսակցությունը (այսուհետ՝ ԱԶԿ), որը միանձնյա գլխավորեց կառավարությունը¹⁷⁹⁹: Չափավոր իսլամականների հաղթանակը պայմանավորված էր Թուրքիայի տնտեսական անկայունությամբ, գործազրկության և սղաճի բարձր ցուցանիշներով, քաղաքական վերնախավի հանդեպ ժողովրդի ունեցած դժգոհությամբ, երկրում խոր արմատներ ունեցող կառուցվածքային ճգնաժամով և քաղաքական վերնախավի խարդավանքներով¹⁸⁰⁰: 2002 թ. ի վեր իշխանության դեկին գտնվող Էրդողանի կուսակցությունը սկսեց քննադատել քեմալականության ժառանգությունը և Թուրքիայում աշխարհիկության արմատական կիրառման բացասական հետևանքները: Այս զարգացումները պարզորոշ ցույց տվեցին, որ քեմալիզմը, որը տասնամյակներ շարունակ անսխալ գաղափարախոսություն էր համարվում, կորցրել էր ժամանակի հետ համընթաց քայլելու ունակությունը: Այն այլևս անկարող է ուղղորդել թուրք հասարակությանը, քանզի վերջինիս խնդիրները արմատապես տարբերվում էին դարասկզբին գոյություն ունեցած խնդիրներից¹⁸⁰¹:

ԵՄ-ին անդամակցության գործընթացի շրջանակներում Թուրքիայում սկսված իրավական բարեփոխումները ԱԶԿ-ն ուղղորդում էր երկրի քաղաքական կյանքում զինված ուժերի և Ազգային

¹⁷⁹⁹ St' u Трубников С.А., Политический кризис в Турции и парламентские выборы 2002 г.. “Востоковедный сборник”, вып. 5, М., 2003, с. 321-325.

¹⁸⁰⁰ St' u Kalaycioglu E., Turkish Dynamics Bridge Across Troubled Lands. N.Y., Palgrave Macmillan, 2005, p. 138.

¹⁸⁰¹ St' u Մարության Ա., Հայոց ցեղասպանության հարցը Թուրքիայի արդի ներքաղաքական զարգացումների համատեքստում, Եր., 2016, էջ 44:

անվտանգության խորհրդի դերի նվազեցման ուղղությամբ, սակայն դրանից հետո էլ բանակը վերջնականապես չզրկվեց քաղաքական իշխանության վրա ազդելու լծակներից ու հնարավորություններից¹⁸⁰²: 2007 թ. ապրիլին նախագահական ընտրություններում արտգործնախարար Ա. Գյուլի թեկնածության առաջադրման ժամանակ բանակ–ԱԶԿ հակասությունները վերաճեցին անթաքույց հակամարտության, և բանակի Գլխավոր շտաբը հուշագիր–հաղորդագրություն տարածեց, որով իշխող կուսակցությանը կոչ էր արվում զգուշանալ հանրապետական–աշխարհիկ կարգերը խաթարելու մտադրությունից՝ հակառակ պարագայում սպառնալով դիտորդի դերում չմնալ: Առաջնորդվելով նախկին զինվորական հեղաշրջումների ոգով, բանակը փաստորեն վերջնագիր ներկայացրեց իշխող կուսակցության դեկլարությանը, սակայն լարված ներքաղաքական մթնոլորտում 2007 թ. արտահերթ խորհրդարանական ընտրություններում ԱԶԿ–ն 12 տոկոսով ավելացրեց 2002 թ. իր ստացած քվեները¹⁸⁰³:

2008–2011 թթ. ԱԶԿ–ի հեղինակության ու նրա նկատմամբ հանրային վստահությունը շարունակաբար աճում էր, ինչը թույլ էր տալիս շարունակել ներքաղաքական կյանքում թուրքական բանակի ունեցած դերի սահմանափակման գործընթացը¹⁸⁰⁴: 2008 թ. մարտին իշխանությունների կողմից նախաձեռնված «Էրգենեքոնի» և 2010 թ. հունվարին «Մեծ մուրճի» դատական գործի շրջանակներում բացահայտվեցին զինվորականների կողմից դեռ 2003 թ. ծրագրված ռազմական հեղաշրջման ծրագրերը: Երկու դատական գործերում էլ որպես ամբաստանյալներ ներգրավված բարձրաս-

¹⁸⁰² St' u Шлыков В., Армия в жизни современного турецкого общества в начале 2000-х, "Турция накануне и после парламентских и президентских выборов 2007 г.", Сборник статей, М., 2008, с. 145.

¹⁸⁰³ St' u Emre T., Forecasting elections in Turkey. "International Journal of Forecasting". Amsterdam: Feb-2011. Vol. 27, Iss. 4, p. 1248.

¹⁸⁰⁴ St' u Çarkoglu, A., Kalaycioglu E., The Rising Tide of Conservatism in Turkey, N.Y., 2009, p. 84.

տիժան զինվորականները մեղադրվում էին երկրում քառասային ու անվերահսկելի իրավիճակ ստեղծելու և հանրային ընդվզումների միջոցով ԱԶԿ-ի իշխանությունը տապալելու մեջ¹⁸⁰⁵։ Իշխող քաղաքական ուժի կողմից երկրի զինված ուժերի բարձրագույն հրամանատարության նկատմամբ սկսված բացահայտ հետապնդումները հանգեցրին նրան, որ 2011թ. հուլիսին հրաժարական տվեց Թուրքիայի զինված ուժերի ԳՇ պետը, ինչին հաջորդեցին ցամաքային, ռազմաօդային ու ռազմածովային ուժերի հրամանատարների հրաժարականները, ինչը խիստ բացասաբար անդրադարձավ բանակի հեղինակության վրա։

Այդուհանդերձ, 2016 թ. հուլիսին զինվորական հեղաշրջման անհաջող փորձ կատարվեց, ինչը Էրդողանի վարչակարգին զինվորականության և քեմալականների դեմ հետապնդումների նոր ալիք սկսելու լավ առիթ տվեց։ Հեղաշրջման ձախողման հիմնական պատճառների շարքում կարելի է նշել այն, որ ի տարբերություն նախորդ հեղաշրջումների, այս անգամ զինվորականությունը միասնաբար հանդես չեկավ։

Այս իրադարձություններից հետո Էրդողանը և նրա գլխավորած ԱԶԿ-ն թուրք հասարակության ստվար զանգվածի հակազդեցության պայմաններում մեծ դժվարությամբ Թուրքիայում հաստատեցին անսահմանափակ իշխանությամբ նախագահական այնպիսի կառավարման համակարգ, ինչով զրոյացվեցին ԵՄ-ին անդամակցելու շրջանակներում Թուրքիայի ժողովրդավարական ձեռքբերումները։

Թուրքիայի քաղաքական համակարգն առանձնանում է նաև թաքնված քաղաքական պայքարի դրսևորումներով, երբ երկրի քաղաքական կյանքում ակտիվ մասնակցություն են ունենում նոր դերակատարներ ի դեմս քաղաքական՝ «խորքային պետություն», և կրոնական՝ «գյուլենական շարժում» ստվերային ուժերի, որոնք

¹⁸⁰⁵ Տե՛ս Մարության Ա., Հայոց ցեղասպանության հարցը Թուրքիայի արդի ներքաղաքական զարգացումների համատեքստում, Եր., 2016, էջ 65։

փորձում են անտեսանելիորեն տարածել իրենց ազդեցությունը և երկրի քաղաքական իշխանությանն ու հասարակությանը թելադրել իրենց կամքը: Թուրքիայի քաղաքական համակարգի բնորոշ և անբաժան մասը դարձած ու հակադիր բևեռներում գործող այս երևույթները հավասարապես սարսափ են տարածում ինչպես հասարակության, այնպես էլ քաղաքական իշխանության համապատասխան հատվածների վրա: Որքան էլ պարադոքսալ կարող է թվալ, բայց քաղաքական իշխանությունների կողմից «խորքային պետության» կամ «գյուլենական շարժման» դեմ մղվող անզիջում պայքարը թուլացնում և խարխլում է երկրի հենց քաղաքական համակարգի հիմքերը: «Խորքային պետությունը» և «գյուլենական շարժումն» իրենց մեջ ներառում են քաղաքական իշխանության, բանակի, անվտանգության մարմինների, տնտեսական ոլորտի ու հասարակական հատվածի ազդեցիկ գործիչներին, որոնք որոշակի դերակատարում ունեն երկրի հասարակական-քաղաքական կյանքում: Թուրքիայում «խորքային պետություն» ասելով նկատի ունեն ոչ թե հստակ ձևավորված կառույց, այլ ազդեցության խմբերին, որոնք կազմված են խոշոր արդյունաբերողներից, բանակի վերնախավից և միջին ու բարձր օդակի բյուրոկրատիայից: Ճգնաժամային պահերին այս ազդեցիկ խմբերի ու խմբավորումների շահերը համընկնում են, և նրանք, միասնական ծրագրեր որդեգրելով, ճգնաժամից դուրս գալու ուղիներ են փնտրում:

Թուրք վերլուծաբանները «խորքային պետությունը» նույնականացնում են «Էրգենեքոնի» հետ կամ վերջինս համարում են «խորքային պետության» կարևոր հատվածներից մեկը, քանի որ դրա բացահայտումով լուրջ հարված հասցվեց «խորքային պետությանը»: Տարբեր ժամանակաշրջաններում «խորքային պետության» կողմից օգտագործվող ուժերը փոփոխվել են, դրանց շարքում եղել են ոչ միայն բանակը և պետական այլ կառույցները, այլև՝ ծայրահեղ ազգայնամոլները և իսլամական միաբանությունները: Թուրքիայի պատմության մեջ գրանցվել են դեպքեր, երբ «խորքային պետության» կողմից օգտագործվող կազմակերպությունները և

ուժերը հզորանալով՝ դուրս են եկել վերահսկողությունից և փորձել են սեփական քաղաքական գիծը առաջ տանել: «Էրզենեքոնը» քեմալիստական-ծայրահեղական ընդհատակյա մի կազմավորում է, որի նպատակն է՝ Թուրքիայում Աթաթուրքի հիմնած աշխարհիկ սկզբունքների պահպանումը: Կազմակերպության անդամները մեղադրվում են բազմաթիվ սպանությունների, ինչպես նաև ռազմական հեղաշրջումների նախապատրաստման ու իրագործման մեջ: Պատահական չէ, որ ԱԶԿ-ն «Էրզենեքոնի» գործը հմտորեն օգտագործում է Թուրքիայում աշխարհիկության և դրա պահպանող հանդիսացող բանակի դիրքերը խարխուլելու նպատակով¹⁸⁰⁶:

Որքան էլ որոշ քեմալիստական, զինվորական և հակախլամական շրջանակներ կառավարության քայլերը որակում էին իշխող իսլամական կուսակցության կողմից իրականացվող «վիուկների որս» և իրենց դիրքերի ամրապնդմանն ուղղված քայլեր, ակնհայտ էր «Էրզենեքոնի» օրեցօր մեծացող ազդեցությունը Թուրքիայի ներքին ու արտաքին քաղաքականության մեջ: Գաղտնի կազմակերպությունն ուներ երկու հիմնական նպատակ՝ ժողովրդի մեջ վախ տարածել իսլամական կարգերի մոտավուտ հաստատման նկատմամբ և ոչ թուրք ազգությունների տնտեսական հաջողությունները, ինչպես նաև քրիստոնեական կրոնի տարածումը Թուրքիայի համար որպես սպառնալիք ներկայացնել¹⁸⁰⁷:

Թուրքիայի քաղաքական համակարգի վրա ազդող գաղտնի քաղաքական կառույցներից բացի, երկրի ներքաղաքական կյանքում մեծ դերակատարություն ունեն նաև կրոնական շարժումները, որոնցից ամենաազդեցիկը իսլամի տեսաբան Ֆեթուլահ Գյուլենի գլխավորածն է: 1990-ական թթ. գյուլենական շարժման գործունեության մարտավարությունը կայանում էր նրանում, որ պետական համակարգի համեմատաբար բարձր պաշտոններում նշա-

¹⁸⁰⁶ Տե՛ս Մարության Ա., Հայոց ցեղասպանության հարցը Թուրքիայի արդի ներքաղաքական զարգացումների համատեքստում, էջ 78:

¹⁸⁰⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 80:

նակվելին շարժման հետևորդներ: Մոտավոր հաշվարկներով ներկայումս Թուրքիայի բնակչության 10-15 տոկոսը առնչություն ունի գյուլենական շարժման հետ¹⁸⁰⁸: Գյուլենն իր ԶԼՄ-ների հզոր ցանցով և ֆինանսական միջոցներով աջակցեց Էրդողանի, Գյուլի և Արընջի հիմնադրած չափավոր իսլամական ԱԶԿ-ին, նպաստեց խորհրդարանական ընտրություններում այդ կուսակցության հաղթանակին և սատարեց նոր կառավարության նախաձեռնություններին:

Նպաստելով ԱԶԿ-ի հաջողություններին՝ Ֆ. Գյուլենը և նրա գլխավորած շարժումը փորձում էին ԱԶԿ-ի և նրա առաջնորդների միջոցով կենսագործել իրենց գաղափարներն ու տեսակետները, ինչը բացարձակապես անընդունելի էր ԱԶԿ-ի ղեկավարների, հատկապես մեծ հավակնություններ ունեցող վարչապետ Ռ. Էրդողանի համար, որը սկսեց քայլեր ձեռնարկել ԱԶԿ-ի վրա Գյուլենի ունեցած ազդեցությունը վերացնելու ուղղությամբ: Գիտակցելով, որ Թուրքիայում Գյուլենի գաղափարական ազդեցության տարածմանը նպաստում են նրա դպրոցների ցանցն ու լրատվամիջոցները, Էրդողանը դրանք փակելու ուղղությամբ քայլեր ձեռնարկեց, բարձր պաշտոններից սկսեց հեռացնել այն գործիչները, որոնք կասկածվում էին գյուլենականների հետ կապեր ունենալու մեջ:

Գյուլենի պատասխանը եղավ «Մեծ կաշառք» գործողությունը, երբ պայթեց կառավարության անդամների և նրանց ընտանիքների անդամների մասնակցությամբ կոռուպցիոն սկանդալները, նրանց դեմ քրեական գործեր հարուցվեցին կաշառակերության, փողերի «վաճման» և անգամ զենքի ու թմրամիջոցների անօրինական վաճառքով զբաղվելու մեղադրանքներով: Այս սկանդալը հանգեցրեց կառավարության մի շարք նախարարների հրաժարականին և մեծապես հեղինակագրկեց Էրդողանին ու նրա կուսակցությանը: Պատահական չէր նաև այն, որ 2016 թ. հուլիսի 15-ի հեղաշրջման

¹⁸⁰⁸ Տե՛ս Շաքարյան Ա., Արաբատից այն կողմ. Ապակողավորելով Թուրքիան, Եր., 2011, էջ 88:

կազմակերպման մեջ Էրդողանն ուղղակիորեն մեղադրեց Գյուլենին և ամերիկյան իշխանություններից պահանջեց նրան արտահանձնել Թուրքիային: Գյուլենը հանդես եկավ պատասխան հայտարարությամբ՝ հերքելով Թուրքիայում ռազմական հեղաշրջում կազմակերպելու հարցում իրեն ուղղված մեղադրանքները: Ավելին, նա չբացառեց, որ Թուրքիայում ռազմական հեղաշրջման փորձը, քաղաքական նպատակներից ելնելով, բեմադրված լինի հենց Էրդողանի կողմից¹⁸⁰⁹:

Թուրքական վարչակարգերի ցեղասպանության և բռնի մահմեդականացման քաղաքականությունը հիմնականում իրականացվեց տեղաբնիկ ոչ թուրք ժողովուրդների հայրենիքում (Արևմտյան Հայաստանում՝ հայերի նկատմամբ, Պոնտոսում՝ հույների, Միջագետքում՝ ասորիների): Վարչական առումով այս տարածքները մոտավորապես համընկնում էին Օսմանյան կայսրության արևելյան, հյուսիս-արևելյան և հարավ-արևելյան նահանգների հետ, որտեղ տեղաբնիկ ժողովուրդների բնաջնջումից և բռնի մահմեդականացումից հետո կտրուկ փոխվեց ոչ միայն ժողովրդագրական, այլև՝ սոցիալ-տնտեսական պատկերը: Նշված տարածքները վերածվեցին երկրի առավել թերգարգացած շրջանների, որոնց բնակչության մեջ գերիշխող տարր դարձան քրդերը: Հանրապետական Թուրքիայում պահպանվեցին երկրի արևելյան և հարավ-արևելյան նահանգների նկատմամբ վարվող օսմանյան քաղաքականության տխուր ավանդույթները. այդ տարածքները կարծես թե անտեսված էին երկրի ղեկավարության կողմից, ինչի հետևանքով Թուրքիան տասնամյակներ շարունակ զարգանում էր և է անհամաչափ, իսկ արևելյան և հարավ-արևելյան նահանգների սոցիալ-տնտեսական ցածր մակարդակը շարունակում է պահպանվել մինչ օրս: Թեև քրդերը մեծ ծառայություն մատուցեցին թուրքերին՝ «արյունոտ կացին» դառնալով նրանց ձեռքին և նպաստելով նշված տարածքներ-

¹⁸⁰⁹ Տե՛ս Մարության Ա., Հայոց ցեղասպանության հարցը Թուրքիայի արդի ներքաղաքական զարգացումների համատեքստում, էջ 86:

րում տեղաբնիկ ժողովուրդների բնաջնջման քաղաքականությանը, սակայն այդ տարածքները հայերից, հույներից ու ասորիներից ազատելուց հետո թուրքական իշխանությունների կողմից թիրախավորվեցին արդեն քրդերը, որոնց գոյությունը, իբրև ազգի, այդ երկրում մերժվեց: Քրդերի, ալևիների, զազաների և իրենց թուրք չհամարող այլ էթնոկրոնական խմբերի նկատմամբ թուրքական իշխանությունների կողմից վարվող խտրական քաղաքականությունն այդ խմբերի մոտ հանգեցրեց իրենց ինքնությունը պաշտպանելուն ուղղված ազգային-ազատագրական պայքարի: Նշված խմբերից թվական գերազանցություն ունեցող քրդերի ազգային-ազատագրական պայքարը դարձավ ամենատևականն ու արյունալին, իսկ Քրդական հարցը դարձավ ներկայիս Թուրքիայի դեմ ուղղված լրջագույն մարտահրավերներից մեկը:

Թուրքիայի քուրդ ազգաբնակչությունը կազմում է երկրի բնակչության շուրջ 17 %-ը և երկրի հարավ-արևելյան նահանգներում՝ Բինգյուլում, Բիթլիսում, Վանում, Դիարբեքիրում, Կարսում, Մալաթիայում, Ադիյամանում, Ադրիում, Մուշում, Էրզրումում բացարձակ մեծամասնություն է կազմում¹⁸¹⁰: Ազգային և կրոնական փոքրամասնությունների դժգոհության համընդհանուր պատկերի վրա Քրդական հարցն այսօր դարձել է թուրքական միասնական պետության տրոհման հիմնական գործոններից մեկը¹⁸¹¹: 1978 թ. ձևավորված ՔԱԿ-ին Թուրքիայում հաջողվեց իր շուրջը համախմբել քրդական կազմակերպություններին և գլխավորել քուրդ ժողովրդի ազատագրական պայքարը¹⁸¹²: Քրդերով բնակեցված գրեթե բոլոր երկրներում ՔԱԿ-ը հիմնեց գրասենյակներ, որոնք համակարգում են կուսակցության գործունեությունը, հսկայական

¹⁸¹⁰ St' u Гасратян М., Курдская проблема в Турции (1986-1995), М., 2001, с. 68.

¹⁸¹¹ St' u Հովհաննիսյան Ն., Քրդերի մասնակցությունը հայերի ցեղասպանությանը: Քրդական գործոնը Արևմտյան Հայաստանի հարցի լուծման հայկական հայեցակարգում, Եր., 2016, էջ 66:

¹⁸¹² St' u Bozarslan H., Why the Armed Struggle? Understanding the Violence in Kurdistan of Turkey. "The Kurdish Conflict in Turkey". St. Martin's, 2000, pp. 17-18.

ֆինանսական միջոցներ հավաքագրում, կազմակերպում զինված պայքարը և քարոզում են իրենց գաղափարները: ՔԱԿ-ը հիմնականում որդեգրել է լեռնային տեղանքում պարտիզանական պայքարի մարտավարությունը: Նրա մարտական ջոկատները մարտնչում են թուրքական բանակի և ոստիկանության դեմ երկրի հարավ-արևելյան մասում, որտեղ գերակշռում է քուրդ բնակչությունը: Բացի դրանից, ՔԱԿ-ն հարձակումներ է իրականացնում նաև արտասահմանյան զբոսաշրջիկների վրա՝ Թուրքիայի տնտեսության կարևոր ոլորտներից մեկը վնասելու նպատակով¹⁸¹³: Միայն 1993 թ. ՔԱԿ-ի մարտիկները իրականացրին 4 հազար զինված հարձակում և այլ զինված գործողություններ: Որոշ հաշվարկների համաձայն, 1984-1999 թթ. ընթացքում ռազմական և զինյալ գործողությունների հետևանքով երկու կողմից ավելի քան 37 հազար մարդ է զոհվել¹⁸¹⁴:

Որքան էլ Քրդական հարցը փոխկապակցված լինի սոցիալ-տնտեսական հարցերի հետ, միննույն է, այն չի դադարում ազգային հարց լինելուց, հետևաբար, կառավարող շրջանների կողմից արևելյան նահանգներում սոցիալ-տնտեսական վիճակը բարելավելուն ուղղված քայլերը, բնականաբար, չեն կարող լուծել Քրդական հարցը: Ավելին, իշխանությունների կողմից ձեռնարկվող քայլերը բացահայտ և քողարկված ձևով միտված են քրդերին թուրքերի հետ ձուլելու միջոցով «լուծելու» Քրդական հարցը:

Քրդական հարցը ուժով լուծելու նախապատվությունից ելնելով՝ թուրքական պետությունը փաստորեն խրախուսեց թուրքական ազգայնականության վերելքը¹⁸¹⁵: Թուրք ազգայնական գործիչներն իրենց հուսադրում են նրանով, որ քրդերի մեջ դեռ գե-

¹⁸¹³ Տե՛ս Լազարև Մ.Շ., Новые тенденции в курдском национализме. “Национализм и фундаментализм на Ближнем Востоке. Материалы конференции. Москва, 4.02.1999г.”, М., 1999, с. 65-70.

¹⁸¹⁴ Տե՛ս Ավագյան Ա., Պանթուրքական երազանք կամ «Գորշ գայլեր», Եր., 2013, էջ 92:

¹⁸¹⁵ Տե՛ս Տեր-Մաթևոսյան Վ., Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում (1970-2001թթ.), Եր. 2008, էջ 190:

րիշխում է ոչ թե ազգային գիտակցությունը, այլ ցեղային պատկանելության զգացումը: Քրդական ցեղերը դիտվում են՝ որպես միասնական ազգային գիտակցություն չունեցող միություններ¹⁸¹⁶: Քրդական հարցի լուծման ուղղությամբ թուրքական քաղաքական վերնախավում չկա միասնական մոտեցում, մի մասն ուժային լուծման կողմնակիցն է, կարծելով, որ դա կարող է լուծվել ՔԱԿ-ի ոչնչացման միջոցով, մյուս մասը խաղաղ լուծման կողմնակիցն է, ինչը ենթադրում է բարեփոխումների միջոցով քրդերի որոշ իրավունքների ճանաչում¹⁸¹⁷: Թուրքական կառավարող վերնախավում Քրդական հարցի ուժային լուծման կողմնակիցները փորձում են բարձրացնել ժանդարմական ուժերի գործողությունների արդյունավետությունը և այդ կերպ հակազդել թուրքական պետության տարածքային ամբողջականության մարտահրավերներին:

Զինված պայքարին զուգահեռ քրդերը նաև սկսեցին քաղաքական գործունեություն ծավալել հիմնականում Թուրքիայի քրդաբնակ հարավարևելյան շրջաններում, մասնակցել ընտրական գործընթացներին, ինչի արդյունքում 2009 թ. ՏԻՄ ընտրություններում «Քրդական ժողովրդավարական հասարակություն» կուսակցությանը հաջողվեց Դիարբեքիի քաղաքապետի ընտրություններում հաղթանակի հասնել: 2015 թ. խորհրդարանական ընտրություններում Կարսում, Արդահանում, Իզմիրում և Արևմտյան Հայաստանի զգալի հատվածում հաղթանակ տարավ քրդական «Խաղաղություն և ժողովրդավարություն» կուսակցությունը (այսուհետ՝ ԽԺԿ), ինչը լուրջ մտահոգություն պատճառեց նախագահ Ռ. Էրդողանին և իշխող ԱԶԿ-ին, որը քրդական կուսակցության հաջողության հետևանքով զրկվեց միանձնյա կառավարություն ձևավորելու իրավունքից: Կոալիցիոն կառավարություն ստեղծելու շուրջ բանակցությունների ձախողումից հետո արտահերթ խորհրդարա-

¹⁸¹⁶ Տե՛ս Գալուստյան Հ., Հանրապետական Թուրքիայի կառավարության քաղաքականությունը արևելյան վիլայեթներում (1920-1960-ականներ), Եր., 1999, էջ 82:

¹⁸¹⁷ Տե՛ս Турция: новая роль в современном мире, с. 15.

նական ընտրություններում ԱԶԿ-ի հիմնական մրցակիցը դարձավ ԽԺԿ-ն, քանզի վերջինիս հաղթանակով կամ պարտությամբ էր պայմանավորված խորհրդարանում իշխող կուսակցության ցանկալի մեծամասնություն կազմելու հավանականությունը: ԽԺԿ-ին խորհրդարանից դուրս թողնելու ուղղությամբ իշխանությունները ջանք ու եռանդ չխնայեցին, քրդական կուսակցության համար քարոզարշավի ընթացքում ստեղծվել էին ոչ հավասար պայմաններ: ԽԺԿ-ն բողոքարկեց արտահերթ ընտրությունների արդյունքները, պնդելով, որ ընտրակեղծիքների հետևանքով ԱԶԿ-ի քվեներն ավելացվել են արևելյան նահանգներում իր ձայների նվազեցման հաշվին, սակայն Թուրքիայի սահմանադրական դատարանը մերժեց քրդական կուսակցության բողոքը և ուժի մեջ թողեց ընտրությունների հրապարակված արդյունքները¹⁸¹⁸:

Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովում քրդամետ ԽԺԿ-ի խորհրդարանական խմբակցության կազմում ընդգրկված հայազգի պատգամավոր Կարո Փայլանը պարբերաբար բարձրացնում է Հայոց ցեղասպանության հարցը: 2016 թ. ապրիլի 21-ին թուրքական խորհրդարանում ունեցած իր ելույթում Փայլանը քննադատեց Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության հարցում վարվող ժխտողական քաղաքականությունը, ներկայացրեց հայերի զանգվածային բնաջնջման որոշ մանրամասներ և վերջում իր կուսակցության անունից առաջարկեց ստեղծել Հայոց ցեղասպանության գոհ դարձած օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորների սպանության հանգամանքների ուսումնասիրման հատուկ խորհրդարանական հանձնաժողով: Ելույթի վերջում նա թվարկեց օսմանյան խորհրդարանի գոհված հայ պատգամավորներին և ցուցադրեց նրանց լուսանկարները: Խորհրդարանի մեծամասնություն կազմող թուրք պատգամավորների դիրքորոշումը միանգամայն կանխատեսելի էր: Փայլանի առաջարկը քննարկելու փոխարեն նրանք փորձե-

¹⁸¹⁸ Տե՛ս Մարության Ա., Հայոց ցեղասպանության հարցը Թուրքիայի արդի ներքաղաքական զարգացումների համատեքստում, էջ 100:

ցին հաշվերահարդար տեսնել նրա հետ հենց խորհրդարանի դահլիճում¹⁸¹⁹։ Այդ հարձակումները, սակայն, չընկճեցին Փայլանին, որը 2017 թ. հունվարի 13-ին սահմանադրական փոփոխությունների փաթեթի վերաբերյալ ելույթ ունենալիս խոսեց «հավասարություն, եղբայրություն, խաղաղություն» կարգախոսներով իշխանության եկած իթթիհադական եռյակի՝ Թալեաթի, Էնվերի և Ջեմալի կողմից Առաջին աշխարհամարտի տարիներին հայերի և ասորիների ցեղասպանությունն իրականացնելու մասին։ Ինչպես նախորդ դեպքում, այս անգամ էլ իշխող ԱԶԿ-ի և ընդդիմադիր քեմալական ՕՀԿ-ի ու «Ազգային շարժում» կուսակցության (այսուհետ՝ ԱՇԿ) պատգամավորների՝ տեղերից վանկարկումների պատճառով Կ. Փայլանը չկարողացավ ավարտել իր խոսքը։ Խորհրդարանի փոխնախագահին էլ թուրք ազգի հասցեին հնչեցված վիրավորական արտահայտությունների համար, իբրև պատիժ, նրան զրկեց երեք նիստերի մասնակցելու իրավունքից։

Քրդական հարցից բացի, թուրքական իշխանությունները ժամանակ առ ժամանակ բախվում են նաև իրենց թուրք չհամարող ալևիների խնդրին, որոնց թիվը մոտավոր հաշվարկներով 12-15 մլն է, կազմելով Թուրքիայի բնակչության շուրջ 15-20 տոկոսը։ Թեև ալևիական համայնքը մոնոթեոնիկ չէ և կազմված է ազգությամբ թուրք, քուրդ, զազա և հայ խմբերից¹⁸²⁰, այդուհանդերձ, ալևիների կողմից իրենց իրավունքների պաշտպանության համար թուրքական իշխանությունների դեմ մղված պայքարի պատմությունը ցույց տվեց, որ ալևիականությունը, որպես կրոնական ինքնություն, ազգային ինքնությունից ավելի ուժեղ է դրսևորվում։

Թուրքիայի արդի քաղաքական համակարգի խնդիրների ու մարտահրավերների մյուս խումբը պայմանավորված է դրանում առկա լրջագույն հոգեբանական բարդություններով, որոնք առաջացել

¹⁸¹⁹ Տե՛ս Մարության Ա., Հայոց ցեղասպանության ճանաչումն ու դատապարտումը Օսմանյան խորհրդարանում 1918 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 2017, N 1, էջ 13։

¹⁸²⁰ Տե՛ս Турция: новая роль в современном мире, с. 22.

են դեռ մեկ դար առաջ՝ Առաջին աշխարհամարտի ժամանակահատվածում: Պատերազմը որպես պատեհ առիթ նկատելով, երիտթուրքական վարչակարգը իրականացրեց Օսմանյան կայսրության տարածքում տեղաբնիկ ժողովուրդների՝ առաջին հերթին հայերի ցեղասպանությունը՝ այդ կերպ փորձելով ստեղծել թուրքական ազգային պետություն, ջանալով վերջնականապես տիրանալ այդ ժողովուրդների հայրենիքին ու կանխել նրանց պետականությունների վերստեղծումն այն տարածքներում, որտեղ նրանք հազարամյակներով կերտել էին իրենց քաղաքակրթությունները: Ցեղասպանությանը զուգահեռ, թուրքական տարբեր վարչակարգերը հետևողականորեն իրականացնում էին ոչ մահմեդական բնակչության բռնի մահմեդականացման և թրքացման քաղաքականություն՝ հույս ունենալով, որ այդ կերպ ոչ թուրք տարրերի կոտորածներից հրաշքով փրկված աննշան մնացորդացի մեջ կհաջողվի ջնջել ազգային և կրոնական ինքնությունը: Առաջին հայացքից կարող էր թվալ, թե թուրքական վարչակարգերը հաջողեցին այդ հարցում, սակայն արդեն հանրապետական Թուրքիայում տեղի ունեցող զարգացումները պարզորոշ ցույց տվեցին, որ խնդիրը ոչ միայն չի լուծվել, այլ ավելի է խորացել: Ցեղասպանությունից հետո Թուրքիայում մնացած ոչ մահմեդականների ազգային-կրոնական ինքնության խեղման քաղաքականության հետևանքով այդ երկրում առաջացան ծպտյալ հայեր, հույներ, ասորիներ և հրեաներ, որոնք թեև հարկադրված եղան փոխել իրենց կրոնը, լեզուն և անուն-ազգանունները, սակայն շարունակեցին գաղտնի պահպանել իրենց ազգային ինքնության, մշակույթի ու սովորույթների տարրերը և դրանք փոխանցել հաջորդ սերունդներին: Ներկայումս Թուրքիայում ոչ թուրք նախնիներ ունեցողները բավական մեծ թիվ են կազմում, որոնց կամ նոր է ասվել իրենց ընտանիքի մասին իրականությունը, կամ նրանք իմացել, բայց վախեցել են արտահայտվել: Տեղեկանալով տասնամյակներ շարունակ թաքցված և գաղտնի պահված իրենց իրական ինքնության մասին, այդ մարդիկ «ինքնության ճգնաժամ» են ապրում: Մեծ թվով մարդիկ Թուրքիա-

յում սկսում են լրջորեն կասկածել իրենց թուրք լինելու մեջ և փորձում են գտնել իրենց իրական ինքնությունը: Այդ փնտրտուքի արդյունքում հաճախ պարզվում է, որ իրենց նախնիները ոչ միայն թուրք չեն եղել, այլ նաև՝ չեն եղել մահմեդական ու, որ իրենց տատերը կամ պապերը եղել են հայեր, հույներ, հրեաներ, ասորիներ և այլն: Իրենց արմատների մասին իսկությունն իմացած մարդկանց հոգեկան աշխարհում որոշակի փոխակերպումներ են կատարվում: Մի մասն այն վախից ելնելով, որ հասարակությունը չիմանա այդ մասին և ինքը, որպես ոչ թուրքի սերունդ, չթիրախավորվի, փորձում է թաքցնել իրողությունը և ավելի պարփակված է դառնում, իսկ մյուսներն այդ հոգեբանական ցնցումից հետո, ի նշան բողոքի, սկսում են հակադրվել այն միջավայրին, որն իրենցից տասնամյակներ շարունակ թաքցրել է ճշմարտությունը: Բոլոր դեպքերում, իրենց իրական ինքնության մասին իմացածների մեջ որոշակի անվստահություն և նույնիսկ ատելություն է առաջանում այն իշխանության ու պետության նկատմամբ, որն, իրենց նախնիների նկատմամբ բռնություն գործադրելով, անարդարացիորեն խեղել է նաև նրանց սերունդների ինքնությունը: Թուրքիայում ծայր առած «Էթնիկ ինքնության ճգնաժամի» քննարկման շրջանակներում ի հայտ են գալիս նոր փաստեր ցեղասպանության ժամանակ առևանգված հայ երեխաների, հատկապես՝ աղջիկների մասին, որոնց՝ մահմեդականների հետ ամուսնության հետևանքով ներկայիս Թուրքիայում ձևավորվել է հայկական արյան որոշակի տոկոս ունեցող խառնածինների հոծ բազմություն¹⁸²¹:

Ծպտյալ և իսլամացված հայության խնդիրը որոշակի անհանգստություն է պատճառում թուրքական գիտական շրջանակներին: Թուրքիայի ակադեմիական շրջանակներում շրջանառվում է այն տեսակետը, որ ծպտյալ հայերն, ի վերջո, վտանգավոր են լինելու Թուրքիայի համար: Կարծիք է արտահայտվում, որ իսլամաց-

¹⁸²¹ Տե՛ս Մելքոնյան Ռ., Իսլամացված հայերի խնդիրների շուրջ. Թուրքիայի իսլամացված հայության խնդրի ուսումնասիրություն, Եր., 2009, էջ 20-21:

ված հայերին անընդհատ իրենց իսկական ինքնությունը հիշեցնելու հետևանքով կարող է ստեղծվել մի իրավիճակ, որ այդ մարդիկ հողի և հատուցման պահանջ ներկայացնեն թուրքերին¹⁸²²: Պատահական չէ, որ լուսահոգի Հր. Դինքն իր հանդիպումներից մեկի ժամանակ ասել է. «Եթե մի օր Թուրքիան քանդվի, ապա դա կլինի ոչ թե զենքի միջոցով, այլ՝ ինքնության խնդրի»¹⁸²³:

Ինքնության ճգնաժամը, գումարվելով ոչ թուրք ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումներին, թուրքական իշխանություններում և հասարակության մեջ ի հայտ բերեցին նոր հոգեբանական բարդությոներ ու վախեր՝ ի դեմս «սերոֆորիայի» կամ «Սևրի սինդրոմի»: Այս երևույթը Օսմանյան կայսրությունը մասնատող Սևրի պայմանագրի անունով կոչելը պատահական չէ, քանզի թուրքական իշխանությունների և հասարակության կողմից «Սևրի սինդրոմն» ընկալվում է որպես Թուրքիայի հնարավոր մասնատմանը կամ ամբողջականության խաթարմանն ուղղված մտադրություն կամ նախաձեռնություն, որը կարող է ի հայտ գալ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ուժերի կողմից¹⁸²⁴: Բնականաբար, ներքին ուժերի տակ հասկացվում են Թուրքիայի բոլոր այն էթնոկրոնական խմբերը, որոնք թուրքերի հետ իրենց չեն նույնականացնում: Չբացառելով Թուրքիան մասնատել ձգտող արտաքին ուժերի այդ խմբերի գործակցության հնարավորությունը՝ թուրքական իշխանությունները և հասարակական-քաղաքական ուժերն այդ խմբերին հռչակում են որպես սպառնալիք թուրքական պետության ամբողջականության և նույնիսկ գոյության համար:

Թուրքիայի ստեղծման տարիներից ի վեր, քաղաքացիների ուղեղներում դրոշմվել է Սևրի հիշողությունը: Թուրքական կրթա-

¹⁸²² Տե՛ս Խանլարեան Կ., Հայ բնակչության էթնոկրոնական վերակերպումները Թուրքիայի Հանրապետությունում (1923-2005 թթ.), Անթիլիաս, 2009, էջ 276:

¹⁸²³ Տե՛ս Ալվրցյան Հ., Կրոնափոխ հայերի խնդիրները Թուրքիայի Հանրապետությունում, Եր., 2014, էջ 148:

¹⁸²⁴ Տե՛ս Շաքարյան Ա., Արարատից այն կողմ. Ապակողավորելով Թուրքիան, էջ 36:

կան համակարգը և պետական քարոզչությունը անընդհատ շեշտել են, որ երկիրը շրջապատված է թշնամիներով, որոնք չեն ցանկանում Թուրքիայի զարգացումը, ապահովությունը ու բարգավաճումը: Թուրքիայի քարոզչամեքենայի կողմից այս մոտեցումը գրեթե միշտ կիրառվել է՝ նպատակ ունենալով հանրությանը շեղել թուրքական հասարակության ներսում տեղի ունեցող զարգացումներից, սոցիալ-տնտեսական խնդիրներից, ինչպես նաև ներքաղաքական խնդիրներից՝ ստեղծելով արտաքին թշնամու դեմ համախմբվելու արհեստածին հրամայական: Չնայած այդ երևույթի արհեստական սրմանը, այնուամենայնիվ, վախի կարծրատիպերը գերակայող են թե հասարակական, թե քաղաքական շրջանակներում¹⁸²⁵:

«Սևրի սինդրոմի» կամ «սևրաֆորիայի» ընկալումները Թուրքիայում ունեն իրենց օբյեկտիվ պատճառները, քանի որ Թուրքիայի Հանրապետությունը հիմնվեց Օսմանյան կայսրության քայքայման ու մասնատման և պատերազմների գնով՝ կայսրությունից «փրկած» փոքրասիական տարածքների վրա: Թուրքիայի քաղաքական մշակույթը կրում էր «մնացածը պահելու» գերխնդրի ազդեցությունը: Թեև Սևրի պայմանագիրը կյանքի չկոչվեց, սակայն այսօր Թուրքիայում այն ընկալվում է՝ որպես «քողարկված մի գործիք», որը ցանկացած հարմար պահի կարող է օգտագործվել արտաքին ուժերի կողմից: «Սևրի սինդրոմն» առաջին հերթին ասոցացվում է Քրդական հարցի և Թուրքիայի տարածքում քրդական պետության հնարավոր ստեղծման, ինչպես նաև Հայկական հարցի ու Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հնարավոր գործընթացի հետ:

Թուրքական ռազմաքաղաքական վերնախավի այս մտավախություններն ուղղակիորեն կապված են Սևրի պայմանագրի համապատասխան հոդվածներում տեղ գտած դրույթների հետ:

¹⁸²⁵ Տե՛ս Հովսեփյան Լ., Թուրքիայի վախերը. Սևրի սինդրոմ (Սևրի սինդրոմի դրսևորումները Թուրքիայի հասարակական-քաղաքական քննարկումներում), Եր., 2012, էջ 63:

Ինչպես հայտնի է, Սևրի պայմանագրի՝ անմիջականորեն Հայաստանին վերաբերող 88-93-րդ հոդվածներով Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի որոշման հարցը թողնվում էր ԱՄՆ-ին, և Թուրքիան հրաժարվում էր Արևմտյան Հայաստանի Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի նահանգների մեծ մասը, ինչպես նաև Տրապիզոնի նահանգի մեկ երրորդի նկատմամբ իրավունքներից, որոնք նախատեսվում էր փոխանցվել Հայաստանի Հանրապետությանը՝ ելք ապահովելով դեպի Սև ծով¹⁸²⁶։ Պայմանագրի 62-64-րդ հոդվածներով էլ առաջին անգամ միջազգային մակարդակով արձարծվում էր Քրդական հարցը՝ թուրքական պետության կազմում նախատեսելով Քրդական ինքնավարություն, որին հետագայում հանրաքվեի միջոցով Թուրքիայից անկախանալու իրավունք էր տրվում¹⁸²⁷։

Հաշվի առնելով ՔԱԿ-ի զինյալ խմբերի ակտիվ գործունեությունը, ինչպես նաև Հյուսիսային Իրաքում Քրդական ինքնավարության ստեղծումը, տվյալ պահին Թուրքիայի քաղաքական, զինվորական, գիտական ու հասարակական շրջանակները՝ որպես «Սևրի սինդրոմի» դրսևորում և սպառնալիք, առաջին պլան են մղում քրդական խնդիրը։ «Սևրի սինդրոմի» ակտիվ քարոզչությամբ նշված շրջանակները փորձում են մի կողմից՝ համախմբել թուրք ազգը ներքին ու արտաքին սպառնալիքներին ու մարտահրավերներին դիմագրավելու գաղափարի շուրջ, իսկ մյուս կողմից՝ թուրքական հասարակության ուշադրությունը շեղել բազմաթիվ ներքին խնդիրներից։ Նման գործելաճը կարող է հակադարձ ազդեցություն ունենալ թուրքական իշխանությունների համար՝ ավելի խորացնելով ինքնության ճգնաժամը և նպաստել ոչ թուրք ժողովուրդների վերազարթոնքի գործընթացի արագացմանը։

¹⁸²⁶ Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923), խմբ. Ջ. Կիրակոսյան, Եր., 1972, էջ 676։

¹⁸²⁷ Տե՛ս Treaty of Peace with Turkey. Signed at Sevres. August 10, 1920. <http://treaties.fco.gov.uk/docs/pdf/1920/TS0011.pdf>

«Սևրի սինդրոմի» ընկալումներն առկա են Թուրքիայի ինչպես հասարակական, այնպես էլ քաղաքական, գիտական ու զինվորական շրջանակներում: Թուրքական զինվորականության կողմից պարբերաբար երկրի տարածքային ամբողջականությանն ուղղված սպառնալիքների հիշատակումները հնարավորություն են տալիս երկրի բարձրագույն հրամանատարությանն իրենց կայուն դերն ու ազդեցությունը պահպանել հասարակական-քաղաքական գործընթացներում: Այսպիսով, Թուրքիայի կառավարող ընտրախավը և, առաջին հերթին, բարձրաստիճան զինվորականությունը ազգային պետության ստեղծման նպատակով հասարակության մեջ զարգացրին «Սևրի սինդրոմի» գաղափարը, իսկ հետագայում այն վերափոխեցին ազգային անվտանգության բաղադրիչի¹⁸²⁸:

Թուրքիայի քաղաքական դաշտում գործող ծայրահեղ ազգայնական ուժերը՝ ինչպիսին են, օրինակ՝ «Գորշ գայլերը» կամ ԱՇԿ-ն, առավել ցավագին են վերաբերվում «Սևրի սինդրոմի» հետ կապված վախերին: Առաջնորդվելով արտաքին աշխարհի նկատմամբ անվտանգությամբ ու դավադրությունների տեսություններով՝ նրանք արտաքին ուժերի կողմից «Սևրի սինդրոմի» դրսևորում էին համարում ԵՄ-ին անդամակցելու գործընթացի շրջանակներում Թուրքիայում կատարվող ժողովրդավարացման բարեփոխումները և ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ուղղությամբ ձեռնարկվող քայլերը¹⁸²⁹: Ծայրահեղական ուժերը պատրաստ են անգամ արմատական քայլերի, ընդհուպ մինչև բռնությունների դիմել ներքին թշնամիների, այսինքն՝ ազգային փոքրամասնությունների դեմ, որոնք, իբր թե, ծառայում են արտաքին ուժերին և, այդպիսով, նպաստում են Թուրքիայի թուլացմանն ու մասնատմանը: Անշուշտ, ազգային փոքրամասնությունների նկատմամբ ծայրահեղ ազգայնականների գործողությունները հիմնականում ուղղորդվում և ղեկավարվում են հենց իշխանությո-

¹⁸²⁸ Տե՛ս Հովսեփյան Լ., Թուրքիայի վախերը. Սևրի սինդրոմ, էջ 29-30:

¹⁸²⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 4:

յունների կողմից: Սակայն երբեմն ծայրահեղականները դուրս են գալիս իշխանությունների վերահսկողությունից ու սկսում են գործել ինքնագլուխ, ինչը երկրի համար նոր սպառնալիքներ ու մարտահրավերներ է առաջացնում՝ ստիպելով վերջիններիս ազգայնականների նկատմամբ արդեն պատժիչ գործողությունների դիմել՝ երկրի քաղաքական համակարգում առաջացնելով նոր ցնցումներ:

Թուրքիայի Հանրապետության տնտեսության զարգացման աստիճանի և տնտեսական խնդիրներին անդրադառնալուց առաջ նախ պետք է արձանագրել այն իրողությունը, որ տվյալ երկրի տնտեսությունը ստեղծվել ու զարգացել է հայերի և տեղաբնիկ քրիստոնյա այլ ժողովուրդների ցեղասպանության հետևանքով նրանց ունեցվածքի և կապիտալի բռնագավթման հաշվին:

Առաջին հայացքից կարող է տպավորություն ստեղծվել, թե աշխարհի 16-րդ տնտեսությունն ունեցող և ԵՄ-ի մաքսային միության անդամ հանդիսացող Թուրքիան, որը 2000-ական թվականներին սկսեց կայուն տնտեսական աճ արձանագրել, տնտեսական լուրջ խնդիրներից ու ճգնաժամերից հեռու է: Սակայն Թուրքիայի անկայուն քաղաքական համակարգն իր բացասական ազդեցությունն է թողնում նաև երկրի տնտեսության վրա: Թուրքիայի տնտեսության առջև ներկայումս ծառացած լրջագույն խնդիրների ու մարտահրավերների շարքում բավական է նշել միայն արևմտյան նահանգների համեմատ արևելյան և հարավ-արևելյան նահանգների ծայրահեղ հետամնացությունը, օտարերկրյա կապիտալ ներդրումներից և ռուսական էներգակիրներից կախվածությունը, քաղաքական ցնցումների պատճառով օտարերկրյա կապիտալի արտահոսքի ռիսկերը, գործազրկության և թուրքական արժույթի սղաճի բարձր մակարդակը, արտաքին տնտեսական հսկայական պարտքը և այլն: Ինչպես երկրի քաղաքական համակարգի խնդիրները, այնպես էլ ներկայումս թուրքական տնտեսության մեջ առկա մարտահրավերներն իրենց ակունքներով հասնում են նախորդ դարի առաջին տասնամյակներ:

Թուրքիայի արևելյան և հարավ-արևելյան նահանգների հետամնացությունը իշխանությունները բացատրում էին աշխարհագրական անբարենպաստ հանգամանքներով, սակայն, իրականում միմյանց հաջորդած թուրքական կառավարությունները, որոշակի քաղաքական նկատառումներից ելնելով, լրջորեն չեն զբաղվել այդ տարածքների խնդիրներով: Թուրքիայի կառավարող շրջաններն արդեն յոթ տասնամյակ է փորձում են տնտեսական, էթնիկական, ազգային ու պատմական առումով յուրացնել արևելյան շրջանները, բայց նրանց ջանքերը ցանկալի արդյունք չեն տալիս: Ինչպես անցյալում, այնպես էլ ներկայումս արևելյան նահանգների հիմնահարցը հանդիսանում է աղքատության, հետամնացության, հիվանդությունների, ազգային ու սոցիալական ճնշման մի բարդ հանգույց: Արևելյան նահանգներում թուրքական իշխանությունների իրականացրած քաղաքականության գլխավոր սխալներից մեկն այն էր, որ նրանք այդ նահանգների բնակչության և, մասնավորապես, քաղաքային բնակչության սակավությունը դիտում էին ոչ թե որպես հետամնացության հետևանք, այլ՝ դրա պատճառ¹⁸³⁰: Հետագայում իշխանությունները արևելյան հետամնաց նահանգներում արդյունաբերական ձեռնարկություններ ստեղծելու հարցը փորձում էին լուծել գերազանցապես օտարերկրյա կապիտալ ներդրումների հաշվին: Սակայն այդ նահանգներն այդքան էլ զրավիչ չէին օտարերկրյա ներդրողների համար, որոնք ավելի արագ շահույթ ստանալու ակնկալիքով գերադասում էին ներդրումներ կատարել Թուրքիայի զարգացած արևմտյան նահանգներում: Աշխատատեղերի սակավությունը ստիպում էր արևելյան նահանգների բնակչությանն աշխատանք փնտրել Սև, Էգեյան և Միջերկրական ծովերի ափամերձ շրջաններում, որտեղ տարբեր բնագավառների, ինչպես, օրինակ՝ զբոսաշրջության, շինարարության զարգացման արդյունքում էժան աշխատուժի պա-

¹⁸³⁰ Տե՛ս Գալուստյան Հ., Հանրապետական Թուրքիայի կառավարության քաղաքականությունը արևելյան վիլայեթներում, էջ 91:

հանջարկ կար: Սակայն միշտ չէ, որ ապրուստի ավելի նպաստավոր պայմաններ գտնելու ակնկալիքով քաղաք եկած գյուղացիները կարողանում էին հարմար աշխատանք գտնել, քանի որ քաղաքային բնակչության՝ շատ կարճ ժամանակահատվածում ավելանալն, իր հերթին, հանգեցնում էր գործազրկության աճին և նորաստեղծ թաղամասերի բնակիչների աղքատացմանը: Այս ամենին ավելանում էին առողջապահության և կրթության ոլորտների խնդիրները, իսկ ենթակառուցվածքային համակարգը չէր հասցնում վերափոխվել բնակչության թվաքանակի աճի տեմպին համապատասխան, ինչի հետևանքով դժվարանում էր նոր քաղաքաբնակների կյանքը, և սրվում էին սոցիալական խնդիրները¹⁸³¹:

Թեև իշխանությունները հաղթահարեցին Թուրքիայի տնտեսության համար սովորական դարձած բազմաթիվ տնտեսական ճգնաժամերի հետևանքները, և որոշակի տնտեսական աճ արձանագրվեց, սակայն այդպես էլ չհաջողվեց նվազեցնել գործազրկության և սղաճի բարձր մակարդակը¹⁸³²: Թուրքական տնտեսության մեջ պահպանվում են ավանդական դարձած այնպիսի չլուծված խնդիրներ, ինչպիսին են՝ սովերային տնտեսության բարձր տոկոսը, եկամուտների անհամաչափ բաշխումն ու աղքատության բարձր մակարդակը: Վիճակագրական տվյալների համաձայն, Թուրքիայի բնակչության 30 %-ն աղքատ է, իսկ 13,5 %-ը՝ չքավոր¹⁸³³:

Թուրքական տնտեսության վերջին տասնամյակների վերլուծությունը ցույց է տալիս, որ տնտեսական ճգնաժամերը հաղթահարումն ու տնտեսական աճի ապահովումը կատարվել է գերազանցապես միջազգային ֆինանսական կազմակերպությունների վարկերի և օտարերկրյա ներդրումների հաշվին: Ինչպես հայտնի

¹⁸³¹ Տե՛ս Հարությունյան Վ., Թուրքիայի ակնինները. պատմության և քաղաքականության հարցեր, Եր., 2013, էջ 100:

¹⁸³² Տե՛ս Թուրքիա-ԵՄ-Հայաստան. մարտահրավերները և հնարավորությունները, էջ 32:

¹⁸³³ Տե՛ս Турция: новая роль в современном мире, с. 21.

է, օտարերկրյա կապիտալը չափազանց զգայուն է ներդրման երկրի քաղաքական ցնցումների նկատմամբ, իսկ Թուրքիայի նման երկրի քաղաքական համակարգին բնորոշ են անկայունությունը, հեղաշրջումներն ու դրանց փորձերը, ինչպես նաև ՔԱԿ-ի կողմից պարբերաբար իրականացվող ահաբեկչական գործողությունները: Թուրքիայի քաղաքական անկայուն իրավիճակի, ահաբեկչությունների և սիրիական պատերազմի հետևանքով օտարերկրյա ներդրողները սկսեցին երկրից դուրս բերել իրենց կապիտալները, ինչը բացասական հետևանքներ ունեցավ թուրքական տնտեսության կոնկրետ ոլորտների վրա: Մյուս կողմից, ֆինանսավորման արտաքին աղբյուրների ներդրման հաշվին երկրի տնտեսությունը զարգացնելու քաղաքականությունը հանգեցրեց նրան, որ Թուրքիայի արտաքին տնտեսական պարտքն ավելացավ ավելի քան չորս անգամ և 2011 թ. հասավ 310 մլրդ. դոլարի, ինչը կազմում էր երկրի ՀՆԱ-ի 42 %-ը¹⁸³⁴:

Թուրքիայի ՀՆԱ-ի կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունի ծառայությունների ոլորտը, որը վերջին տարիներին հատկապես զբոսաշրջության ոլորտի դինամիկ զարգացման շնորհիվ կայուն աճ է արձանագրել: Գաղտնիք չէ, որ ծառայությունների, սպասարկման ոլորտների և հատկապես զբոսաշրջության զարգացումը մեծապես կախված է օտարերկրյա քաղաքացիների հոսքից և դրանից ստացվող ֆինանսական եկամուտներից: Զբոսաշրջությունը թուրքական տնտեսության առավել զգայուն ոլորտներից է, որի զարգացման վրա խիստ բացասական ազդեցություն է թողնում Թուրքիայի նման երկրում անընդհատ տիրող ներքին անկայունությունը: Օրինակ, ռուս-թուրքական հարաբերությունների սրման հետևանքով ռուսաստանցի զբոսաշրջիկների հոսքը Թուրքիա շեշտակիորեն նվազեց, ինչի հետևանքով, Թուրքիայի հյուրանոցների սեփականատերերի ընկերակցության տվյալներով, այդ

¹⁸³⁴ St' u Турция: новая роль в современном мире, էջ 20:

երկրի տնտեսությունն ունեցավ 4,5–5 մլրդ. դոլարի վնաս, ինչը կազմում է այդ երկրի ՀՆԱ-ի մոտ 0,5 %-ը¹⁸³⁵:

Թուրքիան փորձում է էներգակիրների մատակարարման ու լորտում իր տնտեսությունն ազատել Ռուսաստանից լիարժեք կախվածությունից, սակայն թուրքական իշխանություններին այդպես էլ չի հաջողվում գազի լիարժեք և կայուն այլընտրանքային աղբյուրներ գտնել: Եթե 2002 թ. Թուրքիա գազի ներկրման ծավալների մեջ Ռուսաստանի մասնաբաժինը գերազանցում էր 62 %-ը, ապա անգամ Ադրբեջանից, Թուրքմենստանից, Իրանից, Եգիպտոսից ու Քաթարից գազի մատակարարման համաձայնագրերի իրացման դեպքում, ռուսական էներգակիրների ներկրման ծավալները կարող են կրճատվել ընդամենը մինչև 43 տոկոսի: Պետք է նշել, որ էներգետիկ համակարգի դիվերսիֆիկացման ուղղությամբ թուրքական իշխանությունների ձեռնարկած քայլերը դեռևս չեն տալիս ցանկալի արդյունք, քանզի, օրինակ, ադրբեջանական գազի համեմատաբար փոքր ծավալները Թուրքիային հնարավորություն չեն տալիս լիարժեքորեն մրցակցել Ռուսաստանի հետ¹⁸³⁶:

Այսպիսով, ինչպես Թուրքիայի քաղաքական համակարգում, այնպես էլ տնտեսության մեջ առկա չլուծված խնդիրները շարունակում են պահպանվել և ավելի խորանալ՝ վերածվելով երկրի անվտանգության լուրջ սպառնալիքների: Թվարկված խնդիրների չլուծման գլխավոր պատճառներից մեկն էլ այն է, որ թե՛ քաղաքական համակարգի, թե՛ տնտեսության բարեփոխման հարցերում թուրքական իշխանությունները ձեռնարկում են կիսաքայլեր, կատարված բարեփոխումներն էլ ոչ հետևողական և մակերեսային բնույթի են, երբեմն էլ իշխանությունների գործելաոճում նկատվում են արդեն կայացված որոշումներից և սկսված գործընթացներից նահանջելու միտումներ:

¹⁸³⁵ Տե՛ս Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հարցը Թուրքիայի արդի ներքաղաքական զարգացումների համատեքստում, էջ 127:

¹⁸³⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 134:

Թուրքիայի քաղաքական համակարգի, տնտեսության խնդիրների և մարտահրավերների, ինչպես նաև ոչ թուրք ազգային-կրոնական խմբերի իրավունքների պաշտպանության հարցերի ուսումնասիրությունը մեզ համար ամենևին էլ ինքնանպատակ չէ: Չափազանց կարևոր է նշված խնդիրները քննարկել Հայոց ցեղասպանության հիմնահարցի լույսի ներքո՝ պարզելու համար, թե դրանց շուրջ Թուրքիայում ընթացող զարգացումները ինչպես են ազդում և հետագայում ինչպես կարող են անդրադառնալ հայ ժողովրդի օրինական իրավունքների վերականգնման, այն է՝ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործընթացի վրա:

Հայերին և տեղաբնիկ այլ քրիստոնյա ժողովուրդներին ցեղասպանության ենթարկելուց ու բռնի մահմեդականացնելուց հետո էլ Թուրքիան շարունակում է մնալ բազմազգ ու բազմակրոն պետություն, սակայն թուրքական վարչակարգերը երկրի տարածքում բնակվող ոչ թուրք ազգային-կրոնական խմբերի նկատմամբ շարունակում էին վարել խտրական, էթնիկ զտումների, իսկ երբեմն էլ ցեղասպանական քաղաքականություն՝ ձգտելով միատարր թուրքական պետություն ստեղծել:

Թուրքական իշխանությունները չեն ճանաչում այդ երկիրը բնակեցնող մի քանի տասնյակ ազգերի ու ժողովուրդների գոյության փաստը՝ չխոսելով արդեն նրանց ազգային, լեզվական, մշակութային ու կրոնական իրավունքների մասին: Բացառություն են կազմում Լոզանի պայմանագրով կրոնական համայնքի իրավունք ստացած հայկական, հունական և հրեական համայնքները՝ այն էլ միայն Ստամբուլում: Չնայած Լոզանի պայմանագրով ստանձնած պարտավորություններին, թուրքական իշխանությունները հետևողականորեն ոտնահարում են անգամ միջազգային պայմանագրով ճանաչված այդ փոքրաթիվ համայնքների իրավունքները, որոնք, կենտրոնացած լինելով Ստամբուլում, որևէ վտանգ չեն ներկայացնում Թուրքիայի համար: Պետք է արձանագրել, որ ոչ թուրք ազգային ու կրոնական խմբերի նկատմամբ թուրքական իշխանություն-

ների վարած քաղաքականությունը ձախողվել է և չի հասել իր նպատակին, քանզի երկրի արևելյան նահանգներում շարունակում են գոյատևել էթնոկրոնական այն խմբերը, որոնց այդքան ջանասիրաբար ձգտում էին վերացնել թուրքական իշխանությունները: Ստեղծված պայմաններում Թուրքիայում բնակվող ոչ թուրք ազգային ու կրոնական խմբերի՝ իրենց ինքնությունը պահպանելուն ուղղված պայքարն ընդունում էր նորանոր ձևեր՝ ներքին անհնազանդությունից ու համառ դիմադրությունից մինչև զինված պայքար¹⁸³⁷:

Թուրքական իշխանությունների դիրքորոշումը Հայոց ցեղասպանության և, հատկապես, այդ հանցագործության հետևանքների հաղթահարման հարցի նկատմամբ հետևողականորեն շարունակում է մնալ կոշտ և անզիջում: Գիտակցելով կոշտ ժխտողականության անհեռանկար լինելը և ձգտելով Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ մեղմել Թուրքիայի վրա այդ հարցում միջազգային հանրության ուժեղացող ճնշումը, թուրքական վարչակարգը փորձեց կիրառել 'Դավաթողլուի'՝ երեք հիմքերի վրա խարսխվող «փափուկ ժխտման» նոր ռազմավարությունը: Նոր ռազմավարության առաջին հիմքից ելնելով, թուրքական կողմը Հայոց ցեղասպանության հարցում շեշտը փորձում էր դնել նրբագացության վրա, ասելով՝ «Ես զգում եմ ձեր ցավը» և 2015 թ. ընդառաջ մշակվեց ու հրապարակվեց համապատասխան հայտարարություն: Երկրորդ հիմքը «սփյուռք» եզրույթի վերաիմաստավորումն էր և «թուրքական սփյուռք» հասկացությամբ այն փոխարինելը, ինչից ելնելով թուրքական սփյուռք էին համարվում ոչ միայն արտասահմանյան երկրներում ապրող թուրքերը, այլև՝ թուրքական պետության տարածքներից բոլոր արտագաղթածները: Իսկ երրորդ հիմքը համարվում էր Հայաստանի հետ Թուրքիայի հարաբերությունների բարելավումը: Թուրքական վարչակարգը քայլեր

¹⁸³⁷ Տե՛ս Մարության Ա., Հայոց ցեղասպանության հարցը Թուրքիայի արդի ներքաղաքական զարգացումների համատեքստում, էջ 139:

ձեռնարկեց նոր ռազմավարության երեք հիմքերը կենսագործելու ողողությամբ: Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցից առաջ Էրդողանը և Դավութօղլուն հանդես եկան «ընդհանուր ցավի» մասին հայտարարումներով և, ներողություն խնդրելու փոխարեն, ցավակցեցին հայ ժողովրդին: Բացի այդ, փորձ արվեց սեպ խրել Հայաստանի և Սփյուռքի միջև, երբ վերջինիս որոշ ներկայացուցիչների հետ թուրք դիվանագետներն ու պաշտոնյաները փորձում էին բանակցել ու համոզել, որ նրանք, որպես օսմանահպատակների ժառանգներ, կարող են վերադառնալ Թուրքիա, ստանալ այդ երկրի քաղաքացիություն և վերականգնել իրենց նախնիների իրավունքները: Հայաստանի հետ հարաբերությունները թուրքական կողմը փորձում էր բարելավել ցյուրիխյան արձանագրությունների ստորագրման ու հետագա վավերացման միջոցով: Պետք է արձանագրել, սակայն, որ երեք ուղղություններով էլ թուրքական կողմի ջանքերը ձախողվեցին: Թուրք պաշտոնյաների կոչը, թեև դրական գնահատվեց եվրոպական երկրների որոշ գործիչների կողմից, սակայն պատշաճ ուշադրության չարժանացավ ո՛չ Սփյուռքի և ո՛չ էլ Հայաստանի կողմից, քանզի թուրք պաշտոնյաներից ակնկալվում էին ոչ թե ցավակցության, այլ ներողության խոսքեր, իսկ ցավակցական ուղերձը դիտվեց՝ որպես թուրքական ցինիկ ժխտողականության հերթական դրսևորում: Ավելին, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նորանոր երկրներ միացան այդ հանցագործությունը ճանաչած ու դատապարտած պետությունների շարքին:

Թուրք բանագնացների՝ Սփյուռքի հետ տարվող «բանակցությունները» տապալվեցին, քանզի հայկական համայնքների ներկայացուցիչները քաջ գիտակցում էին, որ թուրքական առաջարկներն իրականում խնդիրն աղավաղելու հերթական փորձն էին և, որ Թուրքիայի նման երկրում օսմանահպատակների ժառանգները, անգամ այդ երկրի քաղաքացի դառնալով, իրենց նախնիների իրավունքների վերականգնման որևէ երաշխիքներ չեն կարող ունենալ ճիշտ այնպես, ինչպես նման երաշխիքներ չունեին իրենց նախնիները և այժմ էլ չունեն այդ երկրի քաղաքացի համարվող և այնտեղ

ապրող բոլոր ոչ թուրք ժողովուրդների ներկայացուցիչները: Հայաստանի հետ հարաբերությունների հաստատումը նույնպես տալովեց, քանի որ թուրքական կողմը, որը հարաբերությունների հաստատման գործընթացում, իբր առաջնորդվում էր առանց նախապայմանների հարաբերություններ հաստատելու մոտեցմամբ, ցյուրիիյան արձանագրությունների ստորագրումից անմիջապես հետո առաջ քաշեց Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ադրբեջանական կողմի պահանջները, հրաժարվեց փաստաթղթերի վավերացումից և տալովեց այդ ուղղությամբ միջազգային հանրության ձեռնարկած ջանքերը¹⁸³⁸:

Չնայած Թուրքիայում Հայոց ցեղասպանության թեմայի շուրջ արգելքների վերացմանն ու այդ հարցի վերաբերյալ իրազեկվածության մակարդակի որոշակի բարձրացմանը, տվյալ երկրի հասարակության մեծագույն դեռևս պատրաստ չէ քննարկել Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը, ուր մնաց՝ այդ հանցագործության հետևանքների հաղթահարման բազմաշերտ խնդիրները:

Ամփոփելով Թուրքիայի ներքաղաքական զարգացումների լույսի ներքո Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և այդ հանցագործության հետևանքների հաղթահարման հարցերի քննությունը, կարող ենք առանձնացնել հետևյալ եզրահանգումներն ու առաջարկները.

1. Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման նպատակով, անշուշտ, հարկավոր է խոսել թուրքերի հետ, նրանց իրազեկել ցեղասպանության ընթացքում մեր ժողովրդի կրած տառապանքների մասին, ներկայացնել Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցում թուրքական կողմից մեր ակնկալիքները, ինչպես նաև հայերի և թուրքերի ներկա ու ապագա հարաբերությունների կարգավորման մեր մոտեցումները: Այս առումով պետք է նշել, որ արդեն քսան տարի թուրք հասարակությ-

¹⁸³⁸ Տե՛ս Մարության Ա., Հայոց ցեղասպանության հարցը Թուրքիայի արդի ներքաղաքական զարգացումների համատեքստում, էջ 333-335:

յան մեջ այս խնդիրները բարձրաձայնվում են Թուրքիայի հայերի՝ ինչպես պոլսահայության, այնպես էլ ծպտյալ հայերի ներկայացուցիչների կողմից: Չափազանց կարևոր պետք է համարել, որ այդ գործընթացն արդեն սկսվել է հենց թուրքահայերի կողմից, սակայն նրանք չպետք է միայնակ մնան իրենց ձեռնարկումներում, այլ պետք է ստանան ամբողջ հայության աջակցությունը: Նշված հարցերի շուրջ թուրքերի հետ երկխոսություն սկսելուց առաջ նախ հարկավոր է ընտրել թիրախային գրուցակցի՝ մտավորականության այն հատվածին, որը չի ուղղորդվում իշխանությունների կամ ծայրահեղ ազգայնական ուժերի կողմից, հակառակ պարագայում ձեռնարկված ջանքերը կլինեն ապարդյուն, անտեղի կվատնվեն ռեսուրսներն ու ժամանակը: Կարծում ենք, որ թուրք հասարակության մեջ նշված հարցերի շուրջ երկխոսություն ծավալելու համար համապատասխան թիրախային զանգվածների ընտրության, նրանց հետ տարվելիք աշխատանքի կազմակերպման հարցում խելամիտ կլինի ապավինել պոլսահայերի և ծպտյալ հայերի միջնորդությանը:

2. Թուրքիայի ներքաղաքական խնդիրների ողջ ներկայակի լույսի ներքո Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցի դիտարկման պարագայում պարզ է դառնում այդ հիմնահարցի ակնհայտ բխումը ոչ միայն թուրքական պետության շահերի, այլև քրդական գործոնի հետ: Անհնար է անտեսել այն իրողությունը, որ անգամ Հայոց ցեղասպանությունը ճանաչող քրդական շարժման առաջնորդները Արևմտյան Հայաստանը համարում մի տարածք, որտեղ պետք է ձևավորվի Քուրդիստան պետական կազմավորումը, իսկ հայերը և այլ քրիստոնյաները լավագույն դեպքում այնտեղ կարող են բնակվել քրդական գերակշիռ զանգվածի հետ համակեցության սկզբունքով: Առկա իրողություններից ելնելով՝ թուրքական իշխանությունների դեմ պայքարի հայ-քրդական հնարավոր համագործակցության խնդիրը կարող է քննարկվել միայն Քրդական հարցում հայկական կողմի մշակած հստակ ռազմավարության առկայության պայմաններում: Ռազմա-

վարության մշակումից հետո հնարավոր է քրդական շարժման ղեկավարների հետ ոչ պաշտոնական հանդիպումների ժամանակ նրանց ներկայացնել հայկական կողմի այն սկզբունքային մոտեցումները, որոնց շուրջ համաձայնություն ձեռք բերելուց հետո միայն կարելի է քննարկել համագործակցության խնդիրները: Մասնավորապես, քուրդ գործիչների հետ ոչ պաշտոնական քննարկումների ժամանակ հայկական կողմի համար ելակետային պետք է լինեն Հայոց ցեղասպանության իրականացման և հայերի ունեզրկման գործում քրդերի՝ հանցակից լինելու դրույթի անվերապահ ընդունումը, իսկ հնարավոր համագործակցության հեռանկարները պետք է պայմանավորվեն Արևմտյան Հայաստանի և ինքնավար Քուրդիստանի սահմանների հստակեցման հարցերում Սևրի պայմանագրի 62-64-րդ հոդվածների դրույթները քուրդ գործիչների կողմից ընդունելու հանգամանքով: Սևրի պայմանագրի նշված հոդվածներով քրդական ինքնավարության կազմում ներառվում են Եփրատից հարավ ընկած Դիարբեքիրի նահանգի, Բիթլիսի և Վանի նահանգների այն հատվածները, որոնք չէին մտնելու Հայաստանի կազմի մեջ, ինչպես նաև Մոսուլի նահանգը:

3. Քրդական շարժման ղեկավարների հետ քննարկումների գնալիս անպայման պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ թուրքական իշխանությունները ներկայումս ակտիվորեն շահարկում են ծպտյալ հայերի հարցը, փորձում են այն հակադրել Քրդական հարցին՝ նպատակ հետապնդելով լարում մտցնել քրդերի և ծպտյալ հայերի հարաբերություններում, քրդերին մղել Թուրքիայի արևելյան նահանգներում բնակվող հայերին որպես մրցակից տարր ընկալելուն՝ դրանից բխող վտանգավոր հետևանքներով: Արևմտյան Հայաստանի բնակավայրերում հայերի ներկայությունը, նրանց ազգային վերագարթոնքի փորձերը դեռևս դրական են գնահատվում և, երբեմն, նաև քաջալերվում են քրդական միջավայրում, ուստի մեր քայլերով որևէ կերպ չպետք է խաթարենք ներկա դրությունը: Մա նշանակում է, որ մենք պետք է արագացնենք արդեն սկսված աշխատանքները նաև ծպտյալ հայության խնդիրների

լուծման ռազմավարության մշակման ուղղությամբ, քանզի, եթե ծպտյալ հայությունն իր գործունեությունը շարունակի հայություն-նից ու հայկական պետությունից կտրված, տարերային ձևով, ապա այն կարող է ծառայեցվել տարբեր համաշխարհային ու տարածաշրջանային քաղաքական ուժերի շահերի սպասարկմանը և, ի վերջո, մարել: Ռազմավարության մեջ առաջնահերթ տեղ պետք է հատկացվի ծպտյալ հայերի անվտանգության հարցին և պետք է առաջարկվեն այնպիսի մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան վերագարթոնքի փուլում գտնվող, բռնի իսլամացված մեր հայրենակիցների ներուժն, առանց նրանց վնասելու, վերածել գիտակցված ազգային շարժման:

4. Ի տարբերություն քրդերի, շատ ավելի դյուրին է համագործակցության եզրեր գտնել Թուրքիայում իրենց թվաքանակով թուրքերից և քրդերից հետո երրորդ խումբը հանդիսացող ալևիական համայնքի առաջնորդների հետ, քանզի ալևիների հետ միննույն տարածքի նկատմամբ, իբրև հայրենիքի, մենք հավակնություններ չունենք: Ալևիները կարող են բնական դաշնակիցներ համարվել նաև ծպտյալ հայերի համար, քանզի նրանց միջև պատմականորեն ձևավորվել են բարեկամական հարաբերություններ, իսկ նախորդ պատմափուլերում օրինակ Դերսիմում նրանց միջև խաղաղ գոյատևման և թուրքական իշխանությունների դեմ համատեղ պայքարի մեծ փորձ է կուտակվել: Բացի այդ, ի տարբերություն քրդերի, ալևիների ու ծպտյալ հայերի միջև նկատելի են որոշակի ընդհանրություններ, երկու խմբերն էլ Թուրքիայում ստիպված են եղել ծպտյալ մնալ և թաքցնել իրենց ինքնությունը: Ծպտյալ հայերի իրավունքները պաշտպանելու և նրանց օգնություն ցուցաբերելու հարցում մեզ համար լիովին կարող է ընդօրինակելի լինել ալևիների եվրոպական կառույցների փորձը: Ալևիների հետ համագործակցությունը, սակայն, պետք է իրականացվի չափազանց զգուշությամբ՝ որևէ կերպ չգրգռելով քրդերի խանդը և չմոռանալով, որ ալևիների մեջ որոշակի տեղ ու դեր ունեն նաև քուրդ ալևիները:

5. Թուրքական իշխանությունները ժառանգաբար շարունակում են վարել նախորդ վարչակարգերի խտրական քաղաքականությունը և բռնությունները Թուրքիայի ոչ մահմեդական համայնքների նկատմամբ: Այս առումով Պոլսի Հայոց պատրիարքարանը հնարավորինս պետք է դյուրին դարձնի բռնի իսլամացված հայության կրոնադարձության գործընթացը՝ վերացնելով գոյություն ունեցող արհեստական դժվարություններն ու խոչընդոտները, իսկ Ստամբուլի համայնքը պետք է սերտորեն համագործակցի իսլամացված հայերի հայրենակցական միությունների հետ՝ հնարավորինս հեշտացնելով պաշտոնական հայկական համայնքում նրանց ինտեգրումը: Ցեղասպանության, բռնի մահմեդականացման, ինչպես նաև միսիոներական գործունեության հետևանքով իրարից տարանջատված հայության՝ Թուրքիայում բնակվող հատվածները պետք է մի կողմ դնեն իրենց միմյանցից հեռացնող ու թուլացնող կրոնական տարբերությունները և առաջնորդվեն ազգային միասնականության սկզբունքով, որպեսզի կարողանան դիմակայել թուրքական իշխանությունների կողմից իրենց նկատմամբ ներկայումս էլ իրականացվող խտրական քաղաքականությունը:

6. Պոլսի Հայոց պատրիարքարանը պետք է ավելի սերտացնի համագործակցությունը Լոզանի պայմանագրով Թուրքիայի պաշտոնապես ճանաչված և չճանաչված ոչ մահմեդական փոքրամասնությունների հոգևոր առաջնորդարանների հետ: Ոչ մահմեդական համայնքների հոգևոր առաջնորդները պետք է գիտակցեն, որ, առանց անառողջ մրցակցության ու թուրքական իշխանություններին հաճոյանալու մղումների, միասնաբար ավելի արդյունավետ կարող են պայքարել Թուրքիայի ներսում իրենց համայնքների իրավունքների պաշտպանության և եկեղեցիների ու կավածքների նկատմամբ սեփականության իրավունքի վերականգնման համար: Միջազգային կառույցներում Թուրքիայի ոչ մահմեդական համայնքների առաջնորդների ձայնն ավելի լսելի կդառնա, եթե նրանք միջազգային հանրությունից միասնաբար պահանջեն ճնշում

գործադրել թուրքական պետության վրա՝ վերջինիս հարկադրելով կատարել միջազգային համաձայնագրերով ստանձնած ոչ թուրքական մշակութային ժառանգության պահպանման ու պաշտպանության պարտավորությունները:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

**Գարեգին Ա. քահանա Պողարեանի կողմից պատրաստված Այնթապի
ազգապատկան կալվածքների ցանկը, 1922 թ.¹⁸³⁹**

Թիւ	Թաղ եւ Անուն	Օսմ. ոսկի
1-8	Հին Եկեղեցի (Ազգ. Լսարան), Նոր Եկեղեցի, Առաջնորդարան, Քահանայից Խուց եւ Ժամկոչատուն, Մանկապարտեզ, Դպրաց Դասի սենեակներ, Հայկանուշեան Վրժ. Եկեղեցապատկան 14 խանութներ եւ տէլիպ:	100.000
9	Սարգիս Գարամանուկեանի տունը	1.000
10	Էպլահան շուկային մէջ խանութ մը	100
11	Աղեօլ – Սահակեան Վարժարան	800
12	Աղեօլ – Սարգիս Գալուզճեանի տունը	200
13	Աղեօլ – Նոր թաղամասի հողը եւ տուները	2.600
14	Գուրպը Մունէա Ահմէտ – Վահանեան Վարժարան	300
15	Գուրպը Գուզանը – Լուսաւորիչեան Վարժարան	500
16-17	Գուրպը Գուզանը – Ազգ. Գերեզմանոց եւ Սումագլըզ	40.000
18	Չուգուր – Ազգ. Ներսէսեան Վարժարան	16.000
19	Չուգուր – Պոսթան, Տէլլիպ եւ տուններ	8.000
20	Չուգուր – Պալըզը շուկայի խանութները	2.500
21	Գայաճըզ – Լուսիա Անտիլեանի տունը	300
22	Գուրպը Զէնճիրլի – Ազգ. Հայկազեան Վարժարան	3.000
23	Գուրպը Զէնճիրլի – Յակոբ Սթամպուլեանի տունը	500
24	Էհլի Ճէֆա – Հայկական Ծաղկոց, փութ եւ 2 խանութ	1.500
25	Իպնի Շէքեր – Միլլէթ Խանը	30.000

¹⁸³⁹ Պատմութիւն Անթապի Հայոց, աշխատասիրեց ու խմբագրեց Սարաֆեան Գ., Լոս Անճէլըս, Ա. հատոր, 1953, էջ 441-442:

26-27	Իպնի Շէքեր – Միլլէթ Գահվէսի եւ 3 խանութ	800
28	Գալա Ալթը – Ոսկերչաց շուկայի մէջ 2 խանութ	200
29	Իպնի Քէօր – Արմենեան Վարժարան	200
30-31	Աղեօլ – Հօթել, Սրճարան եւ խանութներ	12.000
32-33	Գուզանլը – 8 խանութ, փուռ մը եւ տուն մը	5.000
34	Իպնի Էյուպ – Ուզուն Գրգի տունը	100
35-36	Իպնի Էյուպ – Հոփսիսմեանց Վրժին. եւ խանութներ	2.500
37	Հայիկի Զիւմեան – Վարդանեան կրթական և տուները	10.000
38-39	Աղեօլ - Կիլիկեան Ճեմարան, շէնքերը եւ հողը	12.000
40	Գայաճըզ – Եաղուպեանի տունը	300
41	Գայաճըզ – Լուսիա Խաթունի տունը	1.000
42	Գուզանլը - Պիլէմճեաններու տունն ու խանութները	250
43	Գուրպը Գուզանլը – Ս. Կ. Նազարեանի Ներկատունը	1.000
44	Հայիկ Պապա – Գօճա Գէորգեանի խանութը	50
45	Էթրաֆը Շէիր – Տէր Ներսէս Հօր եւ Յ. Համալեանի այգին	500
46-47	Էթրաֆը Շէիր – Համամլը Պաղ. Հող եւ այգիներ	2.800
48-49	Հայիկի Զիւմեան – Ադենական Վարժարան եւ խանութներ	9.800
50	Հայիկի Զիւմեան – Տէյիքմէնճեանի տունը	200
51	Աղեօլ - Էթրաֆը Շէիր – Ադենական Վարժ-ի 10.000 կանգուն հողը	500
52	Գարակէօզ – Սէնկի Նազգաշ – Եկեղեցասիրացի պատկ. Տուն ու խանութներ	3.000
Ընդհանուր Գումար		269.500

**Լևոն Նազարյանի կողմից տրամադրված 1909 թ. Այնթապի
հայ վաճառականների անվանացանկը¹⁸⁴⁰**

Միլլեթ Խանին մեջ				
1.	Յակոբճան Եղորեան	Լուսաւ.	սուրճ եւ շաքար	Այնթապցի
2.	Սահակ Պժեան	Լուսաւ.	մանուսայի վաճառական	Բալուցի
3.	Մովսէս Փափագեան	Բողոք.	մանուսայի վճռկ.	Այնթապցի
4.	Գէորգ Հորոմեան	Լուսաւ.	մանուսայի վճռկ.	Կիւրիւնցի
5.	Ներսէս Սիլահեան եւ Եղբարք	Լուսաւ.	դերձան, կաշի եւն.	Այնթապցի
6.	Մատթէոս Երկայնեան եւ Սերոբ Քէշիշեան	Լուսաւ.	մանուսայի առեստրական	Կեսարացի
7.	Յովհաննէս Պժեան	Լուսաւ.	մանուսայի առեստրական	Բալուցի
8.	Պասմաճեան Եղբարք	Լուսաւ.	մանուսայի առեստրական	Այնթապցի
9.	Մկրտիչ Քէշկէկեան	Լուսաւ.	մանուսայի առեստրական	Արաբկիրցի
10.	Ճեպէճեան Եղբարք	Լուսաւ.	դերձան եւ կաշի	Այնթապցի
11.	Մըղսի Գէորգ Լէյլէկեան	Լուսաւ.	մանուսայի վաճառական	Այնթապցի
12.	Փիլիպպոս Աղճեան	Լուսաւ.	մանուսա եւ դերձան	Աշոտցի
13.	Հաճի Մովսէս Լէյլէկեան	Լուսաւ.	մանուսա եւ դերձան	Այնթապցի
14.	Յովհաննէս Խաշխաշեան	Լուսաւ.	մանրավաճառ	Կիւրիւնցի
15.	Միսաք Նուրիանեան	Բողոք.	մանրավաճառ	Չնգուշցի

¹⁸⁴⁰ Պատմութիւն Անթէպի Հայոց, աշխատասիրեց ու խմբագրեց Սարաֆեան
Գ., Լոս Անճէլըս, Բ. հատոր, 1953, էջ 311-312:

16.	Կարապետ Պարսումեան	Բողոք.	սեղանաւոր	Այնթապցի
17.	Եղիշէ Բարսեղեան	Լուսաւ.	մանուսա	Պիթլիսցի
18.	Կարուճ Մերճանեան	Լուսաւ.	մանուսա	Այնթապցի
19.	Սարգար Ճիկերճեան	Լուսաւ.	մանուսա	Արաբկիրցի
20.	Կարապետ Գալուստեան	Լուսաւ.	մանուսա եւ այլն	Արաբկիրցի
21.	Արմենակ Այճեան	Լուսաւ.	մանուսա եւ դերձան	Արաբկիրցի
22.	Կարապետ Արուսեան	Լուսաւ.	մանուսա եւ դերձան	Տիգրանակե րտցի
23.	Կարապետ Պագիկեան	Լուսաւ.	մանուսա	Տիգրանակե րտցի
Նագար Աղա Խանին մէջ				
24.	Գէորգ Թօփալաշեան	Լուսաւ.	կարպետի վճռկն.	Կիւրինցի
25.	Սարգիս Սահակեան եւ Յովսէփ Սահակեան	Լուսաւ.	սեղանաւորներ	Այնթապցի
26.	Պետրոս Աշճեան	Լուսաւ.	սեղանաւոր եւ հողատէր	Այնթապցի
27.	Ստեփան Քէշիշեան	Լուսաւ.	դերձան եւ այլն	Աշոտցի
28.	Լեւոն Սահակեան	Լուսաւ.	դերձան եւ այլն	Այնթապցի
29.	Յովհաննէս Փիրանեան	Լուսաւ.	մանուսա	Կիւրինցի
30.	Կարապետ Չազըճեան	Լուսաւ.	դերձան եւն.	Կեսարացի
31.	Գրիգոր Եսայեան			Այնթապցի
32.	Բիւզանդ Սուքիասեան	Լուսաւ.	չիթ եւ դերձան	Այնթապցի
33.	Յակոբ Արսլանեան եւ Որդի	Լուսաւ.	պղնձի վճռկ.	Թօգաթցի
34.	Գրիգոր Գապագճեան եւ Որդի	Լուսաւ.	մանուսա	Այնթապցի
35.	Ռուբեն (Սաաթճը)	Լուսաւ.	Ժամագործ	Այնթապցի

Հաճի Էօմէր Խանին մէջ				
36.	Մանուէլ Թոպալաշեան	Լուսաւ.	օճառի վճռկն.	Կիւրիցի
37.	Կարապետ Պապիկեան	Լուսաւ.	մանուսա	Աշոտցի
38.	Թորոս Սահակեան	Լուսաւ.	սեղանաւոր	Աշոտցի
39.	Մելգոն Գապագեան եւ Եղբարք	Լուսաւ.	մանուսա	Այնթապցի
40.	Յարութիւն Լեւոնեան եւ Եղբարք	Բողոք.	մանուսա	Այնթապցի
41.	Ծերուն Ծերնիկեան	Լուսաւ.	հոգգա մալը	Մալաթիացի
42.	Յովհաննէս Սաաթճեան	Լուսաւ.	մանուսա	Այնթապցի
43.	Յովհաննէս Լեւոնեան	Բողոք.	Սեղանաւոր եւ պիստակ	Այնթապցի
Սահակեան-Ղազարեան Խանին մէջ				
44.	Գալուստ Ղազարեան եւ որդիք Թորոս, Կարապետ, Յակոբ, Նազար	Լուսաւ.	մանուսա եւ այլն	Աշոտցի
45.	Նազարէթ Մանուշակեան	Լուսաւ.	մաքսատան ապրանքներ	Այնթապցի
46.	Գէորգ Թաթարեան	Լուսաւ.	մանուսա	Կեսարացի
47.	Սարգիս Պ. Նազարեան	Լուսաւ.	մանուսա	Այնթապցի
Իքի Գաբրիլ Խանին մէջ				
48.	Տիգրան Ռուբին Եկաւեան	Լուսաւ.	մանուսայ եւ այլն	Արաբկիրցի
49.	Սարգիս Կ. Նազարեան	Լուսաւ.	մանուսայ եւ այլն	Այնթապցի
50.	Կարապետ Ղազարեան	Բողոք	մանուսայ եւ այլն	Այնթապցի
51.	Գէորգ Տէմիրճեան	Լուսաւ.	երկաթ	Այնթապցի
52.	Մովսէս Ամմիեան	Լուսաւ.	բամբակ	Այնթապցի
53.	Կարապետ Հինտոեան	Լուսաւ.	իւղ եւն	Այնթապցի

Եփրսիքձի Խանին մէջ				
54.	Մովսէս Արսլանեան	Կաթոլիկ	պղինձ	Այնթապցի
Էմիր Ալի Խանին մէջ				
55.	Ե. Գարամանուկեան եւ Եղբարք	Բողոք.	մանուսայ	Այնթապցի
Պասամճեան Խանին մէջ				
56.	Հաճի Յարութին Պասամճեան	Բողոք.	վաճառական	Այնթապցի
Խաներէն դուրս գտնուող վաճառականներուն անունը				
57.	Հաննէ Էֆ. Քիրքճեան	Բողոք.	օճառ	Այնթապցի
58.	Կարապետ բէյ Նազարեթեան	Լուսաւ.	օճառ եւ բերքեր	Այնթապցի
59.	Արտաշէս Ատանալեան	Լուսաւ.	օճառ	Սվազցի
60.	Սարգիս Գրաճեան	Լուսաւ.	ասեղնագործ.	Այնթապցի
61.	Յովսէփ Առաքելեան	Լուսաւ.	մանիֆ. եւ չխար	Այնթապցի
62.	Կարուճ Գարամանուկեան	Բողոք.	մանիֆ. եւ ասեղործ.	Այնթապցի
63.	Կարապետ Եաղսրզեան	Լուսաւ.	մանուսայ	Այնթապցի
64.	Յարութին Ամմիեան	Լուսաւ.	մանուսայ	Այնթապցի
65.	Մելգոն Գարամանուկեան	Լուսաւ.	մանուսայ	Այնթապցի
66.	Յակոբ Պողարեան	Լուսաւ.	մանուսայ	Այնթապցի
67.	Գէորգ Ճէպէճեան	Լուսաւ.	մանուսայ	Այնթապցի
68.	Օհան Գիւբէլեան	Բողոք.	դերձան	Այնթապցի
68.	Նազար Պէրէճիկլեան	Բողոք.	սեղանաւոր	Այնթապցի
70.	Յարութին Պէրէճիկլեան	Բողոք.	սեղանաւոր	Այնթապցի
71.	Միսաք Մաթեոսեան	Բողոք.	Սինկիր մեքենայ եւ կերպաս	Այնթապցի
72.	Հրանտ Սիւլահեան	Լուսաւ.	կարպետ	Այնթապցի

73.	Յակոբ Պէգճիւեան	Բողոք.	դէղօրայք	Այնթապցի
74.	Յարութիւն Քիւրքճեան	Բողոք.	մանիւֆաթուր ա	Այնթապցի
75.	Յովսէփ Քենտիրճեան	Կաթոլ.	մանիւ.ֆ. եւ հողատեր	Այնթապցի
76.	Մինաս Քենտիրճեան	Կաթոլ.	մանիւֆաթուր ա	Այնթապցի
77.	Մովսէս Թոփչեան	Կաթոլ.	մանիւֆաթուր ա	Այնթապցի
78.	Գէորգ Լօշխաճեան	Բողոք.	մանիւֆաթուր ա	Այնթապցի
79.	Յովհ. Պէրէճիկլեան	Բողոք.	սեղանաւոր	Այնթապցի
80.	Աբրահամ Պապիկեան	Բողոք.	սեղանաւոր	Այնթապցի
81.	Թորոս Գրաճեան	Լուսաւ.	վաճառական	Այնթապցի
82.	Գէորգ Գրաճեան	Լուսաւ.	վաճառական	Այնթապցի
83.	Յովհ. Ճէպէճեան	Բողոք.	կալուածատէր	Այնթապցի
84.	Եղիա Խարաճեան	Լուսաւ.	վաճառական	Այնթապցի
85.	Գիրգոր Ճէպէճեան	Բողոք.	վաճառական	Այնթապցի

Այնթապի վարպետ մանուսայագործներ¹⁸⁴¹

Տեղւոյն Վրայ Ծախողներ

1.	Կարուճ Թերգիպաշեան	19.	Աւետիս Հասրըճեան
2.	Գրիգոր Թինքճեան	20.	Նահապետ Արսլանեան
3.	Ներսո Տէյիքմէնճեան	21.	Միքայէլ Արսլանեան
4.	Մովսէս Հասրըճեան	22.	Սեպուհ Զաքմագճեան
5.	Սարգիս Կ. Նազարեան	23.	Սաաթճեան Եղբարք
6.	Սարգիս Պ. Նազարեան	24.	Պետրոս Կիրակոսեան
7.	Կարուճ Պասամաճեան	25.	Արմ. Կէօգիքիւհիկեան
8.	Յարութիւն Պասամաճեան	26.	Թիւթիւնճեան Եղբարք
9.	Մ. և Գր. Գավգճեան	27.	Կիւլէտէրեան Եղբարք
10.	Գէորգ Զուլճեան	28.	Տ. Ղազարեան Եղբարք
11.	Յարութիւն Մարաշլեան	29.	Մարգար Ճիլերճեան
12.	Պետրոս Տ. Պոտրոսեան	30.	Լէւոնեան Եղբարք
13.	Գէորգ Տէմիրճեան	31.	Եաղուպեան եւ Որդիք
14.	Արտաշէս Թահթաճեան	32.	Գէորգ Ճէպէճեան
15.	Սարգիս Գասարճեան	33.	Գիրգոր Մանուշակեան
16.	Սարգիս Պազարպաշեան	34.	Արմենակ Մանուշակեան
17.	Յակոբ Համալեան	35.	Սերոբ Քէշիշեան
18.	Եսրոն Պօշկէզէնեան	36.	Սարգիս Զօրպաճեան

Թէ Տեղւոյն Վրայ եւ Թէ Այլ Քաղաքներ Ղրկողներ

1.	Փափագեան Եղբարք	9.	Գէ. Միլահեան եւ Որդիք
2.	Պամաճեան Եղբարք	10.	Պ. Հասրըճեան եւ Որդիք
3.	Ե. Գարամանուկեան Եղբք.	11.	Ատազլեան եւ Որդիք
4.	Գապագեան Եղբարք	12.	Կարուճ Մէրճէնեան
5.	Լէյլէկեան Եղբարք	13.	Կարապետ Գարդաեան
6.	Եագուպ եւ Առաքել Առաքելեան եղբրք.	14.	Կարապետ Եաղսրճեան
7.	Գէորգ եւ Մանուկ Գապալէնճեան եղբրք.	15.	Յարութիւն Ամմիեան
8.	Ն. Միլահեան եւ Որդիք	16.	Վ. Նօրտիկեան եւ Որդիք

¹⁸⁴¹ Պատմութիւն Անթէպի Հայոց, աշխատասիրեց ու խմբագրեց Սարաֆեան Գ., Լոս Անճէլըս, Բ. հատոր, 1953, էջ 303:

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵՇՐՁԱՆ
Հաշուեկշիռ «Կիլիկեան Ճեմարանին» Այնթապ
ՄԿՍԵԱԼ 21 ՅՈՒՆԻՄ 1912 – 1913 ՅՈՒՆԻՄ 31
օսմ. ոսկին 127½ հաշուով¹⁸⁴²

ՄՈՒՏՔ	Օ. Ո.	Դիկն.	Հրրդ.	Դիկն.	Հրրդ
Վարդանեան ընկերութենէ Տարեկան վճարածնին	50	6375			
Եկեղեցասիրաց Ընկերութենէ Տարեկան վճարածնին	25	3187	50		
Այնթապի Գաւ. Ազգ. Վարչութենէ Փոխան շէնքի վարձքի	40	5100			
Կրթական բաժինէ Ազգ. Առաջնորդարանի միջոցաւ «Մէարիֆէ»		95	25		
Ուսանողաց տարերթոշակէ Թոշակաւորներէ զանձուած դրամ	55	7012	50		
Ամերիկայի Մասնախմբէ Խրկուած եւ Խոստացուածներու գումարն	\$ 600	17110		38880	25
Ամերիկայէ եղած գրենական նուէրներու արժէքն		8638			
Մանչեսթրէ՝ Կիպրոսի որբախնամին նուէրը	£ 12	1680			
Թրոյէ՝ Այնթապի կրթասիրացին նուէրը	£ 11	1534	50		
Զանազաններէ նուիրուած թերթերու արժէքն		355	25		
Այնթապէ եղած մանր նուէրներու արժէքն		568	75	12776	50
Միհրան էֆ. Գարակեօգեանէ	130			16575	

¹⁸⁴² «Կիլիկեան Ճեմարան», Առաջին տեղեկագիր 1912-1914:

Առաջին տարեշրջանի բացին ի նպաստ					
Ընդհանուր Գումար	535		15	68231	75

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵՇՐՋԱՆ
Հաշուեկշիռ «Կիլիկեան Ճեմարանին» Այնթապ
ՄԿՄԵԱԼ 21 ՅՈՒԼԻՍ1912 – 1913 ՅՈՒԼԻՍ 31
Օսմ. Ոսկին 127½ Հաշուով¹⁸⁴³

ԵԼՔ	Օ. Ո.	Դիկն.	Հրրդ.	Դիկն.	Հրրդ
Շենքի վարձքի Վարձուած շենքի մէկ տարուան վարձքը	40	5100			
Մատենադարանի Գնուած եւ նուիրուած գրքերու, թերթերու գինն		10780	62½		
Կահ կարասեաց Գրասեղաններ, նստարաններ, թիկնաթոռ, ջերմոց եւլն.		4789	12½		
Թղթեղէն եւ տպագրական ծախուց Թուղթ, տետրակներ եւ զանազան տպագրութեանց		1786	62½		
Թղթատարական ծախուց Թղթատարի եւ հեռագրերու համար		381	87½	22838	25
Ճամբորդութեանց Տեսչի Ամերիկայէ գալուն, Հայեպ եւ Սիւ ճամբորդութիւն		7486	50		
Գիտական գործերու Գնուած եւ յանձնարարուած նիւթերու համար		1722	25		

¹⁸⁴³ «Կիլիկեան Ճեմարան», Առաջին տեղեկագիր 1912-1914:

Նկարչական ծախս Գնում և յանձնարարում նիւթերու համար		613	75		
Զանազան ծախս Վառելեաց եւ լոյսի (423¼) ֆութպոլ այլեւայլի		1250	25		
Պաշտօնէութեան Տեսչի, Ուսուցչաց եւ այլ պաշտօնէից տարեթոշակին		31938	75		
Շահ ու զէնի Նախնական ծախս հմր.100 ոսկի փոխառութեան տոկոսը		1147	50	44159	50
Մնտուկ Պատրաստ դրամ ի նոր հաշիւ	535		15	<u>1234</u> 68231	<u>50</u> 75

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
1.ԹՈՒՐԲԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՎ ԴՐԱՆԻՑ ՀԵՏՈ ՀԱՅԵՐԻ ՈՒՆԵԶԳԿՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՔՆՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (Արմեն Մարություն).....	8
1.1. Ցեղասպանության ընթացքում հայերի ունեզրկման քաղաքականության երիտթուրքական կառավարության «օրենսդրական» մեխանիզմները և դրանց գործադրումը	8
1.2. Հայերի ունեզրկման քաղաքականության քեմալականների և Թուրքիայի հաջորդ վարչակարգերի «օրենսդրական» մեխանիզմները.....	42
1.3. Հայոց ցեղասպանության իրազարժմամբ թուրքական իշխանությունների կողմից Հայ Առաքելական եկեղեցուն հասցված հոգևոր ու նյութական կորուստները.....	66
2. ԻԶՄԻԹԻ (ՆԻԿՈՄԻԴԻԱ) ԳԱՎԱՌԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ XIX ԴԱՐԱՎԵՐՋԻՆ ԵՎ XX ԴԱՐԱՍԿԶԲԻՆ (Անահիտ Աստոյան).....	85
2.1.Իզմիթ քաղաքի հայ բնակչությունը և նրա սոցիալ-տնտեսական վիճակը.....	95
2.2.Իզմիթի գավառակի հայաբնակ բնակավայրերը և դրանց սոցիալ-տնտեսական վիճակը.....	118
2.3.Ադաբազարի գավառակի հայաբնակ բնակավայրերը և դրանց սոցիալ-տնտեսական վիճակը.....	183
2.4.Կեյվե գավառակի հայաբնակ բնակավայրերը և դրանց սոցիալ-տնտեսական վիճակը.....	236
2.5.Յալովայի գավառակի հայաբնակ բնակավայրերը և դրանց սոցիալ-տնտեսական վիճակը.....	252
2.6.Գարանուսալ գավառակի հայաբնակ բնակավայրերը և դրանց սոցիալ-տնտեսական վիճակը.....	262
2.7.Իզմիթի գավառի հայաթափումը և ունեզրկումը.....	266

3.ԱՅՆԹԱՊԻ ՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ. 1915 Թ. ԲՆԱԶՆՋՈՒՄԸ ԵՎ ՈՒՆԵԶԴԿՈՒՄԸ. (<i>Անի Ոսկանյան</i>).....	286
3.1.Այնթապը Հալեպի նահանգի վարչական բաժանումներում և նրա ժողովրդագրական պատկերը.....	290
3.2.Այնթապի հայերի տնտեսական վիճակը.....	299
3.3.Այնթապի հայերի կրթական հաստատությունները, ընկերու- թյունները և մամուլը.....	347
3.4.Այնթապի հայերի տեղահանությունը և ունեզրկումը.....	385
4. МЕТОДОЛОГИЯ КВАЛИМЕТРИЧЕСКОЙ ОЦЕНКИ КУЛЬТУР- НОГО НАСЛЕДИЯ (<i>Мартик Гаспарян</i>).....	410
4.1.Международные конвенции об охране и оценке всемирного культурного наследия.....	415
4.2.Применимость методик оценки недвижимости к объектам культурного наследия.....	422
4.3.Эколого-экономическая оценка культурного наследия.....	428
4.4.Методика оценки стоимости реального ущерба, нанесенного объектам археологического наследия.....	434
4.5.Общая схема процесса оценки объектов архитектурного наследия.....	450
4.6.Оценка объекта культурного наследия армянского народа на территории Западной Армении – монастырь Св. Варфоломея (Бардутемеоса).....	465
4.7.Оценка объекта культурного наследия армянского народа – кафедрального собора Пресвятой Богородицы (Сурб Аствацацин) древнеармянской столицы Ани.....	495
4.8.Оценка стоимости земельных ресурсов на территории объектов историко-культурного наследия и объектов недвижимости.....	507
4.9.Определение справедливой стоимости утерянного имущества.....	528
5.ՀԱՅՈՑ ԶԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐ- ՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԳՈՐԾՐՆԹԱՅԻ ՎՐԱ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (<i>Արսեն Մարտիրոսյան</i>).....	538

5.1. Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնահարցի վրա աշխարհաքաղաքական գործընթացների ազդեցությունը.....	538
5.2. Հայոց ցեղասպանությունը ճանաչած պետությունների խորհրդարանների ընդունած փաստաթղթերի պատմաիրավական քննությունը.....	564
5.3. Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հնարավոր գործընթացի վրա Թուրքիայի ներքաղաքական զարգացումների ազդեցությունը.....	591
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ (<i>Անի Ոսկանյան</i>).....	626
Գաբեգին Ա. քահանա Պողարեանի կողմից պատրաստված Այնթապի ազգապատկան կալվածքների ցանկը, 1922 թ.....	626
Լևոն Նազարյանի կողմից տրամադրված 1909 թ. Այնթապի հայ վաճառականների անվանացանկը.....	628
Այնթապի վարպետ մանուսայագործներ.....	633
Այնթապի «Կիլիկեան Ճեմարանի» 1912-1913 թթ. հաշվեկշիռներ.....	634
